

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԴԱՍԱԳԻՐԸ

338:6С
Ծ 59

Экономика строительства

(на армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1963 г.

Ա Ռ Ա Զ Ա Ր Ա Ն

Կոմունիզմի նյութատեսխնիկական բազայի ստեղծման համար մղվող պայքարում կարևոր դեր է պատկանում շինարարությունը: Քսանամյակի ընթացքում (1961—1980 թթ.) պետք է կառուցել և շահագործման հանձնել հազարավոր նոր ձեռնարկություններ, միլիոնավոր բնակելի տներ և կուլտուրկենցաղային օբյեկտներ: Այդ խնդրի լուծումը շատ բանով կախված է կապիտալ ներդրումների ճիշտ օգտագործումից, յուրաքանչյուր շինարարական կազմակերպության աշխատանքից: Շինարարական աշխատանքների արտադրատեսակների տեսական գործունեության բարելավման համար անհրաժեշտ պայմանը պարտիական ու տնտեսական, բոլոր բանվորների, ինժեներատեսխնիկական աշխատողների և ծառայողների տնտեսագիտական կրթության մակարդակի բարձրացումն է:

ՄՄԿՊ համագումարների, պարտիայի կենտրոնական կոմիտեի որոշումներում, Ն. Ս. Խրուշչովի ելույթներում քննարկվում է, որ ներկա պայմաններում կադրերի տնտեսագիտական կրթությունը ձեռք է բերել հատկապես մեծ նշանակություն: Մարքսիզմ-լենինիզմի տնտեսագիտական թեորիայի, սոցիալիստական էկոնոմիկայի կոնկրետ հարցերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի ճիշտ դեկավարել տնտեսությունը, ավելի լրիվ շահույթ օգտագործել արտադրության ներքին ռեզուրվները, առաջավոր փորձը:

Վերջին տարիներին սոցիալիստական արտադրության էկոնոմիկայի, այդ թվում և շինարարության էկոնոմիկայի,

ուսումնասիրությունը լաչն թափ է ստացել մեր երկրում: Ազո դասագիրքը կազմվել է 1960 թվականին հրատարակված ուսումնական ձեռնարկի բազայի վրա, նպատակ ունենալով օգնություն ցույց տալու շինարարության էկոնոմիկայի ուսումնասիրության գործում պարտիական դպրոցների, տնտեսագիտական դպրոցների և քաղաքական լուսավորության սիստեմի սեմինարների ունկնդիրներին, ինչպես նաև կոնկրետ էկոնոմիկան ինքնուրույն ուսումնասիրող պարտիական և տնտեսական կազմերին: Դասագիրքը պատրաստել է ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր բարձրագույն պարտիական դպրոցի օւվետական էկոնոմիկայի ամբիոնը պրակտիկ ու գիտական աշխատողների մասնակցությամբ՝ պարտիական դպրոցների և քաղաքական լուսավորության սիստեմի համար կազմված ծրագրի համապատասխան:

Մարքսիստական-լենինյան տնտեսագիտական թեորիայի դրույթների և տնտեսական հարցերի վերաբերյալ պարտիայի ու կառավարության որոշումների հիման վրա դասագրքում լուսաբանվում են շինարարության էկոնոմիկայի տեսական հիմունքները, կապված շինարարական կազմակերպությունների պրակտիկ գործունեության հետ: Ընդ որում նշանակալի ուշադրություն է դարձված կապիտալ ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու ուղիների բացահայտման, տնտեսական աշխատանքի ձևերի ու մեթոդների կատարելագործման, առաջավոր շինարարական կազմակերպությունների փորձի լուսաբանման վրա: Դասագրքում մեծ տեղ են գրավում շինարարության կառավարման, կապիտալ ներդրումների պլանավորման, նախագծային-նախահաշվային գործի բարելավման, շինարարության ինդուստրացման ու նյութական ռեսուրսների տնտեսման, աշխատանքի արտադրողականության ու աշխատավարձի, շինարարական մոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման և շինարարական կազմակերպությունների շահութաբերության բարձրացման հարցերը:

Դասագիրքը պատրաստել է հեղինակային կոլեկտիվը հետևյալ կազմով՝ Պ. Դ. Պոդշիվալենկո (կոլեկտիվի ղեկավար),

Մ. Ի. Բալիխին, **Ս. Վ. Բաշինսկի** Խ. Ն. Ա. Իվանով, Ն. Ն. Կաչալով, Գ. Պ. Նեմկով, Ի. Ա. Օնուֆրիև, Վ. Ի. Պերեսլեգին, Ա. Ֆ. Ռումյանցև, Ա. Ն. Ռուսակով, Ի. Յա. Սեմյոնով, Ի. Բ. Ստոմախին, Վ. Ֆ. Ֆիլիպով:

Դասադրբի խմբագիրներն են՝ Ա. Ֆ. Ռումյանցևը, Ն. Ն. Կաչալովը, Պ. Դ. Պոզշիվալենկոն: Վիճակագրական նյութերի ընտրությանը և մշակմանը մասնակցել է ՍՍՌՄ կենտրոնական վիճակագրական վարչության կոլեգիայի անդամ Վ. Կ. Վինոգրադովը: Դասադրբի առանձին զուխների քննարկմանը մասնակցել են. Գ. Վ. Վասիլենկոն, Ս. Ջ. Գինզբուրգը, Պ. Ի. Ջլոբինը, Ա. Վ. Կորոբովը, Լ. Ա. Կվիտնիցկին, Վ. Ի. Մայուցինը, Վ. Կ. Պուտորիզինը, Ս. Ն. Պրոտոպոպովը, Բ. Ցա. Սավվինը, Ա. Ա. Սոմինը, Ա. Ս. Ֆերբերգը, Ի. Դ. Շերբ:

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԿՈՄՈՒՆԻՉՄԻ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ
ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**1. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Սովետական Միության կոմունիստական պարտիայի XXII համագումարը հանրագումարի բերեց պարտիայի և սովետական ժողովրդի ստեղծագործական գործունեության հոյակապ արդյունքները: Մեր երկրում սոցիալիզմը հաղթանակեց լիակատար և վերջնականապես: Սովետական ժողովուրդը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ վրաստահորեն ընթանում է լենինյան ուղիով, իր հերոսական աշխատանքով կառուցում կոմունիզմի հոյակապ շենքեր:

«Կոմունիզմը, — ասված է պարտիայի XXII համագումարում ընդունված ՍՄԿՊ ծրագրում, — անդասակարգ հասարակարգ է արտադրության միջոցների միասնական համաձողվողական սեփականությամբ, հասարակության բոլոր անդամների սոցիալական լիակատար հավասարությամբ, որտեղ մարդկանց համակողմանի զարգացման հետ մեկտեղ շարունակ զարգացող գիտության և տեխնիկայի հիման վրա կանեն նաև արտադրողական ուժերը, հասարակական հարստության բոլոր աղբյուրները լիառատ կհորդեն և կիրագործվի «Յուրաֆանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաֆանչյուրին՝ ըստ պահանջմունքների» մեծ սկզբունքը: Կո-

մութիւնը ազատ և գիտակից աշխատավորների բարձր կազմակերպված հասարակություն է, որտեղ կհաստատվի հանրային ինքնավարություն, հասարակության բարօրության համար կատարվող աշխատանքը բոլորի համար կդառնա առաջին կենսական պահանջ, գիտակցված անհրաժեշտություն, յուրաքանչյուրի ընդունակությունները կգործադրվեն ժողովրդի համար առավելագույն օգտավետությամբ»¹:

Պարտիայի ծրագիրը, ելնելով գիտական հիմնավորված հաշվարկներից, խնդիր է դնում 20-ամյա ժամանակաշրջանում (1961—1980 թթ.) ստեղծել կոմունիզմի նյութատեխնիկական բազա, հիմնականում կառուցել կոմունիստական հասարակարգ: Հոյակապ քսանամյա պլանի կենսագործման շնորհիվ Սովետական Միությանն իր տնտեսական մակարդակով կգերազանցի առավել զարգացած կապիտալիստական երկրներին և բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի տեսակետից ամուր կերպով կգրավի աշխարհում առաջին տեղը: Մեր երկրի ամբողջ բնակչության համար կստեղծվի նյութական և կուլտուրական բարիքների առատություն և կապահովվի ամենաբարձր կենսամակարդակ կապիտալիզմի ամեն մի երկրի համեմատությամբ:

Կոմունիզմի կառուցումը դարձել է կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի անմիջական պրակտիկ խնդիրը: Այդ մեծ խնդրի լուծման գործում կարևոր դեր է պատկանում շինարարությանը:

Շինարարությունը նյութական արտադրության ճյուղերից մեկն է: Շինարարությունը հանդիսանում է հասարակական արտադրության կարևոր ճյուղը: «Կարելի է առանց չափազանցության ասել,—ընդգծել է Ն. Ս. Խրուշչովը պարտիայի ծրագրի մասին զեկուցման մեջ,—որ դեպի կոմունիզմ մեր ամբողջ առաջընթացի և սովետական մարդկանց կենսամակարդակի բարձրացման հաջողությունը հսկայական չափով կախված է այն բանից, թե մենք որքան կկարողանանք արա-

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», Հայպետհրատ, 1962, էջ 483—484:

գացնել, էժանացնել շինարարությունը, բարձրացնել նրա որակը, արդյունավետ ու խելացի կերպով օգտագործել կապիտալ ներդրումներն ու արտադրական ֆոնդերը, նվազագույն ծախսերով հասնել արտադրական կարողության միավորից առավելագույն արտադրանքի ստացման»¹ :

Շինարարության արտադրանք են ավարտված և գործարկման համար պատրաստ արտադրական ձեռնարկություններն՝ ու կառույցները, բնակելի տները, դպրոցները, հիվանդանոցներն ու կուլտուր-կենցաղային նշանակութուն ունեցող մյուս օբյեկտները :

Սովետական իշխանության տարիներին շինարարությունը դարձել է նյութական արտադրության խոշորագույն ճյուղերից մեկը, որը կարող է անընդհատ ու էլ ավելի աճող մասշտաբներով ավելացնել երկրի հիմնական ֆոնդերը : Պետական և կոոպերատիվ ձեռնարկություններն ու կազմակերպությունները (առանց կոլտնտեսությունների) 1918-ից մինչև 1961 թվականների ընթացքում գործարկել են 280 միլիարդ ռուբլու հիմնական ֆոնդեր : Երկրի հասարակական արդյունքի մեջ 1961 թվականին շինարարության բաժինը կազմել է 10,2 տոկոս, արդյունաբերությանը՝ 63,5, գյուղատնտեսությանը՝ 15,7, տրանսպորտինն ու կապինը՝ 4,2 և մյուս ճյուղերինը՝ 6,4 տոկոս :

Շինարարության զարգացումն արտադրության բոլոր ճյուղերի անընդհատ աճի, տեխնիկական առաջադիմության բազայի վրա հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման, ժողովրդի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի վերելքի անհրաժեշտ պայմանն է :

Շինարարությունն անխղելիորեն կապված է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի և ամենից առաջ արդյունաբերության հետ, որը սոցիալիստական էկոնոմիկայի հիմքն է : Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ խոշոր մեքինայա-

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», 1962, էջ 233 :

կան արդյունաբերությունը սոցիալիզմի միակ նյութական հիմքն է:

Շինարարության զարգացումը մեծ չափով կախված է ծանր արդյունաբերության, հատկապես այնպիսի ճյուղերի հաջողություններից, ինչպիսիք են մեքենաշինությունը, էներգետիկան և շինանյութերի արդյունաբերությունը: Մեքենաշինությունը շինարարությանը զինում է առաջավոր տեխնիկայով, որի լայն կիրառումն ապահովվում է արտադրության էլեկտրիֆիկացումով: Շինանյութերի արդյունաբերությունից շինարարությունն ստանում է իրեն անհրաժեշտ նյութերի, դետալների ու կոնստրուկցիաների հիմնական մասսան (ցեմենտ, հավաքովի երկաթբետոն, ապակի և այլն): Շինարարության մեջ օգտագործվում է նաև արդյունաբերության ուրիշ ճյուղերի արտադրանքը, օրինակ, մետաղ, անտառանյութ, էլեկտրաէներգիա, քիմիական արտադրանք: Շինարարության համար մեծ նշանակություն ունի նաև տրանսպորտը, որի օգնությամբ շինարարական հրապարակներն են հասցվում անհրաժեշտ սարքավորում, կոնստրուկցիաներ, զանազան նյութեր:

Արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացումն իր հերթին նշանակալից չափով կախված է շինարարության տեմպերից ու մասշտաբներից, որն ապահովում է նրանց հիմնական ֆոնդերի ավելացումը և կատարելագործումը:

Հիմնական ֆոնդերի առավել ակտիվ մասը՝ աշխատանքի գործիքները արտադրվում են ծանր արդյունաբերության մեջ: Բայց դրանք գործարկելու համար անհրաժեշտ է ստեղծել նորմալ պայմաններ:

Տեխնոլոգիական, էներգետիկական և այլ սարքավորումը, մեքենաներն ու ապարատները տեղադրվում են արտադրական հրապարակներում և, յուրպես կանոն, ամրացվում հիմքերի, պատվանդանների ու տարբեր տեսակի հենարանային կոնստրուկցիաների վրա: Դրանք հարկավոր է ապահովել էներգիայով, նյութական ռեսուրսներով և ստեղծել բոլոր մյուս

պայմանները արտադրութեան պրոցեսն իրականացնելու համար:

Հետևաբար, աշխատանքի գործիքների նորմալ աշխատանքն ապահովելու համար պահանջվում է՝ նոր ստեղծել կամ ընդլայնել գործող արտադրական շենքերն ու կառուցվածքները. սարքավորումների ամրացման համար պատրաստել հիմքեր և կոնստրուկցիաներ. կառուցել կամ ընդլայնել էլեկտրահաղորդման գծեր, խողովակագծեր և ուրիշ կոմունիկացիաներ. կատարել սանիտարա-տեխնիկական, հակահրդեհային և այլ հարմարանքների ապահովման աշխատանքներ:

Շենքերի և զանազան կառուցվածքների ստեղծման ու ընդլայնման ուղղութեամբ տարվող աշխատանքները կոչվում են շինարարական:

Մեքենաները և սարքավորումները գործարկելու համար դրանք հավաքում ու տեղադրում են որոշակի տեխնոլոգիական հաջորդականութեամբ, ապահովում են սպասարկող հարմարանքներով, այսինքն՝ բերվում են աշխատանքային վիճակի: Այսպիսի աշխատանքները կոչվում են մոնտաժային:

Եթե սարքավորումները տեղադրվում են առկա արտադրական հրապարակներում, ապա այդ դեպքում ևս հաճախ առաջանում է արտադրական շենքերի և կառույցների համապատասխան վերակառուցման պահանջ: Սարքավորումների բացօթյա տեղադրումը մինիմումի է հասցնում արտադրական շենքերի կառուցման ծախսերը, բայց չի վերացնում դրանց շահագործման ուրիշ պայմանների ստեղծման անհրաժեշտությունը:

Արդյունաբերության թողարկած պատրաստի մասերից ու դետալներից շենքերի ու կառուցվածքների շինարարության ժամանակ նույնպիս կատարվում են մի շարք շինարարական-մոնտաժային աշխատանքներ (հիմքերի նախապատրաստում, կոնստրուկցիաների հավաքում, ջրմուղ-կոյուղու, էլեկտրամատակարարման գծերի անցկացում և այլն):

Մի քանի տեսակ սարքավորումների, մեքենաների և ապարատների համար անհրաժեշտություն չկա կառուցել շենքեր, հիմքեր կամ հենարաններ: Դրանց թվին են պատկանում, օրինակ, գյուղատնտեսական և շինարարական մեքենաների մեծ մասը, տրակտորային միջոցները: Սակայն այդ մեքենաների կանոնավոր շահագործման համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի շինմոնտաժային աշխատանքներ: Այսպես, գյուղատնտեսական, շինարարական և այլ մեքենաների պարկի կանոնավոր գործունեու-

թյան համար կառուցվում են նոր կամ ընդարձակվում գործող վերանորոգման արհեստանոցներ, ծածկեր կամ հրապարակներ, վառելիքի մատակարարման բազաներ:

Անհրաժեշտ շինարարական և մոնտաժային աշխատանքների կատարման շնորհիվ գործարկվում են աշխատանքի գործիքները, ավելանում են գործող արտադրական հիմնական ֆոնդերը: ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության արտադրական հիմնական ֆոնդերը 1961 թվականի սկզբին, 1940 թվականի համեմատությամբ, աճել են 3,1 անգամ: Արտադրական հիմնական ֆոնդերի բացարձակ չափերով ՍՍՌՄ-ը Եվրոպայում գրավում է առաջին և աշխարհում երկրորդ տեղը:

Շինարարության մեջ ստեղծվում են նաև ոչ-արտադրական նշանակություն ունեցող օբյեկտներ՝ բնակելի տներ, դպրոցների, հիվանդանոցների, թատրոնների, ակումբների և կուլտուր-կենցաղային այլ հիմնարկների շենքեր: Դրա շնորհիվ ավելանում են ոչ-արտադրական հիմնական ֆոնդերը, պայմաններ են ստեղծվում ժողովրդի նյութական և կուլտուրական աճող պահանջմունքներն ավելի լրիվ բավարարելու համար: ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության ոչ-արտադրական հիմնական ֆոնդերը 1961 թվականի սկզբին, 1940 թվականի համեմատությամբ, աճել են 2,2 անգամ:

Այսպիսով, շինարարության՝ որպես նյութական արտադրության ճյուղի խեղիքը շինարարական ու մոնտաժային աշխատանքների ամբողջ կոմպլեքսի կատարումն է, որն ապահովում է ինչպես նորերի գործարկումը, այնպես էլ արտադրական և ոչ-արտադրական նշանակություն ունեցող գործող հիմնական ֆոնդերի վերակառուցումը, ընդլայնումը և մոդեռնացումը:

Արտադրական նոր ֆոնդերը ստեղծվում են նոր կառուցված ձեռնարկությունների, շենքերի և կառույցների գործարկման հաշվին: Գործող հիմնական ֆոնդերի վերակառուցում և ընդլայնում նշանակում է գործող ձեռնարկություններում ավելացնել աշխատանքի գործիքները և բարելավել դրանց որակը՝ մաշված ու բարոյապես հնացած տեխնիկան նորով փոխարինելու, արտադրական շենքերը նոր սարքավորումների շահագործման

պայմաններին հարմարացնելու, էներգիայի, հումքի մաքսակարարման, տրանսպորտային տնտեսության և այլ գործոնների հետ կապված, այսպես կոչված, «սեղ տեղերը» վերացնելու միջոցով:

Հիմնական ֆոնդերի վերականգնումը կատարվում է կապիտալ նորոգման միջոցով, այդ նպատակի համար ձեռնարկություններին հատուկ ամբացված ամորտիզացիոն հատկացումների մի մասի հաշվին, որը կարող է օգտագործվել նաև սարքավորումների մոդեռնացման համար: Մոդեռնացման միջոցով ապահովվում է եղած աշխատանքի դործիքների կատարելագործումը, որի շնորհիվ դրանց տրվում է գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին համապատասխանող հատկություններ, կապիտալ նորոգման վրա կատարվող ծախսումները (ներառյալ մոդեռնացումը) ունեն սպեցիֆիկ բնույթ և չեն մտնում կապիտալ ներդրումների պետական պլանի մեջ:

Նայած տնտեսության ճյուղերի, որոնց համար կատարվում են շինարարական ու մոնտաժային աշխատանքներ, շինարարությունը բաժանվում է՝ արդյունաբերական, տրանսպորտային, բնակարանային և այլ բնագավառների: Իր հերթին, արդյունաբերական շինարարության մեջ, օրինակ, տարբերում են էլեկտրակայանների, մեքենաշինական գործարանների, մետալուրգիական, նավթի, գազի, բիմիական, թեթև, սննդի և արդյունաբերության այլ ճյուղերի ձեռնարկությունների շինարարություն. տրանսպորտային շինարարության մեջ՝ երկաթուղիների, ավտոճանապարհների, խողովակագծերի, օդանավակայանների, նավահանգիստների շինարարություն, կամրջաշինություն, թունելաշինություն և այլն:

Պետական ժողովրդատնտեսական պլաններում արդյունաբերության, դյուղատնտեսության և էկոնոմիկայի մյուս ճյուղերի զարգացման առաջադրանքների հետ մեկտեղ սահմանվում են առաջադրանքներ նաև կապիտալ շինարարության գծով: Վ. Ի. Լենինը դեռևս 1921 թվականին ընդգծում էր, որ համապետական տնտեսական պլանի կազմում անհրաժեշտ է անպատճառ առանձնացնել շինարարությունը:

Շինարարական արտադրության առանձնահատկությունները: Շինարարությունը, ինչպես ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը հենվում են արտադրության մի-

ըոցների հանրային սեփականության և շահագործումից ազատ աշխատողների կոլեկտիվ աշխատանքի վրա: Շինարարությունը զարգանում է պետական պլանների հիման վրա, պլաններ, որոնք արտացոլում են սոցիալիզմի տնտեսական օրենքների պահանջները: Շինարարության մեջ լայնորեն օգտագործվում է ժամանակակից մեքենայական տեխնիկան, ստեղծված են բանվորների և մասնագետների մըշտական որակյալ կադրեր: Անընդհատ աճող շինարարական արտադրությունն իրականացվում է ինդուստրիալ մեթոդներով: Այսպիսով, շինարարությանը հատուկ են բոլոր այն հիմնական գծերը, որոնք բնորոշ են սոցիալիստական արտադրության համար: Սոցիալիստական արտադրության կազմակերպման հիմնական սկզբունքները և մեթոդները լրիվ վերաբերում են նաև շինարարությանը: Շինարարական արտադրությունը հատկապես շատ ընդհանուր գծեր ունի արդյունաբերական արտադրության հետ: Դրա հետ մեկտեղ շինարարությունն ունի մի շարք տեխնիկա-տնտեսական առանձնահատկություններ, որոնք յուրօրինակություն են մտցնում նրա կազմակերպման, պլանավորման և ֆինանսավորման մեջ:

Շինարարական արտադրության առանձնահատկությունները բխում են ամենից առաջ նրա արտադրանքի բնույթից: Այդ արտադրանքն անշարժ է և կարող է օգտագործվել միայն այնտեղ, որտեղ ստեղծված է: Այն անմիջականորեն կապված է հողի հետ, որը հանդիսանում է շենքերի ու կառուցվածքների հիմքը, իսկ մի շարք դեպքերում՝ դրանց անբաժանելի մասը: Եթե արդյունաբերության մեջ արտադրության պրոցեսում, որպես կանոն, պատրաստվող արտադրանքը գտնվում է շարժման մեջ, իսկ աշխատանքի գործիքները մնում են անշարժ, ապա շինարարության մեջ, ընդհակառակը, աշխատանքի գործիքները շարժական են, իսկ կառուցվող օբյեկտները կամ արտադրանքը՝ անշարժ:

Շինարարական մի հրապարակում աշխատանքները վերջացնելուց հետո, աշխատանքի գործիքները և շինարար կադրերը փոխադրվում են մի այլ շինաճարական հրապարակ:

Շինարարական արտադրության այդ առանձնահատկությունը պահանջում է կառավարման կազմակերպական յուրահատուկ ձևեր, շինարարական կազմակերպությունների ճիշտ տերիտորիալ տեղաբաշխում այն հաշվով, որպեսզի շինարարական մի հրապարակից մյուսը փոխադրվելիս ժամանակի, նյութական ու դրամական ռեսուրսների կորուստները հասցվեն մինիմումի: Բացի այդ, շինարարության մեջ առանձնահատուկ պահանջներ են ներկայացվում շինարարական տեխնիկայի ու շինարար կադրերի նկատմամբ:

Շինարարության կարևոր առանձնահատկություններն են, այնուհետև, արտադրության ավելի երկար տևողությունը և մյուս ճյուղերի համեմատությամբ պատրաստի արտադրանքի միավորի ավելի բարձր արժեքը: Եթե արդյունաբերության մեջ վերջնական արտադրանքի միավորն է, օրինակ, հաստոցը, տուրբինը, տոննա մետաղը, զույգ կոշիկը, ապա շինարարության մեջ վերջնական արտադրանքն է՝ շենքը կամ կառուցվածքը, դամային վառարանը, էլեկտրակայանը, երկաթուղային կամուրջը, ածխահանքը, բնակելի տունը և այլն: Այսպիսով, շինարարության արտադրանքն այն օբյեկտներն են, որոնք պահանջում են նշանակալից միանվագ ծախսեր և դրանց կառուցման համար համեմատաբար երկար ժամանակ: Շինարարական արտադրության այդ առանձնահատկությունը ամենօրյա պայքար է պահանջում շինարարության ժամկետների մաքսիմալ կրճատման, աշխատանքային, նյութական ու դրամական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, կապիտալ ներդրումների արդյունավետության ամեն կերպ բարձրացման համար:

Ինչպես արդյունաբերության, այնպես էլ շինարարության մեջ պատրաստի արտադրանքի անընդհատ և հավասարաչափ թողարկման համար անհրաժեշտ է ունենալ անավարտ արտադրանքի կուտակվածք (задел): Դրա ծավալը կախված է գլխավորապես արտադրական ցիկլի տևողությունից, այսինքն՝ արտադրանքի պատրաստման ժամանակից: Արտադրական ցիկլի կրճատումը հնարավորություն է տալիս պատրաստի արտադրանքի անընդհատ թողարկումն իրա-

կանացնել անվարտ արտադրութեան վրա նվազագույն ծախսումներ կատարելով:

Շինարարութեան մեջ անավարտ արտադրութիւն են պատրաստման տարբեր ստադիաներում գտնվող և դեռևս գործարկման չհանձնված օբյեկտները: Ընդունված է դրանց անվանել անավարտ շինարարութիւն: Արտադրական ցիկլի համեմատաբար մեծ տևողութեան հետևանքով անավարտ շինարարութեան չափերը, որպէս կանոն, նշանակալի մեծութիւն են կազմում:

Շինարարութեան ժամկետների կրճատումը, օբյեկտների ավելի արագ գործարկումը բարձրացնում են կապիտալ ներդրումների արդյունավետութիւնը, նպաստում տնտեսական զարգացման տեմպերի արագացմանը և կատարված ծախսումների շուտափուլից փոխհատուցմանը: Եվ, ընդհակառակը, շինարարութեան ժամկետների դանդաղեցումը մեծ վնաս է հասցնում ժողովրդական տնտեսութեանը: Եթէ կառուցվող օբյեկտները շահագործման են հանձնվում սահմանված ժամկետից ուշ, ապա ավելանում են արտադրողական պտույտից հեռացվող միջոցների չափերը, դանդաղեցվում է ժողովրդական տնտեսութեան այն ճյուղերի զարգացումը, որոնց համար կառուցվում են այդ օբյեկտները: Շինարարութեան ձգձգումը, վերջին հաշիվով, հանգեցնում է սոցիալիստական կուտակումների նվազեցմանը և երկրի տնտեսական զարգացման տեմպերի իջեցմանը:

Շինարարութեան ճիշտ կազմակերպման և կապիտալ ներդրումների արդյունավետութեան բարձրացման պարտադիր պայմանն է յուրաքանչյուր օբյեկտի շինարարութեան կաշիւն տեխնիկական պլանի (նախագծի) և նրա արժեքի հաշվարկման (նախահաշիվի) առկայութիւնը: Կ. Մարքսը, խոսելով մարդկանց գործունեութեան նպատակահարմարութեան մասին, ընդգծել է, որ այն ուղղված է գիտակցված նպատակի հասնելու համար: «...Ամենավատ ճարտարապետը ամենալավ մեղվից տարբերվում է նրանով, որ ճարտարապետը նախքան բջիջը մեղրամոմից կառուցելը այն արդեն կառուցել է իր գլխում: Աշխատանքի պրոցեսի վերջում ստաց-

վում է այն հետևանքը, որն արդեն կար աշխատողի պատկերացման մեջ այդ պրոցեսն սկսելիս, այսինքն՝ իդեալապես»¹։

Շինարարության մեջ մասսայական արտադրանքն ստեղծվում է, որպես կանոն, տիպային նախագծերով։ Սակայն յուրաքանչյուր նոր օբյեկտի շինարարություն իրականացվում է տարբեր պայմաններում՝ ուրիշ հողամասում, շրջապատող օբյեկտների հետ այլ զուգակցման մեջ և այլն։ Դրա համար էլ տիպային նախագծով շինարարության ժամանակ ևս անհրաժեշտ է լինում յուրաքանչյուր օբյեկտի համար հաստատել նախագիծ և նախահաշիվ, հաշվի առնելով շինարարության բնական ու տնտեսական կոնկրետ պայմանները, ճարտարապետական կոմպլեքսը և տվյալ շրջանի զարգացման հեռանկարները։ Շինարարական արտադրության այդ առանձնահատկությունը պահանջում է նախագծային-նախահաշվային գործի պարզորոշ կազմակերպում այն հաշվով, որպեսզի նախագծերում և նախահաշիվներում թույլ չտրվեն ավելորդություններ, տիպային նախագծերն օգտագործվեն առավելագույն չափով, որպեսզի բարձրացվի աշխատանքների որակը և իջեցվի դրանց ինքնարժեքը։

Նախագծերում և նախահաշիվներում որոշվում են որակի նկատմամբ համապետական տեխնիկական պահանջները (ներառյալ կոնստրուկցիաների դիմացկունությունը և հրկարակեցությունը, ճարտարապետական—գեղարվեստական տեսքը), օբյեկտների կառուցման ժամկետները, շինարարության ինքնարժեքը և այլ տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ (1 ԿՄ տարածության արժեքը, արտադրական կառուցության միավորի գործարկման համար պահանջվող կապիտալ ներդրումների չափը և այլն)։ Նախագծերի և նախահաշիվների հիման վրա է կազմակերպվում շինարարական կազմակերպությունների և պատվիրատուների (շինություններ կառուցողների) տեխնիկական, արտադրական տնտեսական գործունեությունը։ Դրա համար է. Վ. Թույլատրու-

¹ Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 189։

վում շինարարություն կատարել առանց նախագծի և նախահաշվի:

Շինարարությունը առաջնակարգ դեր է խաղում երկրի վերափոխման, շքեղացված շրջանները յուրացնելու, բնական նոր ռեսուրսները տնտեսական շրջանառության մեջ ներգրավելու գործում: Շինարարներն առաջինն են գալիս նոր յուրացվող շրջանները և իրենց անձնվեր աշխատանքով, մեծ դժվարություններ հաղթահարելով, անցկացնում են ճանապարհներ, կառուցում գործարաններ և ձեռնարկություններ: Դրա շնորհիվ առաջացնում են մեր Հայրենիքի տնտեսական ու կուլտուրական նոր խոշոր կենտրոններ:

Մեր երկրում՝ բուռն շինարարության երկրում, բարձր է գնահատվում շինարարի պատվավոր աշխատանքը: Շինարարների շարքերն անընդհատ լրացվում են առաջին հերթի՝ երկրասարդ հայրենասերներով, որոնք կոմունիստական պարտիայի կոշով, կոմերիտմիությունն ուղեգրերով համարձակորեն մեկնում են ամենադժվար և պատասխանատու կառույցները:

Սովետական շինարարները գնում են բանվոր դասակարգի առաջին շարքերում: Նրանք արժանի ավանդ են մտցնում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում: «Շինարարները, դրանք հիանալի մարդիկ են, որոնք նորի համար ճանապարհ են հարթում կյանքում»,—ասել է Ն. Ս. Խրուշչովը Բրատսկի հիդրոէլեկտրակայանի կառուցողների միտինգում:

Շինարարության կազմակերպման ձևերը: Շինմոնտաժային աշխատանքները տարվում են զանազան եղանակներով: Դրանք կատարվում են կամ կապիտալ ներդրումներ իրականացնող ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների սեփական ուժերով (շինարարության լորնտեսական եղանակ), կամ հատուկ շինարարական ու մոնտաժային կազմակերպությունների միջոցով՝ պատվիրատուների հետ պայմանագրային հիմունքներով (շինարարության կապալային եղանակ): Շինարարական աշխատանքների վիթխարի մասշտաբների պայմաններում շինարարության

ճիշտ կազմակերպման հարցերը առաջնակարգ նշանակություն ունեն:

Տնտեսական եղանակով որևէ ձեռնարկություն կառուցելու կամ ընդլայնելու համար հարկ է լինում ամեն անգամ նորից շինարարական կազմակերպություններ ստեղծել, ձեռք բերել մեխանիզմներ ու սարքավորումներ, ներգրավել շինարար-բանվորներ և ստեղծել արտադրական բազա: Տվյալ շինարարական օբյեկտի ավարտումից հետո այդպիսի կազմակերպությունները, որպես կանոն, վերացվում են և, հետևապես, կուտակված փորձը չի պահպանվում, շինարարական բանվորները գնում են ուրիշ ձեռնարկություններ, իսկ նյութատեխնիկական բազան լուծարքի է ենթարկվում: Այդ պատճառով տնտեսական եղանակը պայմաններ չի ապահովում մշտական գործող շինարարական կազմակերպությունների ստեղծման և շինարարության ինդուստրացման համար:

Շինարարության արագ զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ շինարարության կազմակերպման ավելի պրոգրեսիվ՝ կապալային եղանակի արմատավորումը: «Շինարարության գործի կարգավորման և շինարարության էժանացման հիմքը,—նշված է պարտիայի Կենտրոնական կոմիտեի և կառավարության 1936 թ. փետրվարի 11-ի որոշման մեջ,—անցումն է շինարարության գործում տնայնագործությունից և պարտիզանությունից դեպի խոշոր շինարարական ինդուստրիայի ուղին:

Դրա համար անհրաժեշտ է անցնել կապալային եղանակով շինարարակա՝ն աշխատանքների կատարմանը, այսինքն՝ մշտական գործող կապալային շինարարական կազմակերպություններին, որոնք ունեն իրենց սեփական նյութատեխնիկական բազան (մեխանիզմներ, տրանսպորտ, շրջանառու միջոցներ, բնակարանային ֆոնդ և այլն) ու մշտական շինարարական կադրերը և իրենց աշխատանքում հենվում են շինարարական դետալներին, կիսաֆաբրիկատների և կոնստրուկցիաներին խոշոր արդյունաբերական արտադրության վրա»:

Կապալաւային եղանակով շինմոնտաժային աշխատանքները կատարվում են այդ նպատակի համար ստեղծված շինարարական ու մոնտաժային կազմակերպութիւնների կողմից՝ պատվիրատուների հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Այդ դեպքում որպէս պատվիրատու են հանդես գալիս ձեռնարկութիւնները և զանազան կազմակերպութիւնները, որոնց առանձնացված են միջոցներ կապիտալ ներդրումների համար: Աշխատանքները պայմանագրերով կատարելիս սահմանվում է պատվիրատուի և կապալառուի փոխադարձ վերահսկողութիւն, որը նպաստում է նյութական, աշխատանքային և դրամական ռեսուրսների ավելի արդյունավէտ, խնայողաբար օգտագործմանը, բարձրացնում է շինարարական կազմակերպութիւնների և պատվիրատուների պատասխանատվութիւնը շինարարութեան պետական պրլանների կատարման համար:

Կապալաւային կազմակերպութիւնները, տվյալ կառուցում և օբյեկտում աշխատանքների ավարտմանը համեմատ, անցնում են շինմոնտաժային աշխատանքների կատարմանն ուրիշ կառույցներում և օբյեկտներում: Այսպիսով, կապալային եղանակի դեպքում շինմոնտաժային աշխատանքները տարվում են մշտական գործող կազմակերպութիւնների կողմից: Դա պայմաններ է ապահովում անհրաժեշտ որակի մշտական բանվորական կադրեր ստեղծելու և շինարարական կազմակերպութիւնները ժամանակակից տեխնիկայով զինելու համար: Կապալաւային կազմակերպութիւնները սխտեմատիկաբար կուտակում են արտադրական փորձ և ավելի հաջող են կատարում շինարարութեան ինդուստրացման խընդիրները, քան այն սակավագոր շինարարական կազմակերպութիւնները, որոնք ստեղծվում են առանձին ձեռնարկութիւնների կողմից աշխատանքները տնտեսական եղանակով կատարելու ժամանակ:

Ներկայումս գերակշռում է շինարարութեան կապալաւային եղանակը: Տնտեսական եղանակով աշխատանքները, որպէս կանոն, կատարվում են միայն փոքր կառույցներում կամ գործող ձեռնարկութիւնների առանձին օբյեկտներում:

Շինարարության կապալային եղանակի զարգացումը բնութագրվում է հետևյալ տվյալներով: Առաջին և երկրորդ հնգամյակներում շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի մեկ երրորդը կատարել են կապալային կազմակերպությունները, իսկ երկու երրորդը կատարվել է անտեսական եղանակով: Շինարարության կապալային եղանակը հատկապես ինտենսիվ կերպով սկսեց ներդրվել 1936 թվականից: Արդեն 1940 թվականին կապալային կազմակերպությունների կատարած աշխատանքների տեսակարար կշիռը կազմեց 58 տոկոս: Զորրորդ հնգամյակում կապալային կազմակերպությունները կատարեցին շինմոնտաժային բոլոր աշխատանքների ընդհանուր ծավալի 73 տոկոսը, հինգերորդ հնգամյակում՝ 82 տոկոսը: 1961 թվականին շինմոնտաժային աշխատանքների ավելի քան 86 առիտը կատարվել է կապալային եղանակով:

— ՄՄՌՄ շինարարական ինդուստրիան և նրա պարզացումը: Շինարարական ինդուստրիա ասելով հասկանում ենք ժամանակակից տեխնիկա և բանվորների ու մասնագետների բարձրորակ կադրեր ունեցող, շինարարական արտադրությունն ինդուստրիալ մեթոդներով իրականացնող շինարարական և մոնտաժային կազմակերպությունների ամբողջությունը:

Երբևէ շինարարության էկոնոմիկայի վերաբերյալ աշխատություններում շինարարական ինդուստրիայի կազմում մտցնում են շինանյութեր, դեղատնիք և կոնստրուկցիաներ արտադրող ձեռնարկությունները, իսկ ինքը՝ շինարարական ինդուստրիան դիտվում է որպես արդյունաբերության ճյուղերից մեկը: Շինարարական ինդուստրիան այսպես հասկանալը չի կարելի ճիշտ համարել: Թեև այդ ձեռնարկությունների սրտը մասը կազմակերպական տեսակետից ենթարկվում է շինարարական ու մոնտաժային կազմակերպություններին, բայց արտադրության բնույթով վերաբերում են շինանյութերի արդյունաբերությանը և դրանց արտադրանքը մտցվում է արդյունաբերական արտադրանքի կազմի և ոչ թե շինմոնտաժային աշխատանքների մեջ: Զի կարելի է իշտ համարել նաև շինարարական ինդուստրիայի կազմի մեջ միայն կապալային շինարարական կազմակերպությունների մտցնելու: Շինարարական ինդուստրիային վերաբերվում են բոլոր կազմակերպությունները, որոնք ստեղծված են շինմոնտաժային աշխատանքներ կատարելու համար ինչպես կապալային, այնպես էլ անտեսական եղանակով:

Սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում կոմունիստական պարտիան և սովետական պետությունը մեծ ուշադրություն են դարձրել հզոր շինարարական ինդուստրիայի ստեղծմանը, որն ընդունակ է սպահնովելու ժողո-

վըրդական տնտեսության հիմնական ֆունդերի աճման բարձր տեմպերն ու կատարելագործումը:

Մինչ Հանրապետության օտջիալիստական ժեծ ռեկոնցիան մեր երկրում շինարարությունը տարվում էր մասնավոր ձեռնարկությունների միջոցով և սեզոնային բնույթ ուներ: Մշտական բանվոր-շինարարների կադրեր համարյա չկային, շինարարական աշխատանքները տարվում էին հիմնականում սեզոնային բանվորների միջոցով: Շինարարության մեջ աշխատելը չափազանց ծանր էր, բոլոր աշխատանքները կատարվում էին ձեռքով կամ ամենահասարակ մեխանիզմների միջոցով:

Սովետական իշխանության տարիներին թռեղծվել է հզոր շինարարական ինդուստրիա, որի զարգացումը հենվում է թորագ աճող շինանյութերի արդյունաբերության, մեքենաշինության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վրա: Շինարարական ինդուստրիան այժմ իր տրամադրության տակ ունի շինարարական արտադրության անընդհատությունն ու հետագա ընդլայնումն ապահովելու համար բոլոր անհրաժեշտ ռեսուրսները:

Կոմունիստական պարտիան շինարարության զարգացումն ուղղում է թեխնիկական առաջադիմության ճանապարհով, հետևողականորեն միջոցառումներ անցկացնելով շինարարության հետագա ինդուստրացման, շինարարական արտադրությունը գործարանային պայմաններում պատրաստված բլոկներից, մասերից և գետալներից շենքեր ու կառուցվածքներ հավաքելու և մոնտաժելու մեքենայացված հարահաս պրոցեսի վերածման համար:

Շինարարական ինդուստրիայի հիմքը պետական կապալային կազմակերպչություններն են: Ներկայումս ՍՍՌՄ-ում թռեղծված է պետական կապալային շինարարական ու մոնտաժային կազմակերպությունների ճյուղավորված ցանց: Երկրում 1961 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հաշվվում էր ավելի քան 1300 շինարարական ու մոնտաժային տրեստներ և մոտ 10 հազար սկզբնական շինարարական ու մոնտաժային կազմակերպություններ: Մշտական գործող շինարարական հզոր կազմակերպությունների ցանցի ստեղծումն ու ամրապլնդումն ապահովեցին կապալային եղանակով կատարվող շինմոնտաժային աշխատանքների ծավալի արագ ավելացումը:

Փոքր ծավալով աշխատանքներ կատարող որոշ թվով շինարարական կազմակերպություններ կան նաև ՍՍՌՄ սպառողական կոոպերացիայի սխտեմում: Վերջին տարիներին

կոլտնտեսային արտադրության արագ վերելքի կապակցությամբ զարգանում են միջկոլտնտեսային շինարարական կազմակերպությունները:

«Արտադրողական ուժերի աճման հետ միասին,— ասված է ՄՄԿՊ ծրագրում,— կզարգանան միջկոլտնտեսային արտադրական կապերը, տնտեսության հանրայնացման պրոցեսը դուրս կգա առանձին կոլտնտեսությունների շրջանակներից: Հարկավոր է խրախուսել միջկոլտնտեսային ձեռնարկությունների և կուլտուր-կենցաղային հիմնարկների, պետական-կոլտնտեսային էլեկտրակայանների, գյուղատնտեսական մթերքների նախնական մշակման, պահպանման ու փոխադրման ձեռնարկությունների, շինարարության առանձին տեսակների, շինանյութերի, կոնստրուկցիաների արտադրության և այլ ձեռնարկությունների համատեղ կառուցման պրակտիկան: Հանրային հարստության աճի համեմատ կոլտնտեսություններն ավելի ու ավելի մեծ չափով կմասնակցեն համաժողովրդական օգտագործման ձեռնարկությունների և կուլտուր-կենցաղային հիմնարկների, դիշերօթիկ դպրոցների, ակումբների, հիվանդանոցների, հանգստյան տների ստեղծմանը: Այս բոլոր պրոցեսները, որոնք պետք է տեղի ունենան կամավորության հիման վրա և տնտեսական անհրաժեշտ պայմանների առկայությամբ, կոլտնտեսային կոոպերատիվ սեփականությանը հետզհետե համաժողովրդական բնույթ կտան»¹:

1962 թվականի սկզբին մեր երկրում հաշվվում էր ավելի քան 1800 միջկոլտնտեսային շինարարական կազմակերպություն: 1961 թվականին դրանց կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալը կազմեց 487 միլիոն ռուբլի, այսինքն՝ 4 անգամ շատ, քան 1958 թվականին: Ընդ որում յուրաքանչյուր միջկոլտնտեսային շինարարական կազմակերպության կատարած աշխատանքի ծավալն այդ ժամանակամիջոցում միջին հաշվով ավելացել է 2,1 անգամ:

Պետական և կոոպերատիվ-կոլտնտեսային կազմակերպ-

1 «ՄՄԿՊ XXII համագումարի նյութեր», 1962, էջ 505:

պուժյունները իրականացնում են արտադրական, կուլտուր-կենցաղային ամբողջ շինարարությունը, ինչպես նաև բնակարանային շինարարության հիմնական մասը: Հետևաբար, շինարարության մեջ, ինչպես և ՍՍՌՄ ժողովրդական տընտեսության մյուս ճյուղերում անբաժանորեն տիրապետում է սոցիալիստական կացութաձևը:

ՍՍՌՄ շինարարական ինդուստրիայի զարգացումը բընորոշվում է կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալի արագ աճով:

Այդ երևում է հետևյալ աղյուսակից (մլն. ռուբլի, համադրելի գներով)

	Շինմոնտաժային աշխատանքների ծավալը	Մեկ տարվա միջինը՝ ըստ ժամանակաշրջանների
1918—1928 թթ. (առանց 1928 թ. 4-րդ եռամսյակի)	1316	122
Առաջին հնգամյակ (1929—1932 թթ., ներառյալ 1928 թ. 4-րդ եռամսյակը)	5545	1305
Երկրորդ հնգամյակ (1933—1937 թթ.)	11938	2388
Երրորդ հնգամյակ (1938—1941 թթ. առաջին կիսամյակը)	11566	3305
1941 թ. (երկրորդ կիսամյակ)—1945 թ.	11096	2466
Չորրորդ հնգամյակ (1946—1950 թթ.)	22043	4409
Հինգերորդ հնգամյակ (1951—1955 թթ.)	42031	8406
1956—1960 թթ.	75517	15103
1961 թ.	19979	19979

Ինչպես երևում է աղյուսակից, շինմոնտաժային աշխատանքների ծավալը 1956—1960 թվականներին 2,5 անգամ գերազանցում է նախապատերազմյան բոլոր տարիների այդ աշխատանքների ծավալը: Միայն 1961 թվականին կատարված է՝ ավելի շատ շինմոնտաժային աշխատանքներ, քան առաջին երկու հնգամյակների ընթացքում:

ՍՍՌՄ շինարարական ինդուստրիայի հզոր վերելքը բնորոշվում է նաև շինարար-բանվորների թվի աճով: Եթե 1928 թ. շինմոնտաժային աշխատանքներում զբաղված էին

ընդամենը 723 հազար աշխատողներ, իսկ 1940 թվականին՝ 1.563 հազար, ապա 1961 թվականին նրանց թիվը հասավ 5.310 հազար մարդու:

Շինարարության ինդուստրիայի բուռն զարգացումը պահանջեց ստեղծել շինարարության նախագծային ու գիտահետազոտական կազմակերպությունների լայն ցանց: Նախագծային կազմակերպությունների զարգացման մասին է վերկայում շինարարության մեջ կատարված նախագծային աշխատանքների ծավալի անշեղ աճը: Առաջին հնգամյակի տարիներին նախագծային-հետազոտական աշխատանքների ծավալը կազմել է 230 միլիոն ռուբլի, երկրորդ հնգամյակի տարիներին՝ 410 մլն. ռուբլի, իսկ 1960 թ. նախագծային-հետազոտական աշխատանքների ծավալը համադրելի զներով կազմեց 600 մլն. ռուբլի:

ՍՄԿՊ XXII համագումարը, նախագծելով կոմունիզմի ուղիով սովետական էկոնոմիկայի զարգացման գլխավոր հեռանկարը, դրա հետ մեկտեղ որոշեց շինարարական ինդուստրիայի հետագա զարգացման ուղիները: Համագումարի որոշումներում մատնանշված է, որ անհրաժեշտ է հետագայում ևս արագ տեմպերով զարգացնել շինարարական ինդուստրիան, վճռականորեն բարելավել կապիտալ շինարարության պլանավորումը և կազմակերպումը, շեշտակի բարձրացնել կապիտալ ներդրումների արդյունավետությունը, վերջ տալ դրամական միջոցները, նյութական ու աշխատանքային ռեսուրսները ցրելու հակապետական ու տեղայնական պրակտիկային, իջեցնել շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը և բարելավել դրանց որակը:

Մասնագիտացումը և կոոպերացումը շինարարության մեջ: Շինարարական ինդուստրիայի համասեռ ձեռնարկությունների ու կազմակերպությունների մասնագիտացումը, արտադրական կոոպերացումը և նույատակահարմար կոմբինացումը, ինչպես և արտադրության մյուս ճյուղերում, տեխնիկական առաջադիմության և հասարակական աշխատանքի ռացիոնալ կազմակերպման կարևորագույն պայմաններից մեկն են: ՍՄԿՊ ծրագիրը մատնանշում է, որ միատիպ ար-

տադրանքի արտադրությունն անհրաժեշտ է գերազանցապես կենտրոնացնել մասնագիտացված խոշոր ձեռնարկություններում, նախատեսելով դրանց առավել ուսցիոնալ տեղաբաշխում:

Մասնագիտացումն իրենից ներկայացնում է հասարակական աշխատանքի բաժանման, որոշակի ձեռնարկություններում և շինարարական կազմակերպություններում միասեռ արտադրանքի արտադրության, միատեսակ աշխատանքների համակենտրոնացման պրոցես: Ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների մասնագիտացում միաժամանակ նշանակում է դրանց արտադրական կոռպե-րացման անհրաժեշտություն, արտադրանքի պատրաստման, որևէ օբյեկտի կառուցման համատեղ աշխատանք:

Շինարարական կազմակերպությունների մասնագիտացումն իրագործվում է երկու հիմնական ուղղությամբ. ըստ կառուցվող օբյեկտների ճյուղային նշանակության ու բնույթի (առաերկայական մասնագիտացում) և ըստ կատարվող աշխատանքի տեսակի կամ կոմպլեքսի (դետալային մասնագիտացում): Առաջին դեպքում շինարարական կազմակերպությունները մասնագիտանում են որոշակի ճյուղերի օբյեկտների կառուցման մեջ (օրինակ, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների, մագիստրալային խողովակագծերի, էլեկտրակայանների, մետալուրգիական գործարանների, բնակելի տների, ալրադացների, կամուրջների, թունելների կառուցման մեջ): Երկրորդ դեպքում շինարարական կազմակերպությունները մասնագիտանում են շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների կամ կոմպլեքսի կատարման գծով (օրինակ, հիմքերի կառուցման, սարքավորումների մոնտաժման, էլեկտրատեխնիկական, սանիտարա-տեխնիկական, հիդրոտեխնիկական, ջերմատեխնիկական, վերջնամշակման և այլ աշխատանքների գծով): Մասնագիտացման այդ տեսակները լրացվում են ըստ առանձին օպերացիաների կատարման կամ որոշակի տեխնոլոգիական պրոցեսների մասնագիտացումով: Այդպիսի մասնագիտացումը, որն ստացել է տեխնոլոգիական անունը, բնորոշ է

Ֆոնկրետ շինարարական կազմակերպության շրջանակներում արտադրության կազմակերպման համար, երբ որոշ աշխատանքներ (օպերացիաներ) կատարվում են նեղ մասնագիտացված ստորաբաժանումների (վարչությունների, տեղամասերի, բրիգադների, օղակների) միջոցով:

Շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում շինարարության հետագա ինդուստրացման, շինարարական տեխնիկայի ավելի լավ օգտագործման, կադրերի որակավորման և, վերջին հաշվով, աշխատանքի արտադրողականության բարձրացման ու շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման համար:

Շինարարական արտադրության առարկայական մասնագիտացումը լայն տարածում է ստացել արդյունաբերության առաջատար ճյուղերի ձեռնարկությունների կառուցման, տրանսպորտային կառուցվածքների, ինչպես նաև մասսայական բնակարանային շինարարության ժամանակ՝ հատկապես Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում ու ուրիշ քաղաքներում, որտեղ գործում են բնակելի տների, դպրոցների, հիվանդանոցների ու կուլտուր-կենցաղային այլ հիմնարկների կառուցման գծով մասնագիտացված մի շարք խոշոր կազմակերպություններ:

Զգալի զարգացում է ստացել շինարարական արտադրության դետալային մասնագիտացումը: Առանձին տեսակի կամ կոմպլեքս աշխատանքների գծով մասնադիտացված ստորաբաժանումները շատ դեպքերում կազմակերպչորեն ձևավորվել են որպես տրեստներ, որոնք սպասարկում են մի շարք տնտեսական շրջանների, ռեսպուբլիկայի կամ ամբողջ երկրի կարիքները: Այդպիսի, օրինակ, տրեստներ են՝ «Սոյուզտեպլոստրոյը» (ջերմատեխնիկական աշխատանքների կատարման գծով), «Ֆունդամենտստրոյը» (կառուցվածքների բարդ հիմքերի ու պատվանդանների կառուցման գծով), «Վոստոկմետալուրգմոնտաժը» (մետալուրգիական ձեռնարկությունների սարքավորումների մոնտաժման գծով) և շատ ուրիշները:

1961 թ. մասնագիտացված կազմակերպությունները կատարել են շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի համարյա կեսը: Ինչպես ցույց է տալիս մեծ թվով շինարարական կազմակերպությունների վերաբերյալ փաստական տվյալների ուսումնասիրությունը, որը կատարել է ՍՍՌՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի շինարարության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտը, մասնագիտացման շնորհիվ շինարարական մեքենաների արտադրողականությունն ավելանում է 10—15 տոկոսով, իսկ բանվորների աշխատանքի արտադրողականությունը՝ մոտ 15 տոկոսով:

Շինարարական կազմակերպությունների մասնագիտացման ձևերը որոշվում են շինարարության կոնկրետ պայմաններով: Դրանք չեն կարող բոլոր դեպքերի համար միատեսակ լինել: Տնտեսական շրջաններում շինարարական կազմակերպությունների մասնագիտացման կոնկրետ ձևերի հարցը պետք է լուծվի, ելնելով շինարարության ծավալից, կառուցվող օբյեկտների նշանակությունից, աշխատանքների առանձին տեսակների տեսակարար կշռից, կառույցների տերիտորիալ տեղաբաշխումից և այլ գործոններից: Շինարարական կազմակերպությունների մասնագիտացման ձևերը պետք է լինեն ճկուն և համապատասխանեն հիմնական նրպատակին՝ պայմաններ ստեղծել շինարարության ինդուստրացման մակարդակի բարձրացման, շինարարության արագացման, որակի բարելավման և ինքնարժեքի իջեցման համար:

Շինարարական արտադրության լայն զարգացած մասնագիտացման պայմաններում, հատկապես շինարարության վերջնական արտադրանքի ստեղծման համար որոշակի աշխատանքների գծով մասնագիտացված մեծաքանակ կազմակերպություններ ներգրավելու անհրաժեշտության կապակցությամբ, մեծ նշանակություն է ձեռք բերում շինարարական կազմակերպությունների ճիշտ կոռպորացումը ինչպես առանձին տնտեսական շրջանների ներսում, այնպես էլ երկրի տարբեր տնտեսական շրջանների միջև:

Այստեղից անհրաժեշտութիւնն է առաջանում, որ գլխավոր կապալառուն միանգամայն հստակ կազմակերպի աշխատանքների կառավարումը, այսինքն՝ տվյալ շինարարական հրապարակի կոնկրետ պայմաններում կարողանա առավել խելացիորեն կազմակերպի բոլոր մասնագիտացված կազմակերպությունների համատեղ կարգավորված աշխատանքը:

Որոշ դեպքերում շինարարական արտադրութեան կազմակերպման առավել արդյունավետ ձևերից է կոմբինացումը: Այն իրենից ներկայացնում է արտադրութեան համակենտրոնացման այնպիսի ձև, որի ժամանակ մի կազմակերպության մեջ է միավորվում տարբեր ճյուղերի աշխատանքների կատարումը: Դա հնարավորութիւն է տալիս ղգալիորեն բարձրացնել շինարարական կազմակերպությունների տնտեսական գործունեութեան ցուցանիշները՝ կադրերի ավելի լավ օգտագործման, արտադրութեան ու շրջանառութեան ծախքերի կրճատման, վառելիքի, էլեկտրաէներգիայի և այլ ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման հաշվին: Կոմբինացումն իր արտահայտութիւնն է գտնում շինմոնտաժային տրեստների կազմում սկզբնական շինարարական կազմակերպությունների կազմակերպական միացման մեջ, կազմակերպություններ, որոնք մասնագիտացել են ըստ շինարարութեան ճյուղերի, ըստ աշխատանքների տեսակի ու կոմպլեքսի:

Մի շարք պայմանների առկայութեան դեպքում, օրինակ, մասսայական կենտրոնացված բնակարանային շինարարութեան կամ երկրի սակավ բնակեցված շրջաններում արդյունաբերական ու հիդրոտեխնիկական խոշոր կոմպլեքսների կառուցման ժամանակ նպատակահարմար է դառնում շինմոնտաժային կազմակերպությունների միավորումը (կոմբինացումը) հավաքովի կոնստրուկցիաներ թողարկող ձեռնարկութիւնների հետ: Այդպիսի կոմբինացումն իր արտահայտութիւնն է գտնել մի շարք քաղաքներում տնաշինական կոմբինատների ստեղծման գործում: Այդ դեպքում շինմոնտաժային կազմակերպությունները հանդիսանում են դրանց ճյուղային մասնագիտացման ձև, օրինակ, բնակարանային

շինարարութեան գծով, որը կոմբինացվում է բարձր տեխնիկական պատրաստութեան տների համար խոշոր շափերի կոնստրուկցիաներ արտադրող արդյունաբերական ձեռնարկութեան հետ:

2. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նոր հիմնական ֆոնդերի ստեղծման և գործողների վերակառուցման համար կատարվող ծախսումները կոչվում են կապիտալ ներդրումներ:

Կոմունիստական շինարարութեան վիթխարի խնդիրների կենսագործումը պահանջում է խոշոր կապիտալ ներդրումներ: Այդ ներդրումների հիմնական աղբյուրները տնտեսութեան ներքին կուտակումներն են:

Կապիտալիզմի ժամանակ կապիտալ ներդրումների մեջ գլխավոր դեր են խաղում շահույթները, որոնք ստացվում են աշխատավորների անխնա շահագործումից և ուրիշ ժողովուրդների կողոպտումից: Նման աղբյուրներն անհամատեղելի են սոցիալիստական կարգի հետ:

Սոցիալիզմը լրիվ ոչնչացրել է մարդու շահագործումը մարդու կողմից և ազգային ճնշումը. սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումն ուղեկցվում է աշխատավորների նյութական բարեկեցութեան անշեղ աճով: Սովետական երկիրը շէր կարող հույս դնել նաև դրսի տնտեսական օգնութեան վրա, քանի որ իմպերիալիստներն ամեն կերպ ձգտում էին արգելակել մեր երկրի տնտեսական զարգացումը: Երկրի քայքայվածութեան և տեխնիկա-տնտեսական հետամնացութեան պայմաններում կուտակման պրոբլեմի հաջող լուծումը եղել է սոցիալիստական շինարարութեան ամենաբարդ խնդիրներից մեկը: Վ. Ի. Լենինը «Լավ է քիչ, բայց լավ» աշխատութեան մեջ խնդիր դրեց. «Տնտեսութեան մեծագույն ու մեծագույն խնայողութեան գնով մեր պետութեան մեջ հասնելու այն բանին, որ ամեն մի նվազագույն խնայողութուն պահենք մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի զարգացման, էլեկտրիֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցումն ավարտելու

համար և այլն»¹: Տնտեսությունը պլանային ձևով վարելու առավելությունները թույլ տվեցին ապահովել եղած ռեսուրսների առավել ուցիտնալ օգտագործումը երկրի ինդուստրացման, ժամանակակից ծանր արդյունաբերության մի շարք ճյուղերի ստեղծման համար: Սոցիալիստական էկոնոմիկայի զարգացմանը զուգընթաց ազգային եկամուտի աճի հիման վրա ընդլայնվեցին ներքին կուտակման հնարավորությունները:

Սոցիալիզմի օրոք շկան շահագործող դասակարգեր և պարազիտային սպառում, ամբողջ եկամուտը պատկանում է աշխատավորներին և օգտագործվում է նրանց շահերի, կոմունիզմի կառուցման շահերի համար: ՍՍՌՄ ազգային եկամտի մոտ երեք բառորդը մտնում է սպառման ֆոնդի մեջ և մեկ բառորդը՝ կուտակման ֆոնդի մեջ, Սպառման ֆոնդն ապահովում է ժողովրդի նյութական ու կուլտուրական աճող պահանջարկների բավարարումը: Կուտակման ֆոնդը ծառայում է որպես արտագրության ընդլայնման ու կատարելագործման, հասարակական հարստության ավելացման աղբյուր: Մեր երկրում կուտակման ֆոնդի 80 տոկոսից ավելին օգտագործվում է կապիտալ ներդրումների համար:

Սոցիալիստական կարգը ազգային եկամտի աճի բարձր տեմպերի հնարավորություններ է ստեղծում: 1913 թ. համեմատությամբ, 1961 թ. ՍՍՌՄ-ի (ներկա սահմաններում) ազգային եկամուտն ավելացել է 25 անգամ: Այդ նույն ժամանակաշրջանում Ամերիկայի Միացյալ Նահանգներում ազգային եկամուտն ավելացել է միայն 3,6 անգամ: Անդրիայում և Ֆրանսիայում ազգային եկամուտը 1960 թ., 1913 թ. համեմատությամբ, ավելացել է 2 անգամից մի փոքր ավելի:

Կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի աճը ՍՍՌՄ-ում: ՍՍՌՄ-ում տարեցտարի անշեղորեն աճում են կապիտալ ներդրումները:


Պետական ու կոոպերատիվ կազմակերպությունների կապիտալ ներդրումները (ներառյալ նախագծային-հետազոտական աշխատանքների արժեքը) 1918—1961 թվականների ընթացքում կազմել են հսկայական գումար՝ 311,4 միլիարդ ռուբլի: Սովետական իշխանության տարիներին (մինչև 1961 թ. ներառյալ) կոլտնտեսությունները կատարել են 31,2 միլիարդ ռուբլի կապիտալ ներդրումներ, իսկ բնակչությունը՝ 29,9 մի-

¹ Վ. Ի. Լենին, Երկիր, հ. 33, էջ 508:

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԸ ՍՍՌՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(տարեկան միջինը, համադրելի գներով,
միլիարդ ռուբլիներով)



լիարդ ռուբլի (սեփական բնակելի տների ու բնակարանների կառուցման համար): 1918—1961 թթ. ընթացքում պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների ու կազմակերպությունների, կոլտնտեսությունների և բնակչության կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմեց 372,5 միլիարդ ռուբլի:

Պլանավորման գործող կարգին համապատասխան պետական ձեռնարկությունների ու կազմակերպությունների կապիտալ ներդրումների ծափելի մեջ չեն մտնում այն ծախսումները, որոնք կատարվում են երկրաբանական-հետախուզական աշխատանքների, քաղաքների ու ավանների հատա-

կազմման ու կառուցապատման նախագծերի մշակման, շինարարության համար տիպային նախագծերի կազմման, անտառատնկումների, հիմնական հոտի ձևավորման համար: Կոլտնտեսությունների կապիտալ ներդրումների ծավալի մեջ չի մտնում անասունների ձեռք բերման ու հիմնական հոտի ձևավորման համար կատարվող ծախսումները:

Հաշվի առնելով նշված ծախսումները, ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները (առանց կապիտալ նորոգման ու մոդեռնացման) 1918—1961 թթ. կազմեցին ավելի քան 400 միլիարդ ռուբլի:

Մեր երկիրը կապիտալ ներդրումների աճի տեմպերով գերազանցում է կապիտալիստական ամենազարգացած երկրներին, այդ թվում և ԱՄՆ-ին: Կապիտալ ներդրումների տարեկան միջին աճը 1951—1961 թթ. ՍՍՌՄ-ում կազմել է 11,8 %, իսկ ԱՄՆ-ում՝ 1,7, Անգլիայում և Ֆրանսիայում՝ 5 %: Սովետական Միությունը 1959 թվականից սկսեց ԱՄՆ-ից անցնել նաև արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումների բացարձակ չափերով:

Կապիտալ ներդրումների ծավալի արագ աճը ապահովում

Պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների և կազմակերպությունների (առանց կոլտնտեսությունների) հիմնական ֆոնդերի գործարկումը ի նաշիվ կապիտալ ներդրումների (համադրելի գներով)

	միլիարդ ռուբլի	տարեկան միջինը
1918—1928 թթ. (առանց 1928 թ. 4-րդ եռամսյակի)	1,3	0,12
Առաջին հնգամյակ (1929—1932 թթ., ներառյալ 1928 թ. 4-րդ եռամսյակը)	7,1	1,7
Երկրորդ հնգամյակ (1933—1937 թթ.)	13,2	2,6
Երրորդ հնգամյակի երեք ու կես տարիները (1938—1941 թթ. առաջին կիսամյակը)	13,4	3,8
Չորս ու կես տարի (1941 թ. հուլիսի 1-ից մինչև 1946 թ. հունվարի 1-ը)	13,2	2,9
Չորրորդ հնգամյակ (1946—1950 թթ.)	30,3	6,1
Հինգերորդ հնգամյակ (1951—1955 թթ.)	59,0	11,8
1956—1960 թթ.	113,7	22,7
1961 թ.	28,7	28,7

է արտադրական կարողությունների, բնակելի տարածու-
թյունների և ժողովրդական տնտեսութեան այլ հիմնական
ֆոնդերի գործարկման անշեղ ավելացում: Այդ ցույց է տալիս
33 էջի աղյուսակը:

Միայն յոթնամյակի առաջին կեսում կառուցվել է 3200-ից
ավելի պետական արդյունաբերական խոշոր ձեռնարկություն-
ներ: Գործարկվել են նոր կարողություններ, որոնք ապահո-
վում են տարեկան ավելի քան 10 մլն տ շուգունի, 14 մլն տ
պողպատի, մոտ 11 մլն տ գլանվածքի, 15,6 մլն տ ցեմենտի
արտադրությունը: Երեք ու կես տարում գործարկվել է ավելի
քան 22 մլն կվտ ընդհանուր կարողությամբ էլեկտրակայան-
ներ, որը երկու անգամ գերազանցում է ՍՍՌՄ-ում 1940 թը-
վականի առկա էլեկտրակայանների կարողությունը:

Կապիտալ ներդրումների հիմնական ուղղությունները: Կապի-
տալ ներդրումներն ուղղվում են ժողովրդական տնտեսու-
թյան բոլոր ճյուղերի արտադրական ֆոնդերի ընդլայնմա-
նը, բնակարանային ու կուլտուր-կենցաղային նշանակու-
թյուն ունեցող օբյեկտների շինարարութեանը: Այդ թույլ է
տալիս անշեղորեն ավելացնել արտադրութեան ծավալը, բա-
րելավել բնակչության կյանքի պայմանները, ամրապնդել
երկրի պաշտպանունակությունը:

Կապիտալ ներդրումների հիմնական մասը բաշխվում է կենտրոնաց-
ված կառուցված պետական ժողովրդատնտեսական պլանով: Կենտրոնացված
կապիտալ ներդրումներից բացի կան նաև շինարարութեան համար միջոց-
ներ շինտրոնացված աղբյուրներ, որոնք օգտագործվում են պետական
պլանից դուրս: Դրանց թվին են պատկանում, օրինակ, զանազան խրախու-
ման ֆոնդերի միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկություններում
պլանային և արտապլանային շահութիւններից մասհանումների կարգով, կու-
տնտեսութեանների՝ շինարարութեան համար հատկացվող դրամական եկա-
մուտները, բանկերի վարկերը, բնակչության միջոցները:


Միջոցների շինտրոնացված աղբյուրների հաշվին պետական և կոոպե-
րատիվ կազմակերպութեանների կապիտալ ներդրումների ծավալը (չհաշ-
ված կուտնտեսութեանների կապիտալ ներդրումները) 1961 թ. կազմեց
4,4 միլիարդ ռուբլի: Չկենտրոնացված կապիտալ ներդրումները կատարվում
են այն դեպքում, երբ դրանք ապահովված են անհրաժեշտ նյութատեխնի-
կական ռեսուրսներով: Անթույլատրելի է առանձնացնել այդ նպատակով
նյութատեխնիկական այն ռեսուրսները, որոնք նախատեսված են կապիտալ
ներդրումների պետական պլանի կատարման համար:

Ժողովրդական տնտեսության զարգացման գործում ճիշտ համամասնությունները պահպանելու, արտադրության առաջատար ճյուղերի առավել զարգացումն ապահովելու և ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակը սիստեմատիկաբար բարձրացնելու համար կարևոր նշանակություն ունեն կապիտալ ներդրումների ճիշտ ճյուղային կառուցվածքի սահմանումը, դրանց առավել նպատակահարմար բաշխումը՝ ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի:

1918—1961 թթ. ընթացքում կատարված կապիտալ ներ-

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
 ՃՅՈՒՂԵՐԻ, 1918—1961 թթ.

(տոկոսներով, կապիտալ ներդրումների
 ընդհանուր ծավալի նկատմամբ)



դրումներն՝ ըստ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության ճյուղերի, երևում է հետևյալ դիագրամից (տես էջ 35):

Բոլոր կապիտալ ներդրումների մեծ մասը (148,6 մլրդ. ռուբ.) տրամադրվել է արդյունաբերությանը, որից 130,5 միլիարդը՝ ծանր արդյունաբերությանը:

Երկրի ինդուստրացումն ուղեկցվել է արդյունաբերական շինարարության վիթխարի թափով: Սովետական իշխանության տարիներին ընդամենը կառուցվել, վերականգնվել և գործարկվել են ավելի քան 37 հազ. պետական արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, չհաշված միջին ու մանր ձեռնարկությունները: Ամբողջ արդյունաբերական արտադրանքն այժմ թողարկվում է նոր կամ վերակառուցված ձեռնարկությունների միջոցով:

Արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը 1961 թ. սկզբին, 1940 թ. համեմատությամբ, աճել են ավելի քան 4,3 անգամ, իսկ շինարարությանը՝ 6,5 անգամ: Ներկայումս դրանք կազմում են ժողովրդական տնտեսության բոլոր հիմնական արտադրական ֆոնդերի ավելի քան կեսը այն դեպքում, երբ 1913 թ. արդյունաբերությանը և շինարարությանը բաժին էր ընկնում բոլոր հիմնական արտադրական ֆոնդերի մոտ մեկ քառորդը:

Մանր արդյունաբերության զարգացման նպատակով կապիտալ ներդրումների առաջնահերթ տրամադրումը ապահովեց մեր երկրում պատմական կարճ ժամանակամիջոցում հզոր ինդուստրիայի ստեղծումը, արդյունաբերական արտադրության արագ աճը:

Ժողովրդական տնտեսության զարգացման գործում մեծ հաջողություններ են ձեռք բերվել պարտիայի XX համագումարից հետո: Ժողովրդական տնտեսության մեջ 1956—1961 թթ. ընթացքում պետական կապիտալ ներդրումները կազմել են 156 միլիարդ ռուբլի, որն ավելի է, քան սովետական իշխանության բոլոր տարիների ընթացքում՝ մինչև պարտիայի XX համագումարը կատարած կապիտալ ներդրումները: Աճել են նոր քաղաքներ ու արդյունաբերական կենտրոններ: Շահագործման են հանձնվել մոտ 6000 ար-

դյունաբերական խոշոր նոր ձեռնարկություններ, որոնք թվում՝ Վ. Ի. Լենինի և ՍՄԿՊ XXII համագումարի անվան, Վոլգայի վրա կառուցված աշխարհում խոշորագույն հիդրոէլեկտրակայանները, Կարազանդայի մետալուրգիական գործարանը, հզոր լեռնահարստացուցիչ կոմբինատներ՝ Ուկրաինայում, Ղազախստանում, քիմիական և մեքենաշինական խոշոր գործարաններ, շաքարի կոմբինատներ, տեքստիլ ֆաբրիկաներ: Հսկայական աշխատանք է կատարված գործող ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցման և դրանք նորագույն տեխնիկայով զինելու ուղղությամբ:

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան Ռուսաստանը տեխնիկա-տնտեսական տեսակետից հետամնաց երկիր էր: Արդյունաբերական արտադրանքի ծավալով նա շատ ետ էր մնում Ֆրանսիայից, Անգլիայից, Գերմանիայից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Սովետական իշխանության տարիներին, չնայած մեր երկրի վզին փաթաթած պատերազմների ժամանակների մեծ ավերածություններին, ՍՍՌՄ-ը վերածվեց հզոր խոշորագույն տնտեսության, 1961 թ. մեր երկրում (ժամանակակից սահմաններում) արտադրվել է 44 անգամ ավելի արդյունաբերական արտադրանք, քան 1913 թ., ընդ որում արտադրության միջոցների («Ա» խումբ) արտադրությունն ավելացել է 99 անգամ, սպառման առարկաների («Բ» խումբ) արտադրությունը՝ 16 անգամ: Ներկայումս մեր երկիրը թողարկում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի համարյա մեկ հինգերորդ մասը, ավելի քան այնպիսի բարձր զարգացած կապիտալիստական երկրներ, ինչպիսիք են՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան, Ճապոնիան, Բելգիան և Նիդերլանդները միասին վերցրած: 1961 թ. ՍՍՌՄ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմեց ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 60 տոկոսը:

Հսկայական միջոցներ են ներգրվում գյուղատնտեսության մեջ: 1918—1961 թթ. գյուղատնտեսության մեջ ներգրված կապիտալ ներդրումները կազմեցին 61,5 միլիարդ ռուբլի, այդ թվում պետական միջոցների հաշվին՝ 30,7 միլիարդ ռուբլի:

Պետական և կոլտնտեսային խոշոր կապիտալ ներդրումներն ապահովեցին գյուղատնտեսության հիմնական ֆոնդերի արագ աճ: ՍՍՌՄ գյուղատնտեսության հիմնական արտադրական ֆոնդերը (ներառյալ անասունները) 1960 թ., 1940 թ.

համեմատությամբ, աճեցին ավելի քան 2,2 անգամ և կազմեցին երկրի բոլոր հիմնական արտադրական ֆոնդերի մոտ մեկ քառորդը:

Մեր երկրում ստեղծված է հզոր սոցիալիստական գյուղատնտեսություն: 1962 թ. հունվարի 1-ի դրությամբ ՍՍՌՄ գյուղատնտեսության մեջ կար 8,3 հազ. սովխոզ և 41,3 հազ. կոլտնտեսություն:

Կոմունիստական պարտիան վերջին տարիներին խոշոր միջոցառումներ անցկացրեց գյուղատնտեսության բոլոր ճյուղերի շեշտակի վերելքն ապահովելու ուղղությամբ: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալն անշեղորեն աճում է, ընդ որում գյուղատնտեսության մեջ զբաղված բնակչության թվի տեսակարար կշիռը կրճատվում է: 1961 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թ. մակարդակը գերազանցեց 2,3 անգամ:

Գյուղատնտեսության հետագա զարգացման ուղղությամբ խոշոր միջոցառումների անցկացման կապակցությամբ, գյուղատնտեսական շինարարությունը ձեռք է բերում էլ ավելի մեծ թափ, հատկապես նոր հողերի յուրացման շրջաններում:

1918—1961 թթ. կապիտալ ներդրումները տրանսպորտում և կապի մեջ կազմեցին 34,2 միլիարդ ռուբլի: ՍՍՌՄ-ում տրանսպորտի և կապի հիմնական արտադրական ֆոնդերը, 1940 թ. համեմատությամբ, 1961 թ. ավելացել են ավելի քան 2,4 անգամ:

Սովետական իշխանության տարիներին տրանսպորտը և կապը զարգացել են արագ տեմպերով: Տրանսպորտի բոլոր տեսակների բեռնաշրջանառությունը, 1913 թ. համեմատությամբ, 1961 թ. ավելացել է մոտ 20 անգամ: Նոր ստեղծվել և արագորեն զարգանում է օդային, ավտոմոբիլային և խողովակամուղ տրանսպորտը: Նորագույն տեխնիկական հիմքի վրա անշեղորեն ընդլայնվում է երկաթուղային տրանսպորտը: Կառուցվել է ավելի քան 128 հազ. կմ նոր երկաթգծեր (ներառյալ մերձատար ուղիները): Էլեկտրաբարձրի ու ջերմաբարձրի փոխադրած երկաթուղիների երկարությունը 1961 թ. կազմեց 42,1 հազ. կմ, իսկ բեռնաշրջանառության մեջ այդ բարձր բաժինը՝ 50 տոկոսից ավելի: ՍՍՌՄ-ն աշխարհում առաջին տեղն է դուրս եկել էլեկտրիֆիկացված գծերի երկարությամբ:

Բնակարանային պրոբլեմն արագորեն լուծելուն, ամբողջ բնակչությանը բարեկարգ բնակարաններով ապահովելուն պարտիան ու կառավարությունը բացառիկ կարևոր նշանակություն են տալիս: Բնակարանային շինարարության մեջ

կապիտալ ներդրումները, ներառյալ անհատականը, 1918—1961 թթ. կազմեցին 78,8 միլիարդ ռուբլի: Բնակարանային շինարարության վրա կատարված ընդհանուր ծախսումները, հաշված նաև բնակչության միջոցներով և պետական վարկի օգնությամբ իրականացվող անհատական բնակարանային շինարարությունը, ներկայումս կազմում են կապիտալ ներդրումների ամբողջ ծավալի 21 տոկոսը:

Քաղաքային բնակարանային ֆոնդը 1913 թ. 180 մլն թառ. մետրից ավելացավ և 1961 թ. վերջերին հասավ 1014 մլն թառ. մետրի: Միայն վերջին հինգ ու կես տարվա ընթացքում (1957 թ. մինչև 1962 թ. հուլիսի 1-ը) քաղաքներում և ավաններում կառուցվել են 393 մլն ԲՄ ընդհանուր տարածությունը բնակելի տներ: Մոտ 3,5 մլն բնակելի տներ են կառուցվել կոլտնտեսականների ու գյուղական ինտելիգենցիայի ուժերով: Այդ ժամանակամիջոցում քաղաքներում և բանվորական ավաններում բնակարանային ֆոնդն ավելացավ ավելի քան 40 տոկոսով: Ավելի քան 66 միլիոն մարդ կամ երկրի բնակչության գրեթե մեկ երրորդն ստացան նոր բնակարաններ:

Յուրաքանչյուր հազար բնակչի հաշվով տարեկան շահագործման հանձնվող բնակարանների միջին քանակով մեր երկիրը զգալիորեն առաջ է անցել բոլոր կապիտալիստական երկրներից, Օրինակ, 1961 թ. հազար բնակչի հաշվով ՍՍՌՄ-ում կառուցվել է միջին թվով 12,4 բնակարան, ԱՄՆ-ում՝ 6,9, Անգլիայում՝ 5,6, Իտալիայում՝ 6,0:

Կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի մեջ զգալի տեսակարար կշիռ ունի կուլտուր-կենցաղային նշանակության օբյեկտների շինարարությունը: Պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կապիտալ ներդրումներն առևտրի ու կոմունալ ձեռնարկությունների, գիտություն, կուլտուրայի, լուսավորության և առողջապահության հիմնարկների շինարարության մեջ 1918—1961 թթ. կազմեցին 53,9 միլիարդ ռուբլի: Ամեն տարի շարք են մտնում մեծ քանակությամբ նոր դպրոցներ, հիվանդանոցներ, ակումբներ և կուլտուր-կենցաղային այլ հիմնարկներ: 1918 թ. մինչև 1961 թ. պետության հաշվին կառուցվել և վերականգնվել են 76 հազ. դպրոց՝ 20,5 մլն աշակերտական տեղով, հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ՝ 438 հազ. մահճակալով, մանկական նա-

խաղաղոցական հիմնարկներ՝ 2.247 հազ. տեղով: Բացի դրանից, մեծ թվով դպրոցներ, հիվանդանոցներ և մանկական հիմնարկություններ կառուցվել են կոլտնտեսությունների միջոցներով:

Սովետական իշխանության տարիներին մեր երկրում իրականացվել է իսկական կուլտուրական ռեուլյուցիա: Նախառեուլյուցիոն Ռուսաստանում 9—49 տարեկան հասակի բնակչության երեք քառորդն անգրագետ էր: Այժմ կրթության զարգացմամբ ՍՍՌՄ-ն անցել է առավել զարգացած կապիտալիստական երկրներից: Ավելի քան 70 մլն աշխատավորներ ունեն տարրականից բարձր կրթություն: Ներկայումս միջնակարգ ու բարձրագույն կրթություն ունեն բանվորների 40 տոկոսը:


Կապիտալ ներդրումների կառուցվածքը: Կապիտալ ներդրումները կազմվում են. 1) սարքավորումների, գործիքների և գույքի ձեռքբերման ծախսումներից, 2) շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման ծախսումներից, 3) այլ կապիտալ ներդրումներից, որոնց վերաբերում են նախագծային-հետազոտական աշխատանքների, շինարարական հրապարակների նախապատրաստման և կառուցվող օբյեկտները շահագործման հանձնելու ուղղությամբ նախօրոք անցկացվող միջոցառումների (օրինակ, կառուցվող ձեռնարկության դիրեկցիայի պահելը, դրա համար հիմնական կատեգորիայի բանվոր-կադրերի պատրաստելը և այլն) վրա կատարված ծախսումները:

Շինարարության տարբեր ճյուղերում կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի մեջ այդ ծախսումների տեսակարար կշիռը տարբեր է: Օրինակ, ջերմային էլեկտրակայանների, մետալուրգիական, քիմիական, նավթավերամշակման, մեքենաշինական գործարանների շինարարության ժամանակ կապիտալ ներդրումների հիմնական մասը կազմում են սարքավորումների վրա կատարվող ծախսումները: Բնակարանային և կոմունալ շինարարության մեջ, ընդհակառակը, կապիտալ ներդրումների կազմում գերակշռում են շինմոնտաժային աշխատանքների վրա կատարվող ծախսումները:

Սարքավորումների, շինմոնտաժային աշխատանքների և այլ կապիտալ ներդրումների վրա կատարվող ծախսումների միջև եղած հարաբերակցությունից ստեղծվում է կապիտալ

ներդրումների կառուցվածքը: Ձեռնարկության շինարարության ժամանակ տնտեսապես առավել շահավետ է կապիտալ ներդրումների այնպիսի կառուցվածքը, երբ ամենամեծ տնտեսակարար կշիռն ունենում են սարքավորումները: Կապիտալ ներդրումների ծավալի աճի հետ միասին բարելավվել է նաև դրանց կառուցվածքը: Այդ մասին են վկայում դիագրամի տվյալները:

Այժմ սարքավորումներ, կապիտալ ներդրումների կառուցվածքը գործիքներ ու գույք ձեռք բերելու համար կատարվող ծախսումները կազմում են կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի մեկ երրորդը: Արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների գծով սարքավորումների բաժինը զգալիորեն բարձր է. առաջին հընգամյակում այն կազմել է 14⁰/₀, շորրորդ հնգամյակում՝ 36⁰/₀ և 1956—1960 թթ. 41⁰/₀:



Պայմանական ծրայուններ
 [Cross-hatched] Սարքավորում, գործիքներ, գույք
 [Diagonal lines] Շինվանդանաշին աղյուստանք
 [White] Այլ կապիտալ աղյուստանքներ և յարասումներ, ներույթայն նախագծային հետազոտական աղյուստանքների վրա կատարվող յարասումները

մեծ տնտեսակարար կշիռը բացատրվում է գլխավորապես նրանով, որ մեր երկիրն ըստ էության նոր էր ստեղծում արդյունաբերության ճյուղերի մեծ մասը: Դրա հետևանքով երկար տարիների ընթացքում գերակշռում էր նոր շինարարությունը: Սոցիալիստական արտադրության բոլոր ճյուղերի աճի և տեխնիկական կատարելագործման հետ միասին սարքավորումները

քումների վրա կատարվող ծախսումների բաժինն աստիճանաբար ավելացավ, այն ժամանակ, երբ շինմոնտաժային աշխատանքների բաժինը համապատասխանաբար կրճատվեց:

Սարքավորումների վրա կատարվող ծախսումների աճն արտացոլում է ժողովրդական տնտեսության մեջ տեղի ունեցող տեխնիկական պրոգրեսը և վկայում է կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման մասին: Այնպիսի միջոցառումների անցկացումը, ինչպես առկա արտադրական հրապարակների լավագույն ձևով օգտագործումը, սարքավորումների տեղադրումը բաց հրապարակներում՝ անհրաժեշտության դեպքում հասարակ ծածկեր կիրառելով, շենքերի կշռի փոքրացումը, կրճատում է շինմոնտաժային աշխատանքների ծավալը, միջոցներ է ազատում սարքավորումներ ձեռք բերելու համար:

Կապիտալ ներդրումները հանդիսանում են նոր տեխնիկայի ներդրման, արտադրության կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման կարևորագույն աղբյուրը, որ ապահովում է հասարակական աշխատանքի արտադրողականության անընդհատ աճ:

Սովետական Միությունը գիտատեխնիկական առաջադիմության ասպարեզում հասել է խոշորագույն հաջողությունների: Այդ մասին են համոզիչ կերպով վկայում սովետական մարդկանց կողմից ստեղծված աշխարհում առաջին ատոմային էլեկտրակայանը, երկրի արհեստական արբանյակները ու տիեզերական հրթիռները, վիթխարի էլեկտրակայաններն ու էներգետիկ սիստեմները, հազարավոր նորագույն մեքենաներն ու ավտոմատացված արտադրությունը: Սովետական մարդկանց՝ Յու. Ա. Գագարինի, Գ. Ս. Տիտովի, Ա. Գ. Նիկոլաևի, Պ. Ռ. Պոպովիչի մեծ սխրագործությունը, որոնք մարդկության համար ճանապարհ բացեցին դեպի տիեզերք, օրինաչափ արտացոլումն է այն բանի, որ ՍՍՌՄ-ը ներկայումս գնում է համաշխարհային գիտատեխնիկական առաջադիմության ավանգարդում: Միայն յոթնամյակի երեք տարում գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտորական կազմակերպություններն ու արդյունաբերական ձեռնար-

կությունները ժողովրդական տնտեսության տարբեք հյուղերի համար նախագծել ու պատրաստել են ավելի քան 9 հազար կարևորագույն նոր տիպի մեքենաներ, մեխանիզմներ, ապարատներ և այլ սարքավորումներ, 3 հազար նոր կարևորագույն տիպի զանազան սարքեր: Միաժամանակ արտադրությունից հանվել են հազարավոր անուն հնացած կոնստրուկցիայի մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ, որոնք փոխարինվել են ժամանակակից լավագույն կոնստրուկցիաներով: Այդ բոլորը ցույց են տալիս, որ սոցիալիստական արտադրության ընդլայնումը իրագործվում է գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների բազայի վրա:

3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԾ ԾՐԱԳԻՐԸ

ՍՄԿՊ ծրագիրը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման մասին: Մեր երկիրը թեև կոխել է կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանը, Այդ ժամանակաշրջանի հիմնական խնդիրն է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, սոցիալիստական հասարակական հարաբերությունները կոմունիստականի վերաճումը, նոր մարդու՝ կոմունիստական հասարակարգի մարդու դաստիարակությունը:

Այս խնդիրներն անխզելիորեն կապված են իրար հետ: Նյութատեխնիկական բազայի զարգացումը նյութական հիմք է ստեղծում հասարակական հարաբերությունների և մարդկանց գիտակցության փոփոխման համար: Միաժամանակ հասարակական հարաբերությունների զարգացումը, մարդու կոմունիստական դիտակցականության և ակտիվության աճը ծառայում են որպես հասարակության նյութատեխնիկական բազայի արագ զարգացման կարևորագույն պայման:

Կոմունիստական շինարարության մշտական օղակը կառուցիկալի նյութատեխնիկական բազայի ստեղծումն է: Միայն դրա հիման վրա կարելի է ապահովել բնակչության համար

նյութական ու կուլտուրական բարիքների առատություն, հասնել ժողովրդի ամենաբարձր կենսամակարդակի, սովետական մարդկանց զինել առավել կատարելագործված տեխնիկայով և աշխատանքը վերածել ուրախության, ոգեշնչման և ստեղծագործության աղբյուրի: Ուստի կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը հանդես է գալիս որպես գլխավոր տնտեսական խնդիր, որպես պարտիայի ու սովետական ժողովրդի գլխավոր գծի հիմք, որի իրականացումը իրենից ներկայացնում է ճիշտ ուղի կոմունիզմի մեծ սկզբունքին՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակութունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների» հասնելու համար:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազան ստեղծվում է սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ամրապնդման ու հետագա զարգացման հիման վրա: Դրա հետ միասին կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը կնըշանակի հասարակական արտադրության զարգացման մեջ որակական նոր էտապ:

Կոմունիզմը, որպես բարձր հասարակական կարգ, ենթադրում է կապիտալիզմի հետ համեմատած ավելի բարձր հասարակական արտադրության զարգացման մակարդակ: Կոմունիստական արտադրության հիմնական նպատակն է ապահովել հասարակության անընդհատ առաջադիմությունը, հասարակության յուրաքանչյուր անդամին տալ նրա անող պահանջմունքներին ու անհատական ճաշակին համապատասխան նյութական ու կուլտուրական բարիքներ:

Հասարակության նյութատեխնիկական բազան կարելի է բնորոշել հասարակական արտադրության չափերով, տեխնիկական մակարդակով և կազմակերպմամբ:

Ստեղծել կոմունիզմի նյութատեխնիկական բազա նշանակում է՝ ապահովել հասարակական արտադրության զարգացումն այնպիսի չափերով, որոնք հնարավոր դարձնեին առատորեն բավարարելու ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ նրա բոլոր անդամների անող պահանջմունքները:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման արդեն առաջին տասնամյակի ընթացքում բնակչության մեկ

շնչին ընկնող արտադրանքի արտադրությունը մեր երկիրը կգերազանցի կապիտալիզմի առավել հզոր ու հարուստ երկրին՝ ԱՄՆ-ին: Այսպիսով, պատմության մեջ առաջին անգամ լիովին և վերջնականապես կվերանա մարդկանց սակավ ապահովածությունը: Երկրորդ տասնամյակում ձեռք կբերվի նյութական ու կուլտուրական բարիքների առատություն և կապահովվի ամբողջ բնակչության ամենաբարձր կենսամակարդակը, նյութական նախադրյալներ կստեղծվեն ըստ պահանջմունքների բաշխման կոմունիստական սկզբունքը կենսագործելու համար: Այդ խնդիրը լուծելու համար պարտիայի ծրագիրը նախատեսում է 20 տարվա ընթացքում հասարակական արտադրության ծավալն ավելացնել մոտ 5 անգամ: Կապիտալիստական ոչ մի երկիր չի կարող ունենալ տնտեսական զարգացման նման տեմպեր: Կոմունիստական շինարարության վիթխարի պլաններում բացահայտվում են մեր հասարակական կարգի դյուցազնական ուժերը, նրա հսկայական առաջընթացն զուգընթաց աճող գերազանցությունը կապիտալիզմի նկատմամբ:

Սակայն կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման պրոցեսը չի կարելի հանգեցնել լոկ հասարակական արտադրության քանակական աճին: Այն լիովին կնորացվի գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա, ձեռք կբերվի հասարակական արտադրության բարձր գիտատեխնիկական մակարդակ: Առաջին տասնամյակում կիրադրվի կոմպլեքսային մեքենայացումը արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի, կոմունալ տնտեսության մեջ, որը հնարավորություն կտա վերացնել ծանր ֆիզիկական աշխատանքը: Քսանամյակի ընթացքում մասսայական մասշտաբով կիրականացվի արտադրության կոմպլեքսային ավտոմատացումը՝ ավելի մեծ չափով անցնելով ավտոմատ ցեխերի ու ձեռնարկությունների, լայն կիրառում կստանան ավտոմատ կառավարման բարձր կատարելագործված սխեմաները: Անչափ կաճի գիտության դերը հասարակական արտադրության զարգացման գործում: Արտադրության հետ գիտության օրգանական միացու-

մք, գիտատեխնիկական առաջադիմության տեմպերի խրաժարաճր թույլ կտան սովետական մարդկանց զինելու նորագույն տեխնիկայով, հնարավորություն կտան է՛լ ավելի լրիվ կառավարել բնության ուժերը և դրանք ի սպաս դնել հասարակությանը:

Կոմունիզմի ժամանակ ձեռք է բերվում ամբողջ հասարակական տնտեսության պլանային կազմակերպման բարձր մակարդակ: Կոմունիստական արտադրությունը պահանջում է բարձր կազմակերպվածություն, տնտեսության ավելի խելացի վարում, հասարակական աշխատանքի բաժանման ու տնտեսական կապերի ամենից արդյունավետ ձևերի օգտագործում, ամբողջ երկրի մասշտաբով կենտրոնացված ղեկավարումը մասսաների նախաձեռնության ու ստեղծագործության հետձիշտ զուգակցում: Արտադրական բոլոր բջիջները կոմունիզմի ժամանակ հարմոնիկ կմիավորվեն մի ընդհանուր, պլանաչափորեն կազմակերպված տնտեսության մեջ:

Այսպիսով, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցումը նշանակում է՝ հասնել կոմունիստական առատության, բարձր գիտատեխնիկական մակարդակի ու հասարակական տնտեսության պլանաչափորեն կազմակերպման բարձր աստիճանի, հետևապես և բարձր, իսկապես կոմունիստական աշխատանքի արտադրողականության: Կոմունիզմի լրիվ հաղթանակի ուղիով հասարակության զարգացման հետմիասին նյութատեխնիկական բազան անընդհատ կզարգանա ու կկատարելագործվի:

Պարտիայի ծրագրում ձևակերպված են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման հիմնական ուղղությունները. երկրի լրիվ էլեկտրիֆիկացում և դրա հիման վրա տեխնիկայի, տեխնոլոգիայի և հասարակական արտադրության կազմակերպման կատարելագործում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում. արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացում, դրանց ավելի ու ավելի լրիվ ավտոմատացում. քիմիայի լայն կիրառում ժողովրդական տնտեսության մեջ. արտադրության նոր, տնտեսապես արդյունավետ ճյուղերի, էներգիայի ու նյութերի նոր տեսակների

ըստ ամենայնի զարգացում. բնական, նյութական և աշխատանքային ռեսուրսների բազմակողմանի և ռացիոնալ օգտագործում. արտադրութայն ու գիտութայն օրգանական միացում և գիտատեխնիկական առաջադիմութայն արագ տեմպեր-աշխատավորների կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակ. զգալի գերազանցություն առավել զարգացած կապիտալիստական երկրների նկատմամբ աշխատանքի արտադրողականության գծով, որը կոմունիստական հասարակարգի հաղթանակի կարևորագույն պայմանն է:

Շինարարական ծրագիրը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության: Կարգացման հեռանկարում: Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը կպահանջի հսկայական միջոցներ: Քսան տարվա ընթացքում (1961—1980 թթ.) ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ծավալը կկազմի 2 տրիլիոն ռուբլի: Դա 6 անգամ ավելի է, քան սովետական իշխանության բոլոր տարիներին կատարված կապիտալ ներդրումները:

Հսկայական կապիտալ ներդրումների շնորհիվ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության հիմնական արտադրական ֆոնդերը 20 տարում կավելանան 5 անգամ, իսկ ոչ-արտադրական ֆոնդերը՝ 6 անգամ: Այդ նշանակում է, որ նորագույն տեխնիկայի հիման վրա արտադրությունը լրիվ կնորացվի և Սովետական Միությունը կունենա ամենից հզոր, երիտասարդ ու կատարելագործված արտադրական ապարատ:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում, ասված է ՍՄԿՊ ծրագրում, վճռական դեր է պատկանում ծանր ինդուստրիային՝ որպես ամբողջ ժողովրդական տնտեսության հիմք: 20 տարվա ընթացքում արդյունաբերական արտադրանքի թողարկումը կաճի ոչ պակաս, քան 6 անգամ, ընդ որում արտադրության միջոցների արտադրությունը կավելանա 6,8—7 անգամ և սպառման առարկաների արտադրությունը 5—5,2 անգամ: Արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճը կկազմի 9—10 տոկոս: Զարգացման բարձր տեմպերը սոցիալիստական էկոնոմիկայի կարևորագույն առավելությունն են:

Խոշոր կապիտալ ներդրումների շնորհիվ զգալիորեն կա-
վելանան ծանր ինդուստրիայի բոլոր ճյուղերի արտադրական
կարողությունները: Հատկապես բարձր տեմպերով են զար-
գանում էներգետիկան, մետալուրգիան, մեքենաշինությունը,
քիմիական, ջերմային, ցեմենտի և ծանր արդյունաբերության
ուրիշ առաջատար ճյուղերը:

Կոմունիստական հասարակության էկոնոմիկայի առանց-
քը էլեկտրիֆիկացումն է: ՍՄԿՊ XXII համագումարը, ղեկա-
վարվելով էլեկտրիֆիկացման նշանակության լենինյան ցու-
ցումներով, խնդիր դրեց առաջիկա քսան տարվա ընթացքում
հիմնականում ավարտել ամբողջ երկրի էլեկտրիֆիկացումը:
էլեկտրաէներգիայի արտադրությունը 1960 թ. 292 միլիարդ
կիլովատ-ժամից 1980 թ. կհասնի մինչև 2700—3000 միլիարդ
կիլովատ-ժամի, որը մեկ ու կես անգամ ավելի է, քան ներ-
կայումս արտադրվում է էլեկտրաէներգիա աշխարհի մնացած
բոլոր երկրներում միասին վերցրած:

Քսան տարվա ընթացքում պետք է կառուցվեն 180 հզոր
հիդրոէլեկտրակայան, մոտ 200 շրջանային ջերմային էլեկ-
տրակայան՝ յուրաքանչյուրը մինչև 3 մլն կվտ կարողությամբ,
260 խոշոր ջերմաէլեկտրակենտրոն: Դրանց թվում են էներ-
գետիկական այնպիսի հսկաներ, ինչպես Բրատսկի, Կրասնո-
յարսկի, Սայանի, Ուստ-Իլիմի, Բոգուչանսկի, Ենիսեյի, Օսի-
նովսկի և Նիժնե-Տունգուսկի հիդրոէլեկտրակայանները՝ յու-
րաքանչյուրն ավելի քան 4 մլն կվտ կարողությամբ: Ջերմային
հիդրոէլեկտրակայաններն ամենից շատ նախատեսվում է կա-
ռուցել Սիբիրում, Ղազախստանում, Հեռավոր արևելքում և
Միջին Ասիայում:

Քսանամյակի վերջում էլեկտրաէներգիայի տարեկան ար-
տադրությունը, 1960 թ. մակարդակի համեմատությամբ, կա-
ճի 9—10 անգամ: Այդ նշանակում է, որ յուրաքանչյուր 5
օրում պետք է շարք մտնեն Դնեպրոգէսի հզորությանը հա-
վասար էներգետիկ կարողություններ:

Քսան տարում պետք է կառուցել մի քանի հարյուր հա-
զար կիլոմետր մագիստրալային գծեր, այդ թվում ավելի քան
50 հազար կմ փոփոխական հոսանքի հաղորդման գծեր՝ 500

կիրովոլուտ լարվածությամբ, մոտ 35 հազ կմ՝ 330 կելովոլուտ լարվածությամբ: Կատեղծվի մեկ միասնական էներգետիկ սիստեմ, որը կապված կլինի սոցիալիստական մյուս երկրների էներգոսիստեմների հետ: Էլեկտրաէներգիայի արտադրության գերազանցող տեմպերի ապահովումը հնարավորություն կտա քսանամյակի ընթացքում 8—9 անգամ ավելացնել արդյունաբերության մեջ աշխատանքի էլեկտրազինվածությունը, իրագործել տրանսպորտի, գյուղատնտեսության, քաղաքային և գյուղական բնակչության կենցաղի մասսայական էլեկտրիֆիկացումը:

Մեռալուրգիան, որը կազմում է ժամանակակից արդյունաբերության հիմքը, կոշված է լիովին ապահովելու երկրի աճող պահանջը մետաղով: Պողպատի արտադրությունը 1960 թ. 65 մլն տոննայից 1980 թ. կհասնի մոտ 250 մլն տոննայի: Հատկապես արագ տեմպերով կզարգանա թեթև, գունավոր և հազվագյուտ մետաղների արտադրությունը: Քսանամյակի ընթացքում կընդլայնվեն գործող և կստեղծվեն նոր հզոր մետալուրգիական բազաներ այն հաշվով, որպեսզի 1980 թ. ունենալ ընդհանուր միութենական 5 բազա՝ Ուրալում, Ուկրաինայում, Սիբիրի ու Հեռավոր արևելքի շրջաններում, Ղազախստանում և ՍՍՌՄ եվրոպական մասի կենտրոնական շրջաններում:

Ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման, կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման նախագծված պլանը կենսագործելու համար նախատեսվում է ապահովել ծանր ինդուստրիայի միջուկի՝ մեքենաշինության արագ զարգացումը: Քսան տարում կկառուցվեն 2800 նոր և կվերակառուցվեն 1900 հին մեքենաշինական ու մետաղամշակման ձեռնարկություն: Մեքենաշինության ու մետաղամշակման արտադրանքի ընդհանուր ծավալը կաճի 10—11 անգամ, իսկ ավտոմատ և կիսաավտոմատ գծերի թողարկումը՝ ավելի քան 60 անգամ: Ուրալից արևելք գտնվող շրջաններում կստեղծվեն հզոր մեքենաշինական գործարաններ, որոնք հնարավորություն կտան հիմնականում ապահովելու այդ շրջանների մեքենաների ու սարքավորումների պահանջը:

ՍՄԿՊ XXII համագումարը բացառիկ մեծ խնդիրներ է դրել ֆիմիական արդյունաբերության զարգացման ուղղության մասին: Քիմիական արդյունաբերությունը հսկայական շափով ընդլայնում է ժողովրդական հարստության աճի, նոր, ավելի կատարելագործված ու էժան արտադրության միջոցների ու ժողովրդական սպառման առարկաների թողարկման հնարավորությունները: Քսան տարվա ընթացքում քիմիական արտադրության արտադրանքը կավելանա մոտ 17 անգամ: Խիստ կերպով կավելանա հանքային պարարտանյութերի և մոլախոտերի, բույսերի ու կենդանիների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարելու քիմիական միջոցների արտադրությունը:

Այդ ծրագրի իրագործման համար նախատեսված է էժան բնական և նավթային գազերի կենտրոնացված շրջաններում, ինչպես նաև նավթավերամշակման արդյունաբերության շրջաններում կառուցել քիմիական արդյունաբերության խոշոր կոմպլեքսներ, ամենից առաջ Ուրալում, Պոլովիեում, Ուկրաինայում, Հյուսիսային Կովկասում և Միջին Ասիայում:

Բոլոր տեսակի վառելիքի արտադրությունը 20 տարում կաճի 4 անգամ, ընդ որում ապահովվում է նավթային ու գազային արդյունաբերության արագացրած զարգացում: Նավթի հանույթը 1960 թ. 148 մլն տոննայից 1980 թ. կհասնի մինչև 690—710 մլն տոննայի, գազի հանույթը՝ 47 միլիարդ խորանարդ մետրից մինչև 680—720 միլիարդ խմ, որը կհանգեցնի վառելիքային բալանսի կառուցվածքի հետագա բարելավմանը:

Գլխավոր հեռանկարում շինարարության հսկայական մասշտաբները պահանջում են արագ կերպով զարգացնել շինարարական նյութերի արդյունաբերությունը: Արդեն այժմ կարևորագույն շինանյութի՝ ցեմենտի արտադրության գծով ՍՍՌՄ-ը հասել է ԱՄՆ-ին: Մեր երկրում ցեմենտի արտադրությունը 1980 թ. կաճի մինչև 233—235 մլն տոննայի, որը 4 անգամ ավելի է, քան կազմում է ԱՄՆ-ում ցեմենտի արտադրության արդի մակարդակը: Այդ ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել ավելի քան 200 մլն

տոննա կարողութիւնները գործարկումը: Կբարելավվի ցեմենտի գործարանների աշխարհագրական տեղաբաշխումը: Նախատեսված է կառուցել հզոր գործարաններ Խոպանի երկրամասում, Արխանգելսկի, Չիտայի, Վլադիմիրի, Սմոլենսկի, Խերսոնի, Կալուզայի և ուրիշ մարզերում ու երկրամասերում: Արդյունաբերութեան այդ ճյուղը հատկապես բուռն զարգացում կստանա երկրի արևելյան շրջաններում:

Ցեմենտի և մետաղի արտադրութեան հսկայական մասշտաբները հնարավորութիւն կտան կարճ ժամանակամիջոցում լուծել մի մեծ խնդիր՝ կարգավորել այնպիսի ծավալով հավաքովի երկաթբետոնի թողարկումը, որն անհրաժեշտ է խոշոր շահերի կոնստրուկցիաներից ու արդյունաբերական արտադրութեան տարրերից լրիվ հավաքովի շենքերի ու շինութիւնների կառուցումն ավարտելու համար:

Երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառութիւնը 20 տարում կաճի 3 անգամ, իսկ տրանսպորտի մյուս տեսակներինը՝ ավելի շատ: Կայն ճակատով աշխատանքներ կծավալվեն տրանսպորտի էլեկտրիֆիկացման ուղղութեամբ: Առաջին տասնամյակի վերջում էլեկտրաքարշերով կաշխատեն 45 հազ. կմ երկաթգիծ, իսկ երկրորդ տասնամյակում կավարտվի ծանրաբեռնված հիմնական երկաթուղիների էլեկտրիֆիկացումը:

Ժողովրդական տնտեսութեան և բնակչութեան լրիվ պահանջները բոլոր տեսակի փոխադրումների գծով բավարարելու նպատակով, առաջիկա տարիներին կծավալվի հսկայական տրանսպորտային ճանապարհաշինութիւնը: Նախատեսվում է նորագույն տեխնիկայի հիման վրա ապահովել տրանսպորտի բոլոր տեսակների՝ որպէս երկրի միասնական տրանսպորտային ցանցի բաղկացուցիչ մասերի համաձայնեցված զարգացումը:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման բաղկացուցիչ մասը, հզոր արդյունաբերութեան հետ միասին, հանդիսանում է բարգաւաճող, բազմակողմանիորեն զարգացած բարձր մթերատու գյուղատնտեսութիւնը:

Գյուղատնտեսութեան զարգացման մակարդակը նշանակալից շուրջով որոշում է ժողովրդի բարեկեցութիւնը, կոմուն-

նիստական առատութեան ուղիով երկրի առաջխաղացումը: «Գյուղատնտեսութեան վերելքը, գյուղատնտեսական մթերքների առատութեան ապահովումը կոմունիստական շինարարութեան հարվածային ճակատն է, ամբողջ պարտիայի, ամբողջ ժողովրդի գործը», — ասված է ՍՄԿՊ Կենտկոմի (1962 թ.) մարտյան պլենումի որոշման մեջ:

Գյուղատնտեսութեան արտադրանքի ընդհանուր ծավալը առաջին տասնամյակում կավելանա 2,5 անգամ, իսկ 20 տարում՝ 3,5 անգամ, այն հաշվով, որպեսզի ստեղծվի գյուղատնտեսական մթերքների առատություն և ապահովվի գյուղատնտեսական մթերքների առավել աճը՝ դրանց պահանջարկի համեմատությամբ:

Հատուկ նշանակություն է տրվում իոդիզացիային, դաշտերի ոռոգմանը: Իոդիզացիան էլեկտրիֆիկացման լենինյան պլանի բաղկացուցիչ մասն է: Վ. Ի. Լենինը էլեկտրակայանների շինարարության պրոբլեմը դիտում էր ոռոգման զարգացման հետ անխզելի միասնության մեջ: Երկրում այժմ հաշվվում է 9 մլն հեկտար ոռոգելի հողեր: Խնդիր է դրվում դրանց տարածությունը հասցնել մոտ 28 մլն հեկտարի: Հսկայական կապիտալ ներդրումներ են նախատեսված արտադրական կառույցների շինարարության, տեխնիկայի ձեռք բերման և կոլտնտեսությունների ու սովխոզների այլ կարիքների համար:

Ծանր արդյունաբերության զարգացման բարձր մակարդակի և գյուղատնտեսության վերելքի հիման վրա հեռանկարային պլանում նախատեսվում է բարձրացնել ժողովրդական սպառման առարկաների արտադրության աճի տեմպերը:

Ժամանակակից պայմաններում նոր ձևով է դրսևորվում ծանր արդյունաբերության դերը ժողովրդի բարեկեցության աճի գործում:

«Հայտնի է, — ասել է Ն. Ս. Խրուշչովը XXII համագումարում պարտիայի ծրագրի մասին զեկուցման մեջ, — որ ծանր արդյունաբերությունը ընդգրկում է ձեռնարկությունների երկու տեսակ. նախ՝ այնպիսիք, որոնք արտադրության միջոցներ են արտադրում իրենց հերթին արտադրության միջոցներ արտադրող ձեռնարկությունների համար, երկրորդ, ձեռնար-

կություններ, որոնք արտադրութեան միջոցներ են թըղարկում թեթև, սննդի արդյունաբերութեան ձեռնարկությունների համար, գյուղատնտեսութեան, բնակարանային շինարարութեան և բնակչութեան կուլտուր-կենցաղային սպասարկման համար: Այն ժամանակաշրջանում, երբ մեր ծանր ինդուստրիան նոր էր միայն ստեղծվում, մենք ստիպված էինք կուտակումները ամենից առաջ ուղղել առաջին տիպի ձեռնարկությունների զարգացման նպատակին և սահմանափակել ներդրումները ձեռնարկությունների երկրորդ խմբի համար: Այժմ մենք հնարավորութիւն ունենք զգալիորեն ավելացնել կապիտալ ներդրումները նաև երկրորդ տեսակի ձեռնարկությունների համար, մի բան, որը կարագացնի ժողովրդական սպառման աճի տեմպերը: 1980 թվականին առաջին տեսակի ձեռնարկությունների արտադրանքը 1960 թվականի համեմատութեամբ կաճի մոտավորապես 6 անգամ, իսկ երկրորդ տեսակի ձեռնարկություններինը՝ 13 անգամ: Բացի դրանից, ծանր արդյունաբերութեան ձեռնարկություններն ավելի ու ավելի մեծ շահով կթողարկեն կուլտուր-կենցաղային և տնային գործածութեան ապրանքներ բնակչութեան աճող պահանջմունքները բավարարելու համար¹:

Քսանամյակի ընթացքում նախատեսված է գործվածքների արտադրութիւնն ավելացնել ավելի քան 3 անգամ և դրանց տարեկան թողարկումը հասցնել մինչև 20—22 միլիարդ քառակուսի մետրի, կաշվե կոշիկների արտադրութիւնը՝ 1 միլիարդ զույգի: Կուլտուր-կենցաղային գործածութեան ապրանքների թողարկումը կավելանա 10 անգամ: Այդ խնդիրների լուծման համար կկառուցվեն թեթև և սննդի արդյունաբերութեան հազարավոր նոր ձեռնարկութիւններ:

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում կարևոր նշանակութիւն է ստանում մարդկանց կենցաղն անմիջականորեն սպասարկող ժողովրդական տնտեսութեան ճյուղերի՝ առևտրի, հասարակական սննդի, առողջապահութեան, բնակարանային ու կոմունալ տնտեսութեան արագ

¹ ՍՍՄԿՊ XXII համագումարի նյութերը, էջ 186—187:

զարգացումը և տեխնիկական վերազինումը: Երկրի բոլոր շրջաններում ու բնակավայրերում կկարգավորվի կուլտուրական առևտուրը, որն ընդունակ կլինի լիովին բավարարելու ժողովրդի հարաճուն պահանջմունքները, զգալիորեն կընդլայնվի հասարակական սնունդն այն հաշվով, որպեսզի այն մոտակա 10—15 տարվա ընթացքում գերակշռող տեղ գրավի տնային սննդի համեմատությամբ:

Պարտիան խնդիր է դնում իրագործել բնակարանային և կոմունալ շինարարության լայն ծրագիր: Առաջին տասնամյակի ընթացքում կկառուցվի առնվազն 36 մլն բնակարան և վերջ կտրվի բնակարանների պակասին: Երկրորդ տասնամյակի ընթացքում մեր երկրում կկառուցվի 50 մլն բնակարան: Երկրորդ տասնամյակի վերջում յուրաքանչյուր ընտանիք, ներառյալ նորապսակների ընտանիքները, կունենա առողջապահության ու կուլտուրական կենցաղի պահանջներին համապատասխան առանձին բարեկարգ բնակարան: Երկրի բնակարանային ֆոնդը 20 տարում նախատեսված է ավելացնել 3 անգամ: Բնակարանային շինարարության տարեկան միջին ծավալը 1961—1965 թթ. 135 մլն ԲՄ ընդհանուր տարածությունից կաճի և 1976—1980 թթ. կհասնի 400 մլն քառակուսի մետրի: Ինդուստրիալ տնաշինության ծավալը, 1961 թ. համեմատությամբ, 1980 թ. կաճի 75 անգամ:

Ամբողջ շարադրածից երևում է, որ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը բնութագրվում է նյութական արտադրության բոլոր նյութերի արագ զարգացմամբ: Սովետական էկոնոմիկայի արագ զարգացումն ամենից առաջ ապահովվում է նրանով, որ մեր երկիրն ունի հզոր արդյունաբերություն ու շինարարական ինդուստրիա, խոշոր մեքենայացված գյուղատնտեսություն, առաջնակարգ տեխնիկա և բարձրորակ կադրեր, որոնք ընդունակ են հաջողությամբ չուծելու ժողովրդական տնտեսության զարգացման ամենաբարդ խնդիրները: Սովետական գիտության զարգացման գործում աչքի ընկնող նվաճումները ու բնական անսպառ հարստությունները լայն հնարավորություն են բացում էկոնոմիկայի բոլոր ճյուղերի արագ զարգացման համար: ՍՍՌՄ-ի, ինչ-

պես և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի բոլոր երկր-
ներին էկոնոմիկայի զարգացման բարձր տեմպերին ննջաստում
են նաև սոցիալիստական երկրների ժողովուրդների սերտ
համագործակցությունը և փոխօգնությունը: Դա սովետական
մարդկանց մոտ ստեղծում է այն խոր համոզմունքը, որ կո-
մունիզմի նյութատեխնիկական բազան կարճ ժամանակա-
միջոցում կառուցելու վիթխարի պլանները հաջողությամբ
կկատարվեն:

4. ՅՈՒՆԱՄՅԱԿԸ ԿԱՐԵՎՈՐ ԷՏԱՊ Է ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յոթնամյա պլանի հիմնական խնդիրները: Կոմունիստա-
կան շինարարության գլխավոր պլանի բաղկացուցիչ մասն
է հանդիսանում ՍՄԿՊ XXII համագումարում ընդունված
ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության 1959—1965 թթ. զարգաց-
ման յոթնամյա պլանը: Յոթնամյա պլանը նախատեսում է
երկրի արտադրողական ուժերի բազմակողմանի զարգացում,
ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում արտադրու-
թյան այնպիսի աճի ձեռք բերում, որը հնարավորություն
կտա վճռական քայլ անել կոմունիզմի նյութատեխնիկական
բազայի ստեղծման գործում և ապահովել ՍՍՌՄ-ի հաղթա-
նակը կապիտալիստական երկրների հետ խաղաղ տնտեսա-
կան մրցության մեջ:

Յոթնամյա պլանի վեհ խնդիրների կատարման համար նա-
խատեսված է խոշոր կապիտալ ներդրումներ: Յոթնամյակում
կապիտալ ներդրումների արագ աճի մասին են վկայում հե-
տևյալ թվերը.

Պետական պլանով հատկացված միջոցների նաշվին կապիտալ ներդրումները
(առանց նախագծային-նետագոտական աշխատանքների աժժեֆի)
(միլիարդ ռուբլիներով, համադրելի գներով)

Տարիներ	Ընդամենը	Տարեկան միջինը
1952—1958 թթ.	106,5	15,2
1959—1965 թթ.	194—197	27,7—28,1

Այսպիսով, նույնիսկ առանց չկենտրոնացված աղբյուրների, կապիտալ ներդրումների միջին տարեկան ծավալն ընթացիկ յոթնամյակում մոտ կրկնապատիկ ավելի է, քան նախորդ յոթ տարիներին և 6 անգամ ավելի, քան նախապատերազմյան 1940 թվականին:

Եթե լրացուցիչ հաշվի առնել պետական և կոոպերատիվ կազմակերպությունների չկենտրոնացված միջոցների հաշվին կատարվող շինարարությունը, ինչպես նաև կոլտնտեսությունների կապիտալ ներդրումներն ու բնակչության միջոցներով կատարվող բնակարանային շինարարությունը, ապա կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը ժողովրդական տնտեսության մեջ յոթնամյա պլանով կհասնի մոտ 300 միլիարդ ռուբլու:

Յոթնամյա պլանով բոլոր կապիտալ ներդրումների մոտ կեսը ուղղվում է արդյունաբերությանը: Նախորդ յոթ տարիների համեմատությամբ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ծավալը 1,8 անգամ աճի պայմաններում, արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կավելանան գրեթե երկու անգամ:

Մաքուր արդյունաբերության հիմնական ճյուղերին յոթնամյա պլանով տրամադրվում է 85—88 միլիարդ ռուբլի, որը կազմում է պետական պլանով առանձնացված միջոցների հաշվին ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի ավելի քան 44 տոկոսը: Խոշոր կապիտալ ներդրումների շնորհիվ ծանր ինդուստրիայի բոլոր ճյուղերի արտադրական կարողությունները զգալիորեն կաճեն:

Թեթև ու սննդի արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը 1952—1958 թթ. համեմատությամբ կաճի ավելի քան 2 անգամ: Յոթնամյակում նախատեսված է կառուցել թեթև ու սննդի արդյունաբերության ավելի քան 1600 նոր ձեռնարկություն: Կգործարկվեն թեթև արդյունաբերության 270 խոշոր ձեռնարկություն, մոտ 250 մսի վերամշակման գործարան ու ֆաբրիկա, ավելի քան 1000 կաթի վերամշակման գործարան և այլ ձեռնարկություններ: Սննդի ձեռնարկությունների շինարարության մեծ ծրագիր է իրագործվում գյուղական շրջաններում, անմիջապես հումքի բազաների մոտ:

Խոշոր կապիտալ ներդրումներ են հատկացվում գյուղատնտեսությանը: Յոթնամյակի ընթացքում պլուզատնտեսու-

թյան մեջ պետութեան և կոլտնտեսութեան յունենի կապիտալ ներդրումների ծավալը պլանով պետք է կազմի 50 միլիարդ ռուբլի, որը զգալիորեն գերազանցում է սովետական իշխանութեան բոլոր տարիներին գյուղատնտեսութեան մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը:

Սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման հաջողութեան հնարավորութեան ստեղծեցին, յոթնամյա պլանի համեմատութեամբ, զգալի շափով ավելացնել կապիտալ ներդրումները գյուղատնտեսութեան մեջ և արդյունաբերութեան այն ճյուղերում, որոնք սպասարկում են գյուղատնտեսութեանը (տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների, հանքային պարարտանյութերի, շինանյութերի արտադրություն): Հատուկ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսութեան հետագա էլեկտրիֆիկացմանը:

Յոթնամյա պլանով մեծ խնդիրներ են դրված տրանսպորտային շինարարության ասպարեզում: Կապիտալ ներդրումները տրանսպորտում և կապի մեջ յոթնամյակում կկազմեն 20,9—21,4 միլիարդ ռուբլի, որը կրկնակի ավելի է նախորդ յոթնամյակի ընթացքում այդ ճյուղերին տրամադրված կապիտալ ներդրումներից: Կապիտալ ներդրումների կեսից ավելին ուղղվում է երկաթուղային տրանսպորտի զարգացմանը:

Ժողովրդի բարեկեցութեան մասին հոգատարութեամբ է սոցորված բնակարանային շինարարության յայն ծրագիրը: Յոթնամյակում նախատեսված է կառուցել 650—660 մլն բնակարան, որը 2,3 անգամ շատ է, քան կառուցվել է նախորդ յոթ տարվա ընթացքում: Նոր բնակելի տարածությունը, որ նախատեսվում է շահագործման հանձնել յոթնամյակի ընթացքում, իր չափերով հավասար կլինի Խարկովի նման 70 կամ Լենինգրադի նման 20 քաղաքի բնակելի ֆոնդին: Բնակարանային-կոմունալ շինարարութեան մեջ պետական կապիտալ ներդրումները կկազմեն 37,5—38 միլիարդ ռուբլի:

Բացի դրանից, գյուղական վայրերում կոլտնտեսականների և գյուղական ինտելիգենցիայի ուժերով ընթացիկ յոթնամյակում կկառուցվեն մոտ 7 մլն բնակելի տներ:

Յոթնամյա պլանում վառ կերպով արտահայտված է լե-
նինյան ազգային քաղաքականությունը, որը մեր երկրի բո-
լոր ժողովուրդների տնտեսական ու քաղաքական բազմակող-
մանի զարգացման համար լայն հնարավորություններ է ապա-
հովում: Այդ խնդրի լուծման պայմաններից մեկը կապիտալ
ներդրումներն են:

Նախորդ յոթ տարիների համեմատությամբ, 1959—
1965 թթ. կապիտալ ներդրումները կավելանան. Ղազախըս-
տանում և Կիրգիզիայում մոտ 2,3 անգամ, Թուրքմենիայում
և Ուզբեկստանում 2,4, Տաջիկստանում 2,6, Բելոռուսիայում
ավելի քան երկու անգամ, Լիտվայում և Լատվիայում 2, էս-
տոնիայում 1,8 անգամ: Կապիտալ ներդրումները զգալիորեն
կաճեն նաև մյուս միդեթենական ռեսպուբլիկաներում: Յուրա-
քանչյուր ռեսպուբլիկայում կապիտալ ներդրումները տրա-
մադրվում են ամենից առաջ տնտեսության այն ճյուղերի
զարգացմանը, որոնց համար կան ավելի բարենպաստ պայ-
մաններ, այն հաշվով, որպեսզի արդյունավետ օգտագործվեն
յուրաքանչյուր ռեսպուբլիկայի ռեսուրսները և ապահովվի
առանձին ռեսպուբլիկաների և, ամբողջությամբ վերցված,
Սովետական Միության շահերի ճիշտ զուգակցումը:

Դրա վառ օրինակն է Ղազախական ՍՍՌ-ն: Ռեսպուբլիկայում կան
քնական հանածոների հարստագույն պաշարներ, որը հնարավորություն է
տալիս զարգացնելու սև և գունավոր մետալուրգիան, քարածխի ու երկա-
թե հանքաքարի հանույթը: Մինչդեռ ռեսպուբլիկայի եկամուտները բավա-
րար չեն անհրաժեշտ կապիտալ ներդրումների իրականացման համար:
Այդ պակասը ծածկվում է ամբողջ երկրի կուտակման ֆոնդի հաշվին:
Այսպես, 1959 թ. համամիութենական ֆոնդից Ղազախական ՍՍՌ-ին
առանձնացվել է 250 մլն ռուբլի, իսկ 1962 թ.՝ ավելի քան 900 մլն ռուբլի:
Սովետական Միության բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությամբ
շնորհիվ Ղազախստանում ստեղծված են ժամանակակից հզոր արդյունա-
բերություն, խոշոր մեքենայացված գյուղատնտեսություն, ուսումնական
հաստատությունների, գիտական ու կուլտուր-լուսավորական հիմնարկու-
թյունների լայն ցանց, պատրաստված են բազմաթիվ որակյալ կադրեր:
Սովետական իշխանության տարիներին Ղազախստանում արդյունաբերական
արտադրության ծավալն ավելացել է 66 անգամ:

Յոթնամյա պլանի կատարման հաջողությունները: Սովետական ժողովրդի անձնագոհ աշխատանքի շնորհիվ յոթնամյա պլանի առաջադրանքները ոչ միայն կատարվում, այլև զգալիորեն գերակատարվում են:

Յոթնամյակի երեք տարում (1959—1961) պետական կապիտալ ներդրումները կազմեցին 90,9 մլրդ ռուբլի, որն ավելի քան երկու անգամ գերազանցում է նախապատերազմյան բոլոր տարիների դրանց ծավալը: Ավելացել են կոլտնտեսությունների կապիտալ ներդրումները: Արդյունաբերության արտադրական հիմնական ֆոնդերի մոտ մեկ երրորդն այն ֆոնդերն են, որոնք գործարկվել են յոթնամյակի առաջին երեք տարում:

Յոթնամյակի ընթացքում արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը նախատեսված էր ավելացնել մոտ 80 տոկոսով: Հաշվի առնելով պլանի գերակատարումը, իրականում այն գրեթե կկրկնապատկվի: Այդ նշանակում է, որ միայն ընթացիկ յոթնամյակում մեր երկրում կթողարկվի այնքան արդյունաբերական արտադրանք, որքան այն արտադրվել է սովետական իշխանության բոլոր տարիների ընթացքում:

Յոթնամյակի անցած երեք տարում արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերն զգալիորեն բարձր են եղել, քան նախատեսված էին պլանով: Արդյունաբերական արտադրանքի միջին տարեկան աճը կազմել է 10,1 տոկոս, պլանով նախատեսված 8,3 տոկոսի փոխարեն: Դրա շնորհիվ յոթնամյակի առաջին կեսում 5 տոկոսով ավելի արդյունաբերական արտադրանք է թողարկվել, քան այդ ժամանակաշրջանի համար նախատեսված էր յոթնամյա պլանով:

Բոլոր տեսակի տրանսպորտի բեռնաշրջանառությունը երեք տարում ավելացավ 25 տոկոսով, այդ տարիների համար յոթնամյա պլանով նախատեսված 20 տոկոսի փոխարեն:

Մեծ հաջողություններ է ձեռք բերվել աշխատավորներին բնակարանով ապահովելու խնդիրը լուծելու բնագավառում: 1959—1961 թթ. պետական, կոոպերատիվ ձևերով կառուցվել են

ների ու կազմակերպությունների (առանց կոլտնտեսությունների), ինչպես նաև քաղաքային բնակչության միջոցներով կառուցվել ու շահագործման է հանձնվել 243,7 մլն ԲՄ ընդհանուր տարածությունը բնակելի տներ:

Յոթնամյակի առաջին երեք տարվա ընթացքում գյուղատնտեսության զարգացումն զգալիորեն ետ է մնացել յոթնամյա պլանի առաջադրանքներից: Գյուղատնտեսության կառավարման վերակառուցումը, տեխնիկական բազայի հետագա զարգացման, կադրերով ամրապնդման ուղղությամբ պարտիայի կողմից ընդունված խոշոր միջոցառումները և այլ միջոցները պայմաններ են ստեղծում յոթնամյա պլանը հաջող կատարելու համար:

Սոցիալիստական երկրներն իրենց էկոնոմիկան զարգացնում են եղբայրական համագործակցության և փոխօգնության հիման վրա: Դա արագացնում է արտադրության աճն ամբողջ սոցիալիզմի լազերում և, առանձին վերցրած, յուրաքանչյուր սոցիալիստական երկրում: Սոցիալիստական երկրները մոտակա տարիներին կարտադրեն համաշխարհային արդյունաբերական ամբողջ արտադրանքի կեսից ավելին: Դրանով ապահովվում է մարդկային գործունեության որոշիչ ոլորտում՝ նյութական արտադրության ասպարեզում սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գերազանցությունը կապիտալիզմի համաշխարհային սիստեմի նկատմամբ:

Մեր երկիրը եղբայրական օգնություն է ցույց տալիս շատ պետությունների էկոնոմիկայի զարգացմանը: Աշխատանքներ են տարվում էներգետիկ սիստեմների միավորման ուղղությամբ, ավարտվում է ՍՍՌՄ-ից դեպի եվրոպական ժողովրդական երկրները նավթ ու նավթամթերքներ փոխադրելու համար «Դրուժբա» («Բարեկամություն») նավթամուղի շինարարությունը, անցկացվում են նաև մի շարք այլ համատեղ միջոցառումներ, որոնք ուղղված են սոցիալիստական լազերի երկրների էկոնոմիկայի հետագա վերելքի ապահովմանը:

Կոմունիստական պարտիայի XXII համագումարը Սովետական Միության բոլոր աշխատավորներին կոչ արեց ակ-

տիվորեն պայքարել կոմունիստական շինարարության ծրագրի իրագործման համար, ապահովել յոթնամյա պլանի առաջադրանքների կատարումը և գերակատարումը: Ի պատասխան այդ կոչի, ամբողջ երկրում ծավալվել է իսկական համաժողովրդական մրցություն ժողովրդատնտեսական պլանները ժամկետից շուտ կատարելու համար: Առաջավոր ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների կուլեկտիվները, տնտեսական շրջանների ու ռեսպուբլիկաների աշխատավորները նախանշել են իրենց համար բնագծեր, որոնք պետք է ձեռք բերվեն յոթնամյակի վերջում, մշակել են միջոցառումներ յոթնամյա պլանի առաջադրանքները նախատեսված ժամկետից զգալիորեն շուտ կատարելու համար:

**ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ**

**1. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ
ԽՆԴԻՐ Է**

ՍՄԿՊ XXII համագումարը կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման մասին: *Կապիտալ ներդրումների աճը սոցիալիստական հասարակության զարգացման հաջողությունների կարևորագույն ցուցանիշներից մեկն է: Այդ հաջողությունները շատ բանով կախված են կապիտալ ներդրումների օգտագործման արդյունավետությունից:*

Կոմունիստակոն պարտիան սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում բացառիկ մեծ նշանակություն է տվել ու տալիս է կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման հարցերին, ձգտելով առավելագույն շահիով կրճատել շինարարության ժամկետները, իջեցնել դրա խնքնարժեքը, բարելավել կառուցվող ձեռնարկությունների տեխնիկա-տնտեսական ցուցանիշները: ՍՄԿՊ XXII համագումարը նշեց, որ կապիտալ ներդրումները պետք է իրականացվեն այն հաշվով, որ «միջոցների նվազ ծախսումներով աճեցնել արտադրական կարողությունները և ավելի-կարճ ժամանակում ավելացնել արդյունաբերական արտադրանքի թողարկումը, բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը և իջեցնելով արտադրանքի խնքնարժեքը»¹:

¹ «ՍՄԿՊ XXII արտահերթ համագումարի նյութերը», էջ 78:

Կապիտալ ներդրումների ազավել արդյունավետ օգտագործման համար մղվող պայքարում մեր երկիրը հասնել է զգալի հաջողությունների: Այդ երևում է արտադրական ֆոնդերի ու ազգային եկամտի (նոր ստեղծված արժեքի) աճի հարաբերակցությունից, որը ցույց են տալիս հետևյալ տվյալները (տոկոսներով, 1940 թ. նկատմամբ).

	1940 թ.	1960 թ.
ժողովրդական տնտեսության արտադրական հիմնական ֆոնդեր	100	313
Ազգային եկամուտ	100	435

Այն դեպքում, երբ 1940 թ. համեմատությամբ արտադրական ֆոնդերը 1960 թվականին ավելացել են 3,1 անգամ, ազգային եկամուտն աճել է 4,4 անգամ: Ազգային եկամտի աճը տեղի է ունեցել արտադրության ընդլայնման, այդ թվում նաև հիմնական ֆոնդերում ներդրված միջոցների արդյունավետության բարձրացման հաշվին, որն իր արտահայտությունն է գտել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի արտադրողականության անշեղ բարձրացման մեջ:

Սոցիալիստական էկոնոմիկային յուրահատուկ է հիմնական ֆոնդերի գործարկման տեմպերի համեմատությամբ արտադրանքի արտադրության առավել աճի տեմպերը: Դա արագ տեխնիկական առաջադիմության և հիմնական ֆոնդերի ավելի լավ օգտագործման արդյունք է: Աճում է 1 ուրբու արտադրական ֆոնդերին ընկնող արտադրանքի թողարկումը: Այսպես, 1950—1960 թթ. արդյունաբերական-արտադրական ֆոնդերն աճել են 2,8 անգամ այն դեպքում, երբ արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացել է 3 անգամ:

Կապիտալ ներդրումների արդյունավետության վառ օրինակ է կոմունիստական պարտիայի և սովետական պետության միջոցառումները խամ ու խոպան հողերի յուրացման ուղղությամբ, իսկ ու խոպան հողերի յուրացման հիմնական շրջաններում 1954—1960 թթ. ընթացքում հերկվել է

41,8 մլն հեկտար հողատարածություն, Գրանց յուրացման համար կատարված ծախսումները կազմեցին 4,4 մլրդ ռուբլի: Այդ նույն ժամանակամիջոցում միայն հացի ապրանքային արտադրանքի աճի հաշվին պետությունը լրացուցիչ ստացավ 7,6 մլրդ ռուբլի: Հետևաբար, պետության մաքուր եկամուտը կազմեց ավելի քան 3,2 մլրդ ռուբլի:

Բացի այդ, պետությունն այդ հողերում կապիտալ ներդրումների հաշվին սովխոզների, մթերող և այլ կազմակերպությունների արտադրական ֆոնդերն ավելացրել է մոտ 3,5 մլրդ ռուբլով: Այսպիսով, կարճ ժամանակում փոխհատուցվել են խոպան հողերի յուրացման վրա կատարված բոլոր ծախսերը և այդ հողերը տալիս են մեծ կուտակումներ:

Մեր երկրում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար անհրաժեշտ շինարարության վիթխարի ծրագրի կատարման կապակցությամբ առաջ է քաշվում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության բարձրացման հարցը՝ որպես ժողովրդատնտեսական առաջնահերթ խնդիր: Շինարարության հսկայական մասշտաբների պայմաններում կապիտալ ներդրումների ռացիոնալ օգտագործման նշանակությունն անչափ մեծանում է: Շինարարության մեջ միջոցների յուրաքանչյուր տոկոսի խնայողությունն այժմ դառնում է արտադրության և ժողովրդի կենսամակարդակի լրացուցիչ աճի վիթխարի աղբյուր: Օրինակ, 20 տարվա ընթացքում բնակարանային, կոմունալ և հասարակական շինարարության մեջ ներդրված միջոցների միայն 1 տոկոսի խնայողության հաշվին կարելի է կառուցել 20 նոր քաղաք՝ յուրաքանչյուրը 100 հազար բնակչությամբ:

«Պարտիան,— մատնանշված է ՍՄԿՊ ծրագրում,— առաջնակարգ նշանակություն է տալիս կապիտալ ներդրումների արդյունավետությանը, կապիտալ աշխատանքների առավել շահավետ ու խնայողական ուղղություններ ընտրելուն, կապիտալ ներդրումների յուրաքանչյուր ծախսված ռուբլու դիմաց արտադրանքի առավել աճ ապահովելուն, այդ ներդրումների փոխհատուցման ժամկետները կրճատելուն: Պահանջվում է մշտապես բարելավել կապիտալ ծախսումների ստրուկտուրան և դրանց կազմի մեջ բարձրացնել սարքավորումների, մեքենաների, հաստոցների բաժինը»¹:

1. ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը, 1962, էջ 508:

Հետևաբար, կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումը կոմունիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարի կարևորագույն միջոցներից մեկն է:

Կապիտալ ներդրումների արդյունավետության ցուցանիշները: Կապիտալ ներդրումներն իրականացվում են հասարակական արտադրության ըստ ամենայնի աճի նպատակով: Ուստի դրանց արդյունավետությունը չափվում է զուտ արդյունքի (համախառն արդյունքից հանած նյութական ծախսումները) տարեկան աճի հիման վրա: Ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ամբողջ գումարի տրնտեսական արդյունավետության ցուցանիշն արդյունավետության ընդհանուր (բացարձակ) գործակիցն է: Այն ներկայացնում է որպես զուտ արդյունքի աճի և այդ աճն առաջացնող կապիտալ ներդրումների մեծության հարաբերություն:

Կառուցվող առանձին ձեռնարկությունների, շենքերի և շինությունների արդյունավետությունը որոշելու համար ներկայումս օգտագործվում են մի շարք արժեքային և բնաձև ցուցանիշներ: Հիմնական ցուցանիշներն են վերաբերում.

1) Տեսակաբար կապիտալ ներդրումները: Դրանք ցույց են տալիս նախագծվող ձեռնարկության արտադրական կարողության մեկ միավորին (օրինակ, 1 տոննա ցեմենտի տարեկան արտադրանքի վրա ծախսումները ցեմենտի գործարանի շինարարության ժամանակ) կամ տարածության միավորին (օրինակ, 1 քմ բնակարանային տարածություն վրա ծախսումները տան շինարարության ժամանակ) ընկնող կապիտալ ներդրումների չափը:

2) Նախագծվող ձեռնարկության արտադրանքի ինֆլատիվ: Այն բնորոշում է արտադրանքի մեկ միավորին (մեկ մեքենային, մեկ տոննա պողպատին և այլն) ընկնող աշխատանքային, նյութական ռեսուրսների ու դրամական միջոցների ծախսումները: Որքան ցածր լինի արտադրանքի ինֆլատիվը, այնքան արագ կփոխհատուցվեն ձեռնարկության կառուցման վրա կատարված ծախսումները.

3) Կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետները: Այդ ցուցանիշը որոշվում է որպես ժամանակ (տարիներով), որի ընթացքում կատարված ծախսումները ծածկվում են անցկացված միջոցառումից ստացված խնայողության հաշվին: Ձեռնարկություններն ու տնտեսական կազմակերպություններն իրենց արտադրանքի հաշվառումը կատարում են դրամական ձևով՝ ըստ դրա ինքնարժեքի և բացթողման գնի: Արտադրանքի իրացումից ստացված շահույթի զուգադրումը կապիտալ ներդրումների գումարի հետ թույլ է տալիս որոշելու դրանց փոխհատուցման ժամկետը:

Կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունն այն օբյեկտներում որոշելու ժամանակ, որոնց ստեղծումը կապված է զուգակցված ճյուղերի զարգացման հետ, հաշվի է առնվում ոչ միայն տվյալ օբյեկտում, այլև նրա գործելու հետ կապված տնտեսության առանձին ճյուղերում կատարվող կապիտալ ներդրումները: Օրինակ, եթե կառուցվում է ջերմային էլեկտրակայան, ապա պետք է հաշվի առնելի ոչ միայն էլեկտրակայանի վրա կատարված կապիտալ ներդրումները, այլև վառելիքային արդյունաբերության մեջ և տրանսպորտում կատարված ծախսումները՝ այն մասշտաբով, որքանով դրանք անհրաժեշտ են էլեկտրակայանը վառելիքով ապահովելու համար: Հաշվի է առնվում նաև այդ ճյուղերում կապիտալ ներդրումներից ստացված էֆեկտը: Բացի դրանից, արտադրական օբյեկտներում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունը հաշվարկելիս, հաշվի է առնվում շրջանառու միջոցների համալրման համար ծախսումները կամ, ընդհակառակը, դրանց չափերի նվազեցումը:

Կապիտալ ներդրումների արդյունավետության բնածն ցուցանիշներին են վերաբերում, օրինակ, այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են թողարկվող արտադրանքի մեկ միավորի վրա հումքի, նյութերի, վառելիքի և էլեկտրաէներգիայի ծախսումները, մեկ ԲՄ արտադրական հրապարակից արտադրանքի հանույթը և այլն:

Բնածն ցուցանիշներն օգտագործվում են որպես օժանդակ

ցուցանիշներ: Դրանց կիրառումը, օրինակ, հնարավորություն է տալիս հայտնաբերել նախագծվող ձեռնարկությունների արժանիքներն ու թերությունները՝ արտադրական հրապարակների ու սարքավորումների բեռնվածության աստիճանի, հումքի կառուցվածքի տեսակետից և այլն:

Ոչ-արտադրական ֆոնդերի մեջ կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունը բնորոշվում է մեկ ԲՄ բնակելի տարածությանը, մեկ աշակերտական տեղին և այլ միավորներին ընկնող տեսակարար կապիտալ ներդրումներով:

Թվարկված ցուցանիշների օգնությամբ որոշվում է նախագծած միջոցառումների համեմատական արդյունավետությունը, որը հնարավորություն է տալիս ընտրել կապիտալ ներդրումների ուղղության ամենից ավելի շահավետ վարիանտը: Տարբեր վարիանտների լուծումները համեմատելու ժամանակ, երբ նոր նախագծումներում լինում են շեղումներ՝ տեսակարար կապիտալ ներդրումների կամ ինքնարժեքի ավելացման իմաստով, որոշվում է լրացուցիչ կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետը:

Լրացուցիչ կապիտալ ներդրումներն իրենցից ներկայացնում են համեմատելի վարիանտով շինարարության արժեքի տարբերությունը, որն ընկնում է նախագծվող ձեռնարկության տարեկան կարողության միավորի վրա: Լրացուցիչ կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետը հավասար է այն ժամանակին (ըստ տարիների), որի ընթացքում դրանք ծածկվում են թողարկվող արտադրանքի ինքնարժեքի իջեցումով: Դրա հակառակ մեծությունը արդյունավետության գործակիցն է, որն արտադրանքի միավորի ինքնարժեքում առաջացած տարբերության հարաբերությունն է ձեռնարկության տարեկան կարողության միավորի վրա կատարած լրացուցիչ կապիտալ ներդրումների մեծության նկատմամբ¹:

Նախագծի առավել նպատակահարմար վարիանտների ընտրության համար սահմանված են ժողովրդական տնտե-

1. Կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետների և արդյունավետության գործակիցի հաշվարկման օրինակը բերված է V գլխում:

ստեղծված ճյուղերի գծով լրացուցիչ կապիտալ ներդրումների փոխհատուցման դիֆերենցված ժամկետներ և արդյունավետության գործակիցներ:

Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման համար առաջնահերթ նշանակություն ունի ժամանակի գործաճ: Որքան արագ են շահագործման հանձնվում օբյեկտները, այնքան շատ արտադրանք է արտադրվում և ավելի լրիվ են ֆավարարվում ժողովրդի պահանջմունքները, այնքան արագ մեր երկիրը կշահի կապիտալիզմի հետ տնտեսական մրցությունը: Շինարարության ժամկետների արագացումը թույլ է տալիս նաև ավելի արագ ետգնել կապիտալ ներդրումները: Շինարարության ժամկետների վերլուծությունը հատկապես մեծ նշանակություն ունի այն դեպքերում, երբ տեսակարար կապիտալ ներդրումներն համեմատելի նախագծերով ցածր են, իսկ արտադրանքի ինքնարժեքը՝ բարձր: Այստեղ ժամանակի շահումը կարող է փոխհատուցել արտադրանքի ինքնարժեքի որոշ ավելացումը:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետը հավասար է մոտավորապես չորս տարվա: Արդյունաբերության ճյուղերում այդ ժամկետը տարբեր է. մեքենաշինության, քիմիական և թեթև արդյունաբերության մեջ այն հասնում է 3—5 տարվա, վառելիքային և անտառային արդյունաբերության մեջ՝ մոտ 5 տարվա, սև և գունավոր մետալուրգիայում՝ 7 տարվա, էներգետիկայում և տրանսպորտում՝ 10 տարվա:

Ներկայումս ջերմային էլեկտրակայանների, էլեկտրահաղորդման գծերի, ցեմենտի, շաքարի գործարանների և արդյունաբերական մի շարք այլ օբյեկտների շինարարության մեջ մեկ միավոր արտադրական կարողության տեսակարար կապիտալ ներդրումները մեր երկրում ավելի ցածր են, քան ԱՄՆ-ում: Սև մետալուրգիայում, ռետինե դոդերի արտադրության մեջ և մի շարք այլ արտադրություններում դրանք զրտնըվում են մոտավորապես ԱՄՆ-ի մակարդակին: Բայց արդյունաբերության միջին տեսակարար կապիտալ ներդրումնե-

րը, ամբողջութեամբ վերցրած, դեռևս բարձր են, իսկ նախնական-վերամշակման, քիմիական, ավտոմոբիլային գործարանների գծով դրանք մոտավորապես մեկ ու կես անգամ բարձր են, քան ԱՄՆ-ում: Արտադրութեան ընդհանուր ծավալի և բնակչութեան մեկ շնչին ընկնող արտադրանքի տեսակետից ԱՄՆ-ին գերազանցելու խնդիրն արագորեն լուծելու համար, անհրաժեշտ է համառորեն հասնել կապիտալ ներդրումների արդյունավետութեան շեշտակի բարձրացմանը:

Պլանավորման և նախագծման համար կիրառվում է ՍՍՌՄ պետպլանի, ՍՍՌՄ պետշինի, ՍՍՌՄ ՊԳՏԿ-ի, ՍՍՌՄ ԿՎՎ-ն, և ՍՍՌՄ շինբանկի մասնակցութեամբ ՍՍՌՄ գիտութունների ակադեմիայի կողմից 1959 թ. մշակված՝ «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսութեան մեջ կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի տնտեսական արդյունավետութունը որոշելու տիպային մեթոդիկան»: Դրա հիման վրա մշակում են քիմիական, ածխի, մետալուրգիական արդյունաբերութեան մեջ, էլեկտրակայանների շինարարութեան մեջ, երկաթուղում, շինանյութերի արդյունաբերութեան ձեռնարկութուններում և այլ ճյուղերում կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետութեան որոշման մեթոդիկաները, ճյուղային մեթոդիկաների կատարելագործումը, ինչպես նաև առանձին ձեռնարկութուններում բոլոր կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետների հաշվարկման մեթոդների որոշման հիմնական դրույթների մշակումը կարևոր նշանակութուն ունեն կապիտալ ներդրումների արդյունավետութեան բարձրացման համար: Ներկայումս ՍՍՌՄ պետտնտխորհի, ՍՍՌՄ պետպլանի, ՍՍՌՄ պետշինի և ուրիշ գերատեսչութունների ու մինիստրութունների կողմից մշակվում են տեսակարար կապիտալ ներդրումների նորմատիվներ՝ ժողովրդական տնտեսութեան և արդյունաբերութեան ճյուղերի գծով: Դրանք կօգտագործվեն կապիտալ ներդրումների ծավալները որոշելու և նախագծերը կազմելու ժամանակ:

Կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման հարցի լուծման հիմնական փուլերը: Կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման համար լճոական նշանակութուն ունեն. դրանց ճիշտ պլանավորումը, նախագծային-նախահաշվային գործի բարելավումը, շինարարական ինդուստրիայի ըստ ամենալինի ամրապնդումը և զարգացումը, զսրծող հիմնական ֆունդիի ուսցիլունալ օգտագործումը:

Շինմանառժային աշխատանքների պլանավորման, նու-

խագծման ու կատարման փուլում կարևոր է ապահովել կապիտալ ներդրումների տնտեսման բոլոր ռեզերվների մաքսիմալ իրացումը, շինարարության ժամկետների արագացումը, աշխատանքի արտադրողականության ավելացումը և կառուցվող (վերակառուցվող) ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքի իջեցումը:

Կապիտալ ներդրումների պլանավորման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում հետևյալ պահանջների պահպանման վրա. 1) ապահովել սոցիալիստական արտադրության այն կարևորագույն ճյուղերի առավել զարգացումը, որոնք պայմաններ են ստեղծում ամբողջ ժողովրդական տնտեսության արագ զարգացման համար, 2) երկրի տերիտորիայում արտադրության նպատակահարմար, տնտեսապես հիմնավորված տեղաբաշխում, բնական ռեսուրսների ավելի լրիվ օգտագործում, տնտեսական շրջանների կոմպլեքսային զարգացում, ձեռնարկությունների մասնագիտացում և կոոպերացում, 3) կարևորագույն կառույցներում նյութական, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների կենտրոնացնելու միջոցով առավելագույն չափով շահագործման հանձնել արտադրական կարողությունները և հիմնական ֆոնդերը:

Նախագծման ժամանակ որոշվում են կառուցվող և վերակառուցվող ձեռնարկությունների տեխնիկա-տնտեսական հիմնական ցուցանիշները, նշվում են առավել խնայողական լուծումները և շինարարության իրականացման ուղիները: Նախագծերում անհրաժեշտ է կիրառել առավել կատարելագործված տեխնիկական լուծումներ՝ դրանց իրականացման համար նվազագույն ծախսումներով: Անթույլատրելի է նախագծերում կողմնորոշվել դեպի հնացած տեխնիկական ու տեխնոլոգիան, թույլ տալ ամեն տեսակի ավելորդություններ, որոնք առաջացնում են շինարարության թանկացում:

Կառուցվող և վերակառուցվող ձեռնարկություններում գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների կիրառումն արտադրանքի թողարկումն ավելացնելու, դրա ինքնարժեքն իջեցնելու և կուտակումների աճի հիմքն է:

Կապիտալ ներդրումների արդյունավետությունը մեծ չա-

փով կախված է նաև շինարարական կազմակերպությունների գործունեությունից, որոնք իրականացնում են ձեռնարկությունների, շենքերի և կառուցումների շինարարությունը: Կոմունիստական պարտիան շինարարական կազմակերպությունների առջև խնդիր է դրել՝ կառուցել արագ, լավ և էժան, անընդհատ բարձրացնելով արտադրության տեխնիկական մակարդակը և արագացնելով երկրի տնտեսական զարգացման տեմպերը:

Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումը կապված է շինարարության մեջ նյութական ու ֆինանսական միջոցների խնայողաբար ծախսման խնդրի լուծման հետ, այսինքն՝ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման և շինարարական բոլոր կազմակերպությունների շահութաբեր աշխատանքի ապահովման խնդրի լուծման հետ: Որքան էժան լինի շենքերի ու կառուցվածքների շինարարությունը, այնքան շատ նոր ձեռնարկություններ, բնակելի սեներ ու այլ օբյեկտներ կարելի է կառուցել: Այսպիսով, շինարարության մեջ խնայողությունը՝ իր տնտեսական արդյունքով հավասարազոր է կապիտալ ներդրումների ծավալի ավելացմանը:

Կատարված կապիտալ ներդրումների արդյունավետությունը որոշվում է գործարկված ձեռնարկությունների շենքերի ու կառուցվածքների շահագործման արդյունքներով: Շատ կարևոր է ապահովել նոր ստեղծվող և վերակառուցվող հիմնական ֆոնդերի արագ յուրացումը և լրիվ օգտագործումը, դրանցից առավելագույն հատուցում ստանալը:

Հայրենական և համաշխարհային դիտության ու տեխնիկայի ժամանակակից նվաճումների հիման վրա ստեղծված արտադրական նոր կարողությունները պետք է ապահովեն ոչ միայն արտադրանքի թողարկման ավելացում, այլև արտադրողականության աճ և բանվորների աշխատանքի թեթևացում, արտադրանքի որակի բարելավում ու ինքնարժեքի իջեցում: Տեխնիկական առաջադիմությունն արագացնելու և տեխնիկական ափիլի լավ օգտագործելու նպատակով ներկայումս յաճմանոված է այնպիսի կարգ, որի համաձայն ձեռնարկու-

թյուններում և կառույցներում պլանների կազմմանը նախորդում է արտադրութայն մեջ նոր տեխնիկայի ներդրման ու զարգացման ուղղութիւններ առաջադրանքների մշակումը:

237

2. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՍՄԿՊ ծրագրում, պարտիայի ու կառավարութայն որոշումներում բացահայտված են կապիտալ ներդրումների տրնտեսական արդյունավետութայնը բարձրացնելու խնդրի լուծման կոնկրետ ուղիները:

Արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխումը: Վ. Ի. Լեհինը մատնանշում էր արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման անհրաժեշտութայնը, նպատակ ունենալով արդյունաբերութայնը մոտեցնել հումքի աղբյուրներին, վառելիքա-էներգետիկ ռեսուրսներին և սպառման շրջաններին: Ընդ որում լուծվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ իրենց պարունակութայնը առավել հարուստ ու շահագործման տեսակետից շահավետ բնական ռեսուրսների ներգրավումը տրնտեսական շրջանառութայն մեջ, աշխատանքային ռեսուրսների առավել լրիվ օգտագործումը, ձեռնարկութայնների խելացի մասնագիտացման ու կոոպերացման զարգացումը, միջշրջանային տնտեսական կապերի ընդլայնումն ու բարելավումը, բոլոր տեսակի տրանսպորտի ռացիոնալ օգտագործումը: Այդ բոլորն, ամբողջութայնը վերցրած, ապահովում են տնտեսական շրջանների էկոնոմիկայի կոմպլեքսային զարգացումը:

Սակայն, այդ շի նշանակում, թե ամեն մի շրջանում պետք է զարգացնել արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրութայն բոլոր ճյուղերը, ունենալ փակ տնտեսութայն: Կապիտալ ներդրումներն ամենից առաջ պետք է ուղղվեն այն ճյուղերի զարգացմանը, որոնք տվյալ շրջանում թույլ են տալիս հասարակական աշխատանքի նվազագույն ծախսումներով ստանալ ավելի շատ արտադրանք:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսութայն զարգացման գլխա-

վոր հեռանկարում նշված են խոշոր միջոցառումներ, արտադրողական ուժերի տեղաբաշխումը բարելավելու ուղղութեամբ: Կստեղծվեն վառելիքա-էներգետիկ հզոր բազաներ Սիբիրում՝ բաց եղանակով արդյունահանվող էժան ածխի հանքավայրերում, ինչպես նաև Անգարայի և Ենիսեյի հիդրոէներգիայի բազմահարուստ ռեսուրսների բազայի վրա: Գազի և հիդրոէներգիայի հսկայական ռեսուրսների օգտագործման հիման վրա Միջին Ասիան կդառնա էներգետիկ արտադրութիւնների տեղաբաշխման կարևորագույն շրջան: Կառաջանան քիմիական արդյունաբերութեան խոշոր կոմպլեքսներ բնական ու նավթային էժան գազերի կենտրոնացման շրջաններում: Հյուսիսային գետերից ջրի հսկայական զանգվածներ շուտ կտրվեն դեպի երկրի հարավային շրջանները: Այդ և շատ ուրիշ միջոցառումները թույլ կտան վիթխարի բնական հարստութիւններն ի սպաս դնելու սովետական ժողովրդին, ապահովելու նվազագույն ծախսումներով արտադրութեան զարգացման բարձր տեմպեր:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման պլաններում հատուկ ուշադրութիւն է դարձվում երկրի արեւելեան շրջանների կոմպլեքսային զարգացմանը: Յոթնամյակում կապիտալ ներդրումների ընդհանուր ծախալի 40 տոկոսից ավելին ուղղվում է այդ շրջանների (ներառյալ Ուրալը, Սիբիրը, Հեռավոր արևելքը, Ղազախիստանը և Միջին Ասիան) զարգացմանը:

Երկրի արևելեան շրջանների տեսակարար կշիռը 1965 թ. ածխի հանույթի գծով կաճի մինչև 50 տոկոսի, պողպատի արտադրութեան մեջ՝ 48, ալյումինինը՝ 91, ռաֆինացված պղնձինը՝ 88, ցեմենտինը՝ 42, էլեկտրաէներգիայի արտադրութեան մեջ՝ 46, թղթի արտադրութեանը՝ մինչև 32 տոկոսի:

Երկրի արևելքում արդյունաբերութեան արագ զարգացումը բացատրվում է այդ շրջաններում հումքային ու էներգետիկ ռեսուրսների օգտագործման բացառիկ շահավետութեամբ: Այսպես, ածխի հանույթը մեկ տոննայով ավելացնելու հա-

մար Արևելյան Սիբիրի ավազանում 2,5 անգամ քիչ կապիտալ ներդրումներ են պահանջվում, քան Դոնբասում:

Անգարայի վրա Բրատսկի հիդրոէլեկտրակայանը տարեկան կարտադրի այնքան էլեկտրաէներգիա, որքան Վ. Ի. Լենինի անվան և պարտիայի XXII համագումարի անվան խոշորագույն հիդրոէլեկտրակայանները՝ Վոլգայի վրա: Մինչդեռ Բրատսկի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը գրեթե երկու անգամ էժան է ստացվում, քան վոլգյան երկու հիդրոէլեկտրակայանների շինարարությունը:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման ողջիայիստական սկզբունքները, որոնց մասին խոսվեց վերևում, ընկած են ՍՍՌՄ պետտնտխորհի և ՍՍՌՄ պետշինի կողմից հաստատված արդյունաբերական նոր ձեռնարկությունների շինարարության շրջանի ու կետի ընտրության և ձեռնարկությունների տեղաբաշխման տեխնիկա-տնտեսական հիմնավորման հիմնական ցուցանիշների կարգի վերաբերյալ Կանոնադրության հիմքում:

Կանոնադրության համապատասխան ձեռնարկության տեղաբաշխման մասին հարցը լուծելիս որպես հիմնական ցուցանիշներ են ծառայում՝ արտադրանքի ինքնարժեքը, տեսակարար կապիտալ ներդրումները և փոխհատուցման ժամկետները:

Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման շրջանների ընտրությունը պետք է որոշվի գլխավոր սխեմաներում և արդյունաբերական ճյուղերի զարգացման ու տեղաբաշխման մասին տեխնիկա-տնտեսական զեկուցագրերում, ինչպես նաև խոշոր տնտեսական շրջանների արտադրողական ուժերի տեղաբաշխման ու զարգացման սխեմաներում:

Շինարարության շրջանները հաստատվում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետի, ՍՍՌՄ մինիստրությունների ու գերատեսչությունների կողմից 5—7 տարվա հեռանկարային պլաններ կազմելու ժամանակ, հաշվի առնելով եղած շրջանային հատկազոման նախազոծերը (սխեմաները):

Միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները, ՍՍՌՄ մինիստրություններն ու գերատեսչություններն արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության շրջանների և կետերի մասին իրենց առաջարկությունները համաձայնեցնում են ՍՍՌՄ պետտնտխորհի հետ, եթե դրանց նախահաշվային արժեքը 2,5 մլն ռուբլուց բարձր է:

Շինարարության շրջանի սահմաններում չշինարարական հրապարակի ընտրությունն իրականացվում է արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության համար հրապարակների ընտրության և հաստատման մասին Կանոնադրության համապատասխան: Այդ Կանոնադրության համաձայն, շինարարության համար նախատեսված հրապարակները պետք է

բավարարեն շինարարության արժեքի իջեցումն ապահովող հիմնական պահանջները: Դրանց թվին են պատկանում. տերիտորիայի շահիբը՝ պետք է ընդունել անհրաժեշտ նվազագույնը, հաշվի առնելով կառուցապատման ռացիոնալ խտությունը և շենքերի բլոկավորումը, հրապարակը պետք է համապատասխանի ձեռնարկության խնայողական շահագործման խնդիրներին և նրա ընդլայնման հնարավորությունը, ինչպես նաև ձեռնարկությունից ոչ հեռու աշխատավորներին հարմար բնակեցնելու խնդիրներին, սահպանելով առողջապահական անհրաժեշտ պահանջները և այլն:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանումը, որը հետզհետե էլ ավելի կարևոր դեր է խաղում սոցիալիստական լազերում կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման գործում: «Աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման նպատակն է,— ասված է տնտեսական փոխօգնության խորհրդի մասնակից երկրների կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների 1962 թ. կայացած խորհրդակցության որոշումներում,— բարձրացնել հասարակական արտադրության արդյունավետությունը, աջակցել սոցիալիստական բոլոր երկրներում էկոնոմիկայի և աշխատավորների բարեկեցության աճի բարձր տեմպերի հասնելուն, նրանց ինդուստրացմանը և աստիճանաբար հաղթահարել սլատմականորեն գոյացած սոցիալիզմի երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև եղած տարբերությունները, ստեղծել նյութական բազա դրանց առավել կամ պակաս շահով միաժամանակ, մի պատմական ժամանակաշրջանի սահմաններում, կոմունիզմին անցնելու համար»¹:

Աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանումը բարենպաստ սլայմաններ է ստեղծում կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման համար ինչպես սոցիալիստական առանձին երկրներում, այնպես էլ ամբողջ համաշխարհային սոցիալիստական սիստեմում, միասին վերցրած: Այդ խնդրի լուծման առավել արդյունավետ միջոց է ծառայում

¹ «Պրավդա», 1962 թ. հունիսի 17:

սոցիալիստական երկրների ընթացիկ ու հեռանկարային ժողովրդատնտեսական պլանների կոորդինացումը:

Արտադրության կառուցվածքի բարելավումը: Կապիտալ ներդրումների առավել արդյունավետ օգտագործման ուղիների հարցի լուծման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում արտադրության ճյուղային կառուցվածքի բարելավմանը, ամենից առաջադիմական ճյուղերի առավել զարգացմանը, ճյուղեր, որոնք ապահովում են ամբողջ ժողովրդական տնտեսության արագ զարգացումը: Արտադրության ճյուղային կառուցվածքի կատարելագործման օրինակ կարող է ծառայել երկրի վառելիքային բալանսի արմատական փոփոխությունը: Եթե 1955 թ. վառելիքի արտադրության ընդհանուր ծավալի մեջ նախկին ու գազը կազմում էին 23,5 տոկոս, ապա նախկին ու գազային արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ դրանց բաժինը 1961 թ. բարձրացավ մինչև 42 տոկոսի: Ավելի էժան վառելիքի օգտագործումից ստացված խնայողությունը վեց տարվա ընթացքում գերազանցում է 3 միլիարդ ռուբլուց, իսկ մինչև յոթնամյակի վերջն այն կհասնի 12,5 միլիարդ ռուբլու:

ՄՄԿՊ ծրագիրը նախատեսում է հետագա խոշոր տեղաշարժեր արտադրության կառուցվածքի մեջ: Ցածր արդյունավետություն ունեցող վառելիքի տեսակներն աստիճանաբար դուրս կմղվեն բարձր արդյունավետություն ունեցող վառելիքի տեսակներով. բավականաչափ կավելանա նոր, արժեքավոր հատկություններ ունեցող սինթետիկ նյութերի, մետաղների և համաձուլվածքների տեսակարար կշիռը. արագ ու լայն չափերով կներդրվեն նոր տիպի մեքենաներ, սարքեր և ապարատներ, որոնք կապված են ավտոմատիկայի և էլեկտրոնային տեխնիկայի հետ: Այդ կապակցությամբ կաճի արդյունաբերության այնպիսի ճյուղերի բաժինը, ինչպիսիք են՝ սարքաշինությունը, ռադիոտեխնիկական, քիմիական արդյունաբերությունը, ավտոմատացման միջոցների արտադրությունը և այլն:

Երևան կզան նաև շատ ավելի արդյունավետ շինանյութեր: Օրինակ, վերջին տարիներին շինարարության մեջ է՛լ

ավելի լայն գործածություն են գտնում կրավազային (սիլիկացիտային) շինվածքները, որոնք շատ դեպքերում փոխարինում են բետոնին: Դրանցից կառուցվում են տներ, որոշ արդյունաբերական կառուցվածքներ, գյուղատնտեսության համար անասնապահական և այլ շինություններ: Բետոնի համեմատությամբ սիլիկացիտն ունի մի շարք առավելություններ. այն ավելի ցրտադիմացկուն է և քիչ է կտրոզիայի ենթարկվում, ավելի բարձր դիմացկունությամբ է օժտված զանազան թթուների նկատմամբ: Սիլիկացիտային շինվածքները մոտ 30 տոկոսով թեթև են նույն ամրությունն ունեցող բետոնային շինվածքներից: Մասնագետների հաշվումներով, սիլիկացիտային արտադրության մեջ յուրաքանչյուր 1 ռուբլի ներդրումից կարելի է ստանալ երկու անգամ շատ արտադրանք, քան ծակոտկեն ջեմենտաբետոնի արտադրության մեջ 1 ռուբլի ներդրումից:

Նոր շինարարության և վերակառուցման հարաբերակցությունը: Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման կարևոր ուղղությունը նոր շինարարության ծավալների և գործող հիմնական ֆոնդերի վերակառուցման ճիշտ հարաբերակցության ապահովումն է: Մոտակա տարիներին նոր ձեռնարկությունների շինարարությունը նախատեսված է իրականացնել գլխավորապես արդյունահանող արդյունաբերության մեջ, նոր հայտնաբերված բնական հարստությունների շրջաններում: Ընդ որում միջոցներն ուղղվում են այնպիսի օբյեկտների շինարարության վրա, որոնք համեմատաբար կարճ ժամկետներում թույլ են տալիս մեծացնելու արտադրական կարողությունները:

Վերամշակող արդյունաբերության մեջ և մի շարք այլ ճյուղերում կապիտալ ներդրումներն առաջին հերթին օգտագործվում են գործող ձեռնարկությունների արմատական վերակառուցման, ընդլայնման ու տեխնիկական վերազինման համար՝ կոմպլեքսային մեքենայացման և տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման բազայի վրա: Հաշվարկումները ցույց են տալիս, որ ձեռնարկությունների վերակառուցման և ընդլայնման համար կապիտալ ներդրումները փոխհատուց-

Վրում են 2—2,5 անգամ ավելի արագ, քան նոր շինարարողական մեջ: Այսպիսով, գործող ձեռնարկությունների տեխնիկական վերազինումը թույլ է տալիս աշխատանքային, նյութական ու դրամական զգալիորեն քիչ ծախսումներով և արագ լուծել աշխատանքի արտադրողականության աճի ավելի արագ տեմպերի հասնելու և արտադրանքի թողարկումն ավելացնելու խնդիրը, քան նոր ձեռնարկություններ կառուցելու ժամանակ:

Կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի մեջ գործող ձեռնարկությունների ընդլայնման ու տեխնիկական վերազինման համար կատարվող կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը արդյունաբերության հիմնական ճյուղերի գծով, ցույց են տալիս հետևյալ սովալները (տոկոսներով).

	1959 թ.	1960 թ.
Ընդամենը ՍՍՌՄ մասշտաբով (ըստ արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների)	51	55
Այդ թվում ըստ ճյուղերի		
սև մետալուրգիա	62	63
նավթային և գազային արդյունաբերություն	28	24
էլեկտրակայաններ, էլեկտրական և ջերմային ցանցեր	19	20
մեքենաշինություն	70	77
քիմիական արդյունաբերություն	51	52
թեթև արդյունաբերություն	49	52

ՍՍՌՄ արդյունաբերական հին շրջանների մեծ մասում կապիտալ ներդրումներն ուղղվում են գլխավորապես գործող ձեռնարկությունների վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման համար: Օրինակ, 1961 թ. Լենինգրադի ժողտնտիսորհն այդ նպատակների համար օգտագործել է կապիտալ ներդրումների 75,5 տոկոսը, Գորկու ժողտնտիսորհը՝ 70 տոկոսը:

Յոթնամյա պլանում գործող ձեռնարկությունների կարողությունների ավելի լավ օգտագործման ու ընդլայնման, ներքին ռեսուրսների մոբիլիզացման, տնտեսական կապերի ռա-

ցիոնալացման կուրս է վերցված: Այսպես, սև մետաղաբեր-
յի ձեռնարկությունների ընդլայնման ու վերակառուցման
համար նախատեսվում է ծախսել այդ ճյուղի վարգացման
նպատակով առանձնացված բոլոր կապիտալ ներդրումների
67 տոկոսը: Գործող ձեռնարկությունների ընդլայնման ու
վերակառուցման հաշվին կատարվի շուգունի, պողպատի ու
գլանվածքի աճի երեք քառորդից ավելին: Միայն Մագնիտա-
գորսկի կոմբինատը գլանվածքի թողարկումը 5,2 մլն տոն-
նայից յոթնամյակի վերջում կհասցնի մինչև 8,5 մլն տոն-
նայի: Դա կտա միջոցների մեծ տնտեսում և ժամանակի շա-
հում: Եթե 1 տոննա շուգուն ստանալու համար, օրինակ, Կա-
րագանդայի մետալուրգիական նոր գործարանի շինարարու-
թյունում կապիտալ ներդրումները կազմում են 235 ուրլի,
այսպես Մագնիտագորսկի կոմբինատի ընդլայնման ժամանակ
դրանք կկազմեն 195 ուրլի:

Հասկանալի է, որ հատուկ ուշադրություն դարձնելով գոր-
ծող ձեռնարկությունների վերակառուցման ու ընդլայնման
վրա, չի կարելի թույլ տալ նոր ձեռնարկությունների շինարարու-
թյան ետ մնալը: Ընդ որում կարևոր նշանակություն ու-
նի խոշոր ձեռնարկությունների շինարարությունը: Օրինակ,
հաշվարկումները ցույց են տալիս, որ փոքր էլեկտրակայան-
ների կառուցման ժամանակ, 1 կիլովատ կարողության վրա
տեսակարար կապիտալ ներդրումները կազմում են 400—450
ուրլի կամ 4—5 անգամ բարձր, քան խոշոր էլեկտրակայան-
ների շինարարության համար ծախսումները:

Առաջավոր տեխնոլոգիական պրոցեսների արմատավորումը:
Ինչպես նոր շինարարության, այնպես էլ վերակառուցման
ժամանակ հսկայական նշանակություն ունի արտադրության
տառվել առաջադիմական այնպիսի տեխնոլոգիական պրո-
ցեսների արմատավորումը, որոնք ապահովում են նյութա-
տեխնիկական ուսուրանների և դրամական միջոցների խնայ-
յողություն:

Օրինակ, դեռ մի քանի տարի առաջ պողպատի արտա-
դրությունն ավելացվում էր գլխավորապես մարտենյան նոր
վառարանների շահագործման հաշվին: Մեծաքանակ մարտեն-

ջան ւժառարանների շինարարութիւնը պահանջում է նյութական ու աշխատանքային ռեսուրսների, դրամական միջոցների զգալի ծախսումներ: Բացի դրանից, մարտենյան հնոցներում պողպատի ձուլումը աշխատատար պրոցես է և պահանջում է երկարատև ժամանակ: 500 տոննա տարողութեամբ ագրեգատը տարեկան ձուլում է մոտ 400 հազ. տոննա պողպատ:

Գիտութիւնը և տեխնիկան առաջ քաշեցին պողպատի ձուլման մեկ ուրիշ, ավելի խնայողական եղանակ՝ թթվածնային կոնվերտորներում պողպատի ստացման եղանակը: 50 տոննանոց կոնվերտորներում շուգունը պողպատի վերածելու պրոցեսը տևում է ընդամենը 17, իսկ 100 տոննանոցում՝ 25 րոպե: Ընդ որում բարձրանում է պողպատի որակը և խիստ ավելանում մետաղի ձուլումը: 100 տոննա տարողութեամբ կոնվերտորը տարեկան ձուլում է 750 հազ. տոննա պողպատ կամ մոտ կրկնակի շատ, քան ձուլում է 500 տոննանոց մարտենյան վառարանը:

Պողպատի ստացման պրոգրեսիվ եղանակը հանգեցնում է աշխատանքի ու միջոցների ծախսումների զգալի պակասեցմանը: Կրիվոյ ռոգի մետալուրգիական գործարանի տվյալներով, կոնվերտորային ցեխում կապիտալ ներդրումները տարեկան 1 տոննա կարողութեան հաշվով կազմում են 10,2 ռուբլի կամ 1,5 անգամ պակաս, քան մարտենյան ցեխում: Կոնվերտորային ցեխերի կառուցման դեպքում յուրաքանչյուր 1 միլիոն տոննա ձուլվող պողպատի դիմաց տնտեսվում է ոչ պակաս 6 մլն ռուբլի:

Պողպատի արտադրութեան կոնվերտորային եղանակի մեծ առավելութիւնների կապակցութեամբ նախատեսված և իրականացվում է հզոր կոնվերտորային ցեխերի շինարարութեան պլան երկրի մի շարք մետալուրգիական գործարաններում: 10—15 տարի հետո ՍՍՌՄ-ում սև մետաղների ընդհանուր արտադրութեան մեջ կոնվերտորային պողպատի բաժինը կաճի մինչև 40 տոկոսի:

Ածխարդյունաբերութեան մեջ մեծ նշանակութիւն ունի արդյունահանման բաց եղանակը, որն ապահովում է միջոց-

ների տնտեսում ինչպես հանքերի շինարարության ընթացքում, այնպես էլ ածխի հանույթի ժամանակ: Բաց եղանակով ածխի արդյունահանման դեպքում վերացվում է ածխահատի ծանր աշխատանքը գետնի տակ, նրա արտադրողականությունը, ստորերկրյա պայմաններում աշխատելու հետ համեմատած, բարձրանում է 5—7 անգամ, իսկ ածխի ինքնարժեքը իջնում է ավելի քան 4 անգամ: 1961 թ. բաց եղանակով արդյունահանվել է ավելի քան 109 մլն տոննա ածուխ, կամ երկրում արդյունահանված ամբողջ ածխի 21 տոկոսը: Գիտահետազոտական և նախագծային կազմակերպությունների հաշվարկումներով, քսանամյակի վերջում բաց եղանակով ածխի հանույթը կարելի է հասցնել առնվազն տարեկան 600 մլն տոննայի:

Կապիտալ ներդրումների և արտադրական ֆոնդերի կառուցվածքի կատարելագործումը: Կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի մեջ սարքավորումների բաժնի բարձրացումը տնտեսական մեծ էֆեկտ է տալիս: Կապիտալ ներդրումների կառուցվածքի կատարելագործման հիմնական ուղիներն են՝ արտադրական ագրեգատների կարողության աճը, գործող ձեռնարկությունների վերակառուցման և տեխնիկական վերազինման ուղղությամբ կատարվող աշխատանքների բաժնի բարձրացումը, ձեռնարկությունների նախագծման մեջ ամեն մի նորի ու առաջադիմականի կիրառումը: Օրինակ, առաջնորդ կառուցած տարեկան 500—600 հազ. տոննա կարողությամբ նավթամուղային կայանքների փոխարեն, 1962 թ. սկսել են լայնորեն կիրառել տարեկան 2 մլն տոննա կարողությամբ կայանքներ: Ընդ որում տեսակարար կապիտալ ներդրումները պակասում են 28 տոկոսով: Նոր գործարանների նախագծերում այդպիսի կայանքների կարողությունը բարձրացված է տարեկան մինչև 6 մլն տոննայի: Դա էլ իր հերթին, տարեկան 2 մլն տոննա կարողությամբ կայանքների համեմատությամբ, թույլ է տալիս 18—20 տոկոսով իջեցնել տեսակարար կապիտալ ներդրումները, իսկ շահագործման ծախսերը՝ 40—45 տոկոսով:

Խոշոր ջերմային էլեկտրակայանների (օրինակ, Նովոչերկասսկի, Ալի-Բայրամլիի, Երմակովսկի) ժամանակակից նախագծերում շինմոնտաժային աշխատանքների բաժինը 40—42 տոկոսից չի անցնում, այն դեպքում, երբ մի քանի տարի առաջ կառուցված կայանների նախագծերում այն հասնում էր մինչև 51—57 տոկոսի:

ՍՍՌՄ պետշինի և նախագծային կազմակերպությունների տվյալներով արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման ժամանակ առաջադիմական մեթոդների կոմպլեքսային արմատավորումն արդեն մոտիկ ժամանակներս կհանգեցնի այդ ձեռնարկությունների շինարարության արժեքի իջեցմանը մինչև հաշվով 10 տոկոսով, իսկ հետագայում՝ 17—20 տոկոսով:

Առաջավոր նախագծային լուծումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ մեր պայմաններում շինմոնտաժային աշխատանքների բաժինը արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր արժեքի մեջ 1970 թ. լրիվ կարելի է իջեցնել մինչև 45 տոկոսի, իսկ 1980 թվականին՝ մինչև 40 տոկոսի և նույնիսկ ավելի պակաս: Այդ նշանակում է կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունը բարձրացնել առնվազն 25 տոկոսով:

Որոշ տնտեսագետների հաշվարկների համաձայն կապիտալ ներդրումների մեջ սարքավորումների բաժնի յուրաքանչյուր մեկ տոկոսի բարձրացումը նշանակում է նոր արտադրական ֆոնդերի նույն ծավալից, իբրև «անվճար», արտադրանքի թողարկումն ավելացնել մոտ մեկ միլիարդ ռուբլով:

ձական հարց է հանդիսանում գործող հիմնական արտադրական ֆոնդերի մեջ աշխատամեքենաների ու սարքավորումների բաժնի ավելացումը: Այժմ արդյունաբերական արտադրական ֆոնդերում դրանց տեսակարար կշիռը կազմում է 24 տոկոս, իսկ շենքերի, կառուցումների և փոխադրամիջոցների բաժինը՝ 61 տոկոս: Պարզ է, որ աշխատամեքենաների բաժնի բարձրացումը կնշանակի արտադրական կարողություններն ավելացնել նույն կամ նույնիսկ ավելի պակաս

ծախսումներով: Այդ խնդրի լուծման հիմնական պայմանը տեխնիկայի կատարելագործումն է, արտադրական հրապարակների ավելի լավ օգտագործումը, կոնստրուկտորական և նախագծային-հետազոտական աշխատանքների որակի ըստ ամենայնի բարձրացումը:

Շինարարության արագացումը: Ինչպես այդ մասին արդեն ասվել է, կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության բարձրացման մեծ ռեզերվ է շինարարության ժամկետների կրճատումը: Վերջին տարիներին այդ տեսակետից ձեռք են բերվել բավականին հաջողություններ: Օրինակ, մեզ մոտ մեծ ծավալի դոմնային վառարանները կառուցվում են մեկ տարուց պակաս ժամանակամիջոցում, մարտենյան վառարանները՝ 6 ամսում, հզոր գլանահաստոնները՝ 1—1,5 տարում, 5 հարկանի խոշորապանել տները՝ 4—5 ամսում և նույնիսկ արագ:

Սակայն շինարարության ժամկետները ամբողջ երկրի մասշտաբով վերցրած դեռևս չեն համապատասխանում արդի պահանջներին: Շինարարության ժամկետների ձգձգումը հսկայական վնաս է հասցնում ժողովրդական տնտեսությանը, իջեցնում է երկրի տնտեսական զարգացման տեմպերը:

ՍՄԿՊ XXII համագումարում Ն. Ս. Խրուշչովն ասել է. «Նոր ձեռնարկությունների կառուցումը, գործարկումն ու յուրացումը արագացնելու ասպարեզում մեղք չի լինի, եթե մենք սովորենք նաև կապիտալիստական լավագույն օրինակներից»¹: Շինարարության ժամկետների կրճատումը անսովորտ շինարարության չափերի պակասեցման, կապիտալ ներդրումներին ուղղվող հսկայական միջոցների շրջանառության արագացման պայմանն է:

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 234:

Անավարտ շինարարության չափերը երևում են հետևյալ աղյուսակից.

Տարիներ	Անավարտ շինարարությունը վերջին (մլրդ. ուր.)	Անավարտ շինարարությունը, տոկոսներով տարեկան կապիտալ ներդր. ծավալի նկատմամբ	Տարվա ընթացքում հիմնական ֆոնդերի գործարկումը, տոկոսներով կապիտալ ներդր. ծավալի նկատմամբ
1956	16,0	85	90,0
1957	17,6	83	89,8
1958	17,5	73	97,1
1959	19,0	70	92,0
1960	21,4	69	90,3
1961	24,8	76	90,8

Ինչպես երևում է այդ տվյալներից, անավարտ շինարարության բացարձակ չափերը աճում են, թեև նկատվում է դրա որոշ իջեցում՝ կապիտալ ներդրումների ծավալի համեմատությամբ: Մինևուայն ժամանակ կապիտալ ներդրումների յուրաքանչյուր ուսուցումը դիմաց հիմնական ֆոնդերի գործարկումը մնում է մոտավորապես նույն մակարդակի վրա և կազմում է միջինը 90—92 կոպեկ: Դա վկայում է անավարտ շինարարության ժամկետների կրճատման միջոցով հիմնական ֆոնդերի աճի ռեզերվների մասին: Այդ կարելի է տեսնել նաև 1960 թ. հունվարի 1-ի հաշվառման տվյալներից, ըստ որի անավարտ շինարարության մեջ գտնվող օբյեկտների թիվը կազմում էր 101,2 հազար, այդ թվում արտադրական նշանակություն ունեցող՝ 47,5 հազար օբյեկտ: Բացի դրանից, անավարտ շինարարության վիճակում էին գտնվում շինարարության միջոցների հաշվին կառուցվող շատ օբյեկտներ:

1961 թ. անավարտ շինարարության պակասեցումը միայն մեկ տոկոսով թույլ կտար ազատելու 214 միլիոն ուսուցում, որով կարելի է լրացուցիչ կառուցել մոտ 56 հազար երկսենյականոց բնակարան:

Կարևորագույն օբյեկտներում անավարտ շինարարության պակասեցման գլխավոր միջոցը կապիտալ ներդրումների կենտրոնացումն է: Տնտեսության պլանային վարձումը ստեղծում է անհրաժեշտ օբյեկտիվ նախադրյալներ այդ խնդրի կատարման համար:

Շինարարության արագացումը և կապիտալ ներդրումների կենտրոնացումը, մատնանշված է ՍՍԿՊ ծրագրում, պետք

է դառնան տնտեսութեան պլանավորման ու կազմակերպման պարտադիր պայմանը: Շինարարութեան հարցի վերաբերյալ պարտիայի որոշումներում նշված են ՍՄԿՊ ծրագրի այդ պահանջների պրակտիկ կենսագործման կոնկրետ ուղիները:

Կապիտալ ներդրումների ծավալը որոշելիս, ներկայումս հաշվի է առնվում հետևյալ պայմանները. 1) նոր ձեռնարկութունների կառուցման մասին առաջարկութունները կարող են մտցվել, ելնելով պետութեան կողմից առանձնացված կապիտալ ներդրումների լիմիտներից և անավարտ շինարարութեան ծավալի ըստ ամենայնի կրճատման անհրաժեշտութիւնից, 2) նոր ձեռնարկութունների շինարարութիւնը կարող է սկսվել միայն այն պայմանով, եթե գործարկվելիք օբյեկտները և փոխանցվող համանման կառուցները լիովին ապահովված են նյութերով, սարքավորումներով, ֆինանսներով, ինչպես նաև բանվորական ուժով, 3) ինչպես նոր, այնպես էլ փոխանցվող շինարարութեան համար միջոցները առանձնացվում են այն շափերով, որոնք նախատեսված են շինարարութեան տեղութեան նորմաներով, 4) նախագծված ձեռնարկութունների հիմնական օբյեկտների ու կառուցումների շինարարութիւնը կարող է սկսվել նախապատրաստական աշխատանքների կատարումից հետո, որոնց ցանկը և ծավալը սահմանվւմ են աշխատանքների կազմակերպման նախագծով:

Թվարկված պայմանների կատարումը կնպաստի անավարտ շինարարութեան կրճատմանը, կառուցվող օբյեկտների ավելի արագ գործարկմանը, կապահովի աշխատանքի, նյութատեխնիկական ռեսուրսների և դրամական միջոցների տրնտեսում, այսինքն՝ զգալի չափով կբարձրանա կապիտալ ներդրումների արդյունավետութիւնը:

Շինարարութեան տեմպերի արագացումը տալիս է արտադրութեան ավելի պրոգրեսիվ ճյուղային կառուցվածքի ներդրում: Օրինակ, ժամանակ շահելու նպատակով յոթնամյա պլանում նախապատվութիւն է տրվում ջերմային էլեկտրակայանների շինարարութեանը՝ էժան ածխի, բնական գազի և մազութի բազայի վրա: Դա հնարավորութիւն է տալիս ավելի

պակաս կապիտալ ներդրումների և առավել կարճ ժամանակամիջոցում ավելացնելու էլեկտրաէներգիայի արտադրությունը: Յոթնամյակում գործարվող էլեկտրական կարողությունների ավելի քան 80 տոկոսը կազմում է ջերմային էլեկտրակայանների բաժինը:

Գործող ֆոնդերի առավելագույն օգտագործումը: Տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունները հնարավորություն են տալիս արդյունավետ օգտագործել երկրի հիմնական ֆոնդերը: Ստեղծվող հիմնական ֆոնդերի առավել հատուցումը՝ արդեն կատարված կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման ու դրանց տնտեսման լուրջ ռեզերվ է: Այդ բնագավառում եղած հնարավորությունները դեռևս լրիվ չեն օգտագործվում:

Կարելի է այսպիսի օրինակ բերել: Ուկրաինական ՍՍՌ-ի նախագծային ինստիտուտները 1961 թ. ստուգեցին, թե ռեսպուբլիկայի մեքենաշինական գործարաններում ինչպես են օգտագործվում սարքավորումները և գտան, որ 65 ձեռնարկությունում դրանք օգտագործվում է միջին հաշվով միայն 65 տոկոսով: Հաշվարկումը ցույց տվեց, որ եթե սարքավորումների բեռնվածությունը բարձրացվի մինչև 85 տոկոսի, ապա այդ համազոր կլինի միջին հզորության ավելի քան տասը նոր գործարանի կառուցման:

Տեխնիկայի անբավարար օգտագործման գլխավոր պատճառներից մեկը հերթափոխության ցածր գործակիցն է: Միայն մեքենաշինության մեջ սարքավորումների փոխադրումը երկու լրիվ հերթափոխության թույլ կտա ոչ պակաս քան մեկ և կես անգամ ավելացնել հաստոցների, մեքենաների ու գործիքների արտադրությունը:

Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումը համաժողովրդական գործ է: Վերևում թվարկված ուղղություններով չեն սպառվում ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության աճի եղած ռեզերվները: Աշխատավորների, հասարակական ու տնտեսական կազմակերպությունների ստեղծագործական նախաձեռնությունը նորանոր հնարավորություն է

բացում նոր հիմնական ֆոնդերի ստեղծմանը, եղածների ընդլայնմանն ու վերակառուցմանը հատկացվող միջոցնչւն առավել խնայողաբար օգտագործելու համար: Կապիտալ ներդրումների արդյունավետութձյան բարձրացման հարցերը իսկական համաժողովրդական գործ են դարձել: Շրջանների, մարզերի և ռեսպուբլիկաների պարտիական ու սովետական կազմակերպությունները, ձեռնարկությունների ու շինարարական կազմակերպությունների կոլեկտիվները առաջ են քաշում և իրագործում են արժեքավոր այնպիսի առաջարկություններ, որոնք ապահովում են կապիտալ ներդրումներին հատկացվող պետական միջոցների տնտեսում, շինարարութձյան էժանացում և արտադրական նոր կարողությունների, բնակելի տների և այլ շենքերի ու շինությունների գործարկման արագացում: Ներկայումս շինարարական ինդուստրիայում և շինանյութերի արդյունաբերութձյան մեջ լայն տարածում են գտել հասարակական աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ նորարների խորհուրդներ և ինստիտուտներ (1961 թ. դրանց թիվը հասնում էր ավելի քան 400-ի), հասարակական կոնսուրուկտուրական բյուրոներ (700-ից ավելի), տեխնիկական առաջադիմութձյան և կուլտուրայի համալսարաններ (300), ռացիոնալիզատուրների կոմպլեքսային ըստեղծագործական բրիգադներ (200-ից ավելի): Դա հնարավորութձյուն է տալիս հայտաբերել և օգտագործել միջոցների տնտեսման մեծ ռեզերվներ:

Միջոցների ներդրավման ուղղությունները բարելավելու և այդ միջոցներն արդյունավետ ծախսելու միջոցառումների մշակման ասպարեզում մասսաների ստեղծագործական մասնակցութձյան վառ օրինակ հանդիսացավ 1959—1965 թթ. ՍՍՌՄ ժողովրդական տնտեսութձյան զարգացման կոնտրոլ թվերի և ՍՄԿՊ ծրագրի նախագծի իսկական համաժողովրդական քննարկումը: Շատ առաջարկություններ վերաբերում էին արտադրողական ուժերի տեղաբաշխման, ժողովրդական տնտեսութձյան առանձին ճյուղերում կապիտալ ներդրումների սուսվել նպատակահարմար ուղղությունների հարցերին:

Այսպես, Կուզնեցկի մետալուրգիական կոմբինատի մշտական գործող արտադրական խորհրդակցությունը յոթնամյակի կոնտրոլ թվերի քըննարկման ժամանակ առաջարկություն մտցրեց պողպատի ձուլումն ավելացնելու վերաբերյալ, որը վերացնում էր կոմբինատի պողպատածուլման և գլանվածքի արտադրության կարողությունների աճի միջև եղած անհամապատասխանությունը: Առաջարկվեց Կուզնեցկի կոմբինատի զարգացման պլանում մտցնել կոնվերտորային ցեխի կառուցումը, որը թույլ էր տալիս լիովին օգտագործելու գլանվածքի արտադրության կարողությունները և լրացուցիչ ստանալու տարեկան հազարավոր տոննա պողպատ և գլանվածք: Կոնվերտորային ցեխի կառուցումը 3 անգամ էժան է նստում և զգալիորեն շուտ է իրականացվում, քան նույնպիսի կարողությամբ մարտենյան ցեխի կառուցումը:

Այժմ պարտիական և հասարակական շատ կազմակերպությունների ուշադրությունն ուղղված է անավարտ շինարարությունը կրճատելու, շահագործման հանձնվելիք օբյեկտների գործարկումն արագացնելու, աշխատանքների արժեքն իջեցնելու վրա:

Արժեքավոր փորձ է կուտակվել «Զապորոժստալ» գործարանում: Այդ առաջավոր ձեռնարկության պարտիական կազմակերպությունը մոբիլիզացրեց մետալուրգների ամբողջ կոլեկտիվը տեխնիկական առաջադիմությունն արագացնելու, արտադրության ներքին ռեզերվներն օգտագործելու, մետաղների թողարկումն ավելացնելու և արտադրական կարողությունները մեծացնելու համար: Դա կատարվեց գլխավորապես գործող սարքավորումների վերակառուցման ու մոդեռնացման, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման և աշխատանքի առաջավոր մեթոդների լայն արմատավորման հաշվին՝ նվազագույն կապիտալ ներդրումների պայմաններում:

Այս բոլորի շնորհիվ «Զապորոժստալ» գործարանի կոլեկտիվը տարեցտարի կատարում է տարեկան պլանները և իր սոցիալիստական պարտավորությունները: 1959—1961 թթ. ընթացքում ագրեգատների և այլ սարքավորումների մոդեռնացման ու վերակառուցման, տեխնոլոգիական պրոցեսների ինտենսիվացման և առաջավոր փորձի արմատավորման հաշվին գործարանը շուգունի արտադրությունն ավելացրեց 16,7 տոկոսով, պողպատինը՝ 2,9 և գլանվածքինը՝ 24,8 տոկոսով: Երեք տարում աշխատանքի արտադրողականությունն աճեց 23,5 տոկոսով, արտադրանքի ինքնարժեքն իջավ 8,1 տոկոսով: Ստացվել է 266 մլն ռուբլի շահույթ, այդ թվում արտապլանային՝ 3,5 մլն ռուբլի:

«Զապորոժստալ» գործարանի յուրաքանչյուր ցեխում ստեղծված են տեխնիկական առաջադիմությունն աշակցող հանձնաժողովներ: Ա Նրանց կազմի մեջ մտնում են առաջավոր բանվորներ, ինժեներներ, տեխնիկներ և պարտիական, արհմիութենական ու կոմերիտական կազմակերպությունների ակտիվիստներ: Այդ հանձնաժողովներն ստուգել են բոլոր ագրեգատների ու ցեխերի տեխնիկական զինվածությունը, հայտաբերել են հնացած ու ցածր արտադրողական սարքավորումները, մտքել են իրենց առաջարկությունները: Գործարանի պարտկոմն ու դիրեկցիան ընտրել են առավել արժեքավոր առաջարկություններ և նշել միջոցառումներ դրանց իրականացման համար:

Այդ միջոցառումների համապատասխան, օրինակ, ազլոմերացիոն ցեխում վերակառուցվել են ազլոմերացիոն բոլոր մեքենաները: Ընդ որում յուրաքանչյուր ժապավենի եռակալման օգտակար հրապարակը ավելացել է 25 տոկոսով: Մի շարք կատարելագործումների հետ միասին, դա թույլ տվեց ազլոմերատի թողարկումը գործող ազլոմեքենաների վրա ավելացնելու տարեկան ավելի քան 1 մլն տոննայով, ընդ որում վերակառուցման համար ծախսվել է 2,5 անգամ պակաս միջոցներ, քան պահանջվում էր նույնպիսի կարողությամբ նոր ժապավենների պատրաստման համար:

Սլյաբինգի վրա լրացուցիչ կառուցվել են 3 խումբ տաքացնող հորեր, վերակառուցվել են ձուլվածքամղիչը և հաստոնի սեղմիչ հարմարանքը: Նրբաթերթային ցեխում կառուցվել են տաքացնող 4 նոր վառարան, ուժեղացվել են թերապատրաստ վանդակները և կոանաթափուկը, տեղադրվել են ավելի հզոր փաթթիչներ: Դրա շնորհիվ սլյաբինգի արտադրողականությունը աճել է 65 տոկոսով, իսկ ջերմագլորիչ պողպատյա թիթեղի թողարկումն ավելացել է 80 տոկոսով:

Աշխատավորների ստեղծագործական ակտիվությունն արտահայտվում է նաև գյուտարարության և ռացիոնալիզատորության անի մեջ: Աշխատանքների կատարման ընթացքում մտցվում են շատ առաջարկներ, որոնց նպատակն է կատարելագործել նախագծային լուծումները, թանկ արժեցող կոնստրուկցիաներն ու նյութերը փոխարինել ավելի էժան և արդյունավետ կոնստրուկցիաներով ու նյութերով, բարելավել արտադրության տեխնոլոգիան ու կազմակերպումը, ներդնել նոր մեքենաներ ու բարձրացնել գործող մեքենաների արդյունավետությունը և այլն: Այդ բոլորը նպաստում են նախագծային ու նախահաշվային նորմաների բարելավմանը, շինարարության ժամկետների կրճատմանը, նրա որակի բարձրացմանը, արժեքի իջեցմանը:

Շինարարության մեջ գյուտարարության և ռացիոնալացման գար-
 քացումը ցույց են տալիս հետևյալ տվյալները (ըստ միութենական ռես-
 պուբլիկաների մինիստրների սովետների ենթակայության շինարարական
 կազմակերպությունների)։

	1958 թ.	1959 թ.	1960 թ.
Առաջարկություններ ներկայացրած գյուտա- րարների և ռացիոնալիզատորների թիվը (հազ.)	111	136	170
Ստացված առաջարկությունների քանակը (հազ.)	173	211	266
Արտադրության մեջ ներդրված գյուտարա- րական և ռացիոնալիզատորական առաջար- կությունների քանակը (հազ.) .	127	154	197
Արտադրության մեջ ներդրված առաջարկու- թյուններից ստացված խնայողության տա- րեկան գումարը (մլն. ռուբ.)	113	136	190

Այդ ցուցանիշները համոզիչ կերպով վկայում են այն մեծ դերի մա-
 սին, որն ունի գյուտարարության և ռացիոնալացման զարգացումը կա-
 պիտալ ներդրումների արդյունավետությունն ըստ ամենայնի բարձրացնե-
 լու վերաբերյալ ՍՄԿՊ XXII համագումարի կողմից առաջադրված խնդիր-
 ները կատարելու գործում։

Կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետու-
 թյան բարձրացման և թաքնված ռեզերվների օգտագործման
 հարցերի լուծման բոլոր փուլերում աշխատավորների լայն
 մասնակցությունը ներկայացնում է իրենից որպես մի կարևոր
 գործոն տեխնիկական առաջադիմության համար մղվող պայ-
 քարում և հանդիսանում է պլանավորման, նախագծման, շի-
 նարարության կազմակերպման և գործարկված հիմնական
 ֆոնդերի շահագործումը բարելավելու անհրաժեշտ պայմանը։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Շինարարության՝ որպես նյութական արտադրության ճյուղերից մեկի կառավարումը կազմակերպվում է սոցիալիստական տնտեսավարության ընդհանուր խնդիրների և սկզբունքների հիման վրա: Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում հաջողությունները շատ բանով կախված են տնտեսական ղեկավարման որակից:

Հասարակական արտադրությունը շի կարող կանոնավոր գործել առանց կառավարման որոշակի սիստեմի: «Համեմատաբար խոշոր շահերով կատարվող անմիջաբար հասարակական կամ համատեղ ամեն մի աշխատանք,— գրել է Կ. Մարքսը,— ավելի կամ պակաս շահով կարիք ունի կառավարման...»¹: Հասարակական արտադրության զարգացման հետ բարձրանում է նաև կառավարման դերը: Այն հատկապես աճում է արտադրության միջոցների հասարակական սեփականության պայմաններում:

Սոցիալիստական արտադրության կառավարումն արմատապես տարբերվում է կապիտալիստական արտադրության կառավարումից և նրա նկատմամբ ունի մեծազույն առավելություններ:

¹ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 348

Սոցիալիստական արտադրության կառավարման առանձնահատկությունները և առավելությունները: Արտադրության միջոցների հասարակական սեփականությունը բացում է արտադրության կառավարման իսկական գիտական կազմակերպման հնարավորություններ՝ տնտեսական օբյեկտիվ օրենքների ճանաչման և տնտեսական շինարարության պրակտիկայում դրանց ճիշտ օգտագործման հիման վրա: Դա ամենալավ պայմաններն է ստեղծում արտադրության անընդհատ աճի ու կատարելագործման համար: Սոցիալիստական արտադրության զարգացման հետ մեկտեղ բարձրանում է տնտեսական ղեկավարման մակարդակը, ապահովվում է նյութական հարստության և աշխատանքային ռեսուրսների առավել արդյունավետ և խելացի օգտագործումը՝ հասարակության աճող պահանջները բավարարելու համար:

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության պայմաններում տնտեսական օրենքները գործում են տարերայնորեն, որի պատճառով էլ հասարակական արտադրության կառավարման գիտական կազմակերպումը անհնար է: Կապիտալիզմի օրոք արտադրության անարխիան և տնտեսական զարգացման տարերայնությունն անխուսափելիորեն հանգեցնում են մսորդկային ուժերի և նյութական ռեսուրսների հսկայական շոսյւմանը, արգելակում են հասարակական արտադրության աճը:

Առաջին անգամ սոցիալիզմի օրոք է հնարավոր դառնում ամբողջ երկրի մասշտաբով հասարակական արտադրության պլանաչափ կառավարումը: Արտադրության միջոցների համաժողովրդական սեփականությունը որոշում է ժողովրդական տնտեսության կենտրոնացված կառավարման օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ պետական ժողովրդատնտեսական պլանի հիման վրա, պլան, որը կապում է մեկ միասնական ամբողջականության մեջ բազմաթիվ ձեռնարկություններ, արտադրության ճյուղեր ու երկրի տնտեսական շրջաններ և որոշում դրանց զարգացման տեմպերն ու համամասնությունները:

Կոմունիզմի ժավալուն կառուցման ժամանակաշրջանում էլ ավելի բարձր պահանջներ են ներկայացվում հասարակա-

կան արտադրութեան պլանային կազմակերպմանը: Քեոմու-
նիստական հասարակարգը, — ասված է ՍՄԿՊ ծրագրի մու-
սին Ն. Ս. Խրուշչովի զեկուցման մեջ, — ներփակ, միմյանցից
անջրպետված տնտեսական օրգանիզմների միութիւնն է: Ո՛չ,
կոմունիստական հասարակարգը, ինչպէս ուրիշ ոչ մի հասար-
ակարգ, կարիք կունենա ժողովրդական տնտեսութեան միաս-
նական պլանավորման, աշխատանքի կազմակերպված բաշխ-
ման և աշխատածամանակի կարգավորման: Դրա անհրաժեշ-
տութիւնը բխում է արտադրողական ուժերի զարգացման
պահանջներից, տնտեսութեան տարբեր ճյուղերի խոր փոխա-
դարձ կապից, տեխնիկական անշեղ առաջադիմութեան շահե-
րից, բաշխման և սպառման կոմունիստական սկզբունքնե-
րից»¹:

Կապիտալիստական արտադրութեան կառավարումը սահ-
մանափակված է առանձին ձեռնարկութիւնների կամ մ. յ. յ. ու-
պոլ միավորումների շրջանակներում:

Մասնավոր սեփականութեան տիրապետութիւնն անհնար
է դարձնում ամբողջ տնտեսութեան պլանային ղեկավարու-
թիւնը, թեպետև քուրժուական պետութիւնը ձգտում է ինչ-
որ չափով կարգավորել արտադրութիւնը: Բուրժուական պե-
տական ապարատը լրիվ կախվածութեան մեջ է գտնվում էկո-
նոմիկայում գերիշխող մոնոպոլիաներից: Մոնոպոլիաներն
օգտագործում են պետական ապարատն իրենց տնտեսական
ու քաղաքական տիրապետութիւնն ուժեղացնելու համար:

Սոցիալիստական արտադրութեան կառավարման արմա-
տական առանձնահատկութիւններից մեկը հասարակական
արտադրութեան զարգացման գործում խորապես շահագրգռու-
ված աշխատավոր լայն մասսաների ակտիվ մասնակցութիւնն
է կառավարմանը: Միայն սոցիալիզմը, մատնանշել է Վ. Ի.
Լենինը, առաջին անգամ հնարավորութիւն է ստեղծում
«իրոք աշխատավորների մեծամասնութիւնը ներգրավելու
այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են

1 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 181

երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»¹։

Կապիտալիզմի օրոք տնտեսության կառավարման մեջ բանվորների որևէ ոեալ մասնակցության մասին խոսք լինել անգամ չի կարող։ Բացահայտելով արտադրության կապիտալիստական կառավարման երկակի բնույթը, Կ. Մարքսը գրել է. «Կապիտալիստի կառավարելը ո՛չ միայն մի առանձին ֆունկցիա է, որ առաջ է գալիս աշխատանքի հասարակական պրոցեսի բուն իսկ բնույթից և այդ պրոցեսի կազմի մեջ է մտնում, այլ միաժամանակ նաև աշխատանքի այդ հասարակական պրոցեսի շահագործման ֆունկցիա է»²։

Սոցիալիստական արտադրության մեջ չկա և չի կարող լինել կառավարման այնպիսի ֆունկցիա, ինչպես շահագործման ֆունկցիան է։ Սոցիալիստական ձեռնարկություններում արտադրության պրոցեսում մարդկանց հարաբերությունները կառուցվում են որպես հասարակության իրավահավասար և ազատ անդամների փոխօգնության և ընկերական մրցության հարաբերություններ, որոնք ստեղծագործական նախաձեռնության, տաղանդների և ժողովրդական մասսաների ընդունակությունների օարգացման լայն ասպարեզ են բացում։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում մասսաների ստեղծագործական ակտիվությունը, արտադրության կառավարման գործում նրանց մասնակցությունն անշեղորեն աճում են։ Պարտիան խնդիր է դնում հասնել այն բանին, որ յուրաքանչյուր սովետական մարդ դառնա հասարակության գործերի կառավարման ակտիվ մասնակիցը։

Արտադրության սոցիալիստական կազմակերպումը բարենպաստ պայմաններ է ստեղծում էկոնոմիկայի արագ զարգացման համար և դրա հետ միասին տնտեսության կառավարման ապարատին բարձր պահանջներ է ներկայացնում։

1 Վ. Ի. Կենին, Երկ., հ. 26, էջ 493—494։

2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 349։

Առանձին ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների և ամբողջ սոցիալիստական տնտեսության կառավարումը կազմակերպվում է այնպես, որպեսզի ապահովվի հասարակական արտադրության պրոցեսի անխափանությունը և պլանաչափությունը: Արտադրության նորմալ ընթացքի խանգարումը մեկ ձեռնարկությունում կամ կառույցում ոչ միայն վատթարացնում է նրանց աշխատանքների ցուցանիշները, այլև խախտում է մյուս ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների աշխատանքը: Տնտեսության պլանային կառավարումը պահանջում է առավելագույն չափով համաձայնեցնել դրա բոլոր բաղկացուցիչ մասերի աշխատանքը և անպայման կատարել բոլոր ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների պետական պլանային առաջադրանքները:

Սոցիալիստական արտադրության օրինաչափությունը նոր տեխնիկայի բազայի վրա դրա անընդհատ աճն ու կատարելագործումն է: Ուստի սոցիալիստական տնտեսության կառավարումը կազմակերպվում է այնպես, որպեսզի ապահովվեն արտադրության բոլոր ճյուղերում զարգացման բարձր տեմպեր, անընդհատ տեխնիկական առաջադիմություն:

Սոցիալիստական էկոնոմիկան ղարգանում է կուտակման ներքին աղբյուրների հաշվին: Որքան խելացի ու խնայողաբար են օգտագործվում նյութական, աշխատանքային և դրամական ռեսուրսները, այնքան արագ է աճում ու կատարելագործվում արտադրությունը, այնքան բարձր է ժողովրդի նյութական բարեկեցության մակարդակը: Նվազագույն ծախսումներով հասնել ամենաշատ արդյունքների հօգուտ հասարակության՝ սոցիալիստական տնտեսվարության պարտադիր պահանջն է: Կառավարումը պետք է այնպես կառուցված լինի, որ նպաստի այդ պահանջի կենսագործմանը:

Սոցիալիստական տնտեսության կառավարումն իրականացնում է պետությունը, ելնելով ամբողջ ժողովրդի շահերից և նրա անմիջական մասնակցությամբ: Ուստի կառավարման կարևոր խնդիրներն են՝ ամեն կերպ պաշտպանել և լայնորեն տարածել առաջավոր կոլեկտիվների և արտադրության նորա-

բարձր երիտասարդների և կրթական շահերը ներկայումս զուգակցել հասարակական շահերի հետ: Ղեկավարել սոցիալիստական տնտեսությունը՝ դա նշանակում է ամենից առաջ ուսումնասիրել մասսաների փորձը, ներդրել արտադրական առաջավոր փորձը, գիտության ու տեխնիկայի նվաճումները: Պարտիան ու կառավարությունը կառավարման ապարատի բոլոր աշխատողներից պահանջում են առավելագույն պարզորոշություն աշխատանքում, ուշադիր վերաբերմունք դեպի աշխատավորների կարիքները, ամենավճռական պայքար բյուրոկրատիզմի և քաշքշուկի ամեն տեսակ դրսևորումների դեմ:

Սոցիալիստական արտադրության կառավարման այդ բոլոր խնդիրների հաջող լուծումը մեծ չափերով կախված է սովյալ պայմաններում դրա կազմակերպման առավել ճիշտ ձևերի ընտրությունից: Շինարարության մեջ այդ խնդիրներն ավելի հաջող են լուծվում աշխատանքի կազմակերպման կապալային եղանակի ժամանակ, մշտական գործող շինարարական կազմակերպությունների սիստեմի միջոցով:

Շինարարության կառավարման կազմակերպական ձևերի կատարելագործումը: Սոցիալիստական արտադրության կառավարման կազմակերպական ձևերը անփոփոխ չեն: Շինարարության մասշտաբների վիթխարի աճը, տնտեսական կապերի զարգացումն ու խորացումը, գիտատեխնիկական առաջադիմության սրընթացությունը, կուլտուր-տեխնիկական մակարդակի արագ աճը և մասսաների աճող ակտիվությունը պահանջում են մշտապես կատարելագործել կառավարման կազմակերպական ձևերն ու մեթոդները: Ահա թե ինչու ինչպես շինարարության, այնպես էլ ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի կառավարման ձևերի ու մեթոդների կատարելագործման հարցերը միշտ գտնվում են կոմունիստական պարտիայի ուշադրության կենտրոնում:

Սովետական իշխանության տարիներին ժողովրդական տնտեսության կառավարման կազմակերպական ձևերը բազմիցս վերակառուցվել են: Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայից անմիջապես հետո ստեղծվե-

ցին ժողովրդական տնտեսության գերազույն խորհուրդ (ԺՏԳԽ) և ժողովրդական տնտեսության տեղական խորհուրդներ, որոնք հանդիսացան սոցիալիստական արդյունաբերության և շինարարության պետական ղեկավարման առաջին օրգանները: ԺՏԳԽ-ի կազմի մեջ ստեղծվեցին առաջին պետական կապալային շինարարական կազմակերպությունները:

Երկրի ինդուստրացման իրականացումը, հազարավոր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների և արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի ստեղծումը պահանջեցին տնտեսության ղեկավարման պետական օրգանների ապախոշորացում: 1932 թ. ԺՏԳԽ-ն բաժանվեց մի շարք արդյունաբերական ժողկոմատների, որոնք հետագայում ևս ապախոշորացվեցին՝ բուռն կերպով զարգացող արդյունաբերության ղեկավարումը բարելավելու նպատակով: Այսպիսով, մինչպատերազմյան հնգամյակների տարիներին ստեղծվեց արդյունաբերական կառավարման մի սիստեմ՝ ի դեմս ճյուղային ժողկոմատների, որոնք հետագայում վերանվանվեցին մինիստրությունների: Ծյուղային տնտեսական ժողկոմատների սիստեմում ստեղծվեց կապալային շինարարական կազմակերպությունների ցանց:

Շինարարական ինդուստրիայի բուռն զարգացումը պահանջեց շինարարության կառավարման պետական հատուկ օրգանների ստեղծում: 1939 թ. ստեղծվեց շինարարության ժողկոմատ, որն արդյունաբերական ու դրա հետ կապված բնակարանային և այլ շինարարություն էր իրականացնում: Հայրենական մեծ պատերազմի ավարտումից՝ հետո, կապիտալ ներդրումների արագ աճի կապակցությամբ ստեղծվեցին ՎՍՌՄ մի շարք մասնագիտացված շինարարական մինիստրություններ, Բացի դրանից, արդյունաբերական և այլ մինիստրություններից շատերն ունեին շինարարական կազմակերպություններ:

Սոցիալիստական շինարարության որոշ էտապում ճյուղային կառավարման սիստեմն ուներ առաջադիմական նշանակություն: Այն թույլ էր տալիս ուշադրությունը, ուժերը և միջոցները կենտրոնացնել ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի ստեղծման և արագ զարգացման վրա, բարենպաստ հնարավորություններ էր ստեղծում արտադրության որոշակի ճյուղերի մասնագետ կադրերի ու կազմակերպիչների պատրաստման համար:

Սակայն ճյուղային կառավարման սիստեմն ուներ նաև լուրջ թերություններ, որոնք տնտեսության զարգացման հետ միասին երևան էին գալիս ավելի ուժեղ կերպով: Դրա հիմնական թերությունը գերատեսչային անջատվածությունն ու մասնատվածությունն էր: Բազմաթիվ մինիստրություններից յուրաքանչյուրի տնտեսական գործունեությունը գերազանցապես սահմանափակվում էր արդյունաբերության և շինարարության որոշակի ճյուղի շրջանակներով: Դա հանկեցնում էր միատեսակ արտադրանքի արտադրության փոշիացմանը տարբեր գերատեսչությունների ձեռնարկություններում, կապիտալ ներդրումների ոչ ռացիոնալ օգտագործմանը, զու-

գահեռ գործող բազմաթիվ շինարարական, տրանսպորտային, մատակարարման-վաճառահանման և այլ օրգանների ստեղծմանը: Շինարարության կառավարման այդպիսի սիստեմի դեպքում նույն քաղաքում կամ տնտեսական շրջանում գործում էին զանազան մինիստրությունների ու գերատեսչությունների բազմաթիվ, հիմնականում մանր, շինարարական կազմակերպություններ, որոնցից յուրաքանչյուրն ստեղծում էր իր արտադրական բազան, տրանսպորտային ու պահեստային տնտեսությունը և օժանդակ ձեռնարկությունները: Դա դժվարացնում էր շինարարության ինդուստրացումը:

Ճյուղային կառավարման սիստեմն անխուսափելիորեն տանում էր արտադրության հետ տնտեսության կառավարման օրգանների կապի թուլացմանը: Միավորելով ամբողջ երկրի հսկայական տեխնոլոգիայում տեղագրված ձեռնարկությունները և շինարարական կազմակերպությունները, ճյուղային մինիստրությունները գտնվում էին Մոսկվայում և միութենական ռեսպուբլիկաների մայրաքաղաքներում, ուր ձգվում էին միութենական և ռեսպուբլիկական ենթակայության տասնյակ հազարավոր ձեռնարկությունների, կառույցների և տնտեսական կազմակերպությունների կառավարման թեկնքը: Ծայրահեղ դժվարին էր դարձել կենտրոնից իրականացնել այդպիսի հսկայական քանակությամբ ձեռնարկությունների և կառույցների օպերատիվ կառավարումը:

Արտադրության ծավալի և տնտեսական կապերի աճման պայմաններում ճյուղային կառավարման սիստեմը դժվարացնում էր երկրի տնտեսական շրջանների էկոնոմիկայի կոմպլեքսային զարգացումը: Սովետական իշխանության տարիներին բոլոր միութենական ռեսպուբլիկաներում և երկրի շրջաններում կառուցվել էին տնտեսության տարբեր ճյուղերին պատկանող մեծ քանակությամբ խոշոր ձեռնարկություններ, ստեղծվել էր շինարարական կազմակերպությունների լայն ցանց: Սակայն միութենական ռեսպուբլիկաները և տեղական օրգանները զրկված էին տնտեսական շինարարության շատ հարցեր տեղերում ինքնուրույն լուծելու հնարավորությունից, որովհետև միութենական ենթակայության ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների կառավարումը գտնվում էր համամիութենական ու միութենական ռեսպուբլիկական մինիստրությունների և մի շարք այլ կենտրոնական գերատեսչությունների ձեռքում: Օրինակ, 1955 թ. միութենական մինիստրությունների և գերատեսչությունների ենթակայության տակ էին գտնվում կապալային տրեստների 92 տոկոսը: Այսպիսով, արդյունաբերության և շինարարության կառավարման սիստեմի վերակառուցման հարցի անհրաժեշտությունն օբյեկտիվորեն նախապատրաստվել էր երկրի տնտեսական զարգացման ամբողջ ընթացքով: Ընթացիկ կառավարման սիստեմը սպառել էր իր հնարավորությունները և սկսել էր արգելակել երկրի արտադրողական ուժերի հետագա զարգա-

ցումը, Անհրաժեշտ էր արդյունաբերության և շինարարության՝ ղեկավարման ծանրության կենտրոնը փոխադրել դեպի տեղերը, կառավարման օրգանները մոտեցնել արտադրությանը:

1957 թ. կոմունիստական պարտիան իրականացրեց արդյունաբերության և շինարարության կառավարման արմատական վերակառուցումը: Մասնագիտացված մինիստրոթյունների միջոցով կառավարման ճյուղային սիստեմի փոխարեն ստեղծվեց արդյունաբերության և շինարարության կառավարման նոր սիստեմ, ըստ վարչատնտեսական շրջանների: Վերակառուցման ժամանակ վերացվեցին 140-ից ավելի ընդհանուր-միութենական, միութենական-ռեսպուբլիկական մինիստրոթյուններ: Միութենական շինարարական մինիստրոթյուններից պահպանվեցին միայն մասնագիտացված մինիստրոթյունները: Միութենական-ռեսպուբլիկական ենթակայության արդյունաբերության և շինարարության կառավարման համար ստեղծվեցին տնտեսական-վարչական շրջանների ժողովրդական տնտեսության խորհուրդներ (ժողտնտխորհներ):

Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումն հսկայական նշանակություն ունեցավ մեր երկրի տնտեսական զարգացման համար: «Այդ հեղափոխիչ, կենսականորեն անհրաժեշտ միջոցառումը, — մատնանշված է պարտիայի XXII համագումարի բանաձևում, — փշրեց գերատեսչական միջնորմները, որոնք երկրի արտադրողական ուժերի հետագա զարգացման արգելակ էին դարձել, բարձրացրեց միութենական ռեսպուբլիկաների, տեղական պարտիական, սովետական ու տնտեսական օրգանների դերը տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ, ծավալեց մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը: Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցման շնորհիվ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը աշխատում են ավելի լավ, արդյունավետ կերպով, լիովին օգտագործում են եղած արտադրական ռեզիւրվները»¹:

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 403—404:

ՍՄԿՊ XXII համագումարը խնդիր դրեց առաջիկայում ևս անդուլ կերպով կատարելագործել արդյունաբերության և շինարարության ղեկավարումը՝ սոցիալիստական արտադրության կառավարման լենինյան սկզբունքների հիման վրա:

2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Տնտեսական շինարարության ղեկավարման գիտական հիմքերը, սոցիալիստական արտադրության կառավարման սկզբունքներն առաջին անգամ մշակել է Վ. Ի. Լենինը: Այդ սկզբունքներում որոշվում են տնտեսական շինարարության ղեկավարման հիմնական ուղղությունները, տնտեսական օրգանների կազմակերպման կառուցվածքի և նրանց աշխատանքի մեթոդների պահանջները, տնտեսական օրգանների փոխհարաբերությունները հասարակական կազմակերպությունների և մասսաների հետ:

Սոցիալիստական շինարարության բազմամյա փորձը մեր երկրում և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում ցույց տվեց սոցիալիստական արտադրության կառավարման լենինյան սկզբունքների կենսական մեծ ուժը, որովհետև դրանք ապահովում են տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների ամենամեծ չափով օգտագործումը և անսահմանափակ հնարավորություններ են բացում արտադրության կառավարման գործում ժողովրդական մասսաների ակտիվ մասնակցության համար:

Կոմունիստական պարտիան, հետևողականորեն կենսագործելով կառավարման լենինյան սկզբունքները, միաժամանակ ստեղծագործաբար զարգացնում է դրանք կոմունիստական շինարարության նոր պայմաններին համապատասխան:

Քաղաքական և տնտեսական ղեկավարման միասնությունը: Վ. Ի. Լենինը բազմակողմանիորեն հիմնավորեց սոցիալիստական տնտեսության կառավարման արմատական սկզբունք-

քը՝ քաղաքական և տնտեսական ղեկավարման միապետության սկզբունքը: Այդ սկզբունքը բխում է կոմունիստական պարտիայի ղեկավար դերից, որպես սովետական ժողովրդի մարտական, փորձված ավանգարդի, մեր հասարակության ուղղություն տվող ուժի: Պարտիան ապահովում է կոմունիզմի կառուցման ամբողջ աշխատանքի ճիշտ ղեկավարումը, տալիս է նրան կազմակերպված, պլանաչափ, գիտականորեն հիմնավորված բնույթ:

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում պարտիայի դերը ինչպես հասարակության քաղաքական ու գաղափարական ղեկավարման մեջ, այնպես էլ երկրի տնտեսական կյանքում անշեղորեն աճում է: Դա, ինչպես նշված է ՄՄԿՊ ծրագրում, պայմանավորված է. կոմունիստական շինարարության մասշտաբների աճով և խնդիրների բարդությանմբ, խնդիրներ, որոնք պահանջում են քաղաքական ու տրնտեսական ղեկավարման ավելի բարձր մակարդակ. մասսաների ստեղծագործական ակտիվության վերելքով և պետական գործերի ու արտադրության կառավարման գործում միլիոնավոր նոր աշխատավորների ներգրավմամբ. սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացմամբ, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմամբ, միութենական ռեսպուբլիկաների ու տեղական կազմակերպությունների իրավունքների ընդլայնմամբ. գիտական կոմունիզմի թեորիայի նշանակության աճմամբ, դրա ստեղծագործական զարգացմամբ ու պրոպագանդայով, աշխատավորների կոմունիստական դաստիարակության ուժեղացման և մարդկանց գիտակցությունից անցյալի մնացուկների հաղթահարման համար պայքարի անհրաժեշտությանմբ:

Տնտեսությունը ճիշտ ղեկավարելու համար անհրաժեշտ է տնտեսական հարցերի լուծման նկատմամբ ապահովել ֆաղափական մոտեցում: Այդ նշանակում է, որ տնտեսական խնդիրների լուծման ժամանակ պետք է ելնել պարտիայի քաղաքականությունից, ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարներից, նայել առաջ և ոչ թե՛ հետ: Ներկայումս, օրինակ, պարտիայի տնտեսական քաղաքականության մեջ հըս-

կայական ուշադրութիւնն է դարձվում կապիտալ ներդրումների արդյունավետութեան բարձրացմանը: Պարզ է, որ այդ հարցերը պետք լինեն ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական աշխատողների մշտական հոգատարութեան առարկան:

Տնտեսական հարցերի լուծման նկատմամբ քաղաքական մտտեցումը նշանակում է վճռական պայքարի անհրաժեշտութիւն տեղայնութեան տրամադրութիւնների և նեղ գերատեսչական շահերի դեմ, երկրի առանձին շրջանների, ձեռնարկութիւնների ու կազմակերպութիւնների շահերը պետական շահերին հակադրելու փորձերի դեմ: «Համապետական շահերի առաջնութիւնը,— ասված է Ն. Ս. Խրուշչովի զեկուցման մեջ պարտիայի XXII համագումարում,— տնտեսական աշխատանքում ամենուրեք և առանց բացառութեան բոլորի կողմից պետական կարգապահութեան կիրառման գործուն վերահսկողութիւնը, տեղայնութեան ամեն տեսակ դրսևորումների, նեղ-գերատեսչական մտտեցման վճռական հաղթահարումը՝ դեպի կոմունիզմ մեր առաջընթացի անհրաժեշտ նախադրյալներն են»¹:

Քաղաքական ու տնտեսական ղեկավարման միասնութեան սկզբունքը պահանջում է նաև ընթացիկ տնտեսական աշխատանքների նիշտ զուգ. ձգցում մասսաների մեջ տարվող փառաքան աշխատանքի հետ: Պարտիան բազմիցս նախազգուշացրել է պարտիական ու տնտեսական ղեկավարներին, ինչպես տնտեսական աշխատանքի թերազնահատումից, այնպես էլ միմիայն տնտեսական աշխատանքներով տարվելուց՝ ի վնաս քաղաքական աշխատանքի: Տնտեսական հաջողութիւնների կայունութիւնը կախված է պարտիական-քաղաքական աշխատանքի թափից, իսկ պարտիական-քաղաքական աշխատանքն իր հերթին դրական արդյունք տալիս է միայն այն ժամանակ, երբ այն սերտորեն կապված է կյանքի հետ, կոմունիստական շինարարութեան պրակտիկ խնդիրների լուծման հետ: «Մենք պետք է գործով զբաղվենք և ոչ թե բա-

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 235:

նաձևերով, — ասում էր Վ. Ի. Լենինը: — Բուրժուական հասարակարգում գործով զբաղվում էին տնտեսատերերը և ոչ թե պետական օրգանները, իսկ մեզանում տնտեսական գործը մեր ընդհանուր գործն է: Մեզ համար ամենահետաքրքրական քաղաքականությունն է այդ¹:

ՍՄԿՊ XX համագումարը դատապարտեց քաղաքական աշխատանքը տնտեսականից կտրելու փորձերը, պարտիական-քաղաքական և տնտեսական գործունեության հակադրումը և պարտիական կազմակերպություններից պահանջեց շանջատել պարտիական աշխատանքը տնտեսականից, կոնկրետ և գործիմացություններ ղեկավարել տնտեսությունը: Ճիշտ չեն ու վնասակար են նաև տնտեսական առանձին ղեկավարների փորձերը՝ հեռանալ քաղաքական-մասսայական աշխատանքից և զբաղվել միայն արտադրական հարցերով: Սոցիալիստական արտադրության կառավարումը չի կարող իրականացվել միմիայն վարչական մեթոդներով: Այն ամենից առաջ կառուցվում է համոզման մեթոդի, աշխատանքի նկատմամբ գիտակցական վերաբերմունքի դաստիարակման, մասսաների ստեղծագործական մրցության կազմակերպման վրա: Սովետական տնտեսվարը, ինչպիսի տեղամասում էլ նա աշխատի, պետք է լինի ոչ միայն բանիմաց ազմինիստորատոր, այլև յրեն ենթակա սովետական մարդկանց կոլեկտիվի դաստիարակ:

XX համագումարից հետո պարտիան իրագործեց տնտեսության կոնկրետ ղեկավարման նկատմամբ շեշտակի շրջադարձ: Վճռականորեն դատապարտելով մարքսիզմ-լենինիզմի ոգուն խորթ անձի պաշտամունքը, պարտիան ժողովրդի ըստեղծագործական ուժերի լայն ասպարեզ բացեց:

Պարտիական կյանքի լենինյան նորմաները վերականգնելու, տնտեսության կառավարումը արմատապես վերակ ստույգելու շնորհիվ արդյունաբերության և շինարարության ղեկավարման գործում պարտիական կազմակերպությունների դերը զգալիորեն բարձրացավ: Տնտեսական օրգանների հետ միա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 554:

սին, ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների պարտիական կազմակերպությունները լրիվ պատասխանատվություն են կրում պետական պլանները բոլոր ցուցանիշներով կատարելու համար: Հատկապես բարձրանում է նրանց դերն ու պատասխանատվությունը ադմինիստրացիայի գործունեության նկատմամբ պարտիական կազմակերպությունների վերահսկողության իրավունքի իրականացման նոր ձևեր մտցնելու կապակցությամբ:

Դեմոկրատական ցենտրալիզմը տնտեսության կառավարման մեջ: Սոցիալիստական արտադրության կառավարման կազմակերպական ձևերը որոշելու հիմնական սկզբունքը դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքն է: «Այժմ մեր խընդիրն է,— գրել է Վ. Ի. Լենինը 1918 թ.,— հատկապես դեմոկրատական ցենտրալիզմ կիրառել տնտեսության ասպարեզում»¹:

Տնտեսության կառավարման գործում դեմոկրատական ցենտրալիզմ նշանակում է տնտեսության կենտրոնացված պետական ղեկավարման ճիշտ զուգակցում տեղերի նախաձեռնության առավելագույն զարգացման, աշխատավոր լայն մասսաների ստեղծագործական ակտիվության հետ:

Դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը բխում է արտադրության սոցիալիստական եղանակի բուն էությունից: Արտադրության միջոցների հանրային սեփականությունը պայմանավորում է ժողովրդական տնտեսության կենտրոնացված կառավարման օբյեկտիվ անհրաժեշտությունը: Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ սոցիալիզմի կառուցումը դա կենտրոնացված պլանային տնտեսության կառուցում է: Առանց տնտեսության պլանային սկզբունքի և կենտրոնացված ղեկավարության, հնարավոր չէ սոցիալիստական էկոնոմիկայի հաջող զարգացումը:

Միևնույն ժամանակ սոցիալիստական արտադրության կառավարումն իր բնույթով առավել դեմոկրատական է, որովհետև այն իրականացվում է ժողովրդի շահերի օգտին: Դե-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 244:

մոկրատական ցենտրալիզմը ելնում է նրանից, որ միասնությունը հիմնականում, արմատականում, էականում ծրգանապես զուգակցվում է տեղական օրգանների լայն նախաձեռնության և ինքնուրույնության հետ, տալով նրանց լայն իրավունք տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարման գործում: «...Իսկական դեմոկրատական իմաստով հասկացված ցենտրալիզմը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— նախատեսում է ոչ միայն տեղական առանձնահատկությունները, այլև տեղական ձեռներեցությունը, տեղական նախաձեռնությունը, ընդհանուր նպատակին հասնելու ուղիների, պրիմների և շարժման միջոցների բազմազանությունը լրիվ և անարգել զարգացնելու պատմության մեջ առաջին անգամ ստեղծված հնարավորությունը»¹:

Սոցիալիզմի ժամանակ ցենտրալիզմի և դեմոկրատիզմի զուգակցման մեջ առաճապակցում է պետության և ժողովրդի շահերի օրգանական միասնությունը:

Արդյունաբերության և շինարարության կառավարման սխտեմի վերակառուցումը տնտեսության ղեկավարման գործում դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքի ստեղծագործաբար կիրառման և հետագա զարգացման վառ օրինակ է: Վերակառուցման ժամանակ գտնվեցին արդյունաբերության ու շինարարության զարգացման պետական ղեկավարության արդի պայմաններում առավել նպատակահարմար կազմակերպական ձևեր ու մեթոդներ, որոնք թույլ տվեցին կառավարման դեմոկրատական հիմունքների հետագա զարգացումը հաջողությամբ զուգակցելու ամբողջ երկրի մասշտաբով տնտեսության կենտրոնացված պլանային ղեկավարության պահպանման ու ամրապնդման հետ:

Վերակառուցման շնորհիվ զգալիորեն ընդլայնվեցին միութենական ռեսպուբլիկաների իրավունքներն արդյունաբերության և շինարարության կառավարման գործում: Այսպես, եթե 1956 թ. միութենական ռեսպուբլիկաների տնօրինության տակ էր գտնվում կապիտալ ներդրումների ընդհանուր ծավա-

1 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 27, էջ 244:

յի միայն 9 տոկոսը, ապա 1961 թ. նրանց բաժինը կազմեց 76 %: Ներկայումս միութենական ռեսպուբլիկաների մինիստրերնների սովետները լուծում են տնտեսական և կուլտուրական շինարարության շատ հարցեր, որոնք նախկինում վերաբերում էին ՍՍՌՄ կառավարության իրավասությանը: Զգալիորեն ընդլայնվել են նաև աշխատավորների դեպուտատների սովետների իրավունքները տեղական տնտեսության զարգացման հարցերի լուծման գործում:

Տեղական օրգանների իրավունքների ընդլայնումը դրական դեր խաղաց շինարարության զարգացման գործում, որտեղ «տեղերի նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը հատկապես կարևոր են և պետք է առանձնապես լայնորեն կիրառվեն»¹:

Սովետական դեմոկրատիզմի վառ արտահայտությունն են նաև շինարարության հարցերի վերաբերյալ պարտիայի կենտրոնական կոմիտեի ու կառավարության կողմից անցկացվող համամիութենական խորհրդակցությունները, որոնցում պարտիայի ու կառավարության ղեկավարները պրակտիկ աշխատողների հետ միասին քննարկում են շինարարության կարևորագույն հարցերը: Այդ խորհրդակցությունների նյութերը լայնորեն օգտագործվում են մեր երկրում շինարարության հետագա զարգացման ուղիների մասին որոշումների նախապատրաստելիս:

Արդյունաբերության և շինարարության օպերատիվ ղեկավարության ծանրության կենտրոնի տեղափոխումը տեղերը, ավելի մոտ արտադրությանը, միաժամանակ պահանջեց տնտեսական օրգանների իրավունքների զգալի ընդլայնում պլանավորման, նյութատեխնիկական մատակարարման, ֆինանսավորման և տնտեսական գործունեության այլ ոլորտներում:

Կառավարման նոր սխեմեմի պայմաններում կենտրոնական պետական օրգանները ազատված են արտադրության զարգացման բազմաթիվ օպերատիվ հարցերի լուծումից, հարցեր, որոնք արագ և ավելի գործիմացությամբ լուծվում

¹ Վ. Ի. Լենին, Երկ., հ. 32, էջ 503:

Ֆին տեղերում ժողտնտխորհների ու ձեռնարկությունների կողմից: Դրա համար կենտրոնական օրգաններն հնարավորություն ունեն ավելի խոր թափանցելու տնտեսական շինարարության արմատական պրոբլեմների մեջ, ղեկավարելու ժողովրդական տնտեսությունն իր գլխավոր ուղղություններով՝ այնպիսի հզոր լծակների միջոցով, ինչպես միասնական պետական պլանն է, հաշվառման ու վիճակագրության միասնական կենտրոնացված սիստեմը, միասնական ֆինանսական-վարկային սիստեմը: Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումն ուղեկցվեց համապետական պլանային օրգանների դերի բարձրացմամբ, հաշվառման ու հաշվետվության կենտրոնացմամբ, ֆինանսա-վարկային օրգանների իրավունքների ընդլայնմամբ: Այսպիսով, ապահովվեց ժողովրդական տնտեսության կենտրոնացված պլանավորման, ֆինանսավորման ու վարկավորման, հաշվառման ու հաշվետվության ամբողջ սիստեմի հետագա ամրապնդումը:

ՍՄԿՊ ծրագրում մատնանշվում է, որ կոմունիստական շինարարությունը ենթադրում է կառավարման դեմոկրատական հիմունքների ըստ ամենայնի զարգացում՝ ժողովրդական տնտեսության կենտրոնացված պետական ղեկավարության ամրապնդման ու կատարելագործման պայմաններում: Ժողովրդատնտեսական միասնական պլանի շրջանակներում հետագայում ևս կընդլայնվի տեղական օրգանների ու ձեռնարկությունների իրավունքները և ինքնուրույնությունը: Պետական օրգանների կողմից կատարվող ավելի մեծ թվով կարևոր ֆունկցիաներ կհանձնվեն հասարակական կազմակերպությունների իրավասությանը: Սոցիալիստական դեմոկրատիայի բազմակողմանի ծավալումը և կատարելագործումը, բոլոր քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարման, տնտեսական ու կուլտուրական շինարարության ղեկավարման գործում, պետական ապարատի աշխատանքի բարելավումը և նրա գործունեության նկատմամբ վերահսկողության ուժեղացումը կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում սոցիալիստական պետականության զարգացման

գլխավոր ուղղութիւններն են: Սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացման պրոցեսում պետական իշխանութեան օրգաններն աստիճանաբար կվերածվեն հասարակական ինքնավարութեան օրգաններին:

Տնտեսական օրգանների արտադրական մասնագիտացումը և տերիտորիալ տեղաբաշխումը: Սոցիալիստական տնտեսութեան կառավարումը կազմակերպվում է հաշվի առնելով արտադրութեան մասնագիտացումը և տերիտորիալ տեղաբաշխումը:

Արտադրութեան մասնագիտացումը պահանջում է նաև տնտեսական օրգանների, կադրերի որոշակի մասնագիտացում այն հաշվով, որ նրանք կարողանան լավ կողմնորոշվել սովյալ արտադրութեան տեխնիկայի և էկոնոմիկայի մեջ և դրանք ղեկավարեն լրիվ գործիմացութեամբ: «Կառավարելու համար,— սովորեցնում էր Վ. Ի. Լենինը,— հարկավոր է ձեռնահաս լինել, հարկավոր է լիովին և մանրամասնորեն գիտենալ արտադրութեան բոլոր պայմանները, հարկավոր է գիտենալ այդ արտադրութեան տեխնիկան՝ նրա ժամանակակից բարձրութեամբ, հարկավոր է ունենալ գիտական որոշ կըրթութիւն»¹:

Տնտեսական օրգանների կազմակերպման ժամանակ ոչ պակաս կարևոր է հաշվի առնել արտադրութեան տերիտորիալ տեղաբաշխումը: Տնտեսութեան կառավարման օրգանները պետք է առավելագույն շահով մոտ լինեն արտադրութեանը, որպեսզի ապահովեն նրա հստակ և օպերատիվ ղեկավարութիւնը: Այսպիսով, անհրաժեշտ է ճշտօրէն զուգակցել արտադրութեան մասնագիտացումը և տերիտորիալ տեղաբաշխումը: Տնտեսութեան կառավարման նոր պայմաններում մասնագիտացման պահպանման և ուժեղացման հետ տերիտորիալ սկզբունքի ռացիոնալ զուգակցման ուղիների խոր ու բազմակողմանի հիմնավորումը տրված է Ն. Ս. Խրուշչովի՝ 1957 թ. մայիսին ՍՍՌՄ Գերագույն սովետի սեսիայում արտասանած զեկուցման մեջ:

¹ Վ. Ի. Լենին, Երկ., հ. 30, էջ 547:

Արդյունաբերության ու շինարարության կառավարման նոր օրգանները՝ ժողտնտխորհները կառուցված են ըստ տերիտորիալ սկզբունքի: Նախկին Ճյուղային մինիստրությունների մանր շինարարական շատ կազմակերպություններ միավորված են տերիտորիալ խոշոր կազմակերպությունների մեջ: Տնտեսական ղեկավարությունը մոտեցված է արտադրությանը, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով լուծել տեղեկում առաջացած հարցերը, ավելի լրիվ օգտագործել ներքին ռեզերվները:

Ճյուղային մինիստրությունների վերացումը չի նշանակում հրաժարվել արտադրության մասնագիտացումից և անցնել արդյունաբերության ու շինարարության ընդհանուր, «ունիվերսալ» կառավարման: Գտնվեցին տնտեսական օրգանների արտադրական մասնագիտացման ու տերիտորիալ կառուցվածքի նոր, ժամանակակից պայմանների համար ավելի կատարելագործված և ռացիոնալ ձևեր:

Տերիտորիալ շինարարական կազմակերպությունների կազմում ստեղծված են մասնագիտացված տրեստներ, վարչություններ և տեղամասեր՝ շինարարական ու մոնտաժային աշխատանքների առանձին տեսակներ կատարելու համար: Որոշ միութենական ռեսպուբլիկաներում ստեղծվել են շինարարության մինիստրություններ, որոնք միավորում են մոնտաժային և ուրիշ մասնագիտացված կազմակերպությունների հիմնական մասը: Տրանսպորտային, էներգետիկ և մեծ առանձնահատկություն ունեցող մի շարք ուրիշ օբյեկտների շինարարությունն իրականացվում է մասնագիտացված մինիստրությունների և ղեկատեսչությունների միջոցով:

Այսպիսով, արտադրական մասնագիտացման սկզբունքն ապահովվում է կառավարման նոր սիստեմի ժամանակ այնպիսի ձևերով, որոնք համապատասխանում են սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման ավելի բարձր էտապին և թույլ տալիս ավելի լրիվ օգտագործելու կառավարման տերիտորիալ սկզբունքի առավելությունները:

Միանձնյա ղեկավարությունը և արտադրության ղեկավարման գործում մասսաների մասնակցությունը: Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն էր նվիրում արտադրության կառավարման մեջ խստագույն միանձնյա ղեկավարության անցկացմանը, որի անհրաժեշտությունն առաջացնում է ինքը՝ խոշոր մեքենայական արտադրության պրոցեսը: Վ. Ի. Լենինը գրել է, որ

ամեն մի խոշոր մեքենայական արտադրություն պահանջում է հարյուրավոր, հազարավոր ու տասնյակ հազարավոր մարդկանց համատեղ աշխատանքին ուղղություն տվող կամքի անպայման ու խստագույն միասնություն: «Անառարկելի ենթաբաղադրամասեր միասնական կամքին՝ խոշոր մեքենայական ինդուստրիայի տիպով կազմակերպված աշխատանքի պրոցեսների հաջողության համար՝ անպայման անհրաժեշտ է»¹:

Միանձնյա ղեկավարություն նշանակում է աշխատողներին կոլեկտիվի ենթարկումը մեկ անձի՝ ղեկավարին, որն օժտված է արտադրության՝ իրեն վստահված տեղամասի կառավարման ասպարեզում անհրաժեշտ իրավունքներով և այդ տեղամասի աշխատանքի համար կրում է լրիվ պատասխանատվություն: Միանձնյա ղեկավարությունը բացառում է դիմազրկությունը և անպատասխանատվությունը: Յուրաքանչյուր աշխատող պատասխանատու է աշխատանքի իր տեղամասի համար և ենթակա է մեկ ղեկավարի, որի կարգադրությունները պարտադիր են նրա համար:

Վերջին տարիներին մի շարք որոշումներ են ընդունվել տնտեսական ղեկավարների՝ վարպետների և արտադրական տեղամասերի պետերի, ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների ղեկավարների իրավունքների ընդլայնման մասին: Իրավունքների ընդլայնումը նպաստում է արտադրության միանձնյա կառավարման ամրապնդմանը, բարձրացնում է ղեկավարների պատասխանատվությունը նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պետական պլանների անպայման կատարման համար:

Սոցիալիստական տնտեսավարության պրակտիկան համոզիչ կերպով ցույց է տալիս, որ ամեն մի տեղամասում աշխատանքի հաջողությունը վճռական չափով կախված է տրնտեսական ղեկավար կադրերի ընտրությունից և տեղաբաշխումից: Սոցիալիստական արտադրության արագ աճը, նոր տեխնիկայի լայն ներդրումը, սովետական ժողովրդի կուլ-

¹ Վ. Ի. Լենին, Երկ., հ. 27, էջ 323:

տուրական մակարդակի սիստեմատիկ բարձրացումը տրնտեսական ղեկավար կադրերին ավելի բարձր պահանջներ են ներկայացնում:

Սովետական իշխանության տարիներին պարտիան աճեցրել է արտադրության բազմաթիվ տաղանդավոր կազմակերպիչներ ու մասնագետներ, որոնք լավ գիտեն իրենց գործը և ընդունակ են ղեկավարելու տնտեսությունը: Ուստի կան ռեալ հնարավորություններ, որպեսզի արտադրության բոլոր տեղամասերի գլուխ կանգնեն հմուտ, նախաձեռնող ղեկավարներ:

Պարտիան վճռական պայքար է տանում անկետային սովյալներով կադրերի ընտրության գրասենյակային, բյուրոկրատական մոտեցման դեմ, երբ խոր չեն ուսումնասիրվում և լուրջ չեն ստուգվում աշխատողի գործնական ու քաղաքական հատկանիշները, ինչպես նաև կադրերի՝ ըստ մտերմական, անձնական նվիրվածության, հայրենակցական, ազգակցական հատկանիշների ընտրության հակապարտիական պրակտիկայի դեմ: Կադրերի հետ տարվող աշխատանքում պարտիան պահանջում է խստորեն պահպանել հին, փորձված աշխատողների և գործը լավ հասկացող երիտասարդ, եռանդուն կազմակերպիչների ճիշտ զուգակցման լենինյան սկզբունքը: Յուրաքանչյուր աշխատող պետք է օգտագործվի այնտեղ, որտեղ նա ընդունակ է տալ ավելի շատ օգուտ: Ղեկավար աշխատանքում ետ մնացած, գոռոզացած, անգործ ու անսկզբունք մարդկանց համար չպետք է տեղ լինի:

Մարդկանց ճիշտ ընտրությունը և տեղաբաշխումը կադրերի հետ տարվող աշխատանքի միայն սկիզբն է: Անհրաժեշտ է նրանց աշխատանքի նկատմամբ ամենօրյա վերահսկողություն, պարտիայի ու կառավարության դիրեկտիվների, վերադաս տնտեսական օրգանների որոշումների, ինչպես նաև սեփական որոշումների կատարման սիստեմատիկ ստուգում: Պարտիան կադրերին դաստիարակում է հանձնարարված գործի նկատմամբ բարձր պահանջկոտության և պատասխանատվության ոգով: Աշխատանքի լենինյան ոճը՝ դա

ռևոլյուցիոն թափի և խնդիրների առաջադրման մեջ լայն հեռանկարի միացումն է այդ խնդիրների լուծման գործարար հաստատակամության հետ, գործը պրակտիկորեն կազմակերպելու և մինչև վերջ հասցնելու կարողության հետ:

Սոցիալիստական արտադրության մեջ միանձնյա ղեկավարությունը զուգակցվում է կառավարման գործում աշխատողներին ամբողջ կոլեկտիվի ակտիվ մասնակցության հետ, ադմինիստրացիայի գործունեության նկատմամբ լայն հասարակական վերահսկողության հետ: Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ առանձին ղեկավարների միանձնյա կարգադիր իշխանությունը պետք է անպայման զուգակցվի ներքևից եկող վերահսկողության զանազան ձևերի ու միջոցների հետ: Հասարակական վերահսկողությունը, չխախտելով միանձնյա ղեկավարության սկզբունքը, թույլ է տալիս լայն ակտիվին ներգրավել պարտիայի ու կառավարության դիրեկտիվների կատարումը ստուգելու, ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների գործունեության կարևորագույն հարցերը քննարկելու ու լուծելու համար:

Ընդլայնելով տեղական օրգանների, ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների ղեկավարների իրավունքները, դրա հետ միասին պարտիան մշակում է հասարակական վերահսկողության նոր ձևեր, որպես լավագույն հակաթույն ընդդեմ քարացածության և բյուրոկրատիզմի, ժողովրդից կտրված առանձին ղեկավարների անբարտալանության ու մեծամտության, նրանց տրված իրավունքների շարաշահման, ընդդեմ սովետական օրենքների և պետական կարգապահության ամեն տեսակի խախտումների:

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում տնտեսական օրգանների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը, արտադրության զարգացման կարևորագույն հարցերի կոլեկտիվ քննարկումը առանձնահատուկ կարևոր նշանակություն են ստանում: ՍՄԿՊ ծրագրում խնդիր է դրված, հանձնարարված գործի նկատմամբ յուրաքանչյուր ղեկավարի անձնական պատասխանատվությունը խիստ պահպանելու հետ միասին, պետական ու տրն-

տնեսական անպարատի բոլոր օղակների աշխատանքը՝ հետևողականորեն իրականացնել կոլեգիալությունը:

Մեր երկրում շինարարության հսկայական մասշտաբները անհրաժեշտաբար պահանջում են իսկական համաժողովրդական վերահսկողության կազմակերպում՝ կապիտալ ներդրումների և նյութատեխնիկական ռեսուրսների բաշխման նկատմամբ, կառույցները բարձրորակ նախագծային փաստաթղթերով և արդի սարքավորումներով ժամանակին ապահովելու, շինարարության արտադրական բազայի զարգացման, շինարարական տեխնիկայի օգտագործման և աշխատանքների կատարման առաջավոր տեխնոլոգիայի ներդրման նկատմամբ:

Զեռնարկություններում և շինարարական կազմակերպություններում աղմինիստրացիայի գործունեության նկատմամբ պարտիական, արհմիութենական, կոմերիտական և այլ հասարակական կազմակերպությունների կողմից կիրառվում են հասարակական վերահսկողության՝ իրենց արդարացրած մի շարք ձևեր (տնտեսական ղեկավարների հաշվետվությունների լսում պարտիական կազմակերպությունների ժողովներում, աղմինիստրացիայի գործունեության նկատմամբ պարտիական վերահսկողության հանձնաժողովների ստեղծում, մշտական գործող արտադրական խորհրդակցություններ, արհմիութենական կոմիտեների արտադրական-մասնաշաղկապ հանձնաժողովներ, հասարակական ստուգատեսներ, կոմերիտական շտաբներ, պոստեր, «լուսարձակներ» և այլն):

Տնտեսական ղեկավարության պրակտիկայի բարելավման և բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների ու ծառայողների նախաձեռնության զարգացման նպատակով, լաջնորեն օգտագործելով հասարակական վերահսկողության բոլոր ձևերը, դրա հետ մեկտեղ շատ կարևոր է ապահովել հասարակական վերահսկողության տարրեր ձևերի գործողությունների միասնությունը և համաձայնեցվածությունը՝ զանազան ստուգումների ավելորդ բարդումներից, տնտեսական կառավարման ապարատի անտեղի ցնցումներից խուսափելու և նրա ֆունկցիաների կատարման կանոնավոր պայմաններ ստեղծելու համար:

Իսկական ղեմոկրատական սկզբունքների վրա հիմնված վերահսկողության սխտեմը տնտեսական ղեկավարության ոլորակտիկայի բարելավման ներգործուն միջոց է: Պարտիայի XXII համագումարը խնդիր դրեց կատարելագործել պար-

տիական, պետական և հասարակական վերահսկողությունը, դարձնել այն կառավարման ապարատի քոլոր օղակների գործունեության նկատմամբ իսկական ժողովրդական վերահսկողություն, բարձրացնել յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվությունը պարտիայի և կառավարության որոշումները ժամանակին կենսագործելու համար: Հասարակական վերահսկողության ընդլայնման ուղղությամբ պարտիայի ու կառավարության միջոցառումները բարենպաստ պայմաններ են ստեղծում քննադատության և ինքնաքննադատության զարգացման, տնտեսական կադրերին սոցիալիստական տնտեսության կառավարման լենինյան մեթոդների ոգով դաստիարակելու համար:

Նյութական և բարոյական շահագրգռվածությունը արտադրության վարգացման գործում: Սոցիալիստական արտադրության ղեկավարման կարևորագույն սկզբունքներից մեկը արտադրությունը զարգացնելու գործում առանձին աշխատողների և կոլեկտիվների նյութական շահագրգռվածության սկզբունքն է, որը զուգակցվում է աշխատանքի նկատմամբ բարոյական ազդակների հետ: Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում տնտեսությունը պետք է կառուցել ոչ թե անմիջականորեն խանդավառության վրա, այլ մեծ ռեյտինգի ծնած խանդավառության օգնությամբ՝ աշխատողների անձնական նյութական շահագրգռվածության վրա:

Շինարարության մեջ նյութական շահագրգռվածության սկզբունքն իրագործվում է ամենից առաջ աշխատավարձի գործավարձային և պարզևատրման ձևերն արմատավորելու, լավագույն աշխատողներին նյութապես խրախուսելու ուղիներով:

Նյութական շահագրգռվածության սկզբունքի հետ սերտորեն կապված է տնտեսական հաշվարկի սիստեմը՝ որպես ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների տնտեսությունը վարելու կարևորագույն մեթոդ:

Վ. Ի. Լենինը տվել է պետական ձեռնարկությունները տնտեսական հաշվարկի փոխադրելու անհրաժեշտության խոր

հիմնավորումը: Տնտեսական հաշվարկի ներդրումը թույլ է տալիս սոցիալիստական ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների կենտրոնացված ղեկավարությունը ղուգակցել նրանց օպերատիվ-տնտեսական ինքնուրույնություն տալու հետ, պետության շահերը աշխատողների առանձին կոլեկտիվների շահերի հետ, բարձրացնում է շինարարական կազմակերպությունների և դրանց ստորաբաժանումների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը տնտեսությունը ռացիոնալ վարելու և տրնտեսական պլանները կատարելու համար:

Ամրապնդելով նյութական շահագրգռվածության սկզբունքը, կոմունիստական պարտիան սովետական իշխանության առաջին օրերից մեծ ուշադրություն է դարձնում աշխատանքի բարոյական ազդակների զարգացմանը, աշխատավորների կոմունիստական դաստիարակությանը: Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ սոցիալիստական ռևոլյուցիան ժողովրդի աննախընթաց ստեղծագործական ավյուն է ծնում, ժողովրդի, որն ազատագրվել է կապիտալիստական շահագործման լծից և իշխանությունը վերցրել իր ձեռքը:

Բարոյական գործոնի դերը հատկապես աճում է կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում: «Գեպի կոմունիզմ կատարվող առաջընթացի համեմատ, — մատնանշված է ՍՍԿՊ ծրագրում, — ավելի ու ավելի կաճի աշխատանքի բարոյական ազդակների, ձևոք բերված արդյունքների հասարակական ճանաչման, համաժողովրդական գործի համար յուրաքանչյուրի պատասխանատվության զգացման նշանակությունը»¹:

Արտադրության զարգացման գործում աշխատողների բարոյական շահագրգռվածության սկզբունքի հետ սերտորեն կապված է մասսաների սոցիալիստական մրցույթունը՝ կոմունիստական շինարարության փորձված մեթոդը:

Մեր երկրի թևակոխելը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանն նշանավորվեց կոմունիստական աշ-

¹ «ՍՍԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 511:

խատանքի բրիգադների ու հարվածայինների հայրենասիրական շարժման առաջացմամբ: Կարճ ժամանակամիջոցում այդ շարժումը դարձավ աշխատանքային մասսայական հերոսության և աշխատավորների դաստիարակության դպրոց: Կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի ու հարվածային կոշման համար մրցության մեջ 1961 թ. վերջերին ներգրավվել էին քաղաքի ու գյուղի մոտ 20 միլիոն աշխատավորներ, հազարավոր բրիգադներ ու տեղամասեր, ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների ամբողջ կոլեկտիվներ:

Կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածայինների մրցության առաջավորների համամիութենական խորհրդակցության մասնակիցներին ուղղված ՍՄԿՊ Կենտկոմի ողջույնի մեջ ընդգծված է. այդ հիանալի շարժման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանում նորագույն գիտության և տեխնիկայի հիման վրա աշխատանքի ամենաբարձր արտադրողականության հասնելու համար մղվող պայքարը և մշտապես առաջ նայող, խիզախող, խորհող, ստեղծագործող նոր մարդու՝ իր երկրի տիրոջ դաստիարակությունը օրգանապես զուգակցվում են միմյանց հետ:

Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքը, «Բոլորը մեկի համար և մեկը՝ բոլորի» կոլեկտիվիզմի լենինյան սկզբունքը, որն ընկած է կոմունիստական աշխատանքի բրիգադների ու հարվածայինների պարտավորությունների հիմքում, դառնում է սովետական մարդկանց վարքագծի նորմա: Մրցության միլիոնավոր մասնակիցները ձեռք են բերում արտադրական բարձր ցուցանիշներ և սիրով իրենց փորձը հաղորդում են ընկերներին, հոգ տանում ոչ միայն անձնապես իրենց մասին, այլ ամենից առաջ կոլեկտիվի մասին:

Շինարարության մեջ արտադրության առաջավորների բարոյական խրախուսման բազմազան ձևեր են կիրառվում: Շինարարական կազմակերպությունների արհմիութենական կազմակերպությունները և աղմիսխորացիան, ամփոփելով սոցիալիստական մրցության արդյունքները, որոշում են մրցության մեջ հաղթողներին, առաջավոր տրեստների, շինվարչություններ-

րի և տեղամասերի կոլեկտիվներին հանձնում են փոխանցիկ կարվճի գրողներ, պարզեցում լավագույն աշխատողներին պատվոգրերով, նշում են նրանց անունները արտադրության առաջավորների պատվո տախտակների վրա և պատվոգրքերում: Արտադրության նորարարների փորձը լայնորեն լուսաբանվում է մամուլում, ուղիորդ և հեռուստատեսությամբ: Աշխատանքի լավագույն մարդիկ պարգևատրվում են ՍՍՈՄ շքանշաններով ու մեդալներով: Աշխատանքային հերոսության համար հարյուրավոր շինարարներ ստացել են Սոցիալիստական աշխատանքի հերոսի և ռեսպուբլիկայի վաստակավոր շինարարի բարձր կոչումներ:

Շինարարության ղեկավարության պրակտիկայում կարևոր է հմտորեն զուգակցել նյութական խթանման միջոցները բարոյական խրախուսման տարբեր ձևերի հետ: Աշխատանքի նկատմամբ նյութական ու բարոյական խթանների նիշտ գուգակցումը կոմունիզմի համար մղվող պայքարում ստեղծագործական մեծ ուժ է:

3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՍԻՍՏԵՄԸ

Ներկայումս շինարարության կառավարումն իրականացվում է գերազանցապես միութենական ռեսպուբլիկաների միջոցով: Միութենական ռեսպուբլիկաների տրամադրությանն է տրվում նաև կապիտալ ներդրումների հիմնական գումարը: 1961 թ. ընդհանուր-միութենական մինիստրոնյուններին և գերատեսչություններին բաժին էր ընկնում պետական կապիտալ ներդրումների ամբողջ ծավալի ընդամենը 24 տոկոսը: Ընդամեն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընդհանուր-միութենական մինիստրոնյուններին և գերատեսչություններին առանձնացրած կապիտալ ներդրումների մի մասն էլ, վերջին հաշիվով, ուղղվում է միութենական ռեսպուբլիկաների տնտեսության զարգացմանը:

Շինարարության կառավարման հիմնական օրգանները: Արդյունարևության և շինարարության կառավարման սիստեմի վերակառուցման ժամանակ շինարարական կազմակերպությունների մեծ մասը ընդհանուր-միութենական մինիստրոնյուններից և գերատեսչություններից անցավ միութե-

նական ռեսպուբլիկանների տնօրինության: Եթե առ մեկը հունվարի 1957 թ. միութենական ռեսպուբլիկանների իրավասության տակ գտնվում էին միայն 793 սկզբնական կապալային շինարարական ու մոնտաժային կազմակերպություններ, ապա 1961 թ. օգոստոսի 1-ի դրությամբ միութենական ռեսպուբլիկանների տնօրինության տակ գտնվում էին արդեն 7900 կազմակերպություն կամ երկրում գործող կազմակերպությունների ընդհանուր թվի 83 տոկոսը, իսկ ՍՍՌՄ մինիստրությունների ու գերատեսչությունների տնօրինության տակ մնացին ընդամենը 1669 (17 տոկոս) սկզբնական շինարարական կազմակերպություն:

Միութենական կազմակերպություններում շինարարական կազմակերպությունները գտնվում են ժողտնտիստրհանրի, ռեսպուբլիկական մինիստրությունների ու գերատեսչությունների և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների կազմում:

Շինարարական և մոնտաժային կազմակերպությունների բաշխումն ըստ ենթակայության ունի հետևյալ պատկերը (առ 1-ը օգոստոսի 1961 թ.)

Ում են ենթարկվում	Տրեստներ		Սկզբնական կազմակերպություններ	
	քանակը	տոկոսներով	քանակը	տոկոսներով
ՍՍՌՄ մինիստրություններին ու գերատեսչություններին .	203	15	1669	17
Ժողովրդական տնտեսության խորհուրդներին	558	43	3456	36
Միութենական ռեսպուբլիկանների մինիստրություններին ու գերատեսչություններին	334	25	3131	33
Աշխատավորների դեպուտատների տեղական սովետներին	219	17	1312	14
Ընդամենը ՍՍՌՄ-ում	1314	100,0	9568	100,0

Ամբողջ երկրի մասշտաբով շինարարության հարցերով զբաղվում են ՍՍՌՄ պետտնտխորհը, ՍՍՌՄ պետպլանը և ՍՍՌՄ պետշինը:

ՍՍՌՄ պետտնտխորհը մշակում է շինարարության զարգացման հեռանկարային հարցերը: ՍՍՌՄ պետպլանը պատրաստում է ժողովրդատնտեսական տարեկան պլանների, այդ թվում նաև շինարարության պլանի նախագծերը: ՍՍՌՄ պետպլանի ճյուղային բաժինների վրա է դրված պլանավորման որակն ապահովելու ու ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի կապիտալ ներդրումների արդյունավետ ուղղությունը որոշելու, եղած արտադրական կարողությունների օգտագործման պլանների հետ կապիտալ ներդրումների պլանները շաղկապելու և կառուցյաները նախագծային ու նախահաշվային փաստաթղթերով ու սարքավորումներով ապահովելու պատասխանատվությունը:

Շինարարության ղեկավարման գործում կարևոր դեր են խաղում ՍՍՌՄ Մինիստրների սովետի շինարարության գործերի պետական կոմիտեն (ՍՍՌՄ պետշինը) և միութենական ռեսպուբլիկաների շինարարության գործերի պետական կոմիտեները:


ՍՍՌՄ պետշինի վրա դրված են հետևյալ կարևորագույն խնդիրներ. ապահովել շինարարության և շինանյութերի արդյունաբերության մեջ տեխնիկական առաջադիմությունը, շինարարական նախագծման մեջ իրազործել միասնական տեխնիկական քաղաքականություն, ապահովել տիպային նախագծերի, ինչպես նաև տիպային կոնստրուկցիաների ու դետալների առավելագույն կիրառում, կարևորագույն օբյեկտների նախագծերի էքսպերտիզան և նախագծերի ու նախահաշիվների էքսպերտիզայի գործի ղեկավարում, կատարելագործել ու զարգացնել նախագծային կազմակերպությունների ցանցն՝ դրանց մասնագիտացումը, կազմակերպել շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների ու շինարարական ինդուստրիայի նախագծումը և ապահովել այդ ճյուղերում կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումը:

ՍՍՌՄ պետշինը մասնակցում է շինարարության զարգացման պլանների կազմման, շինարարության ասպարեզում նոր տեխնիկայի ու գիտական պրոբլեմների ներդրման վերաբերյալ կարևորագույն միջոցառումների մշակման գործին: Նրան լայն իրավունքներ են տրված շինարարական նա-

խաղժման համամիութենական նորմաների և տեխնիկական սլաշմանների շշակման գործում, ինչպես նաև շինարարության տեղումբյան նորմաների, նախահաշվային նորմաների, վարձաշափերի, գնացուցակների, միասնական նորմաների, շինմոնտաժային աշխատանքների գնացուցակների, տիպային նախագծերի և շինանյութերի ու իրերի ստանդարտների մշակման գործում:

ՍՍՌՄ շինարարական կազմակերպությունները, մինիստրություններն ու գերատեսչությունները: ՍՍՌՄ մինիստրությունների ու գերատեսչությունների շինարարական կազմակերպությունները կատարում են շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի մոտավորապես մեկ հինգերորդը

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇԻՄՆԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ



մասը: Այդ կազմակերպությունների կազմում հիմնական տեղ են դրավում մասնագիտացված կազմակերպությունները, որոնք օբյեկտներ են կառուցում արդյունաբերության և տրանսպորտի առանձին էյուղերի համար: Օրինակ, տանսպորտային շինարարության բոլոր տեսակները (երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհներ, մետրոներ, թունելներ, կամուրջներ, օդանավակայաններ, գետային և ծովային կառուցվածքներ) կենտրոնացված են մասնագիտացված ընդհանուր-միութենական տրանսպորտային շինարարության մինիստրությունում, խոշոր էներգետիկայի շինարարության բոլոր տեսակները (ջերմային և հիդրոէլեկտրակայաններ, էլեկտրահաղորդման գծեր) կենտրոնացված են ՍՍՌՄ էներգետիկայի և էլեկտրակայանների շինարարության մինիստրությունում, իսկ մագիստրալային նավթամուղերի և գազամուղերի շինարարությունը՝ ՍՍՌՄ դլավգազում:

Շինարարության կառավարումը ժողտնտիւորհների սիստեմում:
Շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի մեջ ամենից մեծ տեսակարար կշիռ ունեն տնտեսական-վարչական շրջանների ժողովրդական տնտեսության խորհուրդների շինարարական կազմակերպությունները, որոնց տնօրինության տակ են գտնվում արդյունաբերության և բնակարանային շինարարության գծով ընդհանուր-շինարարական կազմակերպությունների հիմնական մասը:

Ժողովրդական տնտեսության խորհուրդները, որպես արդյունաբերության և շինարարության կառավարման պետական օրգաններ, իրենց ամբողջ գործունեությամբ ենթարկվում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետներին: ՍՍՌՄ Մինիստրների սովետն իրականացնում է ժողտնտխորհների ղեկավարությունը միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետների միջոցով:

Ժողովրդական տնտեսության խորհուրդներն ստեղծվել են բոլոր տնտեսական վարչական շրջանների, գոյություն ունեցող վարչական բաժանման համապատասխան և հաշվի առնելով տնտեսության զարգացման մակարդակը: Ժողտնտխորհների մեծամասնությունը կազմակերպված է մարզերի,

երկրամասերի ու ռեսպուբլիկաների սահմաններում: Այն մարզերում, ուր չկա բավականին զարգացած արդյունաբերություն, ժողտնտխորհներ չեն ստեղծված, իսկ այդպիսի մարզերում եղած միութենական-ռեսպուբլիկական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունները և կառույցները ենթարկված են հարևան երկրամասերի ու մարզերի ժողտնտխորհներին: Օրինակ, Նովգորոդի և Պսկովի մարզերի միութենական-ռեսպուբլիկական արդյունաբերական ձեռնարկությունները և կառույցները ենթարկվում են Լենինգրադի ժողտնտխորհին:

1962 թ. սկզբի դրությամբ մեր երկրում կար 101 տնտեսական-վարչական շրջան, ՌՍՖՍՌ-ում՝ 67, Ուկրաինական ՍՍՌ-ում՝ 14, Ղազախական ՍՍՌ-ում՝ 8, իսկ Ադրբեջանական ՍՍՌ, Բելոռուսական ՍՍՌ, էստոնական ՍՍՌ, Թուրքմենական ՍՍՌ, Կիրգիզական ՍՍՌ, Լատվիական ՍՍՌ, Լիտվական ՍՍՌ, Հայկական ՍՍՌ, Մոլդավական ՍՍՌ, Տաջիկական ՍՍՌ, Վրացական ՍՍՌ և Ուզբեկական ՍՍՌ ունեն մեկական տնտեսական-վարչական շրջան:

Այն միութենական ռեսպուբլիկաներում, ուր կան մի քանի տնտեսական վարչական շրջաններ, կազմակերպված են ռեսպուբլիկայում ժողովրդական տնտեսության խորհուրդներ (Համառուսաստանյան, Ուկրաինական, Ղազախական): Նրանք կոչված են կոորդինացնելու ժողտնտխորհների աշխատանքը, ապահովելու ժողովրդատնտեսական պլանների կատարման վերահսկողությունը, լուծելու պլանների կատարման պրոցեսում առաջացած հարցերը: Ռեսպուբլիկական ժողտնտխորհների կարևորագույն խնդիրներից մեկը արդյունաբերության և շինարարության պլանաչափ և անխափան նյութատեխնիկական մատակարարման ապահովումն է: Տնտեսական-վարչական շրջանների ժողտնտխորհները ենթարկվում են ինչպես միութենական ռեսպուբլիկայի մինիստրների սովետին, այնպես էլ ռեսպուբլիկական ժողովրդական տնտեսության խորհուրդին: Ռեսպուբլիկական ժողովրդական տնտեսության խորհուրդը անմիջականորեն ենթարկվում է միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետին:

Ժողովրդական տնտեսության խորհուրդները աշխատավորների լայն մասնակցությամբ կառավարում են արդյունաբերությունը և շինարարությունը, իրենց աշխատանքում ղեկավարվելով ՍՍՌՄ և միութենական ռեսպուբլիկայի օրենքներով, պարտիայի ու կառավարության որոշումներով, ինչպես նաև ժողովրդատնտեսական պլանի առաջադրանքներով:

Ժողտնտխորհների կարևորագույն խնդիրն է ապահովել ինչպես ամբողջ ժողտնտխորհի, այնպես էլ յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկության և շինարարական կազ-

մակերպության պետական պլանների կատարումը բոլոր ցուցանիշներով: Տնտեսական շրջանների տնտեսություն¹ կոմպլեքսային զարգացման, հումքային և էներգետիկայի բազայի ռացիոնալ օգտագործման, միութենական-ռեսպուբլիկական և տեղական ենթակառուցվածքային ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների միջև ռացիոնալ կոոպերացիոն կապերի հաստատման նպատակով, ժողտնտխորհներն իրենց աշխատանքը կոորդինացնում են աշխատավորների դեպուտատների սովետների գործկոմիտեի հետ:

Ժողովրդական տնտեսության խորհուրդներին մեծ իրավունքներ են վերապահված պլանավորման, ֆինանսավորման ու վարկավորման, աշխատանքի ու աշխատավարձի ասպարեզում¹: Ժողտնտխորհներն ունեն բոլոր անհրաժեշտ իրավունքներն իրենց ենթակա արդյունաբերական ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների արտադրական ու ֆինանսական գործունեության բոլոր կողմերը ղեկավարելու համար:

Ժողովրդական տնտեսության խորհուրդներին կից կա հատուկ ապարատ՝ մի շարք ֆունկցիոնալ բաժիններ և տրնտհաշվարկային ճյուղային վարչություններ: Ժողտնտխորհների մեծ մասում՝ նրանց ենթակա բոլոր շինմոնտաժային կազմակերպությունների անմիջական ղեկավարությունն իրականացնելու համար, կազմակերպված են շինաբառուքյան ճյուղային վարչություններ կամ շինաբառուքյան և շինանյութերի արդյունաբերության միավորված վարչություններ: Մի շարք ժողտնտխորհներում առանձին, առավել խոշոր շինարարական կազմակերպություններ ենթարկվում են անմիջականորեն ժողովրդական տնտեսության խորհուրդին:

Կապիտալ ներդրումների մեծ ծավալ ունեցող ժողտրնտխորհներում շինարարության օպերատիվ կառավարման հարցերի կոմպլեքսային լուծման համար հաստատված է

¹ Տե՛ս «Տնտեսական-վարչական շրջանի ժողովրդական տնտեսության խորհրդի կանոնադրություն», հաստատված ՍՍՄՄ Մինիստրների սովետի 1957 թ. սեպտեմբերի 26-ի որոշմամբ:

շինարարության հարցերի գծով ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահի տեղակալի պաշտոն: Շատ ժողտրնտխորհներում շինարարության վարչությունների պետերը խորհրդի անդամներ են:

Արդյունաբերության և շինարարության կառավարման գործում աշխատավորներին ավելի լայնորեն ներգրավելու նպատակով ժողտնտխորհներին կից խորհրդակցական օրգանի իրավունքներով ստեղծված են տեխնիկա-տնտեսական խորհուրդներ, որոնց կազմում շինարարության գծով կազմակերպվում են հանձնաժողովներ (սեկցիաներ): Տեխնիկատնտեսական խորհուրդների մեջ մտնում են գիտնականներ, արտադրության նորարարներ ու առաջավորներ, գյուտարարներ ու ռացիոնալիզատորներ, պարտիական, սովետական, տնտեսական, արհմիութենական, կոմերիտական և այլ կազմակերպությունների ղեկավարներ:

Մի շարք ժողտնտխորհներում հաջողությամբ աշխատում են նորարարների խորհուրդները, որոնք իրենց առջև խնդիր են դրել լայնորեն մասսայականացնել և արտադրության մեջ ներդնել գյուտերը և ռացիոնալիզատորական առաջարկությունները, օգնություն ցույց տալ նորարարներին նրանց փորձը տարածելու գործում: Նորարարների խորհուրդները միավորում են լավագույն բանվորներին, վարպետներին, ինժեներներին և աշխատում են հասարակական հիմունքներով:

Ռեսպուբլիկական շինարարության մինիստրությունները: Շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի մեկ քառորդից ավելին կատարում են ռեսպուբլիկական շինարարական մինիստրությունների կազմակերպությունները: Մեկ տնտեսական շրջան ներկայացնող միութենական ռեսպուբլիկաների մեծ մասում շինարարության ռեսպուբլիկական մինիստրություններն ըստ էության միասնական տերիտորիալ շինարարական կազմակերպություններն են: Նրանք միավորվում են տվյալ ռեսպուբլիկայի շինարարական կազմակերպությունների հիմնական մասսան (բացառությամբ էստո-

նական ՍՍՌ-ի, որտեղ շինարարական կազմակերպությունների մեծ մասը ենթարկվում է ժողտնտխորհին): Թուրքմենական և Մոլդավական ՍՍՌ-ում կազմակերպված են շինարարութայան և շինանյութերի միավորված մինիստրություններ:

Մի քանի տնտեսական շրջաններ ունեցող միութենական ռեսպուբլիկաներում (ՌՍՖՍՌ, Ուկրաինա և Ղազախստան) շինարարության կառավարման հիմնական տերիտորիալ օրգանները ժողտնտխորհների շինարարական վարչություններն են: Այդ ռեսպուբլիկաների շինարարության մինիստրությունները հիմնականում միավորում են մասնագիտացված շինարարական և մոնտաժային կազմակերպությունները, որոնք սպասարկում են տվյալ ռեսպուբլիկային, իսկ մի շարք դեպքերում՝ նաև այլ միութենական ռեսպուբլիկաների մի քանի տնտեսական շրջաններին:

Տեղական սովետների շինարարական կազմակերպությունները: Ծինմոնտաժային աշխատանքների զգալի մասը կատարում են աշխատավորների դեպուտատների տեղական սովետների կազմակերպությունները: Այդ կազմակերպությունները գլխավորապես սպասարկում են տեղական արդյունաբերության ձեռնարկություններին ու կազմակերպություններին, գյուղատնտեսության, առևտրի, բնակարանային, կոմունալ ու կուլտուր-կենցաղային տնտեսություններին: Վերջին տարիներին աշխատավորների դեպուտատների տեղական սովետների շինարարական կազմակերպությունների խոշորացման պրոցես է գնում, այդ թվում ժողտնտխորհների և ռեսպուբլիկական մինիստրությունների կազմակերպությունների հետ միավորման հաշվին: Մի քանի խոշոր քաղաքներում աշխատավորների դեպուտատների սովետների դործկոմներին կից ստեղծված են տերիտորիալ հզոր կապալային կազմակերպություններ, որոնք հիմնականում աշխատանքներ են կատարում բնակելի տների, կուլտուր-կենցաղային նշանակություն ունեցող շենքերի ու կառուցումների շինարարության գծով: Այդպիսի կազմակերպությունների

թվին են պատկանում, օրինակ, Մոսշին, Լենինգրադշին, Կի-
ւեշին, Մոսամարգշին գլխավոր վարչությունները:

Մեր երկրում ստեղծված են ժողտնտխորհների շինարարական կազմակերպությունների, աշխատավորների դեպու-
տատների տեղական սովետների ու միութենական ռեսպուբ-
լիկաների շինարարության մինիստրությունների տերիտո-
րիալ շինարարական կազմակերպություններ և համամիութե-
նական մասնագիտացված շինարարական մինիստրություն-
ների՝ ժողվրդական տնտեսության առանձին ճյուղերի հա-
մար շինմոնտաժային աշխատանքներ կատարող կազմակեր-
պությունների՝ ճյուղավորված ցանց: Բոլոր շինարարական
կազմակերպությունների ճիշտ շրջանացումը և դրանց գործու-
նեություն կոորդինացումը շինարարական ինդուստրիայի հա-
ջող զարգացման անհրաժեշտ պայմանն են:

**Կոորդինացման և պլանավորման խորհուրդները խոշոր տըն-
տեսական շրջաններում:** Տնտեսական օրգանների գործունեու-
թյան կոորդինացումն ուժեղացնելու և երկրի խոշոր տնտե-
սական շրջանների պլանային ու կոմպլեքսային զարգացումն
ապահովելու համար 1961 թ. կատարվեց ՍՍՌՄ տնտեսական
նոր շրջանացում և ստեղծվեցին ժողտնտխորհների ու խոշոր
տնտեսական շրջանների աշխատանքի կոորդինացման ու
պլանավորման խորհուրդներ:

Ռուսաստանի ֆեդերացիայում կազմվել են խոշոր տըն-
տեսական 10 շրջաններ՝ Հյուսիս-արևմտյան, Կենտրոնա-
կան, Վոլգա-Վյատկայի, Կենտրոնական-սևահողային, Պո-
վոլժիեի, Հյուսիսային Կովկասի, Ուրալյան, Արևմտա-սիբիր-
յան, Արևելյան-սիբիրյան, Հեռավոր-արևելյան: Ուկրաինա-
յում կազմված են խոշոր տնտեսական 3 շրջաններ՝ Դոնեցկ-
մերձդնեպրյան, Հարավ-արևմտյան և Հարավային: Արևմուտ-
յան խոշոր տնտեսական շրջանն ընդգրկում է էստոնիայի,
Լատվիայի և Լիտվիայի տերիտորիաները: Անդրկովկասյան
խոշոր տնտեսական շրջանն ընդգրկում է Ադրբեջանի, Հա-
յաստանի և Վրաստանի տերիտորիաները, Միջին-ասիական-
նը՝ Ուզբեկստանի, Թուրքմենիայի, Կիրգիզիայի և Տաջիկիս-
տանի տերիտորիաները: Թվարկած 16 խոշոր տնտեսական

շրջաններից յուրաքանչյուրում ստեղծված են ժողտնտխորհ-
ների աշխատանքների կոորդինացման ու պլանավորման
խորհուրդներ: Ղազախստանի խոշոր տնտեսական շրջանում,
ինչպես նաև Բելոռուսական ու Մոլդավական վարչա-տնտե-
սական շրջաններում կոորդինացման ֆունկցիաները դրված
են ռեսպուբլիկական պետպլանների վրա:

Կոորդինացման ու պլանավորման խորհուրդները ուսում-
նասիրում և քննարկում են տնտեսական շրջանների տերիտո-
րիայում եղած արդյունաբերության, շինարարության, տրանս-
պորտի կոմպլեքսային զարգացման հիմնական պրոբլեմները
և մշակում են հանձնարարականներ ու առաջարկություններ
միութենական ռեսպուբլիկաների համար: Այդ առաջարկները
հաշվի են առնվում պլանավորման և տնտեսության օպերա-
տիվ ղեկավարման ժամանակ՝ նպատակ ունենալով ուժե-
ղացնել հարևան վարչական-տնտեսական շրջանների միջև
տնտեսական կապերը:

Կոորդինացման ու պլանավորման խորհուրդները հանդի-
սանում են հասարակական ներկայացուցչական օրգան: Դը-
րանց կազմում մտնում են տվյալ տնտեսական շրջանի պար-
տիական, սովետական և պլանային օրգանների ղեկավար-
ներ, ժողտնտխորհների նախագահներ, առաջատար ձեռնար-
կությունների, գիտահետազոտական, նախագծային և ուրիշ
կազմակերպությունների խոշոր մասնագետներ: Խորհուրդնե-
րում հերթով նախագահում են ժողտնտխորհների նախա-
գահները: Կոորդինացման ու պլանավորման խորհրդի հաս-
տիքային ապարատը բաղկացած է ընդամենը 5—10 մար-
դուց՝ խորհրդի նախագահի ազատված տեղակալի գլխավո-
րությամբ, որը ռեսպուբլիկաների, երկրամասերի ու մարզե-
րի ժողտնտխորհների մասնակցությամբ կազմակերպում է
առաջարկությունների նախապատրաստումը՝ խորհրդի նիս-
տերում քննարկելու համար և ապահովում դրանց կատար-
ման վերահսկողությունը:

Ժողտնտխորհների աշխատանքի կոորդինացման և պլա-
նավորման խորհուրդների կազմակերպումը նոր քայլ է ար-

հյուանաբերութեան և շինարարութեան կառավարման սիստեմը կատարելագործելու բնագավառում:

Պատվիրատուների ֆունկցիաները: Շինարարական արտադրության մեջ ակտիվ մասնակցութիւն են ունենում ոչ միայն շինարարական ինդուստրիայի կազմակերպութիւնները, այլև պատվիրատուները, որոնց տրամադրութեան տակ միջոցներ են դրվում կապիտալ ներդրումների համար: Նոր խոշոր ձեռնարկութիւնների շինարարութեան ժամանակ պատվիրատուի ֆունկցիան կատարում են կառուցվող ձեռնարկութիւնների դիրեկցիաները: Կապալային եղանակով շինարարական աշխատանքների կատարման վերահսկողութիւնն ապահովելու և տնտեսական եղանակով աշխատանքների կատարումը կազմակերպելու համար գործող ձեռնարկութիւններում և տնտեսական կազմակերպութիւններում, որոնք ունեն կապիտալ ներդրումների մեծ ծավալ, ստեղծվում են կապիտալ շինարարութեան բաժիններ (վարչութիւններ):

Պատվիրատուների հիմնական պարտականութիւններն են. սահմանված կարգի համաձայն կազմել ու հաստատման ներկայացնել շինարարութեան պլանները և տիտղոսային ցուցակները, վերահսկողութիւն սահմանել նախագծման նկատմամբ ու նախագծող կազմակերպութիւններից ընդունել նախագծային-նախահաշվային փաստաթղթերը, կնքել շինարարութեան գծով պայմանագրեր, տեղաբաշխել սարքավորումների մատակարարման պատվերները, ընդունել ստացված սարքավորումը, պահպանել այն ու հանձնել կապալառուին, զլխավոր կապալառուին ապահովել կառուցման իրավունքի թույլտվութիւններով ու հանձնել նրան շինարարութիւնն իրականացնելու համար առանձնացված ազատ տարածութիւնը, իրագործել շինարարութեան վերահսկողութիւնը և տեխնիկական հսկողութիւնը՝ հատկապես աշխատանքների որակի ու նախագծի հետ դրանց համապատասխանութեան նկատմամբ, ընդունել և վճարել ավարտված օբյեկտներն ու կատարված աշխատանքները, նախապատրաստել ավարտված օբյեկտները շահագործման հանձնելու համար:

Պատվիրատուների և կապալային շինարարական կազմակերպութիւնների փոխհարաբերութիւնները որոշվում են ՍՍՌՄ Մինիստրների սովետի հաստատած «Շինարարութեան

կապալալային պայմանագրերի կանոններով»։ Սովորաբար պատվիրատուն գլխավոր պայմանագիրը կնքում է մի շինարարական կապալալային կազմակերպության հետ, որը հանդես է գալիս որպես գլխավոր կապալառու և լրիվ պատասխանատվություն է կրում օբյեկտի շինարարության և շինարարական հրապարակներում տիրող գործերի վիճակի համար։ Գլխավոր կապալառուն որոշակի շինմոնտաժային աշխատանքներ կատարելու համար պայմանագրային հիմունքներով ներգրավում է մասնագիտացված շինարարական կազմակերպություններին, որոնք հանդես են գալիս որպես ենթակապալառուներ։

Գլխավոր կապալառուները տարեկան պայմանագրեր են կնքում ենթակապալառուների իրավունքով ներգրավված մասնագիտացված կապալալային կազմակերպությունների հետ՝ առանձին տեսակի այն աշխատանքները կատարելու համար, որոնք նախատեսված են գլխավոր կապալառուի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրերում։ Եթե գլխավոր կապալառուն չի պարտավորվում մոնտաժել սարքավորումները, ապա այդ աշխատանքները կատարելու համար պատվիրատուն իրավունք ունի տարեկան պայմանագրեր կնքելու անմիջապեսորեն սարքավորում մատակարարողների կամ հատուկ մոնտաժային կազմակերպությունների հետ։ Այդպիսի պայմանագրերը, ի տարբերություն գլխավոր պայմանագրերի և ենթակապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի, կոչվում են ուղղակի պայմանագրեր։

Շինարարության մեջ պայմանագրային հարաբերությունների սխտեմի կատարելագործումը շինմոնտաժային աշխատանքների արագացման, որակի բարելավման և ինքնարժեքի լջեցման կարևոր միջոց է։

4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱՄՔԸ

Շինարարության հիմնական օղակը, ինչպես նյութական արտադրության մյուս ճյուղերում, ձևավորվածություններն են՝ շինարարական ու մոնտաժային կազմակերպությունները։ Վերջին հաշվով նրանց գործունեությունից են կախված սո-

ցիալիստական արտադրութեան զարգացման հաշտութիւնները:

«Արդշունաբերութեան կառավարման վերակառուցման մասին» Կենտրոնական կոմիտեի 1929 թ. դեկտեմբերի 5-ի որոշման մեջ մատնանշված է. «Ձեռնարկութիւնը արդշունաբերութեան կառավարման հիմնական օղակն է: Ուստի ձեռնարկութեան տեխնիկական սպասարկումը, մատակարարման ճիշտ կազմակերպումը, ձեռնարկութեան ներսում աշխատանքի առավել կատարյալ ձևով կազմակերպումը, արտադրութեան մեջ միանձնյա ղեկավարութեան լրիվ կիրառումը, ձեռնարկութեան բանվորական կոլեկտիվի և տեխնիկական անձնակազմի առավելագույն ակտիվութեան համար ամենանպաստավոր պայմանների ստեղծումը, որակյալ ադմինիստրացիայի ընտրութիւնը, ձեռնարկութեան անհրաժեշտ աստիճանի ինքնուրույնութիւնը հանդիսանում են սոցիալիստական արդշունաբերութեան կառավարման սիստեմի հետագա բարելավման հիմքը»¹: Այդ ցուցումը լրիվ շահով վերաբերվում է նաև շինարարութեանը:

Շինարարական կազմակերպութիւնների խնդիրները և ձևերը: Սոցիալիստական ձեռնարկութիւնների, այդ թվում շինարարական կազմակերպութիւնների, հիմնական խնդիրները կայանում են նրանում, որ ապահովել սահմանված պլանի համապատասխան բարձր որակի արտադրանքի թողարկումը, մշտապես կատարելագործել թողարկվող արտադրանքը, տեխնիկական և արտադրութեան կազմակերպումը, դրա հիման վրա հասնելով աշխատանքի արտադրողականութեան անշեղ աճի, արտադրանքի ինքնարժեքի սիստեմատիկ իջեցման, արտադրութեան շահութաբերութեան բարձրացման: Կատարելով այդ խնդիրները, շինարարական կազմակերպութիւնները կազմակերպում են արտադրութեան պրոցեսը, ձեռք են բերում անհրաժեշտ նյութական ռեսուրսներ, աշխատանք են տանում իրենց հիմնական ֆոնդերի ընդ-

¹ «ՍՄԿՊ և Սովետական կառավարութեան դիրեկտիվները տնտեսական հարցերի վերաբերյալ», Պետքաղհրատ, 1957, հ. 2, էջ 126 (ոտս):

լայնման, մոդեռնացման և նորոգման ուղղութեամբ, հպնակում են պատրաստի արտադրանքը, անհրաժեշտ ֆինանսական հաշվարկներ են տանում ուրիշ կազմակերպութիւնների ու ձեռնարկութիւնների հետ:

Բացի արտադրական-տեխնիկական, մատակարարման-վաճառահանման և ֆինանսական գործունեութիւնից, նրանք իրականացնում են կադրերի ընտրութիւնը, պատրաստումը և որակավորման բարձրացումը, բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների և ծառայողների կուլեկտիվի կուլտուր-կենցաղային սպասարկումը: Աշխատողների կենցաղի ու աշխատանքի պայմանների բարելավման և նրանց կուլտուրական ու տեխնիկական մակարդակի բարձրացման մասին հոգատարութիւնը նույնպէս հանդիսանում է սոցիալիստական ձեռնարկութիւնների և տնտեսական կազմակերպութիւնների գլխավոր խնդիրներից մեկը: Շինարարական կազմակերպութիւնների զգալի մասն ունի իր բնակարանային տնտեսութիւնը, կուլտուր-կենցաղային, բժշկա-սանիտարական ու սպորտային հիմնարկութիւնները, մանկապարտեզներն ու մանկամսուրները, դպրոցներն ու կադրերի պատրաստման դասընթացները, կոմունալ և կուլտուր-կենցաղային այլ տնտեսութիւններ:

Շինարարական կազմակերպութիւններն իրենց տրամաւորութեան սակ ունեն անհրաժեշտ ամեն բան՝ իրենց տնտեսական գործունեութիւնը լրիվ տնտեսական հաշվարկի հիման վրա ռացիոնալ կերպով վարելու համար:

Կոմունիստական շինարարութեան ընթացքում արդյունաբերութեան, շինարարութեան և ժողովրդական տնտեսութեան մյուս ճյուղերի ձեռնարկութիւնները կկատարելագործվեն և աստիճանաբար կվերածվեն կոմունիստական ձեռնարկութիւնների: «Այդ պրոցեսի բնորոշ գծերը, — մատնանշված է ՍՄԿՊ ծրագրում, — կլինեն նոր տեխնիկան, արտադրութեան բարձր կարգի կազմակերպումն ու կուլտուրան, որոնք կապված են արտադրական պրոցեսների ավելի ու ավելի լրիվ ավտոմատացման և կառավարման ու վերահսկման ոլորտում ավտոմատիկայի արմատավորման հետ, բանվորների

կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը, ֆիզիկական աշխատանքի ավելի ու ավելի սերտ միացումը մտավոր աշխատանքի հետ, ինժեներա-տեխնիկական աշխատողների տեսակարար կշռի ավելացումը ձեռնարկության կոլեկտիվ կազմի մեջ. փորձնական-հետազոտական աշխատանքների ծավալումը և գիտական ինստիտուտների հետ ձեռնարկությունների կապերի ուժեղացումը. մրցութային ծավալումը և գիտություն նվաճումների. ու աշխատանքի կազմակերպման ու արտադրողականության լավագույն օրինակների արմատավորումը. աշխատավորների կոլեկտիվների լայն մասնակցությունը ձեռնարկության կառավարմանը և աշխատանքի կոմունիստական ձևերի տարածումը»¹:

Գործող շինարարական կազմակերպությունների վերակառուցումը և նորերի կազմակերպումը կատարվում են շինարարության պետական կառավարումն իրականացնող համապատասխան օրգանների կողմից: Ժողտնտխորհների ենթակա կազմակերպությունները կազմավորվում և վերակառուցվում են ժողովրդական տնտեսության խորհրդի որոշմամբ: Այն շինարարական կազմակերպությունները, որոնք գտնվում են ՍՍՌՄ միևիստրությունների ու գերատեսչությունների իրավասության տակ, կազմվում են միևիստրոնների (գերատեսչությունների ղեկավարների) հրամաններով: Մնացած շինարարական կազմակերպությունների կազմավորման կարգը սահմանվում է միութենական ռեսպուբլիկաների միևիստրոնների սովետների կողմից:

Վերջին տարիներին պարտիան ու կառավարությունը ձեռնարկել են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են ժողովրդական տնտեսության մեջ տնտհաշվարկային կազմակերպությունների իրավունքների ընդլայնմանը: ՍՄԿՊ ծրագրում ընդգծված է ձեռնարկությունների օպերատիվ ինքնուրույնության և նախաձեռնության հետագա ընդլայնման, արտադրական հնարավորությունների առավել լրիվ օգտագործման մեջ նրանց դերի ու շահագրգռվածության բարձրացման հրաժեշտությունը:

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 496—497:

Շինարարական ինդուստրիայի մեջ ձեռնարկությունների հիմնական ձևերն են տրեստները և վարչությունները:

Շինարարական (մոնտաժային) տրեստները միավորում են մոնտաժային, տրանսպորտային, սպասարկող ու այլ կազմակերպությունների որոշակի կոմպլեքս: Տրեստներ կարող են ստեղծվել նաև միայն հատուկ աշխատանքներ կատարելու համար: Ըստ իրենց աշխատանքի բնույթի և պայմանների, տրեստները ստորաբաժանվում են.

1) շինարարական տրեստներ, որոնք, որպես կանոն, ընդհանուր-շինարարական աշխատանքներ են կատարում որոշակի շրջանի կամ քաղաքի տերիտորիայում (շինարարական վարչությունների և տեղամասերի միջոցով),

2) տրեստ-հրապարակներ և շինարարության վարչություններ, որոնք շինարարական աշխատանքներ են կատարում հիմնականում մեկ հրապարակի վրա, սովորաբար խոշոր օբյեկտների կառուցման ժամանակ (արտադրական տեղամասերի միջոցով),

3) մասնագիտացված տրեստներ (ճյուղային և ըստ աշխատանքի տեսակների), որոնք աշխատանքներն իրականացնում են վարչությունների և տեղամասերի միջոցով,

4) շինարարական-մոնտաժային տրեստներ, որոնք կատարում են ինչպես ընդհանուր-շինարարական, այնպես էլ մասնագիտացված աշխատանքներ (վարչությունների և տեղամասերի միջոցով):

Շինարարական (մոնտաժային) վարչությունները ստեղծվում են մեծ մասամբ տրեստների կազմում և կատարում են շինարարական, մոնտաժային և այլ հատուկ աշխատանքներ: Շինարարական (մոնտաժային) վարչություններն աշխատում են տնտեսաշվարկով, անմիջականորեն իրականացնում են արտադրական պրոցեսը և, որպես կանոն, ինքնուրույն պատվիրատուներին են հանձնում ավարտված օբյեկտները և աշխատանքները:

Շինարարական (մոնտաժային) վարչությունները սկզբնական շինարարական կազմակերպություններ են: Սկզբնական շինարարական կազ-

մակերպություններ են նաև տրեստ-հրապարակները, որոնք անմիջականորեն կատարում են շինմոնտաժային աշխատանքներ, իսկ երբեմն էլ առանձին արտադրական տեղամասերը, որոնք փոխադրված են անտեսական հաշվարկի և ունեն հաշվապահական հաշվառման ու հաշվետվության ավարտուն սիստեմ:

Շինարարական տրեստները և վարչություններն ունեն անհրաժեշտ արտադրության միջոցներ և ուրիշ նյութական ռեսուրսներ, ինչպես նաև բանվորական կադրեր, ինժեներատեխնիկական աշխատողներ ու ծառայողներ՝ ավարտուն արտադրական պրոցեսն իրականացնելու համար:

Շինարարական տրեստների ու վարչությունների կազմակերպական կառուցվածքը: Արտադրության օպերատիվ և կոնկրետ ղեկավարությունն իրականացնելու համար մեծ նշանակություն ունի շինարարական կազմակերպությունների առավել ռացիոնալ կառուցվածքի սահմանումը:

Պետական շինարարական կազմակերպությունը գլխավորում է կառավարիչը (պետը), որը կառավարում է արտադրությունը միանձնյա ղեկավարության սկզբունքով, բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների և ծառայողների ամբողջ կոլեկտիվի լայն մասնակցությամբ:

Տրեստին կամ վարչությանը տրված իրավունքներին համապատասխան, կառավարիչը (պետը) կազմակերպում է նրա ամբողջ արտադրական-տնտեսական գործունեությունը և լրիվ պատասխանատվություն է կրում տվյալ կազմակերպության վիճակի և աշխատանքի համար: Կառավարիչը (պետը), նայած տրեստի կամ վարչության գերատեսչական պատկանելիությանը, նշանակվում և ազատվում է պաշտոնից ժողովրդական տնտեսության խորհրդի, մինիստրության (գերատեսչության), աշխատավորների դեպուտատների սովետի գործկոմի կողմից:

Աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը լայնորեն ծավալելու, տնտեսական հարցերի լուծման ավելորդ կենտրոնացումը վերացնելու, արտադրության կառավարման ինքնուրույնությունն ու օպերատիվությունն ապահովելու նպատակով, կառավարությունը 1955 թ. զգալիորեն

ընդլայնել է ձեռնարկությունների դիրեկտորների և շինարարական կազմակերպությունների ղեկավարների իրավունքները¹։

Շինարարական կազմակերպության կառավարչի (պետի) առաջին տեղակալն է գլխավոր ինժեները, որը նշանակվում և հանվում է նույն կարգով, ինչպես կառավարիչը։ Գլխավոր ինժեներն ամենից առաջ պատասխանատու է ճիշտ տեխնիկական քաղաքականության անցկացման, տեխնիկայի, տեխնոլոգիայի կատարելագործման և արտադրության կազմակերպման համար։ Նա անմիջականորեն ղեկավարում է շինարարական կազմակերպության տեխնիկական ծառայության աշխատանքը։ Որպես կառավարչի առաջին տեղակալ, գլխավոր ինժեները նույնպես ղեկավարում է հիմնական արտադրական ստորաբաժանումները և կառավարչի հետ միասին լրիվ պատասխանատվություն է կրում շինարարական կազմակերպության արտադրատեխնիկական ճիշտ ղեկավարության համար։

Գլխավոր ինժեները գլխավորում է տրեստի (վարչության) արտադրական-տեխնիկական խորհուրդը, որը կազմակերպվում է արտադրության տեխնիկական կատարելագործման և դրա տնտեսական ցուցանիշների բարելավման, գիտության ու տեխնիկայի նվաճումները, գյուտերը և ռացիոնալիզատորական առաջարկություններն արտադրության մեջ ներդնելու գործում ինժեներատեխնիկական աշխատողներին, բանվորներին ու ծառայողներին ավելի լայնորեն ներգրավելու համար։ Արտադրական-տեխնիկական խորհուրդների կազմում մտնում են առավել որակյալ ինժեներներ, կոնստրուկտորներ, տեխնոլոգներ, տնտեսագետներ, առաջավոր վարպետներ, բանվոր-նորարարներ ու ռացիոնալիզատորներ, գիտության աշխատողներ։

¹ Տե՛ս ՍՍՍՐ Մինիստրների սովետի 1955 թ. օգոստոսի 9-ի որոշումը ձեռնարկությունների դիրեկտորների իրավունքների ընդլայնման մասին (ՍՍՐԿՊ և Սովետական կառավարության դիրեկտիվները տնտեսական հարցերի վերաբերյալ», Պետքաղհրատ, 1958, հ. 4, (ուռա)։

Արտադրական-տեխնիկական խորհուրդները խորհրդակցական օրգաններ են, նրանց կազմը հաստատում է շինարարական կազմակերպության կառավարիչը (պետը): Խորհուրդները գիտահետազոտական կազմակերպությունների համադրժակցության քննարկում են գիտահետազոտական աշխատանքների անցկացման պլանները, քննում են շինարարության հետադաս ինյուտորացման, աշխատանքի կոմպլեքսային մեքենայացման, առաջավոր տեխնոլոգիական պրոցեսների ու աշխատանքի կազմակերպման առաջավոր մեթոդների, ռացիոնալիզատորների ու գյուտարարների առաջարկությունների ներդրման հարցերը, քննարկում են ռացիոնալացման ու գյուտարարության թեմատիկան, առաջավոր արտադրատեխնիկական փորձի փոխանակման վերաբերյալ արտադրական-մասսայական գրականության տեսությունները, տեխնիկական կարիքները ու տեխնիկական գրադարանների աշխատանքի պլանները, միջոցառումներ են նշում կադրերի արտադրական նախապատրաստումը բարելավելու և որակավորումը բարձրացնելու, աշխատանքի առաջավոր մեթոդներն ուսումնասիրելու, ընդհանրացնելու և պրոպագանդելու ուղղությամբ:

Բացի գլխավոր ինժեներից, խոշոր տրեստներում և վարչություններում մտցվում է ընդհանուր հարցերի գծով կառավարչի (պետի) տեղակալի պաշտոնը, որին, որպես կանոն, ենթարկվում են այն ստորաբաժանումները, որոնք կազմակերպում են արտադրության տնտեսական սպասարկումը, նյութատեխնիկական մատակարարումը, կոմունալ-բնակարանային տնտեսության աշխատանքը և այլն:

Շինարարական կազմակերպությունը կատարում է մեծ և բազմատեսակ աշխատանք: Այդ աշխատանքի բոլոր կողմերի որակյալ և օպերատիվ ղեկավարությունը պահանջում է կառավարման ֆունկցիաների որոշ բաժանում, կադրերի մասնագիտացում որոշակի աշխատանքներ կատարելու համար, ինչպես՝ տեխնիկական հարցերի մշակում, պլանավորում, հաշվառում, արտադրության սպասարկում, մատակարարում և այլն: Կառավարման այդ ֆունկցիաներն իրականացվում են հատուկ ապարատի միջոցով, որն աշխատում է կառավարչի և նրա տեղակալների ղեկավարությամբ: Միատեսակ ֆունկցիաներ կատարող աշխատողների խմբերը միավորում են բաժինների մեջ: Շինարարական ամբողջ կազմակերպության աշխատանքի անխափանությունը և արդյուն-

նավետույթունը մեծ չափով կախված է ֆունկցիոնալ բա-
ժինների համաձայնեցված ու հստակ աշխատանքից: Ֆունկ-
ցիոնալ ապարատը պետք է կազմված լինի թվով նվազա-
գույն, բայց փորձված, որակյալ, արտադրույթունը լավ իմա-
ցող աշխատողներից: Վարչա-կառավարչական ապարատի
ուղեցուցումը, բացի նրա պահպանման ծախսերի ավելացու-
մից, օբյեկտիվորեն հասցնում է գրասենյակային-բյուրո-
կրատական ղեկավարութան մեթոդների առաջացման: Յու-
րաքանչյուր բաժնի իրավունքներն ու պարտականույթուն-
ները որոշվում են հատուկ կանոնադրույթուններով, որոնք
հաստատվում են, որպես կանոն, շինարարութան կազմա-
կերպութան կառավարչի կողմից:

Շինարարական կազմակերպութունների կազմակեր-
պական կառուցվածքը որոշվում է տիպային հաստիքներով,
որոնցում սահմանվում են շինարարական տրեստների և
վարչութունների կառուցվածքային ստորաբաժանումները,
պաշտոնները, հաստիքային միավորների քանակը և աշխա-
տողների պաշտոնական դրույթները: Տիպային հաստիքները
շինարարական կազմակերպութունների կազմակերպական
կառուցվածքի խելացի միասնականացման և կառավարման
ապարատի թվական կազմի կրճատման կարևոր պայման են:

Նայած աշխատանքի ծավալին ու բարդութանը, շինարա-
րական տրեստները և վարչութունները բաժանվում են մի
քանի խմբերի (կատեգորիաների): Բոլոր շինարարական կազ-
մակերպութունների համար սահմանված են տարրեր խմբերի
պատկանելիության միասնական ցուցանիշներ, ելնելով կա-
տարվող շինմոնտաժային աշխատանքների ծավալից ու բը-
նույթից: Խմբերին համապատասխան փոխվում է կառա-
վարման ապարատում կառուցվածքային ստորաբաժանում-
ների և հաստիքային աշխատողների թիվը:

Տեսուների և նրանց ավասարեցված կազմակերպութունների հա-
մար սահմանված են հետևյալ ցուցանիշները. տաշին խմբին են պատկա-
նում այն տրեստները, որոնք կատարում են տարեկան 20 մլն ուրբուց
ավելի շինմոնտաժային աշխատանքներ, երկրորդին՝ 12 միլիոնից մինչև

20 մլն ուրլու, երրորդին՝ 7 միլիոնից մինչև 12 մլն ուրլու, չորրորդին՝ 5 միլիոնից մինչև 7 մլն ուրլու շինմոնտաժային աշխատանքներ:

Տարեկան 40 մլն ուրլուց ավելի շինմոնտաժային աշխատանքներ կատարող տրեստների հաստիքները հաստատվում են անհատական կարգով:

Շինարարական վարչությունների և նրանց հավասարեցված կազմակերպությունների համար սահմանված են հետևյալ ցուցանիշները. առաջին խմբին են վերաբերում տարեկան 4 մլն ուրլուց ավելի շինմոնտաժային աշխատանքներ կատարող վարչությունները, երկրորդին՝ 2,5 միլիոնից մինչև 4 մլն ուրլուի, երրորդին՝ 1,5 միլիոնից մինչև 2,5 մլն ուրլուի, չորրորդին՝ 1 միլիոնից մինչև 1,5 մլն ուրլուի: Տարեկան մեկ միլիոնից մինչև 0,8 միլիոն ուրլու աշխատանքի ծավալով շինարարական վարչություններ բացառության կարգով կարող են ստեղծվել միութենական ռեսպուբլիկաների մինիստրների, ս.վետների, ժողտնտխորհների, ՍՍՌՄ մինիստրությունների գերատեսչությունների թույլտվությամբ:

Վարչության համար նախատեսվածից փոքր շինմոնտաժային աշխատանքների ծավալով ինքնուրույն ստորաբաժանում ստեղծելու անհրաժեշտության դեպքում թույլատրվում է ստեղծել ավագ աշղեկի կամ աշղեկի տնտհաշվարկային տեղամասեր (0,4 մլն ուրլուց ոչ պակաս շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծրագրով): Այդ տեղամասերի վարչակառավարչական անձնակազմը չպետք է գերազանցի վեց մարդուց:

Շինարարական կազմակերպության պատկանելիությանը են այս կամ այն խմբին որոշվում է ըստ տարեկան պլանի ցուցանիշների: Ընդ որում հաշվի է առնվում նաև մասնագիտացված կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների առանձին տեսակների տեխնիկական բարդությունը և աշխատատարությունը:

Առաջին և երկրորդ խմբերի շինարարական տրեստներում սովորաբար ստեղծվում են հետևյալ բաժինները. արտադրական-տեխնիկական, գլխավոր մեխանիկի, պլանային, աշխատանքի և աշխատավարձի, կադրերի, մատակարարման և հաշվապահություն: Տրեստների հաստիքներում նախատեսվում են նաև տեխնիկական անվտանգության, ռացիոնալացման և գյուտարարության հարցերի մասնագետների պաշտոններ: Երրորդ և չորրորդ խմբերի տրեստներում գլխավոր մեխանիկի, կադրերի, աշխատանքի և աշխատավարձի բաժիններ, ինչպես նաև մատակարարման տնտհաշվարկային բաժիններ (գրասենյակներ) չեն ստեղծվում, այլ

նախատեսվում են կառավարչի կամ նրա տեղակալի՝ անմիջական ղեկավարության ներքո աշխատող համապատասխան մասնագետների առանձին պաշտոններ:

Առաջին և երկրորդ խմբերի շինարարական վարչություններում սովորաբար ստեղծվում են արտադրատեխնիկական, պլանային, մատակարարման բաժիններ և հաշվապահություն: Փոքրաթիվ աշխատողներով և փոքր ծավալի արտադրութայամբ մանր շինարարական կազմակերպութայունների վարչությունները կարող են ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումներ չունենալ, այլ կազմված լինել անմիջականորեն կազմակերպութայուն ղեկավարին ենթարկվող մի քանի կատարողներից:

Անմիջականորեն օբյեկտներում շինմոնտաժային աշխատանքներ կատարելու համար շինարարական տրեստներում և վարչություններում կազմակերպվում են արտադրական տեղամասեր, որոնք աշխատանքներ են տանում սովորաբար մեկ շինարարական հրապարակում: Քաղաքատիպ շինարարական տրեստներում՝ վարչական ապարատը կրճատելու և արտադրութայուն ղեկավարութայունը բարելավելու նպատակով, շինարարական տեղամասերն անմիջականորեն ենթարկվում են տրեստի կառավարութայունը: Այդ դեպքում միջանկյալ օղակը՝ շինվարչությունը, վերացվում է: Արտադրական տեղամասերի և բրիգադների ամրապնդումը կարևոր նշանակութայուն ունի շինարարական կազմակերպութայունների արտադրական-տնտեսական ամբողջ գործունեութայուն բարելավման համար: 1955 թ. կառավարութայունը որոշում ընդունեց վարպետների և արտադրական տեղամասերի պետերի դիրք բարձրացման մասին¹:

Շինարարական արտադրութայուն կառավարման կառուցվածքի կատարելագործման ուղիները: Սոցիալիստական արտադրութայուն կառավարման ապարատի նկատմամբ կարևոր

¹ Տե՛ս ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1955 թ. սեպտեմբերի 20-ի որոշումը վարպետների և արտադրական տեղամասերի պետերի դերի բարձրացման մասին («ՍՄԿՊ և Սովետական կառավարութայունի զինվորական սակաւ հարցերի վերաբերյալ», հ. 4, Պետքաղհրատ, 1958, ռուս):

պահանջներինց մեկը կառավարման բարձր կուլտուրայի, վարչա-կառավարչական ապարատի ըստ ամենայնի պարզեցման և էժանացման պահանջն է: Սովետական պետական ապարատի կառուցվածքի հարցերին նվիրված «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածում Վ. Ի. Լենինը գրել է. «Մենք պետք է մեր պետապարատը հասցնենք առավելագույն տնտեսման: Մենք պետք է նրանից վտարենք շոայլուժյունների բոլոր հետքերը...»¹:

Լենինյան ցուցումներին համապատասխան պարտիան և կառավարութունը մեծ աշխատանք են տանում ժողովրդական տնտեսության կառավարման սիստեմի կատարելագործման, վարչա-կառավարչական ապարատի թվական կազմի ու նրա պահպանման ծախսերի կրճատման ուղղությամբ: Կառավարման ապարատի կրճատումը, պետական միջոցների տնտեսումից բացի, թույլ է տալիս ապարատից ազատվող աշխատողներին ընդգրկել արտադրության մեջ և դրանով իսկ արագացնել երկրի տնտեսական զարգացումը, արտադրել ավելի շատ նյութական արժեքներ:

1954—1961 թվականների ընթացքում, տնտեսության հսկայական աճի պայմաններում, երկրում վարչա-կառավարչական անձնակազմի ընդհանուր թիվը զգալիորեն պակասեց և դրա տեսակարար կշիռը բանվորների և ծառայողների ընդհանուր թվի մեջ իջավ 13,8 տոկոսից մինչև 9,2 տոկոսի: Այդ կապակցությամբ ստացված 2 մլրդ ռուբլու տնտեսումը տրամադրվեց ժողովրդական տնտեսության կարիքներին և սոցիալ-կուլտուրական միջոցառումներին:

Չեռնարկությունների ու կազմակերպությունների վարչա-կառավարչական ապարատի հաստիքների և պահպանման ծախսերի կրճատումից ստացված խնայողությունը 1962 թ. պետք է կազմի 197 մլն ռուբլի: Բացի այդ, 23 մլն ռուբլով կպակասեն պետական ապարատի պահպանման վրա բյուջեից կատարվող ծախսերը: 1962 թ. պետական կառավարման օրգանների պահպանման ծախսերը կկազմեն ՍՍՌՄ պետական բյուջեի ծախսերի ընդամենը 1,3 տոկոսը՝ 1952 թվականի 3,1 և 1940 թվականի 3,9 տոկոսի փոխարեն:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 598:

Բայց վարչական անպարտաբեր շատ դեպքերում դեռևս մեծ է և զբաղեցնում է շահից դուրս շատ միջոցներ ու աշխատողներ, որոնք կարող էին օգտագործվել արտադրության մեջ: Այժմ, երբ մեր կադրերը աճել են և հարստացել տրեստիսական ու կուլտուրական շինարարության ղեկավարման հարուստ փորձով, հնարավոր է դառնում ժողովրդական տնտեսության ղեկավարման բոլոր օղակներում պակասցնել կառավարչական ապարատը և ազատված կադրերին փոխադրել անմիջականորեն արտադրական աշխատանքի:

Շինարարության կառավարման կազմակերպական ձևերի կատարելագործման, կառավարչական ապարատի կարգավորման և էժանացման կարևոր ուղղությունը շինարարական կազմակերպությունների խոշորացումն է: Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը լայն հնարավորություններ բացեց մանր շինարարական կազմակերպությունների միավորման համար:

Շինարարական կազմակերպությունների խոշորացումը, քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում տերիտորիալ խոշոր շինարարական կազմակերպությունների ստեղծումը թույլ են տալիս ավելի արդյունավետ օգտագործել նյութատեխնիկական ռեսուրսները և բանվորներին ու մասնագետներին կադրերը, լայնորեն իրագործել շինարարության ինդուստրացումը:

Վերջին 3—4 տարվա ընթացքում կապալային շինմոնտաժային մեկ կազմակերպության աշխատանքների միջին ծավալն ավելացել է մոտ մեկ ու կես անգամ:

Շինարարական կազմակերպությունների խոշորացման ուղղությամբ կատարված աշխատանքի մասշտաբները և դրանց հետագա խոշորացման հնարավորությունները երևում են հետևյալ թվերից: Շինմոնտաժային կազմակերպությունների ընդհանուր թվի մեջ 1955 թ. տարեկան մինչև 5 մլն ուրլու աշխատանքների ծավալով տրեստների տեսակարար կշիռը կազմում էր 67, իսկ տարեկան մինչև 1 մլն ուրլու աշխատանքների ծավալով սկզբնական կազմակերպություններինը՝ 70 տոկոս: 1960 թ. այդպիսի տրեստների տեսակարար կշիռն իջավ մինչև 31 տոկոսի, իսկ սկզբնական շինարարական կազմակերպություններինը՝ մինչև 39 տոկոսի:

Տրանսպորտային շինարարության մինիստրության շինարարական կազմակերպությունների խոշորացման ուղղությամբ տարված սիստեմատիկ աշխատանքի շնորհիվ մեկ շինմոնտաժային տրեստի (շինարարության վարչության) միջին տարեկան աշխատանքների ծավալը 1961 թ. կազմեց 13,3 մլն ռուբլի, որը գրեթե երեք անգամ ավելի է, քան 1954 թ.: Աշխատանքների ծավալի զգալի աճի հետ միասին, վարչա-կառավարչական և այլ ոչ-արտադրական անձնակազմի թիվը այդ տարիների ընթացքում կրճատվեց մոտ 13 հազ. մարդով: 1961 թ. մեկ միլիոն ռուբլու շինմոնտաժային աշխատանքներին ընկնում էր վարչա-կառավարչական 52 աշխատող (1954 թ. 98 աշխատողի փոխարեն):

Սակայն շատ տնտեսական շրջաններում դեռևս շարունակում են գոյություն ունենալ մանր, զուգահեռաբար գործող շինարարական կազմակերպություններ: Սկզբնական կապալային կազմակերպությունների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելին գտնվում է ոչ-շինարարական մինիստրությունների, գերատեսչությունների և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների ենթակայության տակ, ընդ որում այդ կազմակերպություններում շինմոնտաժային աշխատանքների միջին տարեկան ծավալը 2—3 անգամ փոքր է, քան ժողտնտխորհների ու շինարարության մինիստրությունների շինարարական կազմակերպություններում:

Շինարարության կառավարման կազմակերպական ձևերի կատարելագործումը իրականացվում է նաև շինարարական կազմակերպությունների հետագա մասնագիտացման միջոցով, որն ապահովում է այդ կազմակերպությունների տեխնիկա-տնտեսական ցուցանիշների բարելավումը ու անհրաժեշտ պայմաններ է ստեղծում տեխնիկական առաջադիմության համար:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության դարգացման 1959—1965 թթ. կոտորոլ թվերում նշվում է, որ «անհրաժեշտ է շարունակել շինարարական կազմակերպությունների մասնագիտացումն ու խոշորացումը, տնտեսական շրջաններում միասնական տերիտորիալ շինարարական կազմակերպությունների ստեղծումը»:

կառավարման ապարատի կրճատման խոշոր ղեկավար է հանդիսանում արտադրության կառավարման կառուցվածքի պարզեցումը, ավելորդ կառուցվածքային ստորաբաժանումների վերացումը: Մեծ թվով ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը դժվարացնում է արտադրության օպերատիվ ղեկավարությունը և հանգեցնում վարչա-կառավարչական ապարատի ուռճացմանը:

Շինարարական ինդուստրիայի մեջ կառավարման ապարատի պարզեցման, շինարարական արտադրության կառավարման բազմաստիճանության վերացման մեծ հնարավորություններ կան: Շատ ժողտնտիսըհներում շինարարության կառավարման սխեման այսպիսին է. ժողտնտիսորհի շինարարության վարչություն—տրեստներ—շինվարչություններ—տեղաձասեր: Առաջավոր շինարարական կազմակերպությունների փորձը ապացուցում է, որ մի շարք դեպքերում որոշ միջանկյալ օղակների վերացումը հնարավոր է ու տնտեսապես նպատակահարմար:

Շինարարական արտադրության կառավարման կառուցվածքի կատարելագործման մեծ նշանակության մասին համոզիչ կերպով վկայում է Նովոսիբիրսկի «Բնակշին» տրեստի փորձը, որտեղ արտադրական տեղաձասերն անմիջականորեն ենթարկվում են տրեստին: 1960 թ. «Բնակշին» տրեստի տնտեսական ցուցանիշները զգալիորեն ավելի լավ էին, քան իրենց կազմում շինմոնտաժային վարչություններ ունեցող քաղաքատիպ տրեստներինը: Դա երևում է հետևյալ աղյուսակից (տես էջ 144):

Ներկայումս շատ կազմակերպություններում մեծ աշխատանք է տարվում ֆունկցիոնալ լրամիենների աշխատանքի ռացիոնալացման ուղղությամբ՝ ավելորդ կառուցվածքային ստորաբաժանումները վերացնելու, մատակարարումը, պլանավորումը և հաշվառումը կենտրոնացնելու, նախնական հաշվառումը պարզեցնելու, հաշվային—հաշվարկման և կառավարչական մյուս աշխատանքները լայն մեքենայացնելու միջոցով: Ժողովրդական տնտեսություն մեջ պլանային և հաշվառման աշխատանքներում զբաղված է ամբողջ վարչա-կառավարչական անձնակազմի մեկ երրորդից ավելին: Պլան-

Հիմնական տնտեսական ցուցանիշները	«Բնակչին» տրեստ	№ 30 տրեստ	«Հիդրոշին» տրեստ
Սեփական ուժերով կատարած շինարարական աշխատանք- ների ծավալ (մլն. ռուբ.)	5,7	6,2	4,9
Մեկ բանվորին ընկնող ար- տադրանքը (ռուբ.)	6774	5685	3781
Բանվորների միջին աշխատա- վարձը (ռուբ.)	1175	1123	987
Վերադիր ծախսերը՝ նախահաշ- վային արժեքի նկատմամբ (տոկոսներով)	10,6	13,7	16,5
Այդ թվում կառավարչական- տնտեսական ծախսերը (տո- կոսներով)	3,4	5,7	7,5
Կառավարչական - տնտեսական անձնակազմի թիվը 100 հազ. ռուբլու կատարած աշխա- տանքների դիմաց	1,8	3,0	3,8

նավորման և հաշվառման ավելի պարզ ձևերի ու մեթոդների անցնելը հնարավորություն կտա արտադրության համար ազատել հարյուր-հազարավոր սոցխատողներ: Ներկայումս մեծ նշանակություն է ձեռք բերում կառավարման նոր տեխնիկայի, զանազան սարքերի ու ապարատների օգտագործումը, որը թույլ է տալիս մեքենայացնել և ավտոմատացնել արտադրության օպերատիվ կառավարման շատ ֆունկցիաներ:

Ապարատի կրճատման համար մղվող պայքարում կարևոր նշանակություն ունի կառավարման գործում հասարակական հիմունքների զարգացումը, մասսաների ինքնագործունեությունը: Յոթնամյակի տարիներին ծագեցին մասսաների ստեղծագործության այնպիսի հիանալի ձևեր, ինչպիսիք են հասարակական կոնստրուկտորային բյուրոները, տնտեսական վերլուծության խմբերը, տեխնիկական ինֆորմացիայի բյուրոները, որոնց աշխատանքներին հասարակական հիմունքներով մասնակցում են հարյուր հազարավոր գիտական աշ-

խատողներ, շինարարական կազմակերպությունների մասնագետներ ու առաջավոր բանվորներ: Պարտիան խնդիր է դնում ամեն կեթյա ընդլայնել հասարակական հիմունքները ձեռնարկությունների գործունեության մեջ: Դա պայմաններ է ստեղծում կրճատելու կառավարման վճարովի ապարատը, դրա հետ միասին այն կարևորագույն նշանակություն ունի կրմունիստական հասարակական ինքնավարության ձևերի մշակման համար:

Վարչա-կառավարչական ապարատի պարզեցման և էթանացման խնդիրը պահանջում է տնտեսական ղեկավարների, պարտիական և արհմիութենական կազմակերպությունների ամենօրյա ուշադրությունը, հատկապես ներկայումս, երբ ձեռնարկություններին և շինարարական կազմակերպություններին տրված են արտադրության կառավարման ռացիոնալ ձևերի ընտրության լայն իրավունքներ:

**5. ՊԱՐՏԻՍԿԱՆ ԵՎ ԱՐՉՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Սոցիալիստական արտադրության կառավարման դործում քաղառիկ կարևոր դեր են խաղում աշխատավորների հասարակական կազմակերպությունները և ամենից առաջ պարտիական կազմակերպությունները:

Արմինիստրացիայի գործունեության պարտիական վիրահուկողությունը: Ձեռնարկությունում պարտիական կազմակերպությունը հանդես է գալիս որպես աշխատավորների կազմակերպիչ կոմունիստական շինարարության խնդիրների լուծման գործում, գլխավորում է սոցիալիստական մրցությունը՝ պետական պլանները և աշխատավորների պարտավորությունները կատարելու համար, մոբիլիզացնում է մասսաներին ներքին ռեզերվները հայտնաբերելու և լավագույն ձևով օգտագործելու, արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի և առաջավորների փորձը լայնորեն ներդնելու համար, ձգտում է հասնել աշխատանքային կարգապահու-

թյունն ամրապնդելուն և աշխատանքի բոլոր որակական ցուցանիշները բարելավելուն: Աշխատանքի վիճակի համար արտադրական պարտիական կազմակերպությունների դերն ու պատասխանատվությունը բարձրացնելու համար նրանց իրավունք է տրված վերահսկելու ադմինիստրացիայի գործունեությունը:

Արտադրական պարտիական կազմակերպությունների վերահսկողություն իրավունքի վերապահելը չի նշանակում, որ նրանք միջամտում են արտադրության օպերատիվ ղեկավարության գծով տնտեսական ղեկավարների ֆունկցիաներին: Պարտիական օրգանների ֆունկցիաները տնտեսական օրգանների ֆունկցիաների հետ շփոթելը կհասցնե՞ր արտադրության մեջ միանձնյա ղեկավարության սկզբունքի խախտմանը, ընդ որում պարտիական կազմակերպությունները կկանգնեին վարչարարության սխալ ուղու վրա: Տնտեսության պարտիական ղեկավարությունն իրականացվում է ոչ թե տնտեսական օրգաններին փոխարինելու միջոցով, այլ նրանց աշխատանքի վերահսկողության, տնտեսական օրգաններին սիստեմատիկ օգնելու, մասսաների դաստիարակության և կազմակերպման միջոցով:

Կոմունիստական շինարարության նոր խնդիրները պահանջում են բարձրացնել պարտիական կազմակերպությունների դերն ու պատասխանատվությունը պետական պլանների իրականացման, պարտիայի ու կառավարության դիրեկտիվների կատարումը կազմակերպելու գործում:

Զեռնարկությունների, կառույցների և նախագծային ինստիտուտների սկզբնական պարտիական կազմակերպություններում ստեղծվում են ադմինիստրացիայի գործունեությունը վերահսկող հատուկ հանձնաժողովներ: Դրանք կոչված են սիստեմատիկ վերահսկողություն իրականացնելու պետական պլանային առաջադրանքների կատարման համար, հետևելու բոլոր աշխատողների կողմից պետական կարգապահության խստորեն պահպանմանը, պայքարելու տեղայնության և նեղ գերատեսչային մոտեցման դրսևորումների դեմ, որոնք վնաս են հասցնում համապետական շահերին:

Սկզբնական պարտիական կազմակերպություններում ստեղծվում են Պանձնաժողովներ, որոնք կոչված են վերահսկելու արտադրական կարգ-
ընթացի և բնակելի տարածությունների գործարկումը, գործարկվե-
լիք օբյեկտների նյութատեխնիկական ապահովումը, նախագծային աշխա-
տանքների ընթացքը, նոր տեխնիկայի ներդրումը և շինարարության բա-
թեյալման հետ կապված այլ աշխատանքներ:

Հանձնաժողովներն ընտրվում են պարտիական ընդհանուր ժողովնե-
քում կամ պարտիական կոնֆերանսներում առավել պատրաստված կո-
մունիստներից և աշխատում են պարտիական կազմակերպությունների,
պարտկոմների, պարտբյուրոների և քարտուղարների ղեկավարությամբ:
Փոքրթիվ սկզբնական պարտիական կազմակերպություններում, որտեղ
աննպատակահարմար է ստեղծել հանձնաժողովներ, տնտեսական գործու-
նեություն վերահսկողությունն իրականացնում են բոլոր կոմունիստները՝
պարտիական կազմակերպության քարտուղարի ղեկավարությամբ:

Ստուգելով գործերի վիճակը այն տեղամասերում, ուր նրանք իրակա-
նացնում են վերահսկողությունը, պարտիական կազմակերպությունները
Պանձնաժողովները չեն կարող փոխել կամ տալ որևէ վարչական կարգա-
դրություն, որովհետև այդ կլիներ միանձնյա ղեկավարության սկզբունքի
խախտում: Նրանք հաղորդում են ստուգման արդյունքները պարտիական
կազմակերպությանը, ինչպես նաև տնտեսական ղեկավարությանը, որոնք
պետք է անհապաղ քննարկեն հանձնաժողովի առաջարկությունները և ժա-
ժանակին միջոցներ ձեռնարկեն հայտարարված թերությունները վերացնե-
լու համար:

Շինարարական կազմակերպություններում պարտիական
վերահսկողության հանձնաժողովների ստեղծումը նպաստում
է պիտակական կարգապահության ամրապնդմանը, բոլոր տե-
ղամասերի աշխատանքի բարելավմանը, արտադրական կար-
ողությունների գործարկմանը, տեխնիկական առաջադիմու-
թյան տեմպերի արագացմանը:

Պարտիական կազմակերպությունների հավատարիմ՝ օգ-
նականներն են կոմերիտական կազմակերպությունները: «Լե-
նինյան կոմերիտությունը, սովետական երիտասարդությունը-
նր ակտիվորեն մասնակցում են կապիտալ շինարարության
վիթիարի սյուսնների կենսագործմանը,— ասված է ՄՄԿՊ
Կենտկոմի ողջունի մեջ՝ ուղղված երիտասարդ կառուցողնե-
րի համամիութենական խորհրդակցության մասնակիցնե-
րին:— Շինարարության մեջ երիտասարդությունը մեծ ուժ է:
Պարտիայի կոչով հարյուր հազարավոր պատանիներ ու աղ-

չիկներ եկան Սիբիրի, Հեռավոր արևելքի, Ղազախստանի, Դոնբասի և երկրի այլ ջրջանների կառույցները: Նրանք շարունակում և զարգացնում են Ամուրի Կոմսոմոլսկի, Դնեպրոգէսի, Ուրալի և Կուզբասի մետալուրգիական հսկաները կառուցողների փառավոր տրագիցիաները»¹:

Հսկայական նշանակություն ունի կոմերիտիության շեֆությունը յոթնամյակի կարևորագույն նորակառույցների նկատմամբ: Միայն 1961 թ. կոմերիտիությունը վերցրել էր ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի 145 խոշորագույն ձեռնարկությունների կառուցման շեֆությունը: Երիտասարդության ակտիվ մասնակցությամբ վերջին տարիներս շարք մտան 48 դոմնային և պողպատածուլական վառարաններ, 34 գլանվաճաթային և խողովակային հաստոններ, քիմիական արդյունաբերության 95 օբյեկտներ, մի շարք խոշոր էլեկտրակայաններ, հազարավոր կիլոմետր նոր երկաթուղիներ ու խողովակամուղ մագիստրալներ և շատ ուրիշ օբյեկտներ:

Պարտիան անհրաժեշտ է գտնում բարձրացնել կոմերիտական կազմակերպությունների դերն ու ակտիվությունը արտադրական կյանքում, ամեն կերպ պաշտպանել կոմերիտականների ու երիտասարդների արժեքավոր նախաձեռնությունը, ավելի մեծ հոգատարություն ցուցաբերել երիտասարդ բանվորների քաղաքական դաստիարակության և արտադրական որակի բարձրացման նկատմամբ:

5 Արհմիութենական կոմիտեների դերն արտադրության կառավարման գործում: Արտադրության կառավարմանը բանվորներին ներգրավելու գործում հսկայական դեր են խաղում արհեստակցական միությունները, որոնց միջոցով բանվոր դասակարգն իրականացնում է իր վերահսկողությունը տնտեսական ղեկավարների գործունեության նկատմամբ: Սովետական արհմիությունները, սովորեցնում էր Վ. Ի. Լենինը, կառաձյարման ու տնտեսաւարման դպրոց են, կոմունիզմի դպրոց: Արհմիություններին օրենսդրական նախաձեռնության իրավունք է տրված: Արհմիութենական կազմակերպությունները ակտիվ մասնակցում են արտադրության, աշխատանքի, կենցաղի ու կուլտուրայի հարցերի վերաբերյալ

¹ «Պրավդա», 1961 թ., մարտի 10:

օրենքների մշակմանը, վերահսկողություն են իրականացնում աշխատանքի պահպանության և անվտանգության տեխնիկայի վիճակի նկատմամբ, մասնակցում են բանվորների ու ծառայողների աշխատավարձի պլանավորման ու կանոնավորման գործին, կառավարում են պետական սոցիալական ապահովագրության գործը:

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում արհմիությունները՝ որպես բանվոր դասակարգի ամենամասսայական կազմակերպության, դերն ու նշանակությունը անշափ աճում են: Դեպի կոմունիզմ շարժման համեմատ արհմիություններին կանցնեն էլ ավելի շատ ֆունկցիաներ, որոնք կատարում են պետական օրգանները:

Հաշվի առնելով պետական ու տնտեսական շինարարության մեջ արհմիութենական կազմակերպությունների աճող դերը, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1958 թ. հուլիսի 15-ին հաստատեց ՀԱՄԿԽ-ի կողմից ներկայացված «Ֆաբրիկային, գործարանային, տեղական արհմիութենական կոմիտեի իրավունքների մասին կանոնադրությունը», որն զգալիորեն ընդլայնում է արտադրության կառավարման գործում արհմիութենական կոմիտեների իրավունքները:

Ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների արհմիութենական կոմիտեները մասնակցում են արտադրական պլանների նախագծերի, լնչպես նաև բնակելի տների և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության պլանների նախագծերի մշակմանը: Աղմինիստրացիայի հետ մեկտեղ նրանք հաստատում են խրախուսման ֆոնդերի միջոցների օգտագործման նախահաշիվները: Արհմիութենական կոմիտեների համաձայնությանը ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունները աղմինիստրացիան սահմանում է ղանազան դրույթներով վարձատրման համար պրոֆեսիաների ցանկեր, շնորհում է բանվորներին կարգեր, անցկացնում նոր նորմաների հաստատում և զործող նորմաների վերանայում, մտցնում բանվորների աշխատանքի վարձատրման խրախուսական սխեմաներ, պարգևատրումներ: Ձեռնարկությունների բնակելի տարածության բաշխումը կատարվում է աղմինիստրացիայի և արհմիութենական կոմիտեների համատեղ որոշմամբ:

Արհմիութենական կոմիտեները վերահսկում են, թե ինչպես է աղմինիստրացիան կատարում աշխատանքային օրենսդրությունը, տեխնիկական անվտանգության և արտադրական առողջապահության կանոններն ու նոր-

ժաները: Բանվորներին և ծառայողներին ադմինիստրացիան շի կարող հեռացնել, առանց արհմիութենական կոմիտեի համաձայնության: Ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների տնտեսական ղեկավար պաշտոններում աշխատողների նշանակումը կատարվում է ադմինիստրացիայի կողմից, հաշվի առնելով արհմիութենական կոմիտեի կարծիքը:

Արհմիութենական կոմիտեներին իրավունք է տրված լսել ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների ղեկավարների զեկուցումներն արտադրական պլանի կատարման, աշխատանքի կազմակերպման և դրա պայմանների բարելավման միջոցառումների, բանվորների ու ծառայողների նյութական-կենցաղային և կուլտուրական սպասարկման մասին, առաջարկություններ մտցնել տնտեսական և սովետական վերագաս օրգանների քննարկմանը՝ շինարարական կազմակերպությունների գործունեության բարելավման հարցերի վերաբերյալ:

Ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների արհմիութենական կոմիտեները բանվորների ու ծառայողների կոլեկտիվի անունից ադմինիստրացիայի հետ կնքում են կոլեկտիվ պայմանագրեր, որոնցով որոշվում են կոլեկտիվի և ադմինիստրացիայի փոխադարձ պարտավորությունները: Ամենամյա կոլեկտիվ պայմանագրերի կնքումը և գրանցով ընդունված պարտավորությունների մասսայական ստուգումները նպաստում են սոցիալիստական մրցության լայն ծավալմանը, պետական պլանների հաջող և ժամկետից շուտ կատարմանը, բանվորների և ծառայողների աշխատանքի պայմանների առողջացմանը և նրանց նյութա-կենցաղային սպասարկման բարելավմանը:

Մշտական գործող արտադրական խորհրդակցություններ: Արտադրական խորհրդակցությունների աշխատանքը ղեկավարում են արհմիութենական կոմիտեները: Արտադրության ղեկավարմանը բանվորներին ու ծառայողներին լայնորեն ներգրավելու հիմնական ձևերից մեկը արտադրական խորհրդակցությունն է, որը հաջողությամբ զուգակցում է միանձնյա ղեկավարության սկզբունքը ներքևից եկող վերահսկողությունն իրականացնելու հետ: Արտադրական խորհրդակցությունների աշխատանքները բարելավելու համար ՄՄԿՊ Կենտկոմի ղեկտեմբերյան (1957 թ.) պլենումը նպաս-

տակահարմար գտավ ձեռնարկությունների և կառույցների արտադրական խորհրդակցությունները դարձնել մշտական գործող խորհրդակցություններ: «Անհրաժեշտ է արտադրական խորհրդակցության աշխատանքը,— ասված է պլենումի քրոշման մեջ,— ենթարկել պետական պլանների կատարման և գերակատարման, արտադրության ներքին ռեզերվների ավելի լրիվ օգտագործման, բանվորների համար բարձր արտադրողական աշխատանքի ստեղծման, ձեռնարկությունների և կառույցների կառավարման մեթոդների կատարելագործման խնդիրներին»¹:

Մշտական գործող արտադրական խորհրդակցություններ կազմակերպվում են 100 և ավելի աշխատողներ ունեցող ձեռնարկություններում, շինաքարական կազմակերպություններում և տեղամասերում: 100-ից քիչ աշխատողներ ունեցող ձեռնարկություններում, կազմակերպություններում և տեղամասերում արտադրական հարցերը քննարկվում են բանվոր-ծառայողների ընդհանուր ժողովներում: Արտադրական խորհրդակցությունների կազմում մտցվում են բանվորներ և ծառայողներ, աղմինիստրացիայի, արհմիութենական, սյարտիական և կոմերիտական կազմակերպությունների, գիտատեխնիկական ընկերության սկզբնական կազմակերպության և ոչուտարարների ու ռաջիտնալիզատորների ընկերության ներկայացուցիչները: Արտադրական խորհրդակցությունների անդամներն ընտրվում են տեղամասերի, բաժինների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովների և համապատասխան հասարակական կազմակերպությունների կողմից:

Ընթացիկ աշխատանքների կատարման համար արտադրական խորհրդակցությունն ընտրում է նախագահություն՝ թվով 5—15 մարդ, որն իրականացնում է արտադրական խորհրդակցության նիստերի նախապատրաստումը, տեղեկացնում բոլոր աշխատողներին խորհրդակցության աշխատանքի սլանի և որոշումների մասին, կազմակերպում է ընդունված որոշումների և առաջարկությունների կատարման վերահսկողությունը: Սահմանված է, որ խորհրդակցությունները պետք է հրավիրվեն ոչ պակաս, քան հոսանքային մեկ-երկու անգամ:

Երկրի կառույցներում ստեղծվել և հաջողությամբ զործում են հաղարավոր մշտական գործող արտադրական խորհրդակցություններ:

¹ «ՍՍԿՊ Դեկտեմբերյան (1957 թ.) պլենումի նյութերը», Հայկետհրատ 1958, էջ 16:

Արտադրական խորհրդակցություններում քննարկվում են ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների արտադրական գործունեության բոլոր հիմնական հարցերը: Քննարկված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են գործող օրենսդրության և հաստատված պլանների խիստ համապատասխան: Արտադրության արմատական հարցերի լայն քննարկումը թույլ է տալիս ավելի խորն ուսումնասիրել այդ հարցերը և բարելավել ընդունված որոշումների որակը, զարգացնում է աշխատողների ստեղծագործական ակտիվությունը, բարձրացնում է նրանց պատասխանատվությունն ամբողջ ձեռնարկության աշխատանքի համար: Հարցերի կոլեկտիվ քննարկումը զուգակցվում է յուրաքանչյուր աշխատողին հանձնարարված գործի համար անձնական խիստ պատասխանատվության հետ, արտադրության մեջ միանձնյա ղեկավարության և կարգապահության ամրապնդման հետ:

ՍՄԿՊ XXII համագումարը խնդիր դրեց ամեն կերպ աջակցել տնտեսության ղեկավարման ասպարեզում արհմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ուժեղացմանը, բարձրացնել բանվորների ու ծառայողների դերը ձեռնարկությունների գործունեության հարցերի լուծման գործում: Որքան բարձր է մասսաների ստեղծագործական ակտիվությունը, որքան նրանք լայն ու ակտիվ մասնակցություն են ցույց տալիս արտադրության կառավարման գործին, այնքան մեր երկիրը արագ կհասնի կոմունիզմին:

ՇԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

1. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պլանավորման հիմնական խնդիրները: Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացումը սոցիալիստական հասարակարգի վճռական առավելություններից մեկն է: Սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման պլանավորումը լայն հնարավորություններ է ստեղծում հասարակական արտադրության անընդհատ աճի ու կատարելագործման, արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման, արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների արագ արմատավորման, նյութական, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, աշխատավորության բարեկեցության անշեղ վերելքի համար:

Պլանավորումը սոցիալիստական պետության տնտեսական-կազմակերպչական կարևորագույն ֆունկցիան է, որն իրականացնում է տնտեսության պլանային ղեկավարությունը՝ հասարակության տնտեսական զարգացման օբյեկտիվ օրենքների պահանջների համապատասխան:

Պլանների մեջ մարմնավորվում է կոմունիստական սյարտիայի և սովետական պետության տնտեսական քաղաքականությունը:

էկոնոմիկայի պլանաչափ զարգացման անհրաժեշտությունն ու հնարավորությունը բխում են, սոցիալիստական հասարակարգի բնույթից, արտադրամիջոցների հասարակա-

կան սեփականությունից: Սոցիալիստական խոշոր արտադրությունը կարող է զարգանալ միայն ժողովրդական տնտեսության կենտրոնացված պլանային ղեկավարության ու միասնական այնպիսի պլանի հիման վրա, որը նախատեսում է առանձին ճյուղերի, տնտեսական շրջանների ու ձեռնարկությունների զարգացման մեջ համապատասխան համամասնություններ: «...Միայն այն շինարարությունն է արժանի սոցիալիստական կոչվելու,— սովորեցնում է Վ. Ի. Լենինը,— որը կկատարվի խոշոր ընդհանուր պլանի համաձայն, ձգտելով հավասարաչափ օգտագործել էկոնոմիկական և տնտեսական արժեքները»¹:

Տնտեսության կենտրոնացված պլանային ղեկավարությունը հնարավորություն է տալիս կոորդինացնել ու կապակցել միութենական ռեսպուբլիկաների, տնտեսության ճյուղերի, տնտեսական շրջանների և ձեռնարկությունների պլանները, նպաստում է գիտատեխնիկական նվաճումների ու առաջավոր փորձի տարածմանը, ապահովում է միասնական պետական քաղաքականության կիրառումը՝ տեխնիկական առաջադիմության, արտադրության տեղաբաշխման ու ժավալի, դրա կառուցվածքի, կապիտալ ներդրումների, աշխատանքի վարձատրման, գների, ֆինանսաների, հաշվառման և վիճակագրության սիստեմի բնագավառում:

Տնտեսության զարգացման պլանավորումը ենթադրում է աշխատավոր մասսաների լայն մասնակցություն արտադրությունը կառավարելու ասպարեզում: Նրանք ներգրավվում են պլանային առաջադրանքները մշակելու գործին, որը օգնում է հայտաբերել և շարժման մեջ դնել արտադրության ռեզերվները: Հասարակական կազմակերպությունները իրականացնում են մշտական ու բազմակողմանի վերահսկողություն պլանների կատարման նկատմամբ:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը առաջ է քաշում տնտեսական ղեկավարումը ու պլանավորումը սիստեմատիկաբար կատարելագործելու խնդիրը: Դու

¹ Վ. Ի. Լենին, Երկ., հ. 28, էջ 27:

պայմանավորվում է. 1) արտադրության և շինարարության հսկայական աճող մասշտաբներով, տնտեսական Կապերի զարգացմամբ ու խորացմամբ. 2) արագընթաց գիտատեխնիկական պրոգրեսով. 3) աշխատանքի ոլորտում կատարվող սոցիալական և կուլտուր-տեխնիկական հսկայական տեղաշարժերով. 4) տնտեսության կառավարման ղեմնկրատական հիմունքների ընդարձակումով և մասսաների աճող ակտիվությամբ:

ՍՄԿՊ ծրագրում որոշված են կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանում պլանավորման հետագա կատարելագործման հիմնական ուղիները: Պլանավորման բոլոր օղակներում գլխավոր ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները, բնական հարստությունները առավել արդյունավետ օգտագործելու, ծախքերը կրճատելու և կորուստները վերացնելու վրա, այն հաշվով, որ նվազագույն ծախսումներով ամենամեծ արդյունք ստանալ: Պլանային ղեկավարությունը վերից վար պետք է ուղղված լինի նոր տեխնիկայի արագ զարգացմանը և ներդրմանը: Անհրաժեշտ է արմատավորել արտադրության միջոցների օգտագործման պրոգրեսիվ նորմատիվներ. դրանց խստագույն պահպանումը պետք է օրենք դառնա յուրաքանչյուր տնտեսական ղեկավարի համար: Հարկավոր է, որ արտադրության, նյութատեխնիկական մատակարարման, կապիտալ ներդրումների, տեխնիկական զարգացման, ինչպես նաև աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների օգտագործման պլանները ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ տրնտեսական շրջանների ու տնտեսության ճյուղերի մասշտաբով փոխադարձաբար կապակցված, ճիշտ հաշվեկշռված և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված լինեն: Այդ պահանջի խախտումը հանգեցնում է տնտեսության մեջ անհամամասնությունների առաջացմանը, դանդաղեցնում է արտադրության աճի տեմպերը, վնաս է հասցնում պետությանը: Պլանների գիտատեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուժեղացումը դրանց տալիս է մեծ կայունություն, որը միև-

նույն ժամանակ ենթադրում է պլանների կատարման պրո-
ցեսում դրանց ժամանակին ուղղում և ճշգրտում:

Խնդիր է դրվում հետազայում է՛լ ավելի կատարելագոր-
ծել ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպու-
թյունների աշխատանքի պլանավորման և գնահատման սխ-
տեմն այն հաշվով, որ նրանք շահագրգռված լինեն պլանա-
յին ավելի բարձր ցուցանիշներ վերցնելու, արտադրական
առաջավոր փորձն առավել չափով տարածելու գործում:
«Կյանքը ինքը,— ասել է Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ ծրագրի մա-
սին պարտիայի XXII համագումարում տված զեկուցման
մեջ,— պլանավորումից և տնտեսական ղեկավարումից պա-
հանջում է դիտական հիմնավորումների և տնտեսական հաշ-
վարկների նոր, շատ ավելի բարձր մակարդակ»¹:

Հեռանկարային և տարեկան պլաններ: Նայած պլանային
ժամանակաշրջանների տևողությանը, պլանները լինում են
հեռանկարային և ընթացիկ, որոնք օրգանապես կապված են
միմյանց հետ: Հեռանկարային և ընթացիկ պլանների միաս-
նությունը սոցիալիստական պլանավորման կարևոր
սկզբունքն է:

Սոցիալիստական պլանավորման հիմքը հեռանկարային
պլաններն են, որոնք որոշում են ժողովրդական տնտեսու-
թյան զարգացման գլխավոր ուղղությունները 5,7 և ավելի
տարիների համար: Ելնելով հեռանկարային պլանների առա-
ջադրանքներից, կազմվում են տարեկան պլաններ, որոնցում
նախատեսվում է ավելի կարճ ժամկետների՝ սովորաբար
տարվա, եռամսյակի, ամսվա աշխատանքների կոնկրետ
ծրագիր:

Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ չի կարելի աշխատել
սրանց երկարատև ժամանակաշրջանի համար կազմված և
լուրջ հաջողություն խոստացող պլանի²: Լենինը մեր երկրի
ժողովրդական տնտեսության զարգացման առաջին միասնա-
կան հեռանկարային պլանի՝ Ռուսաստանի էլեկտրիֆիկաց-

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 232:

² Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 647:

ման պետական պլանի (ԳՈՒԷԼՈՒ) ոգեշնչողն ու կազմակերպիչն էր: Բնութագրելով ԳՈՒԷԼՈՒ-ի պլանը, Վ. Ի. Լենինը ասում էր. «Իմ կարծիքով, սա պարտիայի մեր երկրորդ ծրագիրն է... Պարտիայի մեր ծրագիրը չի կարող միայն պարտիայի ծրագիր մնալ: Դա պետք է դառնա մեր տնտեսական շինարարության ծրագիրը, այլապես դա անպետք է նաև որպես պարտիայի ծրագիր: Դա պետք է լրացվի պարտիայի երկրորդ ծրագրով, ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերստեղծելու և այն մինչև ժամանակակից տեխնիկան հասցնելու աշխատանքների պլանով»¹:

XXII համագումարի ընդունած ՍՄԿՊ ծրագիրը բովանդակում է կոմունիզմի նյութատեխնիկական բազա ստեղծելու գիտականորեն հիմնավորված գլխավոր հեռանկարը, որը նկատի է առնված 20 տարվա համար: Այդ ծրագրի մեջ որոշված են արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, շինարարության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համար կոնկրետ խնդիրներ: Կոմունիստական շինարարության գլխավոր հեռանկարի օրգանական բաղկացուցիչ մասը ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանն է:

Ընթացիկ պլանների հիմնական տեսակը ժողովրդական տնտեսության զարգացման տարեկան պլաններն են: Դրանք կազմվում են հեռանկարային պլանների հիման վրա: Առաջիկա տարվա պլանը մշակելու ժամանակ հեռանկարային պլանի առաջադրանքների մեջ պետք է մտցվեն անհրաժեշտ փոփոխություններ և ուղղումներ, որոնք բխում են պլանի կատարման ընթացքից, ժողովրդական տնտեսության պահանջներից և տնտեսական կապերի հաշվառումից: Շինարարության մեջ այդպիսի ուղղումների թվին կարող են վերաբերել, օրինակ, առաջադրանքների ուղղումն ու ճշգրտումը՝ արտադրական կարողությունների գործարկման ժամկետներն արագացնելու, նոր, ավելի խնայողական հումքի ու նյութերի աղբյուրներ հայտարկելու, արտադրանքի այս կամ

¹ Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 651—652:

այն տեսակի նկատմամբ եղած պահանջները փոփոխվելու, աշխատանքների կազմակերպումն ու նախագծային լուծումները բարելավելու շնորհիվ և այլն: Տարեկան պլանները կազմելու այդպիսի կարգը հնարավորություն է տալիս առավելագույն չափով օգտագործել բոլոր ռեզերվները սոցիալիստական արտադրության զարգացման տեմպերը բարձրացնելու, նյութական ռեսուրսները և ֆինանսական միջոցներն ամեն կերպ տնտեսելու համար:

Վերջին տարիներին կոմունիստական պարտիան պլանավորումը կատարելագործելու ուղղությամբ իրագործել է մի շարք միջոցառումներ: Այդ միջոցառումներին վերաբերում է, ամենից առաջ, պլանավորման վերակառուցումը, որը կապված է 1957 թ. կատարված արդյունաբերության ու շինարարության վերակազմման հետ:

Տնտեսության կառավարումը վերակառուցելու կապակցությամբ պլանավորման մեջ տեղի ունեցած փոփոխությունների հիմնական նպատակն այն է, որ պլանային ցուցանիշները, պլանավորման կարգը և մեթոդները համապատասխանեցվեն արդյունաբերության ու շինարարության կառավարման կազմակերպական նոր ձևերի հետ, ապահովվի սոցիալիստական էկոնոմիկայի առավելությունների առավել լրիվ իրականացումը, հետևաբար, և կոմունիստական շինարարության խնդիրների առավել հաջող լուծումը:

Պլանավորումը բարելավելու հետագա քայլը ժողտնտխորհների աշխատանքները կոորդինացնելու ու պլանավորելու խորհուրդների կազմակերպումն է, խորհուրդներ, որոնք կոչված են ուսումնասիրելու և քննարկելու երկրի տնտեսական խոշոր շրջանների կոմպլեքսային զարգացման կարևորագույն պրոբլեմները:

Պլանային աշխատանքի հետագա կատարելագործման կարևոր պայմանը անընդհատ պլանավորման արմատավորումն է: ՍՍԿՊ ծրագրի մասին համագումարին տված զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովը մատնանշել է. «Այժմ արդեն միանգամայն անհնար է արտադրության, տեխնիկայի, կապիտալ ներդրումների, աշխատանքի տարեկան պլան սահ-

մանել, առանց հաշվի առնելու հեռանկարային զարգացման բոլոր կողմերը: Յուրաքանչյուր տարեկան պլան պետք է դառնա հաջորդ մի շարք տարիների հեռանկարային պլանի օրգանական մասը: Միևնույն ժամանակ հեռանկարային պլանները անհրաժեշտ է, այսպես ասած, ամուր կերպով «կապել հողին» և ճշգրտել տարեկան պլանների միջոցով, հաշվի առնելով դրանց լեռնալ կատարումը¹:

Անընդհատ պլանավորումը հնարավորություն է տալիս ժողովրդական տնտեսության զարգացման մեջ ավելի լավ ասպահովել համամասնությունը, ժամանակին անհրաժեշտ ուղղումներ մտցնել հեռանկարային պլանների մեջ, ավելի լրիվ օգտագործել արտադրության ռեզերվներն ու առաջավոր փորձը: Այն թույլ է տալիս տարեկան պլանների մշակումը օրգանապես զուգակցել տնտեսության զարգացման հեռանկարի հետ՝ առաջիկա մի շարք տարիների համար:

Դրան համապատասխան անհրաժեշտ է համարվել ընթացիկ պլանները կալմելու ընթացքում միաժամանակ մշակել ժողովրդական տնտեսության զարգացման կարևորագույն ցուցանիշներ՝ հնգամյակից հետո եկող հաջորդ տարվա համար այն հաշվով, որ ունենալ անընդհատ գործող հնգամյա հեռանկար: Այդ առանձնապես կարևոր է ժողովրդական տնտեսության ճյուղերի և առանձին տնտեսական շրջանների միջև ճիշտ հարաբերակցություններ սպաստվելու, արտադրողական ուժերը երկրում ռացիոնալ տեղաբաշխելու, պլաններում գիտության և տեխնիկայի ժամանակակից նվաճումներն առավել լրիվ արտացոլելու համար: Պլանավորման անընդհատությունը ժողովրդական տնտեսության նոր ռեզերվներ հայտարերելու: և շարժման մեջ դնելու կարևոր միջոց է:

Պլանային աշխատանքի կատարելագործում է կատարվել նաև պլանավորման պրակտիկայում ավելի ու ավելի մեծ շահով անխնդիր կան միջոցներ արմատավորելու ուղղությամբ: Զանազան հաշվիչ մեթոդներ ավելի ու ավելի լայն կիրա-

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 235:

աում են գտնում ոչ միայն կենտրոնական ու ռեսպուբլիկական պլանային օրգաններում, այլև շինարարական և նախագծային կազմակերպություններում: Հաշվիչ-պերֆորացիոն մեքենաների օգնությամբ կարող են մշակվել տեխնիկա-տընտեսական ցուցանիշներով արտադրական ծրագրեր: Մեքենայացումն անհամեմատ արագացնում է պլանային հաշվարկները, դարձնում դրանք ավելի վստահելի և խիստ կրճատում պլանավորման հետ կապված աշխատանքի աշխատատարությունը:

Վերջին տարիներին պլանային աշխատանքում սկսել են կիրառել մաթեմատիկական մեթոդներ, մասնավորապես, դժային ծրագրումը, որի օգնությամբ լուծվում են օպտիմումը, այսինքն՝ պլանային առաջադրանքի ամենավազույն վարիանտը գտնելու խնդիրները: Մաթեմատիկական մեթոդների կիրառման բնագավառը բավականին ընդարձակ է: Դրանք կարելի է օգտագործել, օրինակ, նյութական և աշխատանքային պլանների հաշվեկշիռներ կազմելու, նախագծման ընթացքում ձեռնարկությունների միջև առավել ռացիոնալ արտադրական կապերը որոշելու, նախագծերի և պլանների համար աշխատանքի մասսայական տեսակների ֆիզիկական ծավալները հաշվարկելու, բեռները շինարարություն փոխադրելու ամենառացիոնալ և արդյունավետ մեթոդները որոշելու ժամանակ և այլն: Մաթեմատիկական մեթոդների ամենաէական առավելությունն այն է, որ դրանք հնարավորություն են տալիս պլանային և նախագծային բարդ հաշվարկների համար օգտագործել արագ գործող էլեկտրոնա-հաշվիչ մեքենաներ:

Կարելի է բերել այսպիսի օրինակ: Մոսկվայի քաղաքային պարտիական կոմիտեի առաջարկությամբ ստեղծվեց հասարակական հիմունքներով աշխատող նախաձեռնողների մի խումբ, որին մասնակցում են Գլխմոսավտոտրանսի, ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հաշվիչ կենտրոնի, ավտոմոբիլային տրանսպորտի գիտահետազոտական ինստիտուտի և Մոսկվայի ավտո-խճուղային ինստիտուտի աշխատողները: Այդ խմբի առջև խնդիր դրվեց մայրաքաղաքի ավտոմոբիլային տրանսպորտի ամենօրյա աշխատանքի պրակտիկայում արմատավորել փոխադրումների պլանավորման մեթոդները, կիրառելով էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ:

Աշխատանքն սկսվեց մասսայական շինարարական բեռների փոխադրումը պլանավորելուց: Էլեկտրոնային հաշվիչ մեքենայով հաշվարկվեց 7 ավազահանքից՝ 250—300 սպառողի և աղյուսի 11 գործարանից՝ 300—350 սպառողի համար ավազ և աղյուս փոխադրելու պլանները: Էլեկտրոնային մեքենայի հսկողության տակ մի օրվա ընթացքում փոխադրվում էին 11 հազ խմ ավազ և 1,5 մլն հատ աղյուս: Մեքենայական տեխնիկայի օգնությամբ պլանավորման անցնելուց հետո, ավազի փոխադրման միջին հեռավորությունը կրճատվեց 7,5 տոկոսով, իսկ աղյուսի փոխադրմանը՝ 17 տոկոսով:

Կապիտալ ներդրումների պլանավորումը: Հեռանկարային և տարեկան պետական պլանները ընդգրկում են ժողովրդական տնտեսության զարգացման բոլոր կողմերը, այդ թվում երկրի հիմնական ֆոնդերի ընդարձակումն ու կատարելագործումը, որոնց մասշտաբները սահմանվում են կապիտալ ներդրումների պլանում: Այդ պլանի նշանակությունը ժողովրդատնտեսական պլանի ցուցանիշների ընդհանուր սիստեմում պայմանավորվում է նրանով, որ այն որոշում է հասարակական ամբողջ արտադրության և առանձին ճյուղերի մակարդակը հեռանկարում, հիմնական ֆոնդերի վերարտադրության ծավալը և դրանց կառուցվածքը, ինչպես նաև վրձնական ազդեցությունն է գործում ժողովրդատնտեսական համամասնությունների վրա:

Սոցիալիստական պլանավորման ամբողջ սխեմայի զարգացման հետ մեկտեղ կատարելագործվում է նաև շինարարության պլանավորումը:

1921 թ. փետրվարին վ. Ի. Լենինի ստորագրած «Ռեսպուբլիկայի միասնական շինարարական պլանի մասին» զեկրետում սահմանվեց, որ յուրաքանչյուր տարվա համար հաստատվում է ռեսպուբլիկայի միասնական շինարարական պլան:

1928 թ. «Արդյունաբերության կապիտալ շինարարությունը և էլեկտրաշինարարությունը կարգավորելու միջոցառումների մասին» որոշման մեջ կառավարությունը ՍՍՌՄ պետպլանին առաջարկեց ժողովրդական տնտեսության հեռանկարային պլան կազմելու, որպես հիմնական պրոբլեմ հատկապես առանձնացնել ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր էջով կապիտալ շինարարության բոլոր հարցերը:

Պլանավորումը բարելավելու գործում խոշոր դեր խաղաց «Շինարարության հետադա ինդուստրացման, որակի բարելավման և արժեքի իջեց-

ման միջոցառումների մասին» ՄՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի 1955 թվականի օգոստոսի 23-ի որոշումը, որի համապատասխան ձշակվեցին և արմատավորվեցին շինարարության տեղադրության նորմաները:

Շինարարության պլանավորումը կատարելագործելու և մեր երկրում շինարարական գործը արմատապես բարելավելու համար բացառիկ նշանակություն ունի ՄՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի «Կապիտալ ներդրումները առավել արդյունավետ օգտագործելու և կառուցվող ձեռնարկությունների գործարկման նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու միջոցառումների մասին» 1961 թվականի հոկտեմբերին ընդունած որոշումը, որը կարգավորում է պլանների մեջ նոր և գործարկվելիք կառույցները մտցնելու, դրանք նյութերով, սարքավորումներով, նախագծերով նախահաշիվներով ապահովելու կարգը, նախատեսում է անավարտ շինարարությունը կրճատելու, նյութատեխնիկական բազան զարգացնելու միջոցառումներ, տառացիորեն ընդգրկելով կապիտալ շինարարության բոլոր կողմերը:

Ժողովրդատնտեսական պլանի կարևորագույն ցուցանիշն արտադրական կառողությունների ու հիմնական ֆոնդերի գործարկումն է: Դրան համապատասխան կապիտալ շինարարության պլանն ունի հետևյալ հիմնական բաժինները. արտադրական կարողությունների գործարկում, բնակարանային, կոմունալ և կուլտուր-կենցաղային: նշանակություն ունեցող օբյեկտների գործարկում, հիմնական ֆոնդերի գործարկում, կապիտալ ներդրումների և շինմոնտաժային աշխատանքների ծավալ, կառույցների տիտղոսային ցուցակներ:

Կապիտալ ներդրումների և շինմոնտաժային աշխատանքների ծավալը պետք է կարողությունների գործարկման հաշվին ապահովի արտադրանքի անհրաժեշտ աճ և հաջորդ պլանային ժամանակաշրջանի համար կուտակվածքի ստեղծում, պահպանելով պլանում նախատեսված համամասնությունները և ծախսումների արդյունավետությունը: Այդ պատճառով կապիտալ ներդրումների պլանավորումը իրականացվում է. տերիտորիալ առումով (ըստ միութենական, ռեսպուբլիկանների և տնտեսական շրջանների), ըստ տնտեսության ճյուղերի, ըստ նպատակի, ըստ կառուցվածքի, ինչպես նաև ըստ կատարողների:

Կ ա պ ի տ ա լ ն ե Ր դ Ր ու մ ն ե Ր ի բ ա շ խ ու մ ն ը ս ա մ ի ու թ ե ն ա կ ա ն ռ ե ս պ ու թ լ ի կ ա ն ե Ր ի ու տ ն ե

սակաճ շրջաններին անհրաժեշտ է արտադրության ուժերը ճիշտ տեղաբաշխելու, բնական ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու, արդյունաբերությունը հումքի աղբյուրներին ու սպառման շրջաններին մոտեցնելու, ձեռնարկություններն ավելի ռացիոնալ մասնագիտացնելու, կոոպերացնելու և կոմբինացնելու համար: Դրա հետ միասին կապիտալ ներդրումները բաշխելու այդպիսի կարգն ապահովում է միութենական բոլոր ռեսպուբլիկաների էկոնոմիկայի ու կուլտուրայի անշեղ վերելք, երկրի տնտեսաաշխարհագրական շրջանների կոմպլեքսային զարգացում:

Կապիտալ ներդրումները բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի պայմաններ է ստեղծում բոլոր ճյուղերի համամասնական զարգացման և արտադրության միջոցների արտադրության առավել անխնայ համար:

Ներկայումս կապիտալ ներդրումները պլանավորվում են ըստ ժողովրդական տնտեսության հետևյալ ճյուղերի. 1) արդյունաբերություն, 2) գյուղատնտեսություն, 3) տրանսպորտ, 4) կապ, 5) առևտուր, 6) բնակարանային տնտեսություն, 7) կոմունալ տնտեսություն, 8) առողջապահություն, լուսավորություն և կուլտուրա, 9) տնտեսության այլ հյուղեր: Կապիտալ ներդրումների հետևյալային և տարեկան պլաններում առանձնացվում են նաև արդյունաբերության առաջատար ճյուղերը:

Ըստ նպատակի կապիտալ ներդրումները պլանավորումն ապահովում է արտադրության ծավալի աճմանը, այսինքն՝ արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների կառուցմանը և աշխատավորների նյութական ու կուլտուրական կարիքների բավարարմանը, այսինքն՝ ոչ-արտադրական նշանակության օբյեկտների կառուցմանն ուղղվող ներդրումների ճիշտ հարաբերակցությունը: ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլաններում բնակարանային, կոմունալ և կուլտուր-կենցաղային շինարարության կապիտալ ներդրումները սահմանվում են ամբողջությամբ ըստ միութենական ռեսպուբլիկաների և ՍՍՌՄ որոշ մինիստրությունների ու դերատեսչությունների: Միութենական ռեսպուբլիկաներն, իրենց հերթին, առանձնացված կապիտալ ներդրումները

բաշխում են ավտոնոմ ռեսպուբլիկաներին, աշխատավորների դեպուտատների տեղական սովետների գործկոմներին, ժողտնտխորհներին, մինիստրություններին, ինչպես նաև ձեռնարկություններին ու կազմակերպություններին: Ընդ որում բնակարանային շինարարության կապիտալ ներդրումներ են առանձնացվում ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերի կառուցվող և վերակառուցվող ձեռնարկություններին, ինչպես նաև շինարարական կազմակերպություններին, որոնք աշխատանքներ են կատարում այդ ճյուղերի ձեռնարկությունների համար: Պլանավորման այդպիսի սխեմամբ միութենական ռեսպուբլիկաներին հնարավորություն է տալիս ճիշտ որոշելու բնակարանային, կոմունալ և կուլտուր-կենցաղային շինարարության ծավալները և նախադրյալներ է ստեղծում այդ օբյեկտներում միջոցներ կենտրոնացնելու համար:

Կապիտալ ներդրումների կառուցվածքը որոշում է ներդրումների ընդհանուր ծավալում շինմոնտաժային և նախագծային-հետազոտական աշխատանքների վրա կատարվող ծախսումները, ինչպես նաև սարքավորման, մեքենաների, մեխանիզմների, սարքերի և աշխատանքի այլ գործիքների արժեքը: Կապիտալ ներդրումների կառուցվածքի ճիշտ որոշումը մեծ նշանակություն ունի շինարարական ծրագիրը սարքավորումների, շինանյութերի արտադրության, աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքների հետ կապակցելու համար և այլն:

Կապիտալ ներդրումների պլանի մեջ, ինչպես նշվեց, կենտրոնական տեղ է գրավում արտադրական կառուցարկունների և հիմնական ֆոնդերի գործարկման պլանը: Այն կապակցում է կապիտալ ներդրումների պլանն արտադրանքի թողարկման սճի առաջադրանքների հետ:

Արտադրական կարողությունները գործարկելու առաջադրանքները որոշվում են ելնելով արտադրանքի համապատասխան տեսակների արտադրության ծրագրից և շինմոնտաժային աշխատանքների ժամկետները կրճատելու հնարավորություններին:

Արտադրութեան աճը ձեռք է բերվում ամենից առնչ գոյութիւնն ունեցող կարողութիւններէ օգտագործումը բարելավելու և գործող ձեւնարկութիւններէ կարողութիւններէ աճման միջոցով:

Գործող ձեւնարկութիւններէ ներքին բոլոր ղեկավարները մոբիլիզացնելուց հետո միայն որոշվում է նոր օբյեկտներէ կառուցման, գործող ձեւնարկութիւններէ ընդլայնման և վերակառուցման անհրաժեշտութիւնը: Ուստի ներարտադրական ղեկավարներէ հայտաբերումը պլանավորման կարևորագույն խնդիրներէց մեկն է, որը որոշվում է ինչպես պլանը կազմելու, այնպես էլ այն կատարելու ընթացքում: «Փորձը ցույց է տալիս,— ասել է Ն. Ս. Խրուշչովը,— որ շատ ձեւնարկութիւններ կարող են առանց լրացուցիչ մեծ կապիտալ ներդրումներէ զգալիորեն ավելացնել, իսկ որոշ ձեւնարկութիւններ՝ կրկնապատկել և նույնիսկ եռապատկել արտադրանքի թողարկումը: Անհրաժեշտ է միայն ինչպես հարկն է ձեւնամուխ լինել այդ գործին՝ կատարել սարքավորման մոդեռնացում, բարելավել արտադրութեան ու աշխատանքի կազմակերպումը, ավելի լայնորեն օգտագործել մի այնպիսի հզոր ուժ, ինչպիսին է արտադրութեան առաջավորների փորձը, գյուտարարների և ռացիոնալիզատորների ստեղծագործական նախաձեռնութիւնը»¹:

Կապիտալ ներդրումներէ հաշվին հիմնական ֆոնդերի և արտադրական կարողութիւններէ գործարկման պլանը սրբունակում է ժողովրդական տնտեսութեան հիմնական ճշուղերի արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրութեան ցուցանիշները (բնաձևով), հիմնական ֆոնդերի գործարկումը (դրամական գնահատութեամբ), բնակելի տների ընդհանուր տարածութեան, բնակարանների բնակելի տարածութեան գործարկումը և դրանց քանակը: Տարեկան պլաններում և տիտղոսային ցուցակներում արտադրական կարողութիւններէ և հիմնական ֆոնդերի գործարկման առաջադրանքները բաժանվում են ըստ եռամսյակներէ:

¹ Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին, Հայպետհրատ, 1956, էջ 77:

Կապիտալ ներդրումների պլանները մշակելու և հաստատելու կարգը: Մինչև արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը ձեռնարկությունների և կառույցների աշխատանքների պլանավորումն իրագործվում էր ըստ միևնույնությունների և գերատեսչությունների: Այժմ պլանավորման մեջ ժանրության կենտրոնը տեղափոխվել է տեղերը՝ ձեռնարկությունները և կառույցները, տնտեսական շրջանները և միութենական ռեսուրսները:

Պետական ժողովրդատնտեսական պլանը մշակվում է ձեռնարկությունների, կառույցների, շինարարական կազմակերպությունների, ժողտնտխորհների, աշխատավորների դեպուտատների տեղական սովետների, միութենական ռեսուրսների, ՍՍՌՄ միևնույնությունների ու գերատեսչությունների պլանների հիման վրա: Այդ պլանները կազմակերպելու գործին ակտիվորեն մասնակցում են ձեռնարկությունների և կառույցների կոլեկտիվները, պարտիական, սովետական և արհմիութենական օրգանները: Դա նախադրյալներ է ստեղծում պլաններում առավել լրիվ հաշվի առնելու տեղական պայմանները և աշխատավորության լայն մասսաների առաջարկությունները, որոնք բացահայտում են արտադրության աճի և կաւ արելագործման լրացուցիչ ռեզերվները:

Պլանների մշակումը ներքևից իրագործվում է ելնելով ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր հեռանկարից և կոնտրոլ թվերից:

Ժողովրդական տնտեսության զարգացման կոնտրոլ թվերն իրենց հերթին պարտիական, սովետական և տնտեսական օրգանների մեծ և բազմակողմանի գործունեության արդյունք են, աշխատավոր մասսաների ստեղծագործական վիթխարի աշխատանքի արդյունքը:

Տնտեսական շինարարության խնդիրները հաջող լուծելու համար մեծ նշանակություն ունի ժողովրդատնտեսական պլանների կազմում կապիտալ ներդրումների տարեկան և հեռանկարային պլանները մշակելու և հաստատելու սահմանված կարգի պահպանումը:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր հեռանկարի ու կոնտրոլ թվերի և պարտիայի կենտրոնական կոմիտեի ու ՍՍՌՄ Մինիստրների սովետի որոշումների համապատասխան, ձեռնարկություններն ու կառույցները կազմում են կապիտալ ներդրումների պլանների նախագծեր: Այդ նախագծերը, նայած ենթակայության, ներկայացվում են ժողտնտխորհներին, աշխատավորների դեպուտատների տեղական սովետներին, մինիստրություններին ու գերատեսչություններին: Նրանք իրադրծում են դրանց փոխադարձ կապակցումը և, հաշվի առնելով մյուս տնտեսական շրջանների ու տնտեսության ճյուղերի հետ ունեցած ուղղակի կապերը, մշակում են ամփոփիչ պլանների նախագծեր: Ամփոփիչ պլանները ներկայացվում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետներին:

Ելնելով ժողտնտխորհների, աշխատավորների դեպուտատների տեղական սովետների, ռեսպուբլիկական մինիստրությունների ու գերատեսչությունների մշակած պլանների նախագծերից, միութենական ռեսպուբլիկաների պետականները կազմում են յուրաքանչյուր ռեսպուբլիկայի կապիտալ ներդրումների պլանների նախագիծը, որոնք քննարկվում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետներում և ներկայացվում են համամիութենական պլանային օրգաններին:

Միութենական ռեսպուբլիկաների և ընդհանուր-միութենական մինիստրությունների ու գերատեսչությունների պլանների նախագծերի հիման վրա ՍՍՌՄ պետպլանը և ՍՍՌՄ պետտնտխորհը մշակում են ժողովրդական տնտեսության զարգացման միասնական պլանի նախագիծ: Ընդ որում ըստուգվում է դրանց համապատասխանությունը կոնտրոլ թվերին, ապահովվում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համամասնական զարգացումը ու տնտեսական շրջանների պլանների փախադարձ կապակցությունը, անհրաժեշտ ուղղումներ են մտցվում ռեսպուբլիկաների, մինիստրությունների ու գերատեսչությունների պլանների նախագծերում:

Միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները, ՍՍՌՄ պետտնտխորհը և ՍՍՌՄ պետպլանը ժողովրդական տնտեսության զարգացման պլանները կազմելու ժամանակ հաշվի են առնում խոշոր տնտեսական շրջանների կոորդինացման ու պլանավորման խորհուրդների առաջարկությունները:

Կապիտալ ներդրումների պետական պլանը հաստատելուց հետո, միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները պլանային առաջադրանքներ են սահմանում ժողտնտխորհներին, ռեսպուբլիկական մինիստրություններին, գերատեսչություններին և աշխատավորների դեպուտատների տեղական սովետներին, որոնք իրենց հերթին սահմանում են ենթակա ձեռնարկությունների, կառույցների, տնտեսական և այլ կազմակերպությունների պլանային առաջադրանքները: Նման կարգով միութենական մինիստրությունները և գերատեսչությունները պլանային առաջադրանքներ են սահմանում իրենց ենթակա կազմակերպություններին:

Այդպիսի կարգն ապահովում է աշխատավորների լայն մասսաների, տեղական պարտիական, սովետական և տնտեսական կազմակերպությունների ներգրավումը կապիտալ ներդրումների պլանների մշակման և քննարկման գործին:

Ժողովրդական տնտեսության զարգացման հաստատված պլանները պետական օրենքի ուժ ունեն:

Տեխնիկական առաջադիմության հիման վրա սոցիալիստական էկոնոմիկայի բուռն զարգացումը պահանջում է, որ պլանները կատարելագործվեն իրենց կատարման պրոցեսում: Դրանց մեջ պետք է մտցվեն այն բոլոր նորը, առաջադիմականը, որ ծնում է կյանքը, առաջավոր փորձը և թույլ է տալիս իրագործել պլանի առաջադրած խնդիրներն առավել կարճ ժամկետներում և նվազագույն ծախսումներով:

ՍՄԿՊ ծրագրում ասվում է, որ «ներքին ռեզերվները մոբիլիզացնելու, կապիտալ ներդրումները, արտադրական ֆոնդերը և ֆինանսական միջոցները ավելի արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է ընդլայնել ձեռնարկությունների օպերատիվ ինքնուրույնությունը և նախաձեռնությունը պետական պլանային առաջադրանքների հիման վրա»¹: Ներկայումս միովթենական ռեսպուբլիկաների մինիստրերների սովետներին, ժողտնտխորհներին, մինիստրություններին, գերատեսչություններին, զխավոր վարչություններին, ձեռնարկությունների և կառույցների ղեկավարներին տնտեսությունը ղեկավարելու լայն իրավունքներ են տրվել, որը թույլ է տալիս առավել լրիվ հայտաբերել և օգտագործել ռեզերվները, անհրաժեշտ ճկունության հասնել կապիտալ ներդրումների ուղղությունը որոշելու գործում, և միևնույն ժամանակ բարձրացնում է ժողովրդատնտեսական պլանը կատարելու պատասխանատվությունը:

Պլանի կատարման ընթացքում, երբ առաջանում է անհրաժեշտություն, միովթենական ռեսպուբլիկաների մինիստրերների սովետները, ՍՍՌՄ պետպլանի համաձայնությամբ, կարող են ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ճյու-

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 510:

ղերի մեջ վերաբաշխել ժողովրդատնտեսական պլանում նախատեսված կապիտալ ներդրումները (բացի նրանցից, որոնք սահմանվել են արդյունաբերության առաջատար ճյուղերի՝ սև ու գունավոր մետալուրգիայի, նավթի ու գազի, ածխի, քիմիական արդյունաբերության ու էլեկտրակայանների համար): Այդ ճյուղերի կապիտալ ներդրումների վերաբաշխումը թույլատրվում է յուրաքանչյուր առանձին դեպքում միայն ՍՍՄՄ Մինիստրների սովետի թույլտվությամբ:

Ժողտնտխորհները, միութենական ռեսպուբլիկաների պետականների համաձայնությամբ, իրավունք ունեն տնտեսական-վարչական շրջանի արդյունաբերության ճյուղերի միջև վերաբաշխել պլանով հաստատված կապիտալ ներդրումները (բացառությամբ առաջատար ճյուղերի կապիտալ ներդրումների), առանց արտադրական կարողությունների և բնակելի տարածության գործարկման առաջադրանքները պակասեցնելու:

Դրամական միջոցներով մաներելու համար կազմվում են ռեզերվներ: Ռեզերվներն օգտագործվում են որպես արդյունաբերության ճյուղերի և առանձին կառույցների միջև կապիտալ ներդրումները վերաբաշխելու ձևերից մեկը: Սակայն ռեզերվից ստացած միջոցները կարող են օգտագործվել ժողովրդական տնտեսության ճյուղերի միջև կապիտալ ներդրումների վերաբաշխման այն կարգը պահպանելու դեպքում միայն, որի մասին խոսվեց վերևում:

Միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետներին իրավունք է տրված իրենց արամագորության տակ թողնել կապիտալ ներդրումների ռեզերվ՝ առանց դրա շարժման ամսականի կազմի: Ժողտնտխորհները, ՍՍՄՄ մինիստրությունները և դերատեսչությունները կարող են իրենց տրամագործության տակ թողնել միջոցների ռեզերվներ տարվա համար բաց թողնված ընդհանուր գումարի 5 տոկոսի շարժում, առանց փոփոխելու կապիտալ ներդրումների ծավալները: Այդպիսի ռեզերվներ կազմելու իրավունք է վերապահված նաև միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկաների մինիստրություններին ու գերատեսչություններին, աշխատավորների դեպուտատներ-

րի տեղական սովետների գործարկումների վարչութիւններին (բաժիններին):

Կառուցվող և գործող ձեռնարկութիւնների դիրեկտորները կարող են վերաբաշխել հատկացումները պլանի մեջ մտցված շինարարութեան առանձին օբյեկտների միջև, պայմանով, եթե նոր կարողութիւնների ծավալները և գործարկման ժամկետները չեն փոփոխվում:

Կոմունիստական պարտիան և սովետական կառավարութիւնը պահանջում են կապիտալ ներդրումների համար նախատեսված նյութական ու ֆինանսական ռեսուրսները ծախսելիս պահպանել խստագույն կարգապահութիւն:

«Կոմունիզմի հաջող կառուցման անհրաժեշտ պայմանն է,— ասվում է ՍՄԿՊ ծրագրի մեջ,— կարգապահութեան հաստատ ու հետևողական պահպանումը, ամենօրյա վերահսկողութիւնը, տնտեսական կյանքում տեղայնութեան և գերատեսչականութեան տարրերի վճռական հաղթահարումը»¹:

Այն ռեսուրսները, որոնք առանձնացվել են տնտեսութեան առաջատար ճյուղերի զարգացման համար, չի կարելի օգտագործել զանազան տեսակի տեղական կարիքների, պլանով չնախատեսված, երկրորդական նշանակութիւն ունեցող օբյեկտների շինարարութեան վրա: Տեղայնութիւնը լուրջ վնաս է հասցնում համապետական շահերին, խանգարում է նոր ձեռնարկութիւնների շինարարութեան և գործող ձեռնարկութիւնների վերակառուցման ճիշտ, տնտեսապես հիմնավորված շրջանների ու կետերի ընտրութեանը, արտագրութեան առավել ռացիոնալ մասնագիտացման ու կոոպերացման զարգացմանը, բնական հարստութիւնների, աշխատանքային ու նյութական ռեսուրսների լավագույն օգտագործմանը: Այդ բոլորը կարող է հանգեցնել ժողովրդական տնտեսութեան առաջատար ճյուղերի աճման տեմպերի դանդաղեցմանը, անավարտ շինարարութեան ծավալի և շտեղակայված սարքավորման պաշարների ավելացմանը: Արտագրական նշանակութեան օբյեկտների համար նախատեսված

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 509:

միջոցների հանձնումը շինարարության ուրիշ տեղակների առաջ է բերում արտադրական կարողությունների աճման առաջադրանքների թերակատարում: Բնակարանային և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության համար առանձնացված միջոցների ոչ նպատակային օգտագործումը իր հերթին դառնում է աշխատավորների նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի նախատեսված աճի ապահովման առաջադրանքները շկատարելու պատճառներից մեկը:

Պետական կարգապահության խիստ պահպանումը, ամեն տեսակի տեղայնական ու գերատեսչական տեղեկանքների առաջն առնելը, կապիտալ ներդրումների ճիշտ օգտագործման սխտեմատիկ վերահսկողությունը սլաքտիական, սովետական և տնտեսական բոլոր կազմակերպությունների կարևորագույն խնդիրներից մեկն է: «Միջոցների ու նյութերի ճիշտ օգտագործումը,— ասել է Ն. Ս. Խրուշչովը,— պետք է լինի արդյունաբերության և շինարարական կազմակերպությունների բոլոր աշխատողների քաղաքական հասունության, կոմունիստական գիտակցականության ստուգման էտալոնը»¹:

2. ԿՍՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ:

Տիրոջսային ցուցակների նշանակությունը: Կառուցվող և վերակառուցվող բոլոր օբյեկտները, նայած նշանակությանն ու նախահաշվային արժեքին, անվանական կարգով մտցվում են ժողովրդական տնտեսության պարզացման ՍՍՌՄ, միութենական ռեսպուբլիկանների, տնտեսական շրջանների, միջնիսարությունների, գերատեսչությունների, աշխատավորների ղեկուսատանների տեղական սովետների գործկոմների պլանների մեջ: Ընդ որում միջև նոր ձևոնարկությունների ու կառույցների շինարարության սկիզբը պետք է ավարտված լինի նախապեսային փաստաթղթերի մշակումը, կատարված լինեն շրջանային շինարարական բաղա ստեղծելու անհրաժեշտ

¹ «Պրավդա», 1961 թ. հունիսի 25:

նախապատրաստական աշխատանքները, շինարարությունը էլեկտրաէներգիայով, ջրով ապահովելու աշխատանքը, կառուցված լինեն մերձատար ճանապարհները, լուծված լինեն նյութերով և սարքավորումներով ապահովելու հարցերը, ինչպես նաև իրականացված լինեն այլ միջոցառումներ, որոնք հնարավորություն են տալիս շինարարության տեղության նորմաներով սահմանված ժամկետներում ավարտել աշխատանքը: Միայն այս պարտադիր պայմանները կատարելու դեպքում կառույցները կարող են մտցվել պլանի մեջ: Պլաններում բոլոր կառույցների կապիտալ ներդրումների և շինմոնտաժային աշխատանքների ծավալը որոշվում է շինարարության ամբողջ ժամանակաշրջանի համար, բաշխելով այն ըստ տարիների:

Կառուցվող (վերակառուցվող) օբյեկտների՝ կապիտալ ներդրումների պլանների մեջ մտնող ցանկերը կոչվում են տիտղոսային ցուցակներ: Տիտղոսային ցուցակներում նշվում են՝ կառույցների անունը և կառուցման տեղը, կառուցման ժամկետները, նախագծային կարողութայունը, նախահաշվային արժեքը, կապիտալ ներդրումների ծավալը և արտադրական կարողութայունների ու հիմնական ֆոնդերի գործարկման շափը՝ պլանավորվող ժամանակաշրջանի համար, բաժանված ըստ տարիների:

ՍՄՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլանների մեջ անվանապես մտցվում են հատուկ կարևորութայուն ունեցող կառույցները:

Այսպես, հատկապես կարևոր կառույցների ցանկի մեջ 1962 թ. մտցվել է 478 ձեռնարկություններ ու կառուցումներ: Այդ կառույցների թվից 1962 թվականին կգործարկվեն նոր կարողութայուններ. շուգունի ձուլման կարողութայունների 100 %, պողպատի ձուլման՝ 92 %, գլանվածքի արտադրության՝ 96 %, նավթի նախնական վերամշակման՝ 100 %, ցեմենտի արտադրության՝ 86 %:

Հատուկ կարևորություն ունեցող կառույցների թվին են դասվում սև մետալուրգիայի 45 ձեռնարկություն, այդ թվում՝ Նիժնի-Տազիլի, Մազնիտագորսկու, Օրսկ-Խալիլոյի և Կուզնեցկի մետալուրգիական կոմբինատների խոշոր օբյեկտները. 50 էլեկտրակայան, դրանց թվում՝ Նազարովսկու, Տոմ-Ուսինսկու, Զմիկսկի, Ստարո-Բեշևսկի ջերմաէլեկտրակենտրոնները,

Բրատսկի, Կրասնոյարսկի, Սարատովի հիդրոէլեկտրակայանները. քիմիական արդյունաբերության 83 կոմբինատ ու գործարան. մեքենաշինության, թեթև, սննդի արդյունաբերության և այլ ճյուղերի շատ ձեռնարկություններ:

Հատուկ կարևորություն ունեցող կառույցների ընդհանուր թվից ավելի քան երեք քառորդը բաժին է ընկնում վերակառուցվող և ընդարձակվող ձեռնարկություններին:

Հատուկ կարևորություն ունեցող կառույցների ցանկը ընդգրկում է տնտեսության բոլոր ճյուղերը ու կարևորագույն տնտեսական շրջանները և կազմում է կապիտալ ներդրումների ամբողջ պլանի ոնց որ հիմքը, կամախքը: Հատուկ կարևորություն ունեցող կառույցները նյութերով, կոնստրուկցիաներով, մեխանիզմներով, նախագծային փաստաթղթերով, տեխնոլոգիական սարքավորումով և ֆինանսավորումով ապահովելու ու օգտվելու գործում, սովորական կառույցների համեմատությամբ, ունեն արտոնություններ:

Մնացած կառույցների համար ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլաններում կապիտալ ներդրումները առանձնացվում են ընդհանուր գումարով՝ ըստ միութենական ռեսուրսների, ՍՍՌՄ մինիստրությունների ու գերատեսչությունների, որոնք մշակում են իրենց ենթակա կառույցների տիտղոսային ցուցակները՝ ընդհանուր գումարների սահմաններում: Ընդ որում 25 միլիոն ռուբլի և ավելի նախահաշվային արժեքի նսր սկսվող շինարարությունը, արդյունաբերական ձեռնարկությունների և այլ օբյեկտների վերակառուցումը և ընդլայնումը տիտղոսային ցուցակների մեջ կարող են մտցվել միայն ՍՍՌՄ Մինիստրների սովետի որոշումով. 1,5 միլիոնից մինչև 2,5 մլն ռուբլու նախահաշվային արժեք ունեցողներինը՝ միութենական ռեսուրսների մինիստրների սովետների, ՍՍՌՄ մինիստրությունների (գերատեսչությունների), ՍՍՌՄ պետպլանի հետ համաձայնեցրած որոշումով. 1,5 մլն ռուբլուց ցածր նախահաշվային արժեք ունեցող օբյեկտները՝ միութենական ռեսուրսների մինիստրների սովետների, ՍՍՌՄ մինիստրությունների և վե-

րատեսչությունների սահմանված կարգով: Այսպես օրինակ, ՌՄՖՍՌ Մինիստրների սովետը սահմանել է, որ 0,5 մլն մինչև 1,5 մլն ռուբլի նախահաշվային արժեք ունեցող արտադրական օբյեկտների շինարարությունը ժողտնտիստրհաները իրականացվում են ԺՏԳԽ համաձայնություններ, իսկ մինիստրություններն ու գերատեսչությունները՝ ՌՄՖՍՌ պետպլանի համաձայնությամբ:

Փոխանցվող կառույցների տիրոջոսային ցուցակները, եթև դրանց նախահաշվային արժեքը գերազանցում է 2,5 մլն ռուբլուց, հաստատում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները, ՍՍՌՄ մինիստրությունները և գերատեսչությունները, համաձայնեցնելով ՍՍՌՄ պետպլանի հետ:

Տիրոջոսային ցուցակները կազմելը մի վճռական ստադիա է կապիտալ ներդրումների առավել արդյունավետ ուղղությունները որոշելու և շինարարության ժամկետները կրճատելու միջոցառումներ մշակելու համար: Դա պարտիական, սովետական և տնտեսական կազմակերպությունների առաջ խնդիր է դնում՝ կատարելագործել տիրոջոսային ցուցակները կազմելու պրակտիկան, բազմակողմանի հիմնավորել դրանք:

Տիրոջոսային ցուցակները կազմելու ժամանակ պետք է ելնել կապիտալ ներդրումներն առավելազույն չափով համակենտրոնացնելու, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները գործարկվելիք ու կարևորագույն կառույցներում և օբյեկտներում կենտրոնացնելու անհրաժեշտությունից: Միջոցների համակենտրոնացումը արտադրական կարողությունների և բնակելի տարածության գործարկումն արագացնելու, կապիտալ ներդրումներն ավելի արդյունավետ օգտագործելու կարևոր պայման է հանդիսանում:

Միջոցների համակենտրոնացումը կարևորագույն օբյեկտներում շինարարական կազմակերպություններին պարտավորեցնում է լիովին և ավելի արտադրողաբար օգտագործել իրենց արտադրական կարողությունները, մեքենաշինական գործարաններին՝ արագացնել սարքավորման պատրաստումը

և մատակարարումը, մատակարարման օրգաններին՝ կու-
ռուցյաները ժամանակին ապահովել անհրաժեշտ նյութական
ռեսուրսներով:

Կոմունիստական պարտիան վճռական պայքար է մղում
կապիտալ ներդրումների փոշիացման դեմ, որը հանգեցնում
է հիմնական ֆոնդերի գործարկումը դանդաղեցնելուն և անա-
վարտ շինարարությունն ավելացնելուն: Այդ թերություն հաղ-
թահարումը կնպաստի շինարարության տեմպերի հետագա
բարձրացման համար նախադրյալներ ստեղծելուն:

Շինարարության տեղության նորմաները: Տիտղոսային ցու-
ցակները ճիշտ կազմելու համար կարևոր նշանակություն
ունեն շինարարության տեղության տեխնիկապես հիմնա-
վորված նորմաները: Պլանավորման հիմքում դրված՝ շինա-
րարության տեղության նորմաների պահպանումը թույլ է
տալիս ճիշտ հարաբերակցություններ սահմանել՝ կապիտալ
ներդրումների ծավալի, նոր օբյեկտների գործարկման ծավա-
լի և անավարտ շինարարության ծավալի միջև: Իսկ դա իր
հերթին հիմնական ֆոնդերի գործարկման ժամկետների կր-
ճատման պայման է հանդիսանում:

Շինարարության տեղության նորմաները անհրաժեշտ են.
ա) արտադրական կարողությունների գործարկման և բնակե-
լի ու կուլտուր-կենցաղային նշանակության շինքերի շահա-
գործման հանձնելու ժամկետները. բ) կապիտալ ներդրում-
ների պլանները և դրանց բաշխումն ըստ շինարարության
տարիների, գ) շինարարական կողմակերպությունների ար-
տադրական ծրագիրը, դ) նյութատեխնիկական մատակա-
րարման պլանները որոշելու համար: Շինարարության տեղ-
ության նորմաները կարևոր նշանակություն ունեն նաև նա-
խագծային-նախահաշվային փաստաթղթերի մշակման, այս
թվում՝ շինարարության կազմակերպման նախագծերի և աշ-
խատանքների կատարման նախագծերի մշակման համար: Շի-
նարարության տեղության նորմաների մեջ բնոգրվվում է շի-
նարարության ամբողջ ժամանակաշրջանը, այսինքն՝ նախա-
պատրաստական աշխատանքների սկզբից մինչև օբյեկտի
լրիվ գործարկումը, այն աշխատանքների լրիվ կատարմամբ,

որոնք նախատեսված են նախագծերով կամ մտնում են գործարկվելիք կոմպլեքսի կազմի մեջ¹:

Ձեռնարկությունների, շենքերի և կառուցումների շինարարության տեղումնային նորմաները մշակվել են և պետք է սխտեմատիկաբար կատարելագործվեն, հաշվի առնելով շինարարական առաջավոր կազմակերպությունների նվաճումները: Այդ նորմաները նախատեսում են շինարարական ու մոնտաժային աշխատանքների համատեղ կատարում և շինարարության ինդուստրիալ մեթոդների լայն կիրառում:

Շինարարության տեղումնային նորմաների մեջ բերվում է կապիտալ ներդրումների մոտավոր բաշխումն ըստ շինարարության տարիների, տոկոսներով՝ օբյեկտի նախահաշվային արժեքի նկատմամբ: Տնտեսության որոշ ճյուղերի (ածխարդյունաբերություն, էլեկտրակայաններ, շինանյութերի արդյունաբերություն և այլն) նորմաները հաստատվում են ձեռնարկության համար ամբողջությամբ վերցրած (ածխահոր, ջերմաէլեկտրակենտրոն, գործարան), իսկ մյուսների (մետալուրգիական, նավթի, մեքենաշինական արդյունաբերություն և այլն) նորմաները սահմանվում են ըստ օբյեկտների խմբերի, որոնք իրենցից ներկայացնում են գործարկվող կոմպլեքսներ:

Որպես օրինակ բերվում են որոշ օբյեկտների շինարարության տեղումնային ներկայումս գործող նորմաները և նախահաշվային արժեքի բաշխումն ըստ շինարարության տարիների (տես էջ 177):

¹ Նորմաները չեն տարածվում գործող ձեռնարկություններում շենքերի, ցեխերի ու շինությունների վերակառուցման ու ընդարձակման վրա: Այդ դեպքում շինարարության տեղումնային սահմանում են ժողտնտխորհները, մինիստրությունները և գերատեսչությունները՝ շինարարության կազմակերպման նախագծերի կամ աշխատանքների կատարման նախագծերի հիման վրա:

Գործարկվելիք կոմպլեքսի մեջ մտցվում են հիմնական օբյեկտի, ինչպես նաև օժանդակ այն օբյեկտների ու կառուցումների շինարարության և սարքավորումների մոնտաժման աշխատանքները, որոնց գործարկումն անհրաժեշտ է հիմնական օբյեկտի նորմալ աշխատանքի համար:

Շինարարության ակտիւքան նորմաներ¹

Օբյեկտների անվանումը	Շինարարության ակտիւքան նորման, ամիսներով	Կապիտալ ներդրումների օրինակելի բաշխումն ըստ շինարարութայան տարիների, տոկոսներով՝ օբյեկտի նախահաշվային արժեքի համեմատութայամբ			
		առաջին տարի	վերջին տարի	երկրորդ տարի	վերջին տարի
Դոմնային վառարաններ № 2, 3, 4 և այլն, յուրաքանչյուրը 1719—2000 խմ ծավալով	11	100 100			
Դոմնային վառարաններ № 2, 3, 4 և այլն՝ 1033 խմ ծավալով	9	100 100			
Մարտենյան վառարաններ № 1 և 2, յուրաքանչյուրը 500—600 տ տարողութայամբ	17	85 70	15 30		
Մարտենյան վառարաններ № 3 և 4, յուրաքանչյուրը 500—600 տ տարողութայամբ	11	100 100			
Ածխի բաց հանքեր՝ տարեկան 1500 թագ տ կարողութայամբ	28	25 22	45 45	30 33	
Երկու տեխնոլոգիական դիժ ունեցող ցեմենտի գործարան, 4,5 մ × 170 մ ⊗ վառարաններով	34	25 25	45 50	30 25	
Չորս տեխնոլոգիական դիժ ունեցող ցեմենտի գործարան, 4,5 մ × 170 մ ⊙ վառարաններով	46	25 25	30 30	35 35	10 10
Երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան, տարեկան 20 նագ խմ երկաթբետոնե շինվածքների կարողութայամբ	13	90 90	10 10		
Մինչև 150 կմ երկարութայամբ երկաթուղի, հարթավայր ուղիների դեպքում	21	50 50	50 50		
Հրուշակեղենի ֆարրիկա, տարեկան 10—20 նագ տ կարողութայամբ	24	45 50	55 50		
Բնակելի 5 հարկանի տուն մինչև 15 նագ խմ ծավալով, խոշոր բլոկներից	7	100 100			

¹ Հայտարարում նշված են շինմոնտաժային աշխատանքների արժեքին վերաբերող տոկոսները, համարելում՝ կապիտալ ներդրումներին վերաբերող տոկոսները:

Շինարարական առաջավոր կազմակերպությունների փորձը ցույց է տալիս, որ շինարարության տեղողության նորմաները կրճատելու մեծ հնարավորություններ կան: Մի շարք դոմնային վառարաններ, 9—11 ամսվա նորմայի դեպքում, կառուցվել են 5—8 ամսվա ընթացքում, դպրոցական շատ շենքեր, 4,5—9 ամսվա նորմայի դեպքում, կառուցվում են երեք ամսում:

Շինարարության տեղողության նորմաները հիմք են ծառայում օբյեկտի կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը տիտղոսային ցուցակներում ըստ շինարարության տարիների բաշխելու համար: Եթե կառուցման նորմաները հաստատվել են ձեռնարկության համար ամբողջությամբ և շինարարությունն սկսվելու ժամկետը համընկնում է օրացուցային տարվա սկզբի հետ, ապա տիտղոսային ցուցակով հատկացումների ընդհանուր գումարը պետք է մոտավորապես հավասար լինի ձեռնարկության նախահաշվային արժեքի այն տոկոսին, որն ընդունված է նորմաներով: Իսկ եթե շինարարության սկզբի ժամկետը չի համընկնում օրացուցային տարվա սկզբի հետ, ապա տիտղոսային ցուցակով տրվող հատկացումներն առաջին օրացուցային տարվա համար, որի ընթացքում սկսվում է շինարարությունը, կարող են համապատասխանաբար փոքրացվել:

Կուտակվածքի նորմաները շինարարության մեջ: Տիտղոսային ու ցուցակները մշակվելու համար կարևոր է նաև անհրաժեշտ անավարտ շինարարության ծավալի, այսինքն՝ արտագրական կուտակվածքի ճիշտ որոշումը:

«Շինարարության մեջ կուտակվածքը՝ գլխավորն է, ես կասեի նույնիսկ գլխավորներից գլխավորը: Յուրաքանչյուրին հասկանալի է, որ առանց նորմալ կուտակվածք ունենալու, չի կարելի ռիթմիկ շինարարական աշխատանք կատարել»¹, — ասել է Ն. Ս. Խրուշչովը 1954 թ.:

¹ Ն. Ս. Խրուշչով, Շինարարության ինդուստրիալ մեթոդների լայն արմատավորման, որակի բարելավման և ինքնարժեքի իջեցման մասին, Պետքաղհրատ, 1955, էջ 14 (ռուս.):

Շինարարության մեջ կուտակվածք է կոչվում՝ աշխատանքների այն ծավալը, որն անհրաժեշտ է կատարել պլանային ժամանկաշրջանի վերջին հաջորդ պլանային ժամանակաշրջանի փոխանցվող օբյեկտներում: Այսպիսով, կուտակվածքն իրենից ներկայացնում է պլանավորվող անավարտ շինարարություն: Կուտակվածք ստեղծելու համար պլաններում նախատեսվում է համապատասխան կապիտալ ներդրումներ, իսկ շինարարական կազմակերպությունների ծրագրի մեջ՝ շինմոնտաժային աշխատանքների ծավալ:

Իր ծավալով և կազմով կուտակվածքը պետք է ապահովի շինարարական արտադրության անընդհատությանը ոչ միայն պլանային հաջորդ տարում, այլև հետանկարային մի քանի տարվա ընթացքում, հաշվի առնելով դրա բնույթի, կապիտալ ներդրումների կառուցվածքի ու ուղղությունների փոփոխությունները՝ ըստ տնտեսության ճյուղերի ու տնտեսական շրջանների, ինչպես նաև աշխատանքների ծավալների ավելացումը: Դա անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ձեռնարկությունները, կառուցվածքները ու բնակելի տարածությունը պլանաչափորեն շահագործման հանձնելու, շինարարական արտադրության ուղիների կառուցման և շինարարական կազմակերպությունների կարողությունները ռացիոնալ օգտագործելու համար: Եթե անավարտ շինարարության ծավալը գերազանցում է կուտակվածքի նորման, ապա այն հանգեցնում է դրամական, նյութական ու այլ ռեսուրսները երկար ժամանակով սառեցմանը: Գործարկման պլանները չկատարելու դեպքում անավարտ շինարարությունը պլանային ժամանակաշրջանի վերջում իր ծավալով և կազմով կարող է չհամապատասխանել հաջորդ տարվա առաջադրանքներին: Ուստի կարևոր է ճիշտ որոշել անավարտ շինարարության ծավալն այն հաշվով, որ դրա նորման չգերազանցվի: Անհրաժեշտ է նաև յուրաքանչյուր պլանային նոր ժամանակաշրջանի սկզբում վերլուծել կուտակվածքի ծավալը և կազմը:

ՍՍՌՄ պետշինը, ՍՍՌՄ պետպլանի հետ համաձայնեցնելով, մշակել է 1961 թվականի հունվարի 1-ից կիրառում է «Բնակարանային շինարարության մեջ կուտակվածքը որոշելու նորմաները և ցուցումները»: Բացի

վերը նշված գործոններից, այդ նորմաներում հաշվի է առնված բնակարանային տարածության գործարկման պլանների բաշխումն՝ ըստ տարվա եռամսյակների:

Բնակարանային շինարարության մեջ կուտակվածքը պլանավորվում է նախահաշվային գներով և բնակելի տարածությունը (ԸՄ): Նախահաշվային գներով կուտակվածքի նորման որոշվում է սոկոսներով՝ պլանային հայրդ տարում բնակարանային շինարարության գործարկվող բոլոր օբյեկտների նախահաշվային արժեքի համեմատությամբ: Նախահաշվային գներով կուտակվածքի որոշումն անհրաժեշտ է կապիտալ ներդրումների պլանավորման և կուտակվածքի ստեղծման համար՝ հաշվի առնելով պլանային ժամանակաշրջանի վերջին օբյեկտների համապատասխանորեն պատրաստ լինելը: Բնակելի տարածության կուտակվածքի հաշվարկը անհրաժեշտ է այն օբյեկտների կազմը որոշելու համար, որոնք փոխանցվում են հաջորդ պլանային ժամանակաշրջանը:

Շինարարության մյուս ճյուղերի համար ներկայումս մշակվում են կուտակվածքի նորմաներ, որոնց մեջ հաշվի են առնվում արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության առանձնահատկությունները:

1962 թ. ավարտվել է հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների ու դետալների գործարանների, ցեմենտի արդյունաբերության ձեռնարկությունների, ոչ-հանքային շինությունների արդյունահանման ու վերամշակման, ծակոտկեն բետոններից, հրակայուն աղյուսից, գիպսից, պլաստմասսաներից և այլ հումքից պատրաստվող շինանյութերի և շինարարական դետալների արտադրության, շինարարական ինդուստրիայի կոմպլեքսային արտադրական բազաների, էլեկտրահաղորդման գծերի, ենթակայանների և էներգետիկայի մի քանի այլ կառուցվածքների նորմաների կազմումը: Սյու նորմաների հաստատումը և արմատավորումը կնպաստեն շինարարության պլանավորման, այդ թվում անավարտ աշխատանքների ծավալի կրճատման հետագա բարելավմանը:

Որոշ տնտեսագետների կատարած հաշվարկներով, կուտակվածքը ճիշտ պլանավորելու և շինարարության տևողության նորմաները պահպանելու գեպզում, անավարտ բնակարանային շինարարության ծավալը կարող է հասցվի տարվա ընթացքում գործարկվող բնակարանային տարածության նախահաշվային արժեքի մինչև 30 տոկոսի: Դա թույլ կտա անավարտ շինարարությունից ազատել մոտ 600 մլն ռուբլի: Էներգետիկ կառուցումների շինարարության մեջ կուտակվածքի նորմաների արմատավորումը թույլ կտա անավարտ շինարարության ծավալը պակասեցնել 420 մլն ռուբլով կամ 30 տոկոսով:

Այն ճյուղերում, որոնց համար նորմաներ չեն հաստատված, պրակտիկորեն կուտակվածքը որոշվում է ելնելով շինարարության ժամկետներից և նայած թե շինարարության տևողության նորմաների համապատասխան ինչպե՞ս է կատարվում կապիտալ ներդրումների բաշխումն ըստ տարիների:

Բերենք անավարտ շինարարությունն ըստ տարիների բաշխման օրինակ, ելնելով շինարարության տևողության գործող նորմաներից՝ (պարզության համար օրինակում ընդունված է, որ շինարարության սկիզբը համընկնում է օրացուցային տարվա սկզբի հետ)՝

Օբյեկտների անվանումը	Շինարարության տևողության ներման, ամիսներով	Անավարտ շին. ծավալը տարվա վերջին, տոկոսներով՝ նախահաշվային արժեքի համեմատությամբ			
		առաջին տարի	երկրորդ տարի	երրորդ տարի	վերջին տարի
Դոմնային վառարաններ № 2, 3, 4 և այլն, յուրաքանչյուրը 1719—2000 խմ ծավալով	11	—	—	—	—
Դոմնային վառարաններ № 2, 3, 4 և այլն՝ 1033 խմ ծավալով	9	—	—	—	—
Մարտենյան վառարաններ № 1 և 2, յուրաքանչյուրը 500—600 տ տարողությամբ	17	85 70	—	—	—
Մարտենյան վառարաններ № 3 և 4, յուրաքանչյուրը 500—600 տ տարողությամբ	11	—	—	—	—
Ածխի բայ հանքեր՝ տարեկան 1500 հազ տ կարողությամբ	28	25 22	70 67	—	—
Երկու տեխնոլոգիական գիծ ունեցող ցեմենտի գործարան, 4,5 մ × 170 մ (⊙) վառարաններով	34	25 25	70 75	—	—
Չորս տեխնոլոգիական գիծ ունեցող ցեմենտի գործարան, 4,5 մ × 170 մ (⊙) վառարաններով	46	25 25	55 55	90 90	—
ձավարովի երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան, տարեկան 20 հազար խմ երկաթբետոնե շինվածքների կարողությամբ	13	90 90	—	—	—
Երկաթուղի մինչև 150 կմ երկարությամբ, հարթավայր ուղղի 7 հայքում	21	50 50	—	—	—
Ճրուշակեղենի ֆաբրիկա, տարեկան 10—20 տ կարողությամբ	24	45 50	—	—	—

1 Հայտարարում նշված են այն տոկոսները, որոնք վերաբերում են շինմոնտաժային աշխատանքների արժեքին, համարիչում՝ կապիտալ ներդրումներին:

Տնտեսության ճյուղերի, տնտեսական շրջանների, միութենական ռեսպուբլիկաների և ամբողջ ժողովրդական տնտեսության պլանում ընդունված անավարտ շինարարության չափը առանձին ցույց չի տրվում: Այն կարելի է որոշել, ելնելով հետևյալ տվյալներից. պլանային ժամանակաշրջանի կապիտալ ներդրումների և այդ ժամանակաշրջանի սկզբի անավարտ շինարարության ծավալներից, որոնց ընդհանուր գումարից հանվում է գործարկման համար նախատեսված հիմնական ֆոնդերի արժեքը:

Տիտղոսային ցուցակները քննարկելու կարգը: Պլանավորման ընդհանուր սիստեմին համասպատասխան տիտղոսային ցուցակների նախագծերն անմիջականորեն կազմվում են ձեռնարկություններում և տնտեսական կազմակերպություններում, կապալային շինարարական կազմակերպությունների մասնակցությամբ: 1959 թվականից սկսած մտցվել է մի կարգ, ըստ որի շինարարության բոլոր օբյեկտների տիտղոսային ցուցակների նախագծերը, նայած նրանց կարևորությունը, քննարկում և հավանություն են տալիս ՍՄԿՊ շրջկոմները, քաղկոմները, մարզկոմները, երկրկոմները, միութենական ռեսպուբլիկաների կոմպարտիաների կենտկոմները և դրանից հետո միայն ներկայացվում են համասպատասխան կազմակերպությունների հաստատմանը:

Տիտղոսային ցուցակները քննարկումը պարտիական կազմակերպություններում պետք է ուղղված լինի կապիտալ ներդրումներն առավել արդյունավետ օգտագործելու և շինարարության ժամկետները կրճատելու անհրաժեշտության վերաբերյալ ՍՄԿՊ ծրագրի պահանջները իրականացնելու գործին: Դա միջոց է ծառայում նաև սովետական, տնտեսական և այլ կազմակերպությունների այն որոշ ղեկավարների դեռևս մինչև վերջը արմատախիլ չարված արատավոր պրակտիկան հաղթահարելու գործին, որոնք ելնելով տեղայնական շահերից ձգտում են պետական պլանների մեջ մտցնել նոր օբյեկտների շինարարություն, հաշվի չառնելով պետական նպատակահարմարությունը և դրանց նյութատեխնիկական ու ֆինանսական սպառնալիքները հնարավորությունները:

Պարտիական, սովետական և տնտեսական շատ կազմակերպություններ նախատեսել և հաջող կերպով իրագործում

են և կապիտալ ներդրումների պլանավորումն ու օգտագործումը բարելավելու միջոցառումնսլ:

»

Որպես օրինակ կարելի է բերել Դոնեցկի մարզում կատարված աշխատանքը: Անցյալ տարիներին այստեղ կապիտալ ներդրումների մեծ փոշիացում էր թույլ տրվել բազմաթիվ կառույցներում ու օբյեկտներում: Այդ պատճառով արդյունաբերական օբյեկտների շահագործման հանձնելու պլանները մի շարք տարիների ընթացքում չէին կատարվում: 1961 թ. կարողությունների գործարկման առաջադրանքը կատարվեց միայն 44 տոկոսով: 1961 թ. պլանով նախատեսված 117 օբյեկտից փաստորեն գործարկվեց ընդամենը 50 օբյեկտ: Փոխանցվող օբյեկտների թվում էին մետալուրգիական, լեռնային, մեքենաշինական և արդյունաբերության մի շարք այլ ճյուղերի կարևոր շատ կառույցներ: Պարտիական կազմակերպությունները ուշադիր ուսումնասիրեցին 1961 թ. տիտղոսային ցուցակները և պլանավորման մեջ բացահայտեցին մի շարք լուրջ թերություններ:

Ելնելով այդ վերլուծումից, 1962 թ. կապիտալ ներդրումների պլանում կրճատվեց այն օբյեկտների թիվը, որտեղ պետք է աշխատանքներ տարվեր (1961 թ. 513-ի փոխարեն, 1962 թ. մնաց 375-ը): Մեկ օբյեկտի վրա կատարվող կապիտալ ներդրումները միջին հաշվով ավելացան 36,6 տոկոսով:

Միջոցների փոշիացումը վերացնելու ու դրանք գործարկվելիք ու վրճարական օբյեկտներում համակենտրոնացնելու առաջարկությունները, ինչպես նաև այդ օբյեկտների տիտղոսային ցուցակները քննարկեց և հավանություն տվեց Ուկրաինայի կոմունիստական պարտիայի Դոնեցկի մարզային կոմիտեն:

Կառույցների տարեկան տիտղոսային ցուցակներն ըստ առանձին օբյեկտների և ծախսումների: Պետական պլանների կազմում հաստատված շինարարության տիտղոսային ցուցակներն իրենցից ներկայացնում են համապատասխան կառույցներում տվյալ սարվա համար սահմանված կապիտալ ներդրումների ծավալի և հիմնական ֆոնդերի գործարկման առաջադրանքներ: Դրանց հիման վրա մշակվում են կառույցների տարեկան տիտղոսային ցուցակներն ըստ առանձին օբյեկտների ու ծախսումների: Տիտղոսային ցուցակները կազմվելու ու քննարկվելու գործին մասնակցում են կապալային կազմակերպությունները, որովհետև տիտղոսային ցուցակները պարունակում են շինմոնտաժային աշխատանքնե-

րի ծավալի առաջադրանքներ, որոնք կատարվում են կապալային եղանակով: Այսպիսով, կառույցի տարեկան տիտղոսային ցուցական օրգանապես կապված է կապիտալ ներդրումների պլանի և շինարարական կազմակերպությունների աշխատանքի ծրագրի հետ:

Հատուկ կարևորություն ունեցող և ուրիշ կառույցների առանձին օբյեկտների ու ծախսումների տիտղոսային ցուցակները, եթե դրանց նախահաշվային արժեքը գերազանցում է 2,5 մլն ռուբլուց, հաստատում են ժողտնտխորհների, միջնխտրությունների ու գերատեսչությունների ղեկավարները: Մնացած կառույցների տարեկան տիտղոսային ցուցակները հաստատվում են միութենական ռեսպուբլիկաների միջխտրների սովետների, միջխտրությունների ու գերատեսչությունների, ժողտնտխորհների, աշխատավորների ղեկուսատաների տեղական սովետների գործկոմների սահմանած կարգով:

Առանձին օբյեկտների միջև տիտղոսային ցուցակներում կապիտալ ներդրումների բաշխումը պետք է կատարվի շինարարությունից տեղությունից նորմաներին ճիշտ համապատասխան: Ընդ որում անհրաժեշտ հատկացումներով առաջին հերթին և լիովին ապահովվում են գործարկվելիք օբյեկտները, նախատեսվում է նաև կուտակվածք: Այդպիսի կարգը թույլ է տալիս արագացնել կարողությունների գործարկումը, ապահովում է շինարարական կազմակերպությունների համաշափ աշխատանքը և կանխում միջոցների փոշիացումը: Նյութատեխնիկական ռեսուրսները նույնպես առաջին հերթին առանձնացվում են գործարկվելիք կառույցների փոխանցվող օբյեկտների շինարարությունն ավարտելու համար և միայն դրանից հետո՝ նոր օբյեկտներին:

Քննարկենք մետալուրգիական գործարանի ընդարձակման առանձին օբյեկտների տիտղոսային ցուցակը:

Մետալուրգիական գործարանի տարեկան տնտեսային ցուցակն ըստ առանձին օբյեկտների ու ծախսումների (օրինակ), հաշար բուրլիներով

Օբյեկտների ու ծախսումների անվանումը	1		2		3		4		5		6		7		Գործարանի ժամկետը
	Պրոդուկտների և ծախսումների անվանումը		Պրոդուկտների և ծախսումների անվանումը		Պրոդուկտների և ծախսումների անվանումը		Պրոդուկտների և ծախսումների անվանումը		Պրոդուկտների և ծախսումների անվանումը		Պրոդուկտների և ծախսումների անվանումը		Պրոդուկտների և ծախսումների անվանումը		
	Այդ թվում - սիմետրիկ	Ընդամենը	Այդ թվում - սիմետրիկ	Ընդամենը	Այդ թվում - սիմետրիկ	Ընդամենը	Այդ թվում - սիմետրիկ	Ընդամենը	Այդ թվում - սիմետրիկ	Ընդամենը	Այդ թվում - սիմետրիկ	Ընդամենը	Այդ թվում - սիմետրիկ	Ընդամենը	
I Արտադրված և ցանցային օբյեկտների շինարարություն															
1. մարտենյան ցեխի գազաֆիկացում	169,7	169,7	169,7	169,7	59,3	59,3	35,4	35,4	23,9	23,9	—	—	—	—	—
2. գազակարգավորիչ կայան	34,7	34,7	34,7	34,7	34,7	34,7	26,6	26,6	8,1	8,1	34,7	34,7	34,7	34,7	IV եռամսյակ
3. տնակազրկման ցեխի Ե450 և Ե750 հաստների էլեկտրահաղորդակների վերակառուցում	867,6	867,6	867,6	867,6	642,5	642,5	145,0	145,0	497,5	497,5	450,0	450,0	450,0	450,0	IV եռամսյակ
4. քերթադրված ցեխի № 2 հաստների մեքենայացում	340,2	340,2	340,2	340,2	321,0	321,0	136,0	136,0	185,0	185,0	340,2	340,2	340,2	340,2	III եռամսյակ
5. կյուֆերի պահեստ	178,3	178,3	178,3	178,3	45,0	45,0	42,0	42,0	—	—	—	—	—	—	—

1	2	3	4	5	6	7	8
6. Ճերձատար Երկաթուղի դեպի խարամի ԼՊակույտը	107,8	107,8	50,0	49,0	—	50,0	IV եռամսյակ
7. ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի ձեռքբերում	40,0	40,0	40,0	—	40,0	40,0	—
Հնդամանք	1738,3	1661,2	1220,2	431,0	754,5	914,9	—
II Բնակարանային շինարարություն							
1. Բնակելի տուն N 19	717,6	314,1	314,1	250,5	27,7	717,6	II եռամսյակ
2. Բնակելի տուն N 20	721,2	563,4	563,4	493,5	40,0	721,2	IV եռամսյակ
Հնդամանք	1438,8	877,5	877,5	744,0	67,7	1438,8	—
Բոլորը	3177,1	2538,7	2097,7	1178,0	822,2	2353,7	—

Աշխատանքների ընդհանուր ծավալից պլանով նախատեսվել է կապալային
 և դանակով կատարել 820 հազ. ուրբու շինման աշխատանքներ:

Տիտղոսային ցուցակից երևում է, որ նրա մեջ մտցրած օբյեկտների գծով պլանային տարվա սկզբին կատարվել է 638, 4 հաղար ուրբուռ աշխատանք (աշխատանքների արժեքը նախահաշվով՝ 3177,1 հաղ: ուրբի, հանած նախահաշվային լիմիտի մնացորդները, այսինքն՝ շկատարված աշխատանքների արժեքը 2538,7 հաղ. ուրբուռ շահով): Տարեկան 2097,7 հաղ. ուրբուռ կապիտալ ներդրումների ծավալի դեպքում, պլանավորվում է գործարկել 2353,7 հաղ. ուրբուռ հիմնական ֆոնդեր՝ գործարկվելիք և փոխանցվող օբյեկտներում միջոցները համակենտրոնացնելու հաշվին: Դրա հետևանքով անավարտ շինարարությունը տարվա վերջին կլինի սահմանափակ թվով օբյեկտներում և կկազմի համեմատաբար փոքր մեծություն (մարտենյան ցեխի գազաֆիկացումը՝ 60,3 հաղ. ուրբի, էլեկտրահաղորդակների վերակառուցումը՝ 200 հաղ. ուրբի, նյութերի պահեստը՝ 45 հաղար ուրբի):

Յ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Շինարարական ինդուստրիայի արտադրական ծրագիրը: ՄՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլաններում հաստատված արտադրական կարողությունների ու բնակելի տարածության գործարկման առաջադրանքները և շինմոնտաժային աշխատանքների ծավալները իրենցից ներկայացնում են շինարարական ինդուստրիայի արտադրական ծրագիրը: Այդ ծրագիրն անմիջականորեն բխում է կապիտալ ներդրումների պետական պլանից:

Ժողովրդական տնտեսության զարգացման պլաններում շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալից բացի, որոշվում են դրանց ծավալները հետևյալ առաջատար ճյուղերի գծով. սև ու գունավոր մետալուրգիա, քիմիական, նավթի, գազի և ածխի արդյունաբերություն, էլեկտրակառուցանք, գյուղատնտեսություն, Պլաններում առանձնացվում է նաև շինմոնտաժային աշխատանքների ծրագիր՝ մասնագիտացված համամիութենական միջնաստրուկտուրների ու գերատեսչությունների գծով: Տնտեսության մնացած ճյուղերի համար շինմոնտաժային աշխատանքների ծավալները սահմանում են միութենական ուսուցիչականների միջնաստրուկտուրների սովետները:

Ժողովրդական տնտեսության զարգացման պլաններում որոշվում են այն աշխատանքների ծավալները, որ որոշ միութենական ռեսպուբլիկաների շինարարական կազմակերպությունները կատարում են մյուս միութենական ռեսպուբլիկաների համար, ինչպես նաև այն աշխատանքների ծավալները, որ համամիութենական մինիստրությունները և գերատեսչությունները կատարում են միութենական ռեսպուբլիկաների համար և միութենական ռեսպուբլիկաները՝ ՍՍՌՄ մինիստրությունների և գերատեսչությունների համար: Հետևաբար, ժողովրդատնտեսական պլաններում իրենց արտահայտություն են գտնում շինարարության բնագավառի միջռեսպուբլիկական կապերը:

Միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները շինմոնտաժային աշխատանքների ծավալի առաջադրանքներ են սահմանում ժողտնտխորհների, միութենական ռեսպուբլիկաների շինարարական մինիստրությունների և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների գործկոմների համար:

Միութենական մինիստրությունների ու գերատեսչությունների, միութենական ռեսպուբլիկաների մինիստրությունների ու գերատեսչությունների, ժողտնտխորհների, աշխատավորների դեպուտատների տեղական սովետների գործկոմների, շինարարական գլխավոր վարչությունների ու տրեստների շինմոնտաժային աշխատանքների ծրագիրը կազմվում է այդ նույն կարգով: Ընդ որում շինարարական կազմակերպությունների ծրագրերում առանձնացվում է աշխատանքների այն ծավալը, որը կատարվում է կապալային եղանակով:

Այդ ամենն ապահովում է շինարարության պլանային առաջադրանքների կապը ոչ միայն ռեսպուբլիկաների, այլև տնտեսության ձյուղերի, տնտեսական շրջանների, իսկ այնուհետև շինարարական կազմակերպությունների միջև: Պլանավորման ժամանակ շինարարական ինդուստրիայի արտադրական ծրագիրը բաշխվում է բոլոր կատարողների գծով:

Հիմնական ֆոնդերի գործարկման և շինմոնտաժային աշխատանքների ծավալի առաջադրանքների համապատասխան

ժողովրդական տնտեսության զարգացման պլաններում նախատեսվում է անհրաժեշտ նյութական ու տեխնիկական ռեսուրսների՝ սարքավորումների, շինանյութերի, կոնստրուկցիաների, դետալների, կիսաֆաբրիկատների առանձնացում:

Ելնելով շինարարության սահմանված արտադրական ծրագրից, ժողովրդատնտեսական պլաններում որոշվում են շինարարական ինդուստրիայի զարգացման առաջադրանքներ միութենական ռեսուրսների, ՍՍՌՄ մինիստրությունների և գերատեսչությունների համար, որոնք իրենց հերթին դրանք հասցնում են շինարարական կազմակերպություններին: Այդ առաջադրանքների հիմնական նպատակը շինարարական կազմակերպությունների կարողություններն այնպիսի մակարդակի հասցնելն է, որն անհրաժեշտ է շինարարական ծրագրին ինչպես առաջիկա տարում, այնպես էլ մի շարք տարիների հեռանկարում բաղմակողմանի ու լիովին իրականացնելու համար:

Ներկայումս պետական պլաններում շինանյութերի արդյունաբերության և շինարարական ինդուստրիայի զարգացման համար կապիտալ ներդրումները հատկացվում են առանձին, հաշվելով դրանք որպես հատուկ ճյուղեր:

Մինչև արդյունաբերության ու շինարարության կառավարման վերակառուցումը, շինարարության արտադրական բազայի զարգացումը ղգալի շահով իրակառնացվում էր շինարարական կազմակերպությունների կազմում արտադրական ոչ մեծ ձեռնարկություններ ստեղծելու միջոցով՝ ելնելով առանձին կառույցների պահանջներից:

Պրակտիկան ցույց տվեց, որ միայն մեկ կառույցի կարիքները բավարարելու համար նախատեսված օժանդակ ձեռնարկությունների կարողությունը հաշվարկվում է աշխատանքների ամենից ավելի լայն ծավալման ժամանակաշրջանի պահանջների համաձայն, աշխատանքներ, որոնց տեղությունը սովորաբար կազմում է մեկ տարուց ոչ ավելի: Մնացած ժամանակամիջոցում օժանդակ ձեռնարկությունները, որպես կանոն, օգտագործվում են ոչ լրիվ կարողությամբ: Այդպիսի ձեռնարկությունների շահագործումը շատ թանկ է նստում, բարձրացնում է շինմոնտաժային աշխատանքների արժեքը: Առանձին շինարարական հրապարակներ սպասարկելու համար ստեղծված մանր օժանդակ ձեռնարկություններն առաջ են քերում մեծ կորուստներ՝ ինչպես արտադրանքի ինքնարժեքը բարձրացնե-

լու, այնպես էլ մյուս շինարարական հրապարակներում նորից նման կառուցումներ պատրաստելու անհրաժեշտության պատճառով:

Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը լայն հնարավորություններ տվեց խոշոր, բարձր մեքենայացված ձեռնարկություններ կազմակերպելու համար:

Սակայն մինչև այժմ ժողտնտխորհների, մարզգործկոմների, ռեսպուբլիկական և միութենական մինիստրությունների ու գերատեսչությունների ենթակա կապալային շինմոնտաժային զգալի թվով կազմակերպություններ ձգտում են ստեղծել «խրենց» արտադրական բազաները: Մանր գործարանների ու պոլիգոնների ստեղծման վրա միջոցների փոշիացումը դադարեցնելու, կոնստրուկցիաներով ու շինվածքներով երկրի կառույցների պահանջները լրիվ բավարարելու նպատակներով կապիտալ ներդրումներն արդյունավետ օգտագործելու համար, ներկայումս մշակվում է երկրում շինարարական կոնստրուկցիաների ու շինվածքների արդյունաբերության զարգացման միասնական պլան: Այդ պլանով կնախատեսվեն մասնագիտացնել ու կոոպերացնել ձեռնարկությունները, ստեղծել հավաքովի երկաթբետոնից ու այլ շինվածքներից տիպային կոնստրուկցիաների պատրաստման շրջանային ու միջշրջանային խոշոր գործարաններ:

Շինանյութեր, կոնստրուկցիաներ ու դետալներ արտագրող ձեռնարկությունների կառավարումը պետք է կենտրոնացվի, որպես կանոն, մեկ օրգանում:

Մի շարք շրջաններում արդեն սկսել են միասնական պլանների կազմումը: Օրինակ, Արևմտա-սիբիրյան խոշոր տնտեսական շրջանի նախադեբում նախատեսվում է միջշրջանային մատակարարումների համար օգտագործել Տոմսկու մարզի բարձրորակ ավազի անսպառ պաշարները: Ենթադրվում է նույն տեղի դժվարահալ կավերի հանքավայրերում ամբողջ Արևմտյան Սիբիրի համար կազմակերպել երեսպատման սալերի, բրուտախողովակների և հրակայուն այլ աղյուսների խոշոր արտադրություն: Ըստմանասիրվում է մի կետից կենտրոնացված կարգով ամբողջ շրջանի ատաղձագործական շինվածքների նախապատրաստվածքներ, փայտամշակման մնացուկներից դետալներ մատակարարելու հնարավորությունները:

Քննարկվում է Նովոսիբիրսկի մի շարք հավաքովի երկաթբետոնի ձեռնարկությունների վերակառուցման ու մոդեռնացման բազայի վրա լավ երևանաշինության, թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկությունների կառուցման համար նվազագույն ծախսեր կատարելով, տարեկան 1 մլն արտադրական հրապարակի կարողությամբ մասնագիտացված կոմբինատ ստեղծելու առաջարկությունը: Կեմերովոյի ժողտնտխորհում ենթադրվում է կազմակերպել մի մի հզոր ձեռնարկություն, որը մասնագիտացված լինի շինարարության համար գծային ծանր կոնստրուկցիաների արտադրության մեջ:

Ժողովրդատնտեսական պլաններում նախատեսվում է շինարարության մեջ մասնագիտացումը զարգացնելու առաջադրանքներ: Դրանք իրենց մեջ պարունակում են կապալային շինարարական ու մոնտաժային կազմակերպությունների մասնագիտացումն ընդլայնելու պլաններ, առանձին տեսակի ու կոմպլեքս աշխատանքների գծով մասնագիտացված կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների ծավալների ավելացում, ինչպես նաև տերիտորիալ շինարարական կազմակերպությունների սխտեմում, որտեղ այդ նպատակահարմար է, արդյունաբերության առաջատար ճյուղերի ձեռնարկությունների կառուցման և բնակարանային շինարարության ճյուղային մասնագիտացման զարգացում:

Պլաններում, բացի շինարարության արտադրական ծրագրից ու շինարարական ինդուստրիայի զարգացման առաջադրանքներից, նախատեսվում է տեխնիկական առաջադիմության միջոցառումների սխտեմ և սահմանվում են հիմնական օրակական սնտեսական ըուցանիշներ՝ աշխատանքի արտադրողականության աճ, աշխատողների թիվն ու լաբատուսվարձի ֆոնդը, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցում: Շինարարության տեխնիկատնտեսական ցուցանիշները բարելավելու համար մեծ նշանակություն ունեն պլաններում սահմանվող շինարարության արտադրական ֆոնդերի օգտագործման պրոգրեսիվ նորմաները: Դրանց վերաբերում են. ա) մասսայական ու աշխատատար աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման հիմնական ցուցանիշները, բ) շինարարական կարևորագույն մեքենաների օգտագործման նորմաները, գ) հիմնական շինությունների

ժախսման նորմաները: Այդ նորմաներն անհրաժեշտ են շինարարական կազմակերպությունների արտադրական կարողությունները որոշելու, շինմոնտաժային աշխատանքների կատարման ու մեքենայացման պլանները, նյութատեխնիկական մատակարարման պլանները, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու առաջադրանքները մշակելու համար:

Շինարարական ինդուստրիայի աշխատանքի որակական ցուցանիշները դիֆերենցվում են ըստ միութենական ռեսպուբլիկաների և համամիութենական մինիստրությունների ու գերատեսչությունների, որոնք իրենց հերթին դրանց հիման վրա առաջադրանքներ են սահմանում ժողտնտխորհներին, գլխավոր վարչություններին, իսկ վերջիններս՝ իրենց ենթակա շինմոնտաժային կազմակերպություններին: Ընդ որում պլանում ընդունված առաջադրանքներն ու նորմաները մշակվում են ավելի մանրամասն, հաշվի առնելով տվյալ ճյուղում կամ տնտեսական շրջանում շինարարության իրագործման կոնկրետ պայմանները:

Շինարարական կազմակերպությունների աշխատանքի պլանավորումը: Շինարարական կազմակերպությունների պլանները օրգանապես կապված են ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանի հետ: Դա անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում նյութական ու աշխատանքային ռեսուրսներն առավել լրիվ օգտագործելու համար, նպատակ ունենալով պետական պլանային առաջադրանքների հաջող կատարումը յուրաքանչյուր շինարարական ստորաբաժանման կողմից:

Շինարարական կազմակերպությունների աշխատանքի պլանավորման հիմնական խնդիրը քանակական ու որակական բոլոր ցուցանիշներով պետական պլանային առաջադրանքների ժամանակին կատարման, շինարարական արտադրության անընդհատ տեխնիկական կատարելագործման ապահովումն է՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, աշխատանքների որակը բարելավելու, դրանց ինքնարժեքն իջեցնելու նպատակով: Պլանավորման կարևոր

խնդիրն է նաև ներտնտեսական ռեզերվների առավել լրիվ մոբիլիզացումը, ամեն տեսակի կորուստները վերացնելու և արտադրության առաջավորների փորձը լայնորեն անրմատավորելու միջոցով: Պլանները շինարարական կազմակերպությունների կոլեկտիվների առաջ ոչ միայն որոշակի խընդիրներ են դնում, այլև որոշում են դրանց լուծման կոնկրետ ուղիները: Պլանները տվյալներ են պարունակում այն մասին, թե ինչպես պետք է ծավալվի սահմանված առաջադրանքների կատարումը, կազմակերպական-տեխնիկական ինչպիսի՞ միջոցառումներ պետք է անցկացնել դրանց կատարման ու գերակատարման համար, դրա համար ինչպիսի՞ ռեսուրսներ են անհրաժեշտ և ինչպե՞ս պետք է դրանք օգտագործվեն:

Պլանն ընդգրկում է շինարարական կազմակերպության արտադրական-տնտեսական ու ֆինանսական գործունեության բոլոր կողմերը: Ուստի նա իրենից ներկայացնում է արտադրության, տեխնիկայի, նյութերի ապահովման, աշխատանքի, աշխատավարձի, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի ու ֆինանսների վերաբերյալ փոխադարձաբար միմյանց հետ կապված ցուցանիշների մի կոմպլեքս: Պլանի ցուցանիշները միասնությունը պայմանավորված է այն բանով, որ շինարարական կազմակերպությունների առանձին ստորաբաժանումների միջև գոյություն ունեն արտադրական կապեր: Հետևաբար, որպեսզի շինարարական կազմակերպությունների բոլոր ստորաբաժանումներն աշխատեն նպատակասլաց ու միևնույն ուղղությամբ, պլանն իր բոլոր ցուցանիշներով կապակցվում է մի միասնական ամբողջության մեջ: Ամեն մի պլան, ինչ ժամկետի համար էլ որ այն կազմվի, գործունեության ինչ կողմեր էլ որ նա ընդգրկի, իր հիմքում ունի միևնույն ելակետային ցուցանիշները, որոնք վերադաս տնտեսական օրգանի կողմից հաստատվել են շինարարական կազմակերպության համար: Պլանավորման ընթացքում այդ ցուցանիշները մանրամասնվում են և վերածվում առանձին արտադրական ստորաբաժանումների աշխատանքի պլանների: Ընդ որում ամեն մի ավելի կարճ

ժամանակամիջոցի պլաններն անմիջականորեն բխում են ավելի երկարատև ժամկետների պլաններից:

Շինարարական կազմակերպությունների պլանները կազմելու հիմնական ելակետային տվյալները: Սկզբնական շինարարական կազմակերպությունների աշխատանքների ինչպես հեռանկարային, այնպես էլ տարեկան պլանները կազմելու համար օգտագործվում են.

1. Պետական պլանային առաջադրանքը: ՍՍՌՄ ժողովրդատնտեսական պլանների հաստատումից հետո, բոլոր միութենական ռեսպուբլիկաների, մյուս հանրապետությունների, ժողտնտեսությունների և շինարարական կազմակերպությունների կողմից կատարելու համար դրանք դառնում են պարտադիր: Ժողովրդատնտեսական պլանի այն մասը, որը դրվում է շինարարական կազմակերպությունների վրա, նրանց է հասցվում որպես պետական պլանային առաջադրանք:

Յուրաքանչյուր շինարարական կազմակերպության համապետական պլանային առաջադրանքը սահմանվում է մի շարք հիմնական ցուցանիշների ձևով: Շինարարական տրեստները, շինարարության վարչությունները և վերադաս մյուս օրգանները սկզբնական շինարարական կազմակերպությունների համար ամեն տարի սահմանում են հետևյալ պլանային առաջադրանքները. ա) արտադրական կարողությունների ու բնակելի տարածության գործարկումը, շինմոնտաժային աշխատանքների ծավալը, բ) տեխնիկական զարգացման ուղղությունը, գ) աշխատանքի արտադրողականությունը, աշխատողների, այդ թվում բանվորների թիվը, աշխատավարձի ֆոնդը, դ) շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու առաջադրանքները, ե) սեփական շրջանառու միջոցների նորմատիվները:

Պետական առաջադրանքները շինարարական կազմակերպություններում պլանավորման հիմք են ծառայում և իրենց լրիվ արտացոլումն են գտնում նրանց կողմից մանրամասնորեն մշակվող պլաններում: Առաջադրանքի բոլոր ցուցանիշները պարտադիր կարգով պետք է արտացոլվեն նաև ստորագաս կազմակերպությունների ու ձեռնարկությունների

պլաններում, իսկ նախատեսված միջոցառումները՝ ապահովեն դրանց ժամանակին և լրիվ կատարումը:

2. Կառույցների կապիտալ ներդրումների հեռանկարային պլանները և առանձին օբյեկտների ու ծախսումների տարեկան փոփոխային ցուցակները: Դրանց հիման վրա որոշվում են ոչ միայն ձեռնարկուձյան ամբողջ շինարարություն, այլև նրա յուրաքանչյուր օբյեկտի մի շարք շարիների հեռանկարային ու յուրաքանչյուր տարվա աշխատանքների ծավալները: Կապիտալ ներդրումների պլանի և առանձին օբյեկտների ու ծախսումների փոփոխային ցուցակի համապատասխան սահմանվում է արտադրական կարողությունների ու բնակելի տարածությունների գործարկման ծրագիրն ու ժամկետները:

3. Շինարարության նախագծերը և նախահաշիվները: Այդ փաստաթղթերը պարունակում են տվյալներ, որոնք բնութագրում են շինարարական ու մոնտաժային աշխատանքների ծավալները՝ նատուրալ ու դրամական արտահայտությամբ, ըստ օբյեկտների ու ծախսումների առանձին տեսակների դրանց բաշխումը, ինչպես նաև ելակետային տվյալներ արտադրության հետագա ռացիոնալացման, աշխատանքի կազմակերպումը բարելավելու, աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու վերաբերյալ միջոցառումներ մշակելու համար: Նախագծային-նախահաշիվային հաստատված փաստաթղթերի հիման վրա որոշվում են շինարարական արտադրության կազմակերպման եղանակները՝ շինարարության կոնկրետ պայմանների համեմատ:

4. Շինարարության կապալային պայմանագրերը: Կապիտալ ներդրումների պետական հաստատված պլաններում մտցված շինմոնտաժային աշխատանքները կատարելու համար պատվիրատուները շինարարական կազմակերպությունների հետ կնքում են կապալային պայմանագրեր. ա) գլխավոր պայմանագիր՝ նախագծերով ու նախահաշիվներով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալի համար, բ) տարեկան՝ տարվա տիրոջության ցուցակով սահմանված աշխատանքների ծավալի համար:

Կապալալային պայմանագրի առարկան շինարարությունն ավարտված ու հանձնման պատրաստ պլանով նախատեսված օբյեկտն է, իսկ ենթակապալային պայմանագրինը՝ մասնագիտական կամ մոնտաժային աշխատանքների առանձին կոմպլեքսները¹։

Գլխավոր պայմանագրում կապալառուին հանձնարարվող աշխատանքների ընդհանուր արժեքը որոշվում է հաստատված նախահաշիվների հիման վրա։ Տարեկան պայմանագրերով աշխատանքների արժեքը որոշվում է ըստ առանձին օբյեկտների ու ծախսումների կապիտալ աշխատանքների հաստատված տիտղոսային ցուցակի համապատասխան։

Տարեկան պայմանագրերը կնքվում են ժողովրդատնտեսական պլանները հաստատվելուց հետո, երկու ամսվա ընթացքում։ Աշխատանքների ծավալը և արժեքը, որոնք նախատեսված են ամբողջ շինարարության և առանձին օբյեկտների ու ծախսումների տարեկան պայմանագրերում, պատվիրատուն կարող է փոխել միայն կապալառուի համաձայնությամբ։ Այդ փոփոխությունները թույլատրվում են, օրինակ, ընթացիկ տարվա պլանի կատարման հանրազոմարները ճշգրտելու կապակցությամբ կամ շինարարության ժամկետների ու կազմի առաջադրանքները վերանայելու հետևանքով։

Այդպիսի կարգը մեծ նշանակություն ունի շինարարական արտադրությունը ճիշտ կազմակերպելու համար։ Կապալալային պայմանագրերի ուշուցած կնքումը դանդաղեցնում է նյութերի, կոնստրուկցիաների և դետալների պատվերների տեղաբաշխումը, պլանային ցուցանիշների մանրամասն մշակումը։ Պատվիրատուների կողմից պլանների հաճախակի փոփոխությունները հանգեցնում են շինարարական կազմակերպությունների քանակական ու որակական բոլոր ցուցանիշների վերանայման անհրաժեշտությանը, նրանց տնտեսության վերակառուցմանը։ Դրա հետևանքով ընկնում է

¹ Տես. Քաղաքացիական օրենսդրության հիմունքները («ՍՍՍՄ Գեռազուն սովետի տեղեկագրեր», 1961, № 50, էջ 525, ուսս.)։

կապիտալ աշխատանքների պլանները կատարելու, արտադրական կարողութունները և բնակելի տարածությունը գործարկելու պատասխանատվությունը, թուլանում է պայմանագրային կարգապահությունը:

Շինարարական կազմակերպությունների հեռանկարային պլանները որոշում են դրանց արտադրական, տեխնիկական և տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները մի շարք տարիների համար: Հեռանկարային պլանները կազմվում են ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր հեռանկարի, վերադաս օրգանների կողմից հայտնած պլանային տվյալ ժամանակաշրջանի կոնտրոլ թվերի, փտահետազոտական և նախագծային կազմակերպությունների հանձնարարությունների և տվյալ շինարարական կազմակերպության արտադրական կարողությունները որոշող տեխնիկա-տնտեսական հաշվարկների հիման վրա: Հեռանկարային պլանները կազմելու պրոցեսում շինարարական կազմակերպություններում վերլուծվում է արտադրության մակարդակը այն պահանջների տեսակետից, որ ներկայացնում են նրան գիտության ու տեխնիկայի ժամանակակից նվաճումները, նախատեսվում են աշխատանքների ծավալները և դրանց շարժումն ըստ տարիների, որոշվում են աշխատանքի արտադրողականության աճի ու աշխատանքների ինքնարժեքի իջեցման հեռանկարները, մշակվում են շինարարության հետագա ինդուստրացման, աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման ու նրանց կենցաղային սպասարկումը բարելավելու միջոցառումներ:

Բացի շինարարական արտադրության, տեխնիկայի արմատավորման, աշխատանքի ու ինքնարժեքի հիմնական ցուցանիշներից, հեռանկարային պլանավորման ժամանակ կարող են որոշվել նաև տեխնիկա-տնտեսական այլ ցուցանիշներ, որոնք բնութագրում են շինարարական կազմակերպությունների արտադրա-տեխնիկական գործունեության տարբեր կողմերը:

Հեռանկարային պլանի նախագիծը քննարկում է շինարարական կազմակերպության կոլեկտիվը և ուղարկում

ժողտնտխորհ, մինիստրութիւն կամ գերատեսչութիւն: Այստեղ նախագիծը քննարկվում է, անհրաժեշտութեան դեպքում ճշգրտվում, իսկ հետո հաստատվում:

Հետեաբար, հեռանկարային պլանը որոշում է շինարարական կազմակերպութեան ընդհանուր խնդիրները երկարատե ժամանակի համար: Այդ խնդիրների կոնկրետ լուծումը, առաջիկա տարվա համար պլանային առաջադրանքների մանրամասն թվարկումն իրենց արտահայտութիւնն են գտնում ընթացիկ պլանավորման մեջ:

Շինարարական կազմակերպութեան շինֆինպլանը: Սկզբնական շինարարական կազմակերպութեան տարեկան պլանը շինֆինպլանն է, որի մեջ օրգանապես կապակցվում են արտադրութեան, տեխնիկայի ու էկոնոմիկայի բոլոր հարցերը: Այն իրենից ներկայացնում է շինարարական կազմակերպութեան արտադրական-տնտեսական ու ֆինանսական ամբողջ գործունեութեան ծրագիր, որը պետական պլանային առաջադրանքների հիման վրա մշակում է այդ կազմակերպութեան կոլեկտիվը:

Շինֆինպլանը պարունակում է մեկ տարվա ցուցանիշները, ըստ որում ամենից ավելի կարևոր ցուցանիշները պլանավորվում են եռամսյակներով: Շինֆինպլանի հիմնական բաժիններն են¹.

1. Շինարարական-էնտաժային աշխատանքների ծրագիրը, որի հիմնական բովանդակութիւնը աշխատանքների ընդհանուր ծավալի և շինարարութեան յուրաքանչյուր օբյեկտի աշխատանքների, նոր կարողութիւնների չափերի ու գործարկման ժամկետների որոշումն է: Այն իր մեջ պարունակում է նաև շինարարական արտադրութեան կոոպերացման ու

¹ Շինարարական կազմակերպութիւնների ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող ձեռնարկութիւնների և տնտեսութիւնների (արդյունաբերական ձեռնարկութիւններ, նյութատեխնիկական մատակարարման գրասենյակներ, բնակարանային-կոմունալ տնտեսութիւն և այլն) տարեկան պլանները մշակվում են ընդհանուր հիմունքներով, որոնք սահմանվել են տնտեսութեան համապատասխան ճյուղերի համար, և այդ պատճառով այստեղ չեն քննարկվում:

մասնագիտացման տվյալներ: Շինմոնտաժային աշխատանքների ծրագիրն իրենից ներկայացնում է շինֆինիպլանի առաջատար բաժինը:

2. Տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանը, որը պարունակում է շինարարական արտադրության տեխնիկան, տեխնոլոգիան և կազմակերպումը կատարելագործելու կոնկրետ առաջադրանքներ: Նրա մեջ հատուկ ուշադրություն է դարձվում շինմոնտաժային և օժանդակ աշխատանքների մեքենայացմանն ու ավտոմատացմանը, շինարարության ինդուստրիալ մեթոդների արմատավորմանը:

3. Շինարարական կոնստրուկցիաների, դետալների, նյութերի ու կիսաֆաբրիկատների ապահովման պլանը: Դրանք անհրաժեշտ են շինմոնտաժային աշխատանքների սահմանված ծավալը կատարելու համար: Պլանի մեջ նշվում են նաև այդ ռեսուրսների ստացման աղբյուրները:

4. Աշխատանքի ու աշխատավարձի պլանը, որի մեջ որոշվում է աշխատանքի արտադրողականության մակարդակը, աշխատողների թիվն ու աշխատավարձի ֆոնդը՝ շինարարական կազմակերպության կազմի մեջ մտնող արտադրության բոլոր տեսակների ու տնտեսությունների գծով:

5. Արտադրության ծախսումների նախահաշիվը և շինարարական-մոնտաժային աշխատանքների ինֆլեյթիվ իջեցման պլանը, որոնք որոշում են շինմոնտաժային այն աշխատանքների պլանային ինքնարժեքը, որ շինարարական կազմակերպությունները կատարում են իրենց ուժերով, վերադիր ծախսերի գումարը՝ հաշվի առնելով պլանում նախատեսված կազմակերպական-տնտեսական միջոցառումների իրագործման հաշվին դոյացած տնտեսումը:

6. Նկամուտների ու ծախսերի հաշվեկշիռը, որը դրամական ձևով արտացոլում է արտադրական-տնտեսական գործունեության պլանավորվող արդյունքները: Նկամուտների ու ծախսերի հաշվեկշիռի առանձին հոդվածներով (չրջանառու միջոցների, ամորտիզացիայի և այլն) կատարվում են անհրաժեշտ հաշվարկներ:

Շնարարական այն կազմակերպություններում, որոնք զգալի ծավալով սեփական կապիտալ ներդրումներ ունեն, շինֆինպլանի կազմում մշակվում է սեփական կապիտալ ներդրումների սլան:

Յուրաքանչյուր սկզբնական շինարարական կազմակերպություն, որն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կազմում է շինֆինպլան: Այն շինարարական կազմակերպությունները, որոնց շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծավալը մինչև 500 հազ. ռուբլի է, կազմում են միայն տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլաններ: Այդ կազմակերպություններն իրենց աշխատանքներում ղեկավարվում են վերադաս կազմակերպությունների հաստատած հիմնական պլանային ցուցանիշներով:

Տերիտորիալ և քաղաքային տիպի տրեստները, որոնք իրենց կազմում ունեն շինարարական վարչություններ, շինֆինպլաններ չեն մշակում, այլ կազմում են հիմնական ցուցանիշների ամփոփիչ տարեկան պլաններ: Տնտհաշվարկային ստորաբաժանումներ չունեցող տրեստ-հրապարակների և քաղաքային տիպի տրեստների շինֆինպլանները մշակվում են բոլոր բաժիններով:

Շինարարական կազմակերպությունների շինֆինպլանները հաստատվում են այդ կազմակերպությունների ղեկավարների կողմից, ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանի հաստատումից ոչ ուշ, քան մեկ ու կես ամիս հետո:

Շինֆինպլանի ցուցանիշները տարվա ընթացքում չեն փոփոխվում: Բացառություն են կազմում միայն այն դեպքերը, երբ վերակառուցվում են սկզբնական շինարարական կազմակերպությունները կամ երբ հաստատված ծրագիրն զգալիորեն ճշգրտվում է: Երկու դեպքում էլ շինֆինպլանի ցուցանիշների փոփոխությունը կարող է կատարվել միայն տրեստի ղեկավարների, իսկ տրեստ-հրապարակների և քաղաքային տիպի տրեստների համար՝ համապատասխան վե-

րադաս կազմակերպությունների ղեկավարների թուլլտվությամբ:

Պլանավորման ճշտության և պլանների կատարման վերահսկողութայան համար սկզբնական շինարարական կազմակերպություններն իրենց հաստատած շինֆինպլանները ներկայացնում են շինարարական տրեստներին:

Շինֆինպլանների մշակումն իրագործվում է պարտիական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների, շինարարական կազմակերպության ամբողջ կոլեկտիվի ակտիվ մասնակցությամբ: Շինարարական առաջավոր շատ կազմակերպություններ շինֆինպլանները կազմում են ստեղծագործական համագործակցության կարգով՝ գիտական հիմնարկությունների աշխատողների հետ համատեղ: Պլանավորման այդպիսի կազմակերպումը հնարավորություն է տալիս ավելի լրիվ բացահայտել և օգտագործել ներտնտեսական ռեզերվները:

Շինֆինպլանը կազմելու աշխատանքն սկսվում է շինարարական կազմակերպությունները և նրանց առանձին մասերի ընթացիկ գործունեության վերլուծումից: Այդ վերլուծման պրոցեսում հանրագումարի են բերվում նախնական արդյունքները և որոշվում է պլանի սպասվելիք կատարումը տարվա վերջին, բացահայտվում են արտադրության ռեզերվները, որոշվում են աշխատանքում գոյություն ունեցող թերությունների հիմնական պատճառները և նրանց վերացման ուղիները, վերանայվում են հնացած նորմաները, մշակվում են պետական պլանային առաջադրանքների անպայման կատարումն ապահովող միջոցառումներ:

Մինչև 1955 թ. սկզբնական շինարարական կազմակերպություններում և տրեստներում շինֆինպլանների մշակման միասնական կարգ չկար: Պլանի կարգը, կազմելու ժամկետները և ցուցանիշների ծավալը սահմանվում էին յուրաքանչյուր մինիստրության ու գերատեսչության կողմից: Այդ իսկ պատճառով պլանավորման գործում պատշաճ միասնություն չկար, իսկ շինֆինպլանները հաճախ լինում էին մեծածավալ, կազմվում էին ոչ միայն սկզբնական կազմակերպություններում, այլև ամփոփել տեսքով՝ տրեստներում: Շինֆինպլանները հաստատվում էին վերադաս օրգանների

Հողմից, իսկ տարվա ընթացքում դրանց մեջ մտցվում էին բազմաթիվ փոփոխություններ: Այդ բոլորը հանգեցնում էր նրան, որ շինֆինպլանը կորցնում էր իր նշանակությունը և չէր կարող շինարարական կազմակերպության արտադրական-ֆինանսական ամբողջ գործունեության հիմք ծառայել:

1955 թ. շինարարական բոլոր կազմակերպությունների համար սահմանվեց շինֆինպլանները կազմելու և հաստատելու միասնական կարգ, նրանց գործունեության պլանավորման ցուցանիշների քանակը խիստ կրճատվեց: Դա շինարարական կազմակերպությունների պլանավորման սխտեմը կարգավորելու կարևոր պայման հանդիսացավ: Շինֆինպլանները կազմելու վերջին տարիներին կուտակված փորձը թույլ տվեց կատարելագործելու դրանց մշակման մեթոդիկան: 1960 թ. ՍՍՌՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի շինարարության էկոնոմիկայի ինստիտուտը մշակեց շինֆինպլաններ կազմելու ցուցումներ, որոնք հանձնարարվեցին շինարարական կազմակերպություններում կիրառելու համար:

Սկզբնական շինարարական կազմակերպության արտադրական ծրագիրը: Սկզբնական շինարարական կազմակերպության ծրագրի մեջ մտնում են շինմոնտաժային աշխատանքները, որոնք կատարվում են. ա) պատվիրատուների կապիտալ ներդրումների, բ) շինարարական ինդուստրիայի հիմնական ֆոնդերի զարգացման (դրանց մաշվածությունը վերականգնումը, ինչպես նաև մոդեռնացումն ու կատարելագործումը), գ) պատվիրատուների հիմնական ֆոնդերի կապիտալ վերանորոգման (այն դեպքերում, երբ դա նախատեսվում է առաջադրանքով) պլաններով:

Շինարարական արտադրության ծավալը պլանավորվում է ինչպես դրամական, այնպես էլ բնաձև արտահայտությամբ: Պլանավորումը դրամական արտահայտությամբ անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կատարված աշխատանքների ծավալը պլանի հետ համեմատելու, շինարարական կազմակերպության և պատվիրատուի միջև փոխադարձ վերահսկողություն կազմակերպելու, տնտեսական հաշվարկի սկզբունքները կիրառելու համար: Ծրագիրը բնաձև արտահայտությամբ կազմելը հնարավորություն է տալիս որոշել շինարարության համար պահանջվող աշխատանքային ու նյութատեխնիկական ռեսուրսները, այն աշխատանքների կոնկրետ բովանդակությունն ու բնույթը, որոնք կատարվե-

լու են մեքենայացված եղանակով, տեղամասերին, վարպետներին, բանվորական բրիգադներին տրվող առաջադրանքները:

Մրագիրը դրամական արտահայտությունում մշակվում է գլխավոր և ուղղակի պայմանագրերով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալի համար, իսկ բնածե արտահայտությամբ՝ աշխատանքների այն ծավալով, որ շինարարական կազմակերպությունը կատարում է իր ուժերով:

Շինարարությունը բնորոշվում է շինարարական ու մոնտաժային աշխատանքների մեծ բազմազանությամբ: Այսպես, հողային աշխատանքները տարբերվում են իրենց նշանակությամբ (օրինակ, փոստրակներ, խրամատներ), գետնի բնույթով (ժայռոտ, փափուկ), դրանց կատարման եղանակով (օրինակ, արտափորում, ջրալվացում) և այլն: Հարդարման աշխատանքները տարբերվում են ըստ գործածվող նյութերի, մշակվող մակերեսների, շենքերի տիպի և նշանակությամբ: Շինարարական ու մոնտաժային աշխատանքների առանձին տեսակները, նայած դրանց բնույթին, չափվում են զանազան ֆիզիկական միավորներով (գծային, քառակուսի կամ խորանարդ մետրերով, տոննաներով և այլն): Այդ պատճառով ամբողջ ժողովրդական տնտեսության, միութենական ռեսպուբլիկաների, մյուսատրությունների, ժողտնտխորհների, աշխատավորների դեպուտատներին տեղական սովետների գործկոմիտեների շինմոնտաժային աշխատանքների սլանները, որպես կանոն, որոշվում են միայն դրամական արտահայտությամբ:

Սկզբնական շինարարական կազմակերպությունները աշխատանքների ֆիզիկական ծավալների ամփոփագրերը կազմում են ըստ խոշորացրած կոնստրուկտիվ տարրերի և աշխատանքների տեսակների¹, որոնց մեջ ի մի են բերվում

¹ Կոնստրուկտիվ տարրեր են կոչվում շենքերի մասերը (օրինակ, հիմքերը, պատերը, ծածկերը, տանիքները), աշխատանքների տեսակներ՝ բոլոր միատեսակ աշխատանքները, անկախ այն բանից, թե շենքի որ մասերում են դրանք կատարվում (օրինակ, ծեփադործական, ներկարարական աշխատանքները, լուսամուտների ապակեպատումը):

իրենց նշանակութիւնը միատեսակ աշխատանքները և որոշվում է դրանց արժեքն ըստ նախահաշվի: Այդպիսի խոշորացրած ցուցանիշներին են վերաբերում, օրինակ, հողային աշխատանքների բոլոր տեսակները, բետոնի և երկաթբետոնի աշխատանքները, միջհարկային և ձեղնահարկային ծածկերը, տանիքագործական, ներկարարական, ծեփագործական և ապակեպատման աշխատանքները, ճանապարհների կառուցման աշխատանքները և այլն: Խոշորացրած կոնստրուկտիվ տարրերի և աշխատանքների տեսակների գումարային արժեքը ներկայացնում է ծրագիրը՝ դրամական արտահայտութեամբ: Այսպիսով, շինմոնստաժային աշխատանքների ծավալները դրամական արտահայտութեամբ, որոնք հատուկ հաշվարկի միջոցով սահմանվում են պլանի մշակման բոլոր ստադիաներում, իրենց հիմքում ունեն նախագծերով ու նախահաշիվներով որոշվող աշխատանքների ֆիզիկական ծավալների կոնկրետ հավաքածու:

Աշխատանքների ֆիզիկական ծավալների ճիշտ որոշումը բացառիկ կարևոր նշանակութիւն ունի շինարարական կազմակերպութեան արտադրական ծրագիրը դրամական արտահայտութեամբ կազմելու համար: Կոնստրուկտիվ տարրերի կազմի և իրականացման ենթակա աշխատանքների տեսակների ոչ ճիշտ որոշումը կարող է բացասաբար ազդել արտադրական ծրագրի կատարման վրա: Ընկնելով ծրագիրը դրամական արտահայտութեամբ կատարելու ետևից, շինարարական որոշ կազմակերպութիւններ առաջին հերթին պլանավորում են թանկ արժեցող աշխատանքներ, շնայած այն բանին, որ դրանք ցրված են մեծ քանակութեամբ օբյեկտներում: Իրա հետևանքով առաջ է գալիս միջոցների, աշխատանքային ու նյութատեխնիկական ռեսուրսների փոշիացում, որը դանդաղեցնում է արտադրական կարողութիւնների ու բնակելի տարածութեան գործարկումը և թանկացնում է շինմոնստաժային աշխատանքները:

Սկզբնական շինարարական որոշ կազմակերպութիւններ թերագնահատում են բնաձև ցուցանիշներով պլանների նշանակութիւնը և դրանք կազմում են աշխատանքների ֆիզիկական ծավալները ոչ լրիվ ընդգրկելով:

Հետևանքը լինում է այն, որ այդպիսի պլաններն անբավարար են հիմնա-
վորված լինում և չեն ապահովում միջոցների համակենտրոնացումը վճա-
կան օբյեկտներում: Շատ դեպքերում բնաձև ցուցանիշներով՝ պլանների
մշակումը արգելակվում է այն կապակցությամբ, որ կառույցները ժամա-
նակին չեն ապահովում նախագծային-նախահաշվային փաստաթղթերով:

Շինմոնտաժային աշխատանքների պլանը բնաձև ցուցա-
նիշներով պետք է կազմվի շինարարական արտադրության
տեխնոլոգիայի պահանջներին ճիշտ համապատասխան: Սո-
վորաբար այն մշակվում է օրացուցային գրաֆիկի ձևով,
նշելով պլանի մեջ մտցրած յուրաքանչյուր օբյեկտի առան-
ձին կոնստրուկտիվ տարրերի ու աշխատանքների տեսակնե-
րի անվանումը, ծավալները, սկիզբը և ավարտելու ժամկետ-
ները:

Շինարարական կազմակերպության արտադրության ընդ-
հանուր ծավալը բնութագրվում է շինմոնտաժային կատար-
ված աշխատանքների նախահաշվային արժեքով:

Շինարարական կազմակերպությունը կարող է կատարել-
ա) կառուցվող օբյեկտի շինարարության ու մոնտաժման բո-
լոր աշխատանքները (այդ դեպքում պատրաստի օբյեկտի
հանձնումը համընկնում է նրա գործարկման ժամկետի հետ),
բ) շինարարական բոլոր աշխատանքները, առանց սարքու-
վորման մոնտաժի (այդ դեպքում աշխատանքներն ավար-
տելու ժամկետը պետք է առաջ անցնի ամբողջ օբյեկտի
գործարկման ժամկետից), գ) օբյեկտի բոլոր աշխատանքնե-
րը մինչև նրա պատրաստ լինելու որոշ աստիճանը, օրինակ,
ցեխի շինարարությունը և տեխնոլոգիական սարքավորման
մոնտաժումը, առանց էներգետիկ կայանքների շինարարու-
թյան և շոգեուժային սարքավորման մոնտաժի (այդ դեպ-
քում բոլոր աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որ
դրանց ավարտումն ապահովվի օբյեկտի գործարկման հա-
մար սահմանված ժամկետին), դ) աշխատանքների առան-
ձին տեսակները կամ դրանց կոմպլեքսները (օրինակ, սար-
քավորման մոնտաժում, սանիտարա-տեխնիկական աշխա-
տանքներ):

Այսպիսով, շինարարական կազմակերպության արտա-

դրանքն այն օբյեկտներն են, որոնց գործարկման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները լիովին ավարտվել են. օբյեկտները, շենքերի ու կառույցների մասերը, որոնց կառուցման աշխատանքներն ավարտվել են. շինարարական ու մոնտաժային աշխատանքների կոմպլեքսները, իսկ որոշ դեպքերում նաև դրանց առանձին տեսակները: Այդպիսի դրուժյունը բացատրվում է շինարարական արտադրության կազմակերպական ձևերի առանձնահատկություններով, շինարարության մեջ մասնագիտացման ու կոոպերացման զարգացմամբ:

Կապիտալ ներդրումները, ինչպես հայտնի է, հատկացվում են պատվիրատուներին, որոնց համար կառուցվում են օբյեկտները: Շինմոնտաժային աշխատանքները կատարում են գլխավոր կապալառուները, ենթակապալային կազմակերպությունները և մոնտաժային կազմակերպությունները, այդ թվում նաև՝ պատվիրատուի հետ կնքված ուղղակի պայմանագրերով: Ծախսումների զգալի բաժինը կատարում է անմիջականորեն պատվիրատուն: Ընդ որում արտադրության բազմաձև պրոցեսն իրականացվում է շինարարական մեկ հրապարակում, մեկ նախագծով, մեկ ընդհանուր պլանով, բոլոր կառարողների համար պարտադիր տեխնիկական նորմաների ու կանոնների հիման վրա: Այդ պատճառով շինարարության պատրաստի (վերջնական) արտադրանքը հանդիսանում է արտադրության միասնական պրոցեսին մասնակցող բոլոր կազմակերպությունների գործունեության արդյունք:

Նույնիսկ այն դեպքում, երբ շինարարական հրապարակում աշխատանքներն ամբողջովին իրականացնում է գլխավոր կապալառուն, ծախսումների մի մասը կատարում է պատվիրատուն: Դրանց վերաբերում են, օրինակ, նախագծման, սարքավորում ձեռք բերելու, շահագործող կադրեր պատրաստելու և մի շարք այլ ծախսումներ: Այդ պատճառով պատվիրատուի մոտ են միայն կենտրոնացվում հիմնական ֆոնդերի արժեքը կազմող բոլոր ծախսումները, այսինքն՝ շինմոնտաժային աշխատանքների իրագործման ծախքերը (նա-

խահաշվային արժեքով), նախագծային-հետազոտական աշխատանքների ծախսումները (գնացուցակային գնով¹), սարքավորման վրա կատարվող ծախսումները, ինչպես նաև այլ կապիտալ ներդրումներ (փաստացի արժեքով)¹:

Նոր կառուցված կամ վերակառուցված բոլոր ձեռնարկությունները, շենքերն ու կառուցվածքները, որոնք պատրաստ են գործարկման համար, պարտադիր կարգով ընդունվում են պետական հանձնաժողովների կողմից: Կառուցողները (պատվիրատուները) շինարարության ավարտված ձեռնարկությունները և առանձին հերթերը կամ դրանց գործարկվելիք կոմպլեքսները ընդունման են ներկայացնում շահագործման հանձնելու համար:

Շինարարական կազմակերպության կատարած աշխատանքները հանձնվում են պատվիրատուին դրանց պատրաստի լինելուն համեմատ: Պատվիրատուի կողմից շինարարական կազմակերպության կատարած աշխատանքների ընդունման ու վճարման սխտեմը (այն երբեմն անվանում են «արտադրանքի իրացում», որն այնքան էլ ճիշտ չէ) կառուցված է այնպես, որպեսզի խթանվի օբյեկտների գործարկումը:

Մինչև 20 հազար ուրլի արժեքով շինարարական օբյեկտները (իսկ գյուղական շինարարության մեջ՝ մինչև 10 հազ. ուրլ.) ընդունվում է լրիվ ավարտվելուց հետո: Բոլոր աշխատանքները վերջացնելուց հետո է կատարվում նաև այն օբյեկտների ընդունումը, որոնց արժեքը նշվածից ավելի է, բայց շինարարության ժամկետները չեն գերազանցում վեց ամսից: Սակայն այդ դեպքում մինչև վերջնական ընդունումը կատարվում են միջանկյալ վճարումներ, օբյեկտի շինարարական աշխատանքների արժեքի 9/10 տոկոսի սահմաններում:

Ավելի առաջադիմական են հաշվարկների այնպիսի ձևերը, որոնց ժամանակ ամբողջությամբ վճարվում են օբյեկտի վրա կատարած բոլոր աշխատանքները կամ օբյեկտների առավել խոշոր ավարտված մասերը. հարկ, սեկցիա, տեխնոլոգիական գիծ և այլն: Այսպիս, տնաշինական կոմբինատների կողմից կատարված աշխատանքների վճարումները կատարվում են ավարտված և շահագործման հանձնված րնակելի տներով, առանց միջան-

¹ Տնտեսական եղանակով աշխատանքներ կատարելու դեպքում թվարկած բոլոր ծախսումները, բացառությամբ նախագծային-հետազոտական աշխատանքների, հաշվի են առնվում փաստացի արժեքով:

կյալ վճարումների: Այդպիսի կարգը խթանում է ավելի արագ ավարտելու օբյեկտների շինման տաժախին աշխատանքները և շահագործման հանձնելու օբյեկտները, շինարարական կազմակերպություններին դրդում է որոշակի օբյեկտներում կենտրոնացնելու անհրաժեշտ աշխատանքային, նյութատեխնիկական ու ֆինանսական ռեսուրսներ:

Բնակարանային շինարարության մեջ, եթե այն իրականացնում են ուրիշ կազմակերպություններ, աշխատանքների վճարումը կատարվում է 1 ֆմ բնակելի տարածության գնաճուցակային արժեքի հիման վրա: Մինչև տան բոլոր աշխատանքների լրիվ ավարտումը, հաշվարկները կատարվում են ըստ կոնստրուկտիվ տարրերի՝ ամիսը մեկ անգամ, տան գնացուցակային արժեքի 95 տոկոսի սահմաններում: Վերջնական վճարում թույլատրվում է միայն տան վրա կատարվող բոլոր աշխատանքները լրիվ ավարտելու պայմանով: Ներկայումս հաշվարկների այդ ձևերն արմատավորվում են կուլտուր-կենցաղային և մասամբ արդյունաբերական նշանակություն ունեցող օբյեկտներում:

Մնացած բոլոր օբյեկտների գծով կատարված շինարարական աշխատանքներն ընդունվում են ավարտված խոշորացված կոնստրուկտիվ տարրերով և աշխատանքների տեսակներով կամ դրանց մասերով (օրինակ, 1 խմ հիմք, 1 ֆմ բոլոր տեսակի ծեփագործական աշխատանքներ), ինչպես նաև ռուանձին կոնստրուկտիվ տարրերի և աշխատանքների տեսակների ավարտված մասերով: Այդ օբյեկտների շինարարության ավարտմանը համեմատ, պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց ոչ ուշ 30 օր հետո, նախահաշիվների հիման վրա կատարվում է վերջնական հաշվարկ: Վերջնահաշիվի ժամանակ հաշվում են առաջներում կատարված բոլոր վճարումները: Կատարված մոնտաժային աշխատանքներն ընդունվում են ազրեզատների կամ դրանց մասերի մոնտաժի ավարտմանը համեմատ:

Ինչպես երևում է, վերջին երկու դեպքերում վճարումները կատարվում են աշխատանքների առանձին էտապների կատարման համեմատ, ֆիզիկական ծավալների, այլ ոչ թե վերջնական արտադրանքի համար: Պրակտիկայում դա հաճախ նպաստում է առավելագույն ծավալի աշխատանքներ կատարելու հետևից ընկնելուն՝ ի վնաս գործարկման ծրագրի:

Պատվիրատուների և կապալառուների միջև կատարվող հաշվարկները սխտեմատիկ կատարելագործումը պատրաստի արտադրանքի թողարկումն արագացնելու կարևոր պայմաններից մեկն է:

Այսպիսով, շինարարական կազմակերպության արտադրանքի կազմի մեջ, որ հանձնվում է պատվիրատուին, մըտնում են ինչպես ավարտված օբյեկտները, այնպես էլ անավարտ արտադրանքը, այսինքն՝ առանձին կոնստրուկտիվ տարրերը և աշխատանքի տեսակները կամ դրանց ավարտ-

ված մասերը: Շինարարական կազմակերպությանը մնում է միայն այսպես կոչված շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրությունը¹: Դրա կազմի մեջ մտնում են հետևյալ ծախսումները. ա) մինչև 20 հազ. ռուբլի շինարարական աշխատանքների արժեք ունեցող օբյեկտները (իսկ գյուղական շինարարության մեջ մինչև 10 հազ. ռուբլի), ինչպես նաև տնաշինական կոմբինատների կառուցած բնակելի տներ՝ մինչև աշխատանքների ավարտումն այդ օբյեկտներում, բ) այն օբյեկտները, որոնց արժեքը մեծ է նշվածից, բայց դրանց շինարարության ժամկետները չեն գերազանցում վեց ամսից, ինչպես նաև բնակելի տների վրա կատարված ծախսումները, որոնք մինչև դրանց հանձնելը պատվիրատուին ըստ գնացուցակների միջանկյալ վճարումներով չեն ծածկվում, գ) կոնստրուկտիվ տարրերի ու աշխատանքների տեսակների ծախսումները, որոնցով շի կատարված նորմաներով նախատեսված ամբողջ աշխատանքը, դ) սարքավորման մոնտաժի ծախսումները, մինչև ագրեգատի կամ նրա մասերի մոնտաժման լրիվ ավարտումը:

Արտադրական պրոցեսի բոլոր տեղամասերի վրա կատարվող ծախսումները, բացառությամբ շինմոնտաժային աշխատանքների գծով անավարտ արտադրության վրա կատարվող ծախսումների, ամփոփվելով արտացոլվում են պատվիրատուի մոտ: Այդ ծախսումների գումարից հանելով շահագործման հանձնված օբյեկտների արժեքը, ստանում ենք անավարտ շինարարության մեծությունը:

Շինարարական արտադրական առանձնահատկությունների հետ կապված, հիմնական ֆոնդերի, այսինքն՝ շինարարու-

¹ Շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրության չափերը մեծ չեն: Այդ պատճառով նրա մնացորդների փոփոխությունը շինարարական կազմակերպության տարեկան արտադրական պլանը մշակելու ժամանակ, որպես կանոն, հաշվի չի առնվում: Անավարտ արտադրության մեծության փոփոխությունը հաշվի է առնվում պլանը կատարելու վերաբերյալ հաշվետվությունների մեջ, բանվորների իրաստացի արտադրանքը հաշվելիս, շրջանառու միջոցների նորմատիվները հաշվարկելու ժամանակ:

թյան վերջնական արտադրանքի գործարկման ծավալը կառուցյաների (պատվիրատուների) սլաններում նախատեսվում է բնածե և դրամական արտահայտություններ, իսկ շինարարական կազմակերպության ծրագրում՝ միայն բնածե ցուցանիշներով (արդյունաբերական նշանակություն ունեցող օբյեկտների կարողությունները, արտադրական հրապարակները, երկաթուղային և խճուղային ճանապարհների, էլեկտրահաղորդման գծերի և այլ կառուցվածքների երկարությունը, բնակելի տարածությունը և այլն):

Արտադրական կարողությունների, բնակելի տարածության ծավալը և գործարկման ժամկետները որոշվում են ժողովրդական տնտեսության ղարգացման պլանի առաջադրանքների համապատասխան, որոնք առանձին օբյեկտներով դիֆերենցվում են շինարարության տիտղոսային ցուցակներում:

Շինարարական կազմակերպության արտադրական ծրագրում նախատեսված շինարարական ու մոնտաժային աշխատանքների ծավալը և գործարկման ժամկետները բաշխվում են կոտարողների վրա: Աշխատանքները կատարողների վրա բաշխելիս հաշվի է առնվում շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը և արտադրական կոոպերացումը: Դրա շնորհիվ յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն իր ծրագրում արտացոլում է այն աշխատանքների ծավալները, որոնք ըստ գլխավոր պայմանագրի պետք է կատարվեն սեփական ուժերով և մասնագիտացված կազմակերպությունների ուժերով, ինչպես նաև այն աշխատանքների ծավալները, որոնք նա պետք է կատարի շինարարական ուրիշ կազմակերպությունների համար կամ այլ պատվիրատուների հետ կնքված պայմանագրերով:

Սկզբնական շինարարական կազմակերպության տարեկան արտադրական ծրագիրը կարելի է պատկերացնել հետևյալ ձևով (հազ. ուրբլիներով).

Օբյեկտների անվանումը	Շինման տարածքային տանձնների ծավալը	Այդ թվում ըստ կատարողների					Գործարկում	
		սեփական ուժերով	հնթակապալային կաղմակերպութչուն- ների միջոցով			կարողութչունների	գործարկման կամ մանուշակի անձնական մագիկանը	
			շինարար. բաժին	սանտեխն. մոնտաժ	արդյուն. մոնտաժ			

1. Գլխավոր պայմանագրով կատարվող աշխատանքներ

Հնդամենը	1550	1300	20	30	200		
Այդ թվում							
Ա (գործարկվելիք օբյեկտ) .	750	565	15	20	150	65 տ. խմ	սեպտեմ. 16
Բ (փոխանցվող օբ- յեկտ)	500	435	5	10	50	կաթ- սաներ № 1, 2	մայիսի 16
Գ. (նոր սկսվող օբ- յեկտ)	300	300	—	—	—	50 տ/ժ յուրա- քանչ.	

2. Ուղղակի պայմանագրերով կատարվող աշխատանքներ

Հնդամենը	180	180	—	—	—		
Այդ թվում ըստ ա- ռանձին օբյեկտների							
Հնդամենը դիտավոր և ուղղակի պայմա- նագրերով	1730	1460	20	30	200		

**3. Աշխատանքներ, որոնք կատարվում են մյուս շինարարական
կազմակերպությունների նամար ենթակապալային կարգով**

Հնդամենը	120	120	—	—	—		
Այդ թվում ըստ ա- ռանձին օբյեկտների							

Ընդամենը	1850	1600	20	30	200	
Այդ թվում						
I հոսանքային	420	340	10	10	60	
II »	490	400	10	10	70	
III	520	440	—	10	70	
IV	420	420	—	—	—	

Շինմոնտաժային աշխատանքների ծրագիրը և գործարկման առաջադրանքները սահմանվում են այն հաշվով, որ սնհրաժեշտ կուտակվածք ստեղծվի շինարարական անընդհատ արտադրությունն ապահովելու համար: Ուստի ծրագրի մեջ առանձնացվում են գործարկվելիք օբյեկտները, ինչպես նաև փոխանցվող և նոր սկսվող օբյեկտները, որոնց վրա կատարված աշխատանքները հենց կուտակվածք են կազմում:

Քննարկենք մի օրինակ, որը ցույց է տալիս շինմոնտաժային աշխատանքների ծավալի ու կուտակվածքի հարաբերակցությունը (հազ. ռուբլիներով).

Օբյեկտների անվանումը	կապիտուլի կատարած աշխատանքների նախահաշիվ արժեքը	Շինարար. սկզբից մինչև պլանային, ժամանակաշրջանը կատարված աշխատանքը	նախատեսված է կատարել պլանային ժամանակաշրջանում	Փոխանցվում է հաջորդ ժամանակաշրջանները (2—3—4)
Ա (գործարկվելիք օբյեկտ)	1500	750	750	—
Բ (փոխանցվող օբյեկտ)	1600	500	500	600
այդ թվում առաջին հերթ	900	500	400	—
Գ (նոր սկսվող օբյեկտ)	1400	—	300	1100
Ընդամենը	4500	1250	1550	1700

Ինչպես երևում է աղյուսակից, պլանային ժամանակաշրջանում շին-
մոնտաժային աշխատանքների ծավալը նախատեսվել է 1550 հազ. ուր-
ու շափով: Այդ ժամանակաշրջանի վերջին գործարկվելիք օբյեկտում կա-
տարված աշխատանքների արժեքը կկազմի 1500 հազ. ուրլի, փոխանց-
վող օբյեկտի առաջին հերթի արժեքը՝ 900 հազ. ուրլի, իսկ ընդամենը՝
2400 հազ. ուրլի, կամ տվյալ տարվա շինմոնտաժային աշխատանքնե-
րի ծավալի 151,8 տոկոսը:

Պլանային ժամանակաշրջանի վերջին անավարտ շինարարության ծա-
վալը կկազմի 400 հազ. ուրլի (100 հազ. ուրլի՝ փոխանցվող օբյեկտի
և 300 հազ. ուրլի նոր սկսվող օբյեկտի ճեղք), կամ պլանային տարվա
աշխատանքների ծավալի 25,8 տոկոսը: Անավարտ շինարարությունը շկա-
տարված աշխատանքների (1700 հազ. ուրլի) նկատմամբ կկազմի 23,5
տոկոս: Դա կապահովի պլանաչափ անցումը հաջորդ տարվա ծրագրի
կատարմանը, այսինքն՝ արտադրական պրոցեսի անընդհատությունը: Կու-
տակվածքը կազմող օբյեկտների նկատմամբ պլանում ցույց է տրվում
աշխատանքներն սկսելու ժամկետը և օբյեկտների տեխնիկական պատրաս-
տությունը տարվա վերջին:

Շինարարական կապմակերպության ուղիով աշխատանքը:

Շինարարական արտադրության պլանավորման կարևոր խըն-
դիրը շինարարական կազմակերպությունների ուղիով աշ-
խատանքի ապահովումն է: Ուղիով աշխատանք՝ նշանակում
է պլանային ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում սահ-
մանված ժամկետների, ինչպես նաև դրա համար անհրա-
ժեշտ շինմոնտաժային աշխատանքների ծավալի համապա-
տասխան համաչափորեն կատարել արտադրական կարողու-
թյունների ու բնակելի տարածության գործարկման պլանը:
Արտադրության ուղիով, համաչափ պրոցեսների պայման-
ներն են՝ կուտակվածքի լուրջ լինելը, բոլոր կատարողների,
այսինքն՝ զլխավոր կուսուլուսուրի, մասնագիտացված կազ-
մակերպությունների և պատվիրատուի կարգավորված աշ-
խատանքը, շինարարական արտադրության պատրաստի ար-
տադրանքի ժամանակին հանձնումը պատվիրատուին, ար-
տադրական կարողությունների, ս. շխատանքային, նյութա-
տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առավելագույն
օգտագործումը, թողարկվող արտադրանքի ծավալի սխտե-
մատիկ աճումը, աշխատանքների որակի բարձրացման,
դրանց ինքնարժեքի իջեցման և ուարճեր տեսակի անարտա-

գրողական ծախսումների ու կորուստների կանխման ուղղութ-
յամբ միջոցառումների անցկացումը:

Պարտիան ու կառավարութունը պահանջում են ոչ միայն
ամբողջ տնտեսության, այլև յուրաքանչյուր տնտեսական
շրջանի, յուրաքանչյուր ճյուղի, յուրաքանչյուր ձեռնարկու-
թյան ու տնտեսական կազմակերպության և նրանց կազմի
մեջ մտնող ստորաբաժանումների կողմից արտադրանքի
ռիթմիկ թողարկում:

Շինարարական կազմակերպության ռիթմիկ աշխատան-
քին նպաստում է պլանի եռամսյակային բաժանումը, որը
նախատեսում է եռամսյակից եռամսյակ արտադրության հա-
մաչափ ընթացք:

211—212 էջերում բերված օրինակի մեջ գլխավոր կապալառուի
կողմից կատարվող աշխատանքների ծավալն առաջին եռամսյակում կազ-
մում է տարեկան ծավալի 22,7 0/0, երկրորդ եռամսյակում՝ 25,5, երրորդ
եռամսյակում՝ 28,8 և չորրորդ եռամսյակում՝ 22,7 0/0: Այդ ծրագրում
պլանավորված կուտակվածքը հնարավորութուն է տալիս առանց ընդմիջ-
ման անցնել հաջորդ տարվա առաջադրանքների կատարմանը:

Շինարարական կազմակերպությունների համաչափ աշ-
խատանքին, այնուհետև, նպաստում է պլանային առաջա-
դրանքները մինչև սառուին կազմակերպությունները ժամա-
նակին հասցնելը, որի համար անհրաժեշտ է ունենալ ամս-
վա, տասնօրյակի և ավելի կարճ ժամանակամիջոցի համար
օպերատիվ պլանավորման լավ դրվածք:

Առանձին օբյեկտների և դրանց կազմի մեջ մտնող
կոնստրուկտիվ տարրերի ու աշխատանքների տեսակների
կատարումն սկսելու ժամկետները պլանավորվում են այն-
պես, որ հնարավոր լինի ամբողջ տարվա ընթացքում համա-
չափորեն կատարել այդ աշխատանքները, հաշվի առնելով
դրանց բնույթը և յուրաքանչյուր եռամսյակի կլիմայական
առանձնահատկությունները: Օրինակ, մեր երկրի միջին գո-
տում և հյուսիսում ամենից ավելի ձեռնտու է հողային, բե-
տոնային ու արտաքին հարդարման աշխատանքները կա-
տարել II և III եռամսյակներում, այն ժամանակ, երբ ջն-

քերի ներսի հարդարման ու սանիտարա-տեխնիկական աշխատանքները հաջողութեամբ կարելի է կատարել I և IV եռամսյակներում: Առանձին կոնստրուկտիվ տարրերը ու աշխատանքների տեսակների գծով աշխատանքների ծավալների ճիշտ բաշխումը ըստ եռամսյակների, ամիսների, տասնօրյակների (շաբաթների), անհրաժեշտ է նաև տարվա ընթացքում բոլոր մասնագիտությունների բանվորների համաշափ բեռնվածությունը և տեխնիկայի առավել արդյունավետ օգտագործումն ապահովելու համար:

Արտադրանքի համաշափ թողարկման կարևոր պայմաններն են՝ արտադրական ծրագրի կապակցումը նյութատեխնիկական մատակարարման պլանի հետ, կառույցների ապահովումն անհրաժեշտ տեխնիկայով, շինարարական կազմակերպություններում բանվորների ու մասնագետների կայուն կադրերի ստեղծումը:

Շինարարական կազմակերպությունների ռիթմիկ աշխատանքն ապահովելու համար վճռական նշանակություն ունեն ամբողջ շինարարական կազմակերպության, յուրաքանչյուր օբյեկտի և ստորաբաժանման պլանի կատարման ընթացքի սխտեմատիկ վերահսկողությունը, առաջադրանքների կատարմանն արգելակող պատճառների ժամանակին վերացումը, ետ մնացող տեղամասերի ու բրիգադների բարձրացումը՝ սուաջավորների մակարդակին:

Ռիթմիկ աշխատանքը շատ բանով կախված է կատարվող աշխատանքների քրակից: Պլանային տնտեսության մեջ նախօրոք որոշվում են այն պահանջները, որոնք ներկայացվում են արտադրանքի որակին: Շինարարության մեջ այդ պահանջներն արտահայտվում են նախագծերում և աշխատանքների կատարման կանոններում:

Ուստի արտադրական ծրագիրը բնաձև ցուցանիշներով կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքների որակի բարձրացման և պրոգրեսիվ կոնստրուկցիաների կիրառման բոլոր միջոցառումները, որոնք նախատեսված են նախագծում:

դրողական ծախսումների ու կորուստների կանխման ուղղութ-
յամբ միջոցառումների անցկացումը:

Պարտիան ու կառավարությունը պահանջում են ոչ միայն
ամբողջ տնտեսության, այլև յուրաքանչյուր տնտեսական
շրջանի, յուրաքանչյուր ճյուղի, յուրաքանչյուր ձեռնարկու-
թյան ու տնտեսական կազմակերպության և նրանց կազմի
մեջ մտնող ստորաբաժանումների կողմից արտադրանքի
ռիթմիկ թողարկում:

Շինարարական կազմակերպության ռիթմիկ աշխատան-
քին նպաստում է պլանի եռամսյակային բաժանումը, որը
նախատեսում է եռամսյակից եռամսյակ արտադրության հա-
մաչափ ընթացք:

211—212 էջերում բերված օրինակի մեջ գլխավոր կապալառուի
կողմից կատարվող աշխատանքների ծավալն առաջին եռամսյակում կազ-
մում է տարեկան ծավալի 22,7 %օ, երկրորդ եռամսյակում՝ 25,5, երրորդ
եռամսյակում՝ 28,8 և չորրորդ եռամսյակում՝ 22,7 %օ: Այդ ծրագրում
ալանավորված կուտակվածքը հնարավորություն է տալիս առանց ընդմիջ-
ման անցնել հաջորդ տարվա առաջադրանքների կատարմանը:

Շինարարական կազմակերպությունների համաչափ աշ-
խատանքին, այնուհետև, նպաստում է պլանային առաջա-
դրանքները մինչև սառուին կազմակերպությունները ժամա-
նակին հասցնելը, որի համար անհրաժեշտ է ունենալ ամս-
վա, տասնօրյակի և ավելի կարճ ժամանակամիջոցի համար
օպերատիվ պլանավորման լավ դրվածք:

Առանձին օբյեկտների և դրանց կազմի մեջ մտնող
կոնստրուկտիվ տարրերի ու աշխատանքների տեսակների
կատարումն սկսելու ժամկետները պլանավորվում են այն-
պես, որ հնարավոր լինի ամբողջ տարվա ընթացքում համա-
չափորեն կատարել այդ աշխատանքները, հաշվի առնելով
դրանց բնույթը և յուրաքանչյուր եռամսյակի կլիմայական
առանձնահատկությունները: Օրինակ, մեր երկրի միջին գո-
տում և հյուսիսում ամենից ավելի ձեռնտու է հողային, բե-
տոնային ու արտաքին հարդարման աշխատանքները կա-
տարել II և III եռամսյակներում, այն ժամանակ, երբ շեն-

քերի ներսի հարդարման ու սանիտարա-տեխնիկական աշխատանքները հաջողութեամբ կարելի է կատարել I և IV եռամսյակներում: Առանձին կոնստրուկտիվ տարրերի ու աշխատանքների տեսակների գծով աշխատանքների ծավալների ճիշտ բաշխումը ըստ եռամսյակների, ամիսների, տասնօրյակների (շաբաթների), անհրաժեշտ է նաև տարվա ընթացքում բոլոր մասնագիտությունների բանվորների համաշափ բեռնվածությունը և տեխնիկայի առավել արդյունավետ օգտագործումն ապահովելու համար:

Արտադրանքի համաշափ թողարկման կարևոր պայմաններն են՝ արտադրական ծրագրի կապակցումը նյութատեխնիկական մատակարարման պլանի հետ, կառույցների ապահովումն անհրաժեշտ տեխնիկայով, շինարարական կազմակերպություններում բանվորների ու մասնագետների կայուն կադրերի ստեղծումը:

Շինարարական կազմակերպությունների ռիթմիկ աշխատանքն ապահովելու համար վճռական նշանակություն ունեն ամբողջ շինարարական կազմակերպության, յուրաքանչյուր օբյեկտի և ստորաբաժանման պլանի կատարման ընթացքի սխտեմատիկ վերահսկողությունը, առաջադրանքների կատարմանն արգելակող պատճառների ժամանակին վերացումը, ետ մնացող տեղամասերի ու բրիգադների բարձրացումը՝ սուաջավորների մակարդակին:

Ռիթմիկ աշխատանքը շատ բանով կախված է կատարվող աշխատանքների քրակից: Պլանային տնտեսության մեջ նախօրոք որոշվում են այն պահանջները, որոնք ներկայացվում են արտադրանքի որակին: Շինարարության մեջ այդ պահանջներն արտահայտվում են նախագծերում և աշխատանքների կատարման կանոններում:

Ուստի արտադրական ծրագիրը բնաձև ցուցանիշներով կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքների որակի բարձրացման և սլրոգրեսիվ կոնստրուկցիաների կիրառման բոլոր միջոցառումները, որոնք նախատեսված են նախագծում:

Օպերատիվ պլանավորումը շինարարական կազմակերպություններում: Օպերատիվ պլանավորման խնդիրն է՝ հիմնական պլանային ցուցանիշները հասցնել շինարարական առանձին տեղամասերը, աշխղեկներին, բրիգադների վարպետներին ու բանվորներին, պաշքար կազմակերպել կարճ ժամանակաընթացքում (տարվա սահմաններում) ռիթմիկ աշխատանքի և արտադրանքի համաչափ թողարկման համար: Շինարարական արտադրության օպերատիվ պլանավորման համար բազա է հանդիսանում շինարարական կազմակերպության տարեկան պլանը:

Ներկայումս շինարարական կազմակերպություններում օպերատիվ պլանները, որպես կանոն, կազմվում են մեկ ամսվա համար: Պլաններում սահմանվում են շինմոնտաժային աշխատանքների ծավալները և օբյեկտների գործարկումը, կոնստրուկտիվ տարրերի ու աշխատանքների տեսակների գծով աշխատանքների ծավալները բնաձև ցուցանիշներով, ինչպես նաև հաշվարկվում է շինանյութերի, մեքենաների, փոխադրական միջոցների պահանջը, որոշվում է աշխատողների թիվը և աշխատավարձի ֆոնդը: Օպերատիվ պլանների բովանդակությունը սահմանափակվում է այն ցուցանիշներով, որոնք անմիջականորեն կախված են տեղամասերի, աշխղեկների, վարպետների, բանվորական բրիգադների գործունեությունից: Եթե աշխղեկները, վարպետները կամ բրիգադները միաժամանակ աշխատանքներ են կատարում մի քանի օբյեկտներում, ապա օպերատիվ պլանները կազմվում են յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին:

Աշխատանքների ծավալների բաշխումն ըստ ժամանակի իրականացվում է յուրաքանչյուր օբյեկտի համար մշակված օրացուցային գրաֆիկների հիման վրա: Այդ գրաֆիկներում տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների ծավալները ցույց են տրվում բնաձև ցուցանիշներով, բաշխված ըստ ամիսների:

Օպերատիվ պլանները մշակելու պրոցեսում ստուգվում է առաջադրանքները կատարելու համար տնտեսության բոլոր օղակների պատրաստությունը, գոյություն ունեցող ռեսուրս-

ները համեմատվում են պլանից բխող պահանջմունքների հետ, բացահայտվում են բոլոր «նեղ տեղերը», որոնք հատուկ ուշադրություն են պահանջում: Պլանների մեջ անհրաժեշտ դեպքերում արտացոլվում են շինարարական կազմակերպության առանձին օղակների աշխատանքում ետ մնալը վերացնելու միջոցառումները:

Այն դեպքերում, երբ շինարարական կազմակերպությունն ունի դիսպետչերական ծառայություն, կազմվում են շաբաթական կամ տասնօրյա պլաններ (գրաֆիկներ)՝ բաժանված ըստ օրերի: Դիսպետչերական ծառայության դերն է՝ ստորին ստորաբաժանումների օպերատիվ ղեկավարությունը և նրանց համար հաստատված գրաֆիկների կատարման վերահսկողությունը: Դիսպետչերական ծառայության կազմի մեջ մտնում են տրեստի զխավոր դիսպետչերը և շինարարական վարչությունների, մեքենայացման բաղանբրի, տրանսպորտային գրասենյակների, արտադրական խոշոր ձեռնարկությունների դիսպետչերները: Դիսպետչերական ծառայությունը վերահսկում է, որ բոլոր ստորաբաժանումները, որոնցից կախված է շինարարական տեղամասերում կատարվող աշխատանքների ընթացքը, կատարեն առաջադրանքները և միջոցներ է ձեռնարկում, որ տեղամասերը ժամանակին ապահովվեն տրանսպորտային միջոցներով, նյութերով, շինարարական մեքենաներով և նյութատեխնիկական այլ ռեսուրսներով:

Օպերատիվ պլանները կազմելու աշխատանքներին մասնակցում են շինարարական տեղամասերի կոլեկտիվները, ինչպես նաև սկզբնական շինարարական կազմակերպությունների ֆունկցիոնալ բաժինների աշխատողները: Բանվորների ու ծառայողների կոլեկտիվների ներգրավումը օպերատիվ պլանավորման գործին, հնարավորություն է տալիս ճշգրտել արտադրական պլանները, ավելի լրիվ հայտաբերել արտադրության ռեզերվները, բազմակողմանի մշակել թերությունները վերացնելու և աշխատանքները բարելավելու միջոցառումները:

Պլանների կատարման օպերատիվ վերահսկողությանն իրականացվում է առանձին կոնստրուկտիվ տարրերի և օբյեկտների աշխատանքները սկսելու և ավարտելու փաստացի ու պլանային ժամկետները համեմատելու, ինչպես նաև փաստորեն կատարված աշխատանքների ծավալը պլանային առաջադրանքի հետ համադրելու միջոցով:

Շինարարական արտադրության ընթացքի վերահսկողությունն առանձնապես ակնառու է գրաֆիկների օգնությամբ: Օրացուցային գրաֆիկներում, որոնց մեջ սահմանվում են աշխատանքներն սկսելու և ավարտելու ժամկետները, աշխատանքների կատարման համեմատ արտացոլվում է դրանց փաստացի ընթացքը: Դա թույլ է տալիս ժամանակին բացահայտել ետ մնացող տեղամասերը, մշակել և իրականացնել դրանց առաջ մղելու միջոցառումները:

Օպերատիվ պլանների կատարումը քննարկվում է արտադրական խորհրդակցություններում, յուրաքանչյուր ամսվա վերջում: Աշխատանքի հանրագումարները քննարկելու հետ միաժամանակ, որպես կանոն, քննարկվում է հաջորդ ամսվա պլանը:

Օպերատիվ, հստակ պլանավորումն ապահովում է շինֆինպլանի կոնկրետացումը, նրա հիմնական ցուցանիշները կատարողներին հասցնելը, շինարարական արտադրության ընթացքի սխտեմատիկ վերահսկողությունը: Օպերատիվ պլանավորման բարելավումը շինարարական կազմակերպություններում տնտեսական հաշվարկի ամրապնդման, պլանների կատարման և գերակատարման համար մղվող սոցիալիստական մրցության լայն զարգացման պայմաններից մեկն է:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ԵՎ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԳՈՐԾԸ

1. ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Գործարան, ֆաբրիկա, բնակելի տուն, երկաթուղի կամ մի այլ շինություն կառուցելու համար անհրաժեշտ է նախօրոք կատարել յուրաքանչյուր օբյեկտի տեխնիկական և տրնտեսական համապատասխան հաշվարկներ, որոնք արտացոլվում են նախագծի և նախահաշվի մեջ:

Նախագիծը տեխնիկական փաստաթղթերի մի կոմպլեքս է, որը պարունակում է տեխնիկական-տնտեսական հիմնավորումներ, գծագրեր, բացատրագրեր և այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են ձեռնարկության, շենքերի և կառուցվածքների շինարարությունը կամ վերակառուցումն իրականացնելու համար: Նախագծի անկապտելի մասն է նախահաշիվը: Այն որոշում է համապատասխան օբյեկտի շինարարության կամ վերակառուցման արժեքը:

Նախագծի բովանդակությունը: Արտադրական ձեռնարկության նախագիծը բաղկացած է երեք հիմնական մասից՝ տեխնոլոգիական, շինարարական և տնտեսական:

Նախագծի տեխնոլոգիական մասը որոշում է նախագծվող ձեռնարկության տեխնիկական մակարդակը: Այն պարունակում է լուծումներ, որոնք վերաբերում են արտադրության կազմակերպմանը, տեխնոլոգիական պրոցեսին, սարքավո-

րումների ընտրմանը, ձեռնարկությունում աշխատանքի մեքենայացմանը և ավտոմատացմանը:

Նախագծվող ձեռնարկության տեխնիկական մակարդակից է հիմնականում կախված կապիտալ ներդրումների արդյունավետությունը, ձեռնարկության արտադրանքի ինքնարժեքը և որակը, նրա աշխատանքի շահութաբերությունը, ինչպես նաև շինարարության ժամկետները և արժեքը:

Ֆաբրիկաների, գործարանների և այլ օբյեկտների նախագծերում արտացոլվում են գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները: Դրանցում նախատեսվում են առաջավոր տեխնոլոգիան և արտադրության կազմակերպումը, հաշվի են առնվում հայրենական ու արտասահմանյան առաջավոր ձեռնարկություններում ձեռք բերած առավել բարձր տեխնիկա-տնտեսական ցուցանիշները:

Նախագծի շինարարական մասը որոշում է նախագծվող շենքերի ու կառուցվածքների ծավալա-հատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ¹, որոնք ապահովում են արտադրական պրոցեսի ռացիոնալ կազմակերպումը և ամենից ավելի են համապատասխանում շինարարական տեղական պայմաններին ու դրա արժեքի իջեցման խնդիրներին: Շինարարության կազմակերպմանը վերաբերող փաստաթղթերում սահմանվում են նաև յուրաքանչյուր օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների ծավալները, հաջորդականությունը ու շինարարության ժամկետները, ինչպես նաև հիմնական սրժխատանքները կատարելու մեթոդները: Նախագծի այդ մասի խնդիրն է նաև պարզել հիմնական շինանյութերի ու

¹ Ծավալա-հատակագծային լուծումը ամբողջությամբ սահմանում է շենքի կամ կառուցվածքի հիմնական շափերը (ծավալ, երկարություն, լայնություն, բարձրություն), շենքի հարկերը, շենքերի ու կառուցվածքների առանձին մասերի (ցեխերի, հիմնական ու օժանդակ շենքերի, անցումների, հարթակների և այլն) տեղադրումը և շափերը, սյուների միջև եղած թացվածքները և հեռավորությունները (սյուների քայլը):

Կոնստրուկտիվ լուծումը նախատեսում է նյութի և կոնստրուկցիայի տեսակի ընտրությունը, շենքերի և կառուցվածքների առանձին մասերի շափերը, հավաքովի կոնստրուկցիաներ կիրառելու աստիճանը և այլն:

դետալներին, շինարարական մեքենաներին, տրանսպորտային միջոցների ու բանվորական կադրերի պահանջը:

Նախագծի տնտեսական մասը հիմնավորում է շինարարության համար առավել նպատակահարմար տեղի ընտրությունը, որոշում է ձեռնարկության կարողությունը ու կազմը, նրա աշխատողների աշխատանքի արտադրողականության մակարդակը: Այդ մասում քննարկվում է նախագծվող ձեռնարկությունը կադրերով, հումքով, վառելիքով, էներգիայով ու ջրով ապահովելու, ինչպես նաև ձեռնարկության արտադրանքի սպառման և նրա ինքնարժեքի հարցերը:

Նախագծում համապատասխան նախահաշիվների ու նախահաշվային-ֆինանսական հաշվարկների հիման վրա սահմանվում է շինարարության նախահաշվային արժեքը:

Թվարկած, ինչպես նաև նախագծի մնացած մասերում քննարկվող մյուս հարցերի (էներգամատակարարում, ջրամատակարարում, տրանսպորտ և այլն) բազմակողմանի ու խոր մշակման շնորհիվ որոշվում են նախագծվող ձեռնարկության տեխնիկա-տնտեսական հիմնական ցուցանիշները, որոնք բնութագրում են ընդունված նախագծային լուծումների տնտեսական արդյունավետությունը:

Նախագծվող օբյեկտի տեխնիկա-տնտեսական ցուցանիշները համադրվում են առաջներում նախագծված կամ կառուցված նման օբյեկտների ցուցանիշների կամ նախագծի այլ վարիանտների հետ: Դրանք համեմատվում են նաև այն ցուցանիշների հետ, որոնք սահմանվում են արդյունաբերության առանձին ճյուղերի համար, հաշվի առնելով գործող և կառուցվող առաջավոր ձեռնարկությունների նվաճումները: Համադրման արդյունքները հաշվի են առնվում մշակված նախագծով շինարարությունն իրականացնելու նպատակահարմարության հարյը լուծելիս:

Նախագծի յոյս կամ այն վարիանտի խնայողական լինելու գնահատականը կատարվում է այնպիսի տեխնիկա-տնտեսական հիմնական ցուցանիշներով, ինչպես տեսակարար կապիտալ էներգումները, արտադրանքի ինֆլատիվ և ետզեման ժամկետները: Եթե նոր նախագծի ցուցանիշները

համադրվող նախագծի (չափանիշի՝ էտալոնի) համապատասխան ցուցանիշներից լավ են, ապա նոր նախագիծը խնայողական է: Եթե տեսակարար կապիտալ ներդրումները միատեսակ են, իսկ արտադրանքի ինքնարժեքը ցածր, ապա նոր նախագիծն էլի պետք է համարել խնայողական: Նույնպիսի հետևություն կարելի է անել նաև այն դեպքում, երբ համեմատվող նախագծերում արտադրանքի ինքնարժեքը հավասար է, իսկ տեսակարար կապիտալ ներդրումները նոր նախագծում ցածր են համեմատության համար ընդունված էտալոնի համապատասխան ցուցանիշներից:

Եթե նոր նախագծով արտադրանքի ինքնարժեքը ցածր է, իսկ տեսակարար կապիտալ ներդրումները բարձր, քան ընդունված էտալոնում, ապա որոշվում է լրացուցիչ կապիտալ ներդրումները և դրանց հտգնման ժամկետները (կամ արդյունավետության գործակիցը), որոնք համեմատվում են սովյալ ճյուղի նորմատիվի հետ: Լրացուցիչ կապիտալ ներդրումները տնտեսապես նպատակահարմար են, երբ սովյալ նախագծով հտգնման ժամկետը չի գերազանցում նորմատիվից: Որքան մեծ է արդյունավետության գործակիցի մեծությունը, այնքան բարձր է նախագծային լուծման արդյունավետությունը: Այսպիսով հտգնման ժամկետի ցուցանիշը և արդյունավետության գործակիցը թույլ են տալիս պարզելու, թե արդյոք պետք է լրացուցիչ միջոցներ ծախսել սովյալ ձեռնարկությունը կառուցելու համար, հետագայում արդյոք դրանք կարող են հտգնվել արտադրանքի ինքնարժեքի լրացուցիչ տնտեսումով:

Քննարկենք մի օրինակ: Որպես էտալոն ընդունված նախագծով ձեռնարկության նախահաշվային արժեքը կազմում է 120 մլն ռուբլի, նրա տարեկան կարողությունը՝ արտադրանքի 800 հազ. միավոր և արտադրանքի միավորի ինքնարժեքը՝ 30 ռուբլի: Նոր նախագծով ձեռնարկության նախահաշվային արժեքը կազմում է 176 մլն ռուբլի, տարեկան կարողությունը՝ 860 հազ. միավոր և արտադրանքի միավորի ինքնարժեքը՝ 24 ռուբլի:

Արդյունաբերության այն ճյուղի համար, որին վերաբերում է նախագծվող ձեռնարկությունը, լրացուցիչ կապիտալ ներդրումների հտգնման նորմատիվ ժամկետը սահմանված է 10 տարի: Պահանջվում է որոշել ձեռնար-

կուսթյան կառուցման տնտեսական նպատակահարմարությունը նոր նախագծով:

Ձեռնարկության տարեկան կարողության միավորին ընկնող լրացուցիչ կապիտալ ներդրումները կազմում են.

$$\frac{176\ 000\ 000}{8\ 000} - \frac{120\ 000\ 000}{800\ 000} = 200 - 150 = 50 \text{ ուրլի}$$

Հետևաբար, լրացուցիչ կապիտալ ներդրումների հոգնման ժամկետը հավասար կլինի 8,3 տարվա $\left(\frac{50}{30 - 24}\right)$:

Բերված օրինակում արդյունավետության գործակիցը՝ 0,10 նորմատիվային մեծության փոխարեն, կկազմի.

$$\frac{30 - 24}{50} = 0,12$$

Այսպիսով, նոր նախագծով ձեռնարկության շինարարությունը տնտեսապես նպատակահարմար է:

Նախագիծը գնահատելու համար կարող է օգտագործվել նախագծվող ձեռնարկության շահութաբերության ցուցանիշը:

Եթե, օրինակ, ձեռնարկության նախահաշվային արժեքը հավասար է 120 մլն ուրլու, նրա տարեկան արտադրանքի արժեքը մեծածախ գներով՝ 32 մլն ուրլու, իսկ նույն արտադրանքի ինքնարժեքը՝ 24 մլն ուրլու, ապա ձեռնարկության շահութաբերության ցուցանիշը կկազմի.

$$\frac{32 - 24}{120} \times 100 = 6,7 \text{ տոկոս, այսինքն՝ կապիտալ ներդրումների մեկ ուրլուն՝ 6,7 կոպեկ:}$$

Ժամանակի գործոնը հաշվի է առնվում նախագծերը քննարկելու ժամանակ՝ դրանց մեջ նախատեսված շինարարության ժամկետները համանման այլ ձեռնարկությունների շինարարության ժամկետների, ինչպես նաև շինարարության տևողության նորմաների հետ համադրելու միջոցով:

Նախագծման ստադիաները: Նախագծերի կազմումը մեր երկրում իրականացնում են պետական նախագծային կազմակերպությունները՝ պատվիրատուներից ստացված նախագծման առաջադրանքների հիման վրա: Այդ առաջադրանքները մշակվում են նախագծային կազմակերպությունների

անմիջական մասնակցութեամբ, ելնելով ժողովրդական տընտեսութեան զարգացման հեռանկարային պլաններին: Նախագծերի որակը զգալի շափով կախված է նախագծման վերաբերյալ առաջադրանքների խնամքով մշակումից:

Արդյունաբերական ձեռնարկութեան նախագծման առաջադրանքի մեջ նշվում է ենթադրվող շինարարութեան շրջանը կամ կետը, նախատեսվում է ապագա ձեռնարկութեան մասնագիտացումը և արտադրական կոուպերացումը, որոշվում են նրա կարողութունը, հումքի, նյութերի էլեկտրաէներգիայի ու վառելիքի մոտավոր պահանջը և դրանց ստացման հիմնական աղբյուրները, հետագայում ձեռնարկութեանն ընդլայնելու հնարավորութեանը, պատրաստի արտադրանքի սպառման մոտավոր շրջանները, շինարարութեան ժամկետները և կարողութունների գործարկման հերթականութեանը:

Բնակարանային և կուլտուր-կենցաղային նշանակութեան օբյեկտների նախագծման առաջադրանքի մեջ որոշվում է նախագծվող ավանի բնակիչների թիվը և բնակելի տարածութեան շափերը, շինութեանների հարկերը, կուլտուր-կենցաղային նշանակութեան հիմնարկների կազմը և շափերը, հիվանդանոցի մահճակալների, կինոթատրոնի տեղերի թիվը և այլն:

Ստանալով առաջադրանքը, նախագծային կազմակերպութեանը ուսումնասիրում և քննադատորեն քննարկում է դրա հիմնական դրույթները: Եթե նախագծի մշակման պրոցեսում անհրաժեշտ է լինում ուղղել առաջադրանքը, նախագծային կազմակերպութեանը մտցնում է առաջարկութեաններ, որոնք պատվիրատուն պարտավոր է քննարկել:

Ելնելով նախագծման վերաբերյալ հանձնարարութեանից, նախագծային կազմակերպութեանը կատարում է տնտեսական և տեխնիկական հետազոտութեաններ:

Տնտեսական հետազոտութեանները կատարվում են կառուցվող կամ վերակառուցվող ձեռնարկութեանը հումքով, նյութերով, վառելիքով, էլեկտրաէներգիայով և տրանսպորտային միջոցներով ապահովելու, նրա կոուպերացման պայմանները որոշելու, ինչպես նաև տեղական բանվորական

կադրերին շինարարության և ապագա ձեռնարկության մեջ աշխատանքի ներգրավելու, տեղական շինանյութերը և առհա արտադրատեխնիկական բազան օգտագործելու հնարա-
վորությունները հայտաբերելու համար: Ձեռնարկությունը վերակառուցելու դեպքում հիմնավորվում է դրա անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Տեխնիկական նետագոտությունները կատարվում են տրվյալ հրապարակում շինարարության կամ ձեռնարկության վերակառուցման նպատակահարմարությունը որոշելու համար: Ընդ որում ուսումնասիրվում են շենքերի ու կառուցվածքների կառուցման պայմանները, որոշվում են տվյալ գետնի վրա թուլատրելի լարվածությունները, ընտրվում են հիմքերի տիպը և կոնստրուկցիան, սահմանվում են հողային, ջրհաման և բարեկարգման աշխատանքների ծավալը, ձեռնարկությունը ջուր և անհրաժեշտ ռեսուրսներ մատակարարելու պայմանները: Տեխնիկական հետազոտությունները սովորաբար անցկացվում են շինարարության համար նախատեսված մի քանի հրապարակներում, իսկ այնուհետև կատարվում է հրապարակի վերջնական ընտրություն:

Նախագծման վերաբերյալ հանձնարարության հիման վրա նախագծային կազմակերպությունը մշակում է նախագծային առաջադրանք, որի կազմի մեջ մտնում են նաև նշված տնտեսական ու տեխնիկական հետազոտությունները:

Նախագծային առաջադրանքը հանդիսանում է նախագրծման առաջին ստադիան: Այն ընդգրկում է հիմնական տեխնիկական լուծումները, որոնք ապահովում են աշխատանքի, նյութերի և դրամական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը՝ ինչպես նախագծվող օբյեկտի շահագործման, այնպես էլ նրա կառուցման ժամանակ:

Նախագծային առաջադրանքը մշակելու ժամանակ սահմանվում է ձեռնարկության կազմը, ճշգրտվում է նրա կարողությունը, ընտրվում է շինարարության համար հրապարակը, որոշվում են հումքով, ջրով, վառելիքով, ջերմության միջոցով, էլեկտրաէներգիայով և շինանյութերով նախագծվող

օբյեկտը մատակարելու աղբյուրները և եղանակները: Նախագծային առաջադրանքում որոշվում են շինարարութան նախահաշվային ընդհանուր արժեքը և նախագծվող օբյեկտի տեխնիկա-տնտեսական հիմնական ցուցանիշները:

Ասածներից երևում է, որ նախագծային առաջադրանքը սահմանում է տվյալ տեղում և նախատեսված ժամկետներում շինարարություն կատարելու տեխնիկական հնարավորությունը և տնտեսական նպատակահարմարությունը:

Նախագծային առաջադրանքը հիմնական փաստաթուղթ է ծառայում կապիտալ ներդրումները պլանավորելու ու շինարարության պայմանագրեր կնքելու, ինչպես նաև տեխնոլոգիական սարքավորում պատվիրելու համար: Այն մշակելու ժամանակ լայնորեն օգտագործվում են տիպային նախագծերը, իսկ տիպային նախագծերի բացակայության դեպքում՝ համանման օբյեկտների առավել խնայողական նախագծերը:

Արդյունաբերական ձեռնարկության նախագծային առաջադրանքը, բացի տեխնոլոգիական, շինարարական և տնտեսական մասերից, պարունակում է գլխավոր հատակագիծ, շինարարությունը կազմակերպելու նախագիծ, էներգետիկայի, ջրամատակարարման, կոյուղու, ջերմամատակարարման վերաբերյալ անհրաժեշտ հաշվարկներ և տվյալներ:

Ապուգա ձեռնարկության գլխավոր հատակագծում ցույց է տրվում նախագծվող, գոյություն ունեցող, վերակառուցվող և քանդման ենթակա շենքերի, կառուցվածքների, տրանսպորտային ուղիների և այլ կոմունիկացիաների տեղաբաշխումը:

Շինարարության կազմակերպման նախագծերում սահմանվում է առանձին օբյեկտների գործարկման հերթականությունը: Ընդ որում շինարարության ժամկետները որոշվում են շինարարության տեղումնային հաստատված նորմա-ների սահմաններում:

Շինարարության կազմակերպման նախագծերը հիմք են ծառայում շինարարության արտադրական պլանավորման ու նրա նյութատեխնիկական մատակարարման համար, ինչպես

նակ նախապատրաստական աշխատանքները¹։ Ժամանակին
անցկացնելու և շինարարական կազմակերպությունների ար-
տադրական բազայի զարգացման ու կազմակերպման հետ
կապված հարցերը լուծելու համար՝

Նոր, դեռևս չլուրացված կամ արտադրության առանձնապես բարդ տեխ-
նոլոգիա ունեցող, ինչպես նաև սարքավորումների նոր տեսակներով ար-
դյունաբերական ձեռնարկությունների նախագծման ժամանակ, որպես բա-
ցառություն, թույլատրվում է հաստատման ներկայացնել նախագծային ա-
ռաջադրանքներ, որոնք պարունակում են առանձին ցեխերի, շենքերի և կա-
ռուցումների նախագծի տեխնոլոգիական մասի, իսկ անհրաժեշտ դեպքում
նաև նրա մյուս մասերի, նախնական նախագծային լուծումներ, նկատի
սեննալով, որ այդ լուծումները կճշգրտվեն դեռևս մինչև նախագծման երկ-
րորդ ստադիան։ Նախագծային առաջադրանքը մշակելու այդպիսի կարգը
կարող է կիրառվել միայն այն օրգանի թույլտվությամբ, որը հաստատում է
նախագծային առաջադրանքը։ Հաջորդ բոլոր ճշգրտումները, որոնք մտ-
ցրվում են նախապես ընդունված նախագծային լուծումների մեջ, համա-
ձայնեցվում են նախագծի պատվիրատուի հետ, իսկ երբ այդ ճշգրտումները
հանգեցնում են շինարարության սահմանված նախահաշվային արժեքի ավե-
լացմանը՝ նաև այն օրգանի հետ, որը հաստատել է նախագծային առաջա-
դրանքը։

Նախագծման երկրորդ ստադիան հաստատված նախա-
գծային առաջադրանքի հիման վրա աշխատանքային այն
գծագրերի կազմումն է, որոնցով կատարվում են շինմոնտա-
ժային սուխատանքներ։

Շենքերի և կառուցվածքների աշխատանքային գծագրերը

¹ Նախապատրաստական աշխատանքներին վերաբերում է մերձատար
ուղիների, չրամատակարարման, կոյուղու, էներգամատակարարման և այլ
ցանցերի, ինչպես նաև ժամանակավոր շենքերի ու կառուցվածքների շինա-
րարությունը, որոնք անհրաժեշտ են շինմոնտաժային աշխատանքներ կա-
տարելու համար։ Նախապատրաստական աշխատանքների ժամանակին կա-
տարումը պայմաններ է ստեղծում շինարարական արտադրությունը լավ
կազմակերպելու և շինարարական տեխնիկական ավելի արդյունավետ օգտա-
գործելու համար։ Եվ ընդհակառակը, դրանց ոչ ժամանակին կատարումն
իր հետ բերում է շինարարության դանդաղեցում ու թանկացում։ Ուստի
նախապատրաստական աշխատանքների անդկացումը հատուկ ուշադրու-
թյուն է պահանջում։ Առանց դրանք իրականացնելու, արգելված է աշ-
խատանքներ սկսել հիմնական օբյեկտներում։

ստորաբաժանվում են ընդհանուր և մանրամասն գծագրերի: Ընդհանուր գծագրերում արվում է տեխնոլոգիական, տրանսպորտային, էներգետիկ, սանիտարա-տեխնիկական և այլ սարքավորման, կոնստրուկցիաների և կոմունիկացիաների ճշգրիտ տեղադրումը, իսկ մանրամասն գծագրերում որոշվում են շենքերի ու կառուցվածքների բոլոր կոնստրուկցիաների, դետալների և տարրերի չափերը և դրանց զուգակցումը:

Աշխատանքային գծագրեր կազմելու ստադիայում կատարվում է նախագծվող բոլոր օբյեկտների, ինժեներական կոմունիկացիաների, տրանսպորտային կառուցվածքների տեղաբաշխման հետ ձեռնարկության գլխավոր հատակագծի, ինչպես նաև շինհրապարակի բարեկազման վերաբերյալ լուծումների վերջնական ճշգրտում:

Աշխատանքային գծագրերի հիման վրա շինարարական կազմակերպությունը կազմում է շինմոնտաժային աշխատանքների կատարման նախագծեր: Դրանց մեջ սահմանվում են աշխատանքները կատարելու առավել նպատակահարմար մեթոդներ, որոնք թույլ են տալիս ապահովել ձեռնարկությունների և օբյեկտների գործարկումն ամենակարճ ժամկետներում ու նվազագույն ծախսումներով:

Այն դեպքերում, երբ նախագծվում են փոքր ու տեխնիկայես ոչ բարդ օբյեկտներ, իսկ շինարարական հրապարակի և հիմնական տեխնիկական լուծումների ընտրությունը չի պահանջում նախագծային և հետսուզտական նախնական աշխատանքներ, նախագիծը մշակվում է մեկ ստադիայում՝ նախագծային առաջադրանքները հաստատող օրգանի թույլտվությամբ: Այդպիսի նախագիծը պարունակում է կրճատված, բայց շինարարությունն իրականացնելու համար միանգամայն բավարար նախագծային-նախահաշվային նյութերի ծավալ:

Նախագծման նորմաները: Նախագծերի որակը բարձրացնելու համար մեծ նշանակություն ունի տեխնոլոգիական նախագծման պրոգրեսիվ նորմաների, շինարարական նախագծման նորմաների, ինչպես նաև շինանյութերի և դետալների ստանդարտների կիրառումը: Այդ նորմաները մշակ-

վում են, հաշվի առնելով շինարարության որակի ՝ բարձրացումը, արժեքի իջեցումը և ժամկետների կրճատումը:

Տեխնոլոգիական նախագծման նորմաները որոշում են համապատասխան արտադրության տեխնիկական մակարդակը և տեխնոլոգիական նախագծման առաջադիմության աստիճանը: Այդ նորմաներով սահմանվում են. սարքավորման ու ագրեգատների արտադրողականությունը, դրանց աշխատանքի ռեժիմները, սարքավորման ու ագրեգատների տեղադրումը, գործիքների, հարմարանքների ու գույքի ծախսումները, հումքի, վառելիքի և օժանդակ նյութերի ծախսումն ու պաշարը, օժանդակ ու սահնատային. հրապարակների շափերը, շահագործող անձնակազմի թվաքանակը և այլն: Տեխնոլոգիական նախագծման նորմաները կարևոր նշանակություն ունեն նոր տեխնիկան արմատավորելու և արտադրության կազմակերպումը բարելավելու համար, ուստի դրանք պարբերաբար վերանայվում են, հաշվի առնելով գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները:

Տեխնոլոգիական նախագծման պրոգրեսիվ նորմաների կիրառումը նախագծերում թույլ է տալիս զգալի շափով բարելավել շինարարության և ձեռնարկությունների շահագործման տեխնիկա-տնտեսական ցուցանիշները:

Այսպես, ոչ-հանքային շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների՝ 1961 թվականին հաստատված տեխնոլոգիական նախագծման նորմաներով նախատեսվում է, անցյալում գործող նորմաների համեմատությամբ, տեսակարար կապիտալ ներդրումներն իջեցնել 13—22 տոկոսով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 18—28 և արտադրանքի ինքնարժեքն իջեցնել 6—21 տոկոսով:

Շինարարական նախագծման նորմաները սահմանում են շենքերի ու կառուցվածքների ծավալա-հատակագծման և կոնստրուկտիվ լուծումների, ինչպես նաև հրապարակում դրանց տեղադրման հիմնական պահանջները, հաշվի առնելով շինարարության ինքնարժեքի առավելագույն իջեցումը և շինանյութերի խնայողական օգտագործումը: Ընդ որում պետք է ասլահովակն օբյեկտների շահագործման նորմալ

պայմանները և անհրաժեշտ երկարակեցությունը: Ձեռնարկությունների ու առանձին օբյեկտների կառուցման ժամկետները նախագծերի մեջ որոշվում են շինարարութայան տեվողութայան նորմաների հիման վրա:

Շինարարութայան տեխնիկական մակարդակի անընդհատ բարձրացումը պահանջում է շինարարական նախագծման նորմաների մշտական կատարելագործում:

Վերջին տարիների ընթացքում մի շարք հասարակական շենքերի նախագծման նորմաները վերանայելու շնորհիվ դպրոցների շինարարութայան արժեքը, դրանց շահագործման որակը բարձրացնելու հետ միաժամանակ, իջել է 9 տոկոսով, հիվանդանոցներինը՝ 15, կինոթատրոններինը՝ 25—39 տոկոսով: Շինարարական առաջավոր կազմակերպութայունները ձգտում են բարելավել նորմաներով նախատեսված ցուցանիշները և ապահովում են պետական միջոցների լրացուցիչ խնայողութայուն:

ՍՍՌՄ շինարարութայան և ճարտարապետութայան ակադեմիան ներկայումս նախագծային առաջավոր կազմակերպութայունների փորձն ու գիտական հետազոտութայունների արդյունքներն ընդհանրացնելու հիման վրա վերանայում է շինարարական նախագծման գործող բոլոր նորմաները: Նոր նորմաները, որոնք կենտրոնացվում են շինարարական նորմաների և կառուցների (ՇՆ և Կ) Ու մասում, կնպաստեն ժամանակակից առավել խնայողական նախագծային լուծումների և աշխատանքների կատարման ինդուստրիալ մեթոդների լայն արմատավորմանը:

Արտադրողների և սպառողների համար շինանյութերի, դետալների ու կոնստրուկցիանների պարտադիր տեխնիկական բնութագրերը սահմանվում են պետական ստանդարտներով: Ստանդարտների կիրառումը սահմանափակում է պատրաստվող շինվածքների տիպաշափերի քանակը և պայմաններ է ստեղծում արտադրութայան մասնագիտացման համար: Այդ առանձնապես կարևոր է հավաքովի կոնստրուկցիաների լայն կիրառման կապակցութայամբ:

Ստանդարտները կանոնավոր կերպով վերանայվում են: Ստանդարտները վերանայելու և նորերը սահմանելու ժամանակ հատուկ ուշադրութայուն է դարձվում հումքը տնտեսելու, դետալների ու կոնստրուկցիանների քաշը փոքրացնելու, դրանց պատրաստման աշխատատարութայունն իջեցնելու վրա:

Տեխնոլոգիական ու շինարարական նախագծման ճորժանքների, ինչպես նաև շինանյութերի ու դետալների ստանդարտների մշակումը կատարվում է նախագծային և գիտահետազոտական ինստիտուտների կողմից, նախագծման ու շինարարության առաջավոր փորձը, հայրենական ու արտասահմանյան ձեռնարկությունների, ու կառույցների լավագույն նվաճումներն ուսումնասիրելու և ընդհանրացնելու հիման վրա, հաշվի առնելով արտադրության նորարարների ու բացիոնալիզատորների առաջարկությունները:

Տեխնոլոգիական նախագծման նորմաները մշակելու աշխատանքի ղեկավարությունը դրված է ՍՍՌՄ պետտնտիստի հի և ՍՍՌՄ պետշինի վրա, իսկ շինարարական նախագծման նորմաները և շինանյութերի դետալների ստանդարտները մշակելու ղեկավարությունը՝ ՍՍՌՄ պետշինի վրա:

Նախագծման հաստատված նորմաները և ստանդարտները պարտադիր կարգով կիրառվում են բոլոր նախագծային ու այլ կազմակերպությունների կողմից: Պետական նորմավորման այդպիսի սիստեմն ապահովում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի նոր կառուցվող և վերակառուցվող ձեռնարկությունների, շենքերի և կառուցվածքների առավել ռացիոնալ ու խնայողական նախագծային լուծումների կիրառում, տեխնիկական քաղաքականության և շինարարության արժեքը որոշելու համար ելակետային բաղայի միասնություն:

2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆ ԻՋՑՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆՆ Է

Պարտիայի և կառավարության միջոցառումները նախագծումը կատարելագործելու ասպարեկում: Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը սիստեմատիկաբար իրականացնում են միջոցառումներ, որոնք ուղղված են նա-

խագծային-նախահաշվային գործի բարելավմանն ու զարգացմանը, պետական նախագծային-նախահաշվային կարգապահության ամրապնդմանը:

Այդ միջոցառումների գլխավոր օղակը նախագծերի որակի բարձրացումն է: Շինարարության մեջ տարեցտարի արմատավորվում են արդյունաբերական ցեխերի, շենքերի ու կառուցվածքների ավելի ու ավելի մեծ քանակի ռացիոնալ ու խնայողական նախագծային լուծումներ: Դրանցում նկատի են առնվում ամենից ավելի առաջադիմական տեխնոլոգիական պրոցեսներ, սարքավորման նորագույն տեսակներ, աշխատանքի պրոցեսների կոմպլեքսային մեքենայացում և ավտոմատացում, արտադրության կազմակերպման առաջավոր մեթոդների արմատավորում:

Նախագծային-նախահաշվային գործը բարելավելու համար կարևորագույն նշանակություն ունեն նախագծման և շինարարության մեջ ավելորդությունները արմատախիլ անելը և կանխելը: Ճարտարապետական ձևավորման ամեն տեսակի ավելորդությունները, շենքերի ու կառուցվածքների մակերեսների ու ծավալների չափազանցումը, ոչ-խնայողական կոնստրուկտիվ լուծումների ու թանկարժեք նյութերի կիրառումը հասցնում են դրամական միջոցների, աշխատանքային ու նյութական ծախսումների չհիմնավորված ավելացմանը, իջեցնում են կապիտալ ներդրումների արդյունավետությունը: Նախագծման և շինարարության մեջ ավելորդությունների վերացումը թույլ է տալիս տնտեսել զգալի միջոցներ և դրանք ուղղել արտադրական ձեռնարկությունների, բնակարանների և կուլտուր-կենցաղային նշանակության օբյեկտների շինարարության, քաղաքների ու ավանների բարեկարգման և կանաչապատման աշխատանքների հետագա ընդլայնմանը:

Նախագծային գործը բարելավելու բնագավառում մեծ դեր խաղաց ՍՄԿՊ. Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի 1955 թվականի նոյեմբերի 4-ի «Նախագծման և շինարարության մեջ ավելորդությունները վերացնելու մասին» որոշումը: Այդ որոշման մեջ խիստ քննադատության ենթարկվեց

ճարտարապետության արտաքին-ցուցադրական Վկոդմով հրապուրվելու արտավոր պրակտիկան, որը հանգեցնում էր մեծ ավելորդությունների: Շատ նախագծերում թույլ էին տրբվում շենքերի չափից ավելի բարձրացված ծավալներ ու ոչխնայողական հատակագծում, օժանդակ շենքերի կազմի ու չափի ավելացում, ոչնչով չարդարացվող դեկորատիվ զարդաքանդակներ, բազմաթիվ սյուներ, սյունազավիթներ, բարդ քիվեր և թանկարժեք այլ դետալներ: Շենքերն ու հարմարանքները կառուցվում էին առավելապես անհատական նախագծերով: Այս ամենը վնասում էր ժողովրդական տնտեսությանը:

Այդ որոշման համապատասխան նախագծային և շինարարական կազմակերպությունները վերջին տարիներին զգալի աշխատանք կատարեցին նախագծման ավելորդությունները վերացնելու, շենքերի ու կառուցվածքների ավելի ռացիոնալ ու խնայողական նախագծային լուծումներ մշակելու ուղղությամբ:

ՍԿՄՊ XXII համագումարը նշեց նախագծային գործի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը: Համագումարի որոշումների մեջ նշվում է, որ նոր ձեռնարկությունների նախագծումը պետք է կատարվի առանց ավելորդությունների, հաշվի առնելով առաջադիմական տեխնոլոգիական պրոցեսները, նորագույն տեխնիկան, ավտոմատացումն ու մեքենայացումը, արտադրության տեխնիկա-տնտեսական բարձր ցուցանիշները, իջեցնելով թողարկվող արտադրանքի միավորին ընկնող կապիտալ ներդրումները, ինչպես նաև հաշվի առնելով աշխատանքի սլայմանների հետագա բարելավման համար անհրաժեշտ բոլոր հնարավորությունների ստեղծումը:

Ավելորդությունների դեմ մղվող պայքարը ժամանակավոր կոմպանիա չէ: Փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ նախագծողները, տեղական պարտիական ու տնտեսական օրգանները ուշադրությունը թուլացնում են շինարարության էկոնոմիկայի հարցերի նկատմամբ, բարենպաստ սլայմաններ են ստեղծվում նախագծման և շինարարության մեջ ավելորդությունների արտավոր պրակտիկայի վերածնունդի համար:

ՄՄԿՊ ծրագրով նախատեսված ժողովրդական տնտեսութ-
յան մեջ կապիտալ ներդրումների վիթխարի ծավալը նա-
խագծային կազմակերպությունների առաջ նոր պատասխա-
նատու խնդիրներ է դնում: ՄՄԿՊ XXII համագումարում
սոված զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովը նշեց, որ «կոմունիզ-
մի նյութատեխնիկական բազան ստեղծվում է արդեն այժմ
տեխնիկական նախագծերի մեջ, այն գործարանների մեջ,
որոնք շարք են մտնում այսօր, բայց աշխատելու են նաև
15—20 տարի հետո»¹:

Նոր ձեռնարկությունների նախագծերը պետք է պատաս-
խանեն մի շարք պահանջների, որոնց կատարումը կնպաստի
կոմունիզմի նյութատեխնիկական բազայի արագ ստեղծմա-
նը: Ամենից առաջ նախագծերը պետք է ապահովեն նյութա-
տեխնիկական ռեսուրսների ու դրամական միջոցների արդյու-
նավետ օգտագործման պրակտիկ ուղիների մշակում, աշխա-
տանքի խելացի տնտեսում: Ուստի շատ կարևոր է, որ նա-
խագծերի մեջ հաշվարկները լինեն ճիշտ ու հիմնավորեն, թե
ինչ, երբ և որտեղ պետք է կառուցվի, նպատակ ունենալով
նվազագույն ծախսումներով ստանալ առավել արդյունք և
ամեն կերպ կրճատել արտադրական կարողությունների շա-
հագործման հանձնելու ժամկետները: Նախագծերը պետք է
առավել լրիվ արտացոլեն գիտատեխնիկական նորագույն
հայտնագործությունները և կատարելագործումները, տեխնի-
կական ու տեխնոլոգիական առաջավոր լուծումները:

Այդ դրույթներն իրենց կոնկրետ արտահայտությունն են
գտել ՄՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի 1961
թվականին ընդունած՝ կապիտալ ներդրումների առավել
արդյունավետ օգտագործելու միջոցառումների մասին որոշ-
ման մեջ: Որոշումը նախատեսում է նախագծային կազմա-
կերպությունների աշխատանքի հետագա բարելավում, դրանց
ցանցի կառարելագործում և զարգացում, մասնագիտացման
ընդլայնում և շինարարությունները բարձրորակ նախագծա-

¹ «ՄՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 232:

քին փաստաթղթերով ժամանակին ապահովում: Նախնագծային կազմակերպություններին առաջարկված է ավելի լայնորեն արմատավորել առավել առաջադիմական տիպային նախագծերը, մշակել ու պրակտիկորեն կիրառել ծավալահատակագծային լուծումների միջճյուղային ունիֆիկացումը, զգալիորեն կրճատել շինարարական կոնստրուկցիաների և դետալների տիպաշափերը:

Շրջանային հատակագծման նախագծերը: Պարտիայի և կառուվարության որոշումների մեջ վճռականապես դատապարտված է նախագծման մեջ եղած այն արատավոր պրակտիկան, որի ժամանակ յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկություն իր օժանդակ արտադրությունների ու տնտեսությունների հետ միասին նախագծվում և կառուցվում էր առանձին, առանց հաշվի առնելու մյուս ձեռնարկությունների հետ կոոպերացման և տնտեսական շրջանի զարգացման հնարավորությունները ամբողջությամբ վերցրած:

Այդ թերությունը վերացնելու և տնտեսական շրջանների պլանաչափ կոմպլեքսային զարգացումն ապահովելու գործում մեծ դեր են կատարում շրջանային հատակագծման նախագծերը: Այդ նախագծերի հիմնական նպատակն է տնտեսական շրջանի տերիտորիայում առավել ռացիոնալ տեղաբաշխել շինարարության բոլոր օբյեկտները՝ ձեռնարկությունները, էլեկտրակայանները, քաղաքները, բանվորական աշխատանքները, ջրմուղի, կոյուղու, էներգամատակարարման ցանցերը, տրանսպորտային ուղիները և մյուս կառուցվածքները: Դրանց մշակման ժամանակ հաշվի է առնվում շրջանի արտադրողական ուժերի առավել արդյունավետ օգտագործումը և բնակչության աշխատանքի ու կենցաղի պայմանների բարելավումը:

Շրջանային հատակագծման նախագծերը մշակելիս նախատեսվում է շրջանում տեղավորված արտադրական ու օժանդակ օբյեկտների, ինչպես նաև ջրմուղի, կոյուղու բոլոր արտաքին ցանցերի և տրանսպորտային ուղիների կոոպերացում: Շրջանային հատակագծման նախագծերը մշակվում են կոմպլեքս ձևով, ժողովրդական տնտեսության զարգաց-

ման հեռանկարային պլանների բազայի վրա, պահպանելով տնտեսական, տեխնիկական, ճարտարապետական-հատակագծային և սուսիտարական-հիգիենիկ այն պահանջները, որ ներկայացվում են արդյունաբերական ձեռնարկությունների, տրանսպորտային և էներգետիկ ցանցերի շինարարությանն ու շահագործմանը, ինչպես նաև քաղաքների ու բանվորական ավանների կառուցմանը:

Շրջանային հատակագծման նախագծերը նպատակահարմար է մշակել տնտեսական խոշոր շրջանների համար, որտեղ նախադրյալներ կան արդյունաբերության կոմպլեքսային զարգացման, էներգետիկ, տրանսպորտային և շրջանային այլ կառուցվածքների շինարարության, ինչպես նաև քաղաքների ու ավանների շինարարության համապատասխան ընդարձակման համար: Առանձին խոշոր տնտեսական շրջաններում հնարավոր է մշակել շրջանային հատակագծման մի քանի նախագծեր ըստ առանձին արդյունաբերական հանգույցների:

Շրջանային հատակագծման նախագիծը հիմք է ծառայում հրապարակներ ընտրելու՝ արդյունաբերական ձեռնարկությունների, բնակարանների, կուլտուր-կենցաղային նշանակության օբյեկտների շինարարության համար, ինչպես նաև ձեռնարկություններին հումք, վառելիք, ջուր, էներգիա, շինանյութեր մատակարարելու պայմանները որոշելու և դրանց երկաթուղային, ավտոմոբիլային ու ջրային տրանսպորտով ապահովելու համար: Այդպիսի նախագծի ժամանակին մշակումը կանխում է ձեռնարկությունների և այլ օբյեկտների տեղաբաշխման սխալները:

Արդի պայմաններում հսկայական նշանակություն է ստանում քաղաքաշինության, քաղաքների և այլ բնակավայրերի առավել ռացիոնալ հատակագծման ու կառուցապատման հարցերը: Ինչպես նշվում է ՍՄԿՊ ծրագրում, քաղաքները և ավանները պետք է իրենցից ներկայացնեն արտադրական գոտիների, բնակելի շրջանների, հասարակական ու կուլտուրական հիմնարկների, կենցաղային ձեռնարկությունների, տրանսպորտի, ինժեներական սարքավորման և էներգետիկա-

յի ցանցի ռացիոնալ կոմպլեքսային կազմակերպունթյուն, որոնք լավագույն պայմաններ ապահովեն մարդկանց աշխատանքի, կենցաղի ու հանգստի համար: Այդ սլահանջները պարտադիր են ֆաղաֆների հատակագծման այն նախագծերի համար, որոնք մշակվում են շրջանային հատակագծման նախագծերի հիման վրա:

Ներկայումս ավելի քան հազար սովետական քաղաք կառուցվում են գլխավոր հատակագծերով: Սակայն այդ հատակագծերը դեռևս միշտ չէ, որ համապատասխանում են ժամանակակից պահանջներին: Դրանց կատարելագործման անհրաժեշտությունը թելադրվում է նաև քաղաքների բարեկարգման աշխատանքների այն ծավալով, որ նշված է պարտիայի ծրագրով: «Առաջիկա ժամանակաշրջանում կիրազորվի բոլոր քաղաքների ու բանվորական ավանների կոմունալ շինարարության և բարեկարգման լայն ծրագիր, որը կպահանջի ավարտել դրանց էլեկտրիֆիկացումը, անհրաժեշտ չափով՝ գազիֆիկացումը, հեռախոսների անցկացումը, ապահովել կոմունալ տրանսպորտով, ջրմուղով և կոյուղով, կիրառել միջոցառումների սիստեմ քաղաքներում և մյուս բնակավայրերում կենսապայմանների հետագա առողջացման ուղղությամբ, ներառյալ դրանց կանաչապատումը, ջրամատակարարումը, վճռական պայքար մղել օդի, հողի և ջրի աղտոտման դեմ: Ավելի ու ավելի կղարգանան փոքր ու միջին բարեկարգ քաղաքները, որ թույլ կտա բարելավել ու առողջացնել կյանքի պայմանները»¹:

Շրջանային հատակագծման նախագծերի համապատասխան ձեռնարկությունների, քաղաքների և այլ օբյեկտների շինարարությունը ժողովրդական տնտեսության սոցիալիստական սիստեմի խոշոր առավելություններից մեկն է: Շրջանային հատակագծերում նախատեսվում է կառուցվող ձեռնարկությունների մասնագիտացում, դրանց կոոպերացում սովյալ շրջանի մյուս ձեռնարկությունների հետ, որը թույլ է տալիս նախօրոք որոշել հումքի, կիսաֆաբրիկատների և

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 516:

պատրաստի արտադրանքի ռացիոնալ մատակարարումը, ընդհանուր շրջանալին կառուցվածքների ու էներգետիկ ցանցի, ջրամատակարարման, կոյուղու, տրանսպորտի, կապի, պահեստային տնտեսության համատեղ օգտագործումը և այլն:

Շրջանային հասակագծման տնտեսական արդյունավետությունը կարելի է ցույց տալ հետևյալ օրինակներով:

Պարտիայի XXII համագումարի անվան Վոլգայի, Կախովկայի և Կրեմենուզի հիդրոէլեկտրակայանները նախագծելիս օգտագործվեցին շրջանային հատակագծեր: Դա թույլ տվեց հրաժարվել շինարարներին տեղավորելու համար ժամանակավոր ավանների կառուցումից և անմիջապես կառուցել բարեկարգ քաղաքներ: Շրջանային հատակագծերի հիման վրա նախագծվեցին ու կառուցվեցին Դոնբասի շրջանային ջրատարները, Հյուսիսային Դոնեց-Դոնբաս ջրանցքը, Դնեպր-Կրիվոյ ռոգ ջրանցքը և ինժեներական այլ խոշոր կառուցվածքներ:

Ինչպես փորձը ցույց է տալիս, շրջանային հատակագծման նախագծերի հիման վրա ձեռնարկությունների ու կառուցվածքների շինարարությունն ապահովում է կապիտալ ներդրումների տնտեսում մոտավորապես 10 տոկոսի շափով:

Նախագծային լուծումների ուրակի բարձրացումը: Նախագծային շատ կազմակերպությունների աշխատանքի փորձը ցույց է տալիս, թե կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության բարձրացման ինչպիսի հսկայական ռեզերվներ կարող են իրացվել արդյունաբերական ձեռնարկությունները նախագծելիս:

Նոր տեխնոլոգիական պրոցեսների և դոմնային ու մարտենյան հզոր նոր վառարանների արմատավորումը, օրինակ, էսպես բարելավեց սև մետալուրգիայի ձեռնարկությունների տեխնիկա-տնտեսական ցուցանիշները:

Կարագանդայի, Չելյաբինսկի և մետալուրգիական այլ գործարաններինոր նախագծերում տեսակարար կապիտալ ներդրումները, այդ գործարանների համար առաջնորդում մշակված նախագծերի համեմատությամբ, իջեցնել են 15—20 տոկոսով, իսկ աշխատանքի արտադրողականությունը հիմնական ցեխերում ավելացել է 2—3 անգամ, գերազանցելով աշխատանքի արտադրողականության մակարդակը ԱՄՆ-ի համանման գործարաններում:

էլեկտրակայանների նախագծման ու շինարարութիւնն ժամանակ առաջադիմական տեխնիկական լուծումները, դրանց կարողութեան զգալի ավելացումը նույնպէս մեծ օգուտներ են տալիս ժողովրդական տնտեսութեանը:

Այսպէս, ջերմային կայաններում, ներառյալ ջերմէլեկտրակենտրոնները, մեկ կիլովատ տեղակայված կարողութեան արժեքը 1959—1965 թթ. սահմանված է 114 ուրլի, մինչև 1959 թ. 150 ուրլու փոխարեն: Հիդրոէլեկտրակայաններում տեղակայված կիլովատ կարողութեան արժեքը 319 ուրլու փոխարեն, ներկայումս կազմում է 150 ուրլի: Միայն դրա հաշվին կառուցվող էլեկտրակայանների՝ անցյալում հաստատված նախահաշվային արժեքը 1958—1960 թթ. իջեցվեց ավելի քան 850 մլն ուրլով:

Նախագծային լուծումների տեխնիկական մակարդակի բարձրացումը նպաստեց տեխնիկա-տնտեսական ցուցանիշների զգալի բարելավմանը արդյունաբերութեան նաև այլ ճյուղերում:

Գլխավոր հատակագծերը մշակելիս խիստ կարևոր է հասնել ձեռնարկութունների տերիտորիայի զգալի կրճատման: Դրա համար կառուցապատվող տեղամասերում կոմպլեկտորեն տեղաբաշխվում են շենքերն ու կառուցվածքները, դրանց միջև պահպանելով թույլատրելի նվազագույն հեռավորութուններ, առանձին ցեխերն ու արտադրութունները միացվում են մեկ շենքի մեջ (բլոկավորում), փոքրացվում է տրանսպորտային ուղիների և ինժեներական ցանցերի երկարութունը և կիրառվում են միջցեխային տրանսպորտի սառվել արդյունավետ սխեմաներ:

Քն ինչպիսի էական արդյունքներ կարելի է ձեռք բերել, եթե կատարվեն այդ պահանջները, երևում է հետևյալ օրինակներից: Տարեկան 3,6 մլն տ պողպատի արտադրողականութեամբ մետալուրգիական գործարան նախագծելիս նրա տերիտորիան, առաջնորդ կիրառվող լուծումների համեմատութեամբ, ներկայումս կրճատվում է 195 հեկտարով, իսկ երկաթուղիների երկարութունը 121-ից հասցվում է 65 կմ: Սանր մեքենաշինութեան նոր գործարանի նախագծերը մշակելիս, նրա տերիտորիան կրճատվում է 29 հեկտարով, երկաթուղիների երկարութունը՝ 8,5 կմ, հրապարակում գտնվող շենքերի ու կառուցվածքների թիվը պակասում է երեք անգամ, որը գործող ձեռնարկութունների ցուցանիշների համեմատութեամբ, ապա-

Կսովում է շինարարության և շահագործման համար միջոցների զգալի տըն-
ահսում:

Արդյունաբերական ձեռնարկությունների գլխավոր հատակագծերի ու-
ցիոնալ լուծումը, որ նախատեսում է ցեխերի առավելագույն միացում,
թույլ է տալիս շինարարության արժեքն իջեցնել 3 տոկոսով:

Արդյունաբերական օբյեկտների նախագծման ժամանակ
մեծ ուշադրություն է նվիրվում ծավալահատակագծային և
կոնստրուկտիվ լուծումների հետագա կատարելագործմանը:
Այդ աշխատանքների հիմնական ուղղությունները հետևյալն
են.

տվյալ շենքի կամ կառուցվածքի համար ընտրվում է ա-
ռավել խնայողական կոնստրուկտիվ սխեմա (օրինակ, ինք-
նատար պատերով ու ներքին կարկասով, առանց կարկասի և
այլն).

ավելացվում են սյուների միջև հեռավորությունը և շեն-
քերի հենամեջերը, որը հնարավորություն է տալիս ավելի
նպատակահարմար տեղավորել սարքավորումը և ավելի լավ
•զտագործել արտադրական տարածությունները.

կամրջային ամբարձիչները փոխարինվում են կախովի
վերամբարձ հեծաններով և տրանսպորտային հարմարանքնե-
քով, որոնք շարժվում-տեղափոխվում են ցեխի հատակի վրա
(տրանսպորտյորներ, մեծ բեռնման ավտոմեքենաներ, ավ-
տոբարձիչներ և այլն): Դա թույլ է տալիս հրաժարվել ծանր
սյուների և ամբարձիչի համար ուղիների կառուցումներից և
փոքրացնել շենքի բարձրությունը.

թանկարժեք լապտերային վերակառուցյաները փոխարին-
վում են ավելի արդյունավետ արհեստական լուսավորու-
թյամբ, կիրառելով ցերեկային լամպեր.

կիրառվում են նախապես լարված երկաթբետոնից և նոր
արդյունավետ նյութերից պատրաստված բարակապատ թե-
թև կոնստրուկցիաներ, որոնք նպաստում են շենքերի ու կա-
ռուցվածքների քաշի իջեցմանը և դրանց կառուցման ժամ-
կետների արագացմանը:

Արտադրական շենքերի սուաջադիմական տիպերի կիրա-

ուումը բարելավում է դրանց շինարարության ու շահձգործման տեխնիկա-տնտեսական ցուցանիշները:

Որպես օրինակ կարելի է բերել Կրյուկով քաղաքում ժամանակակից բարձր ինդուստրիալ օբյեկտի շինարարության նախագիծը, որը 1961 թ. մշակել է «Արգշիննախագիծ» ինստիտուտը: Այստեղ նախատեսվել են 18×12 մ սյուների միասնական խորոշացրած ցանցով բլոկավորված շենքեր, որոնք մոնտաժվում են գործարանային պայմաններում պատրաստված, սահմանափակ քանակի տիպաչափեր ունեցող հավաքովի երկաթբետոնե տարրերից: Ամենամեծ բլոկի չափերը կազմում են 540×264 մ: Դրա մեջ տեղավորված է մետաղամշակման շրջա ձեռնարկություն՝ իրենց բոլոր արտադրություններով, պահեստներով, ծառայություններով, կենցաղային շենքերով ու գրասենյակներով: Մյուս բլոկում տեղավորված է պոլիգրաֆ ձեռնարկություն, երրորդում՝ սարքաշինական երկու գործարան:

Մետաղամշակման գործարանների շինարարության նախահաշվային արժեքը, մինչև 1960 թվականը կիրառվող նախադձային լուծումների համեմատությամբ, իջավ 7—12 տոկոսով, իսկ պոլիգրաֆ ձեռնարկությանը, բոլոր շենքերը միայն մի տեղ բլոկավորելու հաշվին՝ 11 տոկոսով:

Առաջ արդյունաբերական բոլոր տեսակի սարքավորումները տեղավորվում էին կապիտալ շենքերում: Ներկայումս տեխնոլոգիական շատ ազրեգատներ ու սարքավորումներ տեղավորվում են շենքից դուրս բաց հրապարակներում կամ թեթև ծածկի տակ:

Այդ միջոցառման արդյունավետությունը երևում է հետևյալ օրինակից: Ցինկի գործարանի թովման ցեխը ենթադրվում էր տեղավորել 57 հազար խմ ծավալ ունեցող փակ շենքում: Նախագիծը 1960 թ. վերանայելուց և սարքավորման մեծ մասը բաց հարթակների վրա տանելուց հետո, շենքի ծավալը փոքրացավ մինչև 15 հազ. խմ, իսկ շինարարության արժեքն 390 հազ. ուրբուց իջավ մինչև 220 հազ. ուրբի:

Քիմիական ձեռնարկությունների կայանքների բաց տեղավորումը, ինչպես ցույց են տալիս հաշվարկները, շինարարության արժեքն իջեցնում է 5—6 տոկոսով:

Ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունի բնակարանային շինարարության արժեքի իջեցումը: Պարտիայի XXI համագումարի որոշումներում նախատեսվել է յոթնամյակի ընթացքում 1 քմ բնակելի տարածության միջին ար-

ժեքն իջեցնել ոչ պակաս, քան 14 տոկոսով: Ինչպիսի՞ ուղիներով է լուծվում այս խնդիրը:

Ներկայումս ստեղծվել են մեկ ընտանիքի համար բնակարաններով տիպային բնակելի տների, ինչպես նաև հյուրանոցային տիպի տների խնայողական նախագծեր: Առանձին շենքեր կառուցելու փոխարեն, կառուցվում են տների խոշոր զանգվածներ, կիրառելով շինարարութչյան հոսքահին մեթոդներ:

Փորձը ցույց է տվել, որ ազատ տերիտորիայի վրա խոշոր զանգվածներով իրականացվող բնակարանային շինարարութչյան արժեքը էպպես իջնում է՝ ջրմուղի, կոյուղու և այլ կոմունիկացիաների կառուցման, ինչպես նաև տերիտորիայի բարեկարգման և մի շարք այլ աշխատանքների ծախսումները կրճատելու հաշվին:

Օրինակ, Մագնիտոգորսկում խոշոր զանգվածներով բնակելի տների շինարարութչյան արժեքը քաղաքի աջափնյա մասում 7—8 տոկոսով ցածր է ձախափնյա մասի նույնանման տների արժեքից, որտեղ դրանք կառուցվում են իրարից կտրված տեղամասերում:

Ավելի ու ավելի լայն զարգացում է ստանում բնակելի տների խոշոր պանելային շինարարութչյունը՝ բնակարանային շինարարութչյան առավել առաջադիմական ու խնայողական տեսակը: Խոշորապանել տնաշինութչյանն անցնելու դեպքում աշխատանքային ծախսումները կրճատվում են 35—40 տոկոսով, շենքի կշիռը պակասում է 1,5—2 անգամ: Խոշորապանել տներում 1 քմ բնակելի տարածութչյան արժեքը միջին հաշվով 1960 թվականին երկրում 16 տոկոսով ցածր է եղել, քան աղյուսից կառուցված շենքերում:

Ինչպես հայտնի է, բնակարանային շինարարութչյան արժեքի իջեցմանը նպաստում է բնակելի տների նախագծերում եղած ավելորդությունների վերացումը: Դրա համար նախագծվող շենքերի արտաքին տեսքը վերջին տարիների ընթացքում լուրջ փոփոխությունների ենթարկվեց: Հորինված թանկարժեք դեկորատիվ զարդարանքների փոխարեն, այժմ

կիրառւում են պարզ կոմպոզիցիոն ձևեր, որոնք ճարտարապետական ձևերն օրգանապես կապում են շենքերի նշանակութան հետ: Այդպիսի նախագծերը թույլ են տալիս լայնորեն կիրառել ինդուստրիալ հավաքովի կոնստրուկցիաներ և նորագույն նյութեր:

Ձեռնարկությունների, շինարարական, նախագծային կազմակերպությունների կոլեկտիվները, պարտիական և սովետական օրգանները, զինված ՍՄԿՊ XXII համագումարի որոշումներով, է՛լ ավելի ակտիվ մասնակցություն են ցույց տալիս կառուցվող և վերակառուցվող ձեռնարկությունների տեխնիկական մակարդակի բարձրացման ռեզերվներ հայտաբերելու, շինարարության որակը բարելավելու և արժեքը իջեցնելու աշխատանքին: Կառույցներում ստեղծվում են տեխնիկական հանձնաժողովներ, որոնք հանդիսանում են հասարակական վերահսկողության ձևերից մեկը՝ նոր տեխնիկայի արմատավորման, նախագծերի որակի և արտադրության տեխնիկական մակարդակի նկատմամբ: Շատ նորարար-շինարարներ և նախագծողներ մտցնում են արժեքավոր առաջարկություններ, որոնք բարելավում են նախագծերն ու դրանց մշակման ժամկետները, էժանացնում շինարարության արտադրանքը:

Օրինակ, Վոլկովրսկում կառուցվող ցեմենտի քործարանի նախագիծը նախատեսում էր սիլոսային բանկաները ծածկել փոքր շափի կողավոր սալիկներով: Գրողնոյի № 1 տրեստի ինժեներներն առաջարկեցին դրանք փոխարինել խոշոր շափի կողավոր սալերով և դրանք կիրառել շարժուն կադապարամածը բետոնելու ժամանակ: Արդյունքը եղավ այն, որ սիլոսային 6 բանկաները կառուցվեցին պլանային 40 օրվա փոխարեն, 20 օրում:

Նախագծումը բարելավելու համար մղվող պայքարում մեծ դեր է խաղում սոցիալիստական մրցությունը: Նախագծային առաջավոր կազմակերպությունների կոլեկտիվները, մտնելով յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար մղվող համաժողովրդական մրցության մեջ, ձգտում են զգալի չափով զարգացնել նախագծերի որակը և իջեցնել շինարարության արժեքը:

Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր «Արդշիննախագիծ» նախագծային ինստիտուտի կոլեկտիվը, հանդես գալով որպես նախագծային գործը արմատապես բարելավելու համար մղվող մրցութային նախաձեռնող, 1961 թ. զգալի հաջողություններ ձեռք բերեց: Մշակված նախագծերում արգյունարերական շինարարություններ նախահաշվային արժեքը (շինարարության մասի), ընդունված պարտավորություններից դուրս, իջեցվել է 11 տոկոսով: Նախագծված օբյեկտներում հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների և զետալների կիրառումը ավելացվել է 15 տոկոսով:

3. ՏԻՊԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Նախագծերի տեխնիկա-տնտեսական ցուցանիշները բարելավելու, նախագծումն արագացնելու ու էժանացնելու վճռական պայմանը տիպային նախագծերի կիրառումն է:

Մեր երկրում կառուցվում են միևնույն նշանակություն շատ ձեռնարկություններ, առանձին շենքեր և կառուցվածքներ: Դրանց թվին պատկանում են, օրինակ, ածխահորերը, հավաքովի երկաթբետոնի գործարանները, հացի գործարանները, բնակելի տները, դպրոցները և այլն: Դեռ ավելին, իրենց նշանակությամբ տարբեր ձեռնարկությունների կազմում կառուցվում են միատեսակ շատ օբյեկտներ՝ ձուլման և դարբնոցային ցեխեր, տրանսֆորմատորային ենթակայաններ, գարաժներ, միջանցուկներ, գործարանային կառավարչությունների շենքեր, պահեստներ և այլն:

Միևնույն նշանակություն շենքերի ու կառուցվածքների բազմապատիկ կրկնությունը բնորոշ է շինարարության բոլոր ճյուղերի համար:

Օրինակ, յուրաքանչյուր 100 կմ երկաթուղային նոր գծի համար կառուցվում են միջին հաշվով հետևյալ քանակի միատեսակ կառուցվածքներ.

Արհեստական փոքր կառուցվածքներ (կամուրջներ, խողովակներ և այլն)	85
Փծա-ճանապարհային տներ	38
Բնակելի սակավահարկ տներ	24
Կայարանների շենքեր	9
Թեղնապահեստներ	14

Տարբեր նշանակութեան շենքերն ու կառուցվածքներն իրենց հերթին կազմված են բազմիցս կրկնվող միատեսակ կոնստրուկտիվ մասերից, օրինակ, սյուններից, ծածկերից, հեծաններից, աստիճաններից:

Շինարարութեան ծավալներն անընդհատ ավելանալու կապակցութեամբ կրկնվող օբյեկտների ու դրանց կոնստրուկտիվ մասերի թիվը տարեցտարի աճում է: Ակներև է, որ յուրաքանչյուր այդպիսի օբյեկտի համար անհատական նախագիծ մշակելը և կոնստրուկտիվ լուծումները նպատակահարմար չեն: Հայտնի է, որ այդ դեպքում նախագծման բարձր որակը միշտ չէ, որ ապահովվում է և անարտադրողաբար է ծախսվում նախագծային կազմակերպութեանների աշխատողների բարձրորակ աշխատանքը: Դրա հետ միասին անհատական նախագծումը բացառում է հավաքովի շինարարական կոնստրուկցիաների ու դետալների մասսայական գործարանային արտադրութեան կազմակերպելու հնարավորութիւնը, որոնք սովյալ դեպքում ամեն մի ձեռնարկութեան համար մշակվում են առանձին և դրանով իսկ արգելակում շինարարութեան ինդուստրացումը:

Ահա թե ինչու շինարարութեանն արագացնելու և նրա արժեքն իջեցնելու խնդիրը հրամայաբար պահանջում էր անհատական նախագծումից ամենաարագ կերպով անցնել տիպային նախագծմանը:

Տիպային նախագծերը և նրանց արդյունավետութիւնը: Տիպային է կոչվում այն նախագիծը, որը կարող է բազմաթիվ անգամ օգտագործվել իր նշանակութեամբ միատեսակ օբյեկտների շինարարութեան ժամանակ: Տիպային նախագծերը տարբերում են.

1) ձեռնարկութեանների ու ցիխերի (օրինակ, ֆարրիկաների, մետալուրգիական գործարանների զլանման ցիխերի, անասնաբուծական ֆերմաների տիպային նախագծերը և այլն).

2) շենքերի ու կառուցվածքների (օրինակ, դամնային վառարանների, կամուրջների, գարաժների, բնակելի տների, դպրոցների և այլն).

3) շենքերի և կառուցվածքների կրկնվող մասերի (օրինակ, շենքերի առանձին սեկցիաների, կամուրջների հենամիջային մասերի և այլն)։

4) շենքերի ու կառուցվածքների առանձին կոնստրուկտիվ տարրերի (սյունների, ծածկերի ու վերնածածկերի սալերի, որմնապանելների և այլն)։

Արդյունաբերական ձեռնարկության տիպային նախագիծը դա շենքերի ու կառուցվածքների տիպային նախագծերի մի կոմպլեքս է, որոնք իրենց հերթին հիմնվում են շենքերի բաղադրամասերի և կոնստրուկտիվ տարրերի տիպային լուծումների վրա։ Իսկ այն դեպքերում, երբ մշակվում են ձեռնարկությունների կամ կառուցվածքների անհատական նախագծեր, դրանք ևս զգալի չափով բաղկացած են օբյեկտների, շենքերի տիպային մասերի և կոնստրուկտիվ տարրերի տիպային նախագծերից։

Տիպային նախագիծը բաղկացած է բանվորական գծագրերի կոմպլեկտից՝ բացատրագրով և նախահաշվից։ Դրա մեջ պարունակվում են աշխատանքների ծավալի, հիմնական շինանյութերի, դետալների, կոնստրուկցիաների, սարքավորման պահանջի և շինարարությունն իրականացնելու համար անհրաժեշտ աշխատանքային ծախսումների վերաբերյալ տվյալներ։ Այդ տվյալները թույլ են տալիս ճիշտ կազմակերպել շինարարական դետալներ և կոնստրուկցիաներ արտադրող ձեռնարկությունների կառուցումն ու աշխատանքը։

Մինչև տիպային նախագծերով շինարարական ու մոնտաժային աշխատանքների սկսելը, նախագծերը «հարմարեցվում» են շինարարական տեղամասերի հետ։ Դա հիմնականում արտահայտվում է նրանում, որ տիպային նախագծի գծագրերի մի մասն անհրաժեշտ դեպքերում ճշգրտվում է տեղական պայմանների (տեղանքի ռելյեֆին, գետնի տեսակին և այլն) համեմատ։

Հաստատված տիպային նախագծերի, տիպային լուծումների, տիպային կոնստրուկցիաների ու դետալների կիրառումը պարտադիր է երկրի բոլոր շրջաններում, բոլոր ձեռնարկությունների ու անտեսական կազմակերպությունների հա-

մար: Արգելված է անհատական նախագծերով կառուցել այն-
պիսի շենքեր ու կառուցվածքներ, որոնց համար կան հաս-
տատված տիպային նախագծեր:

Կարևոր օբյեկտների տիպային նախագծերը մինչև հաս-
տատվելը ենթարկվում են լայն քննարկման, որին մասնակ-
ցում են նախագծի պատվիրատուները, խոշոր մասնագետ-
ները և արտադրության նորարարները: Այսպես, դոմնային
վառարանի տիպային նախագիծը քննարկվել է դոմնագործ-
ների համամիութենական խորհրդակցությունում. ածխահո-
քերի տիպային նախագծերը քննարկվել են մի շարք ածխա-
յին ավազանների աշխատողների մասնակցությամբ և այլն:
Նախագծերի որակը բարձրացնելու և դրանցից լավագույնե-
րը ընտրելու համար անց են կացվում տիպային նախագծերի
մշակման կոնկուրսներ:

Տիպային նախագծերի նշանակությունը շինարարության
համար բացառիկ մեծ է: Դրանց կիրառումը բարձրացնում
է կապիտալ ներդրումների արդյունավետությունը, նպաս-
տում է շինարարության հետագա ինդուստրացմանը, նրա
սեռողության կրճատմանը և արժեքի իջեցմանը: Կիրառելով
տիպային նախագծեր, շինարարները կարող են մեծ մուս-
շտաբներով ու կարճ ժամկետներում կառուցել հարմար, խնա-
յողական և գեղեցիկ բնակելի տներ և այլ շենքեր ու կա-
ռուցվածքներ: Բայց դրանով տիպային նախագծերի նշանա-
կությունը չի սպառվում: Դրանց կիրառումը նպաստում է
նախագծման ծախսումների պակասեցմանը, նախագծային-
նախահաշվային փաստաթղթերի ծավալի ու դրանք կազմելու
ծամկետների կրճատմանը և շինարարությունը բարձրորակ
նախագծերով ու նախահաշիվներով ժամանակին ապահովե-
լուն:

Ինչպես փորձը ցույց է տալիս, տիպային նախագծերով
կառուցվող օբյեկտների մեծ մասի շինարարության արժեքը
10—15 տոկոսով ցածր է անհատական նախագծերով կա-
ռուցված նման օբյեկտների արժեքից: Տիպային նախագծեր
կիրառելիս նախագծային ու հետազոտական աշխատանքնե-
րի ծախսումներն իջնում են 35—40 տոկոսով: Տիպային նա-

խագծերը նախատեսում են բարձր արտադրողական ազրե-
գատների և արտադրութայան առաջադիմական մեթոդների կիր-
առում, որոնք զգալի չափով բարելավում են ձեռնարկու-
թյունների աշխատանքի տեխնիկա-տնտեսական ցուցա-
նիշները:

Կարևոր խնդիր է տիպային նախագծերի սիստեմատիկ
կատարելագործումը ինչպես տեխնիկական, այնպես էլ տրն-
տեսական տեսակետից: Նախագծողները պարտավոր են
հասնել գործարանային պայմաններում պատրաստված հա-
վաքովի կոնստրուկցիաների ու դետալների լայն կիրառման,
մետաղի, անտառանյութի, ցեմենտի ծախսի կրճատման և
շինարարական աշխատանքների աշխատատարութայան նվա-
զեցման:

Այսպես, 2400 հազ. կվտ հզորության ջերմային էլեկտրակայանի տի-
պային նախագիծը, որը հաստատվել է 1961 թ., նախատեսում է 300 հազ.
կիլովատանոց ութ տուրբաագրեգատների և ժամը 950 տոննա գոլորշու ար-
տադրողականութայամբ ութ կաթսաների տեղակայում: Կառուցվածքները մի-
ջին հաշվով 80 տոկոսով, իսկ գլխավոր կորպուսը 92 տոկոսով հավաքովի
են: Այդ նախագծում կարողութայան միավորին ընկնող շինմոնտաժային աշ-
խատանքների ծավալը, անցյալ տարիների նախագծերի համեմատությամբ,
կրճատվել է մոտ կիսով չափ, իսկ շինարարութայան արժեքն իջել է 25 տո-
կոսով:

Տարեկան 1,5 մլն. ա ածխի արտադրողականութայամբ ածխահորի տի-
պային նախագծի մեջ, որը 1961 թ. Կուզնեցկի և Կարագանդայի ածխա-
ավազանների համար մշակել է «Կուզբասհիդրոշխտ» ինստիտուտը, անցյա-
լում կատարված նման նախագծերի համեմատությամբ, տեխնիկական նոր
լուծումների կիրառման շնորհիվ արդյունաբերական հրապարակը 8 հեկ-
տարից նվազել է մինչև 5,2 հեկտարի, շենքերի ու կառուցվածքների շինա-
րարական ծավալը 140 հազ. խմ կրճատվել է մինչև 91 հազ. խմ, հրա-
պարակի վրա շենքերի թիվը 46-ից պակասել է մինչև 12-ի, սյունատախ-
տակամածների և թունելների երկարությունը՝ 560 մետրից մինչև 65 մ:
Այս բոլորը ածխահորի շինարարութայան նախահաշվային արժեքը իջեցրեց
12,7 տոկոսով:

Բնակելի տների նոր տիպային նախագծերում յուրաքանչյուր բնակա-
րան հաշված է մեկ ընտանիքի համար: Տներում ավելի ռեացիոնալ է օգ-
տագործվում շենքերի օգտակար մակերեսը և ծավալը: Նախկին նախագծե-
րի համեմատությամբ 1 քմ տարածութայան արժեքը միջին հաշվով իջել է
10—18 տոկոսով:


Վերջին տարիներին ստեղծվել է արդյունաբերության ու տրանսպորտի շատ ձեռնարկությունների, շենքերի ու կառուցվածքների, բնակելի տների, դպրոցների, հիվանդանոցների, սանատորիաների ու հանգստյան տների, մանկական հիմնարկների, կինոթատրոնների, ակումբների, խանութների և ճաշարանների նոր խնայողական տիպային նախագծեր: Այդ շենքերն ու կառուցվածքները հարմար են բնակչության համար, դրանց շինարարական արժեքն զգալի չափով իջել է:

Տիպային նախագծերը լայնորեն կիրառվում են գյուղատնտեսական շենքերի ու կառուցվածքների շինարարության մեջ: Գյուղատնտեսական շինարարության հետ կապված կարևորագույն տեխնիկական հարցերի կոորդինացումն իրականացնում է ՍՍՌՄ պետշինը: Ներկայումս նա հաստատել է գյուղատնտեսական այն ձեռնարկությունների, շենքերի ու կառուցվածքների ցուցակը, որոնց շինարարությունը պետք է կատարվի միայն տիպային նախագծերով:

Գյուղատնտեսական նշանակության շենքերի ու կառուցվածքների նախագծման նոր նորմաների և տեխնիկական պայմանների հիման վրա մշակվել և գործարկվել են անասնապահական ու թռչնաբուծական շինությունների, վերանորոգման արհեստանոցների, պահեստարանների և այլ արտադրական շենքերի և կառուցվածքների ավելի խնայողական (անցյալ տարիների նախագծերի համեմատությամբ) տիպային նախագծեր: Դա նպաստեց գյուղատնտեսական շինարարության տեխնիկական մակարդակի էական բարձրացմանը և շինարարության արժեքի իջեցմանը:

Այսպես, 100 մերուխի համար խողարուծական ֆերմայի տիպային նախագծով կառուցվող շենքի շինարարական ծավալը և արժեքը նախկին նախագծերի համեմատությամբ, իջեցվել են 15 տոկոսով: Հինգ հազար ղուխ խողի համար խողարտման ֆերմայի կառուցման ծախսերը տիպային նախագծով իջեցվել են 23 տոկոսով:

Տիպային նախագծերի կիրառումը երևում է հետևյալ դիագրամից (շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի նկատմամբ տիպային նախագծերով կատարվող շինմոնտաժային աշխատանքների տեսակարար կշիռը):



Դիագրամից երևում է, որ տիպային նախագծերով կատարված շինմոն-տաճային աշխատանքների ծավալն արագորեն աճում է:

Միլիոնական մի շարք ռեսպուբլիկաներում՝ Բելոռուսական, Ղազախական, Հայկական, Ադրբեջանական, տիպային նախագծերով կատարվող բնակարանային շինարարությունը գերազանցում է 95 տոկոսից: Շատ քաղաքներում (օրինակ, Կալինինում, Աստրախանում, Կուլբիշևում) բնակելի տների ամբողջ նոր շինարարությունը լիովին իրականացվում է տիպային նախագծերով:

Տիպային նախագծումը հաջող կերպով զարգանում է ոչ միայն ՍՍՌՄ-ում, այլև մյուս սոցիալիստական երկրներում: Տիպային նախագծումը զարգացնելու գործում զգալի հաջողություններ են ձեռք բերվել Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում, Լեհական Ժողովրդական Ռեսպուբլիկայում, Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայում: Սոցիալիստական լագերի երկրները համագործակցում են տիպային նախագծման բնագավառում: 1957 և 1959 թվականներին տիպային նախագծման հարցերի առթիվ կայացած սոցիալիստական երկրների ներկայացուցիչների միջազգային խորհրդակցություններ:

Շինարարության ունիֆիկացումը: Տիպային նախաձեռնման զարգացմանը և շինարարության տեխնիկական մակարգակի բարձրացմանը նպաստում է շենքերի հիմնական շափերի ունիֆիկացումը, այսինքն՝ հենամեջերը, սյուների քայլը, շինության բարձրությունը և այլն միասնական շափերի բերելը: Ունիֆիկացումը թույլ է տալիս կրճատել շենքերի տարբեր տիպերի և դրանց կոնստրուկտիվ տարրերի թիվը, կազմակերպել գործարանային սլայմաններում տիպականացված շինարարական դետալների ու կոնստրուկցիաների մասսայական արտադրություն:

Շենքերի ու կառուցվածքների հատակագծման ու կոնստրուկտիվ լուծումների ունիֆիկացման և շինարարական կոնստրուկցիաների տիպականացման ուղղությամբ ներկայումս մեծ աշխատանք է տարվում: Արդյունաբերական շենքերի մշակվող ունիֆիկացված սխեմաներն ապահովում են դրանց ընդհանրական լինելը: Այդպիսի շենքերում հետագայում կարելի է տեղավորել տարբեր տեսակի արտադրություններ, իսկ անհրաժեշտության դեպքում փոխել տեխնոլոգիական պրոցեսը:

Վերջին տարիների ընթացքում մշակվել և լայնորեն կիրառվում են սև մետալուրգիայի ձեռնարկությունների ղլանման, խողովակազանման և վերանորոգման ցեխերի, կոքսոքիմիական գործարանների, ածխի, նավթի, թեթև արդյունաճեբության ու մեքենաշինության ձեռնարկությունների հիմնական արտադրական շենքերի ու կառուցվածքների, տրանսպորտի և կապի շենքերի ու կառուցվածքների, ինչպես նաև դյուղատնտեսական նշանակություն ունեցող շենքերի ունիֆիկացված սխեմաներ:

Կատարված ունիֆիկացման շնորհիվ տիպային շենքերի թիվը պակասել է մեքենաշինության մեջ 800-ից մինչև 32-ի, քիմիական արդյունաբերության մեջ՝ 500-ից մինչև 50-ի: Ուստի որում շինարարական կոնստրուկցիաների տիպաչափերի թիվը կրճատվել է 4—6 անգամ:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկությունների մի հարկանի շենքերի ունիֆիկացման շնորհիվ հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների տիպաչափերի քանակը պակասել է 46-ից մինչև 12-ի: Գրպ-

րոցների, սանատորիաների, հիվանդանոցների, առևտրական շենքերի, հյուրանոցների ու հանգստյան տների ծավալա-հատակագծային լուծումների բնիֆիկացումը հնարավորություն տվեց շինարարական արտադրանքի տիպաչափերի ընդհանուր քանակը կրճատել չորս անգամ:

Մինչև վերջին ժամանակներս արտադրական շենքերի ու նիֆիկացումը գլխավորապես տարվում էր արտադրության առանձին ճյուղերի սահմաններում, առանց բավարար չափով հաշվի առնելու դրանց օգտագործման հնարավորությունները մյուս ճյուղերում: Այդ թերությունը վերացնելու համար 1958 թ. սկսվեց արտադրական նշանակություն ունեցող շենքերի միջճյուղային ունիֆիկացման աշխատանքը: Ունիֆիկացված են ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում կիրառվող այնպիսի օժանդակ շենքեր, ինչպես պահեստները, գորածները, հրշեջ դեպոնները, կենցաղային շենքերը: Այսպես, պահեստային շենքերի տիպերի քանակը, որ առաջ հասնում էր 400-ի, կրճատվել է մինչև 23-ի:

Ներկայումս աշխատանք է տարվում արդյունաբերության տարբեր ճյուղերի հիմնական արտադրական շենքերի շինարարական լուծումների ունիֆիկացման ուղղությամբ: Շարունակվում է նաև արդյունաբերական հրապարակներում օժանդակ շենքերի (օրինակ, վարչա-տնտեսական նշանակության օբյեկտների, կոմպրեսորանոցների, կաթսայատների և այլն) միջճյուղային ունիֆիկացման աշխատանքները:

Առանձին տնտեսական-վարչական շրջանների սահմաններում շինարարական լուծումների միասնության և շենքերի կոնստրուկցիաների ունիֆիկացման նպատակներով յուրաքանչյուր տնտեսական շրջանի համար մշակվում են շինարարական նախագծման միասնական տեխնիկական պայմաններ, շինարարական ունիֆիկացված կոնստրուկցիաների, շինվածքների ու դետալների շրջանային կատալոգներ (ՍՍՌՄ պետշինի կողմից հաստատված ընդհանուր միութենական կատալոգների հիման վրա), տիպաչափերի նվազագույն քանակով:

Նկատի ունենալով, որ նոր ձեռնարկությունների շինարարական

բարութեան մեջ տիպային տեխնոլոգիական պրոցեսները և տիպային նախագծերի կիրառումը թույլ է տալիս զգալի շահով կրճատել ժամկետները և էժանացնել շինարարութունը, ՍՄԿՊ Կենտկոմի հուլիսյան (1960 թ.) պլենումը որոշում ընդունեց արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման ու վերակառուցման ժամանակ, բարձր արտադրողական սարքավորման և կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման բազայի վրա, արտադրության հիմնական տեսակների համար տիպային առաջադիմական տեխնոլոգիական պրոցեսների ու սխեմաների մշակման և առավելագույն օգտագործման մասին:

Արդյունաբերության առանձին ճյուղերի գծով 1962 թ. մշակվեց օպտիմալ արտադրական կարողություն ունեցող ձեռնարկությունների անվանակարգ: Այն նախատեսում է արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի տարբեր կարողության ձեռնարկությունների նվազագույն քանակ, որն ապահովում է կիրառվող սարքավորման տիպականացում, դրա ռացիոնալ օգտագործում, շինարարական լուծումների առավելագույն ունիֆիկացում և նպաստում արտադրանքի մեկ միավորի տեսակարար կապիտալ ներդրումների իջեցմանը:

Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցվածքների տիպային նախագծման աշխատանքը Սովետական Միությունում կազմակերպվում է համապետական մասշտաբով և տնտեսական մեծ արդյունք է տալիս: Նախագծման առաջադիմական մեթոդների արմատավորումը թույլ կտա միայն յոթնամյակի ընթացքում տնտեսել 5—6 մլրդ. ռուբլի:

Նախագծային և շինարարական կազմակերպությունների կարևոր խնդիրն է՝ արագորեն արմատավորել նորը, վերացնել տիպային նախագծման բնագավառում եղած թերությունները, բարձրացնել տիպային նախագծերի որակը և դրանք ավելի լայնորեն կիրառել շինարարության մեջ:

4. ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Շինարարության նախահաշվային արժեքը: Ընդունված նախագծային լուծումների հիման վրա որոշվում է նախագծվող շինարարության նախահաշվային արժեքը:

Նախահաշվային արժեքը ցույց է տալիս դրամական այն միջոցների շահիք, որոնք անհրաժեշտ են այս կամ այն օբյեկտի՝ ձեռնարկության, շենքի կամ կառուցվածքի շինարարությունն իրականացնելու համար: Այդ արժեքը սահմանվում է մինչև շինարարության սկսվելը՝ նախագծի կազմում նախահաշվային-ֆինանսական հաշվարկներ, նախահաշիվներ և նախահաշվային այլ փաստաթղթեր մշակելու միջոցով:

Նախագծվող օբյեկտի նախահաշվային արժեքը որոշելու ժամանակ հաշվի են առնվում դրա կառուցման բոլոր ծախսումները: Այդ ծախսումների մեծ մասը որոշվում է համապարտադիր նորմատիվների հիման վրա, որոնք հաշվի են առնում շինարարական ինդուստրիայի զարգացումը, շինարարության ինդուստրիայի մակարդակը:

Նախահաշվային փաստաթղթերը թույլ են տալիս սահմանել կապիտալ ներդրումների ծավալը՝ դրամական արտահայտությամբ, շինմոնտաժային աշխատանքների, սարքավորումների արժեքը և այլ ծախսումներ: Դրա հետ միասին այն հիմք է ծառայում նախագծերի տեխնիկա-տնտեսական ցուցանիշները որոշելու, ինչպես նաև շինարարությունը պլանավորելու, պայմանագրեր կնքելու և կատարված աշխատանքների վերջնահաշիվների համար:

Շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը բաղկացած է երեք գլխավոր մասից՝ ուղղակի ծախսումներից, վերադիր ծախսերից և պլանային կուտակումներից:

Ուղղակի ծախսումների մեջ մտնում են բանվորների հիմնական աշխատավարձը, շինանյութերի և դետալների վրա կատարվող ծախսումները, շինարարական մեքենաների շահագործման հետ կապված ծախսումները:

Վերադիր ծախսերը բաղկացած են շինարարական՝ արտադրութունը կազմակերպելու, կառավարելու և սպասարկելու հետ կապված ծախսումներից:

Պլանային կուտակումները սահմանվում են ուղղակի ձախսումների և վերադիր ծախսերի ընդհանուր գումարի որոշ տոկոսի շահով և հանդիսանում են շինարարական կազմակերպությունների պլանային շահույթը, որը նախատեսված է նախահաշվի մեջ նախագիծը կազմելու ստադիայում:

Շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքի մեջ առանձին ծախսումների տեսակարար կշիռը փոփոխվում է, նայած շինարարության տեսակին: Օրինակ, խոշորապանել և խոշորաբլոկ բնակարանային շինարարության մեջ պատրաստի շինարարական կոնստրուկցիաների ու նյութերի վրա կատարվող ծախսումների տեսակարար կշիռը հասնում է 70 տոկոսի: Երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների շինարարության ժամանակ, որոնք աչքի են ընկնում հողային աշխատանքների մեծ ծավալներով, աճում է հիմնական աշխատավարձի և շինարարական մեքենաների շահագործման վրա կատարվող ծախսումների տեսակարար կշիռը:

Նախահաշվային արժեքի կառուցվածքն արտացոլում է նախագծվող շինարարության հավաքովիության մակարդակը, նրա մեքենայացման աստիճանը և շինարարության ընդունված տեխնոլոգիայի առաջադիմական լինելը: Այդ ցուցանիշների բարձր մակարդակի դեպքում հիմնական աշխատավարձի վրա կատարված ծախսումների բաժինն իջնում է:

Նախահաշվային փաստաթղթեր: Նախահաշվային փաստաթղթերի մշակումը կատարվում է նախագծման բոլոր ստադիաներում: Ընդ որում առանձին ստադիաներում նախահաշվային փաստաթղթերը կատարում են տարբեր ֆունկցիաներ:

Նախագծային առաջադրանքի ստադիայում ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկ (ԱՆՖՀ) կազմելու միջոցով որոշվում է համապատասխան օբյեկտի շինարարու-

թյան ընդհանուր արժեքը: Դա տվյալ շինարարության արժեքի լիմիտն է, որը չի թույլատրվում գերազանցել:

Աշխատանքային գծագրերի ստադիայում կազմվում են յուրաքանչյուր առանձին շենֆի ու կառուցվածքի նախահաշիվները՝ նախագծային առաջադրանքի ստադիայում սահմանված շինարարության ընդհանուր արժեքի սահմաններում: Ընդ որում առանձին շենքերի ու կառուցվածքների նախահաշիվային արժեքը կարող է ավելացվել միայն այլ շենքերի կառուցվածքների արժեքի համապատասխան իջեցման հաշվին կամ շնախատեսված աշխատանքների ու ծախսումների գումարների հաշվին, որոնք նախատեսվում են նախագծային առաջադրանքի, ամփոփիչ նախահաշիվային-ֆինանսական հաշվարկում:

Առանձին շենքերի ու կառուցվածքների շինարարության՝ ըստ աշխատանքային գծագրերի սահմանված նախահաշիվային արժեքը հիմք է ծառայում կատարված աշխատանքների վերջնահաշիվների համար և, հետևաբար, կատարում է մի ֆունկցիա, որը նման է արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի բացթողնման գների ֆունկցիային: Աշխատանքային գծագրերով կազմված նախահաշիվները կառուցներում արտադրական պլանավորման բազա է հանդիսանում:

Նախագծային առաջադրանքի ամփոփիչ նախահաշիվային-ֆինանսական հաշվարկի մեջ նշվում է առանձին այն օբյեկտների ու ծախսումների նախահաշիվային արժեքը, որոնք պետք է իրականացվեն ձեռնարկության կամ կառուցվածքի շինարարության ժամանակ, առանձնացնելով շինարարական աշխատանքների, սարքավորման, մոնտաժային աշխատանքների, հարմարանքների, գործիքների և արտադրական գույքի արժեքը, այլ ծախսումները: Ընդ որում ամփոփիչ նախահաշիվային-ֆինանսական հաշվարկի մեջ շինարարության առանձին օբյեկտներին վերաբերում են՝ ցեխը, գարաժը, ճանապարհը, ճաշարանը և այլն, իսկ առանձին ծախսումներին՝ կառուցվող ձեռնարկության դիրեկցիայի պահելը, շահագործող կադրերի նախապատրաստումը և այլն: Օբյեկտների և

ծախսումների ցուցակը կազմվում է որոշակի կարգով՝ ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկի անվանացանկին համապատասխան:

Արդյունաբերական շինարարության համար ընդունված է ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկի հետևյալ անվանացանկը.

Մ Ա Ս I

Գլուխ 1. Շինարարության տերիտորիայի նախապատրաստում (շինությունների քանդում, հրապարակի հատկագծում, տերիտորիայի շորացում և այլն):

Գլուխ 2. Հիմնական արտադրական նշանակության օբյեկտներ:

Գլուխ 3. Օժանդակ արտադրական և սպասարկող նշանակության օբյեկտներ:

Գլուխ 4. Էներգետիկ տնտեսության օբյեկտներ:

Գլուխ 5. Տրանսպորտային տնտեսության և կապի օբյեկտներ:

Գլուխ 6. Զրամատակարարման կոյուղու, ջերմաֆիկացման, գազիֆիկացման արտաքին ցանց և կառուցվածքներ:

Գլուխ 7. Արդյունաբերական հրապարակի բարեկարգում:

Գլուխ 8. Ժամանակավոր շենքեր ու կառուցվածքներ¹:

Գլուխ 9. Այլ աշխատանքներ և ծախսումներ (երկրաբանական-հետախուզական աշխատանքներ, բացի շինարարության համար կատարվող հետազոտական աշխատանքներից, դիտահետազոտական աշխատանքներ, եթե դրանք նախատեսվել են նախագծով, ձմռանը կատարվող աշխատանքների թանկացում, շինարարության տերիտորիայի մաքրում, տվյալ կառույցի համար սահմանված արտոնությունների կիրառման հետ կապված ծախսումներ, տնտեսական գույքի ձեռքբերում և այլն):

Մ Ա Ս II

Գլուխ 10. Կառուցվող ձեռնարկության դիրեկցիայի պահպանում:

Գլուխ 11. Շահագործող կադրերի նախապատրաստում:

Գլուխ 12. Նախագծային-հետազոտական աշխատանքներ:

¹ Ժամանակավոր այն շենքերի ու կառուցվածքների ցուցակը, որոնց շինարարությունն իրականացվում է շինարարական կազմակերպությունների վերադիր ծախսերի հաշվին, ինչպես նաև դրանց կառուցման ծախսերի չափերը սահմանվել են ՍՍՌՄ պետշինի, ՍՍՌՄ ֆինանսների մինիստրության և ՍՍՌՄ պետպլանի հատուկ հրահանգով:

Ամփոփիչ նախահաշվային ֆինանսական հաշվարկի վերջում առանձին սողով նախատեսվում է ռեզերվ շնախատեսված աշխատանքների ու ծախսումների համար¹:

Նախագծային առաջադրանքով կազմակերպության համար հաճախ նախատեսվում է քաղաքի մի քանի ձեռնարկություններ սպասարկելու նպատակով էներգետիկ, ինժեներական և այլ կառուցվածքների շինարարությանը գործնական մասնակցության բաժինը:

Ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկի ընդհանուր գումարը ցույց տալուց հետո, նշվում է ետ վերադարձվող գումարը, որը նախատեսված է շինարարությունն ավարտելիս փոխհատուցել տիտղոսային ժամանակավոր շենքերի և կառուցվածքների քանդումից ստացված նյութերի, հետագայում չօգտագործվելիք սարքավորումների, գույքի և այլ իրերի իրացման միջոցով:

Բնակարանային-քաղաքացիական շինարարության համար ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկները կազմվում են կրճատված անվանացանկով (բացառվում են 4,5 և 11 գլուխները) և որոշ չափով փոփոխվում են մյուս գլուխների անվանումն ու բովանդակությունը:

Նախագծային առաջադրանքով հաճախ նախատեսվում է ձեռնարկությունները կառուցել երկու կամ ավելի հերթով: Այդ ժամանակ շինարարության յուրաքանչյուր հերթի համար առանձին նախահաշվային-ֆինանսական հաշվարկներից բա-

¹ Չնախատեսված աշխատանքների ու ծախսումների վրա կատարվող ծախսերը նախատեսվում է ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկներում նախագծային առաջադրանքի մինչև 3 տոկոսի, իսկ ածխահորերի շինարարության ժամանակ ստորերկրյա և լեռնանացումային աշխատանքների համար՝ շինարարության նախահաշվային արժեքի մինչև 5 տոկոսի չափով: Տիպային նախագծերով կառուցվող բնակելի տների և քաղաքացիական շենքերի շնախատեսված աշխատանքների ու ծախսումների վրա կատարվող ծախսերը չպետք է գերազանցեն 2 տոկոսից: Այդ միջոցները կարող են ծախսվել այն կազմակերպության թույլտվությամբ, որը հաստատել է աշխատանքային գծագրերով կազմած նախահաշիվը:

ցի, կազմվում է ծախսումների ամփոփագիրը, որը որոշում է շինարարության ընդհանուր արժեքը:

Այդպիսի ամփոփագիր պետք է կազմվի նաև այն ժամանակ, երբ բնակարանային-քաղաքացիական շինարարության համար հատկացումները տրվում են արտադրական ձեռնարկության շինարարությունն իրականացնող պատվիրատուին (ժողտնտխորհին, մինիստրությանը կամ գերատեսչությանը): Այդ դեպքում արդյունաբերական և բնակարանային-քաղաքացիական շինարարության արժեքը ծախսումների ամփոփագրում ցույց է տրվում առանձին:

Շինարարության նախահաշվային արժեքն ըստ ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկի ամեն մի տիտղոսի (տողի) հիմնավորվում է յուրաքանչյուր օբյեկտի նախահաշվային-ֆինանսական լհաշվարկով (նախահաշվով), որն իր հերթին կազմվում է աշխատանքների ու ծախսումների առանձին տեսակների նախահաշիվների հիման վրա:

Օրինակ, մյուս օբյեկտների հետ միասին ամփոփիչ նախահաշվային-ֆինանսական հաշվարկի մեջ մտցված է նաև կաթսայատան շինարարությունը՝ 85 հազ. ուր. նախահաշվային արժեքով: Այդ արժեքը որոշվել է տիպային նախագծով նախահաշիվ կազմելու միջոցով, որն իր հերթին կազմվել է շինարարական աշխատանքների բոլոր տեսակների, սարքավորում ձեռք բերելու նրա մոնտաժի, կաթսայատունը կառուցելու համար անհրաժեշտ այլ աշխատանքների ծախսումների առանձին նախահաշիվներ կազմելու հիման վրա:

Շինարարական աշխատանքների բոլոր տեսակների նախահաշիվները կազմվում են նախագծով որոշվող աշխատանքների ֆիզիկական ծավալների (շենքերի խորանարդ մետրեր, բնակելի տարածության քառակուսի մետրեր, պատերի շարման խորանարդ մետրեր, սվաղի քառակուսի մետրեր և այլն) և այդ աշխատանքների միավորի նախահաշվային արժեքի տվյալների հիման վրա:

Շինարարական աշխատանքների միավորի նախահաշվային արժեքը հաշվում է համապարտադիր նախահաշվային նորմաների, բանվորների աշխատավարձի տարիֆային դրույք-

ների, շինանյութերի, կիսաֆաբրիկատների և դետալների բացթողման գների, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ու բեռնափոխադրման տարիֆների օգտագործման միջոցով:

Ներկայումս շինարարական և մոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը որոշվում է առ 1-ը հուլիսի 1955 թ. գործող նորմաներով ու գներով, կիրառելով բանվորների աշխատավարձի տարիֆային այն գրույթները, որոնք մտցվել են 1956 թ. հունվարի 1-ից և վերադիր ծախսերի նորմաները, որոնք մտցվել են 1958 թ. հունվարի 1-ից:

Նախահաշվային նորմաներ և գնահատումներ: Շինարարության մեջ հիմնական նախահաշվային-նորմատիվային փաստաթուղթը շինարարական կոնստրուկցիաների և աշխատանքների նախահաշվային նորմաներն են, որոնք բերված են շինարարական նորմաների և կանոնների (ՇՆ և Կ) IV մասում: Այդ նորմաները տվյալներ են պարունակում շենքերի և կառուցվածքների առանձին կոնստրուկտիվ տարրերի կամ աշխատանքների տեսակների միավորի (օրինակ, հավաքովի բետոնից, խամքար-գեոտոնից, խամքարից շարած 1 խմ հիմքի, տախտակյա վահանիկներից պատրաստված 1 քմ միջնորմի, սյուների, կամարների և քարե այլ կոնստրուկցիաների 1 խմ շարելու, նայած կատարման մեթոդներին, 1 խմ հողային աշխատանքների, 1 քմ սվաղի աշխատանքների և այլն) վրա կատարած աշխատանքի, նյութերի և դետալների ծախսումներին, ինչպես նաև շինարարական մեքենաների մեքենա-հերթափոխի մասին:

Շինարարական աշխատանքների համար ՇՆ և Կ IV մասի նախահաշվային նորմաների հիման վրա մշակվել են շրջանային միասնական միավոր գնահատումներ (ՇՄՄԳ):

¹ Միավոր գնահատում կոչվում է նախահաշվային այն նորմատիվը, որ սահմանում է այս կամ այն կոնստրուկտիվ տարրի կամ շինարարական աշխատանքների տեսակի միավորի (1 խմ երկաթբետոնի, 1 քմ սվաղի, 1 տ մետաղի կոնստրուկցիայի և այլն) ուղղակի ծախսումների չափը՝ դրամական արտահայտությամբ:

Շրջանային միասնական միավոր գնահատումներ են հանդիսանում շրջանում գտնվող և նյութերի մատակարարումով միատեսակ կամ մոտիկ պայմաններ ունեցող կառույցների միավոր գնահատումները:

Պրանք պարտադիր են շինարարական բոլոր կազմակերպությունների համար, բացառությամբ այն առանձին կառույցների, որոնց պայմանները զգալի չափով տարբերվում են ՇՄՄԳ-ում նախատեսվածից: Այդպիսի կառույցների համար միավոր գնահատումները կազմվում են անհատական կարգով: Շրջանային միասնական միավոր գնահատումները, ապահովելով միատեսակ պայմաններում իրականացվող շինարարության նախահաշվային արժեքի միասնական մակարդակ, նպաստում են նախահաշվային գործի, շինմոնտաժային աշխատանքների պլանավորման և կատարված աշխատանքների վերջնահաշիվների կարգավորմանը:

Ցուրաքանչյուր շրջանային միավոր գնահատում որոշում է համապատասխան շինարարական կոնստրուկցիայի կամ աշխատանքների տեսակների միավորի նախահաշվային արժեքը (ուղղակի ծախսումների մասը), բացառությամբ այն ծախսումների, որոնք կատարվում են մատակարարող ձեռնարկություններից մինչև շինարարական հրապարակը տեղական նյութեր, դետալներ և կոնստրուկցիաներ տեղափոխելու համար: Այդ ծախսումները կարող են էականապես փոփոխվել, նայած հեռավորությանը, փոխադրումների պայմաններին ու եղանակին: Այդ պատճառով կոնկրետ շինարարության համար շրջանային միասնական միավոր գնահատումներն օգտագործելիս, դրանք հարմարեցվում են տեղական պայմանների հետ, որը գլխավորապես հանգում է տեղական շինանյութերը և դետալները շինարարական հրապարակ հասցենելու համար ծախսումների ավելացման:

Այդպիսի հարմարեցում կարող է կատարվել ոչ միայն առանձին կառույցի, այլև կառույցների այն խմբերի համար, որոնք տեղական նյութերի ու դետալների մատակարարման տեսակետից մոտավորապես միատեսակ պայմանների մեջ են գտնվում: Այդ դեպքերում հաշվի են առնվում կառույցների ամբողջ խմբի համար տեղական նյութերի ու դետալների ստացման միջին պայմանները: Այդպիսի խմբավորման հետևանքով ստեղծվում են շինարարական աշխատանքների

համաֆաղաֆային, մարզային, շրջանային և ռեսպուբլիկական միավոր գնահատումներ, որոնք պարտադիր են շինարարական կազմակերպությունների համապատասխան խրմբերի համար: Ակնհերև է, որ այդպիսի խմբային միավոր գնահատումների կիրառումն ուժեղացնում է նախահաշվային փաստաթղթերի կազմակերպող նշանակությունը տնտեսական հաշվարկի ամրապնդման և շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարում, ինչպես նաև թեթևացնում ու պարզեցնում է նախահաշվային-ֆինանսական հաշվարկներ և նախահաշիվներ կազմելու գործը:

Օրինակ, Օդեսայի ժողտնտխորհը դեռ 1958 թ. մտցրեց տնտեսական վարչական շրջանի բոլոր կառույցների համար ընդհանուր միավոր գնահատումների ժողովածուներ: Նյութերի մատակարարումների ավելի ուսցիտնալ տեղեր ընտրելու, հանդիպական ու հեռավոր փոխադրումները վերացնելու, տրանսպորտի ավելի արդյունավետ տեսակներ օգտագործելու և այլ միջոցառումների շնորհիվ շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքի մակարդակն այդ գնահատումներով, առանձին կառույցների համար առաջներում գործող գնահատումների համեմատությամբ, իջեցվեց միջին հաշվով 2,6 տոկոսով: Ժողտնտխորհի կողմից մշակված գնահատումների ժողովածուները, որպես շինարարական աշխատանքների գների միասնական գնացուցակ, սկսեցին կիրառել տնտեսական շրջանի շինարարական բոլոր կազմաչերպությունները:

Տեղական շինանյութերի փոխադրման ծախսերը, առանձնապես այնպիսիների, ինչպես քարը, ավազը, մանրախիճը շատ դեպքերում մեծ չափով գերազանցում են այդ նյութերի համար սահմանվող ֆրանկո-քարհանքի բացթողման գները: Այդ պատճառով տեղական նյութերի և դետալների փոխադրման լրացուցիչ ծախսերը, որոնք մտցվում են շրջանային միասնական միավոր գնահատումների մեջ, դրանք տեղական պայմաններին հարմարեցնելիս, զգալի չափով ազդում են քաղաքի կամ շրջանի համապատասխան կառույցի նախահաշվային արժեքի մակարդակի վրա: Ուստի այդ ծախսերի մեծությունը որոշելիս անհրաժեշտ է ելնել կառույցներին

մոտակա ձեռնարկություններին տեղական նյութեր և դետալներ մատակարարելու առավել ռացիոնալ պայմաններից:

Տրանսպորտային ծախսերը կրճատելու մեջ թաքնված են շինարարության նախահաշվային արժեքն իջեցնելու և, հետևաբար, այն էժանացնելու մեծ ռեզերվներ: Ամեն տարի երկրում փոխադրվում են ավելի քան 190 մլն խմ ոչ-հանքային նյութեր: Այդ նյութերի ընդհանուր արժեքը տարեկան գերազանցում է 1,2 մլրդ ռուբլուց, ընդ որում տրանսպորտային, նախապատրաստական ծախսերը հասնում են 900 մլն ռուբլու և այսպիսով, գերազանցում նյութերի արժեքը բացթողման գնորով գրեթե երեք անգամ: Ոչ-հանքային նյութերի և աղյուսի արտաքին փոխադրումների հեռավորությունը հասնում է 200—300 կմ, իսկ շատ կառույցների համար՝ 1000 կմ և ավելին: ՍՍՌՄ շինբանկի կատարած հաշվարկները ցույց են տալիս, որ փոխադրումների հեռավորությունը միայն 25 տոկոսով կրճատելը շինարարության նախահաշվային արժեքը ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ (ելենելով կապիտալ ներդրումների տարեկան ծավալից) պակասեցնում է 50—55 մլն ռուբլով:

Փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ նախագծային ու շինարարական կազմակերպությունները համառ և սխտեմատիկ կերպով զբաղվում են հեռավոր փոխադրումները կրճատելու, հանդիպական փոխադրումները վերացնելու հարցերով, շինարարության համար առանձնացված պետական միջոցների մեծ տնտեսում է ձեռք բերվում:

Շինանյութերի և դետալների փոխադրման ծախսերը կարող են զգալի չափով կրճատվել փոխադրումներով զբաղված ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքները բարելավելու դեպքում: Պրակտիկան ցույց է տալիս, որ առանձին շինարարական կազմակերպությունների մանր ավտոտրանսպորտային տնտեսությունների միավորումը խոշոր տնտեսաշվարկային ձեռնարկություններում և կենտրոնացված փոխադրումների դարգացումը թույլ են տալիս համապատասխան քաղաքում կամ շրջանում կիրառել շինանյութերի փոխադրման միջին տարիֆային դրույքներ, անկախ հեռավորու-

թյունից: Այդպիսի դրույքներ արդեն կիրառվում են Մոսկվայում, Նովոսիբիրսկում և մի շարք այլ քաղաքներում: Դրանք նախադրյալներ են ստեղծում տրանսպորտային փոխադրումների ինքնարժեքն իջեցնելու համար և դրա հետ միասին զգալի չափով պարզեցնում են շինանյութերի ու դետալների նախահաշվային գների որոշումը:

Առաջավոր շինարարական կազմակերպությունները, որոնք անցել են հիմնական շինանյութերի և շինվածքների կենտրոնացված փոխադրման և 1 ա բեռի համար մտցրել են միասնական տարիֆ, ձեռք են բերել բեռների փոխադրման ինքնարժեքի զգալի իջեցում: Այդ հաստատում է, օրինակ, Լենինգրադի շինարարների հաջող գործունեությունը, որոնք բեռների փոխադրման արժեքն իջեցրել են 25 տոկոսով և դրա հաշվին շինարարություն նախահաշվային արժեքը պակասեցրել 1,5 տոկոսով:

Շինարարական մեքենաների շահագործման արժեքը որոշվում է միավոր գնահատումների մեջ մեքենա-հերթափոխի համապարտադիր նախահաշվային գներով, որոնք բերված են ՇՄՄԳ հավելվածում: Դա նպաստում է շինարարական մեքենաների շահագործման ճիշտ կազմակերպմանը և դրանց լավագույն օգտագործմանը:

Շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը որոշելու համար միավոր գնահատումների հետ միասին օգտագործում են խոշորացրած արժեքային ցուցանիշներ, որոնք որոշվում են խոշորացրած նախահաշվային նորմաների հիման վրա: Այդ նորմաները, որոնք մշակվել են ՇՆ և Կ IV մասի բազայի վրա, սահմանում են աշխատանքի, նյութերի, դետալների և շինարարական մեքենաների մեքենա-հերթափոխի ծախսումները՝ արտադրանքի չափման խոշորացրած միավորներով:

Ներկայումս գործում են խոշորացրած նախահաշվային նորմաների երկու տեսակ՝ կոնստրուկցիաների և աշխատանքի տեսակների խոշորացրած նախահաշվային նորմաներ (ԽԿՆ) և խոշորացրած նախահաշվային նորմաներ (ԽՆՆ),

որոնք որոշում են ամբողջութեամբ վերցրած շենքի կամ կառուցվածքի անհրաժեշտ ռեսուրսների ծախսը:

Ի տարբերութիւն ՇՆ և Կ IV մասի նախահաշվային նորմաների, որոնք նախատեսում են առանձին կոնստրուկտիվ տարրերի ու շինարարական աշխատանքների տեսակների իրականացման վրա՝ աշխատանքի, մեքենաների ու նյութերի ծախսումները, խոշորացրած նախահաշվային նորմաները պարունակում են շենքի կամ կառուցվածքի խոշորացրած մասի կառուցման համար անհրաժեշտ աշխատանքների ամբողջ կոմպլեքսի վրա ռեսուրսների ծախսման վերաբերյալ տվյալներ: Օրինակ, խոշորացրած նախահաշվային նորման շենքի հիմքերի շինարարութեան համար, հաշվի է առնում հողային աշխատանքները, հիմնատակի ու բուն հիմքի պատրաստման և հիդրոմեկուսացման աշխատանքները (ՇՆ և Կ IV մասում այդ բոլոր աշխատանքների համար տրվում են առանձին նորմաներ:)

ԽՆՆ պարունակում են, օրինակ 1 բմ կամ 1 խմ շենքի, 1 կմ ինժեներական ցանցերի, 1 կմ էլեկտրահաղորդման գծերի վրա ռեսուրսների ծախսի նորմաները: Այդ նորմաները մշակվել են ՇՆ և Կ IV մասի կամ ԽԿՆ նորմաներով՝ տիպային նախագծերի կամ հատուկ կերպով ընտրված կրկնակի օգտագործման խնայողական նախագծերի նախահաշիվների հիման վրա:

ԽԿՆ հիման վրա կազմվում են խոշորացված միավոր գնահատումներ, իսկ ԽՆՆ բազայի վրա՝ համապատասխան շենքերի ու կառուցվածքների նախահաշվային արժեքի խոշորացրած ցուցանիշներ: Ընդ որում օգտագործվում են շինանյութերի ու դետալների նախահաշվային դները և մեքենահերթավորի նախահաշվային դները, որոնք ընդունվել են ՇՄՄԳ-ի մշակման ժամանակ:

Խոշորացված միավոր գնահատումները և շենքերի ու կառուցվածքների նախահաշվային արժեքի ցուցանիշները ծառայում են նախագծային առաջադրանքների նախահաշվային-ֆինանսական հաշվարկներ և աշխատանքային գծագրերով նախահաշիվներ կազմելու, ինչպես նաև կատարված աշխու-

տանքների դիմաց վերջնահաշիվի համար¹։ Խոշորացված նորմաներն օգտագործվում են նաև աշխատանքների կազմակերպումը նախագծելիս՝ ռեսուրսների պահանջը որոշելու համար։

Խննդ-ով չնախատեսված շենքերի ու կառուցվածքների շինարարությունն աշխատանքների ֆինանսական հաշվարկները կազմելիս հաճախ օգտվում են շինարարական այն օբյեկտների նախահաշվային արժեքի խոշորացրած ցուցանիշներով, որոնք հաստատում են ժողտնտիսորհները, մինիստրությունները գերատեսչությունները։ Այդ ցուցանիշները սահմանում են տարբեր նշանակություն ունեցող շենքերի ու կառուցվածքների չափի միավորի վերջնական նախահաշվային արժեքը։

Նախահաշվային բոլոր նորմաները և դրանց վրա հիմնված միավոր գնահատումներն ու արժեքային այլ ցուցանիշները շինարարության տեխնիկական մակարդակի բարձրացման զուգընթաց պարբերաբար վերանայվում են և կատարելագործվում։ Ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում նորմաների խոշորացման և դրանց մեջ գիտություն ու տեխնիկայի նորագույն նվաճումներն արտացոլելու գործին։

Շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը որոշելու համար նորմատիվների ամենից ավելի առաջադիմական տեսակներից մեկը շենքերի և կառուցվածքների գնացուցակային գներն են։

¹ Առանձին կառույցների, կառույցների խմբերի, քաղաքային կառուցվածքային շրջանի համար ընդհանուր, միավոր գնահատումների ժողովածուներում, որպես առանձին բաժին մտցվում են ԽԿՆ նորմաներով կազմվող խոշորացրած գնահատումները և ԽՆՆ նորմաներով որոշվող՝ ամբողջությամբ վերցրած շենքերի կառուցման 100 քմ տարածության նախահաշվային գները։ Դա հնարավորություն է տալիս նախահաշվային-ֆինանսական հաշվարկները (նախահաշիվները) կազմելու և օբյեկտներում (որոնց նախահաշվային արժեքը որոշվում է նշված նորմաներով) կատարված աշխատանքների վերջնահաշիվների ժամանակ հրաժարվել մանրատված գնահատումների (ՇՄՄԳ) կիրառումից։ Բացառություն են կազմում այն օբյեկտները, որոնց վերջնահաշիվները կատարվում են աշխատանքները լրիվ ավարտելուց հետո կամ գնացուցակներով։

Բնակարանային-քաղաքացիական, տրանսպորտային, էներգետիկ և արդյունաբերական շինարարության մեջ տարբեր շենքերի ու կառուցվածքների բազմաթիվ տիպերի համար արդեն կիրառում են գնացուցակներ: Դրանք պարտադիր են ինչպես շինարարության նախահաշվային արժեքը որոշելու, այնպես էլ կատարված աշխատանքների վերջնահաշիվների ժամանակ: Գնացուցակները մշակվում են տիպային նախագծերի և աշխատանքային գծագրերով կազմված դրանց նախահաշիվների հիման վրա: Դրանք հաշվի են առնում շինարարության տեղակալն պայմաններն առանձին քաղաքներում և շրջաններում, այդ թվում կիրառվող նյութերն ու կոնստրուկցիաները, և այդ պատճառով ընդհանուր են տվյալ քաղաքի կամ շրջանի բոլոր կառույցների համար:

Գնացուցակային գինը մնում է անփոփոխ նաև այն դեպքում, եթե շինարարական կազմակերպությունն իջեցնում է շենքի կամ կառուցվածքի արժեքը՝ առանձին կոնստրուկցիաները կամ նյութերն այլ, ավելի խնայողական նյութերով փոխարինելու միջոցով, չվնասելով կառուցվող օբյեկտների որակին: Դա խթանում է շինարարական կազմակերպությունների պայքարը շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու համար:

Գնացուցակային գների նշանակությունը շատ մեծ է, Դրանք նպաստում են շինարարության հետագա էժանացմանը, շինարարական կազմակերպություններում տնտեսական հաշվարկի ամրապնդմանը և նախահաշիվներ ու կատարված աշխատանքների վերջնահաշիվներ կազմելու դործի զգալի պարզեցմանը: Ներկայումս աշխատանք է տարվում շինարարության բոլոր ճյուղերում գնացուցակային գների կիրառումն ընդարձակելու ուղղությամբ:

Միավոր գնահատումների և արժեքային այլ ցուցանիշների օգնությամբ շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքը որոշելիս, որպես կանոն, սահմանվում է միայն համապատասխան շինարարական օբյեկտի ուղղակի ծախսումները, որոնց պետք է ավելացնել վերադիր ծախ-

սերը և պլանային կուտակումները¹։ Վերադիր ծախսերի շափրն ընդունվում է ըստ հաստատված համապարտադիր նորմաների։ Վերադիր ծախսերի նորմաները սահմանված են միութենական ռեսպուբլիկաների, ՍՍՌՄ մինիստրությունների և գերատեսչությունների գծով և կազմում են շինարարական աշխատանքների նախահաշվում հաշվարկված ուղղակի ծախսումների գումարի 12-ից մինչև 18,3 տոկոսը, իսկ պողպատե կոնստրուկցիաների մոնտաժման մեջ՝ 9,7-ից մինչև 10,7 տոկոս։

Միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները, ելնելով ռեսպուբլիկայում վերադիր ծախսերի միջին շափերից, սահմանում են վերադիր ծախսերի նորմաներ՝ ժողտնտխորհների, միութենական ռեսպուբլիկաների մինիստրությունների ու գերատեսչությունների, ավտոնոմ ռեսպուբլիկաների մինիստրների սովետների և աշխատավորների դեպուտատների սովետների գործկոմների համար։

Նախահաշիվները կազմելիս պլանային կուտակումներն ընդունվում են ուղղակի ծախսումների և վերադիր ծախսերի գումարի 2,5 տոկոսի շափով։

Տեխնոլոգիական, էներգետիկ, ամբարձիչ-տրանսպորտային և այլ սարքավորում, ինչպես նաև հարմարանքներ, գործիքներ և արտադրական գույք ձեռք բերելու նախահաշիվներն ու նախահաշվային-ֆինանսական հաշվարկները կազմվում են նախագծի տվյալների հիման վրա, որի մեջ տրվում է սարքավորման բնութագիրը։ Նախագծային առաջադրանքի ստադիայում սարքավորման նախահաշվային արժեքը որոշվում է տիպային նախագծերի և կրկնվող օգտագործման նախագծերի տվյալներով կամ խոշորացված ցուցանիշներով, որոնք մշակվում են ժողտնտխորհների, մինիստրությունների ու գերատեսչությունների կողմից։ Աշխատանքային գծագրերի ստադիայում սարքավորման, հարմարանքների, գործիքների ու գույքի նախահաշվային արժեքը որոշվում է ար-

¹ Բացահոսություն են կազմում գնացուցակային գները, որոնք որպես կանոն, ընդգրկում են նաև վերադիր ծախսերը։

դյունաբերական ձեռնարկությունների մեծածախ գներով, ավելացրած տարայի, փաթեթման և սարքավորումը գործարան-մատակարարողից մինչև շինարարական հրապարակ փոխադրելու ծախսումները: Նույնպիսի կարգով է որոշվում սարքավորման նախահաշվային արժեքը նաև նախագծային առաջադրանքի ստադիայում, եթե բացակայում են խոշորացված ցուցանիշները:

Սարքավորումների մոնտաժման աշխատանքների նախահաշվային արժեքը նախագծային առաջադրանքի ստադիայում հաշվարկվում է ժողտնտիսորհի, մինիստրությունների ու գերատեսչությունների կողմից հաստատված խոշորացված նորմատիվներով (1 տոննա սարքավորման, տեղակայված կարողություն մեկ միավորի հաշվով՝ սարքավորման նախահաշվային արժեքից, տոկոսներով), իսկ այդպիսի նորմատիվների բացակայության դեպքում՝ սարքավորման մոնտաժի գնագրքերով, որոնք գործում են 1959 թվականի հունվարի 1-ից: Գնագրքերը հաստատվում են ՍՍՌՄ պետշինի կողմից և հիմք են ծառայում մոնտաժային աշխատանքների խոշորացրած նորմատիվներ սահմանելու համար: Այդ նույն գնագրքերով է հաշվվում նաև սարքավորման մոնտաժի նախահաշվային արժեքն աշխատանքային գծագրեր մշակելու ստադիայում:

Գործող գնագրքերի թերությունը գների զգալի մանրատվածությունն է: Այդ կապակցությամբ ներկայումս աշխատանք է տարվում սարքավորման մոնտաժի արժեքի խոշորացրած ցուցանիշներ կազմելու ուղղությամբ, որոնք կոչված են ինչպես մոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը որոշելու, այնպես էլ կատարված աշխատանքների վերահաշիվների համար:

Սարքավորման մոնտաժի գնագրքերում մտցված վերագրի ծախսերի գործող նորմաները, նայած մոնտաժային աշխատանքների տեսակին, սահմանված են բանվորների հիմնական աշխատավարձի 80-ից 124 տոկոսի շափով:

Մախսումների առանձին տեսակների (կառուցվող ձեռնարկության դիրեկտիայի պահում, ներառյալ տեխնիկական

հակողությունը, շահագործող կադրերի պատրաստում և այլն) նախահաշիվները և նախահաշվային-ֆինանսական հաշվարկները կազմվում են նախագծային տվյալների հիման վրա: Այդ ծախսումներից մի քանիսը, օրինակ, դիրեկցիայի պահումը, ձմեռ ժամանակ աշխատանքներ կատարելիս լրացուցիչ ծախսումները, խիստ նորմավորված են (շինարարության կամ շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքի տոկոսներով):

Ասածներից կարելի է հետևություն անել, որ շինարարության նախահաշվային արժեքը որոշվում է նախահաշվային նորմատիվների միասնական, համապարտադիր սիստեմի, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի համար սահմանված բացթողման գների, էլեկտրաէներգիայի և բեռների փոխադրումների տարիֆների հիման վրա:

Նախահաշվային նորմավորման ամբողջ աշխատանքը տարվում է կենտրոնացած կարգով: Նախահաշվային նորմատիվների մշակումն իրականացվում է միասնական պլանով, ներգրավելով ամենից ավելի փորձված ճյուղային ու մասնագիտացված նախագծային և գիտահետազոտական կազմակերպություններին: Նախահաշվային նորմատիվները մշակելիս և վերանայելիս հաշվի է առնվում առաջավոր շինարարական կազմակերպությունների և արտադրության առաջավորների փորձը, պրոգրեսիվ շինարարական տեխնիկայի, նոր առաջադիմական կոնստրուկցիաների արմատավորման և շինարարության ինդուստրիալ մեթոդների զարգացման անհրաժեշտությունը: Նախահաշվային նորմատիվների մշակման կազմակերպումը և հաստատումը դրված է ՍՍՌՄ պետշինի վրա:

Նախահաշվային արժեքը հաշվելու միասնական կարգը շինարարության հատկանշական գիծն է: Այն թույլ է տալիս ավելի լավ կազմակերպել նրա պլանավորումը և ակտիվորեն պայքարել շինարարության արժեքն իջեցնելու և տրնտեսական մյուս ցուցանիշները բարելավելու համար:

5. ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մեր երկրում սահմանված է նախագծային-նախահաշվային փաստաթղթերի քննարկման ու հաստատման համապարտադիր կարգ, նայած ժողովրդական տնտեսության համար կառուցվող ձեռնարկության, կառուցվածքի կամ շենքի նշանակությանը: Դա նպաստում է նախագծման որակի բարելավմանը, ժողտնտխորհների, մինիստրությունների, տնտեսական կազմակերպությունների և ձեռնարկությունների պատշաժ պատասխանատվություն է սահմանում կապիտալ ներդրումներն արդյունավետ օգտագործելու համար: Նախագծային առաջադրանքները հաստատվում են հետևյալ կարգով.

50 մլն և բարձր նախահաշվային արժեք ունեցող կառույցների նախագծային առաջադրանքները միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետների, ՍՍՌՄ մինիստրությունների և գերատեսչությունների ներկայացմամբ հաստատում է ՍՍՌՄ Մինիստրների սովետը:

2,5 մլն մինչև 50 մլն ռուբլու նախահաշվային արժեք ունեցող ռեսպուբլիկական ենթակայության կառույցները հաստատում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները, իսկ 1,5 մլն մինչև 2,5 ռուբլու նախահաշվային արժեք ունեցող կառույցներինը՝ միութենական ռեսպուբլիկաների ժողտնտխորհները, մինիստրությունները և գերատեսչությունները:

1,5 մլն մինչև 50 մլն ռուբլու նախահաշվային արժեք ունեցող միութենական ենթակայության կառույցներինը՝ ՍՍՌՄ մինիստրությունները և գերատեսչությունները:

Մինչև 1,5 մլն ռուբլու նախահաշվային արժեք ունեցող կառույցների նախագծային առաջադրանքները հաստատվում են այն կարգով, որը սահմանում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները, ՍՍՌՄ մինիստրությունները և գերատեսչությունները:

Աշխատանքային գծագրերով կազմված առանձին օբյեկտների, շենքերի ու կառուցվածքների նախահաշիվները

հաստատում են կառուցվող ձեռնարկությունների դիրեկտորները կամ պատվիրատու կազմակերպությունների ղեկավարները: Այդ նախահաշիվները համաձայնեցվում են շինարարական կազմակերպության հետ:

Նախքան նախագծերի ու նախահաշիվների հաստատելը դրանք ենթարկվում են բարձրորակ էֆպլեթիզի: էքսպերտիզի խնդիրների մեջ մտնում է. ստուգել ընդունված նախագծային լուծումների նպատակահարմարությունը, տիպային նախագծերի արմատավորումը, նախահաշվային-ֆինանսական հաշվարկների և նախահաշիվների կազմման ճշտությունը, նախագծման նորմաների պահպանումը և շինարարության արժեքն իջեցնելու ու կապիտալ ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու մասին պարտիայի ու կառավարության ցուցումների կատարումը: Նախագծերի ու նախահաշիվների էքսպերտիզը նպաստում է նախագծային-նախահաշվային փաստաթղթերի որակի բարձրացմանը և նախագծվող ձեռնարկությունների, կառուցվածքների ու շենքերի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների բարելավմանը:

Նոր, ընդարձակվող և վերակառուցվող ձեռնարկությունների և կառուցվածքների նախագծերը և նախահաշիվները արագ քննարկելու համար, դրանք պետական էքսպերտիզի են ենթարկվում միայն մի ինստանցիայում. 50 մլն ռուբլի և բարձր նախահաշվային արժեքի դեպքում՝ ՍՍՌՄ պետշինում, իսկ 2,5 մլն մինչև 50 մլն ռուբլին՝ միութենական ռեսպուբլիկաների պետշիններում, ՍՍՌՄ մինիստրություններում ու գերատեսչություններում:

Ռեսպուբլիկաների ժողտնտխորհների, մինիստրությունների ու գերատեսչությունների, տեղական սովետների գործկոմների կողմից հաստատվող 1,5 մլն մինչև 2,5 մլն ռուբլու արժեք ունեցող կառույցների նախագծերը քննարկում են նրանց էքսպերտային օրգանները: Մինչև 1,5 մլն ռուբլու արժեք ունեցող օբյեկտների նախագծերի ու նախահաշիվների էքսպերտիզայի կարգը սահմանում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները, ՍՍՌՄ մինիստրությունները և գերատեսչությունները:

Սահմանված են փաստաթղթերը ներկայացնելու պահից մինչև էքսպերտային եղրակացություն հավանություն տալը էքսպերտիզայի առավելագույն ժամկետներ. ՍՍՌՄ մինիստրների սովետի կողմից հաստատվող նախագծերի-նախահաշիվների համար՝ երկու ամիս, միութենական ռեսպուբ-

իկանների մինիստրների սովետների, ՍՍՌՄ մինիստրությունների ու՛գերատեսչությունների համար՝ մեկ ու կես ամիս, միութենական ռեսպուբլիկաների ժողովարարների, մինիստրությունների ու գերատեսչությունների, ավտոնոմ ռեսպուբլիկաների մինիստրների սովետների, տեղական սովետների գործկոմների համար՝ մեկ ամիս:

ՍՍՌՄ շինքանկի հիմնարկները կատարում են նախագծերի ու նախահաշիվների որակի ընտրովի ստուգում, նախագծվող ձեռնարկությունների տեխնիկա-տնտեսական ցուցանիշները համեմատում են գործող կամ կառուցվող ձեռնարկությունների համապատասխան ցուցանիշների հետ: Օգտագործելով կուտակված փորձը և ուսումնասիրելով գործերի դրությունը կառույցներում, նրանք վերահսկում են գործող նախահաշվային նորմանների, շինանյութերի և սարքավորման պետական գների, բեռների փոխադրման տարիքների, վերադիր, մթերման-պահեստային և այլ ծախսերի նորմաների ու լիմիտների պահպանմանը, ինչպես նաև ստուգում են աշխատավարձի վրա կատարած ծախսումների որոշման ճշտությունը, տրանսպորտային ծախսերը, շինմոնտաժային աշխատանքների մեքենայացումը: Այդ բոլորը հնարավորություն է տալիս շինարարության արտադրանքի բարելավման ու էժանացման ուղղությամբ առաջարկություններ մղողընել:

Սահմանված կարգով հաստատված նախագծերը և նախահաշիվները, որպես կանոն, չպետք է փոփոխվեն: Նախագծերի ու նախահաշիվների չհիմնավորված վերանայումները խախտում են շինարարական կազմակերպությունների նորմալ աշխատանքը և մի շարք դեպքերում հասցնում շինարարության ժամկետների ձգձգման: Դրա հետ միասին բոլոր դեպքերում, երբ բացահայտվում են այնպիսի ռեզերվներ, որոնք թույլ են տալիս իջեցնել շինարարության արժեքը և բարձրացնել կապիտալ ներդրումների արդյունավետությունը, առաջներում մշակված նախագծերում և նախահաշիվներում անհրաժեշտ է համապատասխան ուղղումներ մտցնել, որոնք կապված են գլխավորապես սուրբավորման նոր տե-

սակներ կիրառելու, տեխնոլոգիական ու շինարարական նախագծման նոր նորմաներ արմատավորելու հետ:

Ժողովրդական տնտեսության հարակից ճյուղերի պահանջներին, ինչպես նաև շինարարության տեղական պայմաններին՝ կառուցվող օբյեկտի նախագծի համապատասխանությունն ապահովելու համար, նախագծային կազմակերպությունը նախագծային առաջադրանքը կազմելիս նախագծային լուծումները համաձայնեցնում է շահագրգռված մինիստրությունների ու գերատեսչությունների, ինչպես նաև աշխատավորների դեպուտատների՝ տեղական սովետների հետ:

Օրինակ, հաղորդակցության ճանապարհների մինիստրության օրգանների հետ համաձայնեցվում են ներգործարանային տրանսպորտը երկաթուղային ճանապարհներին ընդհուպ մոտեցնելու ու բեռների փոխադրման հնարավորության հարցերը, շրջանային էներգոսիստեմների կառավարչությունների հետ՝ ձեռնարկություններին էլեկտրական և ջերմային էներգիա մատակարարելու հարցերը: Շինարարական այն կազմակերպությունների հետ, որոնք պետք է իրականացնեն շինմոնտաժային աշխատանքները, համաձայնեցվում են նախագծերում կիրառվող շինանյութերը, կոնստրուկցիաները, մեքենայացման միջոցները և շինարարական արտադրության այլ հարցերը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, շինարարական կազմակերպությունները, հենվելով իրենց փորձի վրա, նախագծային լուծումների և շինարարությունն իրականացնելու մեթոդների վերաբերյալ մտցնում են արժեքավոր առաջարկություններ:

Կարևորագույն օբյեկտների և մասսայական կիրառում ունեցող օբյեկտների կառուցման տիպային նախագծերը, ինչպես նաև շենքերի ու կառուցվածքների ունիֆիկացված հատակագծային ու կոնստրուկտիվ լուծումները, տիպային կոնստրուկցիաների ու դետալների գծագրերը հաստատում է ՍՍՌՄ պետշինը: Մնացած տիպային նախագծերը հաստատում են ՍՍՌՄ մինիստրություններն ու գերատեսչությունները՝ ՍՍՌՄ պետշինի հետ համաձայնեցնելով, իսկ այն

տիպային նախագծերը, որոնք մշակում են միութենական ռեսպուբլիկաների նախագծային կազմակերպությունները՝ միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետները կամ նրանց հանձնարարությունները ռեսպուբլիկաների պետշիննե-րը, ժողտնտխորհները, ռեսպուբլիկական մինիստրություններն ու գերատեսչությունները (բացի այն նախագծերից, որոնք հաստատում է ՍՍՌՄ պետշինը):

6. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախագծերի մշակումը մեր երկրում դրված է պետական նախագծային կազմակերպությունների վրա:

Ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի, ձեռնարկությունների նախագծման համար ստեղծվել են ճյուղային նախագծային կազմակերպություններ: Դրանց թվին են պատկանում, օրինակ, մետալուրգիական գործարանների նախագծման պետական ինստիտուտը (Гипромет), նավթավերամշակման գործարանների նախագծման պետական ինստիտուտը (Гипронефтезаводы), տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների նախագծման պետական նախագծային ինստիտուտը: Ընդհանրապես նախագծային կազմակերպությունների հիմնական խնդիրն է արտագործության տեխնոլոգիական պրոցեսների մշակումը, նախագծվող ձեռնարկությունների սարքավորման ընտրությունը, կապիտալ ներդրումների բարձր արդյունավետության ապահովումը:

Ընդհանրապես նախագծային կազմակերպությունների հետ մեկտեղ ստեղծվել են մասնագիտացված նախագծային կազմակերպություններ: Դրանց թվին են պատկանում, օրինակ, արդյունաբերական ձեռնարկությունների համաշխարհային կազմակերպության տեխնիկական նախագծման պետական նախագծային ինստիտուտը (Արդշիննախագիծ), արդյունաբերական տրանսպորտի կառուցվածքների ու հարմարանքների նախագծերի մշակման պետական նախագծային ինստիտու-

տը (Արդարանսնախագիծ): Մասնագիտացված նախագծային կազմակերպությունների խնդիրը. գլխավորապես նախագծի առանձնահատուկ մասերի մշակումն է (շինարարական, տրանսպորտի, ջրամատակարարման և կոյուղու, ջեռուցման ու օդափոխման և այլն):

Ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի օբյեկտների նախագծման մեջ միասնական տեխնիկական քաղաքականություն իրականացնելու համար առանձնացվել են առաջնային (ГОЛОВНОЙ) նախագծային ինստիտուտներ:

Դրանց վրա, առավել կարևոր տիպային և անհատական նախագծերի մշակման հետ միասին, դրվում է նոր տեխնոլոգիական պրոցեսների, սարքավորման նոր տեսակների, շենքերի և կառուցվածքների ծավալահատակագծման և կոնստրուկտիվ լուծումների, շինարարական նոր կոնստրուկցիաների ստեղծման և արտադրության ու շինարարության մեջ արմատավորելու նախագծային, հետազոտական, փորձարկման աշխատանքների կատարումը:

Առաջնային նախագծային ինստիտուտներն ուսումնասիրում են ժողովրդական տնտեսության համապատասխան ճյուղերի զարգացման հարցերը, մասնակցում են հեռանկարային պլանները կազմելու գործին, մշակում նորմատիվային, ղեկավար ու մեթոդական նյութեր նախագծման ու շինարարության վերաբերյալ, ընդհանրացում և արմատավորում ձեռնարկությունների նախագծման, շինարարության և շահագործման վերաբերյալ գոյություն ունեցող հայրենական և արտասահմանյան առաջավոր փորձը և տեխնիկական օգնություն են ցույց տալիս համասեռ պրոֆիլի նախագծային կազմակերպություններին: Ածխի և նավթի արդյունաբերության, սև և գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, մեքենաշինության և ժողովրդական տնտեսության մի շարք այլ ճյուղերի ամենախոշոր նախագծային ինստիտուտները գտնվում են ՍՍՌՄ Մինիստրների սովետի համապատասխան պետական կոմիտեների, ՍՍՌՄ մինիստրությունների ու գերատեսչությունների իրավասության ներքո, իսկ շինանյութերի արդյունաբերության, շինարարական ին-

դուատրիայի նախագծային ինստիտուտները, ինչպես՝ նաև արդյունաբերական և գյուղատնտեսական շինարարության մասնագիտացված նախագծային կազմակերպությունները՝ ՍՍՌՄ պետշինի իրավասության ներքո:

Ներկայումս արդյունաբերական շինարարության նախագծումը մասնագիտացնելու նպատակներով աշխատանք է տարվում արդյունաբերության հիմնական ճյուղերի ձեռնարկությունների նախագծերի շինարարական մասի մշակումը կենտրոնացնել ՍՍՌՄ պետշինի մասնագիտացված նախագծային կազմակերպություններում:

Զգալի թվով նախագծային կազմակերպություններ ենթարկված են ժողտնտխորհներին և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների գործկոմներին, նախագծային առանձին կազմակերպություններ ենթարկված են միութենական ռեսպուբլիկաների պետպլաններին, ռեսպուբլիկական մինիստրություններին ու գերատեսչություններին:

Մանր նախագծային կազմակերպությունների ուժերից վեր է ապահովել բարձր տեխնիկական մակարդակով նախագծային փաստաթղթերի ժամանակին մշակումը: Այդ պատճառով, վերջին տարիների ընթացքում մեծ աշխատանք է տարվել նախագծային կազմակերպությունների խոշորացման ուղղությամբ: Սակայն մանր նախագծային կազմակերպությունների թիվն այժմ էլ դեռևս մեծ է: Տնտեսական, սովետական և պարտիական կազմակերպությունների առաջ կանգնած է նախագծային կազմակերպությունների հետագա խոշորացման, դրանց՝ մասսայական շինարարության շրջաններին մոտեցնելու խնդիրը:

Նախագծային և ռետպլանային աշխատանքների պլանավորումը: Շինարարությունը նախագծերով և նախահաշիվներով լրիվ և ժամանակին ապահովելու, ինչպես նաև նախագծային կազմակերպությունները համաշափ ծանրաբեռնելու համար հաստատվում է նախագծային և հետազոտական աշխատանքների ֆեռանկարային և տարեկան պլաններ:

Նախագծային և հետազոտական աշխատանքների պլանավորումը իրագործվում է ինչպես նախագծերի պատվիրա-

տունների (կառուցողների), այնպես էլ աշխատանքը կատարողների (նախագծային կազմակերպությունների) համար: Յուրաքանչյուր տարի հաստատվում են հետագա տարիների շինարարության նախագծային-հետազոտական աշխատանքների պլանները: Այդ պլանների մեջ մտցվում են նախագծային առաջադրանքների, ինչպես նաև այն օբյեկտների աշխատանքային գծագրերի կազմումը, որոնք նախատեսված են պլանային տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա շինարարության համար: Նախագծերի պատվիրատուների համար հաստատվող նախագծային և հետազոտական աշխատանքների ամփոփիչ պլանների կազմի մեջ մտնում են նաև հետևյալ պլանները՝ տիպային նախագծման, ժողովրդական տնտեսության ճյուղերի զարգացման տեխնիկա-տնտեսական հիմնավորումների կազմման, շրջանային հատակագծման նախագծերի մշակման, ինչպես նաև քաղաքների ու ավանների հատակագծման, հետազոտությունների, նախագծման և շինարարության համամիութենական նորմաների, տեխնիկական պայմանների ու հրահանգների մշակման, շինարարության մեջ նոր տեխնիկա արմատավորելու հետ կապված հետազոտական, նախագծային և փորձարարական աշխատանքների անցկացման, նախագծման ու շինարարության հայրենական և արտասահմանյան փորձի ուսումնասիրման ու ընդհանրացման պլանները:

Ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային պլանների հիման վրա կազմվում են նախագծային ու հետազոտական կազմակերպությունների աշխատանքների տարեկան պլաններ: Ժողովրդատնտեսական պլանի առաջադրանքների համապատասխան ժողտնտխորհները, մինիստրությունները, գերատեսչությունները և աշխատավորների ղեկուսատեսների սովետների գործկոմիները հաստատում են նախագծային կազմակերպությունների առաջիկա տարվա աշխատանքների պլանները՝ ըստ աշխատանքների կազմի և ծավալի, աշխատողների թվի և աշխատավարձի ֆոնդի:

Նախագծեր պատվիրող կազմակերպությունների և նախագծային կազմակերպությունների փոխհարաբերություններ-

ըր որոշվում են պայմանագրերի հիման վրա: Նախագծային և հետազոտական աշխատանքներ կատարելու պայմանագրերը, որպես կանոն, կնքվում են պատվիրատու-կազմակերպություն և նախագծային առաջատար կազմակերպության միջև: Նախագծային և հետազոտական աշխատանքների ամբողջ կոմպլեքսը կատարում է առաջատար կազմակերպությունը, նախագծային և հետազոտական աշխատանքների առանձին տեսակների (օրինակ, արտադրական պրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման, էլեկտրամատչելիարարման, ջրամատակարարման և այլն) կատարման համար ներգրավելով նախագծային ու հետազոտական մասնագիտացված կազմակերպություններին: Այդ դեպքում նրանց հետ կնքվում են պայմանագրեր, որոնց մեջ որոշվում են նախագծային ու հետազոտական աշխատանքների կատարման կազմը և ժամկետները, կապակցված շինարարության իրականացման ժամկետների հետ, ինչպես նաև այդ աշխատանքների արժեքը:

Նախագծային կազմակերպությունները լրիվ պատասխանատվություն են կրում նախագծերի որակի, շինարարության նախահաշվային արժեքի ճիշտ որոշման, նախագծի բոլոր մասերի փոխադարձ կապի և սահմանված ժամկետներին նախագծերի ու նախահաշիվների կոմպլեքսային կազմման, տիպային նախագծերի առավելագույն օգտագործման համար: Պատվիրատուն նախագծային կազմակերպություններին ներկայացնում է նախագծման համար անհրաժեշտ տվյալներ, ժամանակին ընդունում և վճարում է պայմանագրով կատարված աշխատանքները, ստուգում դրանց որակը: Այդպիսի վերահսկողությունը նպաստում է նախագծա-հետազոտական աշխատանքների որակը քարձրացնելու և ժամանակին կատարելու գործին:

Նախագծային առաջատար կազմակերպությունը պայմանագրով նախատեսված բոլոր պայմանները կատարելու համար պատասխանատվություն է կրում պատվիրատուի առաջ, իսկ մասնագիտացված նախագծային կազմակերպությունները՝ նախագծային առաջատար կազմակերպության առաջ:

Նախագծային կազմակերպություններին տրվում են շրջանառու միջոցներ: Այդ միջոցները նախորոշված են նյութերի անհրաժեշտ պաշարներ ստեղծելու, ցածրարժեք ու արագ մաշվող առարկաներ ձեռք բերելու և նախագծա-հետազոտական աշխատանքների վրա այլ ծախսումներ կատարելու համար, մինչև դրանց կատարման դիմաց պատվիրատուներից վճարումներ ստանալը: Շրջանառու միջոցների շափը չի գերազանցում կատարվող նախագծա-հետազոտական աշխատանքների տարեկան պլանային արժեքի 16,5 տոկոսից:

Նախագծային ու հետազոտական աշխատանքների համար կատարվող ծախսումները խիստ նորմավորվում են: Դրանց արժեքը որոշվում է նախագծային ու հետազոտական աշխատանքների արժեքի խոշորացրած ցուցանիշների տեղեկատուով: Այն նախատեսված է նախագծային ու հետազոտական աշխատանքների նախահաշիվներ կազմելու, ինչպես նաև նախագծային կազմակերպությունների աշխատանքների ծավալների պլանավորման ու հաշվառման համար:

Տեղեկատուով շնախատեսված աշխատանքների արժեքը որոշվում է անհատական նախահաշիվներով: Այդպիսի աշխատանքներին են վերաբերում, օրինակ, շրջանային հատակագծման նախագծերի կազմումը, նորմաների, ստանդարտների, տիպային դետալների պլեոմների մշակումը և մի քանի այլ աշխատանքներ:

Նախագծային և հետազոտական աշխատանքների արժեքի մեջ մտցվում են նախագծային կազմակերպությունների ուղղակի ծախսումները (արտադրական անձնակազմի հիմնական աշխատավարձը, շինարարության պայմաններն ուսումնասիրելու և շինարարության տեղում նախագծային աշխատանքները կատարելու և այլ ուղղակի ծախսեր) և վերագիր ծախսերը: Վերագիր ծախսերին վերաբերում են՝ արտադրական անձնակազմի լրացուցիչ աշխատավարձը, սոցիալական ապահովագրության և կուլտուրական աշխատանքի համար կատարվող հատկացումները, օժանդակ նյութեր ձեռք բերելու, կոնստրուկցիաների, էքսպերտիզի և տեխնիկական օգնության ծախսերը, ինչպես նաև նախագծային փաստա-

թղթերը ձեակերպելու ծախսումները, վարչա-տնտեսական և այլ ծախսեր: Վերադիր ծախսերի նորմաները սահմանվում են տոկոսներով՝ արտադրական անձնակազմի հիմնական աշխատավարձի նկատմամբ:

Նախագծման որակը բարձրացնելու և արժեքն իջեցնելու գործին նպաստում է նաև նախագծային կազմակերպությունների աշխատողների աշխատանքի վարձատրման սխեման: Ներկայումս այն աշխատողները, որոնք կատարում են գծագրական-կոնստրուկտորական, պատճենահանման և օժանդակ աշխատանքներ, ինչպես նաև աշխատանքային գծագրեր մշակող ինժեներները և ճարտարապետները վարձատրվում են գործարքային ձևով: Այն աշխատողների համար, որոնք ստեղծագործական աշխատանք են կատարում նախագծեր կազմելու ասպարեզում, սահմանվել է աշխատանքի վճարման ժամանակավարձային-պարգևատրման սխեմա: Նախագծերի որակը բարձրացնելու, շինարարության արժեքը և նախագծվող ձեռնարկությունների արտադրանքի արժեքն իջեցնելու, ինչպես նաև նախագծման ժամկետները կրճատելու համար նախագծային կազմակերպությունների աշխատողներն ստանում են պարգևատրումներ:

Նախագծային կազմակերպությունները նախագծահետազոտական աշխատանքների վրա կատարվող ծախսումների իջեցման ղգալի ռեզերվներ ունեն առանձնապես տիպային նախագծերն ավելի լայնորեն կիրառելու և հաշվարկային ու հաշվիչ աշխատանքներն ամեն կերպ մեքենայացնելու հաշվին: Ուստի նախագծային ու հետազոտական աշխատանքների արժեքի հետագա իջեցման համար մղվող պայքարը բոլոր նախալծահետազոտական կազմակերպությունների կոլեկտիվների հրատապ խնդիրն է:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

1. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինդուստրացումը շինարարության տեխնիկական առաջադիմության հիմքն է: Ինդուստրացումը շինարարության տեխնիկական առաջադիմության հիմքն է, շինարարական կազմակերպությունների աշխատանքի տեխնիկա-տնտեսական բոլոր ցուցանիշների արմատական բարելավման պայմանը: Շինարարության ինդուստրացման համար բնորոշ են՝ գործարանային եղանակով պատրաստվող ունիֆիկացված հավաքովի դետալների, կոնստրուկցիաների ու հանգույցների լայն կիրառումը, ավտոմատացման միջոցների կիրառմամբ շինարարական հրապարակում արտադրական բոլոր պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը, շինարարական արտադրության մեջ առաջավոր տեխնոլոգիայի և շինմոնտաժային աշխատանքների հոսքային մեթոդների արմատավորումը:

Առաջ նյութերի վերամշակման և շենքերի ու կառուցվածքների կոնստրուկտիվ տարրերի (միջհարկային ծածկեր, միջասեյակային միջնորմներ, աստիճաններ, դռների ու լուսամուտների շրջանակներ և այլն) պատրաստման բոլոր օպերացիաները կատարվում էին անմիջապես շինարարական հրապարակում: Այժմ, երբ շինարարությունը կատարվում է ինդուստրիալ մեթոդներով, կոնստրուկցիաներն ու դետալները պատրաստվում են մասնագիտացված արդյունաբերական ձեռնարկություններում մասսայական մասշտաբով, ար-

տաղրական պրոցեսների լայն մեքենայացման և ավտոմատացման միջոցով: Շինարարական հրապարակը վերածվում է մոնտաժման հրապարակի, որտեղ պատրաստի դետալներից հզոր ամբարձիչների ու բարձր արտադրողական այլ մեքենաների օգնությամբ կատարվում է շենքերի ու կառուցվածքների մեքենայացված հավաքում: Դրա շնորհիվ խիստ կերպով իջնում են շինարարական կոնստրուկցիաների պատրաստման ու մոնտաժման համար աշխատանքի և միջոցների ծախսումները, զգալի չափով կրճատվում են աշխատանքների կատարման ժամկետները, վերանում է շաղախների, բետոնախառնուրդների և այլ նյութերի մշակման ու պատրաստման համար օգտագործվող ժամանակավոր շենքերի ու կառուցվածքների անհրաժեշտությունը: Շինարարության ինդուստրացումը համարյա լիովին վերացնում է բնական-կլիմայական պայմանների անբարենպաստ ազդեցությունը շինարարական աշխատանքների որակի ու ժամկետների վրա և թույլ է տալիս այդ աշխատանքները կատարել ութմիկ ամբողջ տարվա ընթացքում:

Ինդուստրացումը կայուն հիմք է ստեղծում շինարարության մասշտաբներն անշեղորեն ավելացնելու, աշխատանքի արտադրողականության աճի և շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու համար:

1954 թ. դեկտեմբերին շինարարության վերաբերյալ համամիութենական խորհրդակցությունում արտասանած ճառի մեջ Ն. Ս. Խրուշչովը ընդգծեց, որ ներկայումս մեր երկրում անհրաժեշտ բոլոր պայմանները կան շինարարության լայն ինդուստրացման համար: «Ինչպիսի՞ք են այդ պայմանները: Ամենից առաջ մեզանում աճել են բարձրորակ բանվորների ու մասնագետների բազմաթիվ կադրեր: Երկրի շինարարական կազմակերպություններում և շինանյութերի արդյունաբերության մեջ աշխատում են հազարավոր իրենց գործի հիանալի վարպետներ, արտադրության նորարներ: Մենք ունենք գործարաններ, որոնք կարող են կառուցողներին ապահովել ժամանակակից տեխնիկայով, որը թեթևացնում է աշխատանքը և բարձրացնում նրա արտադրողականությունը:

Ստեղծվել և ընդարձակվում է արտադրական այն բազան, որը թույլ է տալիս շինարարությունն ապահովել հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներով, դետալներով և շինանյութերով»¹։

Շինարարության ինդուստրացման հիմնական ուղղությունները: Շինարարության ինդուստրացման գլխավոր օղակը հավաքովի շինարարության ամեն կերպ զարգացումն է՝ գործարանային պայմաններում պատրաստված երկաթբետոնե կոնստրուկցիաների և դետալների լայն օգտագործման միջոցով: Հավաքովի երկաթբետոնը կայուն կերպով առաջատար տեղ է զբաղեցրել շինարարական արտադրության մեջ:

Վերջին տարիների ընթացքում մեր երկրում ստեղծվել է հավաքովի երկաթբետոնի հզոր արդյունաբերություն: 1955—1961 թվականների ընթացքում հավաքովի երկաթբետոնի և բետոնե կոնստրուկցիաների արտադրության ծավալը աճել է ավելի քան 7 անգամ: Գլխավոր հեռանկարում նախատեսված է հավաքովի երկաթբետոնե ու բետոնե կոնստրուկցիաների և այլ ժամանակակից շինարարական կոնստրուկցիաների ու նյութերի արտադրության հետագա արագ աճ, որոնք պայմաններ են ստեղծում շինարարությունը ամեն կերպ ինդուստրացնելու համար:

Հավաքովի երկաթբետոնի լայն կիրառումը տնտեսական մեծ արդյունք է տալիս: Օրինակ, միաձույլ սյուների փոխարինումը հավաքովի երկաթբետոնե սյուներով աշխատանքային ծախսումները կրճատում է 60—65 տոկոսով, մետաղյա կարկասի փոխարեն հավաքովի երկաթբետոնե կարկասի կիրառումը արդյունաբերական բաղմահարկ շենքերում աշխատանքների նշխատատարությունն իջեցնում է 15 տոկոսով, իսկ պողպատի ծախսը՝ 79 տոկոսով:

Շինարարական կոնստրուկցիաների ու դետալների մասսայական գործարանային պատրաստման հիման վրա հավա-

¹ Ն. Ս. Խոուշով, Շինարարության ինդուստրիալ մեթոդների լայն արմատավորման, որակի բարելավման և արժեքի իջեցման մասին: Պետքաղհրատ, 1955, էջ 7 (ռուս.):

քովի շինարարության զարգացումը շատ բանով կախված է շենքերի ու կառուցվածքների տիպայնացումից և ունիֆիկացումից: Տիպային նախագծերի, ունիֆիկացված արտադրանքի և կոնստրուկցիաների լայն կիրառումը հնարավորություններ է բացում շինարարության ընդուստրիալ մեթոդների արդյունավետ արմատավորման համար:

Շինարարության ինդուստրացումն անխզելի կապով կապված է շինմոնտաժային աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման հետ: Կոմպլեքսային մեքենայացման ժամանակ շինմոնտաժային աշխատանքների կազմի մեջ մտնող բոլոր օպերացիաները, այդ թվում նաև օժանդակ օպերացիաները, կատարվում են մեքենայացված եղանակով՝ փոխադարձաբար միմյանց լրացնող մեքենաների կոմպլեկսով: Լինելով աշխատանքի արտադրողականության աճման և շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման հզոր աղբյուր, մեքենայացումն ու ավտոմատացումը թեթևացնում, արմատապես փոփոխում են շինարարների աշխատանքի բնույթը, պայմաններ են ստեղծում աշխատանքային օրվա տևողությունը կրճատելու, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները վերացնելու համար:

ՍՍՌՄ-ում շինարարության զարգացման ժամանակակից էտապի ամենից ավելի էական դիժն այն է, որ ավարտվում է անցումը դեպի մեքենայական տեխնիկայի բազայի վրա իրագործվող արտադրության: Ժամանակակից կառույցը՝ դա անցյալ ժամանակների տնայնագործական արտադրությունը չէ, երբ համարյա բոլոր աշխատանքները կատարվում էին ձեռքով, հիմնականում միայն տարվա տաք ամիսներին, իսկ շենքերի ու կառուցվածքների շինարարությունը շատ երկար էր տևում: Այժմ շինարարական կազմակերպությունները նորագույն շինարարական տեխնիկայով հագեցված, մեքենայացված խոշոր ձեռնարկություններ են:

Վերջին տարիներին շինարարական կազմակերպությունների հագեցումը մեքենաներով խիստ աճել է: 1955 թ. մինչև 1961 թ. երկրի կառույցներում էքսկավատորների թիվն ավել-

լացել է 2,5 անգամ, բուլղոզերներինը՝ գրեթե 3 անգամ, շարժական ամբարձիչներինը՝ 2,1 անգամ: Աշխատանքի մեքենազինվածությունը շինարարության մեջ, ելնելով շինարարական մեքենաների ու մեխանիզմների արժեքից, որը միջին հաշվով ընկնում է շինմոնտաժային աշխատանքներում ըզբաղված մեկ բանվորին, 1960 թ., 1940 թ. համեմատությամբ, աճել է ավելի քան 4,6 անգամ: 1965 թ. մեքենազինվածությունը, 1958 թվականի համեմատությամբ, պետք է աճի 80 տոկոսով:

Շինարարության ինդուստրացման մակարդակի բարձրացումը պահանջում է արմատավորել առաջադիմական տեխնոլոգիա և շինարարական արտադրության կազմակերպման առաջավոր մեթոդներ: Ներկա պայմաններում, երբ շինարարական կազմակերպությունները հագեցված են բարձր արտադրողական մեքենաներով և ստանում են գործարանային արտադրության մեծ քանակությամբ պատրաստի դետալներ և կոնստրուկցիաներ, շինարարությունը չի կարելի վարել առանց խորապես մտածված տեխնոլոգիայի և աշխատանքների կատարման նախապես մշակված նախագծերի, այլապես բանը կհասներ մեքենաների պարապուրդների, շինարարության գրաֆիկների ձախողման:

Շինարարության լայն ինդուստրացումը հրամայաբար պահանջում է ամեն կերպ զարգացնել շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը, կիրառել արտադրության կազմակերպման առավել առաջադիմական ձևեր: Շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը նպաստում է ինժեներա-տեխնիկական աշխատողների և բանվորները բարձրորակ կադրերի ստեղծմանը, կադրեր, որոնք լավ ծանոթ են գիտության և պրակտիկայի նորագույն նվաճումներին, ունեն անհրաժեշտ հմտություն և փորձ, ընդունակ են արտադրության մեջ լայնորեն արմատավորել ժամանակակից տեխնիկական և ստեղծագործորեն այն առաջ շարժել: Մասնագիտացված կազմակերպություններում ավելի լավ են օգտագործվում բարձր արդյունավետություն ունեցող, հատ-

կապես մասնագիտացված մեքենաներն ու սարքավարում-
ները:

Շինարարական ինդուստրիայի առաջավոր կազմակեր-
պական ձևերի վրա հիմնված հավաքովի շինարարության,
կոմպլեքսային մեքենայացման և շինարարական արտադրու-
թյան առաջավոր տեխնոլոգիայի արմատավորումն ապա-
հովում է ավելի ու ավելի աճող տնտեսական էֆեկտ, որն իր
արտահայտությունն է գտնում շինարարության ժամկետնե-
րի կրճատման, որակի բարձրացման և արժեքի իջեցման մեջ:

Շինարարության ինդուստրացումը բարձր պահանջներ է
ներկայացնում շինարարական կադրերի որակավորման
նկատմամբ: Նոր տեխնիկայի և նոր տեխնոլոգիական պրո-
ցեսների արագ յուրացման համար շինարարների նախկին
արտադրական փորձը միայն արդեն բավական չէ: Նոր պայ-
մաններում շինարարական կազմակերպությունների աշխա-
տանքի վրա վճռականապես ազդում է ժամանակակից տեխ-
նիկային ու շինմոնտաժային աշխատանքների կատարման
առաջավոր մեթոդներին լավ տիրապետող բարձրորակ բան-
վորների ու մասնագետների նախապատրաստումը:

Շինարարական արտադրության ինդուստրացման պրոցե-
սի հետ անխղելիորեն կապված են շինարարության արտու-
դրական բազայում կատարված արմատական փոփոխու-
թյունները: Այդ բազայի հիմքն այժմ կազմում են շինքերի
ու կառուցվածքների պատրաստի տարրեր, նորագույն շինա-
նյութեր ու շինվածքներ թողարկող մասնագիտացված հզոր
գործարաններ: Ինդուստրիալ շինարարության անկապտելի և
կարևոր մասն են դառնում խոշոր, լավ հագեցված տրեստ-
ներն ու մեքենայացման վարչությունները, որոնք սպասար-
կում են տվյալ շրջանում աշխատող շինարարական կազմա-
կերպություններին:

Վերջին տարիներին շինարարության, առանձնապես բուս-
կարանային շինարարության ինդուստրացման մակարդակը
զգալի չափով բարձրացել է: Այժմ մեր շատ կառույցներ ին-
դուստրացման մակարդակով զգալի չափով գերազանցում են
ԱՄՆ-ի նույնպիսի կառույցներին: Շինարարության համար

հավաքովի երկաթբետոն ՍՍՌՄ-ում արտադրվում է ավելի, քան ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում և ԳՖՌ-ում միասին վերցրած:

Ինդուստրացման արդյունավետությունը, նրա դերը շինարարությունն արագացնելու և բարելավելու գործում կարելի է ցույց տալ Լենինի շքանշանակիր՝ «Տագիլշին» շինարարական տրեստի օրինակով:

Տրեստի կոլեկտիվը, լայնորեն կիրառելով շինարարության ինդուստրիալ մեթոդները, տարեցտարի բարձրացնում է շինարարության տեմպերը, արագացնում է արդյունաբերական, բնակարանային և կուլտուր-կենցաղային օբյեկտների շահագործման հանձնումը, ձեռք է բերում տնտեսական քարձր ցուցանիշներ: 1959—1961 թթ. աշխատանքի արտադրողականությունն այստեղ աճեց 22 տոկոսով, իսկ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջավ 8,7 տոկոսով:

Տրեստի աշխատանքի հաջողությունների հիմքը հավաքովի շինարարության զարգացումն է: Նիժնի Տագիլում, որտեղ և տրեստը կատարում է հիմնական աշխատանքները, արդյունաբերական շինարարության հավաքովիության մակարդակը 1961 թվականին կազմեց 32 տոկոս, իսկ այնպիսի շրջակներում, ինչպես բլյումինգի ձուլածոների մատուցման տեղամասն է ու մարտենյան ցեխի կաղապարման բակը, այն հասել է 65—70 տոկոսի, բնակելի տների շինարարությունում՝ 76 տոկոսի: Խոշորապանել և խոշորաբլի շինարարությունը կազմում է շինարարական աշխատանքների ամբողջ ծավալի չորսհինգերորդը: Միջոցառումներ են անցկացնում նաև աշխատանքի կազմակերպումը կատարելագործելու և աշխատանքների որակը բարելավելու ուղղությամբ: Մեծ թվով փոքր բրիգադների փոխարեն, ստեղծվել են կոմպլեքսային բրիգադներ:

Շինարարության ինդուստրացման շնորհիվ շինարարության տեղությունը կրճատելու հաշվին միայն վերադիր ծախսերը 1961 թ. կրճատվեցին 40 հազ. ռուբլով:

ՍՄԿՊ XXII համագումարի որոշումներում նշվել են նոր քննազծեր, որոնց պետք է հասնել շինարարության հետագա ինդուստրացման համար մղվող պայքարում:

«Կապիտալ շինարարության հսկայական մասշտաբները, — ասվում է ՍՄԿՊ ծրագրում, — պահանջում են շինարարական ինդուստրիայի և շինանյութերի արդյունաբերության արագ զարգացում և այնպիսի մակարդակի տեխնիկական կատարելագործում, որն ասպահովի ժողովրդական տնտեսության պահանջները, շինարարության ժամկետների առավելագույն

կրճատումը, իջեցնի դրա արժեքն ու բարելավի նորակը՝ շինարարության հետևողական ինդուստրացման, ըստ տիպային նախագծերի խոշոր շահիերի կոնստրուկցիաներից և արդյունաբերական արտադրության տարրերից լրիվ հավաքովի շենքերի ու շինանյութերի կառուցման անցնելն արագորեն ավարտելու միջոցով»¹։

Շինարարների առաջ դրված են շինարարության էլ ավելի լայն ինդուստրացման խնդիրներ. բարձրացնել շենքերի ու կառուցվածքների հավաքովիության աստիճանը և իջեցնել դրանց քաշը՝ խոշոր շահիերի հավաքովի շինարարական կոնստրուկցիաների, հանգույցների ու դետալների և, առաջին հերթին, հավաքովի երկաթբետոնի արտադրության զարգացման ու կիրառման հիման վրա. հետևողականորեն արմատավորել աշխատատար աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը, կիրառելով առավել կատարելագործված, բարձր արտադրողական շինարարական մեքենաներ ու սարքավորումներ. ամեն կերպ հասնել առաջավոր տեխնոլոգիայի և աշխատանքների կատարման հոսքային մեթոդների կիրառմանը։

2. ՀԱՎԱՔՈՎԻ ՇԻՆԱՐԱՐԱՐԱԿԱՆ ԴԵՏԱԼՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հավաքովի շինարարությունը բնորոշվում է գործարանային արտադրության շինարարական դետալների ու կոնստրուկցիաների լայն կիրառմամբ։ Շենքերի և կառուցվածքների հավաքովիության մակարդակը² 1953 թ. կազմում էր


¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 492,

² Հավաքովիության մակարդակը որոշվում է հավաքովի կոնստրուկցիաների ու դետալների արժեքի հարաբերությամբ՝ շենքի կամ կառուցվածքի պատրաստման համար անհրաժեշտ բոլոր շինանյութերի, դետալների և կոնստրուկցիաների ընդհանուր արժեքի նկատմամբ։

20 տոկոս, իսկ յոթնամյակի վերջին կհասնի գրեթե 60 տոկոսի: Առանձնապես կաճի խոշոր պանելների և բլոկների կիրառումը: Յոթնամյա պլանի համապատասխան 1965 թ. բոլոր բազմահարկ բնակելի տների կեսը կկառուցվի խոշոր պանելներից, իսկ մեկ քառորդից ավելին՝ խոշոր բլոկներից: Փոքրաթիվ հարկերով բնակելի բոլոր տների մինչև 40 տոկոսը կառուցվելու են գործարանային պայմաններում պատրաստված ստանդարտ դետալների կոմպլեկտներից:

Հավաքովի երկաթբետոնի արտադրության պարզացումն ու կիրառումը: Շինարարության ինդուստրացիայի հիմքը հավաքովի երկաթբետոնն է: Ուստի հավաքովի երկաթբետոնն կոնստրուկցիաների ու դետալների արտադրության զարգացման տեմպերը զգալի շափով որոշում են նաև շինարարության հետագա ինդուստրացիայի տեմպերը: Հավաքովի երկաթբետոնի արտադրության աճը բնորոշվում է հետևյալ դիագրամով:

ՀԱՎԱՔՈՎԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (մլն. խմ)



Հավաքովի կոնստրուկցիաների արտադրութեան արագ աճը հնարավորութիւն է տալիս յուրաքանչյուր տարի ընդլայնել շինարարութեան բոլոր ճյուղերում դրանց կիրառման մասշտաբները: Եթէ 1957 թ. շինմոնտաժային աշխատանքների յուրաքանչյուր մեկ միլիոն ռուբլուն ընկնում էր 1044 խմ հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներ ու դետալներ, ապա 1960 թվականին՝ 1597 խմ: Արդյունաբերական շինարարութեան մեջ հավաքովի երկաթբետոնե և բետոնե կոնստրուկցիաների ու դետալների կիրառումը 1957 թ. մինչև 1960 թ. ավելացել է ավելի քան 3 անգամ, բնակարանային և կուլտուր-կենցաղային շինարարութեան մեջ՝ 2,2 և գյուղատնտեսական շինարարութեան մեջ՝ 3,5 անգամ:

Խոշոր երկաթբետոնե պանելներից բնակելի և կուլտուր-կենցաղային շենքեր են կառուցվում Մոսկվայում, Լենինգրադում, Զերոպովեցում, Վոլգոգրադում, Մինսկում, Կիևում, Սևաստոպոլում, Պերվոուրալսկում, Նովոսիբիրսկում և շատ ուրիշ քաղաքներում: Խոշորապանել շինարարութեան անցնելը թույլ տվեց 2—3 անգամ արագացնել շենքերի կառուցումը և աղյուսե շենքերի համեմատութեամբ դրանց արժեքը իջեցնել 20—30 տոկոսով:

Հավաքովի երկաթբետոնը լայն տարածում է ստանում արդյունաբերական շենքերի ու կառուցվածքների շինարարութեան մեջ: Դեռ բոլորովին վերջերս որոշ շինարարներ անհնարին էին համարում հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաները կիրառել ձուլման բակերի, դոմնային ցեխերի, կոքսաքիմիական գործարանների, ածխի աշտարակների, մեծ կամուրջների և շատ այլ քարոք կառուցվածքների շինարարութեան ժամանակ: Ներկայումս հավաքովի երկաթբետոնից այդպիսի օբյեկտների կառուցումը սովորական գործ է դարձել: Դա ժողովրդական տնտեսութեան համար խնայում է հսկայական քանակութեամբ մետաղ, արագացնում է օբյեկտների շահագործման հանձնումը, ավելացնում արդյունաբերական կառուցվածքների ծառայութեան ժամկետները: Հավաքովի երկաթբետոնը հաջողութեամբ կիրառվում է ածխահորերի շինարարութեան մեջ՝ ուղղահայաց հորերի և հո-

րիդոնական հանքատեղերի ամրացման համար, ինչպես նաև վերերկրյա կառուցվածքներում:

Տարեցտարի աճում են հավաքովի երկաթբետոնի կիրառման մասշտաբները նաև հիդրոէներգետիկ շինարարության մեջ: Հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներից են մոնտաժվել Կառնասի, Վոլգայի պարտիայի XXII համագումարի անվան, Կրեմննշուգի և մի շարք այլ հիդրոէլեկտրակայանների շենքերը: Մեծ ծավալով հավաքովի երկաթբետոն է օգտագործվել Քրատսկի հիդրոէլեկտրակայանի ջրթող ամբարտակի և այլ հիդրոտեխնիկական կառույցներում: Մոտակա տարիներում ջեռմաէլեկտրակայանների շինարարության մեջ հավաքովիությունը նախատեսվում է հասցնել միջին հաշվով 90—95 տոկոսի, իսկ հիդրոէլեկտրակայաններինը՝ 70—80 տոկոսի:

Գյուղատնտեսական շինարարության մեջ լայն կիրառում կգտնեն բնակելի և արտադրական շենքերի կարկասների հավաքովի երկաթբետոնե տարրերը: Գյուղատնտեսական տարբեր շենքերի ու կառուցումների շինարարության մեջ կիրառելու համար մեծ հեռանկար ունեն հավաքովի կիսակամարակապ երկաթբետոնե կոնստրուկցիաները և վիբրազլանման պանելները:

Վիբրազլանման պանելներից մերձմոսկովյան մի շարք սովխոզներում կառուցվել են կովանոցներ, յուրաքանչյուրը 100 գլուխ կովի համար: Այդպիսի շենքի հավաքումը ավտոմոբիլային ամբարձիչի օգնությամբ շորս բանվոր կատարում են 8 հերթափոխում: Կովանոցի արժեքը 2—3 անգամ ցածր է աղյուսից ու փայտից պատրաստված համանման նշանակություն ունեցող գոմերից: Նման շինանյութերն օգտագործվում են նաև այլ նպատակների համար՝ որպես հացահատիկի շտեմարան, մեխանիկական և վերանորոգման բազաներ, գույքի պահեստներ և այլն:

Վիբրազլանման պանելները լայնորեն կօգտագործվեն նաև գյուղական բնակարանային շինարարության մեջ: Այդպիսի պանելներից կառուցված հավաքովի տները հարմար և էժան են: Վերջին տարիներին Մոսկվայի մարզի Կրասնոգորսկի շրջանի Ուսովո ավանում փորձնական կարգով կառուցվել են այդպիսի մի շարք տներ, որոնք բարձր զնահատական են ըստացել:

Վիրրագլանման պանելները հաջողութեամբ կարող են օգտագործվել խանութների, ահումբների և հասարակական այլ շենքերի շինարարութեան համար, բանջարեղենի պահեստներ, սիլոսային հրապարակներ, ոռոգելի ջրանցքներ, հացահատիկի պահեստներ, գարաթներ կառուցելու համար և այլն:

Տնտեսական խոշոր արդյունք, ինչպես նաև մետաղի և անտառանյութի մեծ խնայողութիւնն է տալիս հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների կիրառումը տրանսպորտային շինարարութեան մեջ: Վերջին տարիներին երկաթուղիների շինարարութեան ու էլեկտրիֆիկացման բնագավառում սկսեցին լայնորեն օգտագործել կոնտակտային ցանցի հավաքովի երկաթբետոնե հենարաններ, թունելների երեսպատման համար տյուրինգներ, երկաթբետոնային կոճեր և նորագույն այլ կոնստրուկցիաներ: Օրինակ, շուգունե ալյուրինգների փոխարինումը երկաթբետոնե տյուրինգներով կայարանամեջ թունելի տարածութեան յուրաքանչյուր գծամետրի վրա տալիս է 5-ից մինչև 7 տոննա մետաղի տնտեսում և թունելի կառուցման արժեքը իջեցնում է 15—17 տոկոսով:

Թե որքան արդյունավետ է հավաքովի երկաթբետոնի կիրառումը, երևում է հետևյալ օրինակից: Մոտիկ անցյալում մեծ կամուրջների հենարանների հիմքերը կառուցվում էին կեսսոնային եղանակով, որի վրա ծախսվում էր կամուրջի ամբողջ շինարարութեան ժամանակի մինչև 60 տոկոսը: Այժմ այդ հենարանները կառուցվում են կամ լայնացրած հիմք ունեցող կորացման ցցերի, կամ մինչև 5 մ տրամագիծ ունեցող երկաթբետոնե պատյանների վրա, որոնք մտցվում են գետնի մեջ, ամբողջ աշխարհում լայն ճանաչում ստացած, սովետական կոնստրուկցիայի վիրատորների օգնութեամբ: Փորձը ցույց է տվել, որ այդպիսի եղանակով կատարվող աշխատանքների արժեքը 20—40 տոկոսով ցածր է, իսկ կառուցման ժամանակը, կեսսոնային եղանակի համեմատութեամբ, 1,5—2 անգամ պակաս և, հատկապես կարևորն այն է, որ կամուրջ կառուցողներն ազատվել են առողջութեան համար վնասակար խտացած օդի տակ աշխատելուց: Խորասուզվող վիրատորների օգնութեամբ հավաքովի երկաթբետոնե պատյանի մշակման և շինարարութեան մեջ լայնորեն արմատավորման համար, այլ մեթոդի մի խումբ հեղինակներին 1962 թվականին շնորհվեց լենինյան մըրցանակ:

Հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրության զարգացման բարձր տեմպերը պահանջում են ավելացնել հավաքովի երկաթբետոնի ձեռնարկությունների կարողությունը: Մինչև 1954 թ. հավաքովի երկաթբետոնը, որպես կանոն, պատրաստվում էր անմիջականորեն շինարարական հրապարակներում տնայնագործական եղանակներով, ձեռքի աշխատանքի լայն կիրառմամբ: Ներկայումս երկաթբետոնի ավելի քան կեսը թողարկում են մեքենայացված խոշոր գործարանները, որոնք հագեցված են մասնագիտացված մեքենաներով: 1961 թվականի սկզբին հաշվում էր հավաքովի երկաթբետոնի մոտ 2000 ձեռնարկություն՝ տարեկան ավելի քան 40 մլն խմ ընդհանուր կարողությամբ:

Արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացումը և մասնագիտացումը թույլ տվեցին հավաքովի երկաթբետոնի ձեռնարկություններում, 1953 թվականի համեմատությամբ, միջին հաշվով երկրում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել երեք անգամ, 1 քմ արտադրական տարածությունից արտադրանքի ստացումն ավելացնել 2—2,5 անգամ և հավաքովի երկաթբետոնի ինքնարժեքն իջեցնել 30 տոկոսով:

Վերջին ժամանակներս ստեղծվել են երկաթբետոնե պանելների պատրաստման նոր վերբազանման և կասետային բարձր արդյունավետ եղանակներ:

Արագ տարածում է գտել երկաթբետոնե շինվածքների պատրաստման կասետային եղանակը մի քանի հատվածներ ունեցող ուղղահայաց կաղապարներում, որոնք թույլ են տալիս միաժամանակ կաղապարել մի քանի միատեսակ շինվածքներ: Այդ եղանակը հնարավորություն տվեց զգալի չափով բարելավել արտադրական տարածությունների օգտագործումը: Կասետային արտադրությունը մեր երկրում բարձր տեխնիկական մակարդակի վրա է գտնվում և զգալի չափով գերազանցում է արտասահմանյան արտադրության մակարդակը:

Սոցիալիստական աշխատանքի հերոս, ինժեներ Ն. Յա. Կոզլովը անընդհատ վերբազանման հաստոն է ստեղծել բազմակողմ նրբապատ երկաթբետոնե որմնապանելների, ինչպես նաև ծածկի, կտուրի պանելների և այլ ղեկավարների համար: Այդ բարձր արտադրողական հաստոնների վրա կարելի է պատրաստել ճշգրիտ չափերի երկաթբետոնե ղեկավարներ:

Խոշոր տարբերով տնաշինությունը մեծ առավելություններ ունի մանր

հատերով որմնանյութերից կատարվող շինարարության հանդեպ: Կնչպես
փորձը ցույց է տալիս, 1 ֆմ բնակելի տարածության վրա խոշորապանել
տներ կառուցելիս ծախսվում է 2,7 մարդ-օր, իսկ աղյուսե տներ կառուցե-
լիս՝ մոտ 5 մարդ-օր, այսինքն՝ համարյա երկու անգամ ավելի: Դրա հետ
միասին խոշորապանել տների կառուցումը 2,5—3 անգամ քիչ նյութեր
պահանջում, քան աղյուսից կատարվող շինարարությունը: Ցեմենտի և
պողպատի ծախսը խոշորապանել տների վրա ավելի բարձր չէ, քան դրանք
ծախսվում են աղյուսե տներում: Հինգ հարկանի բնակելի տունն աղյուսից
ներկայումս կառուցվում է 150—200 օրում, խոշորապանել տունը՝ 90—100
օրում, իսկ առաջավոր կառույցներում՝ էլ ավելի կարճ ժամանակամիջոցում:
Մեծ հնարավորություններ է բացում էլեկտրատաքացման մեթոդով
արմատորայի լարման նոր եղանակը: Այդ մեթոդը մշակելու և արտա-
դրության մեջ արմատավորելու համար մի խումբ մասնագետ-շինարարնե-
րի 1961 թվականին շնորհվել է Լենինյան մրցանակ: Էլեկտրատաքացման
մեթոդը հաջողությամբ կիրառվում է Չելյաբինսկի, Լվովի և շատ այլ քա-
ղաքների կառույցներում: Նախնապես լարված կոնստրուկցիաների 80 տո-
կոսը Մոսկվայում պատրաստում են այդ մեթոդով:

Մոտ ժամանակներու կկառուցվեն խոշոր կոմբինատներ,
որոնք կմասնագիտանան տարեկան 60 և 90 հազ ֆմ արտա-
դրական տարածության վրա արդյունաբերական շինքերի ու
կառուցվածքների համար կոնստրուկցիաների կոմպլեկսներ
թողարկելու մեջ: Խնդիր է դրված նաև հավաքովի երկաթբե-
տոնի, առանց բացառության, բոլոր ձեռնարկություններում
իրականացնել արտադրական պրոցեսների կոմպլեքսային
մեքենայացում ու ավտոմատացում և աստիճանաբար անց-
նել ոչ միայն առանձին ագրեգատների, այլև տեխնոլոգիա-
կան ամբողջ դժերի ավտոմատ կառավարմանը:

Հավաքովի կոնստրուկցիաների կատարելագործման ուղիները:
Շինարարության լայն ինդուստրացումը պահանջում է առա-
վելագույն կերպով օգտագործել հավաքովի երկաթբետոնի
գործող ձեռնարկությունների կարողությունները՝ նրանց մաս-
նագիտացման և ավելի լրիվ արտադրական բեռնվածության
միջոցով, այն հաշվով, որ բարձրացվի հավաքովի երկաթբե-
տոնի արտադրության տեխնիկական մակարդակը և իջեցվի
դրա ինքնարժեքը:

Հատուկ ուշադրության են արժանի հավաքովի երկաթ-
բետոնե կոնստրուկցիաների կատարելագործման հարցերը:

Հավաքովի կոնստրուկցիաների կիրառման փորձի ընդհանրացումը ցույց է տալիս, որ դրանց հետագա կատարելագործումը տեղի է ունենում հետևյալ հիմնական ուղղութիւններով. ա) հավաքովի կոնստրուկցիաների, հանգույցների և դետալների խոշորացում, դրանց քաշի հարաբերական իջեցմամբ, բ) հավաքովի կոնստրուկցիաների գործարանային պատրաստման ավելացում, գ) կոնստրուկցիաների ու դետալների տիպաչափերի թվի փոքրացում, դրանց ունիֆիկացման հաշվին, դ) հավաքովի դետալների պատրաստման որակի բարձրացում:

Հավաքովի տարրերի ուսցիռնալ խոշորացումը, մանր դետալների փոխարեն շենքերի ամբողջ մասերի (օրինակ, ամբողջ սենյակի կամ բնակարանի պանելների) պատրաստումը թույլ են տալիս զգալի չափով իջեցնել մոնտաժային աշխատանքների աշխատատարութիւնը և ինքնարժեքը: Ընդ որում նվազում են կցումների փակման և շենքերի ու կառուցվածքների հարդարման ծախսումները, իջնում են տրանսպորտային և բեռնման-բեռնաթափման աշխատանքների ծախսերը:

Հավաքովի տարրերի խոշորացման ժամանակ մոնտաժի արժեքի իջեցումը կարելի է ցույց տալ խորամարտոնային որմնաբլոկների օրինակով (ՍՍՌՄ շինարարութեան ու ճարտարապետութեան ակադեմիայի կազմակերպման, մեքենայացման և տեխնիկական օգնութեան ինստիտուտի տվյալներով) .

Ցուցանիշներ	Չափի միավորը	Բլոկների քաշը		
		մինչև 1 տ	մինչև 3 տ	մինչև 5 տ
Մեկ տոննայի մոնտաժման աշխատատարութիւնը	մարդ-օր	0,34	0,23	0,15
	%	100	67,5	41
Մեկ տոննայի մոնտաժման ինքնարժեքը	ռուբ.	2,41	1,7	1,52
	%	100	70,5	63

Մեծ բեռնաբարձություն ունեցող մոնտաժային ամբար-
ձիչների տարբեր տեսակներով կառույցների հագեցումը և
արդյունավետ կոնստրուկցիաների կիրառումը թույլ տվեցին
վերջին տարիներին զգալի չափով ավելացնել մոնտաժվող
տարրերի չափերը: Դեռ վերջերս արդյունաբերական շենքե-
րի ծածկերի պատրաստման համար կիրառվում էին հավա-
քովի երկաթբետոնի 0,5 մ×2 մ չափի սալեր: Այժմ դրանք
ամբողջովին դուրս են մղվել 1,5մ×6 մ, 3մ×6 մ չափի
պանելներով: Սկսվում են կիրառվել 3մ ×12 մ չափի պա-
նելներ: Բունկերային էստակադներում հավաքովի լարված-
արմատուրային աիգելների քաշը հասնում է 25 տոննայի:
Ջերմաէլեկտրակայանների շենքերի մոնտաժման համար կի-
րառվում են մինչև 25 տոննա քաշ ունեցող տարրեր, որոնք
մոնտաժից առաջ խոշորացվում են ավելի քան 50 տոննա
քաշի բլոկներով:

Գործարանային պայմաններում պատրաստված տարրերից Մոսկվա
գետի վրա Լուժնիկովի երկհարկանի կամուրջի շինարարության ժամա-
նակ ափին կատարվեց 200 մ երկարության և 5 հազար քաշ ունեցող
թռիչքային կազմություն ունեցող կամարների խոշորացրած հավաքում, ո-
րոնք հետագայում լաստանավերով փոխադրվեցին կամուրջի բացվածքը և
տեղադրվեցին հենարանների վրա: Նման եղանակով Կրասնոյարսկ քաղա-
քում հավաքվեց Նիսսյ գետի վրայով անցնող կամուրջի թռիչքային կամա-
րը, որը պատրաստված է ափում, յուրաքանչյուրը 75 մ երկարություն և
1600 քաշ ունեցող երկաթբետոնե կիսակամարներից: Այդ կամուրջը հա-
ջող կառուցելու համար մի խումբ շինարարներ 1962 թվականին արժանա-
ցան լենինյան մրցանակի:

Խոշորացրած բլոկները հաջողությամբ կիրառվում են դոմնային վա-
ռարանների, նավթավերամշակման և քիմիական գործարանների, ինչպես
նաև այլ ձեռնարկությունների ու կառուցվածքների շինարարության ժա-
մանակ:

Ներկայումս բնակելի տներ կառուցելու համար փորձնա-
կան կարգով սկսում են կիրառվել ծավալային տարրեր՝ բլոկ-
տուփեր, որոնք իրենցից ներկայացնում են առանձին ա-
վարտված սենյակ կամ նույնիսկ մի ամբողջ բնակարան,
պատրաստի պատերով, հատակով ու առաստաղով:

Այդպիսի բլոկները հավաքում են պանելներից կամ ամբողջովին կաղապարում են գործարանում, հարդարում, սարքավորում, ապա պատրաստի վիճակում փոխադրում շինարարական հրապարակ: Բլոկ-տուփերից բնակելի տների հավաքումը մեծ առավելություն ունի խոշոր պանելներից հավաքման նկատմամբ: Բլոկ-տուփերից պատրաստվող տների մոնտաժումը կատարվում է 2—3 անգամ ավելի արագ, իսկ մոնտաժման աշխատատարությունը նվազում է 6—10 անգամ: Օրինակ, Կրասնոդար քաղաքում 1962 թ. ապրիլին 80 բնակարանոց շորս հարկանի բնակելի տան մոնտաժման ժամանակ շինարարական հրապարակ բեքված յուրաքանչյուր բլոկ-տուփի տեղավորման վրա ծախսվեց ընդամենը 20—30 րոպե միայն: Մի շարք գիտահետազոտական, նախագծային և շինարարական կազմակերպություններ ներկայումս զբաղվում են շենքերի ծավալային տարրերի ավելի ռացիոնալ կոնստրուկցիաների և դրանց մոնտաժման մեթոդների մշակմամբ:

Լենինգրադում տնաշինարարական կոմբինատների ուժերով հաջողությամբ արմատավորվում է խոշոր տարրերից բնակելի տների մասսայական ինդուստրիալ շինարարություն կազմակերպելու նոր մեթոդ: Կոմբինատներն ապահովում են բնակելի տների հավաքովի կոնստրուկցիաների մեքենայական պատրաստումը, այդ տարրերի փոխադրումը շինարարական հրապարակ և նախօրոք պատրաստված հիմքերի վրա դրանց մոնտաժումը, որպես կանոն, կատարում անմիջապես տրանսպորտային միջոցներից, իրականացնելով միաժամանակ շենքի վերջնամշակման ու սարքավորումների մոնտաժման աշխատանքները: Հինգ հարկանի բնակելի տունը մոնտաժվում է միջին հաշվով 25 օրվա, հարկը՝ 4 օրվա ընթացքում: Խոշորապանել շինարարությամբ զբաղվող կոմբինատներում մեկ ԳՄ բնակելի տարածության վրա կատարվող աշխատանքային ծախսումները 1961 թ. 26,2 տոկոսով ցածր էին, քան տրեստներում: Նույն տարում կոմբինատները բոլոր տների 81 տոկոսը հանձնեցին լավ գնահատակա-նով:

Բնակելի տների կառուցման այդ նոր մեթոդը ներկայումս տարածվում է բոլոր ռեսպուբլիկաներում, երկրամասերում և մարզերում:

Ուշադրության է արժանի «Բարիկաղներ» գործարանի ավանում Գլխախնայինգրադշինի № 19 տրեստի կատարած հետաքրքիր փորձը: Տրեստը շորս հարկանի բնակելի տունը կառուցեց «Բարձրացող հարկերի» եղանակով: Շենքի յուրաքանչյուր հարկի աշխատանքները, սկսած վերին հարկից, կատարվում էին գետնի մակերեսին: Այնուհետև պատրաստի հարկը տասը հատ քառասուն տոննանոց հիդրավլիկ ամբարձիչների օգնությամբ, որոնք հենվում են նախօրոք տեղակայված երկաթբետոնե սյուների վրա, բարձրացվում էր վերև և ամրացվում սյուների մեջ անցկացված պողպատյա պահանակներով:

Շինարարության մեջ տեխնիկական առաջադիմության կարևոր ուղղությունը, որն ապահովում է նրա արժեքի էական իջեցում և տնտեսական մյուս ցուցանիշների բարելավում, հանդիսանում է կառուցվող շենքերի ու կառուցվածքների քաշի ամեն կերպ իջեցումը: Մոտավոր հաշվարկներով շենքերի ու կառուցվածքների քաշի պակասեցումը մեկ տոկոսով թույլ է տալիս դրանց արժեքը իջեցնել 0,3 տոկոսով, որը նյութական ռեսուրսների տնտեսման միջոցների տեղափոխման ծախսերի կրճատման, շինարարանների աշխատանքի արտադրողականության բարձրացման արդյունք է:

Հավաքովի կոնստրուկցիաների լայն կիրառումը շենքերի ու կառուցվածքների քաշը իջեցնելու մեծ հնարավորություններ է տալիս: Եթե ժամանակակից խնայողական նախագծերից որևէ մեկով կառուցվող բազմահարկ աղյուսե բնակելի տան 1 խմ քաշը կազմում է 440—560 կգ, ապա խոշորարևի շենքի 1 խմ քաշը իջնում է մինչև 400—450 կգ, իսկ խոշորապանել շենքինը՝ մինչև 250—300 կգ, այսինքն՝ կրճատվում է համարյա երկու անգամ: Առաջավոր նախագծային կազմակերպությունների փորձը վկայում է այն մասին, որ բնակելի տան 1 խմ քաշը մոտ ապագայում կհասցվի մինչև 180—200 կգ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ յոթնամյա պլանով նախագծված արդյունավետ հավաքովի կոնստրուկցիաների արտադրության զարգացումը թույլ կտա 1965 թ. շինարարության մեջ ծախսվող նյութերի ու շինվածքների քաշն իջեցնել, 1958 թ. մակարդակի համեմատությամբ, մոտ 25 տոկոսով: Այստեղից հետևում է, որ միայն շինարարական օբյեկտների քաշի պակասեցման միջոցով, որն ապահովվում է հավաքովի կոնստրուկցիաների լայն արմատավորման միջոցով, յոթնամյակի վերջին կարելի է հասնել շինարարության էժանացման՝ 7—8 տոկոսով:

Այսպիսով, հավաքովի տարրերի ամեն կերպ խոշորացումը զուգորդվում է դրանց հարաբերական քաշն առավելագույն չափով իջեցնելու հետ, որին կարելի է հասնել կոնստրուկցիաները կատարելագործելու, բարձր ամրության նյութերի և պատերի հաստությունն զգալի չափով փոքրացնող արդյունավետ թեթև ջերմամեկուսիչ նյութերի ու պատող այլ կոնստրուկցիաների արմատավորման միջոցով:

Շենքերի ու կառուցվածքների քաշի էական իջեցում ձեռք է բերվում թեթև բարակապատ նախապես լարված հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների օգտագործման ժամանակ, կոնստրուկցիաներ, որոնք պատրաստվում են բարձր մարկայի բետոններից ու մեծ ամրություն ունեցող պողպատյա ամրաններից:

Շինարարության մեջ նախապես լարված ու բարակապատ կոնստրուկցիաների, ինչպես նաև թեթև բետոնե շինվածքների լայն արմատավորումը տնտեսական մեծ օգուտ է տալիս: Այդպիսի կոնստրուկցիաները պահանջում են 40—50 տոկոսով քիչ մետաղ և 35—40 տոկոսով իջեցնում են շենքերի քաշը:

Կոնստրուկտորների առջև խիստ հրատապ խնդիր է դրված. ստեղծել արդյունաբերական շենքերի խնայողական պատող կոնստրուկցիաներ: Այժմ կիրառվող երեքշերտյա որմնապանելները, որոնց մեջ երկաթբետոնի երկու շերտի արանքում դրված է ջերմացուցիչ (հանքային բամբակից սալեր և այլն), շատ աշխատատար են և բավարար չափով չեն հա-

մապատասխանում գործարանային արտադրության՝ պայմաններին: Այդ տեսակետից խիստ հեռանկարային են երկկեղև գլանված սալերը և ծակոտկեն բետոնից պատրաստվող միաշերտ պանելները: Երեքշերտանի պանելները համեմատությամբ դրանք թույլ են տալիս պակսեցնել արդյունաբերական շենքերի պատերի քաշը 1,5—2 անգամ և զգալի շահով իջեցնել դրանց արժեքը:

Արդյունաբերական և հասարակական շենքերի ու կառուցվածքների քաշն իջեցնելու հսկայական հնարավորություններ են բացում հավաքովի երկաթբետոնե թաղանթների կիրառումը, որոնցում առավել արդյունավետ են օգտագործվում երկաթբետոնի հիանալի հատկությունները:

Լենինգրադում կառուցվել է արդյունաբերական շենքի վերնածածկ հավաքովի երկաթբետոնե երկու թաղանթներից՝ յուրաքանչյուրը 18 մ × 18 մ չափերով: Նույն տեղում պատրաստվեցին երկու նոր թաղանթներ, որոնցից յուրաքանչյուրը ծածկեց 1600 քմ տարածություն: Մոսկվայի «Դինամո» ստադիոնը ծածկելու համար մշակվել է հավաքովի երկաթբետոնե կրկնակի կորույթան՝ 150 մ × 230 մ չափի թաղանթի նախագիծ, որն իր եզրագծով պետք է հենվի սյունաշարի վրա: Մեկ թեթև երկաթբետոնի դմբեթը կծածկի ստադիոնի 3,5 եռ տարածություն:

Հավաքովի երկաթբետոնի արտադրության զարգացումը հնարավորություն է տալիս անցնել քնակելի և հասարակական շենքերի տանիքների կառուցման նոր եղանակի՝ կտուրը համատեղել երկաթբետոնե ծածկի հետ: Այդպիսի համատեղումը տնտեսական մեծ արդյունք է տալիս:

Շինարարության արժեքի զգալի իջեցման է հանգեցնում նաև ասբեստացեմենտե սալերի և պանելների կիրառումը: 8—10 մմ հաստությամբ երկու խոշոր չափերի ասբեստացեմենտի թերթերից կազմված պատի 1 քմ պանելը, հանքային բամբակե ջերմացուցչի հետ միասին, կշռում է 76—85 կգ, այսինքն 1 քմ աղյուսե պատից 15 անգամ քիչ: Այսպիսի ասբեստացեմենտային պատերի արժեքը 1,5 անգամ ցածր է, աղյուսե պատերի արժեքի համեմատությամբ, Ասբեստացեմենտի դեռալների կիրառմամբ կառուցված բնա-

կելի տները ավելի քան երեք անգամ թեթև են, քան աղյուսե տները:

Շենքերի ու շինությունների քաշը խիստ իջնում է կրող կոնստրուկցիաների մեջ ալյումինի համաձուլվածքներ օգտագործելիս: Ներկայումս ալյումինի համաձուլվածքների լայն արմատավորմանը խոչընդոտում են յրանց համեմատաբար բարձր արժեքը և շենքերի ու շինությունների համապատասխան տարրերի կոնստրուկցիաների մի շարք թերությունները, ինչպես նաև ալյումինի շինարարական կոնստրուկցիաներ պատրաստող մասնագիտացված ձեռնարկությունների բացակայությունը: Գիտնականները, կոնստրուկտորներն ու գյուտարարները այժմ աշխատում են ալյումինի համաձուլվածքների նոր, շինարարության պահանջները բավարարող տեսակների ստեղծման վրա, և ալյումինի կոնստրուկցիաների եռակցման ու միացությունների այլ տեսակների ուսցիոնալ մեթոդներ են որոնում:

Սինթետիկ ձյուրքերի արտադրության զարգացումը թույլ կտա մոտակա տարիներին շինարարության մեջ սկսել ամեն տեսակ պլաստմասսաների՝ այդ առավել ունիվերսալ և հեռանկարային շինանյութերից մեկի, լայն արմատավորումը: Պլաստմասսաները կարող են հաջողությամբ կիրառվել կրող ու պատող կոնստրուկցիաների ստեղծման, լուսամուտների շրջանակների, շենքերի գեղեցիկ հարդարման, ամրանների, ինչպես նաև սանիտարա-տեխնիկական սարքավորումների համար:

Հավաքովի կոնստրուկցիաների հետագա կատարելագործման համար մեծ նշանակություն ունի դրանց գործարանային պատրաստման ավելացումն այն հաշվով, որպեսզի շինարարական հրապարակներում մոնտաժային օպերացիաները առավելագույն չափով պարզեցվեն և հասցվեն նվազագույնի, իսկ կառուցողներն ազատվեն աշխատատար հարդարման աշխատանքների կատարումից, որոնք երկարացնում են շինարարության ժամկետները: Այդ պահանջում է, ամենից առաջ, հավաքովի դետալների պատրաստման ճշգրտություն, որը թույլ է տալիս վերացնել կառույցներում կոնստրուկցիաների հարմարեցման աշխատատար օպերացիաները, կատարելագործել կցվածքների ծածկումը և, ի վերջո, բարձրացնել շենքերի ու կառուցվածքների որակը: Առանձնապես կարևոր է շինարարական հրապարակներից գործարանային պայմանների փոխադրել շենքերի ներքին և արտաքին հարդարման հիմնական աշխատանքները՝ ընդհուպ մինչև

երեսպատումը և ներկումը, ինչպես նաև սանիտարա-տեխ-
նիկական սարքավորումների մոնտաժման աշխատանքները:

Կարևոր դեր է խաղում շինարարություն մեջ պրոգրեսիվ
եռակցված կոնստրուկցիաների մասսայական արմատավոր-
ումը: ՄՄԿՊ Կենտկոմի հուլիսյան (1960 թ.) պլենումը հանձ-
նարարեց կառույցներում ստեղծել ինժեներ-կոնստրուկտոր-
ներից, տեխնոլոգներից և արտադրության առաջավորներից
կազմված հանձնաժողովներ՝ առաջավոր եռակցման տեխնի-
կան արմատավորելու գործին աջակցելու համար:

Հավաքովի շինարարության զարգացումը պահանջում է
հավաքովի տարրերի ավելի լայն տիպականացում, ստան-
դարտացում և ունիֆիկացում այն հաշվով, որ զգալի շափով
կրճատվի հավաքովի տարրերի տիպաչափերի թիվը և կազ-
մակերպվի դրանց մասսայական արտադրությունը մասնա-
գիտացված ձեռնարկություններում:

Շատ բան է արդեն արված այդ բնագավառում: Նախա-
գծային գիտահետազոտական կազմակերպությունների աշ-
խատողների ստեղծագործական ջանքերն այժմ ուղղված են
շենքերի և շինությունների, նայած նրանց նշանակության,
առավել նպատակահարմար, փոխադարձաբար կապված պա-
րամետրերի մշակմանը (շենքերի բարձրության, թռիչքների
չափերի և այլն), որոնց հետ համաձայնեցվում են հավաքո-
վի շինվածքների չափերը, ավելի խնայողական ու հուսալի
կոնստրուկցիաներ ընտրելու և ինդուստրիալ շինվածքների
միասնական անվանացանկ ու միասնական կատալոգ մշա-
կելու համար: Այս բոլորը պայմաններ է ստեղծում բարձր
գործարանային պատրաստման խոշորացրած տարրերը պրակ-
տիկայում լայնորեն արմատավորելու համար, որոնք նպաս-
տում են շենքերի և կառուցվածքների երկարատևության
ավելացմանը, դրանց շահագործման հատկությունների բա-
րելավմանը և շինարարության արժեքի իջեցմանը:

3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ

Շինարարության մեքենայացման պարզացումը: Մեքենայացումը սոցիալիստական արտադրության բոլոր ճյուղերում, այդ թվում նաև շինարարության մեջ, զարգացման մի շարք ստադիաներ է անցնում:

Առաջին ստադիան մասնակի մեքենայացումն է, երբ մեքենաների օգնությամբ իրականացվում են միայն առանձին, առավելապես հիմնական շինարարական պրոցեսները: Օրինակ, հողային աշխատանքները մեքենայացնելիս գետնի փորումը կատարվում է էքսկավատորներով, փոխադրումը երկաթուղային վագոններով, իսկ բեռնաթափումը և լցակույտների հավասարեցումը հաճախ կատարվում են ձեռքով: Բետոն պատրաստելիս (ոչ մեծ տեղակայումներում) բետոնի շաղախի խառնումը կատարվում է մեքենայացված եղանակով, իսկ ցեմենտը և շեղոք նյութերը բետոնախառնիչի մոտ բերելը և շերտի մեջ լցնելը՝ ձեռքով, ձեռնասայլակների օգնությամբ:

Երկրորդ ստադիան կոմպլեքսային մեքենայացումն է, երբ բոլոր տեխնոլոգիական պրոցեսները, որոնք մտնում են այս կամ այն տեսակի աշխատանքների կազմի մեջ, ներառյալ օժանդակ օպերացիաները, կատարվում են մեքենայացված եղանակով՝ մեքենաների սխստեմի (կոմպլեկտի) օգնությամբ: Օրինակ, հողային աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման ժամանակ մեքենայացված եղանակով կատարվում են հողի քանդումը և տրանսպորտային միջոցների վրա բարձումը՝ էքսկավատորի օգնությամբ, փոխադրումը ինքնաթափ ավտոմեքենաներով կամ շրջվող դոմպկարներով, լցակույտում հողի հավասարեցումը՝ բուլդոզերներով, խտացումը՝ մոտորային զլոկոնների միջոցով: Կոմպլեքսային մեքենայացման մակարդակը որոշվում է կոմպլեքսորեն մեքենայացված աշխատանքների ծավալի և համապատասխան տեսակի աշխատանքների ընդհանուր ծավալի հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսներով:


Երրորդ, եզրափակիչ ստադիան արտադրական պրոցես-

ների ավտոմատացումն է, երբ բոլոր օպերացիաները՝ կատարվում են ավտոմատ աշխատող մեքենաների ու սարքերի սխեմայի միջոցով, իսկ բանվորը միայն վերահսկում է մեքենաների աշխատանքը:


Շինարարական մեքենաների պարկի արագ աճի շնորհիվ կառույցների մեծ մասում համարյա լրիվ ավարտվել է աշխատանքների շատ տեսակների մասնակի մեքենայացումը, արագ բարձրանում է առավել աշխատարար հողային, բետոնի, երկաթբետոնի, մոնտաժային, հարդարման և բեռնման-բեռնաթափման աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման մակարդակը:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄԸ (տոկոսներով)

Հողային աշխատանքներ



Երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժ



Յոթնամյակի ընթացքում շինարարները պետք է կատարեն ավելի քան 20 մլրդ խմ հողային աշխատանքներ, 600 մլն խմ բետոն թափեն, մոնտաժեն մոտ 600 մլն տ շինարարական կոնստրուկցիաներ և 12 մլն տ սարքավորում, բեռնեն

և բեռնաթափեն մոտ 15 մլրդ տ շինարարական բեռներ: Այդպիսի հսկայական ծավալի աշխատանքներ կարելի է կատարել միայն շինմոնտաժային աշխատանքների մեքենայացման ու ավտոմատացման մակարդակի հետագա նշանակալից բարձրացման հիման վրա՝ ինչպես աշխատանքների բոլոր հիմնական տեսակները կոմպլեքսային մեքենայացման մեջ ավելի լրիվ ընդգրկելու, այնպես էլ շինարարական միջարք նոր ավտոմատացված մեքենաներ և մեխանիզմներ կամ ավտոմատ մեքենաներ արմատավորելու միջոցով:

ՍՄԿՊ ծրագիրը խնդիր է դրել առաջիկա տասնամյակում լիովին ավարտել շինարարության կոմպլեքսային մեքենայացումը: Դա կհանգեցնի բեռնման-բեռնաթափման ձեռքի աշխատանքների վերացմանը և հիմնական ու օժանդակ արտադրական օպերացիաների կատարման ժամանակ ծանր աշխատանքի դուրս մղմանը: Այդ խնդրի լուծման գործում խոշոր քաջ կհանդիսանա շինարարական կազմակերպությունների մեքենազինվածության հետագա բարձրացումը, որ նախագծված է ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանով:

Շինարարական մեքենաների ու սարքավորումների կատարելագործումը: Քանակական աճի հետ միասին շինարարական մեքենաների պարկն անշեղորեն կատարելագործվում է որակական տեսակետից: Այն համալրվում է մեքենայացման նորանոր բարձր արդյունավետ միջոցներով:

Առաջին հերթին դա վերաբերում է մոնտաժային աշխատանքներին: Յոթնամյակում խիստ ավելանում է մոնտաժային ամբարձիչների, այդ առաջատար մեքենաների արտադրությունը, որոնց օգնությամբ իրականացվում է խոշոր չափերի շինարարական կոնստրուկցիաների ու սարքավորման հանգուցյների հավաքումը: Մոնտաժային աշխատանքների ծավալը, այդ մեքենաների կիրառմամբ, 1958 թ. համեմատությունով, 1965 թ. կավելանա համարյա երեք անգամ:


Ներկայումս կազմակերպվում է հեշտ մոնտաժող և դեմոնտաժող 3—5 տ բեռնաբարձություն ունեցող, պնևմատիկ ընթացքով ժամանակա-

կից աշտարակային ամբարձիչների մասսայական արտադրությունը Մոն-տաժիլո հագուլցների և կոնստրուկցիաների հետագա խոշորացման կապակցությամբ զգալի չափով ավելանում է 10—25 տ ամբարձունակությամբ պնևմատանիվային ընթացքով մոնտաժային ամբարձիչների թողարկումը, կյուրացվի նույն տիպի 50 և ավելի տ ամբարձունակությամբ է՛լ ավելի խոշոր ամբարձիչների արտադրությունը: Մեքենաշինարարները պետք է պատրաստեն 10-ից մինչև 100 տ ամբարձունակությամբ թրթուրավոր ընթացքով մոնտաժային ամբարձիչների սերիա: Յաժառանգի շինարարության մեքենայացման մակարդակը բարձրացնելու համար զգալի չափով կընդարձակվի 0,5—1,5 տ ամբարձունակությամբ դյուրաշարժ սլաքային ամբարձիչների արտադրությունը:

Հողային աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումն արագ ավարտելու գործին կնպաստի հողափոր մեքենաների և դրանց սպասարկող տրանսպորտային միջոցների պարկի արմատական նորացումը: Ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում կոմպլեքսորեն մեքենայացվող հողային աշխատանքների տեսակարար կշռի խիստ ավելացմանը: Մեքենաշինական արդյունաբերությունը, մասնավորապես, պետք է ամենակարճ ժամկետներում յուրացնի բարձր արդյունավետ, շերեփի մեծ տարողությամբ ինքնագնաց սկրեպներին և հզոր տրակտորների վրա բուլդոզերներին, ծանր ինքնագնաց, այդ թվում պնևմատանիվային ընթացքով գրդոններին արտադրությունը:

Յոթնամյակի տարիներին զգալի չափով կավելանա մեծ հզորության մեքենաների թողարկումը: Այսպես, նոր մեքենաների թվում շինարարները կստանան 20—25 խմ տարողության շերեփով և 125 մ երկարության սլաքով էքսկավատորներ, հզոր հողածուծ սարքեր, հիդրոմոնիտորներ, հողափոր-ֆրեզերային և այլ նոր հզոր մեքենաներ: ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1961—1980 թթ. գրեթե ավոր հեռանկարով նախատեսվում է շինարարությունը լրիվ բավարարել ժամանակակից մեքենաների, ավտոմատիկայի միջոցների բոլոր տեսակներով, պահեստամասերով և գործիքներով:

**Հիմնական շինարարական մեխենաների պարկի աճը
(տարվա վերջին, հազարներով)**



Ցոթնամյակի արդեն առաջին տարում շինարարական հրապարակներում սկսեցին ստանալ քայլող վիթխարի էքսկավատորներ, որոնց շերեփի տարողությունը 25 խոր. մետր է: Այդպիսի էքսկավատորը հողը հանում է մինչև 47 մետր խորությունից և տեղափոխում այն 120 մ հեռավորության

վրա գտնվող լցակույտը: Մեքենայի կառավարումը կատարվում է՝ արհեստական կլիմայով հերմետիկորեն փակվող խցիկից, որի մեջ կան հեռուստատեսային երկու էկրան, որը հնարավորություն է տալիս վերահսկել քայլի մեխանիզմների աշխատանքը: Մեքենան սպասարկում է հինգ մարդ, իսկ այն փոխարինում է 12 հազար հողափորների աշխատանք:

Բարձր արտադրողական հողափոր մեքենաների արտադրությունն ընդլայնումը և կիրառումը պահանջում է համապատասխան շահով ավելացնել հզոր տրանսպորտային միջոցների, մասնավորապես 10 և 25 տ բեռնատարողություններ ինքնաթափ ավտոմեքենաների թողարկումը: Մեքենաշինարարները յուրացրել են 40 տոննանոց ինքնաթափ ավտոմեքենաների և թափքի 10—32 խմ տարողությամբ, մեկառանցքանի արագընթաց քարշիշներով ինքնաթափ կցասայլերի սերիական արտադրությունը:

Ներկայումս մեծ ծավալի հողային աշխատանքներ շատ առանձնապես մանր, կառույցներում կատարվում են ձեռքով: Դրանց թվին պատկանում են, օրինակ, փոքր փոստրակների, խրամատների և հորերի փորումը, գետնի հավաքումն ու մաքրումը մինչև նախագծային նշագիծը, հողային կառուցումների շեղությունների հարթումը: Ամբողջ երկրում ձեռքով կատարվող հողային աշխատանքներում դեռևս զբաղված են ավելի քան 200 հազար բանվոր: Ուստի մի տեղ կենտրոնացված մեծածավալ հողային աշխատանքներ կատարելու համար օգտագործվող հզոր մեքենաների արտադրության զարգացման հետ միասին, կաղմակերպվում է 0,15—0,25 խմ տարողությամբ շերեփներով բարձր մանևրայնության էքսկավատորների, փոքր բուլդոզերների, հորատող, հարթող և այլ մեքենաների մասսայական թողարկումը, որոնք կոչված են մանր, ցրված աշխատանքները մեքենայացնելու համար:

Մեծ նշանակություն ունի բեռնման-բեռնաբափման աշխատանքների՝ որոնց զգալի մասը դեռևս կատարվում է ձեռքով, մեքենայացման միջոցների կատարելագործումն ու արտադրության զարգացումը: 1961 թ., օրինակ, ձեռքով է

բարձվել ոչ-հանքային նյութերի (ավազ, խիճ, խարամ, խճա-
քար և այլն) 10 տոկոսը և ցեմենտի 41 տոկոսը:

Հնացած կոնստրուկցիայի բարձող մեքենաների փոխա-
րեն կազմակերպվել է միաշերտի և բազմաշերտի բեռնիչների
և ավտոբեռնիչների, ինչպես նաև ինքնաբեռնաթափվող կցա-
օայների ու կիսակցասայների, պանելատարների և մի շարք
այլ մեքենաների նոր, կատարելագործված տիպերի արտա-
դրությունը: Փոխադրման ժամանակ ցեմենտի՝ այդ արժեքա-
վոր նյութի զգալի կորուստները վերացնելու, ինչպես նաև
աշխատանքի ծախսումները խնայելու նպատակներով, նա-
խատեսվում է ավելացնել 50 տոննանոց երկաթուղային վա-
զոն-ցիտերների և մեծ բեռնաբարձություններ այնպիսի ավ-
տոցեմենտատարների թողարկումը, որոնք օժտված են պնև-
մատիկ հարմարանքներով:

Բեռնման-բեռնաթափման աշխատանքների մեքենայաց-
ման համար անհետաձգելի խնդիր է մի շարք նոր, բարձր
արտադրողական մեքենաների, այդ թվում 60—300 ձիաուժ
հզորության շարժիչներով պնևմատիկային ու թրթուռային
ընթացքի և փոխարինվող սարքավորմամբ միաշերտի բեռ-
նիչների պրոգրեսիվ կոնստրուկցիաների ստեղծումը:

Աշխատանքի ավելի լայն մեքենայացումն ապահովելու և
տեխնիկական լավագույն կերպով օգտագործելու համար կա-
թևոր նշանակություն ունի շինարարական մեքենաների մո-
դեռնացումը, որի շնորհիվ բարոյապես հնացած մեքենանե-
րին տրվում են նոր, ժամանակակից պահանջներին համա-
պատասխանող ամելի բարձր հատկություններ:

Թե շինարարական մեքենաների մոդեռնացումը ինչպիսի մեծ դեր է
խաղում, վկայում են հետևյալ օրինակները:

Տրանսպորտային շինարարության գիտահետազոտական ինստիտուտում
էքսկավատորի սովորական ասամնավոր շերտի փոխարեն մշակվեց նոր,
թեթևացված կոնստրուկցիայի շերտ, որն ունի կորագիծ ձևի համատարած
կարող եզր: Այդ շերտիներին կիրառման շնորհիվ էքսկավատորների արտա-
դրողականությունը ոչ-ժայռոտ գետնի վրա աշխատելիս ավելացավ գրեթե
2 անգամ: Տրանսպորտային շինարարության մինիստրության շինարարա-
կան կազմակերպություններում վերջին երեք տարում նոր տեսակի շերտի-

Ներով սարքավորվել է ավելի քան 1500 էքսկավատոր, որը թույլ՝ տվեց միմիայն այդ միջոցառման հաշվին էքսկավատորային պարկի տարեկան միջին արտադրանքը՝ 1 խմ տարողության շերտի հաշվով, ավելացնել 12 հազ խմ կամ 10 տոկոսով:

Շինարարության մեջ հետագա տեխնիկական առաջադիմության կարևոր ուղղությունն առտադրական պրոցեսների ավտոմատացումն է, լայնորեն օգտագործելով գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները: Մինչև այժմ արտադրական պրոցեսների ավտոմատացումը շինարարական հրապարակներում անբավարար է զարգացել: Հասունացել է այնպիսի սարքերի ստեղծման ու լայն կիրառման անհրաժեշտությունը, որոնք թույլ տային ավտոմատացնել որոշ շինարարական մեքենաների կառավարումը և ապահովելին դրանց անվտանգ շահագործումը: Այսպես, ամբարձիչների օգտագործումը բարելավելու համար անհրաժեշտ է ստեղծել դիստանցիոն կառավարման հուսալի սարքեր, բարձրացվող բեռների քաշի, սլաքի թռիչքի ու շրջադարձի փոփոխությունների ավտոմատիկ սահմանափակիչներ: Հողափոր մեքենաները պետք է հագեցնել կարգավորող ավտոմատ հարմարանքներով, որոնք ապահովելին կտրման օպտիմալ խորությունը, հանույթի առաջադրված պրոֆիլը, հարթեցվող մակերեսի հորիզոնականությունը: Անհրաժեշտ են ավտոմատ սարքեր բետոնային խառնուրդների և շաղախների պլաստիկությունը կարգավորելու, ինչպես նաև բետոնի և շաղախի պոմպերում ճնշումը կարգավորելու համար:

Ներկայումս գիտական հետազոտություններ և փորձնական աշխատանքներ են կատարվում շինմոնտաժային աշխատանքները լայնորեն ավտոմատացնելու ուղղությամբ:

Այսպես, 1961 թ. Բրատսկի հիդրոէլեկտրակայանի հրապարակում, մեկերկրում առաջին անգամ, այսպես կոչված, ուղղաձիգ մեթոդով բետոնը անընդհատ լցման համար տեղակայանքի փորձարկում կատարվեց: Այդ սարքավորումը, որը հորինել են էներգետիկ շինարարության կազմակերպման ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի մի խումբ աշխատակիցներ, անտեսական մեծ արդյունք է տալիս:

Անընդհատ գործողության գործարանից բետոնը տրանսպորտորների սիստեմով ուղիղ տրվում է տեղադրման տեղը: Այստեղ հատուկ հարմարանքների օգնությամբ այն ուղղաձիգ խողովակներով ընդունվում է ավտոմատ բետոնալցիչի մեջ, որը ոչ միայն բետոնի զանգվածը հավասարաչափ բաշխում է ամբողջ հրապարակի վրա, այլև այն խտացնում է էլեկտրական վիբրատորների փաթեթով:

Առաջին անգամ հայրենական և համաշխարհային հիդրոշինարարության պրակտիկայում ուղղաձիգ եղանակով բետոնի անընդհատ լցումը նախատեսված է լայնորեն կիրառել Կրասնոյարսկի հիդրոէլեկտրակայանի շինարարության մեջ:

Առաջիկա տարիներին, անկասկած, շինարարական արտադրության ավտոմատացման բնագավառում գիտական հետազոտությունները և ռացիոնալիզատորների ստեղծագործական որոնումները կկատարվեն ավելի ու ավելի լայն մասշտաբներով և բեղմնավոր արդյունքներ կտան: Դա կապահովի քսանամյակի ընթացքում մասսայական մասշտաբով արտադրության կոմպլեքսային ավտոմատացումն իրականացնելու, ավտոմատ կառավարման բարձր կատարելագործված սիստեմների արմատավորման, արտադրության մեջ կիրառնետիկայի, էլեկտրոնային հաշվիչ և կառավարող հարմարանքների լայն կիրառման գծով ՍՄԿՊ ծրագրում առաջադրված խնդիրների հաջող լուծումը:

Շինարարական մեքենաների ու սարքավորումների օգտագործման բարելավումը: Շինարարական արտադրության մեքենայացման մակարդակի բարձրացումն ապահովվում է ոչ միայն նոր մեքենաներով ու սարքավորումներով հագեցնելու միջոցով: Ոչ պակաս կարևոր է լավ օգտագործել կառույցներում արդեն առկա տեխնիկական, նրա արտադրողականությունը բարձրացնել անհրաժեշտ կազմակերպական-տեխնիկական միջոցառումներ անցկացնելու միջոցով: Տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը կախված է, մասնավորապես, աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման համար շինարարական կազմակերպություններին անհրաժեշտ մեքենաների կոմպլեկտով ապահովելուց, շինմոնտաժային աշխատանքների մասնագիտացումից, մեքենանե-

րի ու մեխանիզմների տեխնիկական ճիշտ շահագործումը կազմակերպելու համար վերանորոգման բազայի առկայությունից, մասնագետ-մեխանիզատորների կադրերի պատրաստման զգալի ընդլայնումից: Կարևոր նշանակություն ունի շինարարական մեքենաների համակենտրոնացումը մասնագիտացված տնտեսություններում: Աշխատանքների կատարման մասնագիտացումը և մեքենայացման միջոցների միավորումը հզոր տնտեսություններում ապահովում են շինարարական տեխնիկայի ավելի արդյունավետ բեռնվածությունը, մեքենաների պարապուրդների խիստ կրճատումը և դրանց արտադրանքի ավելացումը:

Վեջին տարիներին նկատելիորեն բարելավվել է շինարարական մեքենաների պարկի օգտագործումը:

Այսպես, 0,35 խմ ավելի տարողության շերտի ունեցող էքսկավատորների տարեկան արտադրանքը 1955—1960 թթ. ընթացքում, շերտի տարողության 1 խմ հաշվով, ավելացավ 15 տոկոսով: 1961 թվականին այդ արտադրանքը ՌՍՖՍՌ-ում կազմեց 105,6 հազ խմ: Սակայն առանձին ժողտնտխորհներում և շինարարական խոշոր կազմակերպություններում էքսկավատորների օգտագործման ցուցանիշները խիստ շեղվում են այդ միջին թվից: Սրինսկ, 1 խմ տարողությամբ շերտի հաշվով տարեկան արտադրանքը 1961 թվականին Կեմերովոյի ժողտնտխորհում կազմել է 61 հազ խմ, Նովոսիբիրսկում՝ 136,5 հազ. խմ: Գլխենինդրաշինում 1 խմ տարողությամբ շերտի արտադրանքը կազմել է 163, 3 հազ խմ, այդ թվում «Շինմեխանիզացիա № 2» տրեստում՝ 172 հազ խմ: Դա խոսում է էքսկավատորային պարկի օգտագործման հետագա բարելավման հսկայական ուղղվածների առկայության մասին: Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, դոյություն ունեցող պարկի արտադրանքի ավելացման յուրաքանչյուր տոկոսը հավասարագոր է 0,65 խմ տարողությամբ 150—200 նոր էքսկավատորների թողարկմանը:

Աշխատանքները վատ կազմակերպելու պատճառով շատ կառույցներ անբավարար են օգտագործում շինարարական մեքենաները: Մի շարք շինարարական հրապարակներում խոշոր մեքենաների և տրանսպորտային միջոցների աշխատանքը կատարվում է ոչ թե երկու-երեք, այլ միայն մեկ հերթափոխի ընթացքում: Հաճախ մեքենաների աշխատանքի

ժամանակը զգալի չափով քիչ է դրանց աշխատանքի տևողության սահմանված նորմաներից:

Այսպես, բնակարանային շինարարության մեջ 2400 ժամվա նորմայի դեպքում աշտարակավոր ամբարձիչների աշխատանքի տևողությունը տարվա ընթացքում 2000—2100 ժամից չի գերազանցում: Մեկ աշտարակավոր ամբարձիչի տարեկան միջին արտադրանքը Գլխմասշինում 1961 թ. կազմել է մոտ 5000 ֆմ բնակելի տարածություն: Առաջավոր շինարարական կազմակերպությունների աշխատանքի պրակտիկան միևնույն ժամանակ վկայում է այն մասին, որ ամբարձիչները ճիշտ օգտագործելու դեպքում, դրանցից ամեն մեկի տարեկան արտադրանքը կարելի է հասցնել մինչև 10000—15000 ֆմ բնակելի տարածության: Ամբարձիչների աշխատանքի տևողությունը օրվա ընթացքում մեկ ժամով ավելացնելն իր արդյունքով հավասարազոր է տարեկան մեկ ու կես հազար ամբարձիչների լրացուցիչ քաղարկման:

Շինարարական պարկի մեքենաների օգտագործումը բաշխվելու համար մեծ նշանակություն ունի մեքենաների ճիշտ ընտրությունը: Մեքենաներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել առաջիկա աշխատանքների բնույթը:

Օրինակ, պրակտիկան և հաշվարկները ցույց են տալիս, որ օբյեկտի հողային աշխատանքների ոչ մեծ ծավալի դեպքում (մինչև 500—1000 խմ) անտեսապես ձեռնտու է կիրառել 0,15—0,25 խմ տարողության շերեփով էքսկավատորներ: Աշխատանքների ծավալը մինչև 10 հազ խմ սահմաններում նպատակահարմար է օգտագործել 0,5—0,65 խմ տարողության շերեփով մեքենաներ, իսկ աշխատանքների ավելի մեծ ծավալի դեպքում՝ 1—1,25 խմ տարողությամբ շերեփով էքսկավատորներ և այլն: Սակայն որոշ շինարարական կազմակերպություններ հաճախ կիրառում են այնպիսի մեքենաներ, որոնք չեն համապատասխանում կատարվող աշխատանքների բնույթին ու ծավալներին, որը հանգեցնում է մեքենաների վատ օգտագործմանը, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի բարձրացմանը: Այդ թերություններն ամենից շատ հատուկ են շինարարական մանր կազմակերպություններին:

Շինարարական աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման ժամանակ հատկապես կարևոր նշանակություն է ստանում միասնական կոմպլեքսում օգտագործվող ու միմյանց փոխադարձաբար լրացնող մեքենաների ճիշտ կոմպլեկ-

տավորումն ըստ հզորության: Այն դեպքում, երբ կոմպլեկտի մեջ մտնող մեքենաներն աշխատանքի արտադրողականությամբ շեն համապատասխանում միմյանց, դրանց մի մասը բնականաբար օգտագործվում է ոչ լրիվ կարողությամբ:

Շինարարության կազմակերպման, մեքենայացման և տեխնիկական օգնության ինստիտուտի տվյալներով, երեք խորանարդ մետր տարողության էքսկավատորի աշխատանքի դեպքում, օրինակ, նպատակահարմար է հողը հեռացնել 25 տոննա բեռնաբարձությամբ ինքնաթափ ավտոմեքենաներով: Էքսկավատորի հզորությունը շհամապատասխանող բեռնաբարձությամբ ինքնաթափերի օգտագործումն էսպես իշեցնում է մեքենաների արտադրողականությունը և բանվորների արտադրանքը: Դա երևում է հետևյալ աղյուսակից.

Ցուցանիշների անվանումը	Չափի միավորը	Էքսկավատոր	
		3 լսմ և ավտոինքնաթափ 5 տ	5000
Մեքենաների կոմպլեկտի օրական արտադրողականությունը	լսմ	2050	5000
Մեկ բանվորի հերթափոխային արտադրանքը		17	57
Ավտոինքնաթափերի քանակը (փոխադրման 2 կմ միջին հեռավորության դեպքում)	հատ	36	8
Հողային աշխատանքների ինքնարժեքը	°/o	100	80

Մեքենայական պարկի օգտագործումը բարելավելու գործում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի մեքենաների ճիշտ բաշխումը շինարարական կազմակերպությունների միջև: Առավել արդյունավետ մեքենաները նպատակահարմար է ուղարկել այն կազմակերպությունները, որոնք ունեն այդ մեքենաների լավագույն օգտագործումն ապահովող պայմաններ:

Շինարարական մեքենաների շահագործման ցուցանիշների վրա մեծ ազդեցություն է ունենում դրանց վերանորոգ-

ման կարգավորումը, որը մեքենաների ու մեխանիզմների պարապուրդները վերացնելու կարևոր պայման է:

Արդյունաբերության և շինարարության կառավարման նոր սխեմամբ հատկապես բարենպաստ պայմաններ է ստեղծել խոշոր մեքենաների պարկը մեքենայացման տրեստներում և վարչություններում կենտրոնացնելու, մեքենայական տեխնիկայի շահագործումը կարգավորելու և վերանորոգման գործը բարելավելու համար: Ինչպես պրակտիկան ցույց է տալիս, մեքենայացման միջոցների օգտագործումը բարելավվում է 1,5—2 անգամ, երբ դրանք կենտրոնացվում են մասնագիտացված կազմակերպություններում:

4. ԱՌԱՋԱՎՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՀՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ինդուստրիալ մեթոդներով կառուցման ժամանակ շինարարական բոլոր աշխատանքները կատարվում են անպայման առաջավոր տեխնոլոգիայի հիման վրա, կիրառելով արտադրության կազմակերպման առավել առաջավոր ձևեր: «Արտադրության բոլոր ճյուղերի ու տեսակների մշտական կատարելագործումը՝ նրանց զարգացման պարտադիր պայմանն է», ասվում է ՍՄԿՊ ծրագրում:

Մինչև վերջին ժամանակներս շատ կառույցներում չկար շինարարական արտադրության հաստատ սահմանված տեխնոլոգիա: Աշխատանքների պրիոմները, դրանց հաջորդականությունը, կիրառվող գործիքներն ու գույքը, բանվորների դասավորումը շատ բանով կախված էր վարպետի և բրիգադիրի անհատական փորձից: Դա հասցնում էր այն բանին, որ աշխատանքներն իրագործվում էին հետամնաց մեթոդներով, տեխնիկական օգտագործվում էր անբավարար, թույլ էր տրվում աշխատանքի և միջոցների անարտադրողական ծախսումներ: Շինարարական հրապարակները բերվող նյութերը հաճախ տեղավորվում էին առանց ամբարձիչ մեխանիզմների տեղադրման հետ անհրաժեշտ կապակցման:

Շինարարական որոշ կազմակերպություններ ներկայումս էլ հաճախ հիմնական աշխատանքներն սկսում են առանց շինարարության կազմակերպման և աշխատանքների կատարման նախագծերի, առանց նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ անցկացնելու, առանց աշխատատեղերի պատշաճ նախապատրաստման և արտադրության համապատասխան տեղամասերը նյութերի պաշարներով, մեքենաներով, գույքով, հարմարանքներով ու գործիքներով ապահովելու: Անգամ նույնատիպ օբյեկտներ կառուցելիս միևնույն աշխատանքները հաճախ կազմակերպվում են տարբեր ձևով՝ օգտագործվում են տարբեր թվով բանվորներ, կամայական կերպով են լուծվում շինարարական պրոցեսների մեքենայացման հարցերը, կիրառվում են հնացած հարմարանքներ և գույք:

Շինմոնտաժային աշխատանքների այդպիսի կազմակերպումը խիստ հակասում է շինարարական արտադրության ինդուստրիալ մեթոդների պահանջներին: Իր բարդությամբ և մեքենագինվածությունամբ ժամանակակից ինդուստրիալ շինարարությունը չի զիջում խոշոր արդյունաբերական արտադրությանը, որտեղ կիրառվում է բոլոր պրոցեսների հստակորեն մշակված տեխնոլոգիա և պրոցեսների կազմակերպում, սահմանվում են սարքավորման աշխատանքի խիստ ռեժիմ, նյութերի և գործիքների սպառման նորմաներ: Իսկ դա արդյունաբերական ձեռնարկություններում պայմաններ է ըստեղծում տեխնիկայի, նյութական և աշխատանքային ռեսուրսների ամենից ավելի լավ օգտագործման, արտադրական բոլոր կորուստները մինչև նվազագույնն իջեցնելու համար: Այդ պատճառով շինարարության ինդուստրացման կարևոր խնդիրներից մեկը՝ շինարարության պրակտիկայում աշխատանքների կատարման նախօրոք մշակված նախագծերի և տիպային տեխնոլոգիական քարտերի հիման վրա պարտադիր առաջադիմական տեխնոլոգիայի արմատավորումն է ամենուրեք:

Տիպային տեխնոլոգիական քարտերով կատարվող շինարարությունը: Շինմոնտաժային աշխատանքների կատարման

խիստ կարգ հաստատելու համար, որի ժամանակ ապահովվում է աշխատանքի արտադրողականության աճման, աշխատանքների ինքնարժեքի իջեցման և շինարարության ժամկետների կրճատման լավագույն ցուցանիշների ձեռք բերում, կիրառվում են տիպային տեխնոլոգիական ֆաբրեք:

Տիպային տեխնոլոգիական քարտերի մեջ նախատեսվում է շինարարական արտադրության առավել առաջադիմական տեխնոլոգիայի պարտադիր կիրառում, տեխնոլոգիայի, որը մշակվում է առաջավոր շինարարական կազմակերպությունների և շինարար-նորարարների փորձի ուսումնասիրման և ընդհանրացման հիման վրա: Դրանք պարունակում են օպերացիաների ցուցակն ու դրանց կատարման ժամկետները, սահմանում են անհրաժեշտ մեքենաների ու սարքավորման կոմպլեկտը, յուրաքանչյուր օպերացիայի կատարման հաջորդականությունը և եղանակները, որոշում են աշխատանքի որակի նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները, նյութերի, գործիքների և հարմարանքների պահանջմունքը: Տեխնոլոգիական քարտերի կազմում մշակվում են աշխատանքային ծախսումների կալկուլյացիան (օղակի կազմը, աշխատանքների ծավալը, ժամանակի նորմաները, աշխատանքների ամբողջ ծավալի նորմատիվ ժամանակը) և անհրաժեշտ հարմարանքների, սարքավորանքների, գործիքների ցուցակը:

Քննարկենք տիպային տեխնոլոգիական քարտի մի օրինակ:

ՏԻՊԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏ

Կամրջային ամբարձիչներով մեկ հարկանի արտադրական շենքի հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաները մոնտաժելու համար:

Կիրառման բնագավառը

Քարտը կիրառվում է մինչև 15 մ բարձրություն և սյուների 6 մ քաջ ունեցող մեկ հարկանի արտադրական շենքի հավաքովի երկաթբետոնե

¹ Մշակել է ՍՍՄՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի շինարարության կազմակերպման, մեքենայացման և տեխնիկական օգնության գիտահետազոտական ինստիտուտը: Տրվում է կրճատված ձևով:

կոնստրուկցիաները 5 տ բռնաբարձությամբ ամբարձիչներով մոնտաժ-մաշն աշխատանքները նախագծելու և կատարելու համար:

Մոնտաժային մեկ տեղամասի հավաքովի երկաթբետոնե տալքերի քա-նակը, շափերը և քաշը հետևյալն են.

Հավաքովի երկաթ-բետոնե տարրերի անվանումը	Քանակ	Մեկ տարրի քաշը (տ)	Տարրերի շափերը (մմ)	
			երկաթ-բետոն	կտրվածք
Սյուներ . . .	20	6,1	9550	40×600 (համատարած)
Ենթամբարձչային հեծաններ .	20	3,55	5950	խարանային
Վերնածածկի նախապես լարված հեծաններ	10	6,0	15000	հեծանի բարձրությունը 800, դադաթնագծի մոտ՝ 1400
Վերնածածկի խողրապանել սալեր	40	2,67	6000	սալի լայնութ. 3000
Նույնը	20	1,47	6000	սալի լայնութ. 1500

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ

(հաշվի առնելով բանվորների կողմից նորմաների գերակատարումը)

1. 2 սյունից, 2 ենթամբարձչային հեծանից, վերնածածկի մեծ հեծանից և տանիքային վրաքաշի 6 պանելից բաղկացած, մեկ տիպային բջիջ հավաքովի երկաթբետոնե տարրերի մոնտաժման աշխատանքների աշխատատարությունը 10,7 մարդ-օր
2. Մեկ բանվորի արտադրանքը հերթափոխում . . . 3,6 տ հավաքովի երկաթբետոնե տարրեր.
3. Մեքենայական ժամանակի ծախսումները («է-1003» կամ «է-1004» ամբարձիչի) 7,5 մեքենա-հերթափոխ

Ցուցումներ հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժման վերաբերյալ

Դ. Հավաքովի երկաթբետոնե տարրերը պետք է փոխադրվեն իրենց տեղակայման վայրը և դասավորվեն մոնտաժային ամբարձիչի գործողության գոտում: Մոնտաժման տեղում հավաքովի երկաթբետոնե տարրերի պաշարը պետք է ստեղծել այնպիսի քանակությամբ, որն ապահովի մոնտաժային ամբարձիչի անխափան աշխատանքը:

2. Մոնետաժային տեղամասի սահմաններում հավաքովի երկաթբետոնե օտարերի մոնետաժումը կատարել հետևյալ տեխնոլոգիական հաջորդականությամբ. ա) № 1 ամբարձիչ-էքսկավատորով մոնետաժային տեղամասի ամբողջ երկարությամբ տեղադրել հավաքովի երկաթբետոնե սյուները, բ) մոնետաժային տեղամասի սահմաններում անցկացնել տեղադրված սյունների վերջնական գործիքային հավասարեցում և կցվանքների միաձուլում, գ) հիմքերի հետ սյունների կցվանքները պահել մինչև նախագծային ամրության 70 տոկոսը, դ) տեղակայել ենթամամբարձային հեծանները, վերնածածկի նախապես լարված հեծանները և տանիքային վրաբաշի խոշորապանել սալերը:

3. Հավաքովի կոնստրուկցիաների մոնետաժման աշխատանքները կատարել ոչ պակաս, քան երկու հերթափոխով: Յուրաքանչյուր հերթափոխում պետք է աշխատեն երկու օղակից բաղկացած բրիգադներ. օղակ № 1 (սյունների մոնետաժում) բաղկացած հինգ բետոնագործ-մոնետաժողից, օղակ № 2 (ենթամամբարձային հեծանների, վերնածածկի հեծանների և տանիքային վրաբաշի պանելների մոնետաժում), բաղկացած հինգ բետոնագործ-մոնետաժողից և մեկ էլեկտրագողողից:

Կառույցներում տիպային տեխնոլոգիական քարտերի առկայությունը գծային տեխնիկական անձնակազմին զգալի շահույթ ազատում է աշխատանքների ծավալները, աշխատանքի ժախսումները, պահանջվող նյութերի քանակը հաշվելու մեծածավալ աշխատանքից, ինչպես նաև արտադրական կալկուլյացիաներ կազմելուց: Քարտերը տեխնիկական անձնակազմին հնարավորություն են տալիս հեշտ կերպով ընտրել աշխատանքների կատարման առավել ռացիոնալ մեթոդ և հիմնական ուշադրությունը կենտրոնացնել շինարարական արտադրությունը կազմակերպելու վրա:

Պրակտիկական ցույց է տալիս, որ պարտադիր տեխնոլոգիական քարտերով արդյունաբերական շենքեր ու կառուցվածքներ, բնակելի տներ և կուլտուր-կենցաղային օբյեկտներ կառուցելու ժամանակ բարձրանում են աշխատանքի արտադրողականությունը և բանվորների աշխատավարձը՝ աշխատավարձի ընդհանուր ֆոնդի տնտեսման պայմաններում, բարելավվում է շինարարական մեքենաների օգտագործումը, իջնում է շինմոնետաժային աշխատանքների ինքնարժեքը:

Տեխնոլոգիական քարտեռով իրականացվում է շինարարական կոնստրուկցիաների մոնտաժումն. «անխիվներից», այսինքն՝ անմիջապես այն տրանսպորտային միջոցներից, որոնք այդ կոնստրուկցիաները հասցնում են շինարարական հրապարակ: Աշխատանքների կազմակերպման այդ նոր մեթոդը, որն առաջին անգամ 1958 թվականին կիրառվեց Մոսկվայի բնակարանային շինարարություն մեջ, լավ արդյունքներ տվեց, բեռնաթափման ծախսերը լրիվ վերացնելու և հավաքովի տարրերը շինարարական հրապարակում նախապես դասավորելու շնորհիվ:

Անհրաժեշտ է նշել, որ շինարարության այդ առաջադիմական եղանակը պահանջում է մատակարարող ձեռնարկությունների և ավտոտրանսպորտի բացառիկ հստակ, համուձայնեցված աշխատանք, շինարարական հրապարակում արտադրության ու աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակ: Պարտադիր տեխնոլոգիական կանոնների հիման վրա կատարվող աշխատանքը թույլ է տալիս շինարարական արտադրությունը բարձրացնել նոր, ավելի բարձր աստիճանի՝ աշխատանքի ինդուստրիալ մեթոդների պահանջներին համապատասխան:

Շինարարության հոսքային մեթոդների արմատավորումը: Շինարարական անընդհատ, ռիթմիկ արտադրությունը լավագույն ձևով ապահովվում է աշխատանքները հոսքային մեթոդներով կազմակերպելիս:

Հոսքային մեթոդներն առանձնապես արդյունավետ են իր կոնստրուկցիայով մոտ բնակելի տների և արդյունաբերական օբյեկտների, ինչպես նաև գծային կառուցումների՝ խողովակաշարքերի, երկաթուղային ու ավտոմոբիլային ճանապարհների, էլեկտրահաղորդման և կապի գծերի մասսայական շինարարության ժամանակ: Տարբերում են հոսքային մեթոդների երկու հիմնական տեսակ՝ հոսքա-ընդգրկման և հոսքա-գծային տեսակներ:

Հոսքա-ընդգրկման մեթոդի դեպքում շինարարական օբյեկտները բաժանվում են աշխատատարություն մոտավորապես հավասար տեղամասերի՝ ընդգրկումների, որոնց մեջ հա-

վասարաչափ իրականացվում են շինարարական և մոնտաժային պրոցեսների որոշակի կոմպլեքսներ՝ աշխատանքների կատարման տեխնոլոգիական հաջորդականության կարգով: Ընդ որում միևնույն օբյեկտում ըստ ժամանակի առավելագույն չափով համատեղվում և զուգահեռաբար տարվում են զանազան աշխատանքներ: Օրինակ, պատերի մոնտաժման հետ միաժամանակ դրվում են լուսամուտների շրջանակներն ու փեղկերը, սանդղաբազուկները՝ հարթակներով, միջհարկային ծածկերի սալերը, միջնորմները, մոնտաժվում է ջեռուցումը, ջրմուղը, կոյուղին: Վերին հարկերի պատերը մոնտաժելիս ավարտվում են ներքին հարկերի վերջնամշակման աշխատանքները: Որքան ավելի շատ են համատեղվում աշխատանքներն, այնքան ավելի արագ է ավարտվում առանձին օբյեկտների շինարարությունը:

Հոսքա-ընդգրկման մեթոդի դեպքում շինարարության գրաֆիկը նախատեսում է աշխատանքների այնպիսի բաժանում, երբ աշխատանքների յուրաքանչյուր կոմպլեքսը կատարվում է որոշակի ժամանակամիջոցում, որը կոչվում է հոսքի քայլ: Յուրաքանչյուր շինարարական օբյեկտի հոսքի մեջ մտնող բոլոր շինմոնտաժային աշխատանքները կատարվում են բունվորների կոմպլեքսային կամ մասնագիտացված բրիգադների կողմից, որոնք հերթականորեն մեկ օբյեկտից անցնում են մյուսը, յուրաքանչյուր օբյեկտի պրոցեսների համաչափ հաջորդականությամբ: Աստիճանաբար շինարարության պրոցեսն են մտցվում հոսքի բոլոր օբյեկտները, ընդ որում դրանցից ամեն մեկում միաժամանակ կատարվող աշխատանքները խստորեն ենթարկվում են հոսքի գրաֆիկում սահմանված արտադրության ուղիին:

Օրինակ, «Մազնիտշին» արեստը հոսքա-ընդգրկման մեթոդներով իրականացրեց բարակ թիթեղի տաք զլանման ցեխի շինարարությունը: Չորս թռիչքանի մոտ 500 մետր երկարությամբ ցեխը բաժանվեց հավասար աշխատատարության ութ ընդգրկման: Նախօրոք սահմանված հաջորդականությամբ, մասնագիտացված բրիգադները կատարեցին յուրաքանչյուր ընդգրկման հողային աշխատանքները, կառուցեցին շենքի հիմքերը, մոնտաժեցին պողպատյա կոնստրուկցիաները, աշխատում էին պատերը շարելու

և տանիքի կառուցման վրա, կառուցեցին սարքավորման հիմքեր և, վերջապես, մոնտաժեցին սարքավորումը:

Երբ վեցերորդ ընդգրկման մեջ ավարտվել էին հողային աշխատանքները, առաջինում արդեն ժավալվել էր սարքավորման մոնտաժը: Աշխատանքների կազմակերպման այդպիսի մեթոդը թույլ տվեց խիստ կրճատել ցեխի շինարարության ժամկետները, բանվորների և մեքենաների պահանջը, ըստ ժամանակի համաշափ բաշխել նյութերի սպառումը: Այդ ամենն ապահովեց շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի նշանակալի իջեցում:

Հոսքա-գծային մեթոդի դեպքում մասնագիտացված առանձին բրիգադները մեկը մյուսի ետևից շարժվում են կառուցվող գծային երկայնաձիգ կառուցվածքի տրասսայի երկարությամբ որոշակի, նախապես սահմանված, արաբությամբ:

Գծային-երկայնաձիգ կառուցվածքները (երկաթուղային և խճուղային ճանապարհներ, նավթա և գազամուղներ, էլեկտրահաղորդման գծեր և այլն) շարժական մասնագիտացված շարասյուների (շոկատների) օգնությամբ կառուցելիս երբեմն առանձին շարասյուների առաջարժման արագությունը տրասսայում միատեսակ չի լինում: Օրինակ, երկաթուղու հողաթումբը կառուցող շարասյան հերթափոխային արտադրողականությունը կարող է ցածր լինել այն շարասյուների արտադրողականությունից, որոնք կառուցում են ճանապարհի վերին մասերը (կոճափայտերի, ռելսերի, սլաքային փոխանցումների տեղադրում և այլն): Շարասյուների առաջարժման արագության տեմպը ամենից քիչ արտադրողական շարասյուների աշխատանքի տեմպի հետ ստիպողական կարգով հավասարեցնելը կարող է հասցնել մնացած շարասյուներում բանվորների աշխատանքի արտադրողականության իջեցման և մեքենաների թերօգտագործման: Այդպիսի դեպքում աշխատանքների առանձին կոմպլեքսների կատարումը կազմակերպվում է ինքնուրույն, անջատ հոսքերի ձևով:

Հոսանքային մեթոդով աշխատանք կարող է կազմակերպվել շատ շենքերի ու կառուցվածքների շինարարության ժամանակ: Այդ առաջադիմական մեթոդը առանձնապես լայն կիրառում է ստանում մասսայական բնակարանային շինարարության

մեջ, որտեղ միևնույն օբյեկտները հաճախ կրկնվում են, որն զգալի չափով հեշտացնում է հոսքի կազմակերպումը:

Դեռևս 1939 թվականին վեցհարկանի 23 բնակելի տների հոսքային շինարարություն կատարվեց Մոսկվայում: Հետպատերազմյան տարիներին հոսքային շինարարությունն արագ զարգացում ստացավ, Երկարատև ժամանակամիջոցում հստակ կազմակերպված հոսք իրագործվեց մեծ քանակությամբ բնակելի տներ կառուցելիս նաև լենինգրադում, Կիևում, Չերեպովեցում, Դոնի-Մոստովում, Մինսկում, Խարկովում, Կադիկայում, Կուզնեցկում, Մագնիտոգորսկում, Զապորոժիեում, Կուլբիշևում և շատ այլ քաղաքներում ու ավաններում:

Հոսքային մեթոդները հաջողությամբ կիրառվում են արդյունաբերական և տրանսպորտային շինարարության օբյեկտներում (օրինակ, «Բարեկամություն» նավթամուղի կառուցման, Ժշանովսկ քաղաքի մետալուրգիական գործարանի գլանման հաստոնի, Կրիլոյ-ռոզի լենահարստացուցիչ կոմբինատի, Չերկասկու արհեստական մանրաթելի կոմբինատի, Կրեմենչուգի հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակ և այլն):

Հոսքի ժամանակակից ամենից ավելի առաջավոր ձևը կոմպլեքսային շինարարական հոսքն է, որն ընդգրկում է կատարման ենթակա բոլոր աշխատանքների ամբողջությունը՝ շինարարական հրապարակի ինժեներական նախապատրաստումից մինչև շինարարության ավարտումը, ներառյալ բարեկարգումը: Այդ հոսքն ապահովում է արտադրական բոլոր օղակների ու ռիթմիկ աշխատանքը և ավարտված շենքերի ու շինությունների համաշափ գործարկումը:

Առանձնապես բնակարանային շինարարության մեջ մեծ հեռանկար ունի երկարատև բազմամյա հոսքերի կիրառումը, որոնք ընդգրկում են մասնագիտացված կազմակերպությունների աշխատանքի ամբողջ ծրագրի զգալի մասը: Այդպիսի հոսքերը, որոնք նկատի են առնվում մի քանի տարվա համար, թույլ են տալիս շինարարությունը ծավալել լայն ճակատով, լավ կազմակերպել նյութատեխնիկական մատակարարումը, ապահովել շինարարական կազմակերպությունների ու ռիթմիկ աշխատանքը, հասնել արտադրության բարձր տեխնիկա-տնտեսական ցուցանիշներին:

Այդ սկզբունքով է իրականացվում, օրինակ, Պերվոմայսկ բնակարանային զանգվածի շինարարությունը Կիևում: Այստեղ 117 հեկտար ազատ տեքիտորիայում կառուցույալովում են 11 թաղամաս, որտեղ կառուցվում են մոտ 270 հազ ԲՄ ընդհանուր տարածություն, հինգ հարկանի 200 բնակելի տներ, 6 դպրոց, մանկական 19 հիմնարկ և մի շարք կոմունալ-կենցաղային շենքեր: Այդ բնակելի զանգվածի շինարարության կոմպլեքսային հոսքը կազմված է 13 առանձին հոսքերից, որոնք կատարում են զլիավոր կապալառուի և ենթակապալառուների մասնագիտացված կազմակերպությունները: Երկարատև հոսքերի սիստեմով աշխատանքի կազմակերպումը դրական ազդեցություն է թողնում շինարարական կազմակերպությունների աշխատանքի արդյունքների վրա: Նշված բոլոր երեք զանգվածի կառույցներում 1 խմ բնակելի աշխատանքային ծախսումները համարյա 30 տոկոսով քիչ են, քան Գլխիկեշինի այլ կառույցներում:

Հոսքային շինարարությունը, այնպես ինչպես արդյունաբերական ձեռնարկության հոսքային մասսայական արտադրությունը, նույնպես պահանջում է լավ նախապատրաստել արտադրությունը և կազմակերպել նյութատեխնիկական անխափան մատակարարում: Առանց այդ սլայմանները պահպանելու, հոսքային շինարարությունը շի կարող անհրաժեշտ տնտեսական արդյունք տալ: Կառույցների նյութատեխնիկական մատակարարման գործում տեղ գտած թերությունները, շինարարության պլանների հաճախակի փոփոխումները, արտադրության վատ նախապատրաստումն անխուսափելիորեն հանգեցնում են համաչափ աշխատանքի խախտմանը, շինարարության տեմպերի դանդաղեցմանը և նրա տեխնիկա-տնտեսական ցուցանիշների իջեցմանը:

5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՍՎՈՐՈՒՄԸ

Տեխնիկական առաջադիմության առաջադրանքները շինարարության մեջ: Ժողովրդատնտեսական սլանում նոր տեխնիկայի ստեղծման ու ներդրման կարևորագույն աշխատանքների կազմում նախատեսվում է հետևյալ առաջադրանքները շինարարության բնագավառում. ա) արդյունավետ հավաքովի կոնստրուկցիաների և նոր նյութերի կիրառում, բ) շինմոն-

տաժային աշխատանքների մեքենայացման հետագա զարգացում, գ) շինարարական արտադրության առաջավոր տեխնոլոգիայի արմատավորում, դ) ցուցադրական շինարարության իրականացում:

Այդ առաջադրանքները հանդիսանում են շինարարական կազմակերպությունների տեխնիկական մակարդակը և տնտեսական արդյունավետությունը բարձրացնելու հիմքը: Դրանց մեջ արտացոլվում են հայրենական և արտասահմանյան գիտություն ու տեխնիկայի նվաճումները, շինարարության կազմակերպման և աշխատանքների կատարման նախագծերի լավագույն նմուշները, տեխնիկական այն կատարելագործումներն և առաջարկությունները, որ մշակել են գյուտարարները, ռացիոնալիզատորները, գիտահետազոտական և նախագծային ինստիտուտները, ինչպես նաև շինարարական լավագույն կազմակերպությունների փորձը:

Շինարարության մեջ արդյունավետ հավաքովի կոնստրուկցիաների և նոր նյութերի արմատավորման առաջադրանքներն անմիջականորեն կապված են շինանյութերի արդյունաբերության ճյուղերի, այդ թվում հավաքովի երկաթբետոնի արդյունաբերության զարգացման հետ: Դրանք նախատեսում են հավաքովի դետալների արտադրության ծավալը, շինարարության մեջ դրանց արմատավորելու շահերը, նոր արդյունավետ նյութերի արտադրության և կիրառման ծավալը:

Շինմոնտաժային աշխատանքների մեքենայացման առաջադրանքները սահմանում են աշխատատար աշխատանքների մեքենայացման, կոմպլեքսային մեքենայացման, ավտոմատացման միջոցների կիրառման որոշակի մակարդակ, ինչպես նաև շինարարական արտադրության մեջ ներդրվող նոր մեքենաների ցանկը: Մեքենայացման պլանն անմիջականորեն կապված է մեքենաշինական ձեռնարկությունների արտադրության ծավալի և շինարարության արտադրական բազայի զարգացման պլանի հետ: Այն հիմնավորում է նոր տեխնիկա ձեռք բերելու, շինարարական ինդուստրիայի այն տնտեսություններն ընդլայնելու ու կազմակերպելու համար կապիտալ

ներդրումների իրականացման անհրաժեշտությունը, որոնք ապահովում են մեքենաների առավել արտադրողական օգտագործում (վերանորոգման գործարաններ, զարածներ^ն և այլն):

Առաջավոր տեխնոլոգիայի արմատավորման առաջադրանքներն ուղղված են այնպիսի տեխնոլոգիական պրոցեսների կիրառմանը, որոնք ապահովում են շինարարական անընդհատ և ռիթմիկ արտադրություն, մեքենաների ու մեխանիզմների, աշխատանքային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում:

Ցուցադրական շինարարության առաջադրանքների խնդիրն է տարածել շինարարության կազմակերպման բնագավառում ձեռք բերած ամեն մի նորն ու առաջավորը, ստուգել շինարարական արտադրության նոր, ավելի պարզ ու արդյունավետ մեթոդները, արմատավորել նորարարների փորձը: Ցուցադրական շինարարությունը թույլ է տալիս հայտաբերել շինարարության ժամկետների կրճատման, որակի բարձրացման և արժեքի իջեցման հնարավորություններն ու ռեզերվներ:

Վերջին տարիներին իրականացրած ցուցադրական կառույցներում և օբյեկտներում տեխնիկա-տնտեսական բարձր ցուցանիշներ են ձեռք բերվել: Այդպիսի կառույցներում արդյունաբերական շենքերի հավաքովիության ցորձակիցն աճել է մինչև 90 %^օ, բնակելի տներինը՝ մինչև 70—75 %^օ, խոշոր պանելային շենքերի կառուցման աշխատանքային ծախսումները մի արք դեպքերում, շենքերի 1 խմ շինարարական ծավալի դիմաց, իջել են մինչև, 0,5 մարդ-օրի:

Ցուցադրական շինարարությունը 1961 թ. կազմից շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի մոտ 3,3 %^օ, 1963 թվականին ցուցադրական շինարարության ծավալը կհասնի 4,8 %^օ: Առանձին ճյուղերում ցուցադրական շինարարության ծավալը կհասնի է՛լ ավելի արագորեն: Այսպես, մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների գծով յոթնամյակի ընթացքում այն կհասնի 2,6 անգամ, էներգետիկ օբյեկտներին՝ 6 անգամ, շինանյութերի արդյունաբերության ու շինարարական ինդուստրիայի ձեռնարկությունների՝ համարյա 12 անգամ, բնակարանային-քաղաքացիական շինարարության գծով՝ 3,6 անգամ: Ցուցադրական կառույցները ավելի մեծ չափով դառնում են առաջավոր փորձի յուրատեսակ լաբորատորիաներ, որը օգնում է նոր, ավելի բարձր աստիճանի հասցնել շինարարական ինդուստրիայի ամբողջ զարգացումը:

Ելնելով արտադրութեան տեխնիկական մակարդակը և տնտեսական արդյունավետութիւնը բարձրացնելու խնդիրներէն, շինարարական կազմակերպութիւնները մշակում են տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլաններ, որոնք ուղղված են շինմոնտաժային աշխատանքների ծրագիրը հաջող կատարելու, արտադրողականութիւնը բարձրացնելու, աշխատանքները թեթեւացնելու, շինարարութեան ժամկետները կրճատելու և ինքնարժեքն իջեցնելու գործին:

Տեխնիկական պարզացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանները: Տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանները մշակելիս լայնորեն օգտագործվում են ռացիոնալիզատորական առաջարկութիւնները՝ արտադրութեան կազմակերպումը և տեխնոլոգիան կատարելագործելու, նոր կոնստրուկցիաներ և նյութեր կիրառելու և շինարարական կազմակերպութիւնների արտադրական-տնտեսական գործունեութեան մյուս բոլոր կողմերը բարելավելու մասին:

Պլանում նախատեսված միջոցառումների տնտեսական արդյունավետութիւնն արտահայտվում է աշխատանքային ծախսումներն իջեցնելու, նյութերի ծախսը պակասեցնելու, շինարարութեան վերադիր և այլ ծախսերը տնտեսելու մեջ: Ելված միջոցառումների արդյունավետութեան գնահատումը, որպէս կանոն, կատարվում է նախահաշվային ինքնարժեքի և նախորդ (բազիսային) շրջանի ինքնարժեքի հետ համեմատելու միջոցով:

Սկզբնական շինարարական կազմակերպութիւններում տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանները մշակվում են գլխավոր ինժեների ղեկավարութեամբ: Ամենից առաջ կազմվում է այն միջոցառումների օրինակելի ցանկը, որոնք որոշում են պլանի հիմնական ուղղութիւնները: Յանկի մեջ սահմանվում է միջոցառումների համառոտ բովանդակութիւնը, նշվում են այն օբյեկտները, որոնց վրա պետք է իրականացվեն միջոցառումները և դրանց կիրառման մոտավոր մասշտաբները:

Պլանք կազմելը սովորաբար հանձնարարվում է մի խումբ բարձրորակ աշխատողների՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդպիսի խմբի խնդիրն է կատարել ստացվող առաջարկությունների ընտրություն և սիստեմավորում, ստուգել դրանց արդյունավետությունը, սահմանել միջոցառումներն անցկացնելու կոնկրետ ժամկետները, ինչպես նաև այն անձանց, որոնք պատասխանատու են դրանք նախապատրաստելու և արմատավորելու համար: Պլանի պատրաստված նախագիծը լայնորեն քննարկվում է և հաստատվում շինֆինպլանի կազմում՝ շինարարական կազմակերպության ղեկավարի կողմից:

Պլանի մեջ մտցվող յուրաքանչյուր միջոցառում հիմնավորվում է տեխնիկա-տնտեսական մանրամասն հաշվարկներով: Շինարարական վարչություններից մեկի տեխնիկական զարգացման և կազմակերպման տնտեսական միջոցառումների պլանի օրինակը՝ ըստ շինարարության առանձին օբյեկտների բերվում է 330—331 էջերի վրա:

Տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանը կատարելու ընթացքում շատ կարևոր է հավաքել ինչպես առանձին գյուտարարների ու ռաջիոնալիզատորների, այնպես էլ բանվորների և ծառայողների կողմից ստացվող նոր առաջարկությունները: Դա հնարավորություն է տալիս պլանները սիստեմատիկորեն կատարելագործել և դրանց մեջ մտցնել էական ուղղումներ, որոնք ապահովում են արտադրության ռեզերվների առավելագույն իրացում: Շինարարների ստեղծագործական ակտիվության մոբիլիզացումը նպաստում է պլանների որակի բարձրացմանը և ամենօրյա հասարակական վերահսկողություն է ապահովում շինարարական արտադրության բոլոր բնագավառներում նոր տեխնիկա արմատավորելու նկատմամբ: Պարտիական և արհմիութենական ժողովներում ամբողջ պլանի և առանձին միջոցառումների քննարկումը հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտել թերությունները և հաշվի առնել նոր առաջարկությունները:

Տեխնիկական գարգացման և կազմակերպական-օնոտեսական միջոցառումների պլան

Միջոցառումների անվանումը	Օբյեկտների անվանումը և կիրառման ծավալը	Տեսեսական արդյունավետությունը		
		աշխատանքային ծախսումները կրճատում՝ բազիսային տարվա ծախսումների համեմատությամբ. (մարդ-օր)	ինքնարժեքի իյեցումը (հազ. ռուբ.)	բնակելի տարածքի համեմատությամբ, առանց պլանային կուտակումների
1	2	3	4	5
Նյութեր, կոնստրուկցիաներ, շինվածքներ				
հիմքերի անշատ շարվող բլոկների կիրառում	դարբնոցային ցեխ 900 խմ	28	13,10	4,15
ներսից երեսապատված որմնաբլոկների կիրառում	կաթսայատուն 3500 խմ	158	3,20	1,02
երեսապատված սանդղաբազուկների կիրառում	բնակելի տուն № 5, 2200 խմ	30	0,88	0,28
խոշորապանել գիպսախարամային միջնորմների կիրառում	բնակելի տուն № 5, 70000 քմ	9540	48,52	15,36
Ուղիատանգի և արտադրության կազմակերպում				
ներսի աշխատանքների համար աշտարակավոր ամբարձիչներով նյութերի մատուցում մինչև ծածկի սալերի շարելը	բնակելի տուն № 5, 4800 խմ	288	1,75	0,56
	բնակելի տուն № 6, 47000 խմ	305	1,82	0,57

1	2	3	4	5
պանելային լաստակների կիրառում	դարբնոց. ցեխ 76500 խմ	438	2,31	0,73
կոմպլեքսային բրիզադների կազմակերպում	դարբնոց. ցեխ և կաթսայատուն	798	0,44	0,14
մեքենայացման ավելի արդյունավետ միջոցների կիրառում	առանձին պլանով բոլոր օբյեկտներում	91	1,19	1,19
Այլ միջոցառումներ				
նյութերի փոխադրման պայմանների փոփոխում	ամբողջ վարչության համար 12000 խմ բեռ	—	12,10	12,10
նյութերի ծախսերի կրճատում	ամբողջ վարչության համար, համաձայն հաշվարկի	—	0,40	0,40
վերադիր ծախսերի շահի իջեցում	բնակարանային և կոմունալ ծառայություններ	—	0,17	0,17
Ընդամենը տնտեսում		11676	85,89	36,67

Աշխատանքի արտադրողականության, աշխատավարձի ֆոնդի, նյութերի և այլ ռեսուրսների ծախսի առաջադրանքները, որոնք օպերատիվ պլաններում սահմանվում են տեղամասերի, բրիզադների համար, որոշվում են հաշվի առնելով կազմակերպական-տեխնիկական միջոցառումների սոցիալ-ցումը: Այսպիսով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու համար նախատեսված միջոցառումների իրագործմանը մասնակցում են սկզբնական շինարարական կազմակերպության բոլոր ստորաբաժանումները:

Շինարարական արտադրության տեխնիկա-տնտեսական մակարդակի բարձրացումն ապահովող միջոցառումների քրն-նարկման ու իրականացման գործին աշխատավորների լայն մասնակցությունը թույլ է տալիս հայտարարել շինարարա-կան ինդուստրիայի արագ զարգացման նոր ուղեգրվներ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՖՈՆԴԵՐԸ

1. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Շինարարության մեջ, ինչպես նյութական արտադրության ամեն մի այլ ճյուղում, արտադրական պրոցես իրագործելու համար անհրաժեշտ են մարդիկ և արտադրության միջոցներ:

Սոցիալիստական տնտեսության մեջ արտադրության միջոցները հանդես են գալիս ձեռնարկությունների, շինարարական և տնտեսական այլ կազմակերպությունների արտադրական ֆոնդերի ձևով, կազմելով նրանց արտադրական գործունեության նյութական հիմքը:

Կապիտալիզմի պայմաններում արտադրության միջոցները մասնավոր սեփականություն են և ընդունում են կապիտալի ձև, որի օգնությամբ իրականացվում է բանվոր դասակարգի անխնա շահագործում: Սոցիալիզմի ժամանակ արտադրության միջոցները պատկանում են ժողովրդին, հասարակական սեփականություն են և այդ պատճառով չեն կարող մարդու կողմից մարդու շահագործման գործիք ծառայել: Սոցիալիստական հասարակության մեջ արտադրության միջոցներն օգտագործվում են սովետական պետության հարստությունն ու հզորությունն ավելացնելու, ժողովրդի նյութական ու կուլտուրական կենսամակարդակը բարձրացնելու համար:

Արտադրության միջոցները բաղկացած են աշխատանքի միջոցներից (մեքենաներ, սարքավորում և այլն) և աշխատանք-

քի առարկաներից (հումք, նյութեր և այլն)։ Կ. Մարքսը նշում էր, որ «Արտադրութեան միջոցներն աշխատանքի ամեն մի պրոցեսում, հասարակական ինչպիսի պայմաններում էլ այն կատարվի, միշտ բաժանվում են աշխատանքի միջոցների և աշխատանքի առարկայի»¹։ Արտադրութեան միջոցների բաժանումն աշխատանքի միջոցների և աշխատանքի առարկաների բխում է արտադրութեան նյութական պայմաններից և հատուկ է հասարակական բոլոր ֆորմացիաներին։ Բայց դրանց տնտեսական դերը հասարակական տարբեր ֆորմացիաներում տարբեր է։ Այն կախված է, ինչպես նշվեց վերելում, արտադրութեան միջոցների սեփականության ձևից, այն բանից, թե ում ձեռքում են դրանք գտնվում։

Սոցիալիստական տնտեսութեան մեջ աշխատանքի միջոցների և աշխատանքի առարկաների տնտեսական տարբերութիւնը արտադրական պրոցեսում իր արտահայտութիւնն է գտնում արտադրութեան միջոցները հիմնական և շրջանառու արտադրական ֆոնդերի բաժանելու մեջ։

Հիմնական արտադրական ֆոնդերը (աշխատանքի միջոցները) մասնակցում են արտադրական պրոցեսին քիչ թե շատ երկարատե ժամանակի ընթացքում, ընդ որում պահպանելով իրենց բնաձևը։ Դրանք իրենց արժեքը փոխանցում են ստեղծվող արտադրանքին ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար, մաս-մաս, մաշվելու համեմատ։

Շրջանառու արտադրական ֆոնդերը (աշխատանքի առարկաները) մասնակցում են միայն մեկ արտադրական ցիկլի և լրիվ ծախսվում են պատրաստի արդյունքի ստեղծման վրա, իսկ դրանց արժեքը լրիվ փոխանցվում է ստեղծվող արդյունքին։

Հիմնական և շրջանառու ֆոնդերի կազմը սահմանելու ժամանակ չի կարելի ելնել միայն դրանց բնական-առարկայական ձևից։ Միևնույն մեքենան, նայած տվյալ արտադրական պրոցեսում նրա կատարած դերից, կարող է վերագրվել հիմնական կամ շրջանառու ֆոնդերին։ Նրինակ, տեխնոլո-

¹ Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 2, էջ 130, Երևան, 1936։

գիական այն սարքավորումը, որը տեղափոխվել է արդյունաբերական ձեռնարկության շինարարություն, դիտվում է որպես արտադրական պաշար: Աշխատատեղում դրվելուց հետո այդ սարքավորումը դառնում է աշխատանքի միջոց և վերագրվում է արդյունաբերական ձեռնարկության հիմնական ֆոնդերին:

Հիմնական ֆոնդերի կազմը և կառուցվածքը: Արտադրական հիմնական ֆոնդերն անմիջականորեն մատնակցում են շինարարական արտադրանքի ստեղծմանը: Դրանց վերաբերում են շինարարական մեքենաների, տրանսպորտային միջոցների պարկը, արտադրական շենքերն ու կառուցվածքները, սարքավորումը և արտադրական նշանակություն ունեցող այլ հիմնական ֆոնդեր:

Շինարարության հիմնական ֆոնդերի կազմը քննարկելու ժամանակ պետք է նկատի ունենալ, որ շինարարական արտադրության մեջ օգտագործվում են ոչ միայն անմիջապես տվյալ շինարարական կազմակերպության պատկանող աշխատանքի միջոցները, այլ զգալի շափով նաև տնտեսական մյուս կազմակերպությունների, այդ թվում պատվիրատուների աշխատանքի միջոցները: Օրինակ, շինարարական կազմակերպությունների սեփական ավտոմոբիլային տնտեսության հետ միասին, շինարարությունը սպասարկվում է ընդհանուր օդատագործման բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի կողմից: Կառույցներում օգտագործվում են մեքենայացման մասնագիտացված տրեստների, մեքենավարձակալական բազաների տնօրինության տակ գտնվող մեքենաներն ու մեխանիզմները և այլն:

Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերին չեն վերաբերում արդյունաբերական հաշվեկշռի մեջ առանձնացված, շինանյութերի ու կոնստրուկցիաների արտադրության ձեռնարկությունների ֆոնդերը: Նրանց հիմնական ֆոնդերը մտնում են արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի կազմի մեջ:

Ինքնուրույն հաշվեկշռի շառանձնացված օժանդակ ու օգնող արտադրությունների հիմնական ֆոնդերը ներկայումս

հաշվի է առնվում շինարարական կազմակերպությունների հիմնական ֆոնդերի կազմում, թեև այդ արտադրությունների արտադրանքը մտցվում է արդյունաբերական արտադրանքի կազմի մեջ: Այդ պատճառով նշված արտադրությունների հիմնական ֆոնդերը պետք է վերագրվեն արդյունաբերության հիմնական ֆոնդերին:


Բացի արտադրական ֆոնդերից, շինարարության մեջ կան ոչ-արտադրական հիմնական ֆոնդեր, որոնք արտադրության պրոցեսին անմիջաբար չեն մասնակցում, այլ սպասարկում են շինարարների կուլտուր-կենցաղային պահանջմունքները: Դրանց վերաբերում են բնակելի տները, ակումբների, մանկապարտեզների, կուլտուրայի տների և ոչ-արտադրական նշանակության մյուս օբյեկտները:

Շինարարության հիմնական ֆոնդերի ընդհանուր ծավալում 1962 թ. սկզբին արտադրական և ոչ-արտադրական ֆոնդերի հարաբերակցությունը երևում է, 337 էջի սխեմայից:

Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերը, նախած դրանց արտադրական նշանակության և բնածեփ, բաժանվում են հետևյալ խմբերի:

Շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, որոնք անմիջապես մասնակցում են շինարարական արտադրության տեխնոլոգիական պրոցեսին: Հիմնական արտադրական ֆոնդերի այդ մասին վերաբերում են՝ շինարարական մեքենաների և մեխանիզմների բոլոր տեսակները (էքսկավատորներ, հողածուծ սարքեր, ճանապարհաշինական, ամբարձիչ-տրանսպորտային և բեռնման-բեռնաթափման մեքենաներ, բետոնախառնիչներ, շաղախախառնիչներ և այլն), որոնց օգնությամբ կատարվում են շինմոնտաժային աշխատանքներ, ներառյալ դետալների ու կոնստրուկցիաների հավաքումն ու մոնտաժումը, ինչպես նաև նյութերի նախապատրաստումը և մեխանիկական մշակումը:

Շինարարական մեքենաները և մեխանիզմները շինարարության հիմնական ֆոնդերի ամենից ավելի ակտիվ մասն են, որոնք որոշում են շինարարական կազմակերպությունների արտադրական հնարավորությունները:



Տրանսպորտային միջոցներ, որոնք շինարարական արտադրության մեջ կատարում են տեխնոլոգիական պրոցեսներ (շինարարական հրապարակում շինարարական բեռների, հողի, շաղախների, բետոնի և այլ կիսաֆարքիկատների փոխադրում) և տրանսպորտային ֆունկցիաներ (շինարարական կոնստրուկցիաները, դետալները և նյութերը շինարարական կազմակերպությունների և շրջանային արդյունաբերական ձեռնարկությունների պահեստներից մինչև աշխատատեղ փոխադրելը): Հիմնական արտադրական ֆոնդերի այդ մասին վերաբերում են՝ լոկոմոտիվները, պլատֆորմները, վագոնները, վագոնիկները, լաստանաւները, ավտոմեքենաները և տրանսպորտային միջոցների այլ տեսակները:

Վերջին տարիներին ստեղծվել են շինարարությանը սպասարկող տրանսպորտային միջոցների նոր, բարձր արդյունավետ տեսակներ. մեծ բանակությանը տարբեր ինքնաթիռներ՝ հողը և թափվող նյութերը փոխադրելու համար, բետոնակիրներ, ցեմենտակիրներ, տրայլերներ՝ հավաքովի կոնստրուկցիաները փոխադրելու համար և տրանսպորտի մասնագի-

տացված այլ միջոցներ: Տրանսպորտային միջոցների մասնագիտացումը և դրանց տեխնիկական հատկությունների բարձրացումը նպաստում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների տեղումնափոխումը զգալի չափով կրճատելու, արտադրողականութայն աճի և շինարարների աշխատանքը թեթևացնելու գործին:

Օրինակ, փոխադրումների ժամանակ պնեվմատիկ բեռնման ավտոցեմենտակիրների կիրառումն ապահովում է ցեմենտի կորուստների վերացումը է: 10—15 անգամ նվազեցնում է ցեմենտ բեռնելու և բեռնաթափելու գործով զբաղված բանվորների թիվը: 25—40 տոննա բեռնատարողությամբ ավտոինքնաթիռով հող փոխադրելիս, դրանց սպասարկող էքսկավատորների օգտագործման արդյունավետությունն ավելանում է մոտ 2 անգամ, իսկ հողի հանման և փոխադրման ինքնարժեքը՝ նայած փոխադրման հեռավորությանը, իջնում է 30—40 տոկոսով:

Արտադրական շենքեր և կառուցվածքներ, որոնք սպասարկում են շինարարական արտադրությունը: Հիմնական արտադրական ֆոնդերի այդ մասին վերաբերում են առանձին հաշվեկշիռ շունեցող կոնստրուկցիաներ և կիսաֆաբրիկատներ արտադրող ձեռնարկությունների շենքերը, գարածները, արհեստանոցները, լաբորատորիաների շենքերը, երկաթուղային և խճուղային մեծատար ճանապարհների, էտալակաղները, էլեկտրահաղորդման գծերը, պոլիգոնները, պահեստարանները և այլն: Արտադրական շենքերի կազմի մեջ մտնում են նաև դրանց ներքին (ջեռուցման, ջրմուղի, կոյուղու, լուսավորություն) հարմարանքները:

Ուժային և արտադրական սարքավորում, որն ապահովում է շինարարական մեքենաների և շինարարական ձեռնարկությունների օժանդակ ու օգնող արտադրությունների աշխատանքը: Հիմնական արտադրական ֆոնդերի այս խմբին վերաբերում են. նախնական շարժիչները՝ լոկոմոբիլները, դիզելները, շոգեմեքենաները, ինչպես նաև հաստատուն և փոփոխական հոսանքի էլեկտրագեներատորներն ու էլեկտրամոտորները, ուժային տրանսֆորմատորները, օժանդակ ձեռնարկությունների տեխնոլոգիական սարքավորումը և այլն:

Այլ հիմնական ֆոնդեր, որոնց վերաբերում են շինման-տաժային կազմակերպությունների պատկանող աշխատանքային տարբեր գործիքները, հարմարանքները, լաբորատորային և շահիչ գործիքները, տնտեսական ու գրասենյակային գույքը և այլն:

Հիմնական արտադրական ֆոնդերի առանձին խմբերի միջև եղած հարաբերակցությունները կազմում են դրանց կառուցվածքը:

1962 թ. սկզբին ՍՍՌՄ շինարարության մեջ հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքն ուներ հետևյալ պատկերը (տոկոսներով).

Հիմնական արտադրական ֆոնդեր (ընդամենը) 100

Այդ թվում.

շինարարական մեքենաներ և մեխանիզմներ	35,0
տրանսպորտային միջոցներ	13,0
արտադրական շենքեր և կառուցվածքներ	37,0
ուժային և արտադրական սարքավորում	12
այլ հիմնական ֆոնդեր	3,0

Բերված տվյալներից երևում է, որ շինարարության հիմնական արտադրական ֆոնդերի $\frac{1}{3}$ -ից ավելին կազմում են շինարարական մեքենաները և մեխանիզմները: Հիմնական ֆոնդերի այս խմբի բաժինն առանձնապես ավելացել է վերջին տարիներին՝ շինարարության լայն ինդուստրացման և շինարարական կազմակերպությունների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացման շնորհիվ:

Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերի կազմի մեջ մեծ տեղ են գրավում շենքերն ու կառուցվածքները: Դա ղգալի շահիով բացատրվում է շինարարության արտադրական բազայի կազմակերպման գործում գոյություն ունեցող թերություններով: Շինարարական շատ կազմակերպություններ դեռևս իրենք են արտադրում իրենց համար անհրաժեշտ կոնստրուկցիաների, դետալների և նյութերի մի մասը: Մոտակա տարիներին շինանյութերի արդյունաբերության շրջանային ձեռնարկությունների միասնական հզոր

սխտեմի ստեղծումը թույլ կտա շինարարական կազմակերպությանն անհրաժեշտ ազատել շինանյութերի, կիսաֆաբրիկատների ու կոնստրուկցիաների արտադրության՝ իրենց ոչ հատուկ ֆունկցիաներից: Դա կնպաստի շինարարության հիմնական ֆոնդերի կազմի մեջ շենքերի ու կառուցվածքների բաժնի իջեցմանը:

Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերի զգալի մասը կազմում են արանսպորտային միջոցները: Շինարարության մեջ հիմնական արտադրական ֆոնդերի մեջ, արդյունաբերության համեմատությամբ, տրանսպորտային միջոցների ավելի մեծ բաժինը պայմանավորվում է շինարարական արտադրության տեխնոլոգիայի առանձնահատկություններով:

Ոչ-արտադրական հիմնական ֆոնդերի կազմում գերակշռում են բնակելի տները. դրանց բաժինը կազմում է ավելի քան 86 տոկոս:

Բնակելի տների և կուլտուր-կենցաղային նշանակություն ունեցող շենքերի կառուցման հատկացումներն անցյալում, որպես կանոն, տրվում էր անմիջապես արդյունաբերական ձեռնարկություններին և շինարարական կազմակերպություններին: 1957 թվականից սկսած առավել խոշոր քաղաքներում այդ տեսակի շինարարության կապիտալ ներդրումները պլանավորում է աշխատավորների ղեկուսատիների համապատասխան քաղաքային սովետը, որը կապալային կազմակերպությունների միջոցով կատարում է բնակելի տների կառուցումը և բաշխում է նոր բնակելի տարածությունը: Քաղաքների մշտական ապրողների համար բնակարանների և կուլտուր-կենցաղային նշանակություն ունեցող շենքերի պլանավորման ու կառուցման այդպիսի կարգը լիովին իրեն արդարացրեց: Բարելավվել է քաղաքների կառուցապատումը և բնակելի ֆոնդի շահագործումը, խոշոր քաղաքներում մշտապես աշխատող շինարարները ավելի ու ավելի մեծ չափով աշխատավորների ղեկուսատիների տեղական սովետների միջոցով ապահովվում են բնակարանով: Բնական է, որ տեղական սովետների ֆոնդից շինարարական կազմակերպություններին բնակելի տարածությամբ ապահովելը - կհանգեցնի շինարարության հիմնական ֆոնդերի կազմում բնակելի տների և կուլտուր-կենցաղային նշանակություն ունեցող շենքերի բաժնի կրճատմանը:

Շրջանառու արտադրական ֆոնդերի կառուցվածքը: Շինարարության շրջանառու արտադրական ֆոնդերը բաղկացած են արտադրական պաշարներից, որոնք անհրաժեշտ են շինարարությանը:

բարական արտադրութեան անընդհատութիւնն ապահովելու համար, և աշխատանքի առարկաներից, որոնք գտնվում են արտադրութեան պրոցեսում: Շրջանառու ֆոնդերի առաջին խմբին վերաբերում են. շտեղակայված սարքավորումը, շինարարական կոնստրուկցիաները և դետալները, հիմնական նյութերը, այլ նյութեր, ցածրարժեք և արագ մաշվող առարկաները, երկրորդ խմբին՝ անավարտ արտադրութիւնը և արտադրութեան մեջ այլ ծախսումները:

Չտեղակայված սարքավորում: Կառուցները փոխադրվող սարքավորումը ստորաբաժանվում է տեղակայման (մոնտաժման) համար նախատեսված և մոնտաժում չպահանջող սարքավորման:

Առաջին խմբի կազմի մեջ մտնում է տեխնոլոգիական, էներգետիկ և այլ սարքավորումը, որը կարող է շահագործման հանձնվել միայն մոնտաժային աշխատանքներ կատարելուց հետո: Երկրորդ խմբի մեջ մտնում է այն սարքավորումը, որն իր բնույթով մոնտաժում չի պահանջում: Դա ամեն տեսակ շինարարական մեքենաներն են, տրանսպորտային և փոխադրական միջոցները, կուլտուր-կենցաղային և վարչական շենքերի սարքավորումը և այլն: Շրջանառու արտադրական ֆոնդերի կազմի մեջ մտնում է միայն առաջին խմբին պատկանող սարքավորումը: Երկրորդ խմբի սարքավորումը գործողութեան համար պատրաստի հիմնական ֆոնդեր են և շրջանառու ֆոնդերի մեջ չեն մտցվում:

Շինարարական կոնստրուկցիաները և դետալները (երկաթբետոնե, մետաղյա, փայտե, պլաստմասսաներից և այլ նյութերից պատրաստված կոնստրուկցիաներ ու դետալներ, շենքերի ու կառուցվածքների բլոկներ ու հավաքովի մասեր, սանիտարա-տեխնիկական աշխատանքների համար հավաքովի տարրեր և այլն) հանդիսանում են շինարարութեան շրջանառու արտադրական ֆոնդերի կարևորագույն և առավել արդյունավետ մասը:

Հիմնական նյութերը շինարարական կոնստրուկցիաների ու դետալների հետ միասին անմիջականորեն օգտագործվում են կառուցվող շենքերում ու կառուցվածքներում: Նյութերի

կազմը և քանակը փոփոխվում են, նայած կատարվող շինմոնտաժային աշխատանքների բնույթին ու նյութատարու-թյանը, նոր պրոգրեսով և ավելի խնայողական նյութերի ըստեղծմանն ու արմատավորմանը: Շինարարության մեջ, ինչպես հայտնի է, կարևորագույն հիմնական նյութեր են. ցեմենտը, պողպատը, անտառանյութը, աղյուսը, կիրը, ալեբաստը, ավազը, խիճը, քարը, խողովակները, ապակին, քերամիկական սալերը, սանիտարա-տեխնիկական, էլեկտրատեխնիկական նյութերը և այլն:

Այլ նյութերը և վառելիքը, ի տարբերություն հիմնական նյութերի, կոնստրուկցիաների ու բլոկների, անմիջաբար չեն մտնում կառուցվող օբյեկտների կազմի մեջ, բայց դրանք կամ սպառվում են աշխատանքի միջոցների կողմից (օրինակ, վառելիքը՝ ուժային տեղակայումների համար, պահեստի մասերը՝ շինարարության հիմնական ֆոնդերը վերանորոգելու համար) կամ միանում են հիմնական նյութերին (օրինակ, ներկը):

Այլ նյութերի կազմում հաշվի է առնվում նաև տարան, որը նախատեսված է շինարարություն ուղարկվող նյութերի պահպանման և փաթեթման համար:

Ցածրաժեֆ և արագ մաշվող առարկաներին վերաբերում են պահեստներում և շահագործման մեջ գտնվող այն գործիքները, չափիչ սարքերը և գույքը, որոնց ծառայության ժամկետը մեկ տարուց ավելի չէ (անկախ արժեքից), ինչպես նաև 50 ռուբլուց պակաս արժեք ունեցող գույքը և գործիքները (անկախ դրանց շահագործման ժամկետից): Շրջանառու ֆոնդերի այդ նույն խմբի մեջ մտնում են հատուկ վերնահագուստն ու կոշիկը, անկողնային պատկանելիքները (անկախ դրանց արժեքից ու ծառայության ժամկետից):

Իրենց տնտեսական բնույթով ցածրաժեֆ և արագ մաշվող առարկաները մոտ են հիմնական ֆոնդերին, քանի որ դրանց արժեքը փոխանցվում է պատրաստի արդյունքին ոչ թե միանգամից (ինչպես, օրինակ, կոնստրուկցիաները և հիմնական նյութերը), այլ աստիճանաբար, մաշվելուն համեմատ՝ հիմնական ֆոնդերի նման: Ուստի դրանց շրջանառու արտադրական ֆոնդերին վերագրելը որոշ չափով պայմանական է: Պայմանական է

նաև բոլոր ցածրարժեք և արագ մաշվող առարկաներն արտադրական պաշարներին վերագրելը, քանի որ դրանց զգալի մասը փաստորեն գտնվում է շահագործման մեջ և ոչ թե պահեստներում որպես պաշար: Այդպիսի պայմանականությունն ընդունված է ցածրարժեք առարկաների հաշվառումն ու պլանավորումը պարզեցնելու և հեշտացնելու նպատակով, առարկաներ, որոնց տեսակները շինարարության մեջ հարյուրների են հասնում:

Անավարտ շինարարության ընդհանուր ծավալը բաղկացած է անավարտ շինարարությունից, որը հանձնվել է պատվիրատուին և արտացոլվել նրա հաշվեկշռում, և շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրությունից, որը հաշվի է առնվում շինարարական կազմակերպությունների հաշվեկշռում: Շինարարական կազմակերպությունների անավարտ արտադրության մեջ, բացի դրանից, մտնում են առանձին արդյունաբերական հաշվեկշիռ չունեցող օժանդակ ձեռնարկությունների անավարտ պատրաստի արտադրանքի գծով ծախսումները: Շինարարական կազմակերպությունների անավարտ արտադրության ամբողջ ծավալի մինչև 90 տոկոսը, միջին հաշվով, կազմում են այն ծախսումները, որոնք կապված են շինմոնտաժային աշխատանքները կատարելու հետ, և մինչև 10 տոկոսը բաժին է ընկնում օժանդակ ձեռնարկությունների արտադրանքին:

Կապիտալ ներդրումների պլանները և տիտղոսային ցուցակները կազմելիս անավարտ շինարարության ծավալը պլանավորվում և հաշվի է առնվում ըստ համապատասխան պատվիրատուների: Ի տարբերություն դրա, շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրության ծավալը պլանավորվում և հաշվի է առնվում շինարարական կազմակերպությունների շրջանառու արտադրական ֆոնդերի կազմում:

Արտադրության այլ ծախսումների հիմնական մասը կապված է շինարարական հրապարակը քիչ թե շատ երկար ժամանակով շինմոնտաժային աշխատանքներ կատարելու համար նախապատրաստելու ծախսերի հետ (ժամանակավոր ծածկերի, ցանկապատերի, անվտանգության տեխնիկայի հարմարանքների, պահեստների կառուցման, բանվորների կազմակերպված հավաքագրման և այլ ծախսեր): Սրան են վերա-

կազմը և քանակը փոփոխվում են, նայած կատարվող շին-
մոնտաժային աշխատանքների բնույթին ու նյութատարու-
թյանը, նոր պրոգրեսով և ավելի խնայողական նյութերի ըս-
տեղծմանն ու արմատավորմանը: Շինարարության մեջ, ինչ-
պես հայտնի է, կարևորագույն հիմնական նյութեր են. ցեմեն-
տը, պողպատը, անտառանյութը, աղյուսը, կիրը, ալեբաստը,
ավազը, խիճը, քարը, խողովակները, ապակին, քերամիկա-
կան սալերը, սանիտարա-տեխնիկական, էլեկտրատեխնիկա-
կան նյութերը և այլն:

Այլ նյութերը և վառելիքը, ի տարբերություն հիմնական
նյութերի, կոնստրուկցիաների ու բլոկների, անմիջաբար չեն
մտնում կառուցվող օբյեկտների կազմի մեջ, բայց դրանք
կամ սպառվում են աշխատանքի միջոցների կողմից (օրինակ,
վառելիքը՝ ուժային տեղակայումների համար, պահեստի մա-
սերը՝ շինարարության հիմնական ֆոնդերը վերանորոգելու
համար) կամ միանում են հիմնական նյութերին (օրինակ,
ներկը):

Այլ նյութերի կազմում հաշվի է առնվում նաև տարան,
որը նախատեսված է շինարարություն ուղարկվող նյութերի
պահպանման և փաթեթման համար:

Ցածրարժեք և արագ մաշվող առարկաներին վերաբերում
են պահեստներում և շահագործման մեջ գտնվող այն գոր-
ծիքները, չափիչ սարքերը և գույքը, որոնց ծառայության
ժամկետը մեկ տարուց ավելի չէ (անկախ արժեքից), ինչ-
պես նաև 50 ուրբուց պակաս արժեք ունեցող գույքը և գոր-
ծիքները (անկախ դրանց շահագործման ժամկետից): Շրջա-
նառու ֆոնդերի այդ նույն խմբի մեջ մտնում են հատուկ
վերնահագուստն ու կոշիկը, անկողնային պատկանելիքները
(անկախ դրանց արժեքից ու ծառայության ժամկետից):

Իրենց տնտեսական բնույթով ցածրարժեք և արագ մաշվող առարկա-
ները մոտ են հիմնական ֆոնդերին, քանի որ դրանց արժեքը փոխանցվում
է պատրաստի արդյունքին ոչ թե միանգամից (ինչպես, օրինակ, կոնս-
տրուկցիաները և հիմնական նյութերը), այլ աստիճանաբար, մաշվելուն
համեմատ՝ հիմնական ֆոնդերի նման: Ուստի դրանց շրջանառու արտադրա-
կան ֆոնդերին վերադրելը որոշ չափով պայմանական է: Պայմանական է

նաև բոլոր ցածրարժեք և արագ մաշվող առարկաներն արտադրական պաշարների վերագրելը, քանի որ դրանց զգալի մասը փաստորեն գտնվում է շահագործման մեջ և ոչ թե պահեստներում որպես պաշար: Այդպիսի պայմանականությունն ընդունված է ցածրարժեք առարկաների հաշվառումն ու պլանավորումը պարզեցնելու և հեշտացնելու նպատակով, առարկաներ, որոնց տեսակները շինարարության մեջ հարյուրների են հասնում:

Անավարտ շինարարության ընդհանուր ծավալը բաղկացած է անավարտ շինարարությունից, որը հանձնվել է պատվիրատուին և արտացոլվել նրա հաշվեկշռում, և շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրությունից, որը հաշվի է առնվում շինարարական կազմակերպությունների հաշվեկշռում: Շինարարական կազմակերպությունների անավարտ արտադրության մեջ, բացի դրանից, մտնում են առանձին արդյունաբերական հաշվեկշիռ չունեցող օժանդակ ձեռնարկությունների անավարտ պատրաստի արտադրանքի գծով ծախսումները: Շինարարական կազմակերպությունների անավարտ արտադրության ամբողջ ծավալի մինչև 90 տոկոսը, միջին հաշվով, կազմում են այն ծախսումները, որոնք կապված են շինմոնտաժային աշխատանքները կատարելու հետ, և մինչև 10 տոկոսը բաժին է ընկնում օժանդակ ձեռնարկությունների արտադրանքին:


Կապիտալ ներդրումների պլանները և տիտղոսային ցուցակները կազմելիս անավարտ շինարարության ծավալը պլանավորվում և հաշվի է առնվում ըստ համապատասխան պատվիրատուների: Ի տարբերություն դրա, շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրության ծավալը պլանավորվում և հաշվի է առնվում շինարարական կազմակերպությունների շրջանառու արտադրական ֆոնդերի կազմում:

Արտադրության այլ ծախսումների հիմնական մասը կապված է շինարարական հրապարակը քիչ թե շատ հրկար ժամանակով շինմոնտաժային աշխատանքներ կատարելու համար նախապատրաստելու ծախսերի հետ (ժամանակավոր ծածկերի, ցանկապատերի, անվտանգության տեխնիկայի հարմարանքների, պահեստների կառուցման, բանվորների կազմակերպված հավաքագրման և այլ ծախսեր): Սրան են վերա-

բերում նաև շինարարական կազմակերպությունների արտադրական-տնտեսական գործունեության հետ կապված որոշ այլ ծախսեր: Այդ բոլոր ծախսերը հաշվի են առնվում արտադրության այլ ծախսումների կազմի մեջ և փոխանցվում են շինարարական արտադրանքի արժեքի մեջ աստիճանաբար, մի քանի ամսվա, մեկ, երբեմն երկու և ավելի տարվա ընթացքում: Նշված ծախսերի միանվագ վերագրումը կատարվող շինմոնտաժային աշխատանքներին կհասցնեք դրանց ինքնարժեքի արհեստական բարձրացմանը: Շինարարության մեջ այլ ծախսումների առավելագույն կրճատումը թույլ է տալիս ազատել միջոցների նշանակալից գումարներ:

Շինարարության մեջ շրջանառու արտադրական ֆոնդերը գտնվում են կապալառու կազմակերպությունների, տնտեսական եղանակով իրականացվող կառույցների և պատվիրատուների (կառուցողների) տնօրինության տակ: Այդ կազմակերպությունների շրջանառու արտադրական ֆոնդերի կազմը գլխավորապես որոշվում է շինարարական արտադրության մեջ դրանց կատարած ֆունկցիաներով:

Կապալառու շինարարական կազմակերպությունների շրջանառու արտադրական ֆոնդերի 1960 թվականի սկզբի դրությամբ կառուցվածքը ցույց է տրվում հետևյալ սխեմայում:



Առանձին շինարարական կազմակերպությունների շրջանառու ֆոնդերի կառուցվածքը՝ տարբեր է: Այն կախված է կատարվող աշխատանքների բնույթից, դրանց աշխատատարությունից ու նյութատարությունից, արտադրության կազմակերպումից (մեքենայացման աստիճանից, հավաքովի կոնստրուկցիաների կիրառման շափից և այլն), մատակարարման կազմակերպումից, փոխադրումներից, կատարված աշխատանքների համար պատվիրատուների հետ վերջնահաշիվներից և մի շարք այլ գործոններից:

Տնտեսական եղանակով իրականացվող կառուցյանների շրջանառու արտադրական ֆոնդերի կազմը մոտավորապես նույնպիսին է ինչպես և կապալառու կազմակերպություններին: Կառուցվող և գործող ձեռնարկությունների դիրեկցիաների, այսինքն՝ պատվիրատուների (կառուցողների) շրջանառու արտադրական ֆոնդերը գլխավորապես կազմված են ընդհանրապես սարքավորման պաշարներից:

Հիմնական ֆոնդերի գնահատումը: Շինարարության մեջ հիմնական ֆոնդերի հաշվառումն ու պլանավորումը կատարվում է բնաձև ու դրամական ցուցանիշներով:

Բնաձև ցուցանիշներով գնահատումը պատկերացում է տալիս հիմնական ֆոնդերի քանակական կազմի, դրանց արտադրական-տեխնիկական բնութագրի, կառուցման կամ ձեռքբերման ժամանակի մասին և այլն: Այդպիսի հաշվառումը տարվում է հիմնական ֆոնդերի յուրաքանչյուր տեսակի (գույքային օբյեկտի) համար՝ հատուկ սլասպորտներով: Հիմնական ֆոնդերի ճիշտ դրված բնաձև հաշվառումը մեծ նշանակություն ունի շինարարական կազմակերպությունների գործունեությունը պլանավորելու և գնահատելու համար, քանի որ այն բազմակողմանի պատկերացում է տալիս նրանց արտադրատեխնիկական հնարավորությունների մասին:

Դրամական ձևով հիմնական ֆոնդերը գնահատվում են. ա) սկզբնական արժեքով, բ) սկզբնական արժեքով՝ հասած մաշվածքը և գ) վերականգման արժեքով:

Սկզբնական արժեքով գնահատման տնտեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն արտացոլում է հիմնական ֆոնդերի ստեղծման ժամանակ կատարված ծախսումները, այսինքն՝ շինարարական մեքենաների և այլ սարքավոր-

րումի ձեռքբերման, դրանց տեղակայման ու մոնտաժման, շենքերի ու կառուցվածքների շինարարություն փաստացի ծախսումները:

Եթե, օրինակ, ձեռք է բերվել թրթուրավոր ընթացքով էքսկավատոր՝ 35 հազար ուրբու արժողությամբ և փոխադրման ու մոնտաժման ծախսերը կազմել են 1,5 հազ. ուրբի, ապա նրա լրիվ սկզբնական արժեքը կկազմի 36,5 հազար ուրբի:

Մաշվածիբ հաճած սկզբնական արժեքով հիմնական ֆոնդերի գնահատման տնտեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն ցույց է տալիս, թե արժեքի որ մասը դեռևս չի փոխանցվել պատրաստի արտադրանքին, այսինքն՝ ցույց է տալիս ֆոնդերի մնացած արժեքը:

Ենթադրենք, թե նշված էքսկավատորը, տարեկան 8 0/0 միջին մաշվածքի դեպքում, հինգ տարվա ընթացքում կորցրել է իր սկզբնական արժեքի 40 0/0-ը, այսինքն՝ 14,6 հազ. ուրբի ($36,5 \times 0,4$): Նշանակում է նրա արժեքը, հաշվի առնելով մաշվածքը, հինգ տարի հետո կկազմի 21,9 հազ. ուրբի (36,5 հազ. ուրբ. — 14,6 հազ. ուրբ.)

Բայց գնահատման այդ ձևը ևս միշտ չէ, որ ճիշտ պատկերացում է տալիս այս կամ այն ֆոնդերի ռեալ արժեքի մասին: Մինչև 1960 թ. հունվարի 1-ը ժողովրդական տնտեսություն մեջ գործող հիմնական ֆոնդերը ունեին ամենատարբեր գնահատում, նայած այն բանին, թե որ տարում էին դրանք կառուցվել կամ ձեռք բերվել: Օրինակ, մի քանի տարի առաջ ձեռք բերված մեքենան կարող է զգալիորեն ավելի թանկ արժեքնալ, քան նոր ձեռք բերված նույնանման մեքենան: Դա որոշակիորեն աղավաղում էր առկա հիմնական ֆոնդերի գնահատումը, դժվարացնում էր արտադրանքի ինքնարժեքի պլանավորումը, բավականին դժվարություններ ստեղծում նոր գներ սահմանելու ժամանակ:

Մատնանշված թերությունները վերացնելու համար 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացվեց ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի վերագնահատում: Շինարարական կազմակերպությունների բոլոր հիմնական ֆոնդերը,

որոնք շահագործման էին հանձնվել տարբեր տարիներում, գնահատվեցին դրանց ժամանակակից (վերականգնման) արժեքով: Հիմնական ֆոնդերի վերականգման արժեքի ասելով, հասկանում ենք ժամանակակից գներով դրանց վերարտադրության արժեքը:

Վերագնահատումը հնարավորություն տվեց ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը բերել միատեսակ գնահատման, ապահովեց ձեռնարկությունների ու կազմակերպությունների հաշվեկշիռներում դրանց ավելի ճիշտ արտացոլումը, թույլ տվեց ճշգրիտ սահմանել դրանց մաշվածքի փաստացի չափերը:

Վերագնահատման տվյալներով շինարարության հիմնական ֆոնդերը 1960 թ. հունվարի 1-ին կազմել են 5,4 մլրդ ռուբլի: Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերը, 1940 թվականի համեմատությամբ, 1960 թվականին ավելացան ավելի քան 6 անգամ:

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Սոցիալիստական ձեռնարկությունների ու կազմակերպությունների հիմնական ֆոնդերը համաժողովրդական սեփականություն են և տրվում է նրանց տնօրինությանը՝ մշտական օդտազործման համար:

Ի տարբերություն արդյունաբերության, որտեղ ձեռնարկությունների հիմնական ֆոնդերը լիովին գտնվում են նրանց տնօրինության տակ, շինարարության մեջ հիմնական ֆոնդերը գտնվում են ոչ միայն շինարարական կազմակերպությունների, այլև պատվիրատուների տնօրինության տակ: Ընդ որում, հասկանալի է, որ կապալառու կազմակերպություններին պատկանում է հիմնական արտադրական ֆոնդերի մեծ մասը:

ՍՄԿՊ XXII համագումարը խնդիր դրեց խելացիորեն օդտազործել արտադրական ֆոնդերը, նվազագույն ծախսումներով արտադրական կարողության մեկ միավորից ստանալ առավելագույն արտադրանք:

Մինչև արդյունաբերության ու շինարարության կառավարման վերակառուցումը շինարարական կազմակերպությունների հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման ասպարեզում խոշոր թերություններ կային: Գլխավոր թերությունը դրանց ապակենտրոնացումն էր բազմաթիվ մանր կառույցներում: Շինարարական մեքենաները, մեխանիզմները, ավտոտրանսպորտը և հիմնական արտադրական այլ ֆոնդերը գտնվում էին սկզբնական շինարարական կազմակերպությունների տրամադրության տակ, իսկ վերջիններս էլ դրանք բաշխում էին առանձին շինարարական տեղամասերի ու օժանդակ-օգնող տնտեսությունների միջև: Կատարվում էր հիմնական արտադրական ֆոնդերի փոշիացում, որը դժվարացնում էր դրանց ուղղորդել օգտագործումը և շինարարության մեջ տեխնիկական առաջադիմությունը: Դանդաղ էր զարգանում շինարարական մեքենաների ու մեխանիզմների օգտագործման մասնագիտացումը:

Շինմոնտաժային կապալառու կազմակերպությունների հետագա զարգացման ու խոշորացման ուղղությամբ վերջին տարիներին անցկացված միջոցառումները հասցրին այդ կազմակերպություններում շինարարական տեխնիկայի համակենտրոնացմանը և դրա օգտագործման բարելավմանը: Սակայն դեռ մինչև հիմա գոյություն ունեն զգալի թվով մանր շինարարական կազմակերպություններ, որոնք ունեն խիստ պրիմիտիվ տեխնիկա և կիսատնայնագործական արտադրական բազաներ:

ՍՄԿՊ XXI համագումարը խնդիր դրեց. «Վճռականորեն հաղթահարել ձեռնարկությունների նախագծման և տեղաբաշխման ասպարեզում նախկին գերատեսչությունների կիրառած արատավոր պրակտիկան, երբ միևնույն շրջանում յուրաքանչյուր կառույց ինքնուրույն կերպով, մյուսներից մեկուսացված ստեղծում էր տնայնագործական շինարարական բազաներ»:

Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործումն ամեն կերպ բարելավելու համար պայքարում ենթակայումս որոշվել են հետևյալ հիմնական ուղղությունները. հիմնական շինարարական տեխնիկայի համակենտրոնացումը մասնագիտացված կազմակերպություններում, ավտոմոբիլային տնտեսությունների խոշորացում և փոխադրումների կենտրոնացում, շինարարական մեքենաների ու մեխա-

նիզմաների վերանորոգման կենտրոնացում մասնագիտացված ձեռնարկութուններում, շինանյութերի ու կոնստրուկցիաների արտադրութւյան մասնագիտացված հզոր արդյունաբերական ձեռնարկութունների ցանցի ստեղծում:

Հիմնական շինարարական տեխնիկայի համակենտրոնացումը մասնագիտացված կապակերպութուններում: Շինարարական մասնագիտացված կազմակերպութունները մեխանիզմների լայն կիրառման օգնութւյամբ կատարում են աշխատանքների այնպիսի տեսակներ, ինչպես տեխնոլոգիական, էներգետիկ, ամբարձիչ-տրանսպորտային և այլ սարքավորման մոնտաժում. խողովակաշարքերի, սանիտարա-տեխնիկական հարմարանքների ու կոմունիկացիաների մոնտաժում. էլեկտրամոնտաժային աշխատանքներ. երկաթբետոն, մետաղյա և այլ կոնստրուկցիաների մոնտաժում. երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների շինարարութւյուն. փոստրականերից հողի հանման, հիմքերի կառուցման, պատերի, ծածկերի մոնտաժման աշխատանքներ, վերջնամշակման և մի շարք այլ աշխատանքներ:

Այդ աշխատանքները կատարելու համար մասնագիտացված կազմակերպութւյուններում կենտրոնացվում է հիմնական շինարարական տեխնիկան (էքսկավատորներ, բուլղոզերներ, սկրեպերներ, ամբարձիչներ, ծելիլ, ներկի և այլ մեքենաներ): Միջրջանային հզոր մասնագիտացված կազմակերպութւյունների ստեղծման պրակտիկան յորեն լիովին արդարացրել է: Այդպիսի կազմակերպութւյունները հագեցված են շինարարական հզոր տեխնիկայով և ունեն որակյալ բանվորների մշտական կադրեր:

Շինարարական տեխնիկայի համակենտրոնացման մյուս ձևը գոյութւյուն ունի Մոսկվայի, Կիևի, Լենինգրադի գլխավոր շինվարչութւյուններում: Այնտեղ ստեղծվել են շինարարական խոշոր մեքենաների առանձին տեսակների՝ հողափոր, ճանապարհային, աշտարակային ամբարձիչների և այլ մեքենաների շահագործման մասնագիտացված տրեստներ և վարչութւյուններ:

Ոչ միայն հիմնական ֆոնդերի օգտագործման, այլև տրն-

տեսական մյուս ցուցանիշներով մասնագիտացված կազմակերպությունների գործունեության արտադրական-տնտեսական արդյունքները զգալի չափով բարձր են, քան համաշինարարական կազմակերպությունների գործունեության արդյունքները:

Այսպես, Գլխինինգրադշինի մասնագիտացված կազմակերպություններում շինարարական մեքենաների միավորման շնորհիվ մեկ շերտի մեկ էքսկավատորների արտադրանքը 1960 թ., 1955 թ. համեմատությամբ, ավելացել է 37 %: Աշտարակավոր ամբարձիչների օգտագործման ժամանակը ավելացել է 46 %, բուլղոզերներինը՝ 41, ավտոամբարձիչներինը՝ 32 %, մոնտաժային ամբարձիչներինը՝ ավելի քան 2,4 անգամ: Շինարարական մեքենաների օգտագործման բարելավումը թույլ տվեց մեքենա-հերթափոխի արժեքն իջեցնել 35—40 և ավելի տոկոսով:

Ավտոմոբիլային տնտեսությունների խոշորացումը և փոխադրումների կենտրոնացումը: Շինարարության մեջ զբաղված են մեծ թվով բեռնատար ավտոմեքենաներ: Ավտոմոբիլային փոխադրումների վրա կատարված ծախսերը լրջորեն ազդում են շինարարության արժեքի վրա, կազմելով միջին հաշվով դրա մոտ 10 տոկոսը:

Ավտոմոբիլային պարկը մինչև վերջին ժամանակները փոշիացված էր բազմաթիվ ձեռնարկություններում և կազմակերպություններում: Այսպես, դեռ 1956 թվականին երկրի բոլոր ավտոմոբիլային տնտեսությունների մոտ 85 տոկոսն իր տրամադրության տակ ուներ յուրաքանչյուրը 10 ավտոմեքենայից ոչ ավելի: Հասկանալի է, որ այդպիսի վիճակում չէր կարելի ապահովել ավտոմոբիլային պարկի լավ օգտագործումը: Բեռնատար ավտոմոբիլների մոտ 50 տոկոսը չէր գործում, իսկ ավտոպարկի աշխատող մասը վազքի կեսը կատարում էր դատարկ: Ավտոմոբիլային պարկի օգտագործման արմատական բարելավումը հնարավոր դարձավ միայն մանր ավտոմոբիլային տնտեսությունների խոշորացման և կենտրոնացված փոխադրումների կազմակերպման բազայի վրա: Օրինակ, այն քաղաքներում, որտեղ անցկացված է բազմաթիվ մանր ավտոտնտեսությունների խոշորացում և իրագործվել է փոխադրումների կենտրոնացում (Մոսկվա, Լենին-

գրադ, Կիև, Դոնեցկ և այլն), ավտոմոբիլային պարկի օգտագործման գործակիցը բարձրացել է մոտ 1,5 անգամ, խիստ իջել է բեռների փոխադրման ինքնարժեքը:

Շինարարական բեռների կենտրոնացված փոխադրումները թույլ են տալիս կրճատել այն ավտոմոբիլների քանակը, որոնք անհրաժեշտ են փոխադրումներ կատարելու համար: Գլխմոսավտոտրանստամ ավտոմոբիլային տրանսպորտն ավելի արդյունավետ օգտագործելու շնորհիվ ավտոմոբիլների պարկը կրճատվել է 30 տոկոսով, թեև փոխադրումների ծավալն աճել է 67 տոկոսով:

Ավտոմոբիլային պարկը կենտրոնացնելիս պետք է, իհարկե, հաշվի առնել շինարարության կոնկրետ պայմանները: Գործի այդ կողմի վրա շինարարների ուշադրությունը դարձրեց Ն. Ս. Խրուշչովը շինարարության վերաբերյալ համամիութենական խորհրդակցությունում 1958 թ. ապրիլի 12-ին: «Նկատի ունեցեք, — ասաց նա, — որ մենք կողմնակից ենք սակավազոր «կուլակային» ավտոմոբիլային տնտեսությունների վերացմանը: Այդ տնտեսությունների բաղադրյալ վրա բեռների կենտրոնացված փոխադրումների համար ամենուրեք պետք է ստեղծել բեռնատար մեքենաների խոշոր պարկեր: Դա մեքենաների շահագործման առավել ռացիոնալ եղանակն է: Իհարկե, այդ գործը պետք է խելացի կազմակերպել: Օրինակ, եթե քաղաքից հեռու որևէ տեղ կառուցվում է մետալուրգիական գործարան, ապա ո՞ւմ պետք է ենթարկել ամբողջ բեռնատար տրանսպորտը: Իհարկե, շինարարության պետին»¹:

Շինարարության մեջ բեռների ավտոմոբիլային փոխադրումների կենտրոնացումն իրագործվում է տարբեր ուղիներով. ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տնտեսությունների միջոցով (աշխատավորների ղեկավարատների տեղական սովետների մարզային, երկրամասային և քաղաքային գործկոմիտեի մարզային, երկրամասային և քաղաքային գործկոմիտեի մարզային ավտոտրանսպորտային վարչություններ և տրեստներ), ժողտնտխորհների տերիտորիալ ավտոտնտեսությունների կամ ժողտնտխորհների շինարարության

¹ «Строительная газета», 1958 թ. հուլիսի 2:

վարչությունների և շինարարական մինիստրությունների ավտոտնտեսությունների միջոցով, քաղաքներից և արդյունաբերական կենտրոններից սովորաբար հեռու գտնվող առանձին շինարարական կազմակերպություններին առընթեր խոշոր ավտոտնտեսություններ ստեղծելու միջոցով:

Ամբողջ երկրի մասշտաբով կենտրոնացված փոխադրումները ներկայումս կազմում են արդեն շինանյութերի ավտոմոբիլային փոխադրումների ընդհանուր ծավալի կեսից ավելին: 1960 թ. հիմնականում ավարտվեց ավտոտնտեսությունների խոշորացման աշխատանքը: Իրականացվում են նաև ուրիշ միջոցառումներ, որոնք ուղղված են ավտոմոբիլային պարկի օգտագործումը բարելավելու և շինարարությունների համար բեռների փոխադրման ծախսումներն իջեցնելու գործին: Այսպես, 1960 թվականից խոշոր քաղաքներում կազմակերպված է ընդհանուր օգտագործման ավտոտնտեսությունների միջոցով բեռների կանոնավոր կենտրոնացված փոխադրում կառույցները՝ երկաթուղու ապրանքային կայարաններից, գետային ու ծովային նավահանգիստներից, շինարարական բեռների կենտրոնացված ավտոտրանսպորտային փոխադրում կառույցները այն մատակարար-ձեռնարկություններից, որոնք գտնվում են նույն շրջանում:

Հիմնական ֆոնդերի վերանորոգման կենտրոնացումը: Ինչպես փորձը ցույց է տալիս, ավելի նպատակահարմար է խոշոր և բարդ մեքենաների վերանորոգումն իրականացնել վերանորոգման-մեխանիկական մասնագիտացված գործարաններում և ավտովերանորոգման տնտեսություններում: Մինչև վերջին ժամանակները շինարարական տեխնիկայի վերանորոգումը մեծ մասամբ կատարվում էր շինարարական կազմակերպությունների ոչ մեծ արհեստանոցներում ու գարաժներում, բացակայում էր միատիպ մեքենաների վերանորոգման մասնագիտացումը, որը հասցնում էր վերանորոգման թանկացման: Շինարարական մեքենաների վերանորոգման վրա կատարվող ծախսումները երբեմն հասնում էին նոր մեքենաների արժեքի 50 և ավելի տոկոսին, իսկ մի շարք դեպքերում և գերազանցում այն:

Շինարարական մեքենաների վերանորոգման կենդրոնացումը շրջանային վերանորոգման մասնագիտացված ձեռնարկություններում, առաջադիմական տեխնոլոգիայի և առաջավոր մեթոդների լայն կիրառման հետ միաժամանակ թույլ է տալիս կրճատել վերանորոգման արժեքը և բարելավել նրա որակը, ավելի լրիվ օգտագործել վերանորոգման գործարանների կարողությունները: Վերանորոգման գործարաններում, շինարարական բարդ մեքենաների կենտրոնացված կապիտալ վերանորոգման անցնելու դեպքում, վերանորոգման առաջադիմական մեթոդների կիրառման շնորհիվ աշխատանքների ծավալն ավելանում է 2—2,5 անգամ:

Ամենուրեք վերանորոգման նոր կազմակերպական ձևերի անցնելը, ժողտնտիսորհներում և շինարարական խոշոր կազմակերպություններում մասնագիտացված շրջանային վերանորոգման գործարանների և միջշրջանային վերանորոգման բազաների կազմակերպումը էականորեն կրարելավեն շինարարության հիմնական արտադրական ֆոնդերի վիճակն ու օգտագործումը:

Շինանյութեր և կոնստրուկցիաներ արտադրող ու վոր մասնագիտացված արդյունաբերական ձեռնարկությունների ցանցի ստեղծումը: Ներկայումս այդ ցանցը ստեղծվում է շինանյութերի արդյունաբերության, այդ թվում անմիջապես շինարարական կազմակերպություններին կազմակերպչորեն ենթարկված գործող ձեռնարկությունների ընդարձակման և վերակառուցման բազայի վրա, ինչպես նաև նոր ձեռնարկություններ կառուցելու միջոցով:

Առաջներում գոյություն ունեցող դերատեսչական մանրատվածությունը դժվարացնում էր շինարարական կազմակերպությունների արտադրական ձեռնարկությունների կարողությունների արդյունավետ օգտագործումը: Նրանցից շատերը փաստորեն օգտագործվում էին ոչ ավելի, քան 50 կոսով: Տնտեսության կառավարումը վերափոխելուց հետո դրությունն այնքան էլ չբարելավվեց, քանի որ այդ ձեռնարկությունները ցիր ու ցան էին և ենթարկվում էին ժողտնտխորհներին, տեղական սովետների գործկոմներին, մինիս-

տրուկություններին, զանազան գերատեսչություններին: Ներկայումս շինանյութեր արտադրող ձեռնարկությունների կառավարումը միասնական օրգաններում կենտրոնացնելու և դրանց մասնագիտացման ուղղությամբ աշխատանք է կատարվում: Դա կապիտալ ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու կարևոր միջոցառումներից մեկն է, որ նախատեսված է ՍՄԿՊ Կենտկոմի Մինիստրների սովետի 1961 թվականի հոկտեմբերի 7-ի որոշման մեջ:

Շինանյութեր և շինվածքներ արտադրող ձեռնարկությունների խոշորացման ու մասնագիտացման արդյունավետությունը լավ երևում է Գլխնինիգրադշինի օրինակով: Առաջ յուրաքանչյուր ձեռնարկություն միայն այն կազմակերպության համար էր անհրաժեշտ շինվածքներ պատրաստում, որի կազմի մեջ մտնում էր ինքը: Ձեռնարկությունների խոշորացումը թույլ տվեց դրանց մասնագիտացնել որոշ տեսակի շինվածքներ մասսայաբար թողարկելու մեջ, արմատավորել առաջավոր տեխնոլոգիա և արտադրության հոսքային մեթոդներ: Դրա շնորհիվ բետոնե և երկաթբետոնե շինվածքներ արտադրող գործարանները նույն սարքավորմամբ և արտադրական տարածություններով սկսեցին 35 տոկոսով ավելի արտադրանք թողարկել և 20 տոկոսով իջեցրին շինվածքների ինքնարժեքը: Հզոր տնաշինական կոմբինատների ստեղծումը, որոնք կատարում են բնակելի տներ պատրաստելու և մոնտաժելու բոլոր աշխատանքները, թույլ տվեց համարյա երկու անգամ արագացնել բնակելի տների շահագործման հանձնումը և 1,5 անգամ իջեցնել 1 ԳՎ բնակելի տարածության արժեքը:

Թվարկած կազմակերպական ձևերը չեն սպառում շինարարության մեջ հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործումը բարելավելու բոլոր ուղիները: Առաջավոր շինարարական կազմակերպությունների փորձը անընդհատ նոր բան է մտցնում շինարարության ձևերի ու մեթոդների մեջ: Հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման կազմակերպական ձևերի հետևողական կատարելագործումը շինարարության ինդուստրացման մակարդակի հետագա բարձրացման կարևոր պայմանն է:

3. ԱՄՈՐՏԻԶԱՑԻՈՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ ՇԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հիմնական ֆոնդերի մաշումը: Հիմնական ֆոնդերն արտադրութեան պրոցեսում մաշվում են: Տարբերում են հիմնական ֆոնդերի ֆիզիկական և բարոյական մաշում:

Հիմնական ֆոնդերի ֆիզիկական մաշումը տեղի է ունենում ինչպես դրանց լարված աշխատանքի, այնպես էլ բնութեան ուժերի ազդեցության հետևանքով: Ֆիզիկական մաշվածքի համեմատ հիմնական ֆոնդերն աստիճանաբար կորցրնում են իրենց արժեքը և այն փոխանցում նոր ստեղծված արդյունքին:

Հիմնական ֆոնդերի բարոյական մաշումը կայանում է նրանում, որ մինչև իրենց ֆիզիկական լրիվ մաշումը դրանք որոշակիորեն արժեքազրկվում են: Դա տեղի է ունենում երկու պատճառով. 1) տեխնիկական առաջադիմության հետևանքով, երբ, օրինակ, հին տիպի մեքենայի փոխարեն, նրա շահագործման ընթացքում ստեղծվում է նոր, ավելի արտադրողական ու խնայողական մեքենա, 2) արտադրության ծախսերն իջնելու հետևանքով, երբ համամասն մեքենան կարող է ավելի էժան արտադրվել:

Սակավ արդյունավետ, հնացած տեխնիկան, ինչպես ցույց է տալիս փորձը, տնտեսապես շահավետ է փոխարինել նոր, ավելի կատարելագործված մեքենաներով ու մեխանիզմներով: Միևնույն ժամանակ բարոյական մաշվածքի ազդեցությունը կարող է հաղթահարվել կամ, համեմատյալ դեպք, զգալի չափով թուլացվել մեքենաների ու սարքավորումների մոդեռնացման, դրանց կատարելագործման միջոցով:

Հիմնական ֆոնդերի մաշվածությունը փոխհատուցելու համար կատարվում են ամորտիզացիոն հատկացումներ, որոնք կազմում են ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների հատուկ ամորտիզացիոն ֆոնդը: Ամորտիզացիոն հատկացումների մի մասը, պետության կողմից սահմանված չափով, ուղղվում է այն ծախսումները ֆինանսավորելու համար, որոնք կապված են հիմնական ֆոնդերի կապիտալ վերանորոգման և մոդեռնացման հետ: Ամորտի-

զացիոն ֆոնդի այդ մասը, հիմնական ֆոնդերի պահպանումն ապահովելու նպատակներով, առանձնացվում է համապատասխան ձեռնարկության կամ կազմակերպության լիակատար տնօրինության տակ, առանց որևէ այլ պահանջների վրա ծախսելու իրավունքի: Ամորտիզացիոն ֆոնդի մյուս մասը պլանային կարգով ուղղվում է կապիտալ ներդրումների ֆինանսավորման՝ շարքից դուրս եկած հիմնական ֆոնդերը նորերով փոխարինելու համար:

Ամորտիզացիոն ֆոնդի ճիշտ օգտագործումը պայմաններ է ստեղծում շինարարության հիմնական ֆոնդերը աշխատունակ վիճակում պահելու և դրանք սիստեմատիկորեն կատարելագործելու համար:

Ամորտիզացիոն հատկացումների չափը որոշելիս հաշվի է առնվում ոչ միայն հիմնական ֆոնդերի ֆիզիկական, այլև բարոյական մաշվածությունը:

Ամորտիզացիոն հատկացումների չափի որոշումը: Խիստ կարևոր է ճիշտ սահմանել ամորտիզացիոն հատկացումների չափերը, որպեսզի դրանք բավական լինեն հիմնական ֆոնդերի մաշվածքը վերականգնելու համար և միաժամանակ անհարկի չմեծացնեն այն արտադրանքի ինքնարժեքը, որտեղ դրանք մտցվում են որպես նրա տարրերից մեկը:

Ամորտիզացիոն հատկացումների մեծությունը հիմնականում կախված է հիմնական ֆոնդերի արժեքից և ծառայության ժամկետից: Այս կամ այն հիմնական ֆոնդերի տարեկան ամորտիզացիոն հատկացումների չափը որոշելու համար հաշվի է առնվում դրանց ձեռքբերելու (կառուցելու) սկզբնական արժեքը և կապիտալ վերանորոգման ու մոդեռնացման այն բոլոր ծախսումները, որոնք կատարվել են դրանց շահագործման ամբողջ ժամանակաշրջանում: Ելնելով դրանից, ամորտիզացիոն հատկացումների լրիվ գումարը հիմնական ֆոնդերի շահագործման ամբողջ ժամանակաշրջանում՝ մինչև դրանց ֆիզիկապես կամ բարոյապես շարքից դուրս գալը, որոշվում է հետևյալ բանաձևով:

Ա = ՍԱ + ԿՎ — ՄԱ, որտեղ

Ա-ամորտիզացիոն հատկացումների լրիվ գումարն է,
 ՍԱ-հիմնական ֆոնդերի սկզբնական արժեքը,
 ԿՎ-կապիտալ վերանորոգման և մոդեռնացման արժեքը,
 ՄԱ-հիմնական ֆոնդերի մնացորդային արժեքը շարքից
 դուրս գալու պահին (հանած դրանց լիկվիդացիոն ծախսերը):

Տարեկան ամորտիզացիոն հատկացումների չափը որոշելու համար ամորտիզացիոն հատկացումների լրիվ գումարը բաժանվում է հիմնական ֆոնդերի ծառայության տարիների սահմանված թվի վրա:

Քննարկենք ամորտիզացիոն հատկացումների չափը որոշելու մի օրինակ: Աշտարակային ամբարձիչի սկզբնական արժեքը, փոխադրելու և մոնտաժելու ծախսումների հետ կազմում է 184 հազ. ուրբ.: Նրա կապիտալ վերանորոգման ծախսումները, ներառյալ մոդեռնացումը, ծառայության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում կազմում են 4,2 հազ. ուրբ., իսկ ամբարձիչի լիկվիդացումից ստացված գումարը՝ 0,2 հազ. ուրբ.: Տվյալ օրինակում ամորտիզացիոն հատկացումների լրիվ գումարը կազմում է 18 հազ. ուրբ. + 4,2 հազ. ուրբ. = 22 հազ. ուրբ.:

Ամբարձիչի ամորտիզացիոն ժամանակաշրջանի ծառայության 10 տարվա ժամկետի դեպքում ամորտիզացիոն հատկացումների տարեկան գումարը կկազմի 2,2 հազ. ուրբ. (22 հազ. ուրբ. : 10):

Տարեկան ամորտիզացիոն հատկացումների չափը, արտահայտված տոկոսներով՝ հիմնական ֆոնդերի սկզբնական արժեքի նկատմամբ, կոչվում է ամորտիզացիայի նորմա:

Մեր օրինակում ամորտիզացիայի նորման հավասար կլինի

$$\frac{2,2 \text{ հազ. ուրբ.}}{18 \text{ հազ. ուրբ.}} \times 100 = 12 \text{ օ/0}$$

Ամորտիզացիոն հատկացումները կատարվում են ամիսը մեկ անգամ, հիշելով հիմնական ֆոնդերի ամորտիզացիայի սահմանված նորմաներից: Ֆոնդերի կատարված վերագնահատման տվյալների հիման վրա ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար մշակված են ամորտիզացիոն հատկացումների նոր նորմաներ, որոնք կկիրառվեն 1963 թ. հունվարի 1-ից:

Հիմնական ֆոնդերի տարբեր տեսակների ամորտիզացիայի նորմաները միատեսակ չեն, նրանք դիֆերենցվում են ըստ ծառայութայն ժամկետի և շահագործման պայմանների: Ամենամեծ բարդություն է ներկայացնում հիմնական ֆոնդերի ծառայութայն ժամկետների որոշումը: Դրանք կախված են շատ պատճառներից. շենքի ու կառուցումների (երկաթբետոնե, աղյուսե, փայտե և այլն) ամրությունից, մեքենաների ու սարքավորումների բեռնվածությունից աստիճանից, հերթափոխությունից (մեկ, երկու կամ երեք հերթի աշխատանք), ինչպես նաև մի շարք ուրիշ գործոններից: Ամորտիզացիոն հատկացումների նորմաները որոշելիս հաշվի են առնվում շահագործման նորմալ պայմանները: Հիմնական ֆոնդերի վատ խնամքը կամ ոչ ճիշտ շահագործումը հանգեցնում են դրանց ժամանակից շուտ շարքից դուրս գալուն և մեծ վնաս են հասցնում ժողովրդական տնտեսությանը:

Հիմնական ֆոնդերի պարապուրդների կամ վերանորոգման դեպքերում ամորտիզացիոն ֆոնդին կատարվող հատկացումները չեն դադարեցվում: Ամորտիզացիոն հատկացումների այդպիսի կարգը խթանում է հիմնական ֆոնդերի լավ օգտագործմանը, ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների ղեկավարներին ու կոլեկտիվներին պայքարի է մոբիլիզացնում պարապուրդները լրիվ վերացնելու և հիմնական ֆոնդերի վերանորոգման ժամկետները կրճատելու համար: Ամորտիզացիոն հատկացումներ չեն կատարվում միայն այն դեպքերում, երբ հիմնական ֆոնդերը գտնվում են պաշարի վիճակում (պահեստներում) կամ երբ նրանք կոնսերվացվել են:

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ-ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործման վճռական պայմանը տեխնիկական ճիշտ շահագործումն է, ժամանակին և որակյալ վերանորոգումը, որն ուղղված է դրանց պահպանմանը և մի շարք դեպքերում էլ արտադրողականության ավելացմանը:

Շինարարական կազմակերպությունների մեծ մասում, ինչպես և արդյունաբերության մեջ, ընդունված է հիմնական ֆոնդերի պլանային-նախազգուշական վերանորոգման սխստեմը: Այդ սխստեմն իրենից ներկայացնում է պլանային կարգով անցկացվող նախազգուշական բնույթի կազմակերպական-տեխնիկական միջոցառումների մի կոմպլեքս, որ ուղղված է մեքենաներն ու մյուս հիմնական ֆոնդերը աշխատունակ վիճակում պահելուն: Ժամանակին և բարձրորակ վերանորոգում կատարելը երկարացնում է դրանց ծառայության ժամկետները, վերացնում է սարքավորման պարապուրդները: Այդ բոլորը նպաստում է շինարարական կազմակերպությունների ավելի հաջող արտադրական գործունեությանը:

Պրոֆիլակտիկ միջոցառումների սխստեմում կարևոր միջոց է մեքենաների, շենքերի, կառուցվածքների և հիմնական այլ ֆոնդերի տեխնիկական զննումը, որ կատարվում է աշխատանքային հերթափոխերի ընդմիջումներին կամ հատուկ սահմանված ժամանակում (10, 20, 30 օրը մեկ անգամ և այլն), նպատակ ունենալով կանխել դրանց փշանալը կամ կոտրվելը:

Հիմնական ֆոնդերի բոլոր տեսակների համար սահմանված են վերանորոգման հետևյալ կատեգորիաները. ընթացիկ, միջին և կապիտալ վերանորոգում:

Ընթացիկ վերանորոգումը բնորոշվում է մանր աշխատանքներով, որոնք ապահովում են հիմնական ֆոնդերի պահպանումը նորմալ վիճակում մինչև դրանց պլանային վերանորոգումը (ներկում, մանր անսարքությունների վերացում, մաշված և հեշտ փոխվող գեոտալների փոխարինում նորերով և այլն): Ընթացիկ վերանորոգման ժամանակ մեքենաների և մեխանիզմների քանդում չի կատարվում:

Միջին վերանորոգումը պլանային-նախազգուշական վերանորոգման սխստեմի հիմնական տեսակն է: Այն նախատեսում է որոշակի ժամանակամիջոցից հետո (օրինակ, մեկ, երկու տարի) վերանորոգման աշխատանքների զգալի կոմպլեքս կատարել, միաժամանակ փոխելով կամ վերակառուցել-

լուվ առանձին մաշված դետալները և հանգույցները: Միջին վերանորոգման ժամանակ, որպես կանոն, պահանջվում է շինարարական մեքենաների և մեխանիզմների քանդում կատարել:

Կապիտալ վերանորոգումը նախատեսում է մեքենաների և մեխանիզմների լրիվ քանդում, հիմնական դետալների վերանորոգում, մաշված մասերի, հանգույցների ու ազդեցատների փոխարինում կամ վերականգնում, շենքերի գծով՝ առանձին կոնստրուկցիաների փոխարինում և այլն: Դա վերանորոգման առավել աշխատատար և երկարատև կատեգորիան է:

Աշխատանքների ժամկետները կրճատելու, որակը բարձրացնելու և արժեքն իջեցնելու նպատակով, փոխադրման ենթակա հիմնական ֆոնդերի միջին և կապիտալ վերանորոգումը մեծ մասամբ կատարվում են վերանորոգման մասնագիտացված գործարաններում և արհեստանոցներում:

Հիմնական ֆոնդերի ճիշտ կազմակերպված միջին և կապիտալ վերանորոգումներն անխուսափելիորեն ավելի կամ նվազ չափով զուգորդվում են դրանց կատարելագործման, մոդեռնացման հետ: Մաշված դետալները և հանգույցները լրիվ կամ մասամբ փոխարինելիս, շինարարական կազմակերպությունները պետք է ձգտեն, որ վերականգնումը կատարվի ավելի կատարյալ հիմքի վրա, այսինքն՝ վերանորոգված մեքենաները և մեխանիզմները ավելի արտադրողական լինեն, քան մինչև վերանորոգումն էին:

Հիմնական ֆոնդերի բոլոր տեսակի վերանորոգում կատարելիս, պետք է առավելագույն չափով կրճատել վերանորոգման ժամկետները, իջեցնել դրա արժեքը և բարձրացնել ուրակը: Վերանորոգման ժամկետների կրճատումը ժողովրդական մեծ նշանակություն ունի, քանի որ այն ավելացնում է հիմնական ֆոնդերի արտադրողական օգտագործման հնարավորությունները:

Շինարարական կազմակերպություններում կուտակվել է արտադրություննորարարների դրական մեծ փորձ, նորարարների, որոնք զգալի չափով գերազանցում են շինարարական

մեքենաների, մեխանիզմների և սարքավորումների շահագործման միջվերանորոգումների սահմանոված ժամկետները, դրանց նկատմամբ հոգատար խնամքի և տեխնիկական ճիշտ շահագործման միջոցով: Այդ փորձն արժանի է ամենալայն տարածման:

Շինարարության հիմնական ֆոնդերի վերանորոգմանն ուսցիոնալ կազմակերպումը պահանջում է անցկացնել որոշակի միջոցառումների սխեմով, որն իր մեջ բովանդակում է.

ա) վերանորոգման աշխատանքները ժամանակին (մինչև վերանորոգման սկիզբը) անհրաժեշտ փաստաթղթերով ապահովելը.

բ) վերանորոգում կազմակերպելու ամենից ավելի առաջադիմական մեթոդների առավելագույն օգտագործումը (օրինակ, ագրեգատային-հանգուցային մեթոդը, երբ մաշված մասերի ու հանգուցների փոխարինումը կատարվում է հաճախ անմիջապես մեքենայի աշխատատեղում, համանման, նախապես պատրաստված օրինակներով).

գ) վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի, դետալների ու հանգուցների կենտրոնացված պատրաստումը մասնագիտացված գործարաններում՝ յուրաքանչյուր վերանորոգման գործարանում և արհեստանոցում դրանց անհատական պատրաստման փոխարեն.

դ) գործարանների մասնագիտացումը մեքենաների ու որոշ տեսակների վերանորոգում կատարելու համար (օրինակ, էքսկավատորների, ամբարձիչների, ավտոմեքենաների վերանորոգման գործարաններ):

Այդ միջոցառումներն էժանացնում ու բարելավում են վերանորոգումը, թույլ են տալիս լայնորեն մեքենայացնել վերանորոգման աշխատանքները: Օրինակ, շինարարական մեքենաների ու մեխանիզմների կենտրոնացումը մասնագիտացված ձևով կազմակերպումը և ագրեգատ-հանգուցային վերանորոգման կիրառումը շինարարական շատ կազմակերպություններին հնարավորություններ տվեցին նորոգման մեքենաների պարասպորտները կրճատել 3—4 անգամ և վերանորոգման ինքնարժեքն իջեցնել զրեթե կրկու անգամ

1960 թվականին վերանորոգման ձեռնարկությունները շինարարական մեքենաների կապիտալ վերանորոգման պահանջները բավարարեցին ոչ ավելի, քան 10—15 տոկոսով: Ընդ որում ոչ բոլոր ժողտնտխորհներն ունեին իրենց մասնագիտացված վերանորոգման ձեռնարկությունները, որի հետևվանքով շինարարական կազմակերպությունները մեծ կորուստներ կրեցին, որոնք կապված են խոշոր մեքենաները ուրիշ ժողտնտխորհների հեռավոր գործարանները վերանորոգման ուղարկելու հետ:

ՍՄԿՊ Կենտկոմի հուլիսյան (1960 թ.) պլենումը անհրաժեշտ համարեց ուժեղացնել ուշադրությունը հիմնական ֆոնդերի պահպանման նկատմամբ, վերացնել պլանային-նախազգուշական վերանորոգումների կազմակերպման, մեքենաների ու մեխանիզմների գոյություն ունեցող կարգը պահատամասերով ապահովելու գործում եղած լուրջ թերությունները:

5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Արտադրական կարողության հասկացությունը: Շինարարական կազմակերպությունների արտադրական կարողությունը որոշվում է շինմոնտաժային աշխատանքների առավելագույն հնարավոր ծավալով, որը կարող է կատարվել որոշակի ժամանակամիջոցում (սովորաբար մեկ տարում) շինարարական տեխնիկայի առավել լրիվ օգտագործման, արտադրության առաջավոր տեխնոլոգիայի կիրառման և չախատանքի կազմակերպման պայմաններում:

Արտադրական կարողությունն արտահայտվում է շինմոնտաժային աշխատանքների ծավալը բնութագրող բնաձև կամ դրամական ցուցանիշներով:

Օրինակ, շինարարական տրեստի արտադրական կարողության բնաձև ցուցանիշներն են՝ հողային, բետոնային, երկաթբետոնային, վերջնամշակման և այլ աշխատանքների ծավալը, որը կարող է կատարվել պլանային ժամանակաշրջանում, շինարարական տեխնիկայի ու բանվորների սրոշա-

կի քանակով. մոնտաժային կամ այլ մասնագիտացված տրեստի համար՝ համապատասխանաբար, մոնտաժված կոնստրուկցիաների քանակը, գցված երկաթուղային ճանապարհները, մագիստրալ խողովակաշարքերը, փլուծմտորերով, և այլն:

Մի շարք դեպքերում, առանձին շինարարական կազմակերպությունների արտադրական կարողությունները որոշելիս կիրառվում է միայն շինարարական արտադրանքի դրամական գնահատոտմը՝ նախահաշվային գներով:

Արտադրական կարողության մեծությունը չի կարելի հասկանալ որպես մեկընդմիջտ որոշված մի ինչ-որ սահման: Այդ մեծությունը փոփոխական է: Շինարարության տեխնիկական առկարդակը բարձրանալուն, կադրերի որակավորման աճին զուգընթաց բարելավվում է հիմնական ֆոնդերի օգտագործումը և, հետևաբար, աճում է նաև շինարարական տեղամասի, վարչության, տրեստի արտադրական կարողությունը:

Շինարարական կազմակերպության արտադրական կարողության մեծությունը կախված է կատարվող աշխատանքների կառուցվածքից, շինարարական մեքենաների ու սարքավորման քանակից ու կարողությունից, արտադրական ֆոնդերի օգտագործման սահմանված ցուցանիշներից, աշխատանքի հերթափոխությունների թվից, ինչպես նաև բանվորների թվից, նրանց աշխատանքի ժամանակից և արտադրողականությունից: Շինարարական կազմակերպության արտադրական կարողության վրա էական ազդեցություն է թողնում շրջանային կամ սեփական արտադրական բազայի, շինարար կադրերի համար բնակելի ֆոնդի առկայությունը կամ բացակայությունը:

Շինարարական կազմակերպության արտադրական կարողությունը բնորոշող կարևոր ցուցանիշ է հիմնական արտադրության մեջ զբաղված բանվորների մեքենազինվածությունը: Մեքենազինվածությունը որոշվում է միջին հաշվով մեկ բանվորին բաժին ընկնող շինարարական մեքենաների ու մեխանիզմների արժեքով: Մեքենազինվածության ցուցանիշի տնտեսական նշանակությունն այն է, որ նա բացահայտում է շինարարական կազմակերպությունների աշխատանք-

քի արտադրողականությունը բարձրացնելու հնարավորությունները:

Օրինակ, հիմնական արտադրության մեջ տարեկան միջին հաշվով 2500 բանվոր ունեցող կապալառու կազմակերպության տրամադրության տակ կա 2 մլն ռուբ. արժողությամբ շինարարական մեքենաների ու մեխանիզմների պարկ: Մեկ բանվորի մեքենազինվածության ցուցանիշը տվյալ դեպքում կկազմի.

$$\frac{2 \text{ մլն. ռուբ.}}{2500} = 800 \text{ ռուբ.}$$

Պետք է նշել, որ շինարարության էկոնոմիկայի վերաբերյալ շատ աշխատությունների հեղինակներ սխալ մեկնաբանում են տալիս շինարարության մեջ մեքենազինվածության ցուցանիշին, այն որոշելով որպես շինարարական կազմակերպության հիմնական արտադրական ֆոնդերի արժեքի հարաբերությունը նրա կողմից կատարվող շինմոնտաժային աշխատանքների ծավալին: Հաշվարկման այդպիսի մեթոդի դեպքում ստացվում է, որ մեքենաներով միատեսակ հագեցված, վատ աշխատող շինարարական կազմակերպությունը միշտ մեքենազինվածության ավելի բարձր ցուցանիշ կունենա, քան լավ աշխատող, աշխատանքների մեծ ծավալ կատարող շինարարական կազմակերպությունը:

Արտադրական պրոցեսների անընդհատ կատարելագործումը, աշխատանքի և արտադրության կազմակերպման առաջավոր մեթոդների լայն տարածման անսահմանափակ հրնարավորությունները պայմաններ են ստեղծում շինարարական կազմակերպությունների արտադրական կարողությունների օգտագործումը սիստեմատիկորեն բարելավելու համար: Դա նրանց թույլ է տալիս, հիմնական ֆոնդերի միատեսակ քանակի դեպքում, տարեցտարի ավելի ու ավելի մեծ ծավալի շինմոնտաժային աշխատանքներ կատարել:

Արտադրական կարողության հաշվարկը հիմք է ծառայում շինմոնտաժային կազմակերպություններին արտադրական պլաններ սահմանելու համար: Ուստի արտադրական կարողությունների սխալ որոշումը կարող է հասցնել պլանների ցածր ցուցանիշի սահմանման, զոյություն ունեցող վեքենաների ու մեխանիզմների ոչ լրիվ օգտագործման և աշխատանքի որակական ցուցանիշների վատացման: Անհանդուրժելի է նաև շինարարական կազմակերպության արտադրական կարողության չափազանցումը, որովհետև դա կարող է

հասցնել արտադրական ծրագրի ավելացմանը, աշխատանքների պլանի, ձեռնարկությունների, շենքերի ու կառուցումների գործարկման սահմանված ժամկետների ձախողմանը:

Արտադրական կարողության պլանավորման ժամանակ նախատեսվում են «նեղ տեղերը» (օրինակ՝ էքսկավատորների և ավտոմեքենաների առկա պարկի միջև, ստացվող կոնստրուկցիաների ծավալի և առկա շինարարական ամբարձիչների քանակի միջև եղած անհամապատասխանությունը) վերացնելու միջոցառումներ, ինչպես նաև հաշվի են առնվում հիմնական ֆոնդերի ընդլայնման, արտադրության տեխնիկական կատարելագործման, հիմնական ֆոնդերի օգտագործման տեխնիկական նորմաների փոփոխման, արտադրության ռացիոնալացման, առաջավոր փորձի տարածման և արմատավորման ուղղությամբ պլանում նախատեսված միջոցառումներ: Վերջին գործոնը հատկապես կարևոր նշանակություն ունի, քանի որ առաջավոր շինարար բանվորները զգալի չափով գերազանցում են արտադրական ֆոնդերի օգտագործման սահմանված ցուցանիշները:

Շինարարական կազմակերպությունների արտադրական կարողության ընդլայնումը ձեռք է բերվում ամենից առաջ գոյություն ունեցող կարողությունների ավելացման միջոցով, շնորհիվ այն բանի, որ մոդեռնացվում են մեքենաներն սարքավորումները, բարելավվում է դրանց օգտագործումը, կատարելագործվում են արտադրության տեխնոլոգիան կազմակերպումը:

Արտադրական կարողության օգտագործման ցուցանիշները: Արտադրական կարողության օգտագործումը զնահատեսությու համար շինարարության մեջ կիրառվում են մի շարք ցուցանիշներ: Առավել կարևոր նշանակություն ունեն շինարարական մեքենաների օգտագործման պործակիցներն ըստ աշխատանքի ժամանակի ու արտադրողականության:

Շինարարական մեքենաների օգտագործման գործակիցն ըստ աշխատանքի ժամանակի որոշվում է միատեսակ (միատիպ) մեքենաների, մեխանիզմների, ազդեցատների յուրաքանչյուր խմբի կամ առանձին վերցրած մեքենաների ու մե-

խանիզմների համար՝ դրանց փաստացի աշխատանքի մեքենա-ժամերը արտադրական կարողության հաշվարկման ժամանակ սահմանված աշխատանքի ժամերի վրա բաժանելու միջոցով:

Օրինակ, կառուցում աշխատում են տեխնիկապես սարքին 50 ավտոինքնաթիռներ, որոնք տվյալ ամսվա ընթացքում կարող են օգտագործվել 24 աշխատանքային օր (հաշվելով հանգստի օրերը և պրոֆիլակտիկ վերանորոգումը): Երկհերթ աշխատանքի ու յոթժամյա աշխատանքային օրվա դեպքում, ավտոմեքենաների աշխատանքի մեքենա-ժամերի պլանային քանակը ամսվա ընթացքում կկազմի 16800 ($50 \times 24 \times 14$): Ավտոինքնաթիռը հուլիս ամսին փաստորեն աշխատել են 15100 մեքենա-ժամ (շահագործման ընթացքում ջարդվածքներ, պարապուրդներ ունենալու հետևանքով և այլն): Տվյալ դեպքում ավտոմեքենաների փաստացի օգտագործման գործակիցն ըստ ժամանակի կկազմի 0,9 (15100:16800):

Շինարարական մեքենաների օգտագործման գործակիցն ըստ արտադրողականության որոշվում է նույն կարգով, ինչպես ըստ ժամանակի օգտագործման գործակիցը, միայն այն տարբերություններով, որ նրա հաշվարկման համար հիմք է ընդունվում մեքենաների ու մեխանիզմների արտադրանքը՝ բրնձե արտահայտություններ աշխատաժամանակի միավորի ընթացքում: Որոշակի ժամանակամիջոցում փաստացի արտադրանքը բաժանվում է տվյալ արտադրանքի կամ աշխատանքի պլանային քանակի վրա: Տվյալ դեպքում արտադրանքը չափելու միավոր են ծառայում. էքսկավատորներինը՝ ժամվա, հերթափոխի, ամսվա կամ տարվա ընթացքում հանած հողի քանակը (խմ), բետոնախառնիչներինը՝ պատրաստված բետոնի քանակը (խմ), շարժական էլեկտրակայաններինը՝ արտադրված էլեկտրաէներգիայի քանակը (կվտ—ժ) և այլն:

Շինարարական կազմակերպության արտադրական կարողության օգտագործումը պլանավորելու և գնահատելու ժամանակ պետք է ելնել գոյություն ունեցող շինարարական տեխնիկայի ըստ ժամանակի և արտադրողականության օգտագործման օպտիմալ ցուցանիշներից:

Արտադրական կարողությունների օգտագործումը գնա-

հատեւելու ժամանակ կարևոր է ապահովել համապատասխան շինարարական մեքենաների, մեխանիզմների և ագրեգատների աշխատածամանակի. ֆոնդի ճիշտ հաշվառումը: Հայտնի է, որ մեքենաները և մեխանիզմները կառույցներում աշխատում են ոչ կլոր տարին և ոչ էլ օրական լրիվ 24 ժամ: Ուստի ամենից առաջ որոշվում է տվյալ շինարարական կազմակերպութունում դրանց օգտագործման ժամանակի պլանային ֆոնդը: Ժամանակի պլանային ֆոնդը հաշվելիս նկատի է առնվում նաև, որ որոշ ժամանակ է պահանջվում շինարարական մեքենաների վերանորոգման համար: Այն ժամանակը, որը տեխնիկայի տվյալ մակարդակի, ճիշտ շահագործման ու շինարարական մեքենաների ուշադիր խնամքի պայմաններում պահանջվում է դրանց պլանային-նախազգուշական վերանորոգման համար, պետք է բացառվի մեքենայի աշխատանքի պլանային ֆոնդից:

Այսպիսով, եթե օրացուցային ժամանակից հանենք շինարարական մեքենաների օգտագործման բոլոր պլանային ընդհատումները, ապա մնացած ժամանակն էլ կկազմի նրա աշխատանքի պլանային տևողութունը: Արտապլանային պարապուրդները արտադրական կարողութունը հաշվարկելիս հաշվի չեն առնվում:

Եթե, օրինակ, աշխատանքային օրերի քանակը տարվա ընթացքում ավասար է 307 (52 հանդստյան և 6 տոնական օրեր հաշվից հանվում են) և կառույցում սահմանվել է երկու հերթի աշխատանքի ուժիմ՝ մեկ հերթափոխում յոթ ժամ՝ սովորական աշխատանքային օրերում, 6 ժամ՝ նախահանդստյան ու նախատոնական օրերում (իսկ այդպիսի օրեր հաշվվում է 55), ապա մեկ մեքենայի ժամանակի պլանային ֆոնդը տարվա ընթացքում կկազմի 4188 ժամ ($7 \times 2 \times 252 + 55 \times 6 \times 2$): Եթե մեքենայի պլանային-նախազգուշական վերանորոգման ժամանակը կազմում է 5 տոկոս, ապա նրա աշխատանքի ժամանակի պլանային ֆոնդը կկազմի մոտավորապես 4000 ժամ:

Շինարարական մեքենաների ու սարքավորման օգտագործումը բնութագրելու համար կիրառվում է նաև հերթափոխութայն գործակիցը: Հերթափոխութայն գործակիցը բնութագրում է մեքենաների ու սարքավորման աշխատանքի

հերթափոխությունների միջին թիվը օրվա ընթացքում: Հերթափոխության գործակցի բարձրացումը վկայում է տեխնիկայի ավելի լրիվ օգտագործման մասին: Այդ գործակիցը որոշվում է աշխատած մեքենա-հերթափոխի ընդհանուր քանակը ամենամեծ հերթափոխում աշխատած մեքենա-հերթափոխի քանակի վրա բաժանելու միջոցով: Շինարարական կազմակերպությունները պետք է հասնեն հերթափոխության գործակցի մեծացմանը, թույլ չտալով մեքենաների ու մեխանիզմների անարտադրողական պարապուրդներ:

Ենթադրենք, որ շինարարական հրապարակում կան 20 էքսկավատոր, որոնցից առաջին հերթափոխությունում աշխատել են 20, երկրորդում՝ 15 և երրորդում՝ 5-ը: Տվյալ օրինակում էքսկավատորների հերթափոխության գործակիցը կկազմի.

$$\frac{20 + 15 + 5}{20} = 2.$$

Շինարարության մեջ կիրառում են նաև հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման հետևյալ գումարային, արժեքային ցուցանիշները.

ա) մեկ ուրբի արտադրական ֆոնդերի դիմաց կատարած շինմոնտաժային աշխատանքները.

բ) կատարված մեկ ուրբու շինմոնտաժային աշխատանքների դիմաց հիմնական արտադրական ֆոնդերի շափը:

Շինարարության մեջ հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործումը բարելավելու մասին վկայում են հետևյալ տվյալները.

Ց ու ց ա ն ի շ ն ե ր	1955 թ.	1958 թ.	1960 թ.
Մեկ ուրբու արտադրական ֆոնդերի դիմաց շինմոնտաժային աշխատանքների ծավալը (ուրբիներով)	2,51	2,78	3,50
Մեկ ուրբու արտադրական ֆոնդերի դիմաց շինմոնտաժային աշխատանքների ծավալի աճը (տոկոսներով)	100	111	139

Առաջավոր շինարարական կազմակերպությունները, արտոնք լայնորեն կիրառում են շինարարության ինդուստրիալ մեթոդներ, արտադրական կարողությունների օգտագործման ղեկավարումն ավելի բարձր ցուցանիշներ ունեն: Օրինակ, էքսպլոատորների տարեկան արտադրանքը Գլխամասշինի, Գլխվեներինգրադշինի և մի շարք շինարարական այլ խոշոր կազմակերպություններում 30—40 և ավելի տոկոսով բարձր է երկրում գոյություն ունեցող միջինից:

Ներկայումս շինարարական կազմակերպությունների, շինանյութերի և անտառամշակման արդյունաբերության ձեռնարկությունների առաջավոր մեխանիզատորների կողով, որը հավանություն է գտել ՍՄԿՊ Կենտկոմի, ՍՍՌՍ Մինիստրների սովետի և ՀԱՄԿԽ-ի կողմից, ամբողջ երկրում մրցություն է ծավալվում տեխնիկական լավ օգտագործելու և յոթնամյակի առաջադրանքները շուտ կատարելու համար:

Առաջավոր շինարարական կազմակերպությունների, արտադրական լավագույն մեխանիզատորների-նորարարների փորձի լայն արմատավորումը շինարարության արտադրական կարողություններն ընդարձակելու և լավ օգտագործելու խոշորագույն ռեզերվ է ծառայում:

6. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կապիտալ ներդրումների հսկայական մասշտաբների պայմաններում նյութական ռեսուրսների տնտեսումը շինարարության մեջ կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն է ստանում: Դրանց ծախսումների իջեցումը մեկ տոկոսով ամբողջ երկրում կտա տարեկան ավելի քան 100 մլն. ուրլու խնայողություն և թույլ կտա տնտեսված նյութերից կուսուցել բազմաթիվ շինքեր ու կառուցվածքներ:

Շատ կառույցներում դեռևս կան անտնտեսավարության, նյութերի պահպանման և ծախսման նկատմամբ անփութ փերաբերումների փաստեր: Ն. Ս. Խրուշչովը պարտիայի XXII համագումարում ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվության մեջ

ստամ էր. «Պետք է անխնա պատերազմ հայտարարել Նոմքի, նյութերի, էլեկտրաէներգիայի օգտագործման ասպարեզում եղած շոսյությանը... Խնայողությունը մեծ ու փոքր գործերում, բնական հարստությունների և նյութական արժեքների նպատակահարմար օգտագործումը պետք է բարձրացվեն պետական քաղաքականության մակարդակին»¹:

Շինարարական կազմակերպություններն ունեն նյութական ռեսուրսների տնտեսման խոշոր ռեզերվներ, որոնց անհրաժեշտ է գործողության մեջ դնել:

Նյութական ռեսուրսների տնտեսման հիմնական ուղղությունները: նյութական ռեսուրսների տնտեսման համար մրդվող պայքարը ընթանում է հետևյալ ուղղություններով. ա) հավաքովի կոնստրուկցիաների ու դետալների, առաջին հերթին երկաթբետոնե կոնստրուկցիաների ու դետալների հետագա լայն կիրառում, բ) նոր արդյունավետ նյութերի առավելագույն արմատավորում, գ) նախագծային լուծումների և շինարարական արտադրության տեխնոլոգիայի կատարելագործում, դ) նյութական ռեսուրսների ծախսումների և պաշարների ճիշտ նորմավորում, շինանյութերի ծախսման առաջադիմական նորմաների արմատավորում:

Հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների ու դետալների կիրառումը շինարարության մեջ նյութերի տնտեսման կարևորագույն ռեզերվներից մեկն է:

Շինարարության մեջ երկաթբետոնե կոնստրուկցիաների, հատկապես խոշոր շահերի կոնստրուկցիաների կիրառման փորձը ցույց է տալիս, որ շինարարության զգալի արագացումից ու կենդանի աշխատանքի ծախսումները կրճատելուց բացի, դրանք թույլ են տալիս յուրաքանչյուր միլիոն ռուբլու շինմոնտաժային կատարված աշխատանքների հաշվով տնտեսել մինչև 10 տոկոս մետաղ, որն ամբողջ երկրում կազմում է տարեկան մոտ մեկ միլիոն տոննա:

Առանձնապես նշանակալի տնտեսական արդյունք է տալիս շինարարության մեջ նախապես լարված և բարակապատ կոնստրուկցիաների,

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 70, 71:

ինչպես նաև թեթև բետոնից պատրաստված շինվածքների կկառուվու։ Դրանք 40—50 տոկոսով քիչ մետաղ են պահանջում, քան սովորական երկաթբետոնե կոնստրուկցիաները, և էպպես թեթևացնում են շենքերի բաշը։ Երկաթբետոնի մեջ սառը ձգած լարից հոակցած ցանցերի օգտագործումը թույլ է տալիս մինչև 30—40 տոկոսով տնտեսել մետաղի զվանվածքը։

Այսպես, «Չելյաբինսկտալուրգշին» տրեստը պատրաստեց և 1960 թ. շինարարության մեջ օգտագործեց 52 հազ. խմ նախապես լարված կոնստրուկցիա, որը թույլ տվեց տնտեսել ավելի քան 460 տ ամրանային պողպատ։ «Չերեպովեցմետալուրգշին» տրեստը շինարարության պատմության մեջ առաջին անգամ Չերեպովեցկու մետալուրգիական գործարանում հավաքովի երկաթբետոնից կառուցեց ածխային աշտարակ։ Անցյալում այդպիսի աշտարակները կառուցվում էին միաձույլ երկաթբետոնից։ Այդ աշտարակի կառուցման ժամանակ տրեստը տնտեսեց 860 խմ բետոն և 138 տ ամրանային պողպատ։

Կոնստրուկցիաների առաջադիմական տեսակների կիրառումը տալիս է ոչ միայն մետաղի ծախսի իջեցում, այլև շինարարական մյուս նյութերի տնտեսում։ Օրինակ, բարակապատ կոնստրուկցիաների կիրառումը ապահովում է ցեմենտի և շեղոք նյութերի տնտեսում մինչև 40 տոկոսով, իսկ լարված-ամրանավորված կոնստրուկցիաները՝ մինչև 15—20 տոկոս։ Խնդիրն այն է, որ ավելի համարձակ և ավելի մեծ մասշտաբներով շինարարության մեջ կիրառել նորագույն, առավել խնայողական երկաթբետոնե կոնստրուկցիաներ։

Շինարարության մեջ նյութական ռեսուրսների զգալի տնտեսում է ձեռք բերվում հավաքովի երկաթբետոնի մեջ սովորաբար կիրառվող խոշոր ավազի և խճաքարերի փոխարեն թեթև լցանյութերի (կերամզիտ, խարամային պեմլու, ազլոպորիտ և այլն) կիրառումով։ Թեթև լցանյութերի մասսայական պատրաստումը ճիշտ կազմակերպելու դեպքում, դրանք հնարավորություն են տալիս 2—3 անգամ պակասեցնել համապատասխան նյութական ռեսուրսների ծախսումները։ Յոթնամյա պլանով նախատեսված է արհեստական թեթև լցանյութերի արտադրությունն ավելացնել 19 անգամ։

Նոր արդյունավետ նյութերի արմատավորումը շինարարության մեջ նյութերի տնտեսման լրացուցիչ հնարավորու-

թյունն է բացում: Ներկայումս շինարարության մեջ կիրառվում են այնպիսի խնայողական նյութեր, ինչպես փոփրագագաբետոնը, հանքային բաժբակը, ֆիբրոլիտը, ծակոտկեն բերամիկան, ծակոտկեն բետոնը, պոլիմերային նյութերը, պերլիտը, վերամիկուլիտը և այլն: Շինարարական նոր նյութերի ցանկը տարեցտարի ընդարձակվում է:

Թվարկած նյութերի արժեքավոր հատկություններն են՝ դրանց պատրաստման ավելի ցածր արժեքը, թեթև քաշը և մասսայական արտադրությունը կազմակերպելու համեմատաբար ոչ-բարդ պրոցեսը: Շինարարության մեջ յոթնամյա պլանով նախատեսված միայն պոլիմերային նյութերից խողովակների (մոտ 24 հազ. տ) և պլաստմասսաներից պատրաստված սանիտարա-տեխնիկական սարքավորումների (մինչև 38 հազ. տ) կիրառումը հնարավորություն կտա տնտեսել մոտավորապես 600 հազ. տ սև և գունավոր մետաղ: Ըզգալի տնտեսում է տալիս (մինչև 30 տոկոս և ավելի) շինարարության մեջ սովորական փայտե շինվածքների փոխարեն, փայտյա սոսնձված կոնստրուկցիաների և դետալների կիրառումը:

Տնտեսական մեծ արդյունք է տալիս շինարարության մեջ, առանձնապես երկրի հարավային շրջաններում, այնպիսի տեղական նյութերի կիրառումը, ինչպես եղեգնը, խեցաքարը, տուֆը և այլն: Այդ նյութերի պաշարները մեր երկրում անըսպառ են: Շինարարության նախագծման և անմիջական իրագործման ժամանակ անհրաժեշտ է առավելագույն չափով օգտագործել տեղական նյութեր, շենքերի փայտյա մասերի փոխարեն լայնորեն կիրառել գիպսից, գիպսախարամից և այլ նյութերից պատրաստված դետալներ:

Դրա հետ միասին պետք է նշել, որ նոր բարձր արդյունավետ նյութերը դեռևս չափազանց դանդաղ են տարածվում շինարարության մեջ: Ժողովրդական տնտեսության արագ զարգացման շահերը պահանջում են նոր առավել խնայողական շինանյութերի ամենալայն արմատավորում:

Նախագծային լուծումների և շինարարական արտադրության տեխնոլոգիայի կատարելագործումը, արագացնելով

շինարարութեան ժամկետները և իջեցնելով նրա արժեքը, դրա հետ միասին ապահովում է նյութական ռեսուրսները՝ ավելի ռացիոնալ օգտագործում: Շենքեր և կառուցվածքներ նախագծելիս ամենից առաջ պետք է խստորեն պահպանվի մետաղի, անտառանյութի և ցեմենտի առավելագույն տնտեսման պահանջը: Նախագծային լուծումների ցածր որակը, նախագրծերում, առանձնապես տիպային նախագծերում սխալներն ու ավելորդութիւնները նյութական մեծ վնաս են հասցնում պետութեանը:

Քե նյութական ռեսուրսների տնտեսման մեջ որքան մեծ նշանակութիւն ունի շենքերի ու կառուցվածքների նախագծերի որակի բարձրացումը, վկայում է այսպիսի օրինակը: Եթե շենքերի ու կառուցվածքների էրնստրուկցիաների քաշը նախագծերում իջեցնել թեկուզ և մեկ տոկոսով, ապա դա թույլ կտա տարեկան տնտեսել մի քանի միլիոն տոննա շինանյութ:

Էլեկտրակայանների շինարարութեան միջնարարութեան «Ջերմակլեկտրանախագիծ» նախագծային ինստիտուտի աշխատողները, մտնելով մետաղ տնտեսելու համար մղվող սոցիալիստական մրցութեան մեջ, պարտավորվեցին ավելի առաջադիմական տեխնիկական լուծումների, հավաքովի երկաթբետոնի կիրառման ծավալն ավելացնելու, մադիստրալ ջերմացանցերի շինարարութեան մեջ խողովակների նոր տեսակների արմատավորման և այլ միջոցառումների միջոցով էներգետիկ շինարարութեան օրյեկտների գծով, որոնք նախադիմում են այդ ինստիտուտի կողմից, 1960—1965 թվականներին սև մետաղների ծախսումը կրճատել մոտավորապես 500 հազ. տ:

Նյութական ռեսուրսների տնտեսման մեծ ռեզերվներ կարող են գործի դրվել շինարարական արտադրութեան տեխնոլոգիան ու կազմակերպումը կատարելագործելու միջոցով: Այդ ամենից առաջ նշանակում է, որ շինարարական պրոցեսները պետք է իրագործվեն աշխատանքների կատարման գործող կանոններին խիստ համապատասխան (աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականութեան, նախագծային սահմաններին դրանց համապատասխանութեան, նյութերի ծախսման և տեսակայնութեան սահմանված նորմաների պահպանման, աշխատանքների որակի տեսակետից և այլն): Սրանակ, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներով կառույց-

ման ժամանակ կարևոր է ապահովել հավաքովի կոնստրուկցիաների պատրաստի տարրերի փոխադրումը մինչև մոնտաժային ամբարձիչների գործողութայան գոտին և ճիշտ շարումը պարսակներով, որը բացառում է դրանց ջարդումը և ձևափոխումը, ինչպես նաև կոնստրուկցիաների ճիշտ հաջորդական մոնտաժումը, պահպանելով դրանց ամրացման համար պահանջվող նյութերի ծախսման սահմանված նորմաները: Շինարարութային սահմանված տեխնոլոգիայի խախտումը, որպես կանոն, հասցնում է աշխատանքների որակի իջեցման և շինանյութերի գերաժախսի:

Առաջավոր շինարարական կազմակերպությունները նյութերի ծախսման զգալի տնտեսում են ձեռք բերում աշխատանքների կատարման տեխնոլոգիան սխտեմատիկաբար կատարելագործելու, շինարարական կոնստրուկցիաների գործարանային պատրաստման մակարդակը բարձրացնելու միջոցով:

Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և այլ քաղաքների կառույցներում վերջին ժամանակներս լայն տարածում է ստացել բնակելի տները մոնտաժելիս պատրաստի ֆակտորված (արդյունաբերական ձեռնարկություններում քերամիկական կամ մոզայիկ սալերով նախօրոք երեսպատված) երկաթբետոնե կոնստրուկցիաների, դռների և լուսամուտների նախապես ներկված և ապակեպատված բլոկների և փեղկերի, սվաղված պանելների և միջնորմների կիրառումը: Նշված և այլ աշխատանքների կատարումը գործարանային պայմաններում շինանյութերի մեծ խնայողություն է տալիս, շինարարական հրապարակներում դրանց կատարման համեմատությամբ:

Մեր երկրում սխտեմատիկորեն ուսումնասիրվում է առաջավոր կազմակերպությունների փորձը շինանյութերի տնտեսման ասպարեզում: Այժմ ուսումնասիրման արդյունքներն ընդհանրացվում են շինարարական բոլոր կազմակերպությունների համար պարտադիր՝ շինարարության մեջ մետաղը, անտառանյութը, ցեմենտը և այլ նյութերը խնայողաբար ծախսելու տեխնիկական կանոններում:

Նյութական ռեսուրսների ծախսման նորմավորումը: Նյութական ռեսուրսների ծախսի ու պաշարների ճիշտ նորմավորումը շրջանառու արտադրական ֆոնդերի խնայողաբար օգ-

տաքործման և ռացիոնալ կազմավորման կարևոր պայման է:

Նորմավորումն իրագործվում է որոշակի սխեմամով, տեխնիկա-տնտեսական հաշվարկների և առաջավոր շինարարական կազմակերպությունների աշխատանքի փորձի հիման վրա: Շինարարության, ինչպես և արդյունաբերության մեջ կատարվում է նյութական ռեսուրսների ծախսի և պաշարների անջատ նորմավորում:

Նյութական ռեսուրսների ծախսի և պաշարների նորմավորումը հնարավորություն է տալիս ճիշտ որոշել շրջանառու ֆոնդերի պահանջը և բազա է հանդիսանում շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական մատակարարման պլանները մշակելու համար:

Արտադրական պլանավորման և նյութերի ծախսման նրկատամբ վերահսկողության համար շինարարական կազմակերպություններում կիրառվում են նյութերի ծախսման արտադրական նորմաներ: Այդ նորմաները մշակվում են շինանյութերի ծախսման տիպային արտադրական նորմաների հիման վրա, ՍՍՌՄ պետշինի կողմից հաստատված «Շինարարական արտադրության մեջ նյութերի ծախսման տեխնիկական նորմավորման մեթոդական ցուցումների» համապատասխան:

Նյութերի ծախսման նորմաները պետք է լինեն առաջադիմական, այսինքն՝ կողմնորոշվեն դեպի առաջավոր փորձը, գիտության ու տեխնիկայի նվաճումները և ապահովեն նյութական ռեսուրսների տնտեսում: Առաջադիմական նորմաները ետ մնացող շինարարական կազմակերպությունների կողեկտիվներին մոքիլիզացնում են պահպանելու շինարարության մեջ սահմանված հասարակականորեն անհրաժեշտ նյութական ծախսումները, որոնք դրված են նորմաների հիմքում: Դրա հետ միասին առաջադիմական նորմաները նպաստում են շինարարության մեջ գործարանային պատրաստման հավաքովի դետալների ու կոնստրուկցիաների առավելագույն օգտագործմանը, քանի որ դրանց կիրառումը լայն

հնարավորութիւններ է բացում նյութական ռեսուրսները տնտեսելու համար:

Նյութական ռեսուրսների ծախսման նորմաները պետք է լինեն նաև ռեալ, տեխնիկապէս հիմնավորված, այսինքն, դրանք պետք է հաշվի առնեն տվյալ շինարարական կազմակերպութեան կոնկրետ պայմանները՝ նրա տեխնիկական հագեցվածութիւնը, շինանյութերի որակը և այլն: Տեխնիկապէս հիմնավորված նորմաները որոշում են շինմոնետաժային աշխատանքների տարբեր տեսակների միավորի վրա նյութական ռեսուրսների ծախսման մեծութիւնը:

Շինանյութերի ծախսման արտադրական նորմաները մրշակելիս օգտագործում են տարբեր մեթոդներ, փորձնա-արտադրական, փորձնա-լաբորատորային, հաշվարկա-վերլուծական: Շատ դեպքերում նորմաները սահմանվում են տարբեր մեթոդներով ստացված արդյունքների համադրման հիման վրա:

Փորձնա-արտադրական մեթոդը հիմնականում կիրառվում է այն նյութերի ծախսը նորմավորելիս, որոնք ունեն դժվար վերացվող կորուստներ: Այդ նյութերին վերաբերում են. անկանոն ձևի քարերը, թափվող և փոշեծէկ յլութիւնը (խճաքար, ավազ, մանրախիճ, ցեմենտ և այլն), բետոնի խառնուրդները և շաղախները, ինչպես նաև ամեն տեսակի հեղուկ նյութերը (ներկեր, մածիկներ, հականեխիչ բաղադրութիւններ և այլն): Այդ մեթոդով որոշվում է արտադրական իրադրութեան մեջ կատարված արտադրանքի ծավալի և ծախսված նյութերի քանակի չափումների հիման վրա նորմաները, պահպանելով նյութերի ռացիոնալ, խնայողական ծախսումներն ապահովող բոլոր պայմանները: Նշված մեթոդով նյութերը նորմավորելիս հատուկ ուշադրութիւն է դարձվում մնացուկները և կորուստները հայտաբերելու վրա, նպատակ ունենալով առավելագույն չափով կրճատել դրանք: Գիտումների և չափումների տվյալների հիման վրա, որոնք ստուգվում են մեծ քանակով կառույցներում, հաշվի առնելով նորարար-շինարարների աշխատանքի փորձը, սահմանվում են նյութերի ծախսման հիմնավորված նորմաները:

Նորմավորման փորձնա-լաբորատորային մեթոդը փորձնա-արտադրական մեթոդից տարբերվում է նրանով, որ փորձերը և չափումները կատարվում են ոչ թե արտադրական իրադրութեան մեջ, այլ լաբորատորային պայմաններում, նպատակ ունենալով ավելի խորն ուսումնասիրել առանձին գործոնների ազդեցութիւնը նյութի ծախսման վրա: Օրինակ, ներկող բաղադրութիւնների ծախսումների մեծութեան վրա դրանց խտութեան ազդեցու-

թյան ուսումնասիրությունը նպատակահարմար է անցկացնել լաբորատոր պայմաններում, որովհետև այն պահանջում է հատուկ սարքերի կիրառում, նյութերի ճիշտ կշռում և արտադրության պայմաններում դժվար իրականացվող այլ օպերացիաների կատարում:

Սակայն նորմավորման փորձնա-լաբորատորային մեթոդի ժամանակ ևս անհրաժեշտ է ձգտել այն բանին, որ փորձերի և շահումների անցկացման պայմաններն առավել մոտ լինեն արտադրական նորմալ պայմաններին: Փորձնա-լաբորատորային մեթոդով նախագծված նորմաները, նախքան դրանց գործադրելը, ստուգվում են արտադրական պայմաններում:

Հաշվարկա-վերլուծական մեթոդը շինանյութերի ծախսման նորմաների տեսական հաշվարկումն է՝ նախագծային, առավելապես տիպային, համապատասխան շինարարական կոնստրուկցիաների լուծումների, ինչպես նաև աշխատանքների կատարման ու ընդունման տեխնիկական պայմանների շինանյութերի ու դետալների ստանդարտների հիման վրա: Այդ մեթոդը կիրառվում է գլխավորապես հատային, թերթային և ռուլոնային շինանյութերի ծախսի նորմավորման ժամանակ (կանոնավոր ձևի քարերի, պողպատի սլանվածքի, սալերի, ռուբրոիդի, պաստառների և այլն), քանի որ դժվար վերացնելի կորուստներն այստեղ մեծ մասամբ կամ բացակայում են, կամ իրենց չափերով մեծ չեն և հեշտ հաշվարկվում են: Օգտվելով գծագրերից և իմանալով կիրառվող նյութերի տեսակները, կարելի է համեմատաբար հեշտ կերպով որոշել, օրինակ, մեկ քառակուսի մետր հատակի կամ միջնորմի համար տախտակի, մեկ քառակուսի մետր պատի համար պաստառների ծախսի նորման և այլն:

Հաշվարկա-վերլուծական մեթոդը չի կարող կիրառվել այն նյութերի ծախսը նորմավորելիս, որոնք ունեն դժվար վերացնելի կորուստներ, որովհետև այդ կորուստների մեծությունը միշտ չէ, որ ենթարկվում է տեսական հաշվարկի: Դժվար վերացնելի կորուստների նորմաներն այդպիսի նյութերի համար կարող են սահմանվել միայն նորմալ արտադրական պայմաններում բազմաթիվ դիտումների տվյալներն ընդհանրացնելու հիման վրա:

Շինանյութերի ծախսի արտադրական նորմաները հաստատում է շինարարական տրեստի ղեկավարը: Շինարարական և մոնտաժային աշխատանքների տեխնոլոգիան և կազմակերպումը կատարելագործելու համեմատ այդ նորմաները պարբերաբար վերանայվում են:

Արտադրական նորմաներից բացի, շինարարության մեջ կիրառվում են այսպես կոչված հիմնական շինանյութերի (մետաղազանվածք, ցեմենտ, անտառանյութ, շիֆեր, օպակի և այլն) ծախսի խոշորացված նյութային նորմաներ: Դր-

րանք, որպես կանոն, որոշվում են առաջավոր շինարարական կազմակերպությունների կողմից կատարված 1 մլն ռուբլու շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքի դիմաց կամ 1 կմ երկաթուղային ճանապարհի, 1 հազ. ԲՎ բնակարանի և այլ խոշորացված շահանիշներով այս կամ այն նյութի ծախսման տվյալների հիման վրա:

Խոշորացված նորմաներն անջատ-անջատ սահմանվում են շինարարության տարբեր ճյուղերի համար, հաշվի առնելով ժողովրդական տնտեսության համապատասխան ճյուղերում իրականացվող շինարարության նյութատարությունը: Խոշորացված նորմաները կիրառվում են ամբողջ միութենական ռեսպուբլիկայի, ժողտնտխորհի, մինիստրության և այլ գերատեսչությունների գծով հիմնական տեսակի նյութերի նրկատմամբ կառույցների տարեկան մոտավոր պահանջները որոշելու համար: Այդ նորմաները կարող են նաև օգտագործվել նյութերի տնտեսման բնագավառում շինարարական խոշոր կազմակերպությունների գործունեության ընդհանուր արդյունքները վերլուծելու ժամանակ:

ՍՍԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի որոշմամբ ներկայումս մշակվում են մեկ մլն ռուբլու շինմոնտաժային աշխատանքների արժեքի դիմաց հիմնական բոլոր շինանյութերի, խողովակների, կաբելների և սանիտարա-տեխնիկական շինվածքների ծախսման ճյուղային առաջադիմական տեսակարար նորմաները: Այդ նորմաները պետք է արմատավորվեն մինչև 1963 թվականը:

Շինարարության, ինչպես նաև արդյունաբերության մեջ հումքի և նյութերի բոլոր տեսակների օգտագործման նորմատիվները խոշոր դեր են խաղում: «Այդ նորմատիվների արմատավորումը և խստորեն պահպանումը, — ասում էր Ն. Ս. Խրուշչովը պարտիայի XXII համագումարում, — պետք է օրենք դառնա յուրաքանչյուր տնտեսական ղեկավարի համար»: Նյութերի ծախսման գիտականորեն հիմնավորված նորմաների մշակումը խթանում է տեխնիկական առաջադիմության զարգացումը, բանվորներին, ինժեներներին և գիտական աշխատողներին խրախուսում է հայտաբերելու նյու-

թերի նոր տեսակներ, ստեղծելու է՛լ ավելի կատարյալ շինարարական կոնստրուկցիաներ, արմատավորելու շինարարական արտադրության կազմակերպման լավագույն մեթոդներ և, ի վերջո, աջակցում է ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերի բարձրացմանը, երկրում գոյություն ունեցող նյութական ռեսուրսների առավել լրիվ մոբիլիզացմանը և դրանց լավագույն օգտագործմանը:

Արտադրական պաշարների նորմավորումը: Կառույցներին անհրաժեշտ նյութական ռեսուրսների մատակարարումն իրականացվում է պլանին խիստ համապատասխան: Ուստի ավելորդ արտադրական պաշարներ ստեղծելու անհրաժեշտություն չկա: Պաշարների չափազանց կուտակումը տանում է դեպի որոշ կառույցներում նյութական արժեքների սառեցմանը և դրանց պակասին՝ մյուս կառույցում: Միևնույն ժամանակ փոքրացված պաշարները կարող են շինարարական արտադրության ընթացքում ընդհատումներ առաջ բերել: Ուստի արտադրական պաշարները նորմավորելիս անհրաժեշտ է ձգտել այն բանին, որ դրանք կառույցներում լինեն նվազագույն չափով, բայց բավականին՝ արտադրական պրոցեսի անխափան ընթացքի համար:

Պրակտիկան ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ կառույցները ժամանակին և լիովին ապահովված են նյութերով, կոնստրուկցիաներով և սարքավորումներով, ձեռնարկությունները և կառուցվածքները պատրաստվում են ավելի կարճ ժամկետներում: Նյութական ռեսուրսների արտադրական անհրաժեշտ պաշարի հաշվարկը կատարվում է օրերով, ըստ սահմանված նորմատիվների:

Այժմ, օրինակ, շինարարական կազմակերպությունն ունի 3600 տ ցեմենտի պաշար և արտադրական նպատակով ծախսում է օրական 90 տ ցեմենտ, ապա նշանակում է, որ նա ունի 40 օրվա պաշար (3600:90):

Նյութական ռեսուրսների նորմատիվ պաշարները շինարարական կազմակերպություններում որոշվում են, հաշվի առնելով նրանց կողմից կատարվող շինարարության բոլոր կոնկ-

րեա առանձնահատկությունները: Այդ պաշարները որոշվում են նյութական ռեսուրսների առանձին, առավել կարևոր տեսակների օրական պաշարի հաշվարկային նորմաներով:

Շինարարութան մեջ նորմատիվային արտադրական պաշար ասելով, հասկացվում է օրերով հաշված այն ամենափոքր պաշարը, որն անհրաժեշտ է արտադրության անխափան ընթացքն ապահովելու համար: Արտադրական պաշարների նորմատիվները հաշվարկելիս անհրաժեշտ է որոշել հետևյալը.

1. նյութերի, սարքավորման, գույքի և նյութական այլ արժեքների պահեստային ընթացիկ պաշարի չափը, որն ըստեղծվում է շինարարական կազմակերպության անխափան աշխատանքի համար՝ մատակարարումների երկու հերթական պարտիաների միջև ընկած ժամանակամիջոցում: Այն կախված է արտադրական պահանջներից և մատակարարումների պայմանագրային պայմաններից: Պայմանագրային պայմանների մեջ որոշվում են մատակարար-գործարանների կողմից մատակարարվող նյութերի ու սարքավորման չափերը և պարբերականությունը, հաշվի առնելով մատակարարների արտադրական հնարավորությունները և մատակարարից մինչև շինարարական հրապարակները նյութական արժեքների փոխադրման պլանային տևողությունը: Հետևաբար, աշխատանքների կատարման անփոփոխ ծավալի դեպքում ընթացիկ պաշարն այնքան փոքր կլինի, որքան հաճախ են տեղի ունենում մատակարարումները:

2. նյութական արժեքների երաշխիքային (ապահովագրական) պաշարի չափերը, որը կազմվում է տրանսպորտային դժվարությունների պատճառով չնախատեսված ուշացումների, մատակարար-գործարանի արտադրության մեջ խափանումների կամ վերջինիս կողմից մատակարարումների պայմանագրային պայմանների խախտման դեպքերի համար: Երաշխիքային պաշարի մեծությունը սովորաբար որոշվում է մատակարարումների պլանային ժամկետների նկատմամբ փաստացի ժամկետների միջին շեղումներից ելնելով:

3. նյութերի և սարքավորումների ընդունման, բեռնաթափ-

ման, պահեստավորման, կոմպլեկտավորման և տեխնոլոգիական նախապատրաստման ու վերամշակման անհրաժեշտ ժամանակը: Օրինակ, շինարարություն բերված մանրված չհանգած կիրը մինչև գործածվելը պետք է ջրով հանգցնելու միջոցով վերածվի կրախմորի. շինարարություն բերված անտառանյութը հաճախ նախնական վերամշակման պրոցես է անցնում (սղոցում, չորացում, հականեխում և այլն): Կոմպլեկտավորման մեծ աշխատանք է պահանջում կառույցներ բերված, առանձնապես նոր յուրացվող (անհատական) կամ պատրաստման երկարատև արտադրական ցիկլ ունեցող սարքավորումը: Բերված բոլոր օրինակներում պահանջվում է որոշ ժամանակ ստացված սարքավորման, կոնստրուկցիաների կոմպլեկտավորման, ինչպես նաև որոշ նյութերի տեխնոլոգիական վերամշակման համար:

Գումարելով ընթացիկ և ապահովագրական պաշարի շահերը (օրերով), ինչպես նաև նյութական ռեսուրսների կոմպլեկտավորման և տեխնոլոգիական վերամշակման համար անհրաժեշտ ժամանակը, գտնում են նորմատիվային արտադրական պաշարի օրերի ընդհանուր քանակը:

Օրինակ, մատակարար-գործարանից մինչև շինարարական հրապարակը հասցնելու համար մետաղազանվածքի մատակարարումների պարբերականությունը կազմում է 20 օր, ռեզերվային (ապահովագրական) պաշարին՝ 10 օր, մետաղն ընդունելու, բեռնաթափելու, դասավորելու և կոմպլեկտավորելու համար անհրաժեշտ է 10 օր: Ընդհանուր նորմատիվային պաշարն այդ դեպքում հավասար կլինի 40 օրվա: Եթե մետաղազանվածքի օրական միջին պահանջը հավասար է 20 տ, ապա շինարարական կազմակերպությունը պետք է նորմատիվային պաշար ունենա 800 (20տ×40) շափով:

Որոշ դեպքերում շինարարական կազմակերպությունների համար արտադրական պաշարների առանձին տեսակների բարձրացված նորմատիվներ են սահմանվում: Սովորաբար այդ առաջ է դալիս նյութերի նախապատրաստման կամ փոխադրման սեզոնային բնույթի պատճառով: Այդպիսի նյութերի փոխադրումը կատարվում է ոչ թև որոշակի ընդամիջումներ:

րով, արտադրութեան պահանջներին համեմատ, այլ միայն տարվա որոշ ժամանակաշրջաններում: Նյութական պաշարների սեզոնային մթերոմաները սովորաբար կապված են ինչպես դրանց արտադրութեան (հանույթի) ժամանակի, այնպես էլ արտադրութեան տեղից շինարարություն փոխադրելու տնտեսապես ավելի օգտավետ և մատչելի պայմանների հետ: Օրինակ, գետային ավազը և խճաքարը շինարարական կազմակերպութեանն են ամենից հաճախ մթերում են ամռանն այն հաշվով, որ դրանց նկատմամբ շինարարական կազմակերպութեանների պահանջներն ապահովեն մինչև հաջորդ տարվա գարնանային-ամառային ժամանակաշրջանը:

Նյութերի ու սարքավորումների նախապատրաստման և փոխադրման սեզոնային պայմաններում պաշարների անհրաժեշտ չափերը յուրաքանչյուր առանձին դեպքում որոշվում են ելնելով համապատասխան կառույցի կոնկրետ պայմաններից:

Պետական պլանային օրգանների առաջ խնդիր է դրված արմատապես բարելավել նյութական հաշվեկշիռներ կազմելու աշխատանքը և դրա հիման վրա առավել լրիվ կերպով ապահովել արտադրութեան և կապիտալ շինարարութեան պլանների կապակցումը նյութատեխնիկական մատակարարման պլանների հետ:

7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ -

Շինարարութեան նյութատեխնիկական մատակարարումը նրան արտադրութեան միջոցներով՝ կոնստրուկցիաներով, դետալներով, նյութերով, սարքավորումներով, գույքով և գործիքներով պլանաչափորեն ապահովելու մի պրոցես է: Շինարարութեան արտադրական ծրագրի հաջող կատարումը, գործարկվելիք օբյեկտների ժամանակին շահագործումը, շինմոնտաժային աշխատանքների որակը շատ բանով կախված են կառույցները նյութական ռեսուրսներով անխափան մատակարարելուց: «Առանց չափազանցության կարելի է ասել, որ

արգտնաբերության ու շինարարության աշխատանքի հաջողությունը,— ասում էր Ն. Ս. Խրուշչովը,— շատ բանով կախված կլինի նյութատեխնիկական մատակարարումը ճիշտ և հմտորեն կազմակերպելուց, գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը, կառույցները համբով, նյութերով ու սարքավորումներով ապահովելուց, կոռպերացված մատակարարումների պարտավորությունները պարզորոշ կատարելուց»¹:

Մեր երկրում ստեղծվել է մատակարարման-վաճառահանման մասնագիտացված օրգանների ցանց, որի գլխավոր խընդիրն է ձեռնարկությունների և կառույցների ժամանակին ու կոմպլեկտ մատակարարումը անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով՝ հաստատված արտադրական և նյութական ռեսուրսների բաշխման պլանների համապատասխան:

Նյութատեխնիկական մատակարարման սիստեմի վերակառուցումը: Վերջին տարիներին շինարարության նյութատեխնիկական մատակարարման սիստեմն արմատապես վերակառուցվեց:

Նյութատեխնիկական մատակարարման սիստեմը, որը գոյություն ուներ մինչև արդյունաբերության ու շինարարության կառավարման վերակառուցումը, չափազանց մեծածավալ էր: Հաճախ մի քաղաքում հաշվվում էին տարբեր գերատեսչությունների մինչև 20—30 մատակարարման կազմակերպություններ, որոնց գործունեությունը ոչ ոքի կողմից չէր կոորդինացվում: Մատակարար-գործարանների և կառույցների միջև գոյություն ունեին գերատեսչական մատակարարման-վաճառահանման բաղմամբով միջանկյալ կազմակերպություններ: Մի շարք դեպքերում նյութական ռեսուրսները, նախքան կառույց հասնելը, տարվում էին տարբեր մինիստրությունների ու գերատեսչությունների մատակարարման բաղմամբով օրգանների պահեստները: Այդ բոլորը դժվարացնում էր կառույցների անխափան և հրստակ նյութական ապահովության կազմակերպումը և հաճախ հասցնում էր նյութատեխնիկական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործմանը:

Նյութատեխնիկական մատակարարման նոր պայմանների հիմքում դրված է տեխնոքիալ սկզբունքը: Ամբողջ երկրի

¹ Ն. Ս. Խրուշչով, Զեկուցում ՍՍՌՄ Գերագույն սովետի 7-րդ սեսիայում, 1957 թ. մայիսի 7-ին, Հայպետհրատ, 1957, էջ 62:

մասշտաբով նյութական ռեսուրսների կենտրոնացված պլանային բաշխումը պահպանելու հետ մեկտեղ, ձեռնարկությունների և կառույցների նյութական ապահովման բոլոր հարցերը վճռվում են տեղերում, միութենական ռեսպուբլիկաներում և վարչական շրջաններում:

Նյութական ռեսուրսների մատակարարման և վաճառահանման հիմնական աշխատանքը կենտրոնացվում է ժողտրնտխորհներում, որոնք կազմակերպում են ոչ միայն իրենց ենթակա ձեռնարկությունների և կառույցների նյութատեխնիկական մատակարարումը, այլև նյութական ռեսուրսների բաշխման հաստատված պլանների համաձայն նյութերի և սարքավորումների ժամանակին և կոմպլեկտային մատակարարում են ապահովում այլ սպառողների, որոնք գտնվում են ինչպես տվյալ տնտեսական շրջանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ժողտնտխորհների կազմում, վերացված ճյուղային միեմբրությունների վաճառահանման-մատակարարման բազմաթիվ գրասենյակների փոխարեն ստեղծվել են տնտեսական շրջանների մատակարարման ու վաճառահանման միասնական վարչություններ:

Նյութատեխնիկական մատակարարման հարցերն օպերատիվ լուծելու համար ժողտնտխորհներին տրված են համապատասխան իրավունքներ: Մասնավորապես նրանք իրավունք ունեն նյութերն ու սարքավորումը վերաբաշխել ենթակա ձեռնարկությունների ու կառույցների միջև, ինչպես նաև նրանց թույլ տալ իրացնելու ավելորդ ու շօտագործվող նյութական արժեքները: Դրա հետ միասին ժողտնտխորհների վրա լիակատար պատասխանատվություն է դրված ձեռնարկություններին ու կազմակերպություններին նյութերը, վառելիքը, սարքավորումն ու կոմպլեկտավորվող շինվածքները ժամանակին, որակով և կոմպլեկտավորված մատակարարելու համար, հատկապես մյուս տնտեսական, վարչական շրջանների համար նախատեսված կոոպերացված մատակարարումների գծով:

ՍՄԿՊ պետպլանին առընթեր ստեղծվել են արտադրանքի մատակարարման միջոցապուրիկական վարչություններ: Նր-

բանք իրականացնում են արտադրանքի կարևորագույն տեսակների միջոցնսպուբլիկական մատակարարումների պլանավորումը: Սև և գունավոր մետալուրգիայի, շինանյութերի արդյունաբերության քիմիական, նավթավերամշակման և արդյունաբերության այլ ճյուղերի հատուկ կարևորություն ունեցող կառույցների համար ՍՍՌՄ պետականին առընթեր կազմակերպվել են նաև սարքավորումների, սարքերի, կաբելային իրերի կոմպլեկտավորման գլխավոր վարչություններ: Դա հնարավորություն է տալիս վաղօրոք, մինչև պլանային տարին սկսելը կարգադրել-պատվերներ հանձնել հիմնական տեխնոլոգիական սարքավորման համար, ամրացնել կառույցներին կոնկրետ մատակարարներ և դրանով իսկ զգալի շարժով բարելավել նրանց նյութատեխնիկական ապահովումը:

Բոլոր միութենական ռեսպուբլիկաներում ստեղծվել են արդյունաբերական արտադրանքի և շինարարության համար տեխնոլոգիական, էներգետիկ ու ամբարձիչ-տրանսպորտային սարքավորումների կոմպլեկտավորման գծով մատակարարման ու վաճառահանման գլխավոր վարչություններ: Նրանք իրականացնում են նաև միութենական ռեսպուբլիկաների ձեռնարկությունների թողարկած արտադրանքի և ներմուծված արտադրանքի մատակարարման պլանավորումը: Այդ պլանավորումը կատարվում է ըստ տվյալ ռեսպուբլիկայի ժողտնտխորհների, մինիստրությունների և գերատեսչությունների՝ ընդհանուր միութենական պլանի սահմաններում:

Նյութատեխնիկական մատակարարման սխտեմի՝ 1957 թ. անցկացրած վերակառուցումը թույլ տվեց բարելավել ժողովրդական տնտեսության մեջ հումքի, նյութերի և սարքավորումների օգտագործումը, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի շատ տեսակների մատակարարման պլանների կատարումը:

Սակայն նյութատեխնիկական մատակարարման կազմակերպման գործում դեռևս շատ թերություններ կային: Մատակարարման ու վաճառահանման մեծ թվով օրգանների գոյությունը տեղերում հանգեցնում էր նրանց աշխատանքի զուգահեռության և կրկնողության: Այդ օրգանների սխտեմով

տարբեր օղակների, ինչպես նաև միութենական և ռեսպուբլիկական մատակարարման ու վաճառահանման օրգանների միջև գոյություն տնեցող ֆունկցիաների ու պարտականությունների ոչ բավականին պարզորոշ սահմանագծումը լրջորեն դժվարացնում էր մատակարարման աշխատանքը: Ձեռնարկությունների և կառույցների մատակարարումը ճիշտ կազմակերպելու գործին խանգարում էր նաև մատակարար-ձեռնարկությունների հաճախակի փոխարինումը:

1962 թ. միութենական ռեսպուբլիկաներում և տնտեսական-վարչական շրջաններում սկսեցին, որպես կանոն, ստեղծել արդյունաբերական արտադրանքի մատակարարման օրգանների միասնական ցանց՝ ռեսպուբլիկայի կամ տնտեսական շրջանի բոլոր սպառողների համար, անկախ նրանց գերատեսչական պատկանելիությունից:

Միասնական տերիտորիալ մատակարարման կազմակերպությունների ստեղծումը թույլ է տալիս էապես կրճատել մատակարարման ծախքերը, պակասեցնել պահպանման և փոխադրման ժամանակ նյութերի կորուստները: Մատակարարման օղակներում կրճատվում են ավելորդ հաստիքները, վերացվում են նյութական ռեսուրսների հանդիպական փոխադրումները, կարգավորվում է կառույցներին նյութատեսխնիկական ռեսուրսների փոխադրմամբ զբաղված ավտոտրանսպորտի աշխատանքը: Այդ բոլորը նպաստում են շինարարության որակի բարելավմանը և արժեքի իջեցմանը:

Մատակարարումը կազմակերպելիս ներկայումս հիմնական շեշտը դրվում է մատակարարների և սպառողների միջև ուղղակի տնտեսական կապերի զարգացման վրա՝ շինարարության ամբողջ ժամանակաշրջանում, որպես ձեռնարկությունների և կառույցների նյութատեսխնիկական ապահովման առավել նպատակահարմար և տնտեսապես ձեռնտու ձևի:

Մինչև վերջին ժամանակները մատակարարների և սպառողների միջև տնտեսական կապերը որոշվում էին համապատասխան կենտրոնական վաճառահանման և մատակարարման օրգանների կողմից երկարատև ժամանակաշրջանի համար կնքվող գլխավոր պայմանագրերով: Գլխավոր պայմանագրերի պայմանները պարտադիր էին մատակարարման և վաճառ-

համաման բոլոր ստորին օրգանների համար: Նյութական մատակարարում-
ների կոնկրետ պայմանները որոշվում էին տարեկան լոկալ պայմանագրե-
ւով, որոնք կնքվում էին ստորին օղակի մատակարարների և սպառողների
միջև գլխավոր պայմանագրերի հիման վրա: Մատակարարների և սպա-
ռողների միջև ուղղակի պայմանագրեր կնքվում էին միայն մատակա-
րարումների հատուկ պայմանների կամ ոչ մշտական (միանվագ) մատա-
կարարումների դեպքում: Գլխավոր և լոկալ պայմանագրային հարաբերու-
թյունների սիստեմը կաշկանդում էր ձեռնարկությունների և շինարարական
կազմակերպությունների նախաձեռնությունը: Նրանք իրավունք չունեին
հրաժարվել մատակարարումների հիմնական այն պայմաններից, որոնք
նախատեսվել էին գլխավոր պայմանագրերում:

Անցումն ուղղակի պայմանագրային հարաբերությունների թույլ է տա-
լիս ստորին և տնտեսական կազմակերպություններին անմիջական կա-
պերի մեջ մտնել մատակարարների հետ, կազմակերպելով արտադրության
ամենից ավելի ուսցիտնալ նյութատեխնիկական ապահովում:

**Ստորին շինարարական կազմակերպությունների նյութատեխ-
նիկական մատակարարումը:** Նյութատեխնիկական մատա-
կարարումը պետք է կազմակերպված լինի այնպես, որ
շինարարական արտադրությունն անխափան կերպով ապա-
հովվի նյութական ռեսուրսներով, իրականացվեն նյութական
ֆոնդերի ճիշտ պահպանում և հաշվառում, անցկացվին դրանց
խնայողաբար օգտագործման անհրաժեշտ միջոցառումներ:
Այդ աշխատանքը կառուցյաներում կատարում են մատակա-
րարման բաժինները կամ մատակարարման աշխատողների
համապատասխան խումբը:

Շինարարության կապալաչին եղանակի դեպքում կա-
ռուցյաների մատակարարումը համապատասխան նյութական
ռեսուրսներով իրագործվում է անջատ-անջատ՝ պատվիրա-
տուների և կապալառու շինարարական կազմակերպու-
թյունների կողմից: Պատվիրատուները, որպես կանոն, կառուցյանե-
րը լիովին ապահովում են անհրաժեշտ սարքավորումով (մոն-
տաժ պահանջող և չպահանջող) և որոշ հատուկ նյութերով
(կաբելաչին արտադրանք, հրակայուն և հատուկ թթվակայուն
շինվածքներ, առանձին սանիտարական-տեխնիկական նյու-
թեր և այլն): Կառուցյաների մատակարարումը մնացած բոլոր
նյութական ռեսուրսներով (շինարարական կոնստրուկցիաներ,

դետալներ, բլոկներ, հիմնական և օժանդակ նյութեր, գույք, գործիքներ, արտահագուստ և այլն) անմիջականորեն կատարում են կապալառու շինարարական կազմակերպությունները:

Տնտեսական եղանակով կատարվող շինարարության դեպքում կառույցների նյութական բոլոր ռեսուրսների մատակարարումը լիովին իրականացնում են իրենք կառուցողները:

Պետք է նշել, որ պատվիրատուի կողմից կապալառու կազմակերպությունների համար նյութերի որոշ տեսակների մատակարարման ֆունկցիաների կատարումն իր ժամանակին արգարացվում էր այդ նյութերի դեֆիցիտային լինելով, ձգտումով՝ ուղարկել դրանք միայն այն կառույցները, որոնց համար դրանք առանձնացվել էին: Այդպիսի կարգի պահպանումը բոլոր կառույցների համար ներկայումս անհրաժեշտ չէ: Պրակտիկան ցույց է տալիս, որ լիովին նպատակահարմար է շինարարական կազմակերպությունների վրա դնել (աշխատանքները կապալային եղանակով վարելիս) նյութական բոլոր ֆոնդերի ստացումը, պատվիրատուներին թողնելով կառույցներին միայն սարքավորում մատակարարելու պարտականությունը:

Նյութական ռեսուրսների պահանջների պլանը պետք է խիստ կապակցված լինի պատվիրատուների՝ պլանային ժամանակաշրջանի համար նախատեսված կապիտալ ներդրումների ծավալի և կապալառու շինարարական կազմակերպությունների շինմոնտաժային աշխատանքների ծրագրի հետ:

Շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական մատակարարման պլանը: Նյութատեխնիկական մատակարարման պլանը շինֆինպլանի կարևոր բաղկացուցիչ մասն է: Նրա մեջ որոշվում է. ա) նյութատեխնիկական ռեսուրսների պահանջը՝ նյութերի ծախսերի սահմանված նորմաների և շինմոնտաժային աշխատանքների պլանային ծավալների հիման վրա, բ) նյութական ռեսուրսների փոխանցվող մնացորդների չափերը շինարարական կազմակերպության պահեստներում, գ) անհրաժեշտ նյութական ռեսուրսներ ստանալու աղբյուրները:

Շինարարական կազմակերպությունների կողմից նյութական ռեսուրսների փոխադրման պլանները կազմելիս կարելի է խուսափել ոչ ռացիոնալ և չափազանց հեռավոր փոխադրումներից, որոնք թանկացնում են շինարարության ար-

ժեքը: Շինարարական կազմակերպությունների նյութական
ռեսուրսների պահանջը որոշվում է հաշվի առնելով կազմա-
կերպական-տեխնիկական միջոցառումների ներդրումից ըս-
տացված տնտեսումը: Այդ նշանակում է, որ մատակարարման
պլաններում իրենց արտացոլումն են գտնում կառույցների
կոլեկտիվների և նորարարների առաջարկությունները՝ նյու-
թերն առավելագույն չափով տնտեսելու, ամենից ավելի ար-
դյունավետ կոնստրուկցիաներ ու դետալներ կիրառելու, տե-
ղական ռեսուրսներն ամեն կերպ օգտագործելու վերաբերյալ:
Պլանների ժամանակին և ճիշտ մշակումը կառույցներն ան-
հրաժեշտ նյութական ռեսուրսներով խնայողաբար ու անխա-
փան մատակարարելու նախադրյալներ է ստեղծում:

Կառույցների հստակ նյութատեխնիկական մատակարար-
ման կարևոր պայման է պահեստային տնտեսության ճիշտ
կազմակերպումը: Դրա համար անհրաժեշտ է առավել ռա-
ցիոնալ դասավորել պահեստները, հնարավորին չափ շինա-
րարական հրապարակներին ու օբյեկտներին մոտ: Այդ թույլ
է տալիս նյութական ռեսուրսներն աշխատանքի տեղը հասցը-
նելիս խուսափել ավելորդ ծախսերից: Պահեստային տնտե-
սությունը պետք է կազմակերպված լինի այնպես, որ ապա-
հովվի նյութական արժեքների լրիվ պահպանումը և նվազա-
գույն ծախսումներով դրանց անխափան բացթողումը: Կա-
ռույցներում նյութերի, սարքավորման և այլ արժեքների ոչ
ճիշտ, անտնտեսվար պահպանումը, ինչպես նաև բեռնմուն-
բեռնաթափման աշխատանքների վատ կազմակերպումը ըզ-
գալի նյութական վնաս են հասցնում և թանկացնում շինա-
րարության արժեքը:

Շինարարական կազմակերպությունների ֆինանսական
վիճակի վրա վնասակար է անդրադառնում պահեստները
չարդարացվող մեծ քանակի նյութական արժեքներ փոխա-
դրելու արատավոր պրակտիկան, որը հանդեցնում է կառույց-
ներում ապրանքակուտակումների, նյութերի փչացման և
պահեստային ծախսերի ավելացման՝ երկար ժամանակ նոր-
մատիվներից ավելի պաշարների պահելու հետևանքով:

Կառույցների պահեստներում կատարվում է նյութերի,

սարքավորման, գույքի, գործիքների և այլ առարկաների ծախսի, մուտքի և առկայություն քանակական հաշվառում: Պահեստներից նյութեր բաց թողնելիս պահեստային տնտեսության աշխատողները կատարում են վերահսկողություն, այն հաշվով, որ դրանց ծախսերը լինեն հաստատված նորմաների համապատասխան:

Նյութական ռեսուրսների ծախսերն ավելի արդյունավետ վերահսկելու համար շինարարության մեջ կիրառվում է պահեստներից՝ լիմիտային քարտերի կամ լիմիտային տարոնների հիման վրա, նյութական արժեքների բացթողման լիմիտային սխեմա:

Այդ սխեմայի էությունը հետևյալն է: Նախքան այս կամ այն աշխատանքն սկսելը, որոշվում է այն նյութերի քանակը, որոնք ըստ նորմաների անհրաժեշտ են դրանց կատարման համար: Այնուհետև նյութերի սահմանված քանակը գրանցվում է լիմիտային քարտերի մեջ, որոնք տրվում են բրիգադիրին, վարպետին կամ աշխուկին: Լիմիտային քարտի մեջ հաշվի են առնվում պահեստից տրված բոլոր նյութերը և ցույց է տրվում բացթողման հնարավոր առավելագույն սահմանը:

Այն դեպքում, եթե նյութերն ստանալու սահմանված լիմիտը սպառվում է մինչև աշխատանքի լրիվ ավարտումը, նյութերի հետագա բացթողումը զաղարեցվում է: Այդպիսի աշխատանքների համար նյութերի լրացուցիչ բացթողումը պահեստը կարող է կատարել միայն շինարարության ղեկավարությունից համապատասխան կարգադրություն ստանալուց հետո: Նախքան այդպիսի կարգադրություն տալը, շինարարության պետը կամ գլխավոր ինժեները ուշադիր կերպով հայտաբերում են արտադրական նորմաների համեմատությամբ նյութերի գերաժախսի պատճառները, վարչական ներգործության համապատասխան միջոցներ են ընդունում այն անձանց նկատմամբ, որոնց մեղքով կատարվել է նյութերի գերաժախսը և միջոցառումներ են նախատեսում գերաժախսը կանխելու համար: Նյութական արժեքների ծախսումը վերահսկելու լիմիտային և որոշ նման սխեմաները լայն տածում են գտել շինարարության մեջ:

Շինանյութերի ծախսման նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով, սկսած 1960 թվականից, բոլոր կառույցներում մտցված է շինարարական տեղամասի պետի (աշխուկի) ամսեկան նախնական հաշվետվության ձև՝ շինարարության մեջ հիմնական նյութերի ծախսման մասին արտադրական նորմաների համադրությամբ: Սահմանված է, որ

այդ հաշվետվությունները ենթակա են շինարարական կազմակերպության (կառույցի) ղեկավարի պարտադիր հաստատման և շինմոնիտաժային տեղագրական կազմակերպությունների կողմից ներկայացվում են տրեստներին: Մախսված կոնստրուկցիաների, դետալների ու նյութերի դուրսագրոսմը շինմոնիտաժային աշխատանքների ինքնարժեքի վրա կարող է կատարվել միայն նշված հաշվետվությունների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Աշխատանքի արտադրողականությունը՝ դա արտադրության պրոցեսում աշխատանքի ծախսման էֆեկտիվությունն է, արդյունավետությունը: Նյութական արտադրության յուրաքանչյուր ճյուղում, այդ թվում և շինարարության մեջ, աշխատանքի արտադրողականության մակարդակը որոշվում է արտադրանքի մեկ միավորի արտադրման վրա կատարված աշխատաժամանակի ծախսումներով կամ ամեն մի աշխատողին ընկնող ժամանակի մեկ միավորի ընթացքում արտադրված արտադրանքով: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը նշանակում է աշխատաժամանակի ծախսումների տնտեսում, արտադրանքի աշխատատարության նվազում: Դա հնարավորություն է տալիս արտադրելու յուրաքանչյուր աշխատողի հաշվով ավելի շատ արտադրանք, ավելացնելու նրա թողարկումը ժամանակի մեկ միավորի (ժամ, հերթափոխ, ամիս, տարի) ընթացքում:

Վ. Ի. Լենինը տվել է հանրային արտադրության զարգացման, կոմունիզմի կառուցման գործում աշխատանքի արտադրողականության բարձրացման վճռական դերի գիտական խոր վերլուծությունը:

«Կոմունիզմը, — գրել է Վ. Ի. Լենինը, — կամավոր, գիտակից, միավորված, առաջավոր տեխնիկա օգտագործող բան-

վորների աշխատանքի բարձրագույն արտադրողականությունն է կապիտալիզմի համեմատությունամբ... Աշխատանքի խրատադրողականությունը, վերջին հաշվով, ամենակարևորը, ամենագլխավորն է մեր հասարակարգի հաղթանակի համար»¹:

Կոմունիզմի կառուցման գործում աշխատանքի արտադրողականության կարևորագույն դերը պայմանավորվում է ամենից առաջ այն բանով, որ աշխատանքի արտադրողականությունն անշեղ բարձրացումը հանդիսանում է սոցիալիստական արտադրության անմահ գլխավոր աղբյուրը:

Այսպես, հինգերորդ հնգամյակի տարիներին շին-մոնտաժային աշխատանքների ծավալի ամբողջ աճի երկու երրորդը ստացվել է աշխատանքի արտադրողականության բարձրացման և միայն մի երրորդը՝ բանվորների թվի ավելացման հաշվին: Ինչպես ընթացիկ յոթնամյակում, այնպես էլ գլխավոր հեռանկարային պլանում, շին-մոնտաժային աշխատանքների ծավալի վիթխարի աճը կստացվի հիմնականում աշխատանքի արտադրողականության անմահ հաշվին: Առաջիկա քսանամյակում ողջ ժողովրդական տնտեսության գծով ազդային եկամտի ամբողջ աճի ինը տասներորդը պետք է ապահովվի աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը արտադրանքի ինֆնարժեքի իջեցման, սոցիալիստական կուտակումների ավելացման հիմքն է: Աշխատանքի արտադրողականությունը վճռակապն ազդեցություն է գործում այն ծախսումների մեծ մասի վրա, որոնցից դոյանում է արտադրանքի խնքնարժեքը: Իսկ որքան ցածր է խնքնարժեքը, այնքան շատ են կուտակումները: Կուտակումների ընդհանուր դումարն ավելանում է նաև աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ՝ արտադրության ծավալի աճման հետևանքով:

Սոցիալիզմի ժամանակ աշխատանքի արտադրողականության աճն ապահովում է աշխատավորների նյութական բարե-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 523—524:

կեցութեան սիստեմատիկ բարելավումը, «Հայտնի է, — ասել է Ն. Ս. Խրուշչովը, 1954 թվականին շինարարների Համամիութենական խորհրդակցութիւնում, — որ մենք աշխատավարձի աճը միշտ կապել ենք աշխատանքի արտադրողականութեան բարձրացման հետ: Աշխատանքի արտադրողականութեան աճը պետք է աշխատավարձի աճից առաջ անցնի: Միայն այդ պայմաններում մեր հասարակութիւնը կունենա մշտական սոցիալիստական կուտակումներ, որոնք անհրաժեշտ են արտադրութիւնն ընդլայնելու և դրա հիման վրա ժողովրդի նյութական բարեկեցութիւնը բարձրացնելու համար: Դա միակ ճիշտ ուղին է, որովհետև աշխատավորների բարեկեցութեան բարձրացմանը մենք կարող ենք հասնել միայն մեր ամբողջ ժողովրդական տնտեսութեան վերելքի հիման վրա»:

Կապիտալիզմի օրոք՝ նրան հատուկ հակասութիւնների հետևանքով, աշխատանքի արտադրողականութեան աճը տեղի է ունենում համեմատաբար դանդաղ տեմպերով և անհամաչափ բնույթ է կրում, հատկապես ճգնաժամերի տարիներին: Սոցիալիզմի պայմաններում աշխատանքի արտադրողականութեան անշեղ աճը տնտեսական օրենք է սոցիալիստական արտադրութեան անընդհատ վերելքի և ժողովրդի բարեկեցութեան բարձրացման անհրաժեշտ պայմանը:

Կապիտալիստական երկրներում բանվորների աշխատանքի արտադրողականութեան աճը ուղեկցվում է աշխատանքի առավելագույն ինտենսիվացմամբ, այսինքն՝ նրա լարվածութեան բարձրացմամբ: Սոցիալիստական երկրներում աշխատանքի արտադրողականութեան աճը ձեռք է բերվում ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում համակողմանի տեխնիկական առաջադիմութեան հիման վրա, որն ուղեկցվում է աշխատանքի պայմանների սիստեմատիկ բարելավմամբ, աշխատանքային օրվա կրճատմամբ և աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմամբ:

Առաջավոր տեխնիկայի լայն արմատավորման և աշխատանքների ինդուստրիալ մեթոդների, շինարարների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման և սոցիալիստական մրցութեան զարգացման շնորհիվ շինարարութեան բնագավառ-

ուամ ձեռք է բերվել աշխատանքի արտադրողականության
վզալի աճ:

Շինարարության մեջ աշխատանքի արտադրողականու-
թյունը 1928—1961 թվականների ընթացքում աճել է մոտա-
վորապես 7 անգամ: Եթե 1928 թվականի 1 մլն. ուղբլի ար-
ժողության ծավալի շին-մոնտաժային աշխատանքներ կատա-
րելու համար պահանջվում էր 1320 բանվոր, ապա 1960 թվա-
կանին՝ 208 բանվոր:

Յոթնամյա պլանով շինարարության մեջ աշխատանքի
արտադրողականությունը պետք է աճի 60—65 տոկոսով:
Յոթնամյակի երեք տարում (1959—1961) այն ավելացել է
22 տոկոսով: «Փորձը ցույց է տալիս — ասում է Ն. Ս. Խրուշ-
չովը պարտիայի XXII համագոփմարին տված զեկուցման
մեջ, — որ աշխատանքի արտադրողականության աճի յոթն-
ամյա պլանի առաջադրանքները կարող են գերազանցվել: Դա
մեծ ու կարևոր խնդիր է: Այդ խնդիրը լուծելու համար ան-
հրաժեշտ է իսկական հերոսություն: Բայց մեր պայմաննե-
րում հերոսությունը ո՛չ միայն խոյանք է, հաստատակամու-
թյուն, ջանասիրություն: Դա միաժամանակ հմտություն է,
գիտելիքներ, բարձր կուլտուրա, առաջավոր տեխնիկա, նորա-
բարություն»¹:

Նախառևտրուցիոն Ռուսաստանը արդյունաբերության ու
շինարարության մեջ աշխատանքի արտադրողականության
մակարդակով շատ էր ետ մնում կապիտալիստական գլխու-
վոր երկրներից: Աշխատանքի արտադրողականության աճման
բարձր տեմպերի շնորհիվ ՍՍՌՄ-ը այդ ցուցանիշով առաջ է
անցել մի շարք կապիտալիստական երկրներից, բայց ԱՄՆ-ից
դեռևս ետ է մնում: Սակայն այդ ետ մնալը տարեցտարի
կրճատվում է: Եթե հաշվի առնենք, որ վերջին ութ տարի-
ներին ՍՍՌՄ-ի շինարարության բնագավառում աշխատանքի
արտադրողականության տարեկան միջին աճը կազմել է մոտ
7—8 տոկոս, իսկ ԱՄՆ-ի շինարարության մեջ՝ մոտ 1,5 տո-

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 65—66, Հայպետհրատ,
1962,

կոս, ապա կարելի է լիակատար հիմքով ասել, որ մոտ ապագայում աշխատանքի արտադրողականության մակարդակով ՍՍՌՄ-ը կհասնի և կանցնի ԱՄՆ-ին:

Առաջիկա քսանամյակի ընթացքում աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության և շինարարության մեջ պետք է աճի 4—4,5 անգամ: Այդ նշանակում է, որ 1980 թվականին ԱՄՆ-ի աշխատանքի արտադրողականության արդի մակարդակը կգերազանցվի մոտավորապես 2 անգամ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԴԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշխատանքի արտադրողականության մակարդակի ճիշտ չափումը շինարարական կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեությունը պլանավորելու և զնահատելու, աշխատանքի արտադրողականության հետագա աճի ռեզերվները հայտնաբերելու անհրաժեշտ պայմանն է: Աշխատանքի արտադրողականության աճի պլանի կատարումը մեկն է այն առավել կարևոր ցուցանիշներից, որոնք բնութագրում են յուրաքանչյուր շինարարական կազմակերպության աշխատանքի որակը: Ուստի անհրաժեշտ է կիրառել աշխատանքի արտադրողականության չափման այնպիսի սխեմեմ, որն ամենից ավելի ճիշտ արտացոլի այդ բնագավառի իրական նվաճումները:

Շինարարության մեջ աշխատանքի արտադրողականությունը պլանավորելու ու հաշվի առնելու համար կիրառվում է երկու հիմնական ցուցանիշ. 1) արտադրանքի մեկ միավորի արտադրման վրա կատարած աշխատատեմանակի ծախսումները (արտադրանքի աշխատատարությունը) և 2) արտադրանքի պատրաստումը աշխատած ժամանակի մեկ միավորի ընթացքում:

Արտադրանքի աշխատատարությունը: Այս ցուցանիշը որոշում է համապատասխան շինմոնտաժային աշխատանքների մեկ միավորի վրա կատարած աշխատատեմանակի ծախսումները մարդ-օրերով կամ մարդ-ժամերով (բնաձև արտահայ-

տությամբ): Դրա հետ մեկտեղ հաճախ կիրառվում լինարարական արտադրության վերջնական արտադրանքի աշխատատարության ցուցանիշները՝ 1 խոր մ շենք, 1 ֆառ մ տարածություն, 1 կմ ճանապարհ և այլն:

Բերենք այսպիսի մի օրինակ: 5680 ֆառ մ մակերես սվաղելու համար Ֆեփագործների բրիգադը ծախսել է 362 մարդ-օր: 1 ֆառ մ սվաղի աշխատատարությունը կազմում է 0,064 մարդ-օր (362:5680):

Եթե, օրինակ, 10800 խոր մ ծավալ ունեցող բնակելի տան շինարարության վրա ծախսվել է ընդամենը 11200 մարդ-օր, ապա շենքի 1 խոր մ-ի աշխատատարությունը կկազմի 1,04 մարդ-օր (11200:10800):

Տարբերում են շինարարական արտադրանքի փաստական, նորմատիվային և պլանային աշխատատարության ցուցանիշները:

Փաստական աշխատատարությունը որոշվում է աշխատաժամանակի փաստական ծախսումները սրտադրանքի կատարված ծավալի վրա բաժանելու միջոցով (ինչպես այդ արված է վերոհիշյալ օրինակներում):

Նորմատիվային աշխատատարությունը որոշվում է շինարարական այն պրոցեսների ամբողջ կոմպլեքսի նկատմամբ եղած ժամանակի գործող արտադրական նորմաների հիման վրա, որոնք սնհրաժեշտ են համապատասխան արտադրանք պատրաստելու համար:

Պլանային աշխատատարությունը, որպես կանոն, որոշվում է նորմատիվային աշխատատարության ցուցանիշների հիման վրա, հաշվի առնելով արտադրական գործող նորմաների սպասվող գերակատարումը, որը ձեռք է բերվում արտադրանքի պատրաստման վրա կատարած աշխատանքի ծախսումները տնտեսելու նկատմամբ նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ:

Շինարարության մեջ աշխատատարության ցուցանիշները լայնորեն կիրառվում են շինարարական կազմակերպություններում աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձը պլանավորելու և վերլուծելու ժամանակ:

Արտադրանքի թողարկումը աշխատած ժամանակի միավորի ընթացքում: Ներկայումս որպես աշխատանքի արտադրողականության հիմնական ցուցանիշ շինարարության մեջ ընդունված է՝ շինմոնտաժային աշխատանքներում (ներառյալ ինժեներա-տեխնիկական աշխատողները և ծառայողները), ինչպես նաև շինարարական կազմակերպությունների հաշվեկշռի մեջ մտնող օժանդակ արտադրություններում զբաղված մեկ աշխատողին ընկնող արտադրանքի թողարկումը ժամանակի միավորի ընթացքում: Ընդ որում հաշվի չեն առնվում շինարարական կազմակերպություններ սպասարկող տնտեսությունների (մթերման-պահեստային, տրանսպորտային և կոմունալ բնակարանային տնտեսությունների և այլն) բանվորներն ու մյուս անձնակազմը:

Մինչև 1959 թվականը աշխատանքի արտադրողականության հիմնական ցուցանիշը մեկ բանվորին ընկնող արտադրանքի թողարկումն էր (չհաշված ինժեներատեխնիկական աշխատողներին ու ծառայողներին): Մեկ աշխատողին ընկնող արտադրանքի թողարկումը ավելի ճիշտ է արտացոլում արտադրության վրա կատարված աշխատանքի իրական ծախսումները և լրացուցիչ խթաններ է ստեղծում վարչատնտեսական ապարատը կրճատելու համար:

Պլանային հաշվարկների դեպքում շինարարական շատ կազմակերպություններ մեկ աշխատողին ընկնող արտադրանքի հետ մեկտեղ հաշվում են նաև մեկ բանվորին ընկնող արտադրանքը (որպես օժանդակ ցուցանիշ):

Տարբերվում են արտադրանքի թողարկման հետևյալ ցուցանիշները՝ ժամային, օրական (հերթափոխային), ամսական, եռամսյակային և տարեկան: Այդ ցուցանիշներից տարեկան արտադրանքն առավել լրիվ է արտացոլում բոլոր գործոնների, այդ թվում կլիմայական պայմանների և տարվա ընթացքում կադրերի օգտագործման (տարվա աշխատօրերի քանակը) աստիճանի, ազդեցությունը աշխատանքի արտադրողականության մակարդակի վրա:

Եթե, օրինակ, երկու բանվոր ունեն օրվա միատեսակ միջին արտադրանք (15-ական ուրվի), բայց նրանցից մեկը տարվա ընթացքում աշ-

խատել է 270 օր, իսկ մյուսը՝ 290 օր, ապա առաջին բանվորի փտարեկան արտադրանքը կազմում է 4050 ուրբլի (15×270), իսկ երկրորդինը՝ 4350 ուրբլի (15×290), այսինքն՝ առաջին բանվորի արտադրանքից 7,5 տոկոսով ավելի:

Մեկ աշխատողին և մեկ բանվորին ընկնող արտադրանքը կարող է որոշվել կամ դրամական արտահայտությամբ (կատարված շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքով), կամ բնաձև արտահայտությամբ (շարվածքի խորանարդ մետրերով, մոնտաժված կոնստրուկցիաների տոննաներով, բնակելի մակերեսի քառակուսի մետրերով և այլն):

Մեկ աշխատողին ընկնող արտադրանքի դրամական արտահայտությամբ ցուցանիշի գլխավոր արժանիքն այն է, որ այդ ցուցանիշն արտացոլում է շինմոնտաժային աշխատանքների ամբողջ բազմազանությունը և դրանով իսկ հնարավորություն է տալիս աշխատանքի արտադրողականությունը պլանավորել ու հաշվի առնել ինչպես շինարարական ստորին կազմակերպությունում, այնպես էլ ամբողջ շինարարությունում:

Աշխատանքի արտադրողականության դրամական արտահայտությամբ չափումը ունի մի շարք այնպիսի առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն այդ մեթոդը օգտագործելիս: Մի շարք դեպքերում արտադրանքի բացարձակ մեծությունները դրամական արտահայտությամբ անմիջականորեն միմյանց հետ բաղդատվել չեն կարող, որովհետև դրանք զգալի չափով կախված են շինարարական կազմակերպության կատարած շինմոնտաժային աշխատանքների տեսակից ու կառուցվածքից: Դա հիմնականում բացատրվում է արտադրանքի տարբեր նյութատարություններով, այսինքն՝ արտադրանքի մեկ միավորի նախահաշվային արժեքի մեջ շինարարական նյութերի, դետալների ու կոնստրուկցիաների արժեքների տարբեր տեսակարար կշռով: Որքան բարձր լինի արտադրանքի նյութատարությունը, այնքան ավելի բարձր կլինի աշխատողի արտադրանքի ցուցանիշը և ընդհակառակը:

Օրինակ, երկաթուղու շինարարության մեջ մեկ բանվորի օրական միջին արտադրանքը տատանվում է 3 ուրբլուց՝ հողը՝ ձեռքով հարթելու ժա-

մանակ, մինչև 150 ուրլի՝ ճանապարհի վերին կառուցվածքները շարելու դեպքում, այսինքն, ավելանում է 50 անգամ: Դա բացատրվում է այն բանով, որ առաջին դեպքում բանվորներն իրենց աշխատանքի պրոցեսում չեն ծախսում անցած աշխատանքներ մարմնավորող նյութական որևէ ուսուրանք, իսկ երկրորդ դեպքում նրանք օրվա ընթացքում ճանապարհի վերին կառուցվածքներում շարում են մեծ քանակությամբ թանկարժեք ուղիներ, կոճափայտեր, ամրապնդիչներ:

Խոշոր բլոկներից պատերով շենքերի շինարարության մեջ մեկ բանվորի օրվա միջին արտադրանքը տատանվում է 4 ուրլուց՝ հողային աշխատանքներում, և մինչև 100 ուրլու սահմաններում՝ միջնարկային հավաքովի երկաթբետոնե ծածկերը մոնտաժելիս և այլն:

Աշխատանքների առանձին տեսակների գծով արտադրանքի նյութատարության խիստ տատանունների դեպքում՝ պլանայինի համեմատությամբ, փաստացի կատարված աշխատանքների կառուցվածքի նույնիսկ փոքր շեղումները կարող են հանգեցնել աշխատանքի արտադրողականության իրական մակարդակի մասին ոչ ճիշտ եզրակացությունների:

Քննարկենք դրամական արտահայտությամբ վերցված արտադրանքի մեծության վրա շինմոնտաժային աշխատանքների կազմվածքի փոփոխությունների ազդեցության մի օրինակ (Տե՛ս 401 էջի աղյուսակը):

Աղյուսակից երևում է, որ, աշխատանքի արտադրողականության աճման գծով բոլոր տեսակի աշխատանքների պլանային առաջադրանքների զգալի թերակատարման դեպքում, բոլոր աշխատանքների միջին արտադրանքը՝ պլանայինի համեմատությամբ, բարձրացել է 1,2 տոկոսով: Միաժամանակ որոշ շափով պլանային առաջադրանքը գերակատարվել է նաև շինմոնտաժային աշխատանքների ծավալի գծով (158 հաղ. ուրլ. 157, 2 հաղ. ուրլ. դիմաց): Վտացված արդյունքները բացատրվում են պլանայինի համեմատությամբ փաստացի աշխատանքների կառուցվածքի շեղմամբ. շինարարական կազմակերպությունը, թերակատարելով հողային աշխատանքների, այսինքն՝ ցածր նյութատարություն ունեցող արտադրանքի թողարկման պլանային առաջադրանքը, գերակատարել է հավաքովի երկաթբետոնե ծածկերի մոնտաժման, այսինքն՝ բարձր նյութատարություն ունեցող արտադրանքի թողարկման պլանը: Դրա շնորհիվ աշխատանքի արտադրողականության պլանի կատարման ցուցանիշը զգալիորեն բարձրացվել է:

Ըստ արտադրանքի ցուցանիշի՝ դրամական արտահայտության, շինարարական կազմակերպության գործունեության գնահատմանը ձևական մոտեցում ցուցաբերելու դեպքում՝ նրա աշխատանքը կհամարվի լավ, իսկ իրականում այն անբավարար էր:

Ցուցանիշների անվանումը	Աշխատանքների տեսակները			Ընդամենը
	հողավիճ աշխատանքներ	պատերի շարունակություններից	հավաքովի երկաթբետոնե ծածկերի մոնտաժումը	
Միավորի նախահաշվային արժեքը (ռուբլիներով)	1	14	50	—
Աշխատանքի ծախսումը 1 խոր. մ վրա (մարդ-օրերով).				
ա) պլանով	0,25	0,40	0,50	—
բ) փաստացի	0,28	0,42	0,55	—
Աշխատանքի ծավալը մեկ ամսում (խոր մ).				
ա) պլանով	2200	10000	300	—
բ) փաստացի	2000	9000	600	—
Աշխատանքի ամբողջ ծավալի նախահաշվային արժեքը (հազար ռուբլիներով).				
ա) պլանով	2,2	140	15	157,2
բ) փաստացի	2,0	126	30	158
Աշխատանքի ծախսումները աշխատանքների ամբողջ ծավալի վրա (մարդ-օրերով).				
ա) պլանով	550	4000	150	4700
բ) փաստացի	560	3780	330	4670
Մեկ մարդ-օրվան ընկնող արտադրանքը (ռուբլիներով).				
ա) պլանով	4,0	35	100	33,4
բ) փաստացի	3,6	33,3	90,9	33,8
Աշխատանքի արտադրողականության ցուցանիշի փոփոխությունը (տոկոսներով)	-10,0	-5,0	-9,1	+1,2

Աշխատանքի արտադրողականության աճի առաջադրանքների կատարումը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել շինմոնտաժային աշխատանքների պլանավորված կառուցվածքի փոփոխությունները, որովհետև մի շարք

դեպքերում այդ կառուցվածքի խախտման պատճառով շինարարական կազմակերպություններում աշխատանքի արտադրողականության աճի առաջադրանքների կատարման արտաքին տպավորություն է ստեղծվում, այն ժամանակ, երբ դրանք իրականում թերակատարվել են:

Արտադրանքի մեծությունը՝ դրամական արտահայտությամբ շատ բանով կախված է նաև շինարարական կազմակերպությունը գործարանային պատրաստման դետալներով ու կոնստրուկցիաներով ապահովված լինելուց և այդ դետալների ու կոնստրուկցիաների կիրառման մասշտաբներից: Եթե շինարարական կազմակերպությունն անհրաժեշտ բոլոր հավաքովի դետալներն ու կոնստրուկցիաներն ստանում է այն գործարաններից, որոնք ունեն արդյունաբերական ինքնուրույն հաշվեկշիռ, ապա նա, իհարկե, ավելի շատ արտադրանք կունենա, քան այն կազմակերպությունը, որն իրեն անհրաժեշտ դետալներն ու կիսաֆաբրիկատները պատրաստում է սեփական օժանդակ արտադրություններում: Այս հանգամանքը խթանում է մանր արտադրությունների վերացմանը, դրանց խոշորացմանն ու մասնագիտացմանը և վերջին հաշվով որպես ինքնուրույն բարձր մեքենայացված ձեռնարկությունների առանձնացմանը:

Մեկ աշխատողին ընկնող արտադրանքը՝ դրամական արտահայտությամբ որոշվում է շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքով: Նախահաշվային միասնական գների կիրառումն ապահովում է ցուցանիշների համադրելիությունը, հնարավորություն է տալիս որոշելու աշխատանքի արտադրողականության աճի դինամիկան տարբեր ժամանակների համար: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ նախահաշվային արժեքի մակարդակը երկրի տարբեր շրջաններում տարբեր է: Այսպես, հյուսիսային շրջաններում և Հեռավոր Արևելքի որոշ շրջաններում այդ մակարդակը 1,5—2 և ավելի անգամ գերազանցում է ՍՍՌՄ-ի կենտրոնական շրջանների շինարարության նախահաշվային արժեքի մակարդակը: Ուստի տարբեր շրջաններում գտնվող կառույցներում մի աշխատողի արտադրանքի ցուցանիշների համադրումը

պետք է կատարել, հաշվի առնելով շինարարության նախահաշվային արժեքների մակարդակների տարբերությունը:

Այսպիսով, իր ամբողջ պարզությունը և մատչելիությամբ հանդերձ արտադրանքի ցուցանիշը՝ դրամական արտահայտությամբ ունի նաև էական թերություններ: Այդ ցուցանիշն օգտագործելիս հարկավոր է հաշվի առնել աշխատանքների կառուցվածքի փոփոխությունը, նախահաշվային արժեքի մակարդակը և շինարարական կազմակերպությունների ապահովվածության աստիճանը՝ գործարանային պատրաստման դետալներով ու կոնստրուկցիաներով:

Դրամական արտահայտությամբ վերցրած մեկ աշխատողին ընկնող արտադրանքի ցուցանիշի հետ միասին շինարարական կազմակերպություններում լայնորեն կիրառվում է մեկ բանվորի կամ աշխատողի հաշվով արտադրված արտադրանքի ցուցանիշը՝ բնաձև արտահայտությամբ (խորանարդ մետրերով, քառակուսի մետրերով և այլն): Այդ ցուցանիշը որոշվում է կատարված աշխատանքների ֆիզիկական ծավալը (ընդունված շափի միավորներով արտահայտված) աշխատողների միջին-ցուցակային թվի կամ դրանք կատարելու համար ծախսված մարդ-օրերի քանակի վրա բաժանելու միջոցով:

Եթե, օրինակ, 5680 ֆառ մ մակերեսը սվաղելու համար ձեփագործների բրիգադը ծախսել է 362 մարդ-օր, ապա մի ձեփագործի արտադրանքը հերթափոխում կազմում է 15,7 ֆառ մ (5680:362):

Արտադրանքի պատրաստման ցուցանիշը բնաձևով սովորաբար կիրառվում է միատեսակ աշխատանքներ կատարող բրիգադներում ու օղակներում բանվորների արտադրանքը ակնառու կեպով համադրելու, ինչպես նաև միատեսակ շինարարություն իրականացնող շինարարական կազմակերպություններում՝ աշխատանքի արտադրողականության մակարդակը համադրելու համար: Այս դեպքում կատարված աշխատանքների ծավալն արտահայտվում է շինարարական արտադրության վերջնական արտադրանքի շափիչներով՝ բնակելի մակերեսի քառակուսի մետրերով, ճաննապարհների կամ կապի գծերի

մետրերով և այլն: Օրինակ, հաշված է, որ Ստավրոպոլ—Մոսկվա գազամուղի առաջին հերթի շինարարության ժամանակ մեկ բանվորի օրվա աբտադրանքը ինը տարի առաջ կառուցված Սարատով — Մոսկվա գազամուղի շինարարությունում ձեռք բերված արտադրանքի համեմատությամբ ավելացել է համարյա 3 անգամ:

Զափման տարբեր բնաձևի միավորներով արտահայտված արտադրանքի ցուցանիշները չեն կարող գումարվել: Հետևաբար, շինմոնտաժային տարբեր աշխատանքներ կատարող շինարարական կազմակերպությունների աշխատանքի արտադրողականության մակարդակի ընդհանրացնող ցուցանիշներ կարող են ստացվել միայն դրամական արտահայտությամբ:

Առանձին բանվորների աշխատանքի արտադրողականությունը բնութագրելու համար օգտագործվում է արտադրանքի նորմաների կատարման ցուցանիշը: Այդ ցուցանիշն արտահայտում է (տոկոսներով) ժամանակի միավորի ընթացքում փաստացի արտադրանքի հարաբերությունն այդ նույն ժամանակի միավորի ընթացքում (ժամում, հերթափոխում, ամսում) արտադրանքի սահմանված նորմային:

Եթե, օրինակ, էքսկավատորի օգնությամբ հողը քանդելու համար սովյալ կոնկրետ պայմաններում հերթափոխում մեկ բանվորի արտադրանքի նորման սահմանվել է 120 խու մ, իսկ փաստացի արտադրանքը հասել է 150 խու մ-ի, ապա արտադրման նորման կատարվել է 125 տոկոսով ($150:120 \times 100$):

Արտադրման նորմաների կատարման ցուցանիշները, որպես կանոն, չեն կարող բնորոշել շինարարական կազմակերպության ամբողջ աշխատանքի արտադրողականության մակարդակը, որովհետև դրանք հաշվի չեն առնում մեկ աշխատողի արտադրման մեծությունը որոշող կարևոր շատ գործոնների ազդեցությունը: Նորմաների կատարման ցուցանիշները, օրինակ, ամենևին հաշվի չեն առնում աշխատանքի արտադրողականության աճի այնպիսի գործոնի ազդեցությունը, ինչպես արտադրության մեխանիզացիան, քանի որ ձեռքի ու մեքենայացված աշխատանքների համար սահմանվում են արտադրման տարբեր նորմաներ:

Օրինակ, № 1 տեղամասում, ուր աշխատանքները կատարվում են հողափորիչ մեքենայով, հողային աշխատանքներում բանվորի օրվա արտադրանքը կազմել է 30 խոր մ հող՝ արտադրման նորմայի 100 տոկոս միջին կատարողականի դեպքում: Մինչդեռ № 2 տեղամասում, ուր հողային աշխատանքները կատարվում են ձեռքով, բանվորի օրվա արտադրանքը կազմել է ընդամենը 5 խոր մ, թեև այդ տեղամասում արտադրանքի դործող նորմաները կատարվում են 110 տոկոսով:

Աշխատանքի արտադրողականության մակարդակի խոր, բազմակողմանի վերլուծությունն ապահովվում է մեկ աշխատողին ընկնող արտադրման ցուցանիշների՝ թե՛ դրամական և թե՛ բնածե արտահայտություններ, ինչպես նաև արտադրման նորմաների կատարման ցուցանիշների միաժամանակյա քննարկման ու համադրման դեպքում: Աշխատանքի արտադրողականության շահման տարբեր մեթոդները, փոխադարձաբար միմյանց լրացնելով, հնարավորություն են տալիս ավելի ճիշտ սահմանել աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանային առաջադրանքները և ճիշտ գնահատել այդ առաջադրանքների կատարումը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Շինարարական կազմակերպություններում աշխատանքի արտադրողականության պլանավորումն իրականացվում է, ելնելով շինարարության հետագա ինդուստրացման և նրա կազմակերպական մակարդակի բարձրացման հիման վրա՝ աշխատողների արտադրանքի ծավալի ըստ ամենայնի բարձրացումն ապահովելու խնդրից: Աշխատանքի արտադրողականության աճի պլանային առաջադրանքները հիմք են ծառայում շինարարական կազմակերպության աշխատանքի պլանի բոլոր ցուցանիշները հաշվարկելու համար:

Աշխատանքի պլանը մշակվում է շինմոնտաժային այն աշխատանքների ամբողջ ծավալի համար, որոնք ենթակա են պլանային տարում շինարարական կազմակերպության սեփական ուժերով կատարելու համար՝ այդ աշխատանքների ֆի-

նանսավորման աղբյուրներից անկախ: Ելնելով արտադրական ծրագրից և աշխատանքի արտադրողականության սահմանված մակարդակից, աշխատանքի պլանում որոշվում են շինարարական կազմակերպության աշխատողների թիվը և նրանց աշխատավարձի ֆոնդը: Այդ ցուցանիշները որոշվում են շինմոնտաժային աշխատանքների, օժանդակ արտադրության և սպասարկող տնտեսության գծով առանձին-առանձին, ինչպես նաև շինարարական կազմակերպության գծով ամբողջությամբ վերցրած՝ առանձնացնելով բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների ու ծառայողների թիվն ու աշխատավարձի ֆոնդերը: Աշխատանքի պլանի բոլոր ցուցանիշները որոշվում են ինչպես ամբողջ պլանային տարվա, այնպես էլ ըստ առանձին եռամսյակների: Աշխատանքի պլանը շինֆինպլանի օրգանական բաղկացուցիչ մասն է հանդիսանում: Այդ պլանը կազմելու ժամանակ հաշվի է առնվում այն բոլոր միջոցառումների արդյունավետությունը, որոնք նշված են շինֆինպլանի մյուս բաժիններում, մասնավորապես նոր տեխնիկայի և կազմակերպչական-տնտեսական տարբեր միջոցառումների արմատավորման շնորհիվ ստացված աշխատանքի ու աշխատավարձի խնայողությունը:

Աշխատանքի պլանի մշակման գործում լայնորեն ներգրավվում են բանվորներ, ինժեներատեխնիկական աշխատողներ և ծառայողներ: Պլանների նախագծերը շինարարական կազմակերպություններում, որպես կանոն, քննարկվում են մշտական գործող արտադրական խորհրդակցություններում:

Շինարարական յուրաքանչյուր կազմակերպությանն իջեցվող պետական պլանային առաջադրանքների կազմում կան նաև աշխատանքի ու աշխատավարձի պլանային կոնկրետ առաջադրանքներ, այսինքն՝ մեկ աշխատողի պլանային արտադրանքը և միջին աշխատավարձը, աշխատողների թվի և նրանց աշխատավարձի ֆոնդերի լիմիտները: Այդ առաջադրանքների հիման վրա շինարարական կազմակերպությունը մշակում է իր աշխատանքի պլանը, որը լայն քննարկումից հետո հաստատվում է ամբողջ շինֆինպլանի կազմում:

Արտադրանքի ցուցանիշների և աշխատողների թվի որոշումը¹:
Մեկ աշխատողի պլանային արտադրանքի ցուցանիշները և աշխատողների թիվը որոշվում են շինարարական կազմակերպության գործունեության կոնկրետ պայմանները հաշվի առնող հաշվարկի հիման վրա: Այդ հաշվարկը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ (տես 408—409 էջերի օրինակը):

Աշխատանքների ծավալի (բնածեղ և նախահաշվային արժեքով) վերաբերյալ տվյալները, ինչպես դրանց միավորների, այնպես էլ ամբողջ տարվա համար, դրվում են աշխատանքների ֆիզիկական ծավալի տեղեկագրի (ведомость) հիմքում՝ ըստ այն խոշորացված կոնստրուկտիվ տարրերի և աշխատանքների տեսակների, որոնք շինարարության սկզբնական կազմակերպությունները մշակում են արտադրական ծրագրերի կազմում:

Աշխատանքների առանձին տեսակների և կոնստրուկտիվ տարրերի չափման միավորների պլանային աշխատատարույլան ցուցանիշները (մարդ-օրերով) պետք է լիովին հաշվի առնեն շինարարական բանվորների, ներառյալ մեքենավարների ու մեքենաները սպասարկող մյուս բանվորների, աշխատաքի բոլոր ծախսումները, ինչպես նաև ձմեռ ժամանակ կատարված աշխատանքների լրացուցիչ ծախսումները: Այդ ցուցանիշները որոշելու համար օգտագործվում են աշխատանքների համապատասխան տեսակների գծով շինարարական յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ու աշխատավարձի ծախսումների կալկուլյացիաները, որոնք շինմոտաժային աշխատանքների միասնական կամ տեղական նորմաների ու զնահատումների համաձայն կազմվում են յանվորական բրիգադներին ակորդային կարգագրեր տալու համար: Այդ կալկուլյացիաներում անհրաժեշտ ուղղումներ են մտցվում արտագործյան կազմակերպումն ու տեխնոլոգիան բարելավող այն միջոցառումներին համապատասխան, որոնք

¹ Միջին աշխատավարձի ցուցանիշների աշխատավարձի ֆոնդերի որոշման կարգը շարադրված է IX գլխում:

Շինվարչության աշխատողների ֆիլի ու արտադրանքի հաշվարկման օրինակ

Աշխատանքների և կոնստրուկտիվ տարրերի տեսակների անվանումը	Աշխատանքների ծավալը		Աշխատանքների նախա-հաշվային արժեքը		Բանվորների պահանջը (մարդ-օրերով)	
	Հափման միավորը	Քանակը	միավորի (ուրվիներով)	ամբողջ ծավալի (հազ. ուրբ.)	մեկ միավորին	աշխատանքների ամբողջ ծավալին
	2	3	4	5	6	7
Ա. Շինմոնտաժային աշխատանքներ	խմ	2790	0,34	0,9	0,11	3070
Հողային աշխատանքներ	»	21760	22,8	496,1	0,88	19149
Շարվածք աղյուսից						
Պատի պանելների և բլոկների մոնտաժում		13870	45,1	625,5	0,43	5964
Հավաքովի երկաթբետոնե և բետոնե կոնստրուկցիաների մոնտաժում	»	25180	46,2	1163,3	0,58	14604
Պատուհաններ	քմ	11700	16,1	188,4	0,55	6435
Դռներ	»	19770	11,0	217,5	0,26	5140
Հավաքովի միջնորմային պանելներ	»	129500	3,05	395,0	0,12	15540
Փայտե ֆերմաներ և ծայղիներ	խմ	246	65,5	16,1	2,0	492
Փայտե հարակներ	քմ	2580	4,1	10,6	0,17	439
Տանիքներ	»	12630	2,2	27,8	0,042	530
Այլ աշխատանքներ	հազ. ուրբ.	—	—	311,8	—	27683
Ը ն դ ա մ ե ն ը շինմոնտաժային հիմնական աշխատանքների դժով	—	—	—	3453	—	99046

1	2	3	4	5	6	7
Ոչ հիմնական շինմունտաժային աշխատանքներ ¹	—	—	—	—	—	25515
Հիմնական շինմունտաժային աշխատանքներ 26,5 տոկոսի չափով	—	—	—	—	—	124561
Ը ն դ ա մ ե ն ը շինմունտաժային աշխատանքներ	—	—	—	—	—	5530
Բ. օժանդակ արտադրություններ	—	—	—	—	—	5910
Մանր շինարարական մեքենաների շահագործման և նորոգման աշխղնկային տեղամաս	Հազ. ք.	—	—	40	—	—
Կենտրոնական մեքենայացված շաղախային հանգույց	»	—	—	—	—	—
Ը ն դ ա մ ե ն ը օժանդակ արտադրություններ	»	—	—	298	—	11440
Ը ն դ ա մ ե ն ը շինմունտաժային աշխատանքներ և օժանդակ արտադրություններ	—	—	—	—	—	136001

1 Շինարարական մեքենաների սպասարկում, վերադիր ծախսերի հաշվին կատարված աշխատանքներ և այլն:

նշված են տեխնիկական զարգացման ու կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանում: Դրա հետ մեկտեղ արտադրանքի մեկ միավորի համար պահանջվող աշխատա-ժամանակի քանակը որոշվում է արտադրանքի գործող նորմաների սպասվող գերակատարման տոկոսը հաշվի առնելով:

Կալկուլյացիաների բացակայության դեպքում արտադրու-նքի մեկ միավորին ընկնող աշխատաժամանակի պլանային պահանջը որոշելու համար կարող են օգտագործվել աշխա-տանքի ծախսումների նախահաշվային նորմաները, որոնք բերված են Շինարարական նորմաների և կանոնների (ՇՆԼԿ) IV մասում, շրջանային միասնական միավոր գնահատում-ների (ՇՄՄԳ) ժողովածուներում և սարքավորումների մոնտա-ժի գնացուցակներում: Սակայն պլանավորման նպատակ-ների համար այդ նորմատիվային աղբյուրների տվյալների օգտագործումը լուրջ դժվարությունների է հանդիպում, որով-հետև աշխատանքի ծախսումների նախահաշվային նորմաները բերվում են շինարարական կոնստրուկցիաների լայն անվա-նացանկով՝ շինմոնտաժային աշխատանքների կազմակերպ-ման ու մեքենայացման միջին պայմանների համար, որոնք կարող են զգալիորեն տարբերվել տվյալ շինարարական հրա-պարակի արտադրության կոնկրետ պայմաններից: Դա հաճախ պահանջում է աշխատանքի ծախսումների նախահաշվային նորմաներում էական ուղղումներ մտցնել, որը բավականին բարդ ու աշխատատար աշխատանք է: Բացի դրանից, աշխա-տանքի ծախսումների նախահաշվային նորմաները չեն նա-խատեսում մեքենավարների և շինարարական մեքենաներն սպասարկող մյուս բանվորների, ինչպես նաև շինանյութերն ու կոնստրուկցիաները շինարարական հրապարակում բեռնաթա-փելու ու տեղավորելու գործով ղբազվող բանվորների աշխա-տաժամանակի ծախսումները: Նախահաշվային նորմաներն օգտագործելիս այդ աշխատանքները հաշվի են առնվում ու պլանավորվում լրացուցիչ կերպով:

Աշխատանքի պլանավորումը բարելավելու նպատակներով շինարարա-կան որոշ կազմակերպություններ մշակել են խոշորացված պլանային նոր-

մաների ու գնահատումների ժողովածուներ՝ իրենց շինարարական հրապարակների արտադրության կոնկրետ պայմաններում կիրառելի աշխատանքի ծախսումներն ու աշխատավարձի ֆոնդը որոշելու համար: Այդ խոշորացված նորմաները և գնահատումները կազմված են շինարարական և մոնտաժային աշխատանքների գործող միասնական: նորմաներով ու գնահատումներով (ՄՆուԳ): Դրանք հաշվի են առնում շենքերի ու կառուցվածքների համապատասխան կոնստրուկտիվ տարրերի ու մասերի կառուցման համար անհրաժեշտ շինարարական պրոցեսներն ամբողջ կոմպլեքսի կատարումը:

Օրինակ, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժման խոշորացված պլանային նորմաներն ու գնահատումները հաշվի են առնում կոնստրուկցիաները կառուցվող օբյեկտի մոտ բեռնաթափելու և պահեստավորելու աշխատանքի ծախսումները՝ դրանք գործարանից փոխադրելու դեպքում: կոնստրուկցիաների բարձրացումը և տեղակայումը՝ համապատասխան ամրացումների հետ մեկտեղ, դնովի մետաղյա մասերի կցվածքների զոդումը և կցվածքների ծածկումը շաղախով՝ անհրաժեշտ փայտամածների տեղադրմամբ ու տեղափոխմամբ և շաղախը տեղ հասցնելով և այլն:

խոշորացված պլանային նորմաների ու գնահատումների կիրառումը զգալիորեն պարզեցնում է աշխատանքի պլանների մշակումը և միաժամանակ բարձրացնում բոլոր ցուցանիշների ճշտությունը: Ուստի այդպիսի նորմաների մշակման փորձը արժանի է լայն տարածման:

Շինմոնտաժային հիմնական աշխատանքների հետ մեկտեղ աշխատանքի պլանն ընդգրկում է այն աշխատանքները, որոնք կատարվում են վերադիր ծախսերի հաշվին, շինատարական մեքենաների սպասարկման աշխատանքները, ինչպես նաև ենթակապալառուական կազմակերպությունների սպասարկումը: Աշխատանքի ծախսումների և այդ աշխատանքների կատարման համար աշխատավարձի ծախսերի ուղղակի որոշումը մեծ դժվարություններ է ներկայացնում, քանի որ այդ աշխատանքների ծավալի մասին տվյալները տեխնիկական փաստաթղթերում բացակայում են: Աշխատանքի տարեկան պլանը մշակելիս, այդ խնդիրը սովորաբար լուծվում է շինմոնտաժային հիմնական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ աշխատանքի ծախսումների վրա որոշակի տոկոս ավելացնելու միջոցով:

Լրացուցիչ ծախսումների այդ կարգի պլանային լիմիտները շինարարական կազմակերպությունները սահմանում են

մի շարք շինմոնտաժային վարչութիւնների հաշվետու տրվ-
յալների վերլուծութեան և ընդհանրացման հիման վրա՝ բացա-
ռելով անարտադրողական ծախսումներն ու կորուստները:

Օրինակ, Գլխմոսշինում վերադիր ծախսերի հաշվին իրականացվող աշ-
խատանքների համար սահմանված են աշխատանքի լրացուցիչ ծախսումնե-
րի հետևյալ չափերը (տոկոսներով՝ ընդհանուր շինարարական աշխատանք-
ների կատարման համար աշխատաժամանակի նկատմամբ եղած պա-
հանջից) ճանապարհների և մերձուղիների պահպանման համար մինչև 1,5
տոկոս, անվտանգութեան տեխնիկայի միջոցառումների վրա՝ մինչև 4 տո-
կոս, գույքի ու հարմարանքների պատրաստման ու վերանորոգման՝ մին-
չև 1,6, շինարարական հրապարակում շինանյութերի և դետալների պահ-
պանման հետ կապված տրանսպորտային լրացուցիչ աշխատանքների վրա՝
մինչև 2, տնտեսական աշխատանքներին (հատակի, պատուհանների և դռ-
ների լվացում, աղբի, սառույցի և ձյան հավաքում և այլն)՝ մինչև 5,5,
չնախատեսված այլ աշխատանքների համար՝ մինչև 3 տոկոս:

Կատարված հաշվարկով որոշվում է շինմոնտաժային աշ-
խատանքների և օժանդակ արտադրութեան վրա կուտուցված
աշխատանքի ծախսումները՝ մարդ-օրերով: Աշխատողների
թվի ցուցանիշները և մեկ աշխատողին ընկնող տրատալուսները
հաշվելիս դրանք ընդունվում է որպես հիմք:

Բանվորների միջին ցուցակային թիվը որոշելու համար
աշխատաժամանակի հաշվեկշիռ կազմելու միջոցով սահման-
վում է պլանավորվող տարում մեկ բանվորի աշխատանքի
հաճախման նորմալ քանակը: Այդ հաշվեկշիռն ունի մոտու-
վորապես հետևյալ տեսքը:

Տարվա օրացուցային օրերի ընդհանուր քանակը	365
Այդ թվում ոչ-աշխատանքային օրեր	
ա) տոնական	6
բ) հանգստի	52
<hr/>	
Ը ն դ ա մ ե ն ք	58
Տարվա աշխատանքային օրերի քանակը	307
Այդ թվում բացակայություն	
ա) արձակուրդ	14

Արձակուրդի օրերի քանակը հաշվվում է արձակուրդի նահմանված տևականությունը համապատասխան, իսկ մնացած անխուսափելի բացակայությունները նկատի են առնվում նախընթաց ժամանակաշրջանի փաստացի տվյալներով՝ հաշվի առնելով առողջապահական և այլ միջոցառումների անցկացումը:

Բանվորների պլանային թիվը որոշվում է արտադրական ծրագրի կատարման համար անհրաժեշտ մարդ-օրերի ընդհանուր քանակը պլանային տարում հաճախած օրերի թվի վրա բաժանելու միջոցով:

Ինժեներատեխնիկական աշխատողների և ծառայողների միջին ցուցակային թիվն ընդունվում է տվյալ շինարարական կազմակերպության համար հաստատված հաստիքային ցուցակով:

Բոլոր աշխատողների միջին ցուցակային թիվը ուսուցվում է որպես բանվորների միջին ցուցակային թվի և ինժեներատեխնիկական աշխատողների ու ծառայողների միջին ցուցակային թվի միագումար:

Մեկ բանվորի և մեկ աշխատողի տարեկան արտադրունքը հաշվարկվում է շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը բանվորների միջին ցուցակային թվի կամ աշխատողների միջին ցուցակային թվի վրա բաժանելու միջոցով:

Մեր օրինակում շինմոնտաժային աշխատանքների տարեկան պլանը կատարելու համար անհրաժեշտ է 133238 մարդօր, Տարվա ընթացքում մեկ բանվորի 286 աշխատանքային օրերի պլանային քանակի դեպքում շինարարական կազմակերպության անհրաժեշտ է ունենալ 466 բանվոր (133238 : 286):

Նրբ բոլոր աշխատողների թիվը կազմի 537 մարդ (հաշվի առնելով վարչականավարչական ապարատը՝ ըստ հաստիքային ցուցակի), սպա

մեկ աշխատողի տարեկան արտադրանքը կհասնի 6430 ուրբու (3453000, 537), իսկ մեկ բանվորին՝ 7410 ուրբու (3453000 :466),

Աշխատանքի արտադրողականության օպերատիվ պլանավորումը: Շինֆինպլանում նախատեսված աշխատանքի առաջադրանքներն ու լիմիտները կոնկրետացվում ու ճշտվում են շինարարական վարչության, աշխղեկների ու վարպետների տեղամասերի ամսեկան օպերատիվ պլաններում:

Աշխատանքի օպերատիվ պլանավորումն իրականացվում է այն նույն ցուցանիշներով, ինչ որ տարեկան պլանումն է: Աշխատանքային ծախսումները հաշվարկվում են, ելնելով սահմանված պլանային նորմատիվների հիման վրա ամսեկան պլանում ճշգրտված շինարարական աշխատանքների և կոնստրուկտիվ տարրերի ծավալից՝ հաշվի առնելով աշխատանքների կատարման կոնկրետ պայմաններն ու մեթոդները: Ընդ որում բանվորների արտադրական առաջադրանքներն աշխղեկների տեղամասերի համար սահմանվում են շինարարական վարչության միամսյա պլանի հիման վրա, իսկ վարպետների տեղամասի համար՝ աշխղեկների համապատասխան տեղամասերի ամսեկան պլանների հիման վրա:

Մեկ աշխատողի արտադրական առաջադրանքներն ամսեկան պլաններում, առանձին տեղամասերի գծով կարող են շեղվել՝ եռամսյակային պլանով նախատեսված ամսեկան միջին արտադրանքից: Սակայն ամբողջովին վերցրած եռամսյակի ընթացքում մեկ աշխատողի միջին արտադրանքը չպետք է ցածր լինի շինարարական վարչության եռամսյակային պլանի ցուցանիշներից:

Ամիսը վերջանալուն պես շինարարական վարչության պլանային բաժինը արտադրատեխնիկական բաժնի ու հաշվապահության հետ և աշխղեկների ու վարպետների ներգրավմամբ որոշում է տեղամասերի ամսեկան պլանների կատարման արդյունքները բոլոր ցուցանիշների, այդ թվում նաև աշխատանքի արտադրողականության առաջադրանքների կատարման գծով:

Շինարարական շատ կազմակերպություններում ուշխա-

տանքի արտադրողականութեան պլանավորման գործում դեռևս էական թերութիւններ կան: Աշխատանքի արտադրողներու թիւնութեան աճի պլանային առաջադրանքները մի շարք դեպքերում անբավարար են հիմնավորվում և արտադրութեան ռեզերվները հաշվի չեն առնվում: Դա թուլացնում է վարպետներին, աշխուղեկների և շինարարական կազմակերպութեան տնտեսական ու այլ ստորաբաժանումների ղեկավարների պատասխանատւութիւնը՝ աշխատանքի արտադրողականութեան անշեղ բարձրացման եղած ռեզերվներն օգտագործելու համար:

Այդ կապակցութեամբ շատ կարևոր նշանակութիւնն է ձևաբերում սիստեմատիկ վերահսկողութեան կազմակերպումը աշխատանքի արտադրողականութեան ճիշտ պլանավորման ու հաշվառման նկատմամբ՝ ինչպես շինարարութիւնը կառավարող օրգանների, այնպես էլ պարտիսական ու արհմիութենական կազմակերպութիւնների կողմից:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սոցիալիստական պլանային էկոնոմիկայի պայմաններում անսահման հնարավորութիւններ կան աշխատանքի արտադրողականութեան սնունդհատ ու արագ աճի համար: Այդ հնարավորութիւններն իրացվում են կազմակերպական-տեխնիկական տարբեր միջոցառումների անցկացման միջոցով: Շինարարութեան բնագավառում աշխատանքի արտադրողականութեան բարձրացման կարևորագույն ուղիներն են՝ հետագա տեխնիկական առաջադիմութիւնը, արտադրութեան և աշխատանքի կազմակերպման բարելավումը, մշտական որակյալ կադրերի ամրացումը, իրենց աշխատանքի արդյունքների մեջ աշխատողների նյութական շահագրգռվածութեան բարձրացումը, մասսայական սոցիալիստական մրցութիւնը և արտադրութեան առաջավորների ու նորարարների փորձի արմատավորումը:

Տեխնիկական առաջադիմութիւնը՝ աշխատանքի արտադրողականութեան անշեղ աճման հիմքն է: Կ. Ի. Լենինը բաղմիցս

նշել է, որ սոցիալիզմի օրոք աշխատանքի արտադրողականության աճի վճռական պայմանը արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների լայն արմատավորումն է: Շինարարության մեջ տեխնիկական առաջադիմությունն իր արտահայտությունն է գտնում ամենից առաջ հանձին շինարարության ինդուստրիալ մեթոդների հետագա արմատավորման:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման համար վիթխարի նշանակություն ունի, մասնավորապես, կառուցվող շենքերի ու կառույցների հավաքովիության աստիճանի բարձրացումը: Միաձույլ երկաթբետոնե և շինարարական այլ կոնստրուկցիաների փոխարեն յուրաքանչյուր խորանարդ մետր հավաքովի երկաթբետոնի կիրառումը շինարարական հրապարակում աշխատանքի տնտեսում է տալիս մինչև երկու և ավելի մարդ-օր:

Հավաքովի կոնստրուկցիաների կիրառման արդյունավետությունը բարձրանում է նրանց չափերի մեծացման, խոշոր բլոկների ու հանգույցների կիրառման զուգընթաց:

Այսպես, Գլխմոսշինի կառույցներում բնակելի շենքերի 1 խուր մ-ի վրա միջին հաշվով ծախսվում է՝ աղյուսե պատեր շարելիս մոտ 1,3 մարդ-օր, խոշոր բլոկներից պատեր կառուցելիս՝ 0,8, իսկ խոշոր պանելներից՝ 0,5 մարդ-օր:

Արդյունաբերական շենքերի 1⁰ քառ մ ծածկի մոնտաժման վրա, $2,18 \times 1,16$ մ չափի կողավոր սալեր օգտագործելիս, ծախսվում է 0,55 մարդ ժամ, իսկ 18 քառ. մ մակերես ունեցող պանելներ կիրառելիս՝ միայն 0,19 մարդ-ժամ, այսինքն՝ 3 անգամ ավելի քիչ: Առանձին տարրերից կազմելած (շրջանակներ, փեղկեր, ռդանցքներ և այլն) պատուհանի սարքերի հավաքման ու տեղադրման վրա կառույցներում ծախսվում է 13,2 մարդ-ժամ, իսկ գործարանում հավաքած պատուհանի բլոկի մոնտաժման վրա՝ 1,2 մարդ-ժամ, այսինքն՝ 11 անգամ պակաս:

Հավաքովի կոնստրուկցիաների կիրառման արդյունավետությունը շատ բանով կախված է նրանց որակից: Հավաքովի տարրերի և կոնստրուկցիաների ցածրորակ լինելը, տրված չափերից կատարված շեղումները հասցնում են ամեն տեսակի «քերելու», անհավասար մակերեսները վերասվաղելու և այլ

կիսատ-պռատությունների վրա արվող աշխատանքների մեծ ծախսումների: Քիչ չեն այն դեպքերը, երբ աշխատաժամանակի անարտադրողական ծախսումները զգալիորեն գերազանցում են իրենց՝ մոտաժային աշխատանքների աշխատատարությունին:

Շինարարության մեջ աշխատանքի արտադրողականության էական աճ է տալիս նորագույն շինանյութերի կիրառումը՝ շոր սվաղ, հատակներ պատրաստելու համար թերթային ու ուղւոնային նյութեր, սինթետիկ խեժերի հիման վրա պատրաստված տարբեր տեսակի պլաստիկներ, ալյումինի ձուլվածքից պատրաստած կոնստրուկցիաներ և այլն: Պողպատը, փայտը և շինարարական մյուս նախկինում օգտագործվող նյութերը շարունակ փոխարինվում են պրակտիկ և թեթև նյութերով: Առաջադիմական նյութերի լայն արմատավորումը մոտակա տարիներին հնարավորություն կտա խիստ կերպով կրճատելու սվաղի, հարդարման և այլ աշխատատար աշխատանքների ծավալը: Արդյունավետ շինանյութերի կիրառումը միաժամանակ կնպաստի կառուցվող շենքերի ու կառույցների որակի բարձրացմանը և քաշի իջեցմանը, որը նույնպես զգալի տնտեսում է տալիս, քանի որ ավելի թեթև կոնստրուկցիաների տեղափոխումը, հավաքումը և տեղադրումը աշխատանքի ավելի քիչ ծախսումներ է պահանջում: Փորձը ցույց է տալիս, որ շենքերի և կառույցների քաշի իջեցման յուրաքանչյուր տոկոսը նրանց կառուցման աշխատատարությունը պակասեցնում է մոտավորապես 0,5 տոկոսով:

Շինարարության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտի հաշվարկները ցույց են տալիս, որ հավաքովի երկաթբետոնի, պատերի խոշոր պանելների ու բլոկների և այլ հավաքովի կոնստրուկցիաների, ինչպես նաև յոթնամյա պլանով նախատեսված արդյունավետ շինանյութերի առավել լայն կիրառումը հնարավորություն կտա շինարարության բնագավառում աշխատանքի արտադրողականությունը յոթնամյակում բարձրացնել ոչ պակաս, քան 19—20 տոկոսով:

Աշխատանքի արտադրողականության աճի կարևորագույն

գործոն է հանդիսանում շինարարական արտադրության մե-
քենայացման մակարդակի հետագա բարձրացումը, ավտոմա-
տացման միջոցների արմատավորումը: Սակայն շինարարա-
կան աշխատատար պրոցեսների մեքենայացման գործում
դեռևս խոշոր թերություններ կան: Չնայած մասսայական աշ-
խատանքների մեքենայացման համեմատական բարձր մա-
կարդակին, շինարարութայան մեջ բանվորների մոտ 60 տոկո-
սը դեռևս աշխատում են ձեռքով:

Աշխատանքների հետագա մեքենայացման հիման վրա
աշխատանքի արտադրողականութայան հետագա աճի ռեզերվ-
ները խիստ մեծ են: Օրինակ, հողափոր, տրանսպորտային,
բեռնող-բեռնաթափող և շատ այլ մեքենաների կիրառումը
թույլ է տալիս աշխատանքի արտադրողականությունը՝ ձեռքի
աշխատանքի համեմատությամբ, բարձրացնելու 10—20 ան-
գամ: Մասսայական բոլոր աշխատանքների կոմպլեքս մեքե-
նայացումը հնարավորություն կտա՝ ավելի արտադրողաբար
օգտագործելու համար, կազատելու հարյուր հազարավոր բան-
վորներ, որոնք ներկայումս զբաղված են ձեռքի ծանր աշ-
խատանքով:

Շինարարության մեջ արտադրողականության աճման մեծ
հնարավորություններ կան նաև մեքենաների ու մեխանիզմնե-
րի լավ օգտագործման համար՝ շինարարական տեխնիկան
մասնագիտացված կազմակերպություններում կենտրոնացնե-
լու հիման վրա:

Այդ մասին են վկայում, օրինակ, հետևյալ փաստերը: Էքսկավատոր-
ների միջին արտադրանքի դեպքում, որը հավասար է 100 հազ. խոր մ-ից
մի փոքր ավելի հողի՝ շերեփի տարողության 1 խորանարդ մետրի համար,
լավագույն մեքենավարների արտադրանքը հասել է՝ Կրեմենչուկի հիդրո-
էլեկտրակայանի շինարարության մեջ 331 հազ. խոր մ-ի, Իրկուտսկի
հիդրոէլեկտրակայանում՝ 296 հազ., Վոլգոգրադի նավթավերամշակման գոր-
ծարանի շինարարության մեջ՝ 252 հազ. խոր մ-ի և այլն:

Շերեփի 1 խոր մ տարողություն ունեցող էքսկավատորի միջին ար-
տադրանքը ճանապարհային շինարարության մինիստրության գծով 1961
թվականին կազմել է 129 հազար խոր մ հող, իսկ «Սրեդազստրոյմեխա-
նիզացիա» մասնագիտացված տրեստի գծով այն հասավ 211 հազար խոր
մ-ի: «Սիբստրոյմեխանիզացիա» տրեստի № 9 մեքենայացված շարասյան

կուեկտիվը, որին շնորհվել է կոմունիստական աշխատանքի կուեկտիվի կոչում, 1 խոր մ տարողությամբ շերեփ ունեցող էքսկավատորի փաստական արտադրանքը հասցրել է 216 հազար խոր մ-ի, այսինքն՝ ամբողջ մինիստրության գծով եղած փաստական արտադրանքից 1,7 անգամ ավելի շատ:

Շինարարության էկոնոմիկայի գիտա-հետազոտական ինստիտուտի հաշվարկներով յոթնամյա պլանով նախատեսված շինարարական արտադրության մեքենայացման մակարդակի բարձրացումը՝ մեքենայացված աշխատանքների կազմակերպման ու տեխնոլոգիայի միաժամանակյա կատարելագործմամբ, ինչպես նաև գոյություն ունեցող մեքենական պարկի օգտագործման բարելավումը հնարավորություն կտա շինարարության մեջ աշխատանքի արտադրողականությունը 1965 թվականին բարձրացնելու ոչ պակաս, քան 24—25 տոկոսով:

Այսպիսով, շինարարության հետագա տեխնիկական առաջադիմությունը, լայն ինդուստրացումը ինչպես ընթացիկ յոթնամյակում, այնպես էլ քսանամյակի հեռանկարում կապահովեն կատարելու շինարարության գծով աշխատանքի արտադրողականության աճի ընդհանուր առաջադրանքի ավելի քան երկու երրորդը:

Արտադրության և աշխատանքի կազմակերպման բարելավումը: Շինարարության լայն ինդուստրացումը հրամայաբար պահանջում է շինարարական արտադրության կազմակերպման առաջադիմական ձևերի արմատավորում, շինարարական կազմակերպությունների խոշորացում ու մասնագիտացում:

Արտադրա-տեխնիկական հզոր բազայի վրա հենվող խոշոր տերիտորիալ կապալաուու շինարարական կազմակերպությունները, սակավազոր կազմակերպությունների համեմատությամբ, եղած ռեսուրսների մանևրման զգալիորեն ավելի մեծ հնարավորություններ ունեն, որը նպաստում է աշխատաժամանակի անարտադրողական կորուստների վերացմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Այսպես, Գլխմոսշինի գոյության առաջին երեք տարում բանվորների միջին արտադրանքը աճել է համարյա 60 տոկոսով: Դրա հետ

մեկտեղ շինարարական կազմակերպությունների խոշորացումը հնարավորություն է սալիս պակասեցնելու վարչատնտեսական անձնակազմի թիվը և, հետևաբար, բարձրացնելու մեկ աշխատողի արտադրանքը:

Աշխատանքի արտադրողականության աճման համար առանձնապես մեծ հնարավորություններ է բացում շինարարական կազմակերպությունների մասնագիտացումը. «Միայն նեղ մասնագիտացման դեպքում,— ասել է Ն. Ս. Խրուշչովը 1954 թվականին շինարարների Համամիութենական խորհրդակցությունում,— կարելի է հասնել աշխատանքի բարձր արտադրողականության և լավ որակի: Այդ պայմաններում կբարձրանան և բանվորների աշխատավարձը: Այնտեղ, որտեղ մասնագիտացում չկա, և աշխատանքների բոլոր տեսակները կատարվում են մի տրեստի կամ գրասենյակի կողմից, այնտեղ բանվորի աշխատավարձը բարձր չի լինի»:

Օրինակ՝ «Մագնիտաշին» տրեստում, ըստ շինարարական աշխատանքների կոմպլեքսների մասնագիտացված շինարարական վարչություններում, աշխատանքի արտադրողականությունը 1950—1958 թվականներին բարձրացավ երկու անգամ, իսկ շմասնագիտացվածներում՝ ընդամենը 47 տոկոսով:

Շինարարական կազմակերպությունների խոշորացումն ու մասնագիտացումը, ապահովելով առաջավոր շինարարական տեխնիկայի կիրառումը և շինարարների մասնագիտական պատրաստման մակարդակի բարձրացումը, խիստ՝ կարևոր նշանակություն ունեն աշխատանքի արտադրողականության ձմեռային անկումները վերացնելու գործում, ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծում տարվա ընթացքում համաչափ աշխատելու համար:

Կառույցներում տեխնիկայի հարաճուն կիրառումը և աշխատօրվա կրճատումը պահանջում են աշխատանքի կազմակերպման մշտական կատարելագործում:

Աշխատաժամանակի կորուստները շատ կառույցներում դեռևս մեծ են, հատկապես դրանք զգալի են աշխատանքային հերթափոխի ընթացքում: Քրոնոմետրական դիտումների տրվ-

յալներով այդ կորուստները կառուցներում կազմում են 15—20 տոկոս: Աշխատաժամանակի կորուստները վերջին տարիներս թեև որոշ չափով իջել են, բայց դեռևս բարձր են և միջին հաշվով կազմում են հերթափոխում ավելի քան մեկ ժամ:

Քրոնոմետրական սովյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատաժամանակի կորուստի 80—90 տոկոսն առաջանում է հիմնականում նյութերի մատակարարման ուշացումից, աշխատանքի հրապարակը ժամանակին չնախապատրաստելուց, աշխատատեղերը ժամանակին անպատրաստ լինելուց, բանվորներին որակյալ գործիքներով անբավարար ապահովելուց, աշխատանքային կարգապահության խախտումից և շինարարական մեքենաների անսարքությունից: Աշխատաժամանակի ներհերթափոխային կորուստների միայն աննշան մասն է (10—20 տոկոս) առաջանում շինարարական կազմակերպություններից կախում չունեցող պատճառներից (մթնոլորտային պայմաններից, էլեկտրաէներգիայի պատասխական ընդհատումներից և այլն):

Աշխատաժամանակի բացահայտ կորուստների կողքին կան նաև թաքնված կորուստներ: Մի շարք կառուցներում դրանք հասնում են հերթափոխի տեղումնային 10—12 տոկոսի: Դրանց թվումն են աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական պահանջները չպահպանելուց առաջացած ումհն տեսակի փոփոխությունների, ինչպես նաև նյութերի ոչ անհրաժեշտ փոխաբեռնման և դրանց տեղափոխման վրա կատարված աշխատանքի անարտադրողական ծախսումները:

Փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, ուր աշխատանքի ու արտադրության կազմակերպման հարցերի վրա ուստոշաճ ուշադրություն է դարձվում, աշխատաժամանակի կորուստները հասցվում են նվազագույնի: Աշխատաժամանակի օգտագործման և աշխատանքի արտադրողականության բարձրացման դործում հատկապես լավ ցուցանիշներ են ձեռք բերվում այն ժամանակ, երբ շինարարությունն իրականացվում է աշխատանքների կատարման նախապես մշակված նախագծերի ու տեխնոլոգիական կանոնների հիման վրա, որոնք նախատե-

սում են աշխատանքների կազմակերպման առաջավոր մեթոդների և առաջադիմական տեխնոլոգիայի կիրառում, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների կազմակերպման հոսքային այն մեթոդների ներդրմամբ, որոնք ապահովում են շինարարական արտադրության ռիթմիկությունը:

Կառույցներում աշխատանքի կազմակերպման տարածված ձևերից մեկը՝ հատկապես մասսայական շինարարական աշխատանքներում, կոմպլեքսային բրիգադներն են, որոնք կատարում են փոխկապակցված արտադրական պրոցեսների որոշակի կոմպլեքսներ:

Կոմպլեքսային բրիգադի մեջ մտցվում են տարբեր մասնագիտության բանվորներ: Օրինակ, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժման կոմպլեքսային բրիգադում, բացի մոնտաժողներից, մտնում են կոունկի մեքենավարն ու ճոպանորդները, կցվածքներ զոդողները և այլ բանվորներ: Կոմպլեքսային բրիգադների անդամները հաճախ յուրացնում են երկու-երեք մասնագիտություն և հետևաբար կարող են կատարել տարբեր աշխատանքներ: Այսպես, մոնտաժողը հաճախ կարող է զոդել հավաքովի կոնստրուկցիաների կցվածքները, իսկ զոդողը՝ մոնտաժել այդ կոնստրուկցիաները:

Վերջին տարիներս մի շարք կառույցներում առաջ է եկել կոմպլեքսային բրիգադների նոր ձև՝ վերջնական արտադրամասի բրիգադներ: Նման բրիգադն արտադրական առաջադրանք (կարգազիր) է ստանում կատարելու ամբողջ շենքի (կառույցի) կամ առանձին սեկցիայի (հանգույցի) աշխատանքները: Այդ կարգի դեպքում բրիգադի յուրաքանչյուր անդամ նյութապես շահագրգռված է վերջնական արտադրանքի թողարկումն ավելացնելու, ամեն տեսակի օժանդակ և տրանսպորտային այնպիսի օպերացիաների առավելագույն կրճատման մեջ: առանց որի կարելի է յուրա Գնալ աշխատանքների ճիշտ կազմակերպման դեպքում:

1962 թվականին Սվերդլովսկ քաղաքում Շևչենկոյի փողոցի վրա «Բնակչին» տրեստի № 15 վարչությունը սահմանված շորս ամիս ժամկետում շահագործման հանձնեց խոշոր բլոկային քառասուն բնակարանանոց մի տուն: Բոլոր մոնտաժային, էլեկտրագոման, ատաղձագործական,

հյուանային, ծեփագործական, ներկարարական, ապակու աշխատանքները կատարվել են վերջնական արտադրանքի 50 հոգուց բաղկացած մի կոմպլեքսային բրիգադի կողմից:

Եթե համանման տների կառուցման դեպքում, ուր աշխատել են մասնագիտացված բրիգադներ, 1 քառ մ բնակելի տարածության վրա աշխատանքի ծախսումը կազմել է 4,06 մարդ-օր, ապա՝ կոմպլեքսային բրիգադում դրանք իջել են մինչև 3,12 մարդ օրվա: Արտադրանքի աճման հետ ավելացավ նաև աշխատավարձը:

Կոմպլեքսային բրիգադներում առավել լիակատարությամբ է դրսևորվում բանվորների ամբողջ կոլեկտիվի ստեղծագործական նախաձեռնությունը: Հենց դրա համար էլ կոմպլեքսային բրիգադները ցույց են տալիս աշխատանքի բարձր արտադրողականության օրինակներ:

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ կոմպլեքսային և նեղ մասնագիտացված բրիգադները, որոնք կոմպլեկտավորված են հիմնականում մի որևէ մասնագիտության բանվորներից, չպետք է հակադրվեն միմյանց: Մասնագիտացված բրիգադներ ստեղծվում են գլխավորապես շինարարական և մոնտաժային աշխատանքների առանձին տեսակները կատարելու համար: Աշխատանքի կազմակերպման այդպիսի ձևը աշխատանքների լայն հրապարակի առկայության դեպքում սյուժմաններ է ստեղծում բանվորների մասնագիտական վարչակետության էլ ավելի արագ աճման, մեքենայացման միջոցների լավագույն օգտագործման համար, որի հաշվին զգալիորեն բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը և բարելավվում շինմոնտաժային աշխատանքների որակը:

Աշխատանքի առավել ռացիոնալ կազմակերպումն ապահովելու համար անհրաժեշտ է խելացիորեն ղուգակցել կոմպլեքսային ու մասնագիտացված բրիգադների կիրառումը՝ հաշվի առնելով կատարվող աշխատանքների ծավալն ու բնույթը:

Աշխատանքի արտադրողականության աճի վրա խիստ մեծ ազդեցություն է գործում առաջավորների ու նորարարների կողմից առաջարկված աշխատանքների կառուցման առաջադիմական մեթոդների կիրառումը: Այսպես, մի շարք կառուց-

ներում քարային և ծեփի աշխատանքների կատարման համատեղված մեթոդի կիրառումը ապահովում է ծեփագործների աշխատանքի արտադրողականության աճում 2—3 անգամ, կրճատելով շաղախի ծախսումը:

Նորարար-շինարարների կիրառած աշխատանքի առաջավոր մեթոդները ուղղված են տեխնիկայի, տեխնոլոգիայի և շինարարական արտադրության կազմակերպման կատարելագործմանը (մեքենաների, գործիքների ու հարմարանքների կատարելագործում, աշխատանքների ավելի ուսցիտնուլ ձևերի կիրառում, օղակներում ու բրիգադներում աշխատանքի բաժանում, մասնագիտությունների համատեղում, աշխատատեղի ուսցիտնուլ կազմակերպում, շինարարական մեքենաների օգտագործման բարելավում, գրաֆիկով աշխատանք և այլն):

Շինարարական կազմակերպությունների նորմալ աշխատանքի, աշխատաժամանակի անարտադրողական կորուստներն իջեցնելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու անհրաժեշտ պայմանը սոցիալիստական աշխատանքային կարգապահության ամրապնդումն է: Սոցիալիստական արտադրության մեջ աշխատանքային կարգապահության ամրապնդման հիմքը աշխատողների կոլտուրական մակարդակի և գիտակցության բարձրացումն է, համոզման մեթոդների, օրինակի ուժի ու գաղափարա-դաստիարակչական աշխատանքի զուգակցումը նյութական խրախուսման և վարչական ներգործման մեթոդների հետ:

Հաշվումները ցույց են տալիս, որ աշխատանքի ու արտադրության կազմակերպումը բարելավելու շնորհիվ (հաշվի սունելով աշխատողների անցումը յոթժամյա աշխատօրվա) յոթնամյակի վերջում, 1958 թվականի համեմատությամբ, աշխատանքի արտադրողականությունը կարող է բարձրանալ մոտավորապես 18—19 տոկոսով: Դրան հասնելու համար ըստ էության որևէ կապիտալ ներդրում չի պահանջվում: Աշխատանքի արտադրողականության աճման այդ խոշորագույն ոեզերվի լրիվ օգտագործումը շինարարական բոլոր կազմակերպությունների կոլեկտիվների կարևորագույն խնդիրն է:

Շինարարական կազմակերպությունների ամրապնդումը մշտական որակյալ կադրերով: Շինարարության տեխնիկական հագեցվածության աճման, աշխատանքների կատարման ինդուստրիալ մեթոդների ներդրման և շինարարական կազմակերպությունների մասնագիտական զարգացման զուգընթաց շինարարների կադրերի կազմում առաջադիմական լուրջ փոփոխություններ են տեղի ունենում:

Կառույցներից բոլորովին անհետացել են ֆիզիկական ծանր աշխատանքի ոչ վաղ անցյալի այնպիսի մասսայական մասնագիտություններ, ինչպես սայլակորդները, կեռով բեռնակիրները, իշոտնուկ կրողները, հող հարթողները, սղոցողները, դուրգամողները, խիճ ջարդողները: Միաժամանակ երևան են եկել բարձր որակավորում պահանջող շատ նոր մասնագիտություններ՝ շինարարական տարբեր մեքենաների մեքենավարներ, մոնտաժողներ, զոդողներ և այլն: Խիստ կերպով փոխվել է պահպանված մասնագիտությունների բնույթը: Օրինակ, ներկարարները ավելի ու ավելի հաճախ են վրրձինը փոխարինում օդաճնշիչ ներկափոշեցրիչներով, ժեփագործները հաճախ երեսապատում են մակերեսները չոր սվաղի սալերով կամ աշխատում են շաղախապոմպի օգնությամբ և այլն:

Շինարար բանվորների մասնագիտական վարպետությունը գնալով ավելի ու ավելի մեծ չափով բնորոշվում է մեքենական տեխնիկայի և արտադրության առաջավոր տեխնոլոգիայի խոր գիտելիքներով: Ժամանակակից շինարարությանը հարկավոր են բարձրորակ, փորձված բանվորներ ու ինժեներատեխնիկական աշխատողներ:

Կադրերի կուլտուրտեխնիկական մակարդակը զգալի չափով որոշում է շինարարության աշխատանքի արտադրողականության աճը: Ուստի շինարարական մշտական որակյալ կադրերի ստեղծումն ու ամրացումը ժողովրդատնտեսական կարևոր խնդիր է:

Վերջին տարիներին պարտիայի և կառավարության կողմից նախատեսված միջոցառումների իրականացման շնորհիվ զգալիորեն ավելացել է բարձր որակավորում ունեցող այն

բանվորների թիվը, որոնք ունեն շինարարության մեջ հինգ տարուց ավելի անընդհատ աշխատանքի սաաժ և կառույցներում են գտել իրենց հիմնական մասնագիտությունը: Սակայն շինարարական շատ կազմակերպություններ դեռևս ապահովված չեն մշտական որակյալ կադրերով: Որոշ կազմակերպություններում բանվորների ցուցակային կազմի կեսից ավելին ամեն տարի դուրս են գալիս և լրացվում նորերով, որոնք, որպես կանոն, շինարարական մասնագիտություն չունեն:

Կադրերի այսքան զգալի շարժումը բացատրվում է դիսավորապես նրանց աշխատանքի ու կենցաղի կազմակերպման գործում եղած խոշոր թերություններով, ինչպես նաև այն բանով, որ շինարարությունն ավարտվելուց հետո շատ բանվորներ աշխատանքի են անցնում այն ձեռնարկություններում, որոնք հենց իրենք են կառուցել: Ոչ քիչ թվով լավ մետաղագործներ, մեքենաշինարարներ, երկաթուղայիններ, էներգետիկներ և այլ արդյունաբերության բանվորներ իրենց աշխատանքային գործունեությունը սկսել և աշխատանքային առաջին կոմիվածքը ստացել են կառույցներում:

Կադրերի հոսունությունը դեմ, շինարարների մշտական կադրերի ստեղծման համար մղվող պայքարի հիմնական, վրձնական ուղղությունը շինարարության հետագա ինդուստրացումն է, որի ընթացքում շինարարների աշխատանքը դառնում է որակյալ, ֆիզիկապես թեթև լավ վարձատրվող աշխատանք: Կառույցներին բանվորների ամրացման անհրաժեշտ նախապայման է շինարարության մեջ զբաղված աշխատողների կուլտուրկենցաղային և բնակարանային պայմանների բարելավումը: Տնտեսական վարչական շրջաններում տերիտորիալ շինարարական կազմակերպությունների ստեղծման կապակցությամբ բացառվում է շինարար բանվորների մի զգալի մասի մի շրջանից մյուսը հաճախակի տեղափոխվելու անհրաժեշտությունը, որը նույնպես նպաստում է կադրերի ամրապնդմանը:

Ժողովրդական կրթության լայն զարգացումը պայմաններ է ստեղծում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը հա-

մալրելու լավ պատրաստված, բարձրորակ աշխատողների կադրերով: Ներկայումս շինարարների մեկ երրորդը ունի միջնակարգ, միջնակարգ տեխնիկական և բարձրագույն կրթություն:

Որակավորված շինարար բանվորների կադրերը տարեց տարի լրացվում են ուսման մեկ տարուց մինչև երեք տարի տևողությամբ ունեցող մասնագիտական-տեխնիկական այն ուսումնարանների շրջանավարտներով, որոնք կոմպլեկտավորվում են ութնամյա դպրոցներն ավարտած երիտասարդներից: Յոթնամյակի երեք տարում մասնագիտական-տեխնիկական ուսուցման ուսումնարանների սիստեմը պատրաստել է շինարարական մասնագիտության 210 հազար երիտասարդ բանվորներ:

Աշխատավորների կուլտուրտեխնիկական մակարդակի աճը տեղի է ունենում նաև առանց արտադրությունից կտրվելու, նրանց որակավորումը սիստեմատիկորեն բարձրացնելու միջոցով:

Շինարարական կազմակերպությունների կառույցներում և արտադրական ձեռնարկություններում բանվորների պատրաստումն ու որակավորման բարձրացումը հաջողությամբ իրականացվում է անհատական, բրիգադային և դասընթացային ուսուցմամբ: Այդ աշխատանքին ներդրավում են շինարարական կազմակերպությունների բարձրորակ բանվորներ ու ինժեներատեխնիկական աշխատողներ: Յուրաքանչյուր տարի ուսուցման այդ ձևն անցնում են ավելի քան 700 հազ. շինարար բանվորներ:

Սակայն կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման գործում շինարարական կազմակերպությունները դեռևս շատ թերություններ ունեն: Երբեմն նոր բանվորների ուսուցումը սահմանափակվում է միայն արտադրական հմտությունների պատվաստմամբ, առանց բավարար տեսական պատրաստակաություն: Տեխնիկական արագ առաջադիմության, շինարարության լայն ինդուստրացման պայմաններում բանվորների ուսուցումը չի կարող սահմանափակվել տեխնիկական ծրագրով, այլ պետք է մտցվեն նաև ինժեներ-

րատեխնիկական պատրաստման տարրեր: Շինարարների կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման վճռական բարելավումը աշխատանքի արտադրողականության աճի գծով՝ պլանային առաջադրանքների հաջող կատարման կարևորագույն պայմաններից մեկն է:

Սոցիալիստական մրցության պարգացումը և առաջավոր փորձի արմատավորումը: Աշխատանքի արտադրողականության աճի հզոր գործոն է հանդիսանում սոցիալիստական մրցությունը: Սոցիալիզմը, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, առաջին անգամ հնարավորություն է ստեղծում մրցությունը կիրառելու իսկապես լայն, մասսայական մասշտաբով, ընդգրկելով աշխատավորների միլիոնավոր մասսաների:

Սոցիալիստական մրցությունը, զարգացնելով աշխատողների ստեղծագործական ընդունակությունները և հնարավորություններ բացելով սոցիալիզմի օրոք հանրային աշխատանքի բոլոր առավելություններն առավել լրիվ օգտագործելու համար, աշխատանքի արտադրողականության աճի անսպառ աղբյուրն է:

Սոցիալիստական մրցության բնորոշ գիծը նորարարների ստեղծագործությունն է, որոնք համարձակորեն դեռ են շարտում աշխատանքի հնացած նորմաներն ու մեթոդները և արտադրության կատարելագործման նոր ուղիներ են բացում: Նորարարների առաջարկած աշխատանքի առաջավոր բազմաթիվ մեթոդներ, գործիքներ ու հարմարանքներ լայն տարածում են գտել շինարարության մեջ և զգալի ազդեցություն գործել աշխատանքի արտադրողականության աճի, շինմոնտաժային աշխատանքների որակի բարձրացման և ինքնարժեքի իջեցման վրա:

Օրինակ, շատ կառույցներում կիրառվում են նորարարների առաջարկած սվաղի աշխատանքների հոսքային մասնատված մեթոդը, կոմբինացված ծեփիչները, շերեփ-թիերը, ինվենտարային լայտակները և շատ այլ կատարելագործումներ: Բոլոր շինարարներին հայտնի է Սոցիալիստական Աշխատանքի կրկնակի հերոս, էլեկտրագողոջ Ա. Ա. Ուլեսովի անունը, որը շինարարական պրակտիկայում առաջին անգամ ներդրեց մետաղյա կոնստրուկցիաների վաննային զոդման առաջադիմական մեթոդը: Սոցիալիս-

տական մրցության ընթացքում անընդհատ ծնունդ են առնում նորանոր հիանալի այնպիսի ձեռնարկումներ, որոնք ապահովում են աշխատանքի արտադրողականության հետագա աճը, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումը և շինարարության ժամկետների կրճատումը:

Արտադրության առաջավոր կոլեկտիվների և նորարարների փորձի լայն տարածումը սոցիալիստական մրցության գործուն լինելու կարևոր պայմանն է: ՍՍԿՊ Կենտկոմի մարտյան (1962 թ.) Պլենումի որոշման մեջ ասվում է. «Առաջավոր փորձի ուսումնասիրումն ու արմատավորումը պետք է դիտել ո՛չ թե կամավոր գործ, այլ որպես ամեն մի ղեկավարի ու մասնագետի, յուրաքանչյուր կոմունիստի ու կոմերիտականի պարտականություն»:

Շինարարության մեջ սոցիալիստական մրցությունը տարեցտարի հարստանում է նոր բազմազան ձևերով: Կառույցներում սոցիալիստական մրցության ամենամասսայական ձևը արտադրանքի գործող նորմաների կատարման ամենաբարձր ցուցանիշների, աշխատանքների կատարման ժամկետների կրճատման, արտադրանքի որակի բարձրացման և շինանյութերի տնտեսման համար ծավալված աճեցատյական և բրիգադային մրցությունն է:

Շինարարության մեջ լայնորեն կիրառվում է առանձին մասնագիտությունների բանվորների մրցությունը: Այդ մրցման մեջ հաղթողներին շնորհվում է ուղղակի մասնագիտության լավագույն բանվորի կոչում (օրինակ, «Լավագույն էքսկավատորավար», «Լավագույն որմնադիր», «Լավագույն մոնտաժող» և այլն) և պատվոգրերի տրվում: Այն բանվորը, որն այդ կոչումը պահում է երկար ժամանակ, պրանցվում է շինարարական կազմակերպության պատվո գրքում:

Վերջին տարիներին լայն տարածում է գտել շինարարական կազմակերպությունների (տեղամասերի, վարչությունների, տրեստների) կոլեկտիվների մրցությունը, տարբեր քաղաքների, տնտեսական շրջանների և ռեսպուբլիկաների կառուցողների մրցությունը: Օրինակ, շատ տարիներ է ինչ մրցում են Մինսկի և Վոլգոգրադի շինարարները, որոնք փոխանակում են իրենց առաջավոր փորձը և միմյանց օգնում: Տրա-

դիցիա է դարձել Մոսկվայի ու Լենինգրադի շինարարների մըր-
ցությունը: Ղազախական ՍՍՌ-ում միմյանց հետ ակտիվորեն
մրցում են Զեզկազգանի, Բալխաշի, Ուստ-Կամենոգորսկու և
այլ քաղաքների շինարարները:

Ժողովրդական ստեղծագործության վառ արտահայտու-
թյունը, սոցիալիստական մրցության բարձրագույն ձևը կո-
մունիստական աշխատանքի բրիգադների ու հարվածայիննե-
րի շարժումն է: Կարճ ժամանակում այդ շարժումը լայն թափ
ստացավ:

Կոմունիստական բարձր գիտակցականության աչքի ընկ-
նող օրինակ ցույց տվեց Վիշնևոլոցկի բամբակագործական
կոմբինատի մանվածքային ֆաբրիկայի բրիգադիր, այժմ Սո-
ցիալիստական աշխատանքի հերոս Վալենտինա Գազանովան:
Ունենալով լավագույն բրիգադիրի փառք և բարձր աշխատա-
վարձ, անտեսելով անձնական նյութական վնասը, նա տեղա-
փոխվեց ետ մնացող բրիգադ և այն հասցրեց առաջավորնե-
նեքին: Վալենտինա Գազանովայի ազնիվ նախաձեռնությունը,
որը պաշտպանեց պարտիան, ընդօրինակեցին տնտեսության
բոլոր ճյուղերի բազմահազար բանվորներ ու մասնագետներ:

Կոմունիստական աշխատանքի համար շարժման մասնա-
կիցները խնդիր են դրել՝ ժամկետից շուտ կատարել պլաննե-
րը, արմատավորել նոր տեխնիկա և վճռականորեն պայքարել
քարացածության և ետ մնալու դեմ, մշտապես բարձրացնել
իրենց որակավորումը և հանրակրթական մակարդակը, իրենց
մեջ դաստիարակել նոր հասարակության անդամի լավագույն
գծերը, լինել կոմունիստական բարձր բարոյականության տեր
մարդիկ:

Ներկայումս կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի և
հարվածայինի կոչման համար մրցում են ավելի քան 700
տրեստներ, շինարարական վարչություններ և ձեռնարկու-
թյուններ, 4500 տեղամասեր, ցեխեր և հերթափոխեր, 53
հազար բրիգադներ, շինարարական ինդուստրիայի և շինարա-
րական նյութերի արդյունաբերության շուրջ 1500 հազար ա-
ռաջավորներ:

Կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի բարձր կոչում

արդեն շնորհվել է «Զապորոժստրոյ» տրեստի «Մետալուրգ-ստրոյ» շինարարական վարչությանը, «Կամչատոխբլտրոյ» տրեստի շինմոնտաժային № 5 վարչությանը և մի շարք այլ շինարարական կազմակերպությունների: Բազմահազար առաջավոր շինարարներ դարձել են կոմունիստական աշխատանքի հարվածայիններ:

Շինարարության բնագավառում կոմունիստական աշխատանքի կոլեկտիվների մեջ պատվավոր տեղ են գրավում Կրիվոյ ռոգի էքսկավատոր Իոսիֆ Գալենկոյի և լենինգրադցի մոնտաժող Իվան Շապովալովի բրիգադները: Ի. Գալենկոյի բրիգադը երկու և կես տարում կատարեց յոթնամյա պլանի առաջադրանքը: Եթե բոլոր մեխանիզատորները հետևեն Գալենկոյի նախաձեռնությանը, ապա կարելի կլինի պլանից դուրս կատարել 120 մլն խոտ մ հողային աշխատանք: Պարկի համալրման միջոցով այդպիսի աճման հասնելու համար կպահանջվեի այն ավելացնել 2 հազար էքսկավատորով: Աշխատելով կոմունիստաբար, Ի. Շապովալովի բրիգադի կոլեկտիվը, որը բաղկացած է 36 մարդուց, մեկ տարում մոնտաժել է 27 խոշոր պանելանի հինգ հարկանի տուն և հասել է աշխատանքի արտադրողականության՝ յոթնամյակի վերջի համար նախատեսված մակարդակին: Աշխատանքի արտադրողականության աճմանը զգալի շահով նպաստել է բրիգադի անդամների կողմից մտցված ռացիոնալիզատորական առաջարկությունների իրականացումը:

Կոմունիստական աշխատանքի համար մրցության զարգացման գործում նշանավոր դեր է խաղում կոմերիտմիաբյուրը: Կոմերիտական կազմակերպությունները հաջողությամբ իրականացնում են իրենց շեֆությունը արդյունաբերության ու տրանսպորտի կարևորագույն օբյեկտների կառույցների նկատմամբ: Շինարարական հրապարակներում, մատակարարող գործարանների ցեխերում, նախագծային ինստիտուտներում և կոնստրուկտորական բյուրոներում՝ ամենուրեք, որտեղ որսշվում է խիստ կարևոր գործարկման օբյեկտների ճակատագիրը, աշխատում են կոմերիտական շտաբներ և վերահսկման կիտեր, «կոմերիտական լուսարձակի» բրիգադներ ու ջոկատներ:

1961 թվականի մարտին Մոսկվայում կայացած երիտասարդ շինարարների Համամիութենական խորհրդակցության

մասնակիցները երիտասարդ շինարարների երեք միլիոնանոց բանակի անունից Կոմունիստական պարտիային խոսք տվեցին բոլոր ջանքերը գործադրել կոմերիտական հարվածային կառույցներում ժամկետից շուտ շահագործման հանձնել մի շարք կարևոր գործարկման օբյեկտներ: Նրանք դիմեցին երիտասարդությունը՝ կոչ անելով ստանձնել յուրաքանչյուր տրնտեսական շրջանում շինարարության հզոր ինդուստրիալ բազա ստեղծելու, շինարարությունում տեխնիկական պրոգրեսի տեմպերը արագացնելու շեֆությունը, մասնակցել շինարարական արտադրանքի գերազանց որակի համար մղվող պայքարին:

Կոմունիստական պարտիան տնտեսական, արհմիութենական և պարտիական բոլոր կազմակերպություններից պահանջում է վճռական պայքար մղել մրցութային ղեկավարման գործում եղած ֆորմալիզմի տարրերի դեմ, հետևողականորեն կենսագործել սոցիալիստական մրցութային լենինյան սկզբբունքները՝ լայն հրապարակայնությունը, արդյունքների համեմատելիությունը, առաջավոր փորձի փոխանակումը, ընկերական փոխօգնությունը: Շինարարության բոլոր աշխատողներին սոցիալիստական մրցութային մեջ ներգրավելը, արտադրության առաջավորների փորձի լայն տարածումը հնարավորություն են տալիս է՛լ ավելի բարձրացնելու սոցիալիստական մրցութային դերը աշխատանքի արտադրողականությունն ամեն կերպ բարձրացնելու համար մղվող պայքարում:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ
ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**1. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Աշխատավարձը սոցիալիստական հասարակության մեջ դրամական ձևով արտահայտված հասարակական արդյունքի այն մասն է, որը բանվորների ու ծառայողների անձնական սպառման է տրվում նրանց ծախսած աշխատանքի քանակին ու որակին համապատասխան:

Կապիտալիզմի պայմաններում աշխատավարձն արտահայտում է վարձու աշխատանքի շահագործման հարաբերությունը: Արտադրության միջոցների տերերը յուրացնում են աշխատավորության կողմից արտադրված հասարակական արդյունքի առյուծի բաժինը, իրենց շահույթներն ավելացնում են բանվորների շահագործման ուժեղացման և նրանց կենսամակարդակի իջեցման միջոցով: Ուստի կապիտալիստական երկրների բանվորները հարկադրված են մշտական համար պայքար մղելու աշխատավորներին է՛լ ավելի շատ թալանելու մոնոպոլիաների ձգտումների դեմ, պայքարելու աշխատավարձի բարձրացման համար:

Բոլորովին այլ բնույթ է կրում բաշխումը սոցիալիստական հասարակության մեջ, ուր արտադրության միջոցները և արտադրած արդյունքները պատկանում են աշխատավորությանը և պլանաչափորեն օգտագործվում են նրանց շահերի հա-

մար: Սպառման մակարդակը այստեղ որոշվում է արտադրութ-
վյան զարգացման ձևեր բերված մակարդակով:

Սոցիալիզմի պայմաններում աշխատավարձի ճիշտ կազ-
մակերպումը հանրային աշխատանքի կազմակերպման միջոց
է՝ հօգուտ նրա արտադրողականության անշեղ աճի և արտա-
դրության ընդլայնման, որոնք անհրաժեշտ նյութական հնա-
րավորություններ են ստեղծում աշխատավորների բարեկե-
ցության բարձրացման համար:

Սոցիալիզմի օրոք գործում է ըստ աշխատանքի քանակի
ու որակի վարձատրման սկզբունքը: Ըստ աշխատանքի վար-
ձատրման սկզբունքը ապահովում է հասարակության անդամ-
ների նյութական շահագրգռվածությունը աշխատանքի ար-
դյունքների նկատմամբ, հնարավորություն է տալիս ամենա-
լավագույն ձևով զուգակցելու անձնական ու հանրային շու-
հերը և հզոր խթան է հանդիսանում աշխատանքի արտադրո-
ղականության բարձրացման, էկոնոմիկայի և ժողովրդի բա-
րեկեցության վերելքի համար: Սոցիալիզմի օրոք նյութական
բարիքների բաշխման համար միասնական շափանիշը հա-
սարակությանը տրված աշխատանքն է:

Անհատական աշխատավարձը իրենով չի սպառում այն,
ինչ սոցիալիստական պետությունը առանձնացնում է աշխա-
տավորների կարիքների բավարարման համար: Նյութական
և կուլտուրական բարիքների ղգալի և հարաճուն մասը հասա-
րակության անդամներին է բաշխվում՝ անկախ նրանց աշ-
խատանքի քանակից ու որակից, սպառման հանրային ֆոն-
դերի հաշվին, այսինքն՝ անվճար:

Սպառման հանրային ֆոնդերը ներառնում են պետության
կողմից կատարված կրթության, բժշկական սպասարկման,
թոշակների ապահովման, մանկական հիմնարկներում երե-
խաների խնամքի և բնակչության այլ վճարումների ու ար-
տոնությունների ծախսերը:

ՍՄԿՊ XXII համագումարը բանվորների և ծառայողների ռեալ
եկամուտները բարձրացնելու ուղիների մասին: Պարտիայի
Ծրագրում խնդիր է դրված՝ Սովետական Միությունում
ապահովել ամենաբարձր կենսամակարդակը կապիտալիզմի

ամեն մի երկրի համեմատութեամբ: Բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները 20 տարում կաճեն ավթի քան 3,5 անգամ: Աշխատավորության կենսամակարդակի բարձրացումը կիրականացվի երկու ուղիով. 1) ըստ աշխատանքի քանակի ու որակի անհատական վարձատրության բարձրացման միջոցով՝ զուգակցված մանրածախ գների իջեցման և բնակչությանից գանձվող հարկերի վերացման հետ. 2) սպառման հանրային ֆոնդերի ընդլայնման ուղիով:

Սպառման հանրային ֆոնդերը ավելի արագ կաճեն, քան աշխատանքի անհատական վարձատրությունը, և կավելանան՝ 1960 թվականի 24,5 մլրդ ռուբլուց 1980 թվականին կհասնեն մինչև 255—265 մլրդ ռուբլու, այսինքն՝ ավելի քան 10 անգամ: Քսանամյակի վերջում դրանք կկազմեն բնակչության եկամուտների ամբողջ գումարի մոտավորապես կեսը: Դա հնարավորություն կտա հասարակության հաշվին ապահովել երեխաների ձրի խնամքը մանկական հիմնարկներում և գիշերօթիկ դպրոցներում (ծնողների ցանկություններ). նյութապես ապահովել անաշխատունակներին, ապահովել ձրի ուսուցում՝ ուսումնական բոլոր հաստատություններում, բոլոր քաղաքացիների ձրի բժշկական սպասարկում, ներառյալ հիվանդներին՝ դեղորայքով և սանատորիական բուժման ապահովումը. բնակարանների, կոմունալ ծառայությունների, կոմունալ տրանսպորտի և կենցաղային սպասարկման մի քանի տեսակների ձրի օգտագործումը. աստիճանաբար վարձը լիցենզիա և մասնակիրոն ձրի դարձնելու հանգստյան տներին, սյանսիոնատներին, տուրիստական բաղաններից, սպորտային կառույցներին օգտվելը. բնակչությանն ավելի լայնորեն ապահովել նպաստներով, արտոնություններով և թոշակներով (միայնակ և բազմազավակ մայրերին նպաստ, ուսանողներին՝ թոշակ). դպրոցներում հրեխանների ձրի տաք նախաճաշ տուր և աստիճանաբար անցնել ձրի ճաշի՝ ձրեարկություններում:

Սակայն առաջիկա քսան տարվա ընթացքում աշխատավորության նյութական և կուլտուրական պահանջմունքների բավարարման հիմնական աղբյուրը մնալու է ըստ աշխատանքի վարձատրությունը: Ըստ պահանջմունքի կոմունիստական

բաշխման անցումը կիրականացվի այն բանից հետո, երբ ըստ աշխատանքի բաշխման սկզբունքն իրեն կսպառի, երբ ձեռք կբերվի նյութական ու կուլտուրական բարիքների առատութիւնը և աշխատանքը կվերածվի հասարակութեան բոլոր անդամների առաջին կենսապահանջի:

Աշխատավարձի ավելացումը տեղի կունենա բարձր և համեմատաբար ցածր վարձատրութիւնների միջև եղած տարբերութիւնների միաժամանակյա կրճատման պայմաններում: Կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման հիման վրա ավելի ու ավելի մեծ քանակութեամբ շորակավորված և քիչ որակավորված բանվորներ ու ծառայողներ կանցնեն որակավորված և բարձրորակ աշխատողների կարգը: Որակավորման և աշխատանքի արտադրողականութեան մակարդակների տարբերութեան նվազեցումը կուղեկցվի աշխատանքի վարձատրման մակարդակի միջև եղած տարբերութեան հետևողական կրճատումով: Ուստի ամբողջ բնակչութեան եկամուտների աճման ընդհանուր բարձր տեմպերի պայմաններում ավելի բարձր տեմպերով կաճեն ցածր վարձատրվող բանվորների ու ծառայողների եկամուտները: Այսպես, արդեն առաջին տասնամյակում բանվորների ու ծառայողների եկամուտները (հաշվի առնելով հանրային ֆոնդերը) մեկ աշխատողի համար միջին հաշվով կավելանան համարյա 2 անգամ, իսկ ցածր վարձատրվող աշխատավորների խմբի եկամուտները՝ մոտավորապես 3 անգամ:

Աշխատավարձի կազմակերպման սկզբունքները: Աշխատավարձի ճիշտ կազմակերպումը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի և կոմունիստական առատութեան ստեղծման համար պայքարի հաջողութեան կարևորագույն նախադրյալներից մեկն է:

Սոցիալիստական տնտեսութեան մեջ աշխատողների անձնական նյութական շահագրգռվածութիւնը արտադրութեան վերելքի ռեսուրս է դառնում միայն այն դեպքում, երբ ապահովվում է աշխատողի վաստակի և նրա աշխատանքի արգյունքների միջև եղած անմիջական կախվածութիւնը: Այլ հավասար պայմանների դեպքում աշխատանքի արդյունք-

ները կախված են ամենից առաջ աշխատողի հմտությունից ու գիտելիքներից, նրա որակավորումից: Որակավորված աշխատանքը հասարակությանը մեծ օգուտ է բերում, որովհետև այն ընդունակ է ժամանակի մեկ միավորի ընթացքում ստեղծելու ավելի շատ նյութական արժեքներ: Բարձր որակավորումը ձեռք է բերվում աշխատողների նախնական ուսուցման, նրանց կուտակած արտադրական փորձի միջոցով: Այդ պատճառով էլ իրենց բարդությամբ ու դժվարությամբ տարբեր աշխատանքներ կատարելու համար վարձատրությունը միատեսակ չէ. բարձրորակ, բարդ աշխատանքն ավելի բարձր է վարձատրվում, քան հասարակ, քիչ որակավորված աշխատանքը: Աշխատավարձի ճիշտ կազմակերպումն անհամատեղելի է մանրբուրժուական հավասարարման հետ: Վարձատրության գործում հավասարումն իջեցնում է աշխատողների անձնական նյութական շահագրգռվածությունն իր որակավորումն ու աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու գործում:

Հավասար որակավորման և աշխատանքի արտադրողականության դեպքում տնտեսապես նպատակահարմար է ավելի բարձր վարձատրել արտադրության դժվար ու կարևոր տեղամասերում աշխատողների աշխատանքը, այն հաշվով, որ հենց այստեղ առաջին հերթին ներգրավել լավագույն աշխատողներին, դրանով իսկ նպաստելով սոցիալիստական ամբողջ արտադրության զարգացմանը: Այժմ այդպիսի տեղամասեր են, օրինակ, երկրի արևելյան շրջանների կառույցները, որոնց արագացրած իրականացումը կարևոր է ամբողջ ժողովրդական տնտեսության վերելքի համար:

Աշխատավարձի ճիշտ կազմակերպումը որպես պարտադիր պայման ենթադրում է աշխատանքի արտադրողականության առաջ անցնող ան՝ աշխատավարձի անի համեմատությամբ: Առանց այդ պայմանի պահպանման սոցիալիստական արտադրությունը չի կարող զարգանալ և, հետևաբար, չի կարող ապահովվել նաև ռեալ աշխատավարձի կայուն, պլանաչափ թարձրացում:

Աշխատավարձի ճիշտ կազմակերպման համար պետք է

ապահովել միատեսակ մոտեցում՝ աշխատանքների բոլոր տեսակների աշխատանքի շափերը և սպառման շափերը որոշելիս: Գործնականում այդ խնդիրը լուծվում է աշխատանքի տեխնիկական նորմավորման, տարիֆային սիստեմի և աշխատանքի վարձատրման ռացիոնալ ձևերի օգնությամբ:

Աշխատանքի նորմավորման խնդիրները: Տեխնիկական նորմավորման հիմնական խնդիրն է մշակել ժամանակի և արտադրանքի տեխնիկապես հիմնավորված այնպիսի նորմաներ, որոնք համապատասխանեն տեխնիկայի ժամանակակից մակարդակին և արտացոլեն բանվորների առաջավոր փորձը: Տեխնիկապես հիմնավորված նորմաները հնարավորություն են տալիս ճշտությամբ որոշելու արտադրանքի արտադրման վրա թափած աշխատանքի ծախսումները և ռացիոնալ կազմակերպելու շինարարների աշխատանքը: Այդ նորմաները ելման բազա են ծառայում աշխատավարձի այնպիսի առավել արդյունավետ սիստեմներ արմատավորելու համար, որոնք աշխատողների մոտ նյութական շահագրգռվածություն ստեղծեն իրենց աշխատանքի արդյունքների նկատմամբ: Տեխնիկական նորմավորման տվյալների հիման վրա կազմվում են բանվորների արտադրական առաջադրանքներ (կարգագրեր), մշակվում են տեխնոլոգիական կանոններ, աշխատանքների կատարման գրաֆիկներ ու նախագծեր, որոշվում են շինարարական մեքենաների և սարքավորումների նկատմամբ եղած պահանջը, բանվորների անհրաժեշտ թիվը և աշխատավարձի ֆոնդերը: Միայն տեխնիկապես հիմնավորված նորմաների առկայության դեպքում կարելի է ճշտությամբ ընտրել աշխատանքների կատարման առավել խնայողական եղանակներ: Վերջապես, նորմաները լայնորեն օգտագործվում են շինարարական կազմակերպություններում տնտեսական հաշվարկ կազմակերպելու և շինարարների սոցիալիստական մրցության արդյունքները որոշելու համար:

Տեխնիկապես հիմնավորված նորմաները սահմանվում են շինարարական պրոցեսների մանրազնին ուսումնասիրման, կառույցի արտադրական հնարավորությունների և ռեզերվների բազմակողմանի վերլուծության միջոցով՝ հաշվի առնելով

ժամանակակից շինարարական տեխնիկայի ու աշխատանքի առաջավոր մեթոդների կիրառումը և ելնելով շինարարական ձեռքնանների ու սարքավորումների առավել ռացիոնալ օգտագործումից: Աշխատանքի նորմավորման միայն այդպիսի մոտեցման դեպքում կարելի է հայտաբերել ու սահմանել աշխատանքների կատարման առավել արդյունավետ մեթոդներ և ստանալ աշխատանքի արտադրողականության աճմանը նպաստող պրոգրեսիվ նորմաներ: Նոր տեխնիկայի արմատավորումը, աշխատանքի կազմակերպման ավելի բարձր աստիճանի անցումը պահանջում են, ինչպես նշվում է ՍՄԿՊ Ծրագրում,՝ աշխատանքի նորմավորման հետագա բարելավում:

Կապիտալիստական երկրներում աշխատանքի նորմավորումը ծառայում է աշխատավորների անզուսպ շահագործման նպատակներին: Վ. Ի. Լենինը «Քրտինք քամելու գիտական սիստեմը»¹ հոդվածում վառ կերպով ցույց է տվել աշխատանքի կապիտալիստական նորմավորման էությունը, որի միակ նպատակն է աշխատաժամանակի ընթացքում բանվորից որքան կարելի է ավելի շատ աշխատանք քամել, առանց հաշվի առնելու նրա ֆիզիկական հնարավորությունները: Կապիտալիստական ձեռնարկություններում աշխատանքի նորմավորման «գիտական» բոլոր սիստեմների հիմքում ընկած է առավելագույն լարվածության, աշխատանքի ինտենսիվացման սկզբունքը, որն ապահովում է կապիտալիստների եկամուտների աճը՝ բանվորների աշխատավարձի պահպանման և նույնիսկ իջեցման պայմաններում:

Բոլորովին այլ նպատակներ են դրվում աշխատանքի նորմավորման առջև սոցիալիստական երկրներում: Այստեղ տեխնիկայես հիմնավորված նորմաները սահմանվում են այն հաշվով, որ դրանք բանվորների ամբողջ մասսայի կողմից կատարվեն: Կառույցներում և ձեռնարկություններում գործող նորմաների կատարումը կապված չէ աշխատողների առողջության համար վնասակար ֆիզիկական որևէ լարվածության

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 750—752:

հետ: Միաժամանակ այդ նորմաները առաջադիմական են, նրանք նախատեսում են աշխատանքի առաջավոր մեթոդների կիրառում: Միայն այդպիսի նորմաները կարող են նպաստել աշխատանքի արտադրողականության աճին, շինարարական մեքենաների լավագույն ձևով օգտագործման և, վերջին հաշվով, շինարարության արագացմանն ու արժեքի իջեցմանը: Այսպիսով, սոցիալիզմի ժամանակ տեխնիկական նորմավորումը ի սպաս է դրված ժողովրդին:

Նորմավորման և աշխատանքի վարձատրության բարելավման միջոցառումները: Վերջին տարիներին պարտիան և կառավարությունը խոշոր աշխատանքներ են տարել շինարարության բնագավառում աշխատանքի նորմավորումը կարգավորելու և աշխատավարձի կազմակերպումը բարելավելու ուղղությամբ: 1956 թվականի հունվարի 1-ից շինարարության մեջ մտցվեցին աշխատանքի վարձատրման միասնական պայմաններ: Նույն աշխատանքների համար տարբեր մեծությամբ նորմաների փոխարեն, ելնելով շինարարական կազմակերպությունների գերատեսչական պատկանելիությունից, բոլոր կառույցների համար սահմանվեցին շինարարական և մոնտաժային աշխատանքների արտադրանքի միասնական նորմաներ: Դա նպաստեց շինարարների աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի զգալի բարձրացմանը, կառույցներում բանվորական կադրերի ամրացմանը:

Ելնելով ՍՄԿՊ XXI համագումարի որոշումներից, անցկացվեց արդյունաբերության, շինարարության և ժողովրդական տնտեսության մի շարք այլ ճյուղերի բանվորների ու ծառայողների աշխատավարձի կարգավորում: 1962 թվականի սկզբներին աշխատանքի վարձատրման նոր պայմանների են փոխադրվել ավելի քան 40 մլն. բանվորներ ու ծառայողներ, այսինքն՝ ամբողջ բանվորների ու ծառայողների մոտ մեկ երրորդը: Աշխատավարձի կարգավորման ծախսումները կազմել են մոտ 4 մլրդ. ռուբլի: Ընդ որում հատուկ ուշադրություն դարձվեց աշխատողների ցածր և միջին վարձատրվող խմբի աշխատավարձի բարձրացմանը: Յոթնամյակի ընթացքում դրամական աշխատավարձի միջին մակարդակն աճելու է 26

տոկոսով, իսկ ցածր վարձատրվող բանվորների աշխատավարձը կավելանա 2 անգամ: Ցածր վարձատրվող բանվորներն ու ծառայողները, զգատված են հարկերի վճարումից:

Կարգավորվել է նաև ղեկավար և ինժեներա-տեխնիկական աշխատողների պաշտոնական ուճիկները և պարգևատրման սիստեմները:

1960 թվականին լիովին ավարտվել է բոլոր բանվորների ու ծառայողների անցումը յոթ և վեց ժամյա աշխատանքային օրվա:

Աշխատանքային օրվա տևողության կրճատմամբ հանդերձ արդյունաբերության և շինարարության աշխատողների աշխատավարձը ոչ միայն չի պակասել, այլև զգալիորեն ավելացել է ցածր վարձատրվող բանվորների ու ծառայողների նոր, բարձրացված դրույքներ և ուճիկներ մտցնելու կապակցությամբ: Դա պայմաններ ստեղծեց արտադրության հետագա վերելքի և աշխատանքի արտադրողականության աճման գործում աշխատավարձի դերը բարձրացնելու համար:

ՍՄԿՊ Ծրագիրը նախատեսում է աշխատանքային օրվա հետագա կրճատում և աշխատանքի պայմանների բարելավում:

Առաջիկա 10 տարվա ընթացքում կիրականացվի անցումը վեցժամյա աշխատանքային օրվա՝ շաբաթը մեկ հանգստի օրով, կամ 35-ժամյա աշխատանքային շաբաթվա՝ երկու հանգստյան օրով, իսկ ստորերկրյա աշխատանքներում և աշխատանքի վնասակար պայմաններ ունեցող արտադրություններում՝ հինգժամյա աշխատանքային օրվա կամ 30-ժամյա հնգօրյա աշխատանքային շաբաթվա: Երկրորդ տասնամյակում՝ աշխատանքի արտադրողականության համապատասխան ուճման բաղայի վրա կսկսվի անցումը է՛լ ավելի կրճատ աշխատանքային շաբաթվա: Այսպիսով, Սովետական Միությունը կդառնա աշխարհում ամենակարճ և միաժամանակ ամենաարտադրողական ու առավել բարձր վարձատրվող աշխատանքային օր ունեցող երկիրը: Զգալիորեն կաճի աշխատավորների ձգատ ժամանակը, որը լրացուցիչ պայմաններ կստեղծի նրանց կուլտուրտեխնիկական մակարդակը բարձրացնելու համար:

Պարտիայի Ծրագրում նշագծված՝ ժողովրդական բարեկեցության խնդիրների իրականացումը մեծուպես կախված է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի աշխատողների աշխատանքից, սրա արագորոշականությունից և ճիշտ կազմակերպումից:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿՆՐՊՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նորմաների սխտեմը: Շինարարության մեջ բանվորների աշխատանքը նորմավորվում է ժամանակի նորմաների և արտադրանքի նորմաների մշակման միջոցով:

Ժամանակի նորմա է կոչվում արտադրանքի մեկ միավոր արտադրելու համար սահմանված ժամանակը (1 խոս մ հողի, 1 քառ մ ներկման, 1 տ մոնտաժված կոնստրուկցիաների և այլն): Ժամանակի նորմաները, որպես կանոն, արտահայտվում են մարդ-ժամերով:

Օրինակ, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժային կցվածքները հինգերորդ տարակարգի էլեկտրազոդողի կողմից էլեկտրազոդման 1 մ զողված կարի համար սահմանվել են ժամանակի հետևյալ նորմաները.

Սյունների, հեծանների, սանդղավանդակների, պարզունակների, ներգրբակների, պահանգային սալերի, ֆերմաների, արտաքին և ներքին պատերի պանելների կցվածքները զոդելիս՝ 1,05 մարդ-ժամ:

Վերածածկերի ու ծածկերի սալիկների և պանելների կցվածքները զոդելիս՝ 0,49 մարդ-ժամ:

Օղակային պրոցեսի դեպքում ժամանակի նորման իրենից ներկայացնում է օղակի կազմում աշխատող բոլոր բանվորների՝ արտադրանքի շահման համապատասխան միավորին ընկնող աշխատաժամանակի գումարային ծախսում:

Օրինակ, մեկ խոշոր ցոկոլային բլոկի տեղակայման համար, որը կատարում է 4 բանվորից բաղկացած օղակը (հինգերորդ տարակարգի մեկ մոնտաժող, չորրորդ տարակարգի մեկ մոնտաժող և երրորդ տարակարգի երկու մոնտաժող), սահմանված են ժամանակի հետևյալ նորմաները:

Ուղիղ բլոկներ տեղակայելիս՝ 1,3 մարդ-ժամ:

Անկյունային բլոկներ տեղակայելիս՝ 2,3 մարդ-ժամ:

Այդ նշանակում է, որ օղակի մեջ մտած մոնտաժողներից յուրաքանչյուրը պետք է ծախսի.

Արտադրանքի նորմա է կոչվում արտադրանքի այն քանակը, որը պետք է արտադրվի ժամանակի մեկ միավորի ընթացքում: Արտադրանքի նորմաները սահմանվում են սովորաբար հերթափոխի համար՝ վերջինիս որոշակի տևականության դեպքում:

Յ տարբերություն արդյունաբերության, որտեղ ժամանակի նորմաները մշակվում են ըստ ճյուղերի կամ առանձին ձեռնարկությունների, շինարարության մեջ կիրառվում են շինարարական և մոնտաժային աշխատանքների ժամանակի միասնական նորմաներ, որոնք հաստատվում են որպես պարտադիր նորմաներ բոլոր ժողտնտխորհների, մինիստրությունների և գերատեսչությունների կառույցների համար: Այդ նորմաները ընդգրկում են ո՛չ միայն համաշինարարական աշխատանքների ճնշող մասը, այլ նաև հատուկ շինարարական և մոնտաժային շատ աշխատանքներ (օրինակ, ճանապարհային, հիդրոտեխնիկական, տեխնոլոգիական սարքավորման մոնտաժում և այլն): Ժամանակի միասնական նորմաների գործող սիստեմն ընդգրկում է շին-մոնտաժային աշխատանքների ավելի քան 90 տոկոսը (ըստ նրանց աշխատատարություն): Այդ սիստեմը նպաստում է կառույցներում կանոնավորելու աշխատավարձի կազմակերպումը և հնարավորություն է ստեղծում հստակորեն կարգավորելու աշխատավարձի մակարդակը:

Շինարարական և մոնտաժային աշխատանքների միասնական նորմաները հաստատում են ՍՍՌՄ Պետշինը և Աշխատանքի ու աշխատավարձի պետական կոմիտեն՝ համաձայնեցնելով ՀԱՄԿԽ-ի հետ: Նեղ մասնագիտական աշխատանքների առանձին տեսակների նորմաները, աշխատանքներ, որ կատարվում են գլխավորապես միայն մի որևէ ճյուղում (օրինակ, թունելների և մետրոպոլիտենների կառուցումը), հաստատվում են համապատասխան ժողտնտխորհի, մինիստրության կամ գերատեսչության կողմից համաձայնեցնելով հա-

մապատասխան արհմիության կենտրոնական կոմիտեի կամ արհմիությունների խորհրդի հետ:

Հազվադեպ հանդիպող առանձին շինարարական և մոնտաժային աշխատանքների համար, որոնք միասնական նորմաների կազմի մեջ չեն մտնում, մշակվում են այսպես կոչված տեղական նորմաներ: Դրանք հաստատվում են շինարարութայն պետի կամ տրեստի կառավարիչի կողմից՝ միայն այդ շինարարական կազմակերպութայններում կիրառելու համար:

Ամեն տարի շինարարութայն մեջ տեղի են ունենում առաջադիմական այնպիսի փոփոխութայններ (բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների կուլտուրատեխնիկական մակարդակի աճ, արտադրութայն կազմակերպման առաջադիմական մեթոդների արմատավորում, ավելի ու ավելի կատարելագործված և արդյունավետ կոնստրուկցիաների կիրառում և այլն), որոնք ապահովում են աշխատանքի արտադրողականութայն անընդհատ աճը: Այդ պատճառով առաջներում սահմանված նորմաները աստիճանաբար սկսում են հետմնալ կյանքից, կորցնում են իրենց առաջադիմական բնույթը: Այս ամենն առաջ են բերում նորմաների պարբերաբար վերանայման անհրաժեշտութայն:

Օրինակ, 1955 թվականին վերանայվեցին առաջներում գործող նորմաները և մշակվեցին շինարարական ու մոնտաժային աշխատանքների միասնական նոր նորմաներ և գնահատմաներ (ՄՆԼԳ), որոնք գործողութայն մեջ դրվեցին 1956 թվականի հունվարի 1-ից: Այդ վերանայման ժամանակ արտադրանքի նորմաները մեքենայացված աշխատանքների համար բարձրացվեցին միջին հաշվով 17 տոկոսով, իսկ մոնտաժային աշխատանքներին՝ 9,5 տոկոսով:

1958—1959 թվականներին՝ շինարարութայն մեջ զբաղված բանվորներին կրճատ աշխատօրվա փոխադրելու և աշխատավարձի կարգավորման կապակցութայնմբ, անցկացվեց նորմաների նոր, արմատական վերանայում: Արդյունքը եղավ այն, որ օրվա արտադրանքի նորմաների մակարդակը բարձրացավ միջին հաշվով 14 տոկոսով: Ընդ որում ՄՆԼԳ ժողովածուն լրացվեց աշխատանքների բազմաթիվ նոր տեսակների նորմաներով, որոնք վերջին տարիներին լայն տարածում գտան: Նորմաները խոշորացվեցին՝ նպատակ ունենալով բարձրացնել բանվորների նյութական

շահապրգովածութիւնը աշխատանքներն արագացնելու գործում, ինչպես նաև հաշվարկները պարզեցնելու համար:

«

Միասնական նորմաները և տեղական նորմաների զգալի մասը մշակվում են տեխնիկական նորմավորման մեթոդներով և դրա համար էլ հանդիսանում են տեխնիկապես հիմնավորված նորմաներ:

Սակայն կառույցներում կիրառվող տեղական նորմաների մեջ դեռևս հանդիպում են իջեցված, այսպես կոչված փորձավիճակագրական նորմաներ, որոնք սահմանվում են նորմավորողի կամ վարպետի անձնական փորձի հիման վրա, ելնելով նախորդող ժամանակաշրջանում համանման աշխատանքների կատարման համար աշխատաժամանակի ծախսումների սովյալներից: Այդ եղանակով սահմանված նորմաները, որպես կանոն, հաշվի չեն առնում արտադրութայն ռեզերվները, ժամանակակից շինարարական տեխնիկայի և առաջավոր շինարարների փորձի կիրառման հնարավորութիւնները, ինչպես նաև բանվորական կադրերի անընդհատ աճող կուլտուր-տեխնիկական մակարդակը: Այդպիսի նորմաները, արտացոլելով արտադրութայն կազմակերպման անցած էտապը, իրենց մեջ թաքցնում են աշխատաժամանակի զգալի կորուստներ, արգելակում աշխատանքի արտադրողականութայն աճը և շեն խթանում բանվորների որակավորման բարձրացմանը:

Աշխատանքի փորձավիճակագրական նորմավորումը բազմիցս դատապարտվել է պարտիայի և կառավարութայն որոշումներում: Այդ իսկ պատճառով անհետաձգելի խնդիր է՝ հրաժարվել կառույցներում աշխատանքի նորմավորման այդ եղանակից և անցնել տեխնիկական նորմավորման մեթոդներին:

Նորմավորման կազմակերպումը: Շինարարութայն մեջ տեխնիկական նորմավորման աշխատանքն իրականացվում է կենտրոնացված կարգով՝ ՍՍՌՄ Պետշինի ղեկավարութայն մը: Այդ աշխատանքը կատարելու համար շինարարութայնն իրականացնող մինիստրութայններում ու գերատեսչութայններում կազմակերպված են կենտրոնական նորմատիվա-հետազոտական բյուրոներ (ԿՆՀԹ)՝ իրենց նորմատիվա-հետազոտական կայաններով (ՆՀԿ), որոնք տեղավորված են կամ առանձին

խոշոր կառույցներում, կամ կենտրոնացված շինարարության կետերում: Նորմատիվա-հետազոտական կայաններ կան նաև շատ ժողտնտխորհներում: Երկրում հիմա աշխատում են ավելի քան 250 նորմատիվա-հետազոտական կայաններ:

Նորմատիվա-հետազոտական կայանները մշակում են գործող նորմատիվային ժողովածուներում շնախատեսված աշխատանքների համար ժամանակի տեխնիկապես հիմնավորված նորմաների նախագծեր. տանում են ժամանակի գործող միասնական նորմաների կատարման սխտեմատիկ հաշվառում և մշակում դրանց լրացման ու փոփոխման առաջարկություններ. ուսումնասիրում են շինարարական արտադրության առաջավորների ու նորարարների աշխատանքի մեթոդները և դրա հիման վրա մշակում են աշխատանքների կատարման ցուցումներ, տեխնոլոգիական քարտեր, հրահանգներ և շինարարության մեջ առաջավոր փորձի տարածմանը նպաստող այլ փաստաթղթեր: Նորմատիվա-հետազոտական կայանները կառույցներին գործնական օգնություն են ցույց տալիս աշխատաժամանակի կորուստները վերացնելու, աշխատանքների կատարման առաջավոր մեթոդներն արմատավորելու, տեղական նորմաների մշակման և միասնական նորմաների կիրառման գործում:

Նորմատիվա-հետազոտական կայանների մշակած ժամանակի նոր նորմաները, գործող նորմաների լրացումների ու փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները, աշխատաժամանակի կորուստների դեմ պայքարելու և շինարարական մեքենաների օգտագործումը բարելավելու միջոցառումները, բազմակողմանի քննարկման են ենթարկվում կառույցների բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների կոլեկտիվներում: Հասարակայնության ակտիվ մասնակցությունը կայաններին աշխատանքին՝ ապահովում է մշակվող նորմատիվային փաստաթղթերի ու հրահանգների որակի բարձրացումը:

Շինարարական և մոնտաժային աշխատանքների միասնական նորմաները՝ ՍՍՌՄ Պետշինի և ՍՍՌՄ Շինարարության ու ճարտարապետության ակադեմիայի ղեկավարությունում, վե-

րանայում են մինիստրութիւնները և գերատեսչութիւնները կենտրոնական նորմատիվա-հետազոտական բյուրոները, ժողտնտխորհների նորմատիվա-հետազոտական կայանների հետ միասին:

Նոր նորմաների նախագծերը շինարարական կազմակերպութիւններում ենթարկվում են մասնագիտական փորձարկման ու լայն քննարկման և միայն դրանից հետո ներկայացվում են հաստատման:

Տեղական նորմաների մշակումը և վերանայումն իրականացվում են շինարարական կազմակերպութիւնների նորմավորողների և նորմատիվա-հետազոտական կայանների կողմից (այնտեղ, որտեղ դրանք կան)՝ այն տվյալների հիման վրա, որոնք ստացվել են տեխնիկական նորմավորման շնորհիվ:

Արտադրանքի նոր միասնական կամ տեղական նորմաների ներդրումն ուղեկցվում է աշխատանքի արտադրողականութեան բարձրացման կազմակերպական-տեխնիկական այնպիսի միջոցառումների անցկացմամբ, որոնք ապահովում են բոլոր բանվորների կողմից նոր նորմաների կատարումը: Շինարարական կազմակերպութիւնների ղեկավարները պարտավոր են այդ միջոցառումների մշակմանն ամեն կերպ մասնակից դարձնել բանվորներին ու ինժեներատեխնիկական աշխատողներին, ժամանակին վերացնել աշխատանքի արտադրողականութեան աճն արգելակող թերութիւնները:

Տեխնիկական նորմավորումը բարելավելու գործում իրիստ կարևոր դեր ունեն արհմիութենական կազմակերպութիւնները, որոնք ակտիվորեն մասնակցում են աշխատանքի և աշխատավարձի նորմավորման հարցերի լուծմանը, կառույցնիւրում բոլոր շինարարների բարձր արտադրողական աշխատանքի համար պայմանների ստեղծմանը:

3. ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈՂԵՆԵՐԸ

Տեխնիկապես հիմնավորված նորմաների տեսակները: Տեխնիկապես հիմնավորված ժամանակի նորմաները, նայած

շինարարական պրոցեսի բարդութեան աստիճանի, լինում են օպերացիոն, խոշորացված և կոմպլեքսային:

Օպերացիոն նորմաները մշակվում են առանձին աշխատանքային օպերացիաների համար, այսինքն՝ ամենամանր, կազմակերպորեն անբաժանելի և տեխնոլոգիապես միատեսակ շինարարական պրոցեսների համար: Օրինակ, էքսկավատորային աշխատանքների համար կարող են սահմանվել առանձին օպերացիոն նորմաներ՝ էքսկավատորի շերեփի մեջ հող հավաքելու, շերեփի բարձրացման՝ սլաքների միաժամանակյա դարձումով, շերեփի բեռնաթափման և այլ նորմաներ: Օպերացիոն նորմաները ելակետային նյութ են ծառայում խոշորացված նորմաների նախագծման համար և, որպես կանոն, բանվորների կարգագրերը կազմելիս չեն կիրառվում:

Խոշորացված նորմաները մշակվում են ամբողջ արտադրական պրոցեսի, այսինքն՝ տեխնոլոգիապես միմյանց հետ կապված աշխատանքային այն ամբողջ օպերացիաների համար, որոնք կատարվում են առանձին բանվորների կամ օղակի կողմից (օղակային աշխատանքի դեպքում): Օրինակ, էքսկավատորային աշխատանքները նորմավորելիս կարելի է սահմանել 1 խոր մ հողի նորման՝ հաշվի առնելով այդ աշխատանքների կատարման պրոցեսում էքսկավատորի բոլոր օպերացիաները (հողի հավաքումը, շերեփի բարձրացումը, շերեփի բեռնաթափումը և այլն): Խոշորացված նորմաները կիրառվում են կարգագրերը կազմելիս և գործարքային գնահատումները հաշվելիս:

Կոմպլեքսային նորմաները մշակվում են ամբողջութեամբ վերցրած կոմպլեքսային պրոցեսների, այսինքն՝ աշխատանքային այն ամբողջական պրոցեսների համար, որոնք կապված են արտադրական պրոցեսի տվյալ աստիճանում պատրաստի արտադրանքի միասնությամբ: Օրինակ, էքսկավատորային աշխատանքների նորմավորման ժամանակ կարելի է կոմպլեքսային նորմա սահմանել 1 խոր մ հողի համար, որով հաշվառվում է էքսկավատորի, հողաթափ ավտոմեքենաների և թափվածքում հող հարթեցնող բուլդոզերի աշխատանքը:

Ժամանակի խոշորացված կամ կոմպլեքսային յուրաքան-

չյուր նորմա անհրաժեշտության դեպքում կարող է ներկայաց-
վել ծավալուն տեսքով՝ որպես համապատասխան կոմպլեք-
սային պրոցեսի կազմի մեջ մտնող անանձին աշխատանքա-
յին օպերացիաների կամ աշխատանքային պրոցեսների նոր-
մաների գումար:

Պրակտիկան ցույց է տալիս, որ ամենից նպատակահար-
մարը ծավալուն կոմպլեքսային նորմաներն են, որոնք հաշ-
վարկված են որպես համապատասխան կոմպլեքսային շինա-
րարական պրոցեսի պատրաստի արտադրանքի շափանիչ:
Այդպիսի նորմաները բարձրացնում են բանվորների շահա-
գրգռվածությունը աշխատանքի արտադրողականության աճի
գործում և զգալի շափով կրճատում ժամանակի ծախսումնե-
րը՝ կարգագրերը կազմելիս:

Տեխնիկայես հիմնավորված նորմաների կազմը: Ժամա-
նակի տեխնիկայես հիմնավորված նորման ստացվում է հիմ-
նական, օժանդակ, նախապատրաստական-եղրափակիչ աշ-
խատանքների, հանգստի և տեխնոլոգիական ընդմիջումների
(անհրաժեշտության դեպքում) վրա կատարված աշխատա-
ժամանակի ծախսումներից:

Հիմնական աշխատանքի մեջ են մտնում աշխատանքային
այն օպերացիաները, որոնք անմիջականորեն կապված են կա-
տարվող շինարարական պրոցեսի տեխնոլոգիայի, մեքենա-
ները ղեկավարելու և տեխնոլոգիական պրոցեսի ընթացքին
հետևելու հետ: Օրինակ, էքսկավատորի հիմնական աշխա-
տանքը մեքենայի ղեկավարումն է՝ նրա աշխատելու ժամա-
նակ:

Օժանդակ աշխատանք են համարվում տվյալ շինարարա-
կան պրոցեսի տեխնոլոգիայի հետ անմիջական կապ չունե-
ցող և օժանդակ բնույթ կրող օպերացիաները, օրինակ, մե-
քենայի յուղումը, գործիքների սրումը, բանվորների տեղա-
փոխումները, որոնք առաջանում են կատարվող աշխատանքի
առանձնահատուկ պայմաններից (էլեկտրամոնտորի սյունից-
սյուն անցնելը, հյուսն-կաղապարողի մի աշխատատեղից
մյուս անցնելը և այլն):

Նախապատրաստական-եղրափակիչ աշխատանքի մեջ են

մտնում առաջադրանքի կատարման համար իրեն՝ բանվորի նախապատրաստվելը, աշխատատեղի, նյութերի, մեքենաների ու մեխանիզմների նախապատրաստումը, ինչպես նաև աշխատանքները վերջացնելուց հետո դրանց կարգի բերելը: Նախապատրաստական-եզրափակիչ աշխատանքի ժամանակը կախում չունի բանվորի ստացած առաջադրանքի ծավալից. սրանում է նրա հիմնական տարբերությունը օժանդակ աշխատանքից: Օրինակ, նախապատրաստական-եզրափակիչ աշխատանք են համարվում մեքենավարի կողմից յուրաքանչյուր հերթափոխի սկզբում էքսկավատորի ստուգումը և մեքենայի ամրացումը՝ գործարկելուց առաջ, մոնտաժողի ծանոթացումը մոնտաժվող շինարարական կոնստրուկցիայի գծագրի հետ:

Տեխնոլոգիական ընդմիջումներ են կոչվում աշխատանքի ընթացքում չվերացվող և դժվար վերացվող այն ընդմիջումները, որոնք առաջ են գալիս տեխնոլոգիայի կամ շինարարական պրոցեսների կազմակերպման առանձնահատկությունների հետևանքով: Դրանց թվին են պատկանում, օրինակ, վարորդի աշխատանքում եղած ընդմիջումը ավտոմեքենայի բեռնման ժամանակ, մոնտաժողինը՝ հավաքովի կոնստրուկցիաները կռունկով բարձրացնելիս:

Նորմաների կազմի մեջ մտցվում են նաև կարգավորված հանգստի ընդմիջումները, այսինքն՝ այն կարճատև ընդմիջումները, որոնք բանվորին անհրաժեշտ են աշխատանքի պրոցեսում իր ուժերը վերականգնելու համար, ինչպես նաև այն ժամանակը, որ նա ծախսում է անձնական պետքերի համար: Ծաշի ընդմիջումը նորմայի մեջ չի մտցվում, որովհետև ընդմիջումը չի մտնում աշխատանքային ժամերի մեջ:

Նորմայի մեջ մտցվում են հանգստի հետևյալ ընդմիջումները. ֆիզիկական թեթև աշխատանքների համար՝ նախագծված ամբողջ ժամանակի նորմայի մինչև 6 տոկոսը, միջին դժվարությունների համար՝ մինչև 9 տոկոսը, ծանր աշխատանքների համար՝ մինչև 15 տոկոսը և շատ ծանր աշխատանքների համար՝ մինչև 25 տոկոսը:

Ժամանակի կորուստները տեխնիկայես հիմնավորված ժամանակի նորմայի մեջ չեն մտցվում: Այդպիսի կորուստներ

են համարվում՝ այն ավելորդ աշխատանքը, որն արտադրութ-
թյան նորմալ պայմաններում չպետք է տեղի ունենա (ծրինակ,
շարվածքի ոչ ճիշտ դասավորված շարքերի քանդումն ու շա-
րումը, շուռ եկած վագոնետի բարձրացումը), այն պարա-
պուրդը, որը հետևանք է աշխատանքի ու արտադրութայն վատ
կազմակերպման (բանվորների ոչ ճիշտ տեղաբաշխման, նյու-
թերը ժամանակին աշխատատեղը չհասցնելու և այլնի պատ-
ճառով), մթնոլորտային պայմաններից առաջացած պարա-
պուրդը, ինչպես նաև աշխատանքային կարգապահութայն
խախտման հետևանքով առաջացած պարապուրդը:

Տեխնիկական նորմավորման բովանդակությունը: Ժամա-
նակի տեխնիկական հիմնավորված նորմաները նախատեսում
են աշխատանքները կատարել արտադրութայն ճիշտ և առա-
վել ռացիոնալ կազմակերպման և աշխատանքի առաջավոր
մեթոդների կիրառման պայմաններում: Այդ կապակցութայն
տեխնիկական ամեն մի նորմա պետք է ուղեկցվի նորմալով,
այսինքն՝ բնութագրով, որտեղ տրվում է արտադրանքի և նյու-
սորակի վերաբերյալ տեխնիկական պահանջների, կիրառվող
մեքենաների ու նյութերի, շինարարական պրոցեսի կազմի,
աշխատանքների առաջավոր մեթոդների նկարագիրը, մեթոդ-
ներ, որոնք մշակված են նորարարների փորձի ուսումնասիր-
ման ու ընդհանրացման հիման վրա: Նորմալը ո՛չ միայն տա-
լիս է արտադրական այն պայմանների ծավալուն բնութագրի-
րը, որոնց համար հաշվի են առնված ժամանակի համապա-
տասխան նորմաները, այլև նպաստում է դրանց կատարմանն
ու գերակատարմանը՝ շնորհիվ բանվորների կողմից աշխա-
տանքի առավել կատարելագործված մեթոդների կիրառման:

Տեխնիկական նորմավորման մյուս տարբերիչ առանձնու-
հատկութունը տարբային նորմավորումն է: Վերջինիս էու-
թյունն այն է, որ յուրաքանչյուր աշխատանքային օպերա-
ցիան ուսումնասիրվում և վերլուծութայն է ենթարկվում ինչ-
պես առանձին-առանձին, այնպես էլ ուրիշ օպերացիաների
հետ կապված: Այդ ուսումնասիրման հետևանքով մշակվում
են օպերացիոն նորմաները, որոնց հիման վրա էլ նախագրծ-
վում են խոշորացված և կոմպլեքսային նորմաները՝ համա-

պատասխան շինարարական ամբողջ պրոցեսների համար:

Շինարարական յուրաքանչյուր պրոցեսի նորմավորումը կազմվում է հետևյալ էտապներից՝ ա) շինարարական պրոցեսի նախնական հետազոտում, շինարարական պրոցեսի նորմալի և խրոնոմետրական դիտումների համար օբյեկտի ընտրում, բ) խրոնոմետրաժային դիտումների անցկացում, գ) տեխնիկապես հիմնավորված նորմաների ու նորմալների նախագծում, դ) նախագծված նորմաների ու նորմալների ստուգում՝ արտադրական պայմաններում:

Շինարարական պրոցեսների նախնական հետազոտումը: Շինարարական ամեն մի պրոցեսի նորմավորումը սկսվում է ամենից առաջ այդ պրոցեսի մանրազնին ուսումնասիրությունից, նրան վերաբերող աշխատանքների կատարման ու ընդունման տեխնիկական պայմանների, աշխատանքի պաշտպանության ու անվտանգության տեխնիկայի կանոնների, տեխնոլոգիական կանոնների, առաջավոր բանվորների փորձի, ինչպես նաև համանման կամ բնույթով մոտ շինարարական աշխատանքների տեսակների գործող արտադրական նորմաների ու զնահատումների հետ ծանոթանալուց:

Այդ աշխատանքի հիմնական նպատակը շինարարական պրոցեսի նորմալներ ընտրելն է, այսինքն՝ սահմանել այն առաջադիմական արտադրական պայմանները, որոնց համար նախագծվում է նորման: Եթե նորման կազմվում է աշխատանքների կատարման հնացած մեթոդների կիրառումից ելնելով, ապա այն կտանի ո՛չ թե առաջ, այլ ետ:

Խրոնոմետրաժային դիտումներ անցկացնելու համար կարևոր է ճիշտ ընտրել դիտման օբյեկտները և ապահովել համապատասխան շինարարական պրոցեսի անընդմեջ իրակունացումը: Չի կարելի խրոնոմետրաժային դիտումներ անցկացնել վատ կազմակերպված շինարարական պրոցեսների, բավարար որակավորում չունեցող, անփորձ բանվորների աշխատանքի նկատմամբ, որովհետև նման դիտումների հիման վրա նախագծված նորմաները չեն ապահովի աշխատանքի արտադրողականության աճը: Հավասարապես չի կարելի նորմաների նախագծման հիմք ընդունել առանձնապես բարձր վարպե-

տությամբ և ռեկորդային արտադրանքով աչքի ընկալ՞ բան-
վորների աշխատանքի խրոնոմետրաժային դիտումների ար-
դյունքները: Նման նորմաները կլինեն բարձր ու բանվորների
մեծ մասի համար անհասանելի:

Շինարարական պրոցեսների ուսումնասիրումը խրոնո-
մետրաժային դիտումների ժամանակ: Ժամանակի տեսնիկա-
պես հիմնավորված նորմաների նախագծման համար անհրա-
ժեշտ է ունենալ նորմավորվող պրոցեսի առանձին տարրերի
գծով աշխատաժամանակի ծախսումների շահերի, ինչպես
նաև դիտման ժամանակ կատարված արտադրանքի ծավալի
վերաբերյալ տվյալները:

Այդ տվյալներն ստանալու համար անց են կացնում խրո-
նոմետրաժային դիտումներ, որոնց ընթացքում գրի է առնվում
աշխատաժամանակի ծախսումների առանձին տարրերի տեղ-
դրությունը, չափվում են թողարկված արտադրանքի ծավալնե-
րը և մանրազնին գրի առնվում արտադրական այն պայման-
ները, որոնց մեջ ընթացել է նորմավորվող պրոցեսը:

Խրոնոմետրաժի ժամանակ նորմավորվող պրոցեսի տարրերի տեղու-
թյան չափումը կատարվում է վայրկյանացույցի օգնությամբ, ընդ որում
յուրաքանչյուր տարրի համար արվում են մի քանի չափումներ (10—15)։

Որպես տարրի նորմատիվային տեղություն, սովորաբար ընդունվում
է հետազոտվող մեծությունների միջին օվարանականը:

Ընդունենք, որ էքսկավատորի շերեփով հողի հավաքման տեղության
դիտման հետևանքով ստացվել է խրոնոմետրաժային հետևյալ շարքը
(վայրկյաններով)։

11, 14, 17, 13, 16, 18, 15, 12, 15, 18,

Այս դեպքում որպես այդ տարրի նորմատիվային տեղություն պետք է
ընդունել՝

$(11 + 14 + 17 + 13 + 16 + 18 + 15 + 12 + 15 + 18) / 10 = 14,9$ վայրկյան:

Այն չափումները, որոնք ուսումնասիրվող պրոցեսի այս կամ այն
թերության հետևանքով իրենց մեծությամբ խիստ աչքի են ընկնում, նոր-
մատիվային տեղությունը սահմանելիս հաշվարկի մեջ չեն մտցվում:

Շինարարության մեջ խրոնոմետրաժի հետ լայնորեն կի-
րառվում է նաև աշխատօրվա լուսանկարումը, որի օգնու-
թյամբ ուսումնասիրում են աշխատաժամանակի բոլոր տեսա-

կի ծախսումները՝ ներառյալ տեխնոլոգիական ընդմիջումները, նախապատրաստման-եզրափակման աշխատանքները, ինչպես նաև աշխատանքային ամբողջ հերթափոխի ընթացքում աշխատաժամանակի բոլոր տեսակի կորուստները: Աշխատօրվա լուսանկարումը հնարավորություն է տալիս որոշելու բանվորների ու մեքենաների բեռնվածության աստիճանը և սահմանելու աշխատաժամանակի կորուստների շահերը:

Նորմաների նախագծումը մեքենայացված պրոցեսների համար: Շինարարական մեքենաներն իրենց աշխատանքի բնույթով բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ցիկլային մեքենաների և անընդհատ գործողության մեքենաների:

Ցիկլային մեքենան կատարում է աշխատանքային տարրերի և տեխնոլոգիական ընդմիջումների որոշակի կոմպլեքս, որոնք իրար են հաջորդում միևնույն կարգով: Ցիկլային մեքենաների օրինակ կարող են ծառայել էքսկավատորները, կոունկները, բետոնախառնիչները, կեռաշերեփները:

Ցիկլային մեքենաների մաքուր աշխատաժամանակը գոյանում է ցիկլի բոլոր տարրերի տևողությունից: Որոշ դեպքերում այս կամ այն մեքենայի ցիկլի առանձին հարակից տարրեր կարող են ժամանակի տեսակետից լրիվ կամ մասնակիորեն միմյանց ծածկել: Օրինակ, սլաքային կոունկի կամ էքսկավատորի շրջադարձումը կարող է կատարվել կոունկի կամ շերեփի իջեցման, կամ բարձրացման հետ միաժամանակ և այլն: Այսպիսով, այդ ծածկման բացակայության դեպքում ցիկլի տևողությունը հավասար է ցիկլի բոլոր տարրերի գումարային տևողությանը, իսկ դրա առկայության դեպքում՝ ցիկլի տևողությունը այդ գումարից պակաս է:

Անընդհատ գործողության մեքենայի բանող օրգանը աշխատանքի ժամանակ իրականացնում է որևէ մի շարժում՝ պտտեցման, առաջընթաց, տատանողական և այլ շարժում: Անընդհատ գործողության մեքենաների օրինակ կարող են ծառայել տրանսպորտյորները, հիդրոմոնիտորները, խճավա-ցիչները և այլն:

Մեքենայացված պրոցեսների համար ժամանակի նորմաների նախագծումն իրականացվում է, ելնելով համապատասխան մեքենաների ու սարքավորումների առավել ուսցիոնալ

օգտագործման պայմաններից: Նորմաների նախագծման հիմնական էտապներն են՝ մեքենաների նորմալ արտադրողականության սահմանումը մեկ ժամվա մաքուր աշխատանքի ընթացքում. մեքենաների օգնությանմբ աշխատող բանվորների օղակի հաշվարկային կազմի որոշումը. մեքենայի աշխատանքային հերթափոխի ռեժիմի նախագծումն ու մեքենական ժամանակի լրացուցիչ ծախսումների նորմավորումը. նորմաների հաշվարկը մեքենայացված պրոցեսի համար:

Մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում մեքենայի նորմալ արտադրողականությունը կլինի նրա արտադրողականությունը արտադրության ճիշտ կազմակերպման պայմաններում՝ այն բանվորների կառավարմամբ, որոնք ունեն դրա համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություն: Այն կարող է փոփոխվել՝ կապված արտադրանքի տեսակից և դրա որակի նկատմամբ եղած պահանջից, մշակվող հումքի կամ նյութերի տեսակից և այլն: Օրինակ, էքսկավատորի արտադրողականությունը կախված է մշակվող հողի ամրությունից, քարջարդիչինը՝ քարի տեսակից, մոնտաժային կոունկինը՝ մոնտաժվող կոնստրուկցիաների տեսակից: Մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում մեքենայի նորմալ արտադրողականությունը նրա արտադրողականության վերջնական սահմանը չէ: Դա ապացուցվում է բազմաթիվ առաջավոր բանվորների ամենօրյա աշխատանքով:

Ցիկլային մեքենաների նորմալ արտադրողականությունը մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում որոշվում է մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում ցիկլերի նորմալ քանակությունը բազմապատկելով մեկ ցիկլում մեքենայի արտադրած արտադրանքի ծավալով: Մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում ցիկլերի նորմալ քանակությունը որոշելու համար սահմանվում է մեկ ցիկլի տևողությունը: Դրա համար իր հերթին որոշվում է ցիկլի յուրաքանչյուր տարրի նորմատիվային տևողությունը:

Ցիկլի տարրի նորմատիվային տևողությունը, որն իրենից ներկայացնում է մեքենայի ավտոմատ կամ կիսաավտոմատ աշխատանք, և իրականացվում է առանց բանվորի անմիջա-

կան մասնակցութեան, որոշվում է, որպէս կանոն, խրոնոմետրաժային դիտումների տվյալների և տեղեկագրային տվյալների հիման վրա:

Բանվորի անմիջական մասնակցութեամբ իրականացվող մեքենաների աշխատանքի տարրերի նորմատիվային տեղականութիւնը սովորաբար կախված է շատ գործոններից և որոշվում է միայն խրոնոմետրաժային դիտումների տվյալների հիման վրա, որոնք անց են կացվում մեքենայացված պրոցեսի ճիշտ կազմակերպման ժամանակ:

Մեքենայի օգնութեամբ աշխատող բանվորի որակավորումը (վարպետութիւնը) շատ դեպքերում վճռական ազդեցութիւն է գործում ցիկլի տարրերի տեղականութեան վրա, հատկապէս էքսկավատորների, կոռնկների և այլ բարդ մեքենաների աշխատանքում: Այդ պատճառով էլ այդպիսի մեքենաների աշխատանքի խրոնոմետրաժային դիտումների ժամանակ առանձնահատուկ ուշադրութիւն է դարձվում բանվորների ճիշտ ընտրութեան վրա:

Շատ դեպքերում ցիկլի տարրերն իրենցից ներկայացնում են չվերացվող տեխնոլոգիական ընդհատումներ, օրինակ, տրանսպորտային մեքենաների պարապուրդը բեռնման ու բեռնաթափման ժամանակ, մոնտաժային կոռնկի աշխատանքի ընդհատումը մոնտաժվող կոնստրուկցիաները տեղադրելիս և այլն: Ցիկլի այդպիսի տարրերի տեղականութիւնը կախված է համապատասխան մեքենաների օգնութեամբ աշխատող բանվորների հմտութիւնից, թվից և կազմակերպվածութիւնից, ինչպէս նաև կիրառվող հարմարանքների ու օժանդակ սարքերի տեսակներից և շատ դեպքերում, կազմակերպական-տեխնիկական պատշաճ միջոցառումներ անցկացնելիս, կարող է զգալիորեն կրճատվել: Այսպէս, մոնտաժային կոռնկների պարապուրդները կարող են զգալիորեն կրճատվել՝ մինչև կոռնկի կեռիկի անջատումը կատարվող գործողութիւնների քանակը և տեղականութիւնը պակասեցնելու միջոցով (մոնտաժվող կոնստրուկցիայի տեղակայման տեղի նախնական նախապատրաստում, մոնտաժվող կոնստրուկցիաների ժամանակավոր թուլացում և այլն): Ուստի ցիկլային տեխնոլոգիական

ընդամիջումների նորմատիվային տևողությունը սահմանելիս անհրաժեշտ է մեքենայացվող պրոցեսի կազմակերպումը վերլուծության ենթարկել հայտաբերված թերությունները վերացնելու նպատակով: Խրոնոմետրաժային դիտումներն անց են կացվում մեքենայացված պրոցեսում անհրաժեշտ բարելավումներ մտցնելուց հետո:

Նորմավորվող մեքենայի ցիկլի առանձին տարրերի նորմատիվային տևողությունը որոշելուց հետո սահմանվում է ամբողջ ցիկլի նորմալ տևողությունը՝ հաշվի առնելով ցիկլի հարակից տարրերի հնարավոր համատեղումը (ժամանակի ծածկումը): Որոշելով մեքենայի ցիկլի նորմատիվային տևողությունը, իսկ այստեղից էլ ցիկլերի նորմալ քանակը մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում, կարելի է որոշել մեկ ցիկլի ժամանակ մեքենայի կատարած արտադրանքի ծավալը:

Օրինակ, մի շարք հիդրոէլեկտրակայանների շինարարությունների մեջ անցկացված խրոնոմետրաժային դիտումների մշակման շնորհիվ՝ շերեփի 3,4 խոր մ ծավալ ունեցող ՅՄ-1 էքսկավատորով ավազահողում փոսորակ վերամշակելիս, ստացվել են ցիկլի տարրերի հետևյալ նորմատիվային տևողությունները.

Հողի հավաքում	15 վայրկյան
Շերեփի բարձրացում՝ էքսկավատորի միաժամանակյա դարձումով	18
Շերեփի բեռնաթափում (ընթացքի ժամանակ)	2,6
էքսկավատորի դարձում՝ շերեփի միաժամանակյա իջեցումով	14,5 »

Ը ն գ ա մ ե ն ր 50,1 վայրկյան

Դիտումների ու չափումների շնորհիվ սահմանվել է, որ շերեփի մեջ հավաքված հողի միջին ծավալը կազմում է 2,67 խոր մ (ամուր հողի մեջ):

Օգտվելով բերված տվյալներից գտնում ենք էքսկավատորի մեկ ժամ մաքուր աշխատանքի արտադրողականությունը.

$$\frac{60 \times 60}{50,1} \times 2,67 = 192 \text{ խմ}$$

Անընդհատ գործողության մեքենաների մեկ ժամվա մաքուր աշխատանքի նորմալ արտադրողականությունը որոշե-

չիս հաշվի են առնվում դրանց աշխատանքի բոլոր առանձնահատուկ պայմանները և մեքենաների առանձին տիպերի ու տարատեսակների անհատական առանձնահատուկությունները: Որոշ մեքենաների համար արտադրողականությունը որոշվում է հիմնականում նրանց կոնստրուկտիվ յուրահատուկություններով և աշխատանքների տվյալ պայմաններում հանդիսանում է հարաբերականորեն հաստատուն մեծություն: Այդպիսի մեքենաներ են, օրինակ, բազմաշերեփ էքսկավատորներն ու բեռնիչները, գրեյդեր-էլեատորները, բետոնապոմպերն ու շաղախապոմպերը, գնդավոր աղացները և այլն: Այս դեպքում մեքենայի նորմալ արտադրողականության որոշումը առանձին դժվարությունների չի հանդիպում. ապահովելով մեքենայի աշխատանքի նորմալ պայմանները, շահում են մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում նրա կատարած արտադրանքի ծավալը:

Մի շարք դեպքերում անընդհատ գործողության մեքենաների նորմալ ժամային արտադրողականության որոշումը բավականին բարդ խնդիր է դառնում՝ նրա նորմալ բեռնավորվածությունը, ինչպես նաև արտադրվող արտադրանքի պատրաստ լինելու ծավալը կամ աստիճանը որոշելու դժվարության հետևանքով: Օրինակ, ժամանակի մեկ միավորի ընթացքում քարջարդիչի ալտերի միջով անցնող քարի նորմալ ծավալը կամ ժամանակի միավորի ընթացքում խճավացիչով կամ խճատեսակավորիչով վերամշակվող խճի նորմալ ծավալը կարելի է սահմանել միայն մասնագետ-մեխանիկների մասնակցությամբ և մի շարք հատուկ գործիքների ու ապարատների օգնությամբ կատարված հետազոտությունների միջոցով:

Գտնելով մեքենաների մեկ ժամվա մաքուր աշխատանքի նորմալ արտադրողականությունը, որոշում են մեքենաների օգնությամբ աշխատող բանվորների օղակի հաշվարկային կազմը: Աշխատանքների այդ էտապն իրականացվում է խրոնոմետրաժային դիտումների տվյալների վերլուծության և առաջավոր օղակների ու բրիգադների փորձի ուսումնասիրման հիման վրա, ելնելով աշխատաժամանակի ռացիոնալ օգտա-

գործմամբ մեքենաների ամենաբարձր արտադրողականության ապահովման անհրաժեշտությունից:

Մեքենայացված պրոցեսի համար նորմաների նախագրծման հետևյալ էտապը մեքենայի աշխատանքային հերթափոխի նորմալ ռեժիմի սահմանումն է՝ մեքենական ժամանակի լրացուցիչ ծախսումների մեծությունը որոշելու նպատակով:

Մեքենայի աշխատանքային հերթափոխի նորմալ ռեժիմը պետք է նախ՝ ապահովի մեքենայի առավելագույն արտադրողականությունը աշխատանքային հերթափոխի ընթացքում և, երկրորդ, նախատեսի անհրաժեշտ քանակության ժամանակ՝ մեքենայի խնամքի (զննում, ամրակման նորոգում, յուղում և այլն) հետ կապված գործողություններն իրականացնելու համար՝ մեքենան աշխատանքային մի տեղից մյուսը տեղափոխելու հետ միասին, ինչպես նաև անհրաժեշտ ժամանակ՝ մեքենայական ժամանակի լրացուցիչ ծախսումների կազմի մեջ մտնող տեխնիկական ընդմիջումների, այդ թվում նաև մեքենավարի հանգստի ընդմիջումների համար:

Մեքենայի աշխատանքային հերթափոխի նորմալ ռեժիմը նախագծելու համար ելակետային նյութեր են հանդիսանում համապատասխան մեքենայացման պրոցեսների վրա կատարված աշխատանքային օրվա մի քանի լուսանկարների տվյալները: Այդ տվյալների վերլուծության հիման վրա սահմանվում է մեքենական ժամանակի լրացուցիչ ծախսումների մեծությունը և հերթափոխի ընթացքում մեքենայի օգտագործման ժամանակի գործակիցը:

Հերթափոխի ընթացքում մեքենայի օգտագործման ժամանակի գործակից է (Գժ) կոչվում հերթափոխի ընթացքում մեքենայի մաքուր աշխատանքի ժամերի քանակի հարաբերությունը աշխատանքային ամբողջ հերթափոխի տևողությանը: Եթե, օրինակ, էքսկավատորը 7 ժամից 5,6 ժամը ծախսում է մաքուր աշխատանքի վրա, ապա հերթափոխի ընթացքում էքսկավատորի օգտագործման ժամանակի գործակիցը կազմում է՝

$$\text{Գժ} = \frac{5,6}{7} = 0,8,$$

Մեքենայի արտադրանքի հերթափոխային նորման որոշվում է մեկ ժամ մաքուր աշխատանքի ընթացքում մեքենայի արտադրողականության սահմանված նորման հերթափոխի տևողության (ժամերով) և հերթափոխի ընթացքում մեքենայի ըստ ժամանակի նորմալ օգտագործման գործակցի հետ բազմապատկելու միջոցով:

Միասնական նորմաների և գնահատումների (ՄՆԼԳ) ժողովածուների մեծ մասում մեքենայացված աշխատանքների համար բերվում են միայն մեքենաների օգնությամբ աշխատող բանվորների ժամանակի նորմաները, իսկ մեքենաների ժամանակի նորմաները և արտադրանքի նորմաները ցույց չեն տրվում: Բանվորների ժամանակի նորման ստացվում է օղակում եղած բանվորների հաշվարկված թիվը մեքենաների ժամանակի նորմայի հետ բազմապատկելու միջոցով:

Օրինակ, ՅՊ—1 էքսկավատորի աշխատանքային հերթափոխի հինգ լուսանկարների միջոցով ստացվել են նրա աշխատանքի ռեժիմը բնութագրող հետևյալ տվյալները. (տե՛ս 461 էջի աղյուսակը):

Աշխատանքային հերթափոխի փաստական ռեժիմի վերլուծության հիման վրա նախագծվեց աշխատանքային հերթափոխի նորմալ ռեժիմը, որը բերված է աղյուսակի երրորդ սյունակում: Արգելվածն են հանգույցի կարգավորման և նորոգման վրա կատարվող ժամանակի ծախսումները լրիվ բացառված են, քանի որ այդ աշխատանքներն առաջացել են մեքենայի գործարանային թերութայն պատճառով և նորմալ պայմաններում չպետք է լինեն: Մտցված է մեքենավարի նվազագույն հանգիստ՝ 5 տոկոսի չափով: Ժամանակի կորուստները լրիվ բացառված են:

Աշխատանքային հերթափոխի նախագծված ռեժիմի համաձայն, հերթափոխի ընթացքում ժամանակի օգտագործման գործակցի նորմալ մեծությունը կազմում է՝ $\rho = 0,8$:

ՅՊ—1 էքսկավատորի հերթափոխային նորման ավազահողում փոսորակ փորել—շուռ տալու դեպքում կազմում է՝

$$192 \times 7 \times 0,8 = 1075 \text{ խոր մ.},$$

իսկ էքսկավատորի ժամանակի նորման 1 խոր մ հողի համար հավասար է՝ $7:1075 = 0,0065$ մեքենա-ժամ:

Նկատի ունենալով, որ էքսկավատորն սպասարկում է երեք բանվոր, ՅՊ—1 էքսկավատորի օգնությամբ ավազահողի 10 խոր մ փոսորակի համար ժամանակի նորման կազմում է՝ $0,0065 \times 100 \times 3 = 1,95$ մարդ-ժամ (այդ թվում մեքենավարի աշխատանքը = 0,65 ժամ, էլեկտրամոնայորինը՝ 0,65 և փականագործ-յուղողինը՝ 0,65 ժամ):

Աշխատածամանակի ծախսումների անվանումը	Աշխատածամանակի ծախսման բաշխումը 0/0-ով աշխատանքային ամբողջ հերթափոխից	
	փաստացի հասցի (միլիոն դրամ)	նախատեսված (միլիոն դրամ)
Ա. Աշխատածամանակը		
Արտափորման մաքուր ժամանակը	73	80
էքսկավատորրի տեղաշարժերը	3	3
Ը ն դ ա մ հ ն ը	77	83
Բ. Տեխնոլոգիական ընդմիջումներ		
Հերթափոխի ընդունում և հանձնում, ամրակման կանխիչ վերանորոգում և հանգույցների յուղում	10	10
Արդեւակման հանգույցի կարգավորում և նորոգում	—	—
Այլ մանր վերանորոգումներ	2	2
Մեքենավարի հանգիստ	2	—
Ը ն դ ա մ հ ն ը	19	17
Գ. Ժամանակի կորուստներ		
Էլեկտրալիներգիայի բացակայություն	2,5	—
Հարվածության անկում ցանցում	1	—
Պարապտորդ էքսկավատորրի տեղաշարժին խանգարող կոնզերի արմատահանման ժամանակ	0,5	—
Ը ն դ ա մ հ ն ը	4	—
Բ ո լ ո Ր Ր մ ի ա ս ի ն	100	100

Ձեռքի աշխատանքների համար նորմաների նախագծումը կատարվում է շինարարական այն պրոցեսների խրոնոմետրաթային դիտումների հիման վրա, որոնք կատարվում են րնտրված նորմային համապատասխան:

Մինչև նորմաների նախագծման սկսելը վերջնականապես որոշվում է աշխատանքային այն օպերացիաների թվարկումը, որոնք պետք է հաշվի առնվեն նախագծվող ժամանակի խոշորացված նորմայի կողմից, այն հաշվով, որ այդ նորման ընդգրկի համապատասխան արտադրանք ստանալու համար թեխնոլոգիապես անհրաժեշտ աշխատանքային գործողությունների ամբողջ կոմպլեքսը:

Աշխատանքի և արտադրություն ոչ ճիշտ կազմակերպման հետևանքով առաջացած աշխատանքային օպերացիաները նորմավորվող պրոցեսի կազմի մեջ չեն մտցվում: Օրինակ, նյութերի մատուցումը ժամանակի նորմայի մեջ չի կարելի մտցնել այն ժամանակ, եթե աշխատանքային տեղի ճիշտ կազմակերպման դեպքում այդ նյութերը մատուցվում են անմիջապես նրանց դրման տեղը: Աշխատանքային պրոցեսի կազմի մեջ չեն մտցվում նաև այն օպերացիաները, որոնք առաջանում են նախորդ պրոցեսների ցածրորակ արտադրանքի պատճառով:

Հիմնական և օժանդակ աշխատանքների նորմաների նախագծումն իրականացվում է հետևյալ կարգով: Ամենից առաջ շինարարական պրոցեսի հետազոտության տվյալների հիման վրա ընտրվում է նորմավորվող աշխատանքային պրոցեսի արտադրանքի շահիչը. ապա խրոնոմետրաժային դիտումների տվյալների մշակման միջոցով սահմանվում են ժամանակի օպերացիոն նորմաները՝ նորմավորվող պրոցեսի կազմի մեջ մտցվող աշխատանքային բոլոր օպերացիաների համար. վերջապես նախագծման օպերացիոն նորմաների հիման վրա հաշվվում է հիմնական և օժանդակ աշխատանքների ժամանակի նորման ամբողջ պրոցեսի համար:

Օրինակ, պահանջվում է նախագծել 1 քառ մ կաղապարման վահանների պատրաստման հիմնական աշխատանքի ժամանակի նորման:

Ընդունենք, որ խրոնոմետրաժային դիտումների տվյալների մշակման հիման վրա աշխատանքային այդ օպերացիաների համար սահմանվել են հետևյալ նորմաները.

ձողերի և տախտակների դարսումը դազգահի վրա՝ 2 րոպ. 1 քառ մ վահանի համար.

վահանի հավաքում — 0,2 ռոպե՝ մեկ մեխի համար.

վահանի տեղափոխումը — 2,4 ռոպե՝ 1 վահանին, և

Աշխատանքային գծադրի համաձայն՝ վահանի մակերեսը կազմում է $0,5 \times 6 = 3$ քառ մ, իսկ մեխերի ծախսը՝ 16 հատ՝ 1 քառ մ վահանին:

Այսպիսով 1 քառ մ վահանի վրա հիմնական աշխատանքների նորման հավասար կլինի՝

$$2 + (16 \times 0,2) + (2,4 \times 3) = 6 \text{ ռոպեի:}$$

Նախապատրաստական-եզրափակիչ, ինչպես նաև օժանդակ մանր աշխատանքների վրա ժամանակի ծախսումները նորմավորվում են, որպես կանոն, գումարային ձևով՝ համապատասխան պրոցեսի արտադրանքի վերջնական միավորի համար կամ էլ նախօրոք սահմանված տոկոսային հավելումի ձևով մտցվում են ժամանակի նորմայի մեջ:

Գործնականում կիրառվում են, օրինակ, նշված աշխատանքների հետևյալ հավելումները՝ հողափորների, սալահատակողների և տրանսպորտային բանվորների համար նախագծվող ժամանակի նորմայի 1 տոկոսը, տանիքազործների և սալարկողների համար՝ 2 տոկոսը, արմատուրազործ-նախապատրաստողների, ճանապարհային բանվորների, ներկարարների և ուղեզործ բանվորների համար՝ 3 տոկոսը, կոնստրուկցիաներ մոնտաժող-տանիքազործների և սալարկողների համար՝ 2 տոկոսը, արմատուրազործների համար՝ 4 տոկոսը, արմատուրազործ-տեղակայողների, ատաղձազործների և փականազործ-մոնտաժողների համար՝ 5 տոկոսը, զոդողների, փականազործ-սանտեխնիկների համար՝ 6 տոկոսը:

Ինչպես նշվեց վերևում, ժամանակի նորմայի մեջ մտցվում է հանգստի ժամանակը, իսկ անհրաժեշտության դեպքերում, նաև տեխնոլոգիական ընդմիջումները: Այդ ընդմիջումներն առաջ են գալիս, որպես կանոն, օղակային աշխատանքային պրոցեսներում օղակի մի քանի բանվորների հարկադրական պարբերական, գերազանցապես ոչ տեակական, պարապուրդների ձևով, մյուս բանվորների կողմից այնպիսի օպերացիաների կատարման ժամանակ, որոնք չեն պահանջում օղակի ամբողջ կազմի մասնակցությունը և դրա հետ մեկտեղ թույլ չեն տալիս աշխատանքային այլ օպերացիաների միաժամանակյա կատարում: Տեխնոլոգիական ընդմիջումների տեղումները

մանրագնին գրանցվում է խրոնոմետրաժային դիտումների ժամանակ: Այդ ընդմիջումները նախագծվող ժամանակի նորմաների մեջ են մտցվում միայն այն բանից հետո, երբ նորմավորողն ուսումնասիրել է դրանց առաջացման բնույթն ու պատճառները և համոզվել, որ դրանց վերացումն անհնար է:

Տեխնոլոգիական ընդմիջումները որոշ շափով ծառայում են բանվորների համար որպես հանգիստ: Դրա համար էլ այդ ընդմիջումները նորմայի մեջ մտցնելիս հանգստի ժամանակի շափերը պակասեցվում են: Սակայն տեխնոլոգիական ընդմիջումները լրիվ շափով հանգիստ համարել անթույլատրելի է, որովհետև տեխնոլոգիական ընդմիջումներն օղակի առանձին բանվորների միջև բաշխվում են շատ դեպքերում անհամաչափ: Այդ կապակցությամբ հանգստի հավելման հաշվին են վերագրում սովորաբար նորմայով նախատեսված տեխնոլոգիական ընդմիջումների միայն կեսը, պայմանով, որ հանգստի պակասեցված հավելումը կազմի ամբողջ աշխատաժամանակի 5 տոկոսից ոչ սլակաս:

Հիմնական և օժանդակ աշխատանքի համար ժամանակի նորման սահմանելուց և նախապատրաստական-եզրափակիչ ու մանր օժանդակ աշխատանքների, ինչպես նաև տեխնոլոգիական ընդմիջումների ու հանգստի համար անհրաժեշտ հավելումների մեծությունը որոշելուց հետո հաշվվում է նորմավորվող պրոցեսի արտադրանքի համապատասխան միավորի ժամանակի նորման:

Այսպես, վերևում քննարկված օրինակում հիմնական աշխատանքի ժամանակ նորման՝ 1 քառ մ կաղապարման վահանի պատրաստման համար կազմեց 6 մարդ-րոպե: Նախապատրաստական-եզրափակիչ աշխատանքի հավելումն ընդունված է 5 տոկոսի, իսկ հանգստինը՝ 9 տոկոսի շափով: Այս դեպքում 1 քառ մ կաղապարման վահանի պատրաստման նորման կկազմի 7 ռոպե:

Տարբեր տարակարգերի և երբեմն էլ տարբեր մասնագիտությունների վերաբերյալ աշխատանքային օպերացիաներից կազմված օղակային աշխատանքային պրոցեսները նորմավորելիս նախագծվում է օղակի հաշվարկային կազմը, այսինքն՝

օղակի մեջ մտնող բանվորների թիվը՝ յուրաքանչյուր մլլսնագիտության ու տարակարգի գծով առանձին-առանձին: Ընդ որում քոլոր կատարողների աշխատանքի համաչափ բեռնվածությունը պետք է ապահովվի նրանց մասնագիտությանն ու տարակարգին համապատասխան:

4. ՏԱՐԻՖԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տարիֆային սիստեմն աշխատանքի նորմավորման հետ մեկտեղ հիմք է ծառայում բանվորների աշխատավարձի կազմակերպման համար: Եթե տեխնիկապես հիմնավորված նորմաները հնարավորություն են տալիս որոշելու ծախսվող աշխատանքի քանակը, ապա տարիֆային սիստեմի օգնությամբ իրականացվում է աշխատանքի որակի գնահատումը, հաշվի է առնվում որակյալ և ոչ որակյալ աշխատանքի, ծանր և թեթև աշխատանքի միջև եղած տարբերությունը:

Տարիֆային սիստեմի հիմնական տարրերն են՝ տարիֆային ցանցերը, տարիֆային դրույքները և տարիֆա-որակավորման տեղեկատուները:

Տարիֆային ցանցերը: Տարիֆային ցանցն իրենից ներկայացնում է տարբեր խմբերի (տարակարգերի) բանվորների աշխատանքի վարձատրման հարաբերակցությունների ցուցնակ: Այդ հարաբերակցություններն արտահայտվում են տարիֆային գործակիցներով:

Տարիֆային տարակարգերը բնութագրում են բանվորների որակավորման (վարպետության) մակարդակը, իսկ տարիֆային գործակիցները որոշում են տարբեր տարակարգեր ունեցող բանվորների աշխատավարձի դրույքների հարաբերակցությունը: Որակավորում չունեցող բանվորին շնորհված առաջին տարակարգի տարիֆային գործակիցը հավասարեցվում է մեկ միավորի: Որքան բարձր է բանվորի որակավորումը, այնքան բարձր է նրա տարակարգը:

Ներկայումս շինարարության մեջ զբաղված բանվորների համար գործում է հետևյալ միասնական վեց տարակարգային տարիֆային ցանցը.

Տարակարգեր	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ
Տարիֆային դորձակիցներ	1,00	1,16	1,33	1,52	1,76	2,00

Տարիֆային դրույքները: Տարիֆային դրույքները որոշում են բանվորների վարձատրության շափը ժամանակի միավորի համար՝ ժամվա (ժամային տարիֆային դրույքներ), օրվա (օրեկան տարիֆային դրույքներ) կամ ամսվա (ամսեկան տարիֆային դրույքներ): Տարիֆային դրույքների օգնությամբ կարգավորվում է բանվորների աշխատավարձի մակարդակը՝ լինելով նրանց որակավորումից:

Շինարարության մեջ զբաղված բանվորների համար սահմանված է առաջին տարակարգի ժամային տարիֆային դրույք՝ 32 կոպեկ: Հետևաբար, բերված տարիֆային դորձակիցներին համապատասխան, տարիֆային ցանցի բոլոր տարակարգերի ժամային տարիֆային դրույքները կազմում են (ռուբլիներով և կոպեկներով)։

Տարակարգեր	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ
ժամային տարիֆային դրույքներ	0—32	0—37	0—42,5	0—48,8	0—56,2	0—64

Երկրի-հյուսիսային շրջաններում, Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում, ինչպես նաև Ուրալի, Արևմտյան Սիբիրի, Ղազախստանի և Միջին Ասիայի բնակչության ծանր պայմաններ ունեցող առանձին շրջաններում տեղաբաշխված շինարարական կազմակերպությունների բանվորների աշխատավարձը հաշվարկելիս կիրառվում են շրջանային գործակիցներ՝ 1,15-ից մինչև 2,0-ի սահմաններում: Բարձր լեռնային, ինչպես նաև տափաստանային ու ջրազուրկ տեղանքի կառույցներում զբաղված բանվորների համար այդ գործակիցները լրացուցիչ կերպով բարձրացվում են 10—40 տոկոսով: Շրջանային գործակիցները տարիֆային նոր դրույքներ չեն

առաջացնում: Դրանք կիրառվում են 300 ուրբլի գումարի սահմաններում եղած ամսեկան աշխատավարձի (ներառյալ նաև պարգևատրումները) նկատմամբ: Աշխատավարձի այն մասի նկատմամբ, որը աշխատողներն ստանում են այդ գումարից ավելի, շրջանային գործակիցներ չեն կիրառվում:

Տարիֆային-որակավորման տեղեկատու: Տարիֆային-որակավորման տեղեկատուում տրվում է տարբեր աշխատանքների բաշխումը ըստ տարակարգերի: Տեղեկատուի հիման վրա իրականացվում է բանվորների տարիֆիկացիան, այսինքն՝ նրանց որակավորումը որոշելու և տարիֆային ցանցի այս կամ այն տարակարգին դասելու համար:

Մեքենավարների, մոնտաժողների, հյուսնների, քարտաշների և շինարարական այլ բանվորների աշխատանքները տարբեր են իրենց կազմակերպական-տեխնիկական պայմաններով, որակավորմամբ, մասնագիտական հմտություններով և աշխատանքի ձևերով: Սակայն աշխատանքների բոլոր բազմազան ձևերը, համադրելու և աշխատանքի վարձատրման չափը որոշելու համար, սխտեմավորվում են տարիֆա-որակավորման տեղեկատուի մեջ: Վերջինս բովանդակում է տարբեր տեսակի աշխատանքների արտադրական բնութագիրը և դրանով իսկ հիմք է ստեղծում բանվորների որակավորումը և նրանց կատարած աշխատանքի համեմատական զնահատականքը որոշելու համար:

Բանվորների որակավորումը որոշելու համար կարևոր հատկանիշ է բարդ և ճշգրիտ աշխատանքներ կատարելու նրսունակությունը, անհրաժեշտ աշխատանքային հմտությունն առկայությունը, որոնք հաճախ ձեռք են բերվում տարիներ ընթացքում: Դրա հետ մեկտեղ բանվորին այս կամ այն տարակարգին դասելիս հաշվի են առնվում նաև արտադրական միջավայրը, որը պայմանավորում է աշխատանքի դժվարությունն ու պատասխանատվությունը: Դժվար ու պատասխանատու աշխատանքներն այլ հավասար պայմաններում պատվում են ավելի բարձր տարակարգի:

Ներկայումս գործում է (Շինարարության և շին-վերանորոգման աշխատանքներում դրադված բանվորների աշխատ-

տանքների ու մասնագիտությունների միասնական տարիֆա-
որակավորման տեղեկատու» (ՄՏՈՏ), որը հաստատվել է
1960 թվականին:

Յուրաքանչյուր մասնագիտության ու տարակարգի համար
տեղեկատուում բերված է բանվորի որակավորման բնութա-
գիրը, որտեղ որոշվում է նրա գիտելիքների ծավալը, թվարկ-
վում են այն աշխատանքները, որոնք բանվորը պետք է կալու-
զանա ինքնուրույն կատարել:

Տարիֆա-որակավորման տեղեկատուում որևէ տարակարգի
բանվորի համար նշված գիտելիքների ծավալը և կատարվելիք
աշխատանքների թվարկումը պարտադիր է նույն մասնագի-
տության ավելի բարձր տարակարգ ունեցող բոլոր բանվոր-
ների համար և, հետևաբար, համապատասխան որակավոր-
ման բնութագրում դրանք չեն կրկնվում: Յուրաքանչյուր բան-
վոր իր տարակարգի աշխատանքները կատարելուց բացի
պարտավոր է ավելի բարձր որակավորում ունեցող բանվոր-
ների ղեկավարութչամբ ու մասնակցութչամբ կատարելու
այնպիսի աշխատանքներ, որոնք տեղեկատուի մեջ վերա-
պրված են ավելի բարձր տարակարգերի: Օրինակ, երրորդ տա-
րակարգի կոնստրուկցիաների մոնտաժողները պետք է շոր-
րորդ-վեցերորդ տարակարգերի կոնստրուկցիաների մոնտա-
ժողների հետ մոնտաժեն հավաքովի երկաթբետոնե կոնստ-
րուկցիաներ, թեև այդ աշխատանքը չի էլ նախատեսված եր-
րորդ տարակարգի բետոնագործ-մոնտաժողի որակավորման
բնութագրում:

Միասնական տարիֆա-որակավորման տեղեկատուում
բերված որակավորման բնութագրերը սպառիչ չեն և նախա-
տեսում են միայն հիմնական, առավել հաճախակի հանդիպող
աշխատանքները: Մնացած աշխատանքները տարիֆիկացվում
են տեղեկատուով նախատեսված աշխատանքներին համա-
նման:

Բանվորների տարիֆիկացումը: Բանվորի տարիֆիկացու-
մը, այսինքն՝ նրան որոշակի տարակարգ շնորհելը, կատար-
վում է տարիֆա-որակավորման տեղեկատուի հիման վրա
ստուգումներ (փորձեր) կատարելու միջոցով:

Տարակարգ շնորհելու կամ տարակարգը բարձրացնելու նպատակով ստուգումներ (փորձեր) անցկացնելիս քննվորը պետք է պատասխանի այն բոլոր հարցերին, որոնք նախատեսված են «Պետք է իմանալ» խորագրի տակ, կատարի «Աշխատանքների օրինակներ» բաժնում նշված երեքից ոչ պակաս տարբեր տեսակի աշխատանքները և, ընդ որում, կատարի արտադրանքի գործող նորմաները՝ պահպանելով գործող տեխնիկական պայմաններով նախատեսված պահանջները՝ արտադրանքի որակի մասին:

Համապատասխան որակավորման բնութագրում նշված հարցերից բացի բանվորը պետք է իմանա՝ կատարելիք աշխատանքների տեխնոլոգիայի վերաբերյալ հիմնական տեղեկություններ. այդ աշխատանքների կատարման տեխնիկական պայմանները, այդ թվում նաև ձևոսանք. կատարվելիք աշխատանքների որակի, ինչպես նաև հարակից շինարարական պրոցեսների աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական պահանջները (օրինակ, ծեփագործը պետք է իմանա բլոկների շարման աշխատանքների որակի նկատմամբ պահանջները և այլն). խոտանի տեսակները և այն կանխելու եղանակները. գործածվող նյութերի հիմնական հատկությունները, սորտամենտը և մարկան. իր ղեկավարած մեքենաների դերը, կառուցվածքը և տեխնիկական շահագործման կանոնները. կատարվելիք աշխատանքի հետ կապված անվտանգության տեխնիկայի կանոնները, հակահրդեհային կանոնները և արդյունաբերական սանիտարիայի նորմաները: Բանվորը պետք է կարողանա օգտագործել այն էսքիզներն ու գծագրերը, որոնք ինքն անմիջականորեն կիրառում է աշխատանքի պրոցեսում, ինչպես նաև ղեկավարի իր գլխավորած օղակի կազմի մեջ եղած ավելի ցածր տարակարգ ունեցող բանվորներին: Ավտոմոբիլային ընթացք ունեցող մեքենաներն ու վերամբարձ մեխանիզմները կառավարող մեքենավարները պետք է ունենան, բացի դրանից, նաև վարորդի իրավունք:

Բրիգադիւրներին տարակարգեր շնորհելը կատարվում է ընդհանուր հիմունքներով՝ մյուս բանվորներին զուգընթաց:

Բանվորին բրիգադիր նշանակելը չի կարող նրա տարակարգի բարձրացման հիմք ծառայել:

Ստուգումները (փորձերը) կատարվում են հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ մտնում են՝ ավագ աշխղեկը, աշխղեկը, շինարարական կազմակերպության գլխավոր մեխանիկը (մեխանիզատորների ստուգման դեպքում), վարպետը, բրիգադիրը, այդ նույն մասնագիտության մեկ-երկու բանվոր, որի գծով հանձնվում է ստուգումը և արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչը:

Ստուգման արդյունքները ձևակերպվում են հանձնաժողովի արձանագրություններով և շինարարական կազմակերպության հրամաններով (կարգադրություններով): Բանվորին տարակարգ շնորհելը, ինչպես նաև նրա զբաղմունքն ու մասնագիտությունը նշվում են բանվորի աշխատանքային և հաշվարկային գրքույկներում:

5. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՁԵՎԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋ

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունում, այդ թվում նաև շինարարության մեջ, կիրառվում է աշխատավարձի երկու հիմնական ձև՝ գործավարձային և ժամանակավարձային, որոնք մի շարք դեպքերում զուգակցվում են տարբեր տեսակի պարգևատրումների հետ:

Աշխատանքի վարձատրման գործավարձային ձևը: Շինարարության մեջ աշխատավարձի ամենից տարածված ձևը գործավարձն է, որի դեպքում բանվորն աշխատավարձ է ըստանում կատարած աշխատանքների փաստական ծավալի համար՝ ելնելով լավորակ արտադրանքի միավորի համար սահմանված գործարքային գնահատումներից: Գործարքային վարձատրությունը ներկայումս ընդգրկում է շինարար-բանվորների մոտ 90 տոկոսը:

Գործավարձի դեպքում բանվորի վաստակն անմիջական կախման մեջ է գտնվում նրա տված արտադրանքի քանակից, որը և դրդում է բանվորին ավելացնել արտադրանքը և բարձրացնել իր որակավորումը՝ տիրապետել տեխնիկային,

կատարելագործել իր աշխատանքի ձևերը, ընդօրինակել շինարարական արտադրութեան առաջավորների կիրառած աշխատանքի մեթոդները:

Աշխատանքի վարձատրման գործարքային ձևի կիրառման դեպքում հաշվարկային հիմնական փաստաթուղթը, որով որոշվում է բանվորի աշխատավարձի գումարը, աւտագրական առաջադրանքն է (կարգագիրը): Վերջինիս մեջ բերվում են՝ տրված աշխատանքների նկարագիրը և նրանց ծավալները, արտադրանքի միավորի ժամանակի նորման և գնահատումները, աշխատավարձի գումարը, աշխատանքի վարձատրման սխտեմը, ինչպես նաև աշխատանքները սկսելու և ավարտելու ժամկետները: Կարգագիրը արտակարգ կարևոր դեր է խաղում կառույցներում աշխատանքի ու աշխատավարձի ճիշտ կազմակերպման գործում և պետք է բանվորի ձեռքը տրվի մինչ աշխատանքների սկսելը:

Աշխատանքի գործարքային վարձատրման հիմնական ձևը շինարարութունում ուղղակի գործավարձն է:

Ուղղակի գործավարձի ժամանակ պատրաստած արտադրանքի յուրաքանչյուր միավորի համար վարձատրութունը կատարվում է միևնույն գործարքային պահանջարկով, անկախ պատրաստած արտադրանքի բանակից սահմանված նորմաների կատարման աստիճանից:

Առանձին բանվորների կատարած անհատական աշխատանքների համար սահմանվում են անհատական պահանջարկներ, իսկ մի քանի բանվորների համատեղ ջանքերով կատարված աշխատանքների համար՝ օղակային գնահատումներ: Թե՛ անհատական և թե՛ օղակային գնահատումների հաշվարկի հիմքում ընդունվում են ժամանակի նորմաները և համապատասխան տարակարգերի տարիֆային դրույրները:

Անհատական գործարքային գնահատումը որոշվում է համապատասխան տարակարգի ժամային տարիֆային դրույքը, մարդ-ժամերով արտահայտած, ժամանակի նորմայի վրա բազմապատկելով:

Օրինակ, պահանջվում է որոշել պաստառապատման համար շոր սվաղի կարերի պատրաստման գործարքային գնահատումը: Հայտնի է, որ այդ աշխատանքների կատարման ժամանակի նորման՝ 100 քառ մ մակերեսի վերջնամշակման համար, կազմում է 2,3 մարդ-ժամ, իսկ աշխատանքը տարիֆավորվում է երրորդ տարակարգով:

Օգտվելով սահմանված դրույքներից (տե՛ս էջ 466) ստանում ենք հետևյալ գնահատումը՝ $42,5 \text{ կ.} \times 2,3 = 98 \text{ կոպ. (կլորացված)}$:

Օղակային պրոցեսների համար ժամանակի նորմաներն իրենցից ներկայացնում են օղակի կազմի մեջ մտնող բոլոր բանվորների աշխատաժամանակի ծախսումների գումարը: Գրան համապատասխան օղակային գործարքային գնահատումը որոշվում է օղակի միջինժամային տարիֆային դրույքը բազմապատկելով մարդ-ժամերով արտահայտած ժամանակի նորմայով: Ընդ որում միջինժամային տարիֆային դրույքը որոշվում է ո՛չ թե օղակի փաստական, այլ նորմաներով սահմանված հաշվարկային կազմով:

Օրինակ, պահանջվում է որոշել մինչև 2 տոննա քաշ ունեցող մեկ հավաքովի երկաթբետոնե սյան տեղակայման գործարքային գնահատումը: Աշխատանքի ժամանակի նորման կազմում է 4,9 մարդ-ժամ՝ օղակի հետևյալ հաշվարկային կազմի դեպքում.

5-րդ տարակարգի կոնստրուկցիայի մոնտաժող	1 մարդ
4-րդ » » » »	.1 »
3-րդ » » » »	3 »

Օգտվելով օղակի հաշվարկային կազմից և համապատասխան դրույքներից, որոշենք սկզբում օղակի միջին ժամային դրույքը.

$$56,2 \text{ կ.} \times 1 + 48,8 \text{ կ.} \times 1 + 42,5 \text{ կ.} \times 3 = 2 \text{ ո. } 33 \text{ կ.}$$

$$2 \text{ ո. } 33 \text{ կ.} : 5 = 46,6 \text{ կ.}$$

Գործարքային գնահատումը կկազմի՝ $46,6 \text{ կ.} \times 4,9 = 2 \text{ ո. } 29 \text{ կ. (կլորացումներով)}$:

Ուղղակի գործարքային վարձատրության տարատեսակը՝ աշխատանքի ակորդային վարձատրութունն է: Ակորդային սիստեմի դեպքում աշխատանքի վարձատրությունը կատարվում է ո՛չ թե աշխատանքների առանձին տեսակների համար գործարքային գնահատումներով, այլ խոշորացված, ակորդային գնահատումներով՝ արտագրության որոշակի փու-

լում պատրաստի արտադրանքի շահման միավորներով արտահայտված աշխատանքների որոշ կոմպլեքսի համաճ (օրինակ, հարկի համար՝ պատերի պանելները մոնտաժելիս, բնակարանի համար՝ սանիտարա-տեխնիկական, սվաղման և այլ հարդարման աշխատանքների դեպքում և այլն):

Աշխատանքների կոմպլեքսի համար ակորդային գնահատումը և աշխատավարձի գումարը հաշվարկվում են ակորդային կարգագրի կալկուլյացիայում, իսկ կարգագրի կազմվում է միասնական նորմաների ու գնահատումների հիման վրա և հաստատվում աշխղեկի կողմից:

Քննարկենք բնակելի տան պատերի շարման և հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժման ակորդային կարգագրի կալկուլյացիան կազմելու օրինակ:

Աշխատանքների նկարագրությունը	Չափման միավորը	Աշխատանքների ծավալը	Չափման միավորի ժամանակի նորման (մարդ-ժամներով)	Չափման միավորի գնահատումը (ուր. և կոպ.)	Ժամանակի նորման աշխատ. ամբողջ ծավալի համար (մարդ-ժամներով)	Աշխատավարձի գումարը աշխատ. ամբողջ ծավալի համար (ուր.)
1	2	3	4	5	6	7
Պատերի շարվածք . . .	խմ	300	3,3	1—40	990	420
Գույքային փայտամածների հավաքում, տնդափոխումը և քանդում . . .		300	0.56	0--24	168	72
Ծածկերի երկաթբետոնե պանելների մոնտաժում՝ կոունկի օգնությամբ . . .	հաս	155	0,76	0— 33,5	119	51,9
Միջպանելային կարերի լքնումը շաղախով . . .	մ	755	0,085	0 - 03,9	67	30,6
Երկաթբետոնե միջասանդուղքների և հարթակների մոնտաժում . . .	հաս	40	1,65	0-- 75,3	66	30,1

1	2	3	4	5	6	7
Աղյուսի բարձրացում աշտարակային կոունկով՝ կոնսեյններնեբում .	հազ. հատ	120	0,9	0—33,3	108	81,6
Շաղախի բարձրացում աշտարակային կոունկով՝ բունկներնեբում .	լւմ	59	0,63	0—22,3	56	19,8
Ը ն դ ա մ հ ն ը	—	—	—	—	1573	706

Տվյալ օրինակում որպես պատրաստի արտադրանքի չափման միավոր ընդունված է 1 խոր մ շարվածքը: Գիտենալով աշխատանքների ընդհանուր ծավալը (300 խոր մ), ինչպես նաև աշխատանքների այդ ծավալի համար պահանջվող նորմատիվային ժամանակը և վճարվող աշխատավարձի դամարը, կարելի է որոշել 1 խոր մ շարվածքի ակորդային նորման և դնահատումը:

Ժամանակի նորման = $1573:300 = 5,24$ մարդ-ժամ:

Գնահատումը = $706:300 = 2$ ո. 35 կ. (կլորացված):

Ինչպես փորձը ցույց է տալիս, շինարարության մեջ աշխատանքի վարձատրման ակորդային սիստեմի ճիշտ կիրառումը նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և կառուցվող օբյեկտները շահագործման հանձնելու արագացմանը: Ուղղակի գործավարձի համեմատությամբ, աշխատանքի ակորդային վարձատրման գլխավոր առավելելությունն այն է, որ բանվորներն իրենց աշխատանքի ակորդային վարձատրության ժամանակ հստակորեն են պատկերացնում առաջադրանքի ծավալն ու նրա կատարման ժամկետները, և իրենք հեշտությամբ կարող են հաշվել իրենց հասանելիք վաստակը: Դա բարձրացնում է բանվորների նյութական շահագրգռվածությունը արտադրանքի ավելացման և առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու գործում:

Աշխատանքի գործարքային վարձատրությունը կարող է լինել անհատական, օղակային և բրիգադային:

Անհատական գործավարձի դեպքում յուրաքանչյուր բանվորի կարգագրի հանձնումը և նրա կատարած արտադրանքի

հաշվառումը կատարվում է առանձին և, հետևաբար, բանվորի վաստակը ուղղակի կախման մեջ է նրա անձնակալն արտադրանքից:

Աշխատանքի օղակային և բրիգադային գործավարձի ժամանակ կարգազրի հանձնումը և տված արտադրանքի հաշվառումը կատարվում է ըստ ամբողջ օղակի և բրիգադի: Յուրաքանչյուր բանվորի վաստակը այստեղ կախված է ոչ միայն իր անձնական աշխատանքից, այլև ամբողջ կոլեկտիվի՝ օղակի կամ բրիգադի աշխատանքի արդյունքներից:

Շինարարական աշխատանքների ճնշող մեծամասնությունը ո՛չ թե անհատական է, այլ կոլեկտիվ արտադրական պրոցեսներ են, որոնք կատարվում են շատ բանվորների համատեղ ջանքերով: Ուստի, կառույցներում լայնորեն կիրառվում է աշխատանքի օղակային և գլխավորապես բրիգադային վարձատրությունը: Պատրաստի արտադրանքի համար աշխատանքի կոլեկտիվ գործարքային վարձատրությունը՝ սրա ճիշտ կիրառման դեպքում, ինչպես ցույց է սալիս փորձը, աշխատավարձի խիստ առաջադիմական ձև է:

Օղակի կամ բրիգադի վաստակի ընդհանուր գումարը՝ ամբողջ հաշվարկային ժամանակաշրջանում (օրացուցային ամսում), գոյանում է օղակի կամ բրիգադի կողմից կատարված գործավարձային բոլոր կարգազրիների ամփոփ գումարներից: Ստացված ընդհանուր գումարը բաշխվում է օղակի կամ բրիգադի առանձին անդամների միջև՝ յուրաքանչյուր բանվորի աշխատած ժամանակի և նրա տարիֆային դրույքի համամասնությամբ:

Օրինակ, կոնստրուկցիաներ մոնտաժողների շորս հոդուց բաղկացած օղակը մեկ ամսում վաստակել է 449 ուրլի 30 կոպեկ՝ փաստացի աշխատածամանակի հետևյալ բաշխմամբ՝

կոնստրուկցիայի 6-րդ տարակարգի մոնտաժող	25	օր
»	5-րդ	»
»	4-րդ	»
»	3-րդ	»
		24 օր
		25 օր
		24 օր

Ամենից առաջ պետք է որոշել յուրաքանչյուր բանվորի աշխատավարձը նրա ժամային տարիֆային զրույթին և աշխատած ժամերի քանակին՝ համապատասխան:

Կոնստրուկցիայի 6-րդ տարակարգի

մոնտաժող 64 կոպ. $\times 7 \times 25 = 112$ ռ. 00 կ.

Կոնստրուկցիայի 5-րդ տարակարգի

մոնտաժող 56,2 կոպ. $\times 7 \times 24 = 94$ ռ. 42 կոպ.

Կոնստրուկցիայի 4-րդ տարակարգի

մոնտաժող 48,8 կոպ. $\times 7 \times 25 = 85$ ռ 40 կոպ.

Կոնստրուկցիայի 4-րդ տարակարգի

մոնտաժող 48,8 կոպ. $\times 7 \times 24 = 81$ ռ. 98 կոպ.

է.

Ը ն դ ա մ ե ն ը 373 ռ. 80 կ.

Այնուհետև որոշվում է դումարային փաստական վաստակի հարաբերությունը ըստ դրույթների դումարային վաստակին:

449 ռ. 30 կոպ.:373 ռ. 80 կ. = 1,202:

Այս հարաբերության (գործակցի) օգնությամբ հաշվվում է յուրաքանչյուր բանվորին հասնող աշխատավարձի չափը: Դրա համար տարիֆային դրույթներով հաշվարկված աշխատավարձը բազմապատկում են ստացվող գործակցով:

Կոնստրուկցիայի 6-րդ

տարակարգի մոնտաժող 112 ռ. 00 կ. $\times 1,202 = 134$ ռ. 62 կ.

Կոնստրուկցիայի 5-րդ

տարակարգի մոնտաժող 94 ռ. 42 կ. $\times 1,202 = 113$ ռ. 49 կ.,

Կոնստրուկցիայի 4-րդ

տարակարգի մոնտաժող 85 ռ. 40 կ. $\times 1,202 = 102$ ռ. 65 կ.

Կոնստրուկցիայի 4-րդ

տարակարգի մոնտաժող 81 ռ. 98 կ. $\times 1,202 = 98$ ռ. 54 կ.

Ը ն դ ա մ ե ն ը 449 ռ. 30 կ.

Երբեմն առաջարկություններ են արվում աշխատանքի կոլեկտիվ գործարքային վարձատրման ժամանակ աշխատավարձը օղակի կամ բրիգադի բոլոր բանվորների միջև բաշխել հավասարապես՝ անկախ աշխատավորների որակավորումից և արտադրությանը նրանց մասնակցության չափից: Գործնականում նման ուղին կլինի հավասարաբույս և դիմազրկություն, նյութական շահագրգռվածության սկզբունքի թուլացում: ՍՄԿՊ Ծրագրում նշվում է աշխատանքի վարձատրման սխառեմի մշտական բարելավման անհրաժեշտու-

թյունը, թույլ չտալ հավասարաբուժ, ուժեղացնել նյութական խթանման այն կոլեկտիվ ձևերը, որոնք բարձրացնում են յուրաքանչյուր աշխատողի շահագրգռվածությունը ձեռնարկության աշխատանքների բարձր մակարդակի համար ամբողջությամբ վերցրած:

Բրիգադիորների աշխատանքի վարձատրությունը: Բանվորների բրիգադը ղեկավարելու համար աշխղեկը վարպետի ներկայացմամբ բրիգադիր է նշանակում առավել որակյալ և կազմակերպչական ընդունակություններով օժտված բանվորներից մեկին:

Բրիգադիրը չի ազատվում բրիգադում աշխատանքներ կատարելուց: Նա իր մասնագիտությամբ աշխատում է բրիգադի մյուս անդամներին համահավասար և բրիգադի ընդհանուր վաստակից աշխատավարձ է ստանում իր տարակարգին ու փաստական աշխատած ժամանակին համապատասխան: Բրիգադը ղեկավարելու համար բրիգադիրը լրացուցիչ վարձ է ստանում: Համաշինարարական և կոմսյլեքսային աշխատանքներով զբաղված ու 10 մարդուց ոչ պակաս կազմ ունեցող բրիգադներում և մասնագիտական ու մոնտաժային աշխատանքներով զբաղված և 6 մարդուց ոչ պակաս կազմ ունեցող բրիգադներում գործավարձային բանվորներից նշանակված և հիմնական աշխատանքներից շաղատված բրիգադիրներին՝ բրիգադը ղեկավարելու համար, լրացուցիչ վճարվում է բրիգադի աշխատավարձի գումարի 2 տոկոսը (առանց սարգևատրման սխտաններով լրացուցիչ վճարումների), բայց ամսեկան 40 ռուբլուց ոչ ավելի՝ ամբողջ բրիգադի կողմից միջին հաշվով ամսվա արտադրանքի նորման կատարելու պարտադիր պայմանի դեպքում:

Աշխատանքի վարձատրման ժամանակավարձային ձևը: Աշխատանքի ժամանակավարձի դեպքում աշխատավարձը հաշվվում է փաստացի աշխատած ժամանակի համար բանվորի տարակարգին համապատասխան տարիֆային դրույքով: Աշխատանքի վարձատրման այդ ձևն ուղղակի կախվածություն չի սահմանում բանվորի արտադրանքի և նրա վաստակի միջև և, հետևարար, գործավարձից ավելի քիչ է խթան

նում աշխատանքի արտադրողականության աճը: Այդ պատճառով, աշխատանքի ժամանակավարձային ձևը շինարարության մեջ կիրառվում է միայն այն աշխատանքներում, որոնք դժվարություններ են նորմավորվում է հաշվառման ենթարկվում, ինչպես ժամանակավարձային բնույթի աշխատանքներում (օրինակ, հերթապահ էլեկտրամոնտյորի կամ փակահագործի, հերթապահ հյուանի աշխատանքը՝ բետոնային աշխատանքներ կատարելիս և այլն):

Ժամանակավարձով վարձատրվող բանվորների թիվը շինարարության մեջ զբաղված բանվորների ընդհանուր թվի 10 տոկոսից չի անցնում:

Աշխատանքի վարձատրման պարզատրման ձևերը: Աշխատանքի արտադրողականության բարձրացման, շինմոնտաժային աշխատանքների որակի բարելավման, ժամկետների կրճատման և ինքնարժեքի իջեցման գործում բանվորների նյութական շահագրգռվածությունն ուժեղացնելու նպատակներով 1960 թվականին գործողության մեջ է դրվել աշխատանքի վարձատրման պարզեցացման ձևերի վերաբերյալ նոր կանոնադրությունը¹:

Աշխատանքի գործավարձային-պարզեցացման վարձատրությունը մտցվում է գործավարձով աշխատող բանվորների կողմից ակորդային առաջադրանքը սահմանված օրացուցային ժամկետին կամ ժամկետից շուտ կատարելու համար՝ նորմատիվային ժամանակի կրճատված յուրաքանչյուր տոկոսի դիմաց ակորդային կարգագրի գործարքային վաստակի 0,5-ից մինչև 1 տոկոսի չափով:

Այս սխեմաներ կիրառելիս ակորդային առաջադրումները սահմանվում են կոմպլեքսային և մասնագիտացված բրիգադների, օղակների կամ կարևորագույն օբյեկտներում և աշ-

¹ Տե՛ս «Շինարարության մեջ և շինվերանորոգման կազմակերպություններում զբաղված բանվորների աշխատանքի վարձատրման գործավարձային-պարզեցացման և ժամանակավարձային-պարզեցացման սխեմաների մասին կանոնադրությունը», որը հաստատվել է ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Աշխատանքի և աշխատավարձի պետական կոմիտեի և ՀԱՄԿԿ-ի քարտուղարության 1960 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ:

խատանքներում զբաղված առանձին բանվորների համար: Ընդ որում կարևորագույն օբյեկտների ու աշխատանքների թվարկումը և պարզևների կոնկրետ չափերը (նշված մահմաններում)՝ ոչ պակաս քան մեկ եռամսյակի համար, հաստատվում են շինմոնտաժային կամ շինվերանորոգման վարչության պետի կողմից՝ արհմիության կոմիտեի հետ համաձայնեցնելով:

Ակորդային առաջադրանքի կատարման օրացուցային ժամկետը սահմանվում է աշխղեկի կողմից, ելնելով շինարարության համապատասխան օբյեկտների աշխատանքների կատարման գրաֆիկով նախատեսված ժամկետներից և արտադրական կոնկրետ պայմաններից: Սահմանված օրացուցային ժամկետում ակորդային առաջադրանքը չկատարելու դեպքում կատարված աշխատանքների վարձատրությունը վճարվում է գործարքային գնահատումներով, իսկ պարզևատրում չի տրվում: Ակորդային առաջադրանքի ավարտման ժամկետի տեղափոխումն, անկախ աշխատանքի ձգձգման պատճառներից, չի թույլատրվում:

Ակորդային առաջադրանքը ժամկետին կամ ժամկետից շուտ կատարելու համար պարզևատրումը վճարվում է բոլոր աշխատանքները տեխնիկական պայմանների պահանջներին համապատասխան կատարվելու դեպքում: Տեխնիկական պայմաններից կատարվող առանձին շեղումները և աշխատանքների կատարման սրտցեսում թույլ տված թիրոթյունները պետք է բրիգադը (օղակը, բանվորը) վերացնի ակորդային առաջադրանքի կատարման համար սահմանված օրացուցային ժամկետի սահմաններում:

Ակորդային կարգադրով վերջնական հաշվարկը, ներառյալ առաջադրանքը ժամկետին և ժամկետից շուտ կատարելու համար պարզևատրումը, իրականացվում է տվյալ կարգադրով հանձնարարված բոլոր աշխատանքները կատարելուց հետո: Համապատասխան վճարային ժամկետներում միջակահաշվարկները կատարվում են տվյալ հաշվարկային ժամանակաշրջանում փաստորին կատարված աշխատանքների համար ըստ սահմանված գործարքային պահատումների:

Քննարկենք առաջադրանքը ժամկետին և ժամկետից շուտ կատարելու համար պարզևատրման չափը որոշելու մի օրինակ:

Մոնտաժողների 26 մարդուց բաղկացած կոմպլեքսային բրիգադին ակորդային կարգագիր է տրվել մոնտաժելու շրտահարկանի տան հավաքովի կոնստրուկցիաները՝ 1822 ուրվու արժողութայամբ, 3918 մարդ-ժամ աշխատաժամանակի ընդհանուր ծախսումով (նորմատիվային ժամանակ) ըստ միասնական նորմաների:

Աշխատանքների կատարման գրաֆիկին համապատասխան աշխուժեցնելով ակորդային առաջադրանքի կատարման ժամկետը սահմանել է փետրվարի 1-ից մինչև 23-ը, այսինքն՝ 20 աշխատանքային օր, ելնելով անցած ամսին ձեռք բերած նորմաների 10 տոկոսի գերակատարումից:

Շինարարական վարչության պետը, արհմիութայան կոմիտեի համաձայնությամբ, բրիգադի կողմից մոնտաժվող շենքը մտցրեց գործավարձային-պարզևատրական սիստեմով վճարման ենթակա կարևորագույն օբյեկտների ու աշխատանքների թվարկման մեջ և նորմատիվային ժամանակի կրճատման յուրաքանչյուր տոկոսի համար պարզևատրման չափը սահմանեց 0,8 տոկոս:

Բրիգադն ակորդային առաջադրանքը լրիվ կերպով կատարեց ժամկետից երկու օր շուտ, ամբողջ աշխատանքի վրա փաստորեն ծախսելով 3198 մարդ-ժամ: Այսպիսով, նորմատիվային ժամանակի կրճատումը կազմեց 720 մարդ-օր (3918—3198) կամ 18,4 տոկոս $\left(\frac{720}{3918}\right) \times 100$,

Հետևաբար, բրիգադին պարզևատրում է հասնում ըստ ակորդային կարգագրի գործավարձային վաստակի 14,7 տոկոսի (0,8×18,4) չափով, այսինքն՝ 267 ու 83 կ. (1822×0,147):

Կոմպլեքսային բրիգադների և վերջնական արտադրանքի բրիգադների համար շինանյութերի ծախսման պատշաճ հաշվառում կազմակերպելու դեպքում կարող է պարզևատրում մտցվել հիմնական շինանյութերի խնայողության համար՝ այդ նյութերի ծախսման սահմանված կարգով հաստատված արտադրական նորմաների համեմատությամբ, ինչպես նաև պարզևատրում՝ հավաճովի կոնստրուկցիաների ու դետալների պահպանության և հոգատար վերաբերմունքի համար:

Շինանյութերի խնայողության համար բանվորներին վճարվող պարզևատրման ընդհանուր գումարը չպետք է գերազանցի ստացված խնայողության գումարի 40 տոկոսից, իսկ հա-

վաքովի կոնստրուկցիաների և դետալների նկատմամբ խնամքով վարվելու համար, որի շնորհիվ ապահովվել է նրանց լրիվ պահպանումը, նախահաշվային գներով այդ կոնստրուկցիաների ու դետալների արժեքի 0,2 տոկոսից:

Շինանյութերի խնայողության, ինչպես նաև հավաքովի կոնստրուկցիաների ու դետալների պահպանման համար պարգևատրումները վճարվում են օբյեկտում բրիդադին հանձնարարված աշխատանքների ամբողջ կոմպլեքսը ավարտելուց հետո: Պարգևատրումների բաշխումը բրիգադի բանվորների միջև կատարվում է աշխատած ժամանակին համամասնորեն: Կատարված աշխատանքների անբավարար որակի և հավաքովի կոնստրուկցիաների ու դետալների փշայման դեպքում պարգևատրումներ չեն վճարվում:

Աշխատանքի ժամանակավարձային-պարգևատրական սիստեմը մտցվում է ժամանակավարձով աշխատող բանվորների ստացած առաջադրանքները որակով ու ժամանակին կատարելու համար, պայմանով, որ վարպետների կամ աշխղեկների սպասարկած տեղամասերը շինմոնտաժային աշխատանքների ամսեկան պլանը կատարեն ու արտադրական համապատասխան տեղամասերը նրանց անընդմեջ սպասարկեն, որ այդ բանվորների մեղքով մեքենաների ու սարքավորումների վթարներ և սլարապուրոզներ չլինեն: Պարգևատրումը վճարվում է հետևյալ շափերով.

ա) մեքենաները ղեկավարող ժամանակավարձով աշխատող բանվորներին (մեքենավարներին, մեքենավարների օգնականներին և նրանց օղակների մեջ մտնող մյուս բանվորներին)՝ տարիֆային դրույքի մինչև 25 տոկոսը.

բ) մեքենաների, էլեկտրական, ջերմային, ջրմուղ ցանցերի և սարքերի նորոգմամբ ու սպասարկմամբ զբաղված ժամանակավարձով աշխատող բանվորներին (օրինակ, հնոցապաններին, փակահազորժներին, էլեկտրամոնտաժորներին, այդ թվում հերթապահներին), ինչպես նաև ժամանակավարձով աշխատող այն առանձին բանվորներին, որոնք անմիջական ազդեցություն են գործել աշխատանքների պլանների կատարման վրա՝ տարիֆային դրույքի մինչև 20 տոկոսը:

Ժամանակավարձով աշխատող բանվորների պարզևատրումը, այն տեղամասերի ցուցակը, որտեղ մտցվում է այդ պարզևատրումը, ինչպես նաև պարզևատրումների կոնկրետ շափերը՝ նայած աշխատանքների բարդության և մեքենաների ծանրաբեռնվածության աստիճանի, սահմանվում են շինմոնտաժային կամ շինվերանորոգման վարչության պետի կողմից՝ արհմիության կոմիտեի համաձայնությամբ:

Աշխատանքների յուրաքանչյուր տեղամաս, ուր մտցվում է ժամանակավարձով աշխատող բանվորների պարզևատրումը, պետք է ապահովված լինի պարզևատրման ցուցանիշների կատարման հաշվառումը: Ժամանակավարձով աշխատող բանվորների պարզևատրումները հաշվելու համար շինմոնտաժային աշխատանքների պլանի կատարումը որոշվում է սահմանված որակով կատարված աշխատանքների ծավալով:

Ժամանակավարձով աշխատող բանվորների պարզևատրումները հաստատում է շինմոնտաժային կամ շինվերանորոգման վարչության պետը՝ այն մեխանիկի կամ վարպետի ներկայացմամբ, որի ենթակայության տակ են այդ բանվորները, և այն աշխղեկի ներկայացմամբ, որի տեղամասում օգտագործվել են մեքենաները և սարքավորումները կամ համապատասխան աշխատանքներ են կատարվել: Պարզևատրումները հաշվարկվում են աշխատանքների ամսեկան արդյունքների հիման վրա՝ փաստորեն աշխատած ժամանակի համար և վճարվում անցած վճարային ամսվա աշխատավարձի հետ:

Գործավարձով և ժամանակավարձով աշխատող բանվորները պարզևատրվում են նույնպես շինարարության օբյեկտներն ու արտադրական կառուցությունները ժամկետին և ժամկետից շուտ գործարկելու համար: Այդ պարզևատրման նպատակով հատկացվում է օբյեկտները գործարկելու համար տվյալ կազմակերպությանը հասանելիք պարզևատրման ընդհանուր գումարի 30—40 տոկոսը:

Բանվորներին տրվող այդ պարզևատրումների կոնկրետ շափերը հաստատում է շինմոնտաժային վարչության պետը՝ արհմիության կոմիտեի համաձայնությամբ, ելնելով շահա-

գործման հանձնված օբյեկտի աշխատանքների պլանի կատարման վրա բանվորների առանձին խմբերի ու մասնագիտությունների ազդեցության աստիճանից:

Գործավարձային-պարգևատրական և ժամանակավարձային-պարգևատրական սիստեմով պարգևատրումները բանվորներին վճարվում են աշխատավարձի ֆոնդից, իսկ շինարարության օբյեկտները գործարկելու համար՝ աշխատավարձի ֆոնդից դուրս:

Կազմակերպության պետին իրավունք է տրված արտադրական թերադումների համար առանձին բանվորների լրիվ կերպով զրկելու պարգևատրումներից կամ կրճատելու դրանց չափերը: Գործալքություն կատարած անձինք լրիվ կամ մասնակի չափով զրկվում են պարգևատրումից: Առանձին բանվորների պարգևատրումից զրկելը կամ նրա չափերի կրճատումը հրամանով հայտարարվում է կազմակերպությանը, նշելով պատճառները:

Ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների աշխատանքի վարձատրությունը: Շինարարական կազմակերպությունների ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների աշխատանքի վարձատրությունը կատարվում է ամսական պաշտոնական դրույքներով:

Մինչև վերջին ժամանակներս շինարարությունում ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների աշխատանքի վարձատրման միասնական սիստեմ չի եղել և նրանց պաշտոնական դրույքները զգալի չափով փոփոխվել են, նույնիսկ շինարարական կազմակերպությունների գերատեսչական պատկանելությանը: 1960 թվականին անցկացրած աշխատավարձի կարգավորումը շինարարության մեջ վերացրեց ղեկավար և ինժեներա-տեխնիկական աշխատողների ու ծառայողների աշխատանքի վարձատրման տարընթացությունները, մտցված է նրանց աշխատանքի միասնական սիստեմ՝ անկախ կազմակերպության դերատեսչական և նիթակայությունից:

Ղեկավար աշխատողների՝ տրեստների կառավարիչների ու ղլխավոր ինժեներների, վարչությունների պետերի ու գըլ-

խավոր ինժեներների, գլխավոր մասնագետների, բաժինների ու սեկտորների պետերի, ինչպես նաև նրանց տեղակալների, պաշտոնեական գրույքները ստորաբաժանված են չորս խմբի՝ ելնելով շինմոնտաժային և շինվերանորոգման կազմակերպությունների կատարած աշխատանքների ծավալից:

Շինարարական կազմակերպությունների կառավարման ապարատի մնացած ինժեներա-տեխնիկական աշխատողների ու ծառայողների գրույքները կախված չեն այն բանից, թե կազմակերպությունը որ խմբին է դասված: Այդ աշխատողների համար պաշտոնեական գրույքների կոնկրետ չափերը սահմանվում են բոլոր կազմակերպությունների համար պաշտոնեական գրույքների միասնական սխեմայի սահմաններում, հաշվի առնելով նրանց փորձը, աշխատանքային ստաժը, կատարած աշխատանքների ծավալն ու բարդությունը: Այդ նույն սկզբունքով պաշտոնեական գրույքներ են սահմանվում նաև գծային աշխատողների՝ ավագ աշխղեկների, աշխղեկների, վարպետների համար:

Ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների, ինչպես նաև բանվորների, աշխատավարձի հաշվարկման ժամանակ կիրառվում է շրջանային գործակիցների սիստեմը:

Պաշտոնեական գրույքների սիստեմի հետ մեկտեղ շինարարություն մեջ կիրառվում է ղեկավար, ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների պարզևպտրման միասնական սիստեմ՝ օբյեկտները և արտադրական կարողությունները ժամկետին և ժամկետից շուտ շահագործման հանձնելու համար: Պարզևները վճարվում են շահագործման հանձնված օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքները և շինմոնտաժային աշխատանքների որակի նկատմամբ ներկայացվող պահանջները պահպանելու դեպքում: Պարզևները կարող են հատկացվել շահագործման հանձնված օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքի 2 տոկոսի չափով: Օբյեկտները ժամկետից շուտ շահագործման հանձնելու դեպքում պարզևներն ավելացվում են 10—20 տոկոսով:

Պարզևները վճարվում են մինչև երկու ամսվա պաշտո-

նեական դրույքի չափով, իսկ լսույթով կարևոր օբյեկտները, ինչպես նաև այն օբյեկտները, որոնց շինարարությունը տեղականությունը գերազանցում է երկու տարուց, շահագործման հանձնելու համար՝ երեք ամսվա աշխատավարձի չափով:

Ավելի քան վեց ամիս շինարարության ժամկետ ունեցող օբյեկտների գծով պարզենքը վճարվում են շինմոնտաժային աշխատանքի եռամսյակային պլանների կատարման համար: Ընդ որում տեղամասերի ինժեներատեխնիկական աշխատողները, վարպետները և աշխղեկները պարգևատրվում են աշխատանքի արտադրողականության պլանը (առաջադրանքը) կատարելու դեպքում. տրեստների, վարչությունների և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող մյուս ստորաբաժանումների աշխատողները պարգևատրվում են շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքները կատարելու պայմանով:

Օբյեկտները և արտադրական կարողությունները ժամկետին և ժամկետից շուտ շահագործման հանձնելու և շինմոնտաժային աշխատանքների եռամսյակային պլանները կատարելու համար պարգևների ընդհանուր չափը չպետք է գերազանցի: յուրաքանչյուր աշխատողի համար տարեկան 4,8 ամսվա պաշտոնական ռոճիկից, իսկ խիստ կարևոր օբյեկտներում և այն օբյեկտներում, որոնց շինարարության տեղականությունը երկու տարուց ավելի է՝ մեկ տարում 6 դրույքից:

Պարգևատրման ընդհանուր գումարի 95 տոկոսից ոչ պակասը վճարվում է շինարարությանը մասնակցած շինմոնտաժային կազմակերպություններին, մինչև 2,5 տոկոսը՝ պատվիրատուին և մինչև 2,5 տոկոսը՝ նախագծային կազմակերպություններին:

1960 թվականի հոկտեմբերի 1-ից մտցված է արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և կապի ձեռնարկությունների, ինչպես նաև երկրաբանական-հետախուզական, դիտա-հետազոտական, նախագծային և կոնստրուկտորական կազմակերպությունների աշխատողների պագեվատում՝ նուր տեխնիկայի գծով աշխատանքներ կատարե-

լու համար՝ հաշվի առնելով դրանց տնտեսական արդյունավետությունը¹: Նոր տեխնիկա ստեղծելու և արմատավորելու համար պարզևատրումները վճարվում են աշխատավարձի արտապլանային ֆոնդից՝ այլ ցուցանիշների պլանի կատարումից անկախ:

Հավելումներ շինարարության մեջ աշխատանքների շարժուն բնույթի համար: Հաճախակի տեղափոխությունների, աշխատանքների մեծ տարածականության և մշտական բնակավայրից կտրված լինելու հետ կապված մեծ ծախսերը փոխհատուցելու նպատակներով աշխատանքների շարժուն բնույթ ունեցող շինմոնտաժային կազմակերպությունների բանվորներին ու ծառայողներին վճարվում է հատուկ հավելում²:

Այդ հավելումը վճարվում է այն աշխատողներին, որոնք անմիջականորեն զբաղված են երկաթուղիների, մագիստրալային խողովակադժերի, միութենական, ռեսպուբլիկական և մարզային նշանակություն ունեցող ավտոմոբիլային ճանապարհների, կապի մագիստրալային գծերի, ռադիոռելեային գծերի, էլեկտրահաղորդման օդային գծերի, մագիստրալային և բաշխիչ ջրանցքների շինարարությանը և կապիտալ նորոգումներով:

Սահմանված դրույքներով վարձատրվող աշխատողների հավելումը տոկոսներով հավելագրվում է պաշտոնեական դրույքին, իսկ տարիֆային դրույքներով վարձատրվող բանվորներին՝ տոկոսներով հավելագրվում է շնորհված տարակարգի տարիֆային դրույքին հետևյալ չափերով (առանց շրջանային գործակցի հաշվառման)՝ Մայրագույն Հյուսիսի շրջաններում և այդ շրջաններին հավասարեցված վայրերում՝ 40 տոկոս, մնացած շրջաններում՝ 30 տոկոս: Ընդ որում հավելումի ընդհանուր չափը մեկ օրում չպետք է անցնի 2,6 ռուբլուց:

Շարժուն բնույթի աշխատանքների հավելումից հարկեր չեն գանձվում և միջին աշխատավարձը հաշվելիս նկատի չեն առնվում:

¹ Տե՛ս ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1960 թվականի հունիսի 23-ի որոշումը «Նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ստեղծման ու արմատավորման և արտադրության կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման գործում ձեռնարկությունների տնտեսական խթանման և աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացման մասին»:

² Տե՛ս «Շինարարության մեջ աշխատանքների շարժուն բնույթի հետ կապված ծախսերի փոխհատուցման վերաբերյալ կանոնադրությունը», հաստատված ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Աշխատանքի ու աշխատավարձի պետական կոմիտեի և ՀԱՄԿԽ-ի քարտուղարության 1960 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ:

Այդ հավելումների վճարումը կազմակերպելու ծախսերը կատարված աշխատանքների ծավալի մեջ չեն մտցվում և պատվիրատուի կողմից կապալառուին են փոխհատուցվում՝ նախահաշվում նախատեսված հատուկ հատկացումների հաշվին:

6. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Աշխատավարձի պլանային ֆոնդը: Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է աշխատանքի շափի և սպառման շափի նկատմամբ հասարակութային կողմից խստագույն վերահսկողութային անհրաժեշտությունը: Առանձին շինմոնտաժային վարչության, տեղամասի կամ օժանդակ արտադրության համար այդ պահանջը նշանակում է աշխատավարձի ծախսվող ֆոնդի շափակցումը նրանց արտադրական գործունեության ընդհանուր հանրագումարների հետ: Ուստի խիստ անհրաժեշտ է աշխատավարձի ֆոնդը պլանավորել շինմոնտաժային աշխատանքների ծավալների պլանավորման հետ անխզելիորեն կապված և ապահովել գործուն վերահսկողություն այդ ֆոնդի ծախսման նկատմամբ: Աշխատավարձի ֆոնդը պլանավորելիս պետք է ապահովված լինի աշխատանքի արտադրողականության առաջ անցնող աճը միջին աշխատավարձի աճման նկատմամբ և դրա հիման վրա արտադրանքի միավորին ընկնող աշխատավարձի ծախսերի նվազումը:

Շինմոնտաժային վարչություններում աշխատավարձի պլանավորման համար ելակետային տվյալներ են, մի կողմից, վերագաս կազմակերպության սահմանած ֆոնդը և բանվորների ու ծառայողների պլանային միջին աշխատավարձը և, մյուս կողմից, վարչությունների կողմից մշակվող աշխատանքի արտադրողականություն և աշխատողների թվի պլանները:

Շինմոնտաժային վարչության կամ տեղամասի աշխատավարձի պլանային ֆոնդը՝ դա դրամական միջոցների այն գումարն է, որ պլանով սահմանվել է աշխատողների վարձատրության համար և անհրաժեշտ է համապատասխան ժամանակաշրջանում (ամիս, եռամսյակ, տարի) արտադրական ա-

ուաջադրանքը կատարելու համար: Շինվարչության կամ շին-տեղամասի աշխատավարձի պլանային ֆոնդը որոշվում է ա-ռաջիկայում վճարման ենթակա գումարների հաշվարկման միջոցով՝ շինմոնտաժային աշխատանքների ծավալի և աշ-խատանքի արտադրողականության աճման առաջադրանքնե-րը հարյուր տոկոսով կատարելու դեպքում:

Աշխատավարձի ֆոնդը և միջին աշխատավարձը որոշ-վում է աշխատողների յուրաքանչյուր խմբի համար առանձին-առանձին (բանվորներ, ինժեներա-տեխնիկական աշխատող-ներ, ծառայողներ, կրտսեր սպասարկող անձնակազմ): Պլա-նում իր տեսակարար կշռով վճռական տեղ է գրավում բան-վորների աշխատավարձի ֆոնդը:

Աշխատավարձի ֆոնդի որոշումը: Բանվորների աշխատա-վարձի ֆոնդի մեջ իր մեծությամբ կարևոր մասն է կազմում շինմոնտաժային հիմնական աշխատանքները կատարելու հա-մար տրվող աշխատավարձի ֆոնդը: Աշխատավարձի պլանա-յին ֆոնդի այդ մասը որոշվում է աշխատանքների առանձին տեսակների և կոնստրուկտիվ տարրերի ուղղակի հաշվար-կով, ելնելով աշխատանքների պլանային ծավալներից և հա-մապատասխան խոշորացված զնահատումներից: Նման հաշ-վարկման օրինակը բերված է ստորև (տե՛ս էջ 489):

խոշորացված զնահատումների, այսինքն՝ աշխատանքների առանձին տեսակների և կոնստրուկտիվ տարրերի շափման միավորի վրա աշխա-տավարձի ծախսերի, որոշման հիմքում ընդունում են շինարարական վար-չության ունեցած ակորդային կարգագրերի համար աշխատավարձի կալ-կուլյացիաները, նրանց մեջ մտցնելով անհրաժեշտ ուղղումներ շինարարա-կան արտադրության կազմակերպման ու տեխնոլոգիայի նախատեսվող բա-րելավման կապակցությամբ:

Շինմոնտաժային հիմնական աշխատանքների աշխատավարձի ֆոնդի հաշվարկը հեշտանում է շինարարական այն կազմակերպություններում, ո-րոնք ունեն արտադրության կոնկրետ պայմաններում կիրառելու համար մշակված խոշորացված պլանային նորմաների ու զնահատումների ժողո-վածունքը:

Աշխատավարձի պլանային ֆոնդի մեջ մտցվում են մի-այն այն ծախսումները, որոնք անհրաժեշտ են շինարարու-

Շինվարչության աշխատավարձի տարեկան ֆոնդի պլան-հաշվարկը

Աշխատանքների տեսակների կոնստրուկտիվ տարրերի և ծախսումների անվանումը	Չափման միավորը	Աշխատանքների տարեկան ծավալը ըստ պլանի	Աշխատավարձ	
			միավորին (նուրբ-ին.)	ընդամենը (հազ. ուրբ.)
1	2	3	4	5
Ա. Շինմոնտաժային աշխատանքներ				
Հողային աշխատանքներ	խոր մ	2790	0,29	0,8
Շարվածք աղյուսից	»	21760	3,43	74,6
Պատերի պանելների և բլոկների մոնտաժում		13870	2,11	29,3
Հավաքովի երկաթբետոնե և բետոնե կոնստրուկցիաների մոնտաժում	»	25180	2,82	71,0
Պատուհաններ	քառ մ	11700	1,78	20,8
Դռներ	»	19770	0,63	12,5
Հավաքովի միջնորմային պանելներ		129500	0,53	68,6
Փայտյա ֆերմաներ և ծպեղներ	խոր մ	246	8,5	2,1
Փայտյա հատակներ	քառ մ	2580	0,62	1,6
Տանիքներ	»	12630	0,14	1,8
Այլ աշխատանքներ	հազ. ուրբ.	311,8	—	78,0
Ը ն դ ա մ ե ն ը հիմնական աշխատավարձ		—	—	361,1
Լրացուցիչ վճարումներ, որոնք մտնում են հիմնական աշխատավարձի ֆոնդի կազմի մեջ (գիշերային աշխատանքի, հանդստյան օրերի հերթապահության համար և այլն) 4,2 տոկոսի չափով	—	—	—	15,2
Ը ն դ ա մ ե ն ը լրացուցիչ վճարումներով	—	—	—	376,3

1	2	3	4	5
Ոչ-հիմնական շինմոնտաժային աշխատանքների շահով	—	—	—	99,7
Ը ն դ ա մ ե ն ը շինմոնտաժային աշխատանքների գծով	—	—	—	476
Բ. Օժանդակ արտադրություններ				
Մանր շինարարական մեքենաների շահագործման և նորոգման աշխղեկային տեղամաս		—	—	22
Կենտրոնական մեքենայացված շաղախային հանգույց		—	—	13,7
Ը ն դ ա մ ե ն ը օժանդակ արտադրությունների գծով	—		—	35,7
Ամբողջ շինմոնտաժային աշխատանքների և օժանդակ արտադրությունների գծով	—	—	—	511,7
Լրացուցիչ աշխատավարձը՝ հիմնականի 8,1 տոկոսի շահով	—	—	—	41,4
Աշխատավարձի ընդհանուր ֆոնդը	—	—	—	553,1

կան կազմակերպությունների նորմալ աշխատանքի ժամանակ: Արտադրության և աշխատանքի կազմակերպման թերությունների հետևանքով առաջացած բոլոր տեսակի ծախսերը, լրացուցիչ վճարումները աշխատանքի նորմալ պայմաններից նահանջելու, պարասպորտների, խոտանների շտկման համար և այլն հաշվի են առնվում հաշվետվության մեջ, բայց չեն մտցվում աշխատավարձի պլանային ֆոնդի մեջ:

Ինժեներա-տեխնիկական աշխատողների, ծառայողների և սպասարկող կրտսեր անձնակազմի աշխատավարձի ֆոնդի հաշվարկը կատարվում է հաստիքային կարգացուցակի և պաշտոնեական դրույքների հիման վրա: Այդ կատեգորիայի

աշխատողների աշխատավարձի պլանային ֆոնդի կազմի մեջ մտնում են՝ պլանային ժամանակում կատարած աշխատանքի դրույթների վճարումը (հաշվի առնելով սահմանված հավելումները), արձակուրդների և պետական պարտականությունների կատարման վճարումները, ինչպես նաև այն պարգևատրումները, որոնք գերծող կանոնադրությամբ աշխատողներին հասնում են՝ պլանը հարյուր տոկոսով կատարելու դեպքում:

Շինարարական կազմակերպության բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների աշխատավարձի ֆոնդի հետ մեկտեղ, անհրաժեշտ դեպքերում պլանավորվում է նաև աշխատողների արտացոլցակային (արտահաստիֆային) կազմի աշխատավարձի ֆոնդը, որը վճարվում է այն անձանց, որոնք շինարարական կազմակերպության ցուցակային կազմում չկան:

Աշխատավարձի ֆոնդը սահմանելուց հետո աշխատողների յուրաքանչյուր կատեգորիայի համար որոշվում է պլանային ժամանակաշրջանի միջին աշխատավարձը:

Այսպես, մեկ բանվորի միջին տարեկան աշխատավարձ ստացվում է բանվորների աշխատավարձի տարեկան ֆոնդը բանվորների միջին ցուցակային թվի վրա բաժանելու միջոցով: Օրինակ, օգտվելով 413 և 490 լջերում բերված պլանային հաշվարկների հանրադումարային տվյալներից, ստանում ենք, որ շինվարչության մեկ բանվորի տարեկան միջին աշխատավարձը կազմում է 1,2 հազ. ոտր. (553,1 հազ. ոտր.:466):

Շինարարական կազմակերպությունների աշխատավարձի փաստացի ֆոնդի մեջ մտնում են աշխատավարձի այն բուլոր գումարները, որոնք բանվորներին են տրվել հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքների համար:

Փաստացի ֆոնդի մեջ մտնում են հետևյալ վճարումները. աշխատավարձը հաշված՝ ըստ տարիֆային դրույթների, ոռճիկների, միջին վաստակի և գործարքայի՝ դնահատումների. պարգևատրումները, որոնք վճար-

վում են կառուցում մշտական գործող պարզևատրման սիստեմին համապատասխան. արտաժամյա, գիշերային և տոն օրերի աշխատանքի համար լրացուցիչ վճարումները, աշակերտներին սովորեցնելու և պրակտիկանտներին ղեկավարելու համար վարձատրումները, բրիգադների լրացուցիչ վարձատրումները՝ բրիգադը ղեկավարելու համար, ոչ բանվորների մեղքով կատարված պարապուրդների և խոտանի վճարումները, հավելումները աշխատավարձի վրա՝ հեռավոր վայրերում կամ Ծայրագույն Հյուսիսի շրջաններում աշխատելու համար, պետական և հասարակական պարտականությունները կատարելու վրա ծախսած աշխատաժամանակի վճարումները, արձակուրդների համար վճարումները և շօգուագործած արձակուրդների համար փոխհատուցումները և այլն:

Աշխատավարձի հաշվարկային ֆոնդի կազմում չեն մտցրվում, շինմոնտաժային կազմակերպության պետի ֆոնդերից տրվող պարզևատրումները, ինչպես նաև փոխադրավարձերն ու գործուղումների ժամանակ տրվող օրապահիկները և բանվորներին ու ծառայողներին տրվող դրամական՝ այլ վճարումները, որոնք աշխատանքի վարձատրության հետ անմիջականորեն չեն կապվում:

Շինարարության մեջ զբաղված աշխատողների աշխատավարձի ֆոնդը պետական պլանի ցուցանիշներից մեկն է: Ամբողջ ժողովրդական տնտեսության մասշտաբով աշխատավարձի ֆոնդերը անխղելիորեն կապված են ապրանքաշրջանառության պլանի, դրամարկղային պլանի և դրամաշրջանառության պլանի հետ: Ուստի անհրաժեշտ է խստորեն ապահովել աշխատավարձի ֆոնդերի ճիշտ օգտագործումը շինարարական յուրաքանչյուր կազմակերպության մեջ:

Սակայն կառուցյաներում դեռևս գոյություն ունեն տարիֆային կարգապահության խախտումներ, թույլ է տրվում աշխատավարձի ֆոնդերի գերաժախս: Տարիֆային կարգապահության խախտումները և աշխատավարձի ֆոնդերի գերաժախսերը արգելակում են ժողովրդական տնտեսության հետագա վերելքը և աշխատավորների ուսուցումը աշխատավարձի բարձրացումը:

Այդ կապակցությամբ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում աշխատավարձի ֆոնդերն արտադրական ծրա-

գրի փաստական կատարմանը համապատասխան ծախսելու նկատմամբ սիստեմատիկ և գործուն վերահսկողության ապահովումը՝ ինչպես կառույցների աշխատողների ու հասարակական կազմակերպությունների, այնպես էլ ժողտնտիսորհների, մինիստրությունների, գերատեսչությունների և շինարարությունը ֆինանսավորող բանկերի կողմից:

**ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԸ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

**1. ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԸ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-
ԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՑՈՒՑԱՆԻՇՆ Է**

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իրենից ներկայացնում է այդ աշխատանքները կատարելու համար շինարարական կազմակերպության ծախսումները՝ դրամական արտահայտությամբ: Այն ցույց է տալիս, թե շինարարական կազմակերպության վրա ինչ են նստում կատարված աշխատանքները:

Ինքնարժեքի մեջ մտցվում են շինարարական արտադրանքի վրա փոխադրված անցյալ աշխատանքի ծախսումները (հիմնական ֆոնդերի ամորտիզացիա, նյութերի, կոնստրուկցիաների և այլ նյութական ռեսուրսների արժեքները) և շինարարության աշխատողների նոր ծախսած աշխատանքի վճարման ծախքերը (աշխատավարձը):

Արտադրանքի ինքնարժեքի անշեղ իջեցումը սոցիալիստական էկոնոմիկայի օրինաչափությունն է: ՍՄԿՊ Մրազրում ասվում է խստագույն տնտեսման և խնայողության, կորուստների կրճատման, արտադրության ինքնարժեքի իջեցման և շահութաբերության բարձրացման հասնելու անհրաժեշտության մասին:

Կապիտալ ներդրումների վիթխարի ու հարածուն ծավալների դեպքում շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումը գնալով ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում ժողովրդական տնտեսության համար: ՍՍՌՍ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերով նախատեսված է յոթնամյակի ընթացքում շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնել ոչ պակաս, քան 6 տոկոսով: Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումից ստացված տնտեսումը յոթնամյակում պետք է կազմի մոտ 4 մլրդ. ռուբլի:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն արտահայտվում է այս կամ այն ժամանակաշրջանում (ամիս, եռամսյակ, տարի) կատարված աշխատանքների ամբողջ կոմպլեքսի կամ արտադրանքի միավորին ընկնող դրամական ծախսումների գումարով:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի մակարդակը կախված է շինարարական կազմակերպության արտադրական, տնտեսական և ֆինանսական գործունեության բոլոր կողմերի վիճակից: Արտադրության պրոցեսում որքան լավ են օգտագործվում տեխնիկան, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները, որքան ավելի կատարելագործված են արտադրատնտեսական գործունեության բոլոր տեղամասերի ղեկավարման մեթոդները, այնքան ավելի մեծ շահով կարող է իջեցվել արտադրանքի ինքնարժեքը: Այսպիսով, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը հանդիսանում է յուրաքանչյուր կոլեկտիվի, շինարարական կազմակերպության բոլոր ստորարժանումների աշխատանքների որակի կարևորագույն ընդհանրացնող տնտեսական ցուցանիշը:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն ընդունված է համեմատել նրանց նախանաշվային արժեքի հետ, որն իրենից ներկայացնում է շինարարական կազմակերպությունների արտադրանքի արժեքը:

Շինարարության, ինչպես և արդյունարհերության մեջ, որոշ բացառություններով, գործում է միասնական գների

սկզբունքը: Վերջինս դրսևորվում է այն բանում, որ այս կամ այն ժողտնտխսրհի, մինիստրոթյան, գերատեսչոթյան կամ ժողոթրդական տնտեսոթյան ճյուղի բոլոր շինարարական կաղմակերպոթյունների համար շինմոնտաթային աշխատանքների նախահաշվային արթեթի որոշման հիմքում ընդունվում են նախահաշվային միասնական նորմաները, շրջանային միասնական միավոր գնահատումները, գնացուցակները, վերադիր ծախսերի և պլանային կուտակումների միասնական նորմաները:

Միասնական գների և նորմաների սկզբունքը կարևոր միջոց է ետ մնացող շինարարական կաղմակերպոթյունները մինչև առաջավորների մակարդակը հասցնելու և այդ հիման վրա ամբողջ ժողոթրդական տնտեսոթյան շինմոնտաթային աշխատանքների ինքնարթեթը՝ սիստեմատիկորեն իջեցնելու համար:

Նախահաշվային արթեթում նախատեսվում են ինչպես շինմոնտաթային աշխատանքների վրա շինարարական կաղմակերպոթյան կատարած ծախսումների փոխհատուցումը (այդ աշխատանքների նախահաշվային ինքնարթեթը), այնպես էլ պլանային կուտակումները: Շինմոնտաթային աշխատանքների նախահաշվային ինքնարթեթը բոլոր դեպքերում նախահաշվային արթեթից փոթր է պլանային կուտակումների մեծոթյան շափով:

Շինմոնտաթային աշխատանքների պլանային ինֆլատիոն դրանց նախահաշվային ինքնարթեթից փոթր է ինքնարթեթի իջեցման սահմանված առաջադրանքի մեծոթյան շափով: Առաջադրանքներում հաշվի են առնվում արտադրոթյան պրոցեսում աշխատանքի մեկ միավորի վրա կատարված աշխատանքի, նյութական և դրամական ռեսուրսների ծախսումների իջեցման հնարավորոթյունները, ինչպես նաև գների ու տարիքների կատարված իջեցումը՝ նախահաշվայինում նախատեսված ծախսումների շափերի համեմատոթյամբ:

Ընդունենք, որ շինարարական կազմակերպության կողմից պլանային տարում նախատեսված շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 2000 հազար ռուբլի:

Պլանային կուտակումները նախատեսված են շինմոնտաժային աշխատանքների ուղղակի ծախսումների և վերադիր ծախսերի նախահաշվային գումարի 2,5 տոկոսի, կամ նախահաշվային լրիվ արժեքի 2,44 տոկոսի շահիով: Պլանային կուտակումների բացարձակ գումարը քննարկվող օրինակում կկազմի 48,8 հազ. ռուբլի:

$$(2000 \text{ հազ. ռուբ.} \times \frac{2,44}{100});$$

Նշված աշխատանքների նախահաշվային արժեքը պլանային կուտակումների հանումով կկազմի՝ 1951,2 հազ. ռուբ. (2000 հազ.—48,8 հազ.):

Այնուհետև ընդունենք, որ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքը սովյալ կազմակերպությունում պլանային ժամանակաշրջանի համար սահմանված է այդ աշխատանքների նախահաշվային արժեքի 6 տոկոսի շահիով: Այդ իջեցման գումարը կկազմի 120 հազ.

ռուբ. $(2000 \text{ հազ. ռուբ.} \times \frac{6}{100})$, իսկ աշխատանքների պլանային ինք-

նարժեքը՝ 1831,2 հազ. ռուբ. (2000 հազ. ռուբ.— 48,8 հազ. ռուբ.— 120 հազ. ռուբ.):

Եթե շինարարական կազմակերպությունը հաջողությամբ կատարում է իր համար սահմանված ինքնարժեքի իջեցման առաջադրանքը, ապա կատարված աշխատանքների փաստացի ծախսումները պլանայինից ցածր կլինեն:

Վերջին տարիներս, առանձնապես արդյունաբերության ու շինարարության կառավարումը վերակառուցելուց հետո, բոլոր հաջողություններ են ձեռք բերվել շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման ասպարեզում:

Շինմոնտաժային աշխատանքների փաստացի ինքնարժեքի իջեցումը կատարված աշխատանքների նախահաշվային ինքնարժեքի համեմատությամբ, վերջին տարիներին ժողովրդական տնտեսության մասշտաբով, բնութագրվում է հետևյալ սովյալներով.

Տարիներ	Փաստացի ինքնարժեքը՝ տոկոսներով նախահաշվային արժեքի նկատմամբ
1956	95,4
1957	94,5
1958	93,6
1959	93,9
1960	93,3

Ինքնարժեքի իջեցման առաջադրանքները հաջողությամբ կատարող շինարարական կազմակերպությունների կողքին կան շատ թվով նաև այնպիսիները, որոնք շեն կատարում այդ առաջադրանքները, թույլ են տալիս թանկացում և վնասներ:

Տնտեսական դեկավարների, պարտիական և արհմիութենական կազմակերպությունների կարևորագույն խնդիրն է՝ ապահովել շինարարական յուրաքանչյուր կազմակերպության ինքնարժեքի իջեցման հաստատված առաջադրանքների կատարումն ու գերակատարումը:

2. ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Որպեսզի հաջողությամբ պայքարենք շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման համար, անհրաժեշտ է գիտենալ նրա կառուցվածքը, այսինքն՝ ծախսումների տեսակները և նրանց միջև եղած հարաբերությունը:

Շինարարական կազմակերպությունների ծախսերն իրենցից ներկայացնում են կենդանի և առարկայացած աշխատանքի տարբեր տեսակի ծախսումներ՝ դրամական ձևով արտահայտված:

Կենդանի աշխատանքի ծախսումներն արտահայտվում են շինարարության աշխատողներին վճարվող հիմնական և լրացուցիչ աշխատավարձի ծախսերում, սոցիալական ապահովագրության հատկացումներում:

Առարկայացած աշխատանքի ծախսումները հանդես են գալիս երկու ձևով.

առաջին՝ արտադրութեան պրոցեսում ծախսված աշխատանքի առարկաների (շինանյութերի, դետալների, կոնստրուկցիաների, կիսաֆաբրիկատների վառելիքի և էներգիայի) ձևով,

երկրորդ՝ աշխատանքի միջոցների (շինարարական մեքենաներ, տրանսպորտային միջոցներ, գույք, գործիքներ և այլն) ամորտիզացիայի (մաշվածքի) ձևով:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքին վերագրվող ծախսումները բաժանվում են ուղղակի և վերադիր ծախսերի: Ուղղակի ծախսերը հաշվվում են ուղղակի, այսինքն՝ տարբեր տեսակի աշխատանքների ֆիզիկական ծավալի միավորի համար, իսկ վերադիր ծախսերը՝ ըստ սահմանված նորմայի, տոկոսներով՝ ուղղակի ծախսերի նախահաշվային արժեքի կամ բանվորների հիմնական աշխատավարձի նկատմամբ:

Ուղղակի ծախսումներ: Ուղղակի ծախսումների մեջ մտնում են բանվորների հիմնական աշխատավարձը, նյութերի ծախսը, շինարարական մեքենաների ու մեխանիզմների շահագործման և շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերը:

Հիմնական աշխատավարձին եւ վերաբերում շինմոնտաժային աշխատանքների անմիջական կատարմամբ զբաղված բանվորների աշխատանքի վարձատրման¹, ինչպիս նաև նյութերն ու կոնստրուկցիաները մերձօբյեկտային պահեստներից մինչև դրանց տեղադրման (մոնտաժման) վայրը հասցնելու ծախսերը:

Շինարարական և մոնտաժային աշխատանքների կատարման համար պահանջող նյութերի ծախսումների (ներառյալ

¹ Առանց օժանդակ արտադրություններում սպասարկող տնտեսություններում, մեքենաների ու մեխանիզմների շահագործմամբ, վերադիր ծախսերի հաշվին կատարվող աշխատանքներում զբաղված բանվորների աշխատավարձի, Այդ բանվորների աշխատավարձը մտնում է համապատասխան նյութերի արժեքի, մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսումների և վերադիր ծախսերի մեջ:

շինարարական կոնստրուկցիաներն ու դետալները) մեջ են մտնում դրանց արժեքների վճարման ծախսերը, ինչպես նաև տարայի, փաթեթման, փոխադրման (մինչև մերձօբյեկտային պահեստ), բեռնման-բեռնաթափման և հայթայթման—պահեստային ծախսերը (հայթայթման ապարատի, պահեստների ու պահեստարանների պահպանում և այլն): Բացի դրանից ծախսերի այդ խմբի մեջ մտնում էին շինմոնտաժային աշխատանքների կատարման համար պահանջվող վառելիքի, էլեկտրաէներգիայի, գոլորշու և ջրի արժեքը:

Մեքենաների և մեխանիզմների շահագործման հետ կապված ծախսումների մեջ հաշվի են առնվում մեքենաները շինարարական հրապարակ հասցնելու, մոնտաժի և դեմոնտաժի ծախսերը, ամորտիզացիոն հատկացումները, ընթացիկ վերանորոգումների ծախսերը, էլեկտրաէներգիայի, վառելիքի, քսելու և մաքրելու նյութերի ծախսումները՝ կապված դրանց շահագործման հետ, ինչպես նաև մեքենաներն ու մեխանիզմները ղեկավարող բանվորների աշխատավարձի ծախսերը:

Այլ ուղղակի ծախսումների կազմի մեջ են մտնում նյութերը, դետալները և կոնստրուկցիաները մերձօբյեկտային պահեստներից մինչև դրանց տեղադրման (մոնտաժման) վայրը փոխադրելու, ինչպես նաև հողի տեղափոխման հետ կապված ծախսերը:

Շինմոնտաժային աշխատանքների կատարման մնացած բոլոր ծախսերը վերաբերում են վերադիր ծախսերին:

Վերադիր ծախսեր: Այս ծախսերը սովորաբար ստորաբաժանվում են հետևյալ խմբերի՝ 1) շինարարութային կառավարումը կազմակերպելու և շինմոնտաժային աշխատանքներ կատարելու ժամանակ տեխնիկական ղեկավարութային իրականացնելու հետ կապված ծախսերը. 2) շինարարութային աշխատողների կենցաղը սպասարկելու, սոցիալ-կուլտուրական կարիքները և աշխատանքների կատարման անվտանգությունն ապահովելու ծախսեր. 3) շինարարական հրապարակներ կազմակերպելու և շինմոնտաժային աշխատանքների

կատարումը սպասարկելու ծախսեր, 4) շինարարությունն իրականացնելու հետ կապված այլ ծախսեր: «

Շինարարության կառավարումը կազմակերպելու և շինմոնիտաժային աշխատանքներ կատարելու ժամանակ տեխնիկական ղեկավարություն իրականացնելու հետ կապված ծախսերին են վերաբերում՝ վարչա-կառավարչական և արտադրա-տեխնիկական (գծային) անձնակազմի հիմնական և լրացուցիչ աշխատավարձը, վերադաս կազմակերպությունների պահման համար հատկացումները, պաշտոնական գործուղումների, ուղևորությունների ծախսերը և վարչա-տնտեսական այլ ծախսեր:

Շինարարության աշխատողների կենցաղը սպասարկելու, սոցիալ-կուլտուրական կարիքների և աշխատանքների կատարման անվտանգությունն ապահովելու ծախսերին են վերաբերում՝ շինարարական կազմակերպության աշխատողների բնակարանային-կոմունալ սպասարկման ծախսերը, շինմոնիտաժային աշխատանքներում և շինարարական մեքենաների ու մեխանիզմների սպասարկմամբ զբաղված բանվորների լրացուցիչ աշխատավարձը (արձակուրդների և պետական պարտականություններ կատարելու ժամանակ տրվող վարձատրությունը, բրիգադիքներին՝ բրիգադիների աշխատանքները ղեկավարելու համար և այլն), այդ բանվորների սոցիալական ապահովագրության համար կատարված հատկացումները արհմիությունների կուլտուր-մասսայական և ֆիզկուլտուրային աշխատանքների համար հատկացումները, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի ծախսերը:

Շինարարական հրապարակներ կազմակերպելու և շինմոնիտաժային աշխատանքների կատարումն սպասարկելու ծախսերին են վերաբերում՝ աշխատանքների կազմակերպումը նախագծող խմբերը պահելու, շինարարական հրապարակները բարեկարգելու, հակահրդեհային և պահակային պաշտպանությունը պահելու ծախսերը. նյութերի, կոնստրուկցիաների և կառուցվածքների մասերը փորձարկելու հետ կապված ծախսերը. ամորտիզացիան, ընթացիկ վերանորո-

գումը և մանր մեխանիզմների, տակելաժային սարքավորումների, էլեկտրականացված ու պնեմատիկ գործիքներ շահագործելու հետ կապված այլ ծախսեր. ոչ-տիտղոսային ժամանակավոր մանր կառուցումների ու հարմարանքների¹, ցածրարժեք ու արագ մաշվող առարկաների, ինվենտարի և գործիքների մաշվածք. արտադրութայն ռացիոնալիզացման ու աշխատանքի նորմավորման, շինարարութայն օբյեկտները շահագործման հանձնելու նախապատրաստման ծախսերը և այլն:

Այլ վերադիր ծախսերին վերաբերում են՝ բանվորների կազմակերպված հավաքագրման, բարձր որակավորման բանվորների և գծային ինժեներատեխնիկական անձնակազմի արտադրական գործուղումների, բանկի կարճաժամկետ վարկավորման համար տոկոսների վճարման ծախսերը և այլն:

Վերադիր ծախսերի կազմում ամենամեծ տեղը բռնում են վարչատնտեսական ծախսերը (մինչև 34 տոկոս), լրացուցիչ աշխատավարձը և սոցիալական ապահովագրութայն հատկացումները (15—18 տոկոս), բնակարանա-կոմունալ ծախսերը (9—10 տոկոս), ժամանակավոր մանր ոչ-տիտղոսային կառուցումների և հարմարանքների, ցածրարժեք գույքի և գործիքների մաշվածքը (8—9 տոկոս):

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի մակարդակի վրա իրենց կատարած ազդեցութամբ վերադիր ծախսերը կարելի է բաժանել պայմանական-մշտական և պայմանական-փոփոխական մասերի:

¹ Վերադիր ծախսերի մեջ մտնում են շինարարութայնը սպասարկող ժամանակավոր մանր կառուցումների և հարմարանքների ծախսերը: Օրինակ, աշխղեկների գրասենյակներն ու պահեստարանները, անցուղիները, սրահները, շարդախները և նման կառուցումներ: Դրանք կոչվում են ոչ-տիտղոսային ժամանակավոր կառուցումներ ու հարմարանքներ: Ի տարբերություն սրանց, հրապարակում շինարարական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ժամանակավոր խոշոր շենքերն ու կառուցումները նախատեսվում են հիմնական օբյեկտների շինարարութայն նախահաշվային արժեքներում (ժամանակավոր մերձատար ուղիները և ավտոմոբիլային ճանապարհները, ժամանակավոր արտադրական արհեստանոցները, էլեկտրակայանները, կաթսայատները և այլն) և կոչվում են փտղոսային կառույցներ:

Վերադիր ծախսերի պայմանական-մշտական մասի կազմի մեջ մտնում են վարչա-տնտեսական և կրտսեր սպասարկող անձնակազմը պահելու, գրասենյակների շենքերի պահպանման, գործուղման, գրասենյակային, փոստհեռագրական և մի քանի այլ ծախսեր: Այդ ծախսերի բացարձակ մեծությունը կախված է շինարարական կազմակերպության կողմից աշխատանքների հաստատված պլանը կատարելու աստիճանից:

Վերադիր ծախսերի պայմանական-փոփոխական մասը կազմում են՝ արտադրա-տեխնիկական (գծային) անձնակազմի աշխատավարձը, շինարարության բանվորների կենցաղը սպասարկելու, շինարարական հրապարակներ կազմակերպելու, բանվորների կազմակերպված հավաքաձրման և այլ ծախսերը: Սրանց բացարձակ մեծությունն անմիջականորեն կախված է՝ պլանի համեմատությամբ, կատարված աշխատանքների ծավալի փոփոխությունից:


Վերը քննարկած ծախսումների հոդվածները, որոնք ընդունվել են շինմոնտաժային աշխատանքների ինքնսրժեքի պլանավորման և հաշվառման ժամանակ, բացի բանվորների հիմնական աշխատավարձից, կոմպլեքսային են, այսինքն՝ բովանդակում են ծախսումների տարբեր տեսակի նախնական տարրեր:

Օրինակ, «նյութեր» հոդվածով ծախքերի մեջ մտնում են՝ նյութերի, դետալների և կոնստրուկցիաների բեռնման, բեռնաթափման, տեսակավորման և դարման աշխատանքներով զբաղված բանվորների աշխատավարձը. բեռնման և բեռնաթափման աշխատանքներում զբաղված տրանսպորտային միջոցների ու մեքենաների ամորտիզացիան. այդ մեքենաների աշխատելու ժամանակ պահանջվող էներգիայի ծախքերը և նյութական ռեսուրսների հայթայթման, պահպանման ու տեղ հասցնելու հետ կապված այլ ծախսեր: Ընդ որում այդպես էլ ծախսումների տարբեր տարրեր (աշխատավարձ, ամորտիզացիա, նյութերի, վառելիքի, էներգիայի և այլ դրամական ծախսեր) մտնում են շինարարական մեքենաների շահագործման ծախսերի, այլ ուղղակի ծախսումների ու վերադիր ծախսերի կազմի մեջ:

Շինարարական կազմակերպություններում կիրառվող ծախսերի խմբադրումը համապատասխանում է շինարարության նախահաշվային արժեքների հաշվումների կարգին: Դա ապահովում է փաստացի, նախահաշվային և պլանային ինքնարժեքի ցուցանիշների համադրելիությունը:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի կառուցվածքը:
 Ամբողջությամբ վերցրած ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի կառուցվածքը՝ ըստ 1961 թվականի ծախսամանների տարրերի, ցույց է տալիս հետևյալ դիագրամը:

ՇԻՆՄՈՆՏԱԺԱԶԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
 1961 թ. (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)



Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի կառուցվածքը բազմաթիվ գործոնների ազդեցության տակ անընդհատ փոփոխվում է:

Տեխնիկական անընդհատ առաջադիմությունն ապահովում է շինարարների աշխատանքի արտադրողականության բարձր: Վերջին հաշվով դա իր արտահայտությունն է գտնում

շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքում բանվորների աշխատավարձի տեսակարար կշռի իջեցման մեջ: Բայց աշխատավարձի տեսակարար կշռի իջեցումը տեղի է ունենում շինարարական արտադրանքի ծավալի միաժամանակյա աճի ու բանվորների անհատական վաստակների ավելացման պայմաններում:

Մյուս կողմից, նյութերի տրանսպորտի, էներգիայի և այլ ծառայությունների տարիֆների, գների սիստեմատիկ իջեցումն ավելացնում է աշխատավարձի տեսակարար կշիռը, քանի որ իջեցվում է աշխատանքների ընդհանուր ինքնարժեքը և նյութերի ծախսումների բաժինը:

Շինարարական կազմակերպությունների մեքենազինվածության աճման, բանվորների հիմնական աշխատավարձի ծախսերի և այլ ուղղակի ծախսումների իջեցման կապակցությամբ «Շինարարական մեքենաների շահագործում» հոդվածով ծախսերի բաժինը բարձրացման տեղեկնեց ունի: Սակայն շինարարական շատ կազմակերպություններում այդ հոդվածով փաստական ծախսերը ավելանում են շինարարական մեքենաների անբավարար օգտագործման և մեխանիզմների աշխատանքների մեքենա-հերթափոխի ինքնարժեքի բարձր մակարդակի հետևանքով: Շինարարական մեքենաների օգտագործման բարելավումը ավելացնում է դրանց օգտակար աշխատանքի ժամանակը և նպաստում է կատարված աշխատանքների մեկ միավորի շահագործման ծախսերի կրճատմանը:

Հետևաբար, ինքնարժեքի կառուցվածքը փոփոխվում է բոլոր գործոնների, այդ թվում փոխադարձորեն հակադիր ուղղությամբ գործող գործոնների համատեղ ազդեցության շնորհիվ:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի կառուցվածքի փոփոխությունները բնութագրում է հետևյալ աղյուսակը (տե՛ս էջ 506):

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 1940—1960 թվականներին շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի մեջ ավելացել է նյութերի

Ծախսումների հոդվածները	Ծախսումների տե- սակարար կշիռն ընդհանուր ինք- նարժեքի նկատ- մամբ՝ տոկոսներով		Տեսակարար կշռի ավե- լացումը (+) կամ նվազեցումը (-) ընդ- հանուր ինքնարժեքի նկատմամբ՝ տոկոս- ներով
	1940 թ.	1960 թ.	
I. Ուղղակի ծախսումներ			
Նյութեր	48,9	56,3	+ 7,4
Բանվորների հիմնական աշխատավարձ	20,9	18,9	- 2,0
Շինարարական մեքենա- ների շահագործման ծախսեր	2,5	6,2	+ 3,7
Այլ ծախսումներ	6,1	4,1	- 2,0
II. Վերադիր ծախսեր	21,6	14,5	- 7,1
Ը ն դ ա մ ե ն ը	100	100	—

մեքենայացման ծախսումների բաժինը և պակասել հիմնական աշխատավարձի ծախսերի բաժինը, այլ ուղղակի ծախսումները և հատկապես վերադիր ծախսերը: Այդ փոփոխություններն արտացոլում են շինարարու-թյան ինդուստրացման բնագավառի հաջողությունները:

Շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների ինքնարժեքի կառուցվածքը խիստ տարբեր է: Այն կախված է դրանց աշխատատարույթյունից և նյութատարույթյունից: Իրենց հերթին աշխատատարույթյունն ու նյութատարույթյունը որոշվում են զգալի չափով շինմոնտաժային աշխատանքների կատարման ժամանակ կիրառվող կոնստրուկցիաների ու դետալների հավաքովիության աստիճանից: Օրինակ, խոշոր պանելներից ու բլոկներից պատեր մոնտաժելու համար պահանջվում են մեծ քանակությամբ շինարարական դետալներ, որոնց ծախսերը մի քանի անգամ գերազանցում են մոնտաժող բանվորների աշխատավարձը, իսկ ներկարարական աշխատանքների կատարման համար ծախսվում են ոչ մեծ քա-

նակուլթյամբ նյութեր և համեմատաբար մեծ քանակուլթյամբ աշխատանք: Իրա հետևանքով էլ ներկարարակալ աշխատանքներով զբաղված բանվորների աշխատավարձը ընդհանուր ծախսերի մեջ ավելի մեծ բաժին է կազմում, քան պատերի մոնտաժման դեպքում:

Որպես օրինակ քննարկենք ուղղակի ծախսերի կառուցվածքի վերաբերյալ տվյալները՝ ըստ շինմոնտաժային աշխատանքների տարբեր տեսակների:

Աշխատանքների անվանումը	Ծախսեր ըստ առանձին հողվածների (տոկոսներով գումարի նկատմամբ)			ընդամենը
	նյութեր (ֆրանկո-մերձ-օբյեկ. պահեստ)	բանվորների հիմնական աշխատավարձը	ծախսեր՝ շինարարական մեքենաների շահագործման գծով	
Առաջին կատեգորիայի էքսկավատորներով շոր հողում մինչև 6 մետր խորության փոսարկների ու խրամատների փորումը և հողաշերտերի շուռ տալը	—	6,0	94,0	100
Հիմքերի մոնտաժումը α200» մարկայի բետոնից պատրաստած ավելի քան 1,5 տ քաշ ունեցող խոշոր բլոկներից՝ 1 խոր մ-ին 890 կգ արմատուրայով	96,8	1,4	1,6	100
Առաստաղների սվաղումը փայտի վրա՝ քիվերով և կորացումներով	59,0	36,6	4,2	100
Սոսնձաներկում (հասարակ)	30,6	66,7	2,7	100
Ավելի քան 12 մետր բարձրությույն ունեցող շենքերի բարդ ճակատների կրաներկում երկու գույնով	3,1	96,1	0,8	100

Այս տվյալները ցույց են տալիս, որ աշխատանքների առանձին տեսակներում նյութերի համար ծախսումների բաժինը տատանվում է 0-ից մինչև 96,8 տոկոսի, հիմնական աշխատավարձերը՝ 1,4-ից մինչև 96,1 տոկոսի, շինարարական մեքենաների շահագործման ծախսերը՝ 0,8-ից մինչև 94 տոկոսի միջև:

Առանձին կազմակերպությունների շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի կառուցվածքը քննարկելիս շատ կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր կազմակերպության կատարած աշխատանքների կազմը:

Շինարարական կազմակերպությունների արտադրատեսիս-նիկական գործունեությունը վերլուծելիս, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման միջոցառումներ մշակելիս մեծ հետաքրքրություն են ներկայացնում այս կամ այն ծախսերի տնտեսական տարբեր խմբավորումները: Օրինակ, բոլոր տեսակի աշխատավարձերի վըճարման ծախսերի մեծությունը, 1 մլն. ռուբ. կատարված շինմոնտաժային աշխատանքների հիմնական նյութերի ծախսերի գումարը, հիմնական արտադրության մեկ բանվորի հաշվով շինարարական մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի չափը:

3. ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կոմունիստական պարտիան խնդիր է դնում շինարարության ծրագիրն իրականացնել պետական միջոցների առավելագույն խնայողությամբ: Դրա համար անհրաժեշտ է, որ շինարարական կազմակերպությունները անխոնջ կերպով պայքարեն արտադրության ծավալը ընդլայնելու, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու համար, վճարականորեն արմատախիլ անելով անտնտեսավարության և վատնման փաստերը: Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXII. համագումարում նշեց, որ դեպի կոմունիզմի մեր ամբողջ շարժման ընթացքը և սովետական մարդկանց կենսամակարդակի բարձրացումը հսկայական չափով կախված է շինարարության էժանացումից:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի սխտեմատիկ իջեցման համար պայքարի կարևորագույն տուղությունները, ինչպես ցույց է տալիս առաջավոր շինարարական կազմակերպությունների փորձը, հանդիսանում են՝ շինարարության ինդուստրացումը և դրա հիման վրա աշխատանքի արտադրողականության բարձրացումը. նյութական և դրամական միջոցների ծախսման գործում խնայողության խստագույն ռեժիմի իրականացումը. շինարարության կառավարման կազմակերպման կատարելագործումը. շինարարության նյութատեխնիկական մատակարարման բարելավումը. շինարարական կազմակերպությունների աշխատանքների ռիթմիկության ապահովումը. շինմոնտաժային աշխատանքների որակի բարձրացումը. շինարարության մեջ հաշվարկային հարաբերությունների կարգավորումը:

Շինարարության ինդուստրացումն ապահովում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը, շինարարության տեղության կրճատումը, նյութերի առավել ուսցիոնալ օգտագործումը: Այդ բոլորը նպաստում են շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի զգալի իջեցման:

Շինարարության ինդուստրացումը վճռական ազդեցություն է գործում բանվորների հիմնական աշխատավարձի ծախսումների հարաբերական կրճատման վրա: Այդ ծախսումների մեծությունը որոշվում է գլխավորապես շինմոնտաժային աշխատանքների աշխատատարությունը: Որքան ցածր է աշխատատարությունը, այնքան քիչ են հիմնական ու լրացուցիչ աշխատավարձի ծախսումները:

«Տեխնիկական առաջադիմությունը և արտադրության լավագույն կազմակերպումը, — ասվում է ՍՄԿՊ Ծրագրում, — պետք է յուրաքանչյուր ձեռնարկությունում լիովին օգտագործվեն աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու համար»¹:

ՍՍՌՄ-ում շինարարական արտադրության անընդմեջ

¹ «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 496, Հայպետհրատ, 1962

տեխնիկական առաջադիմություն պայմաններում աշխատանքի արտադրողականության աճը առաջ է անցնում աշխատավարձի աճից: Դա հանգեցնում է ավարտված շինարարական արտադրանքի մեկ միավորի դիմաց աշխատավարձի ծախսումների հարաբերական կրճատման: Այսպիսով, շինարարության ինդուստրացումը և դրա հիման վրա ձեռք բերված աշխատավարձի աճի համեմատությամբ աշխատանքի արտադրողականության առավել աճը շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման գլխավոր ուղիներից մեկըն է:

Ինդուստրացման շնորհիվ շինարարական ժամկետների կրճատումը պակասեցնում է շինարարության տեղդրվածության կախված վերադիր ծախսերը: Մասնավորապես կրճատվում են վարչա-կառավարչական և գծային անձնակազմի պահպանման, շինարարական հրապարակների պահպանման ու բարեկարգման, բանվորների բնակարանային-կոմունալ սպասարկման ծախսերը, ժամանակավոր ոչ-տիտղոսային կառուցվածքների, գույքի ու գործիքների մաշվածության և այլ տեսակի ծախսերը:

Հաշվված է, որ շինարարության տեղդրվածության կախված ծախսերը կազմում են միջին հաշվով վերադիր ծախսերի ընդհանուր մեծության ավելի քան 50 տոկոսը: Ուստի շինարարության տեղդրվածության կրճատումը խիստ էական ազդեցություն է գործում վերադիր ծախսերի մակարդակի վրա: Օրինակ, շինարարության տեղդրվածումը, սահմանված ժամկետների համեմատությամբ, 10 տոկոսով կրճատումն ապահովում է վերադիր ծախսերի մոտավորապես 5 տոկոսի կրճատում, կամ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի 0,8 տոկոսի իջեցում: Բնակարանային շինարարության մեջ տների կառուցման յուրաքանչյուր մեկ ամսով կրճատումն աշխատանքների ինքնարժեքն իջեցնում է միջին հաշվով 1,3 տոկոսով:

Խնայողության խստագույն ռեժիմի իրականացումը նյութական և դրամական ռեսուրսների ծախսման գործում: Տնտեսական մեծ արդյունավետություն է տալիս շինարարական

կազմակերպությունների բոլոր օղակներում՝ սկսած տրեստից և վերջացրած քանվորական բրիգադներով, նյութական և դրամական ռեսուրսների ծախսման խնայողութեան ռեժիմի սիստեմատիկ իրականացումը, շինարարութեան բոլոր տեղամասերում կորուստների և անարտադրողական ծախսումների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծումը:

Շինարարության մեջ նյութական ռեսուրսների վրա կատարված ծախսումների տեսակարար կշիռը կազմում է շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ինքնարժեքի ավելի քան 55 տոկոսը: Ուստի նյութերի վրա կատարված ծախսերի միայն մեկ տոկոսի կրճատումն ապահովում է շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի միջին հաշվով ավելի քան 0,5 տոկոսի իջեցում:

Նյութերի վրա կատարված ծախսերի ընդհանուր գումարի մեջ մեծ տեղ են գրավում շինարարական կազմակերպությունների տրանսպորտային ծախսերը: Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը բարենպաստ պայմաններ ստեղծեց տեղական նյութերի լայն օգտագործման, ցրված մանր, ոչ-շահավետ տրանսպորտային տնտեսությունները մի միասնական հզոր տնտեսության մեջ միավորելու, նյութերի ոչ-ռացիոնալ փոխադրումները վերացնելու համար: Օգտագործելով այդ հնարավորությունները, շատ ժողտնտխորհների շինարարական կազմակերպություններ տնտեսական զգալի արդյունավետության են սել:

Տրանսպորտային ծախսերի կրճատումը զգալի չափով նպաստում է շինարարական նյութերի ու դետալների կենտրոնացված ավտոմոբիլային սեղանափոխումների զարգացմանը: Ընդ որում ո՛չ միայն բարելավվում է տրանսպորտային միջոցների օգտագործումը, այլև կրճատվում է ավտոտնտեսության մարշալ-կոմսովարչական անձնակազմի թիվը:

Նյութերի խնայողության համար պայթարի տնտեսական արդյունավետության մասին են վկայում հետևյալ օրինակները:

«Կրիվորոժժիլստրոյ» տրեստի կուլեկտիվը 1961 թվականին, խնայեց 790 հազար ռուբլի: Հատկապես շատ միջոցներ խնայեցին կոմունիստական աշխատանքի բրիգադները: Տրեստում իրականացված է նյութերը անմիջականորեն շինարարական տեղամասերը կենտրոնացված կարգով հասցնելու միջոցառումը: Դա հնարավորություն տվեց ազատել մեքենաների մի մասը և տրանսպորտային ծախսերը կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալի համեմատ 12 տոկոսից կրճատել-հասցնել 8 տոկոսի:

Նյութերի մեծ խնայողություն է տալիս փոխադրման նոր միջոցների կիրառումը: Այսպես, նոր ավտոցեմենտակիրները և վազոն-ցեմենտակիրները լիովին վերացնում են ցեմենտի կորուստը փոխադրելու, բեռնելու և բեռնաթափելու ժամանակ: Հենց միայն Մոսկվայում, որի կառույցները ամեն տարի օգտագործում են հարյուր հազարավոր տոննա ցեմենտ, մեկ տարում՝ ցեմենտի փոխադրման նոր կազմակերպման հաշվին խնայվում է մոտ մեկ միլիոն ռուբլի, որի շնորհիվ յոթնամյակի վերջում կվերացվի այնքան ցեմենտի կորուստ, որը հավասար է երկու խոշոր գործարանների տարեկան արտադրողականությանը:

Շինարարական կազմակերպությունները՝ բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների առաջարկությունամբ (պատվիրատուների համաձայնությամբ) իրականացնում են տարբեր տեսակի ռացիոնալիզատորական միջոցառումներ, օրինակ, պարզեցնում ու թեթևացնում են կոնստրուկցիաները, արմատավորում են ավելի խնայողական նյութեր ու դետալներ, և փոփոխում տեխնիկական այլ հարցերի լուծումներ՝ առանց իջեցնելու կատարվող աշխատանքների և կառուցումների ամրությունն ու շահագործական որակը¹:

Ընդ որում ռացիոնալիզատորական առաջարկությունների արմատավորումից ստացված խնայողությունը մնում է կապալառուի տնօրինությանը: Դա բարձրացնում է շինարարական կազմակերպությունների նյութական շահագրգռվածությունը աշխատանքների կատարման մեթոդների բարելավ-

1 Պատվիրատուները պարտավոր են առաջատար նախագծային կազմակերպություններին հաղորդել իրացման համար ընդունված ռացիոնալիզատորական բոլոր առաջարկությունների մասին: Դա հնարավորություն է տալիս ընդհանրացնել շինարարական կազմակերպությունների պրակտիկան՝ և նախագծային լուծումներում ներդնելու առավել կարևոր առաջարկություններ:

ման և շինարարութեան էժանացմանն ուղղված ուսցիոնա-
լիզատորական միջոցառումների իրացման գործում:

Յրինակ, Խաբարովսկի անտեսական շրջանի կառուցվող օբյեկտներից մեկում փայտեծպեղների վրա ազդողիֆրային տանիքով հավաքովի երկաթ-բետոնե ձեղնահարկային ծածկեր կառուցելու փոխարեն, կառուցվեց համատեղված հավաքովի երկաթբետոնե տանիք՝ փրփրաբետոնի տաքացումով և փափուկ ծածկով: Դրա շնորհիվ խնայվեց մոտ 5,3 հազ. ուրլու: «Կազախէլեկտրոմոնտաժ» տրեստի մոնտաժային տեղամասի նախա-ձեռնութեամբ ուժային գծերի և կառավարման գծերի համատեղ տեղադրման շնորհիվ ձեռք է բերվել աշխատանքների արժեքի 11,8 հազ. ուրլու իջեցում և խնայվել է մոտ 5 հազար մետր գազային խողովակներ:

«Զիմբենդշին» տրեստի աշխատողների ռացիոնալիզատորական առաջարկութունների ներդրումից 1962 թվականի միայն շոքս ամսում ստացվել է 34 հազար ուրլու խնայողութուն:

Նյութերի վրա կատարվող ծախսումների կրճատման խոշոր ռեզերվ է դրանց կորուստների վերացումը: Տարբեր տեսակի աշխատանքների մեկ միավորի և շենքերի ու կառուցվածքների կոնստրուկտիվ տարրերի վրա նյութերի ծախսերի նախահաշվային նորմաներում նախատեսված են աշխատանքների կատարման ժամանակ այսպես կոչված դժվարութեամբ վերացվող կորուստները: Սակայն շինարարական կադմակերպութունների առաջավոր շինարար բանվորները և ինժեներատեխնիկական աշխատողներն առաջուցեցին, որ նյութերի խնայողաբար ծախսման և թափոնների ուսցիոնալ օգտագործման դեպքում այդ կորուստները կարող են զգալիորեն կրճատվել:

Շինարարութեան մեջ նյութերի համար կատարվող ծախսումների կրճատման միջոցներից մեկն էլ սեփական օժանդակ տնտեսութեամբ արտադրանքի ինֆլատիվ իջեցումն է: Դա ձեռք է բերվում նյութեր և դետալներ արտադրելու համար տեղական հումքի լայն օգտագործման, արտադրութեան տեխնոլոգիայի կատարելագործման, օժանդակ արտադրութեան մեքենայացման և դրանց կարողութունների լրիվ օգտագործման միջոցով:

Նյութերը խնայողաբար օգտագործելու միջոցով դրանք

տնտեսելու հնարավորություններ կան շինարարական կազմակերպությունների բոլոր օղակներում և ամեն տեսակի շինմոնտաժային աշխատանքներում:

Նյութերի առավելագույն խնայողություն իրականացնելու համար մեծ նշանակություն ունի դաստիարակչական աշխատանքը կառույցներում, շինարարական բանվորների լայն մասսաների ներգրավումը նյութերը խնայողաբար ծախսելու համար ծավալված սոցիալիստական մրցության մեջ, նյութերի խնայողության համար շինարարության աշխատողներին պարգևատրելու սիստեմը:

Շինարարական կազմակերպությունների բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների լայն մասսաներին խնայողության համար պայքարի մեջ ներգրավելու արդյունավետ միջոց է նյութական ռեսուրսների պահպանման և օգտագործման նկատմամբ հասարակական ստուգատեսների անցկացումը:

Ոգեշնչված ՍՄԿՊ XXII համագումարի որոշումներով, սովետական շինարարները, սոցիալիստական մրցություն ծավալեցին նյութերի խնայողության համար:

Արժեքավոր նախաձեռն լծյուն հանդես բերեց Լենինի շքանշանակիր «Տագիլստրոյ» տրեստի կոնկրետով, որը պարտավորվել էր 1962 թվականի համար սահմանված ինքնարժեքի իջեցման առաջադրանքը գերակատարել 100 հազ. ռուբլով: Այս պարտավորությունը տրեստը ամրապնդեց նյութերի, դետալների շինարարական մեքենաների օգտագործումը բարելավելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրական բազաներն ամրապնդելու, տնտեսական հաշվարկն արմատավորելու կոնկրետ միջոցառումներով: «Տագիլստրոյ» տրեստի կոմունիստական աշխատանքի բրիգադները պարտավորություն ստանձնեցին հասնել այն բանին, որ յուրաքանչյուր բանվոր տարվա ընթացքում տնտեսի 100 ռուբլուց ոչ պակաս:

Տագիլի շինարարները առաջարկել են ծավալել շինարարների Համամիութենական սոցիալիստական մրցություն՝ օբյեկտները ժամկետից շուտ շահագործման հանձնելու և ինքնարժեքի իջեցման առաջադրանքները գերակատարելու համար, այն հաշվով, որ 1962 թվականին երկրին տրվի 1600 մլն. ռուբլու խնայողություն: Որակական ու քանակական առաջադրանքները հաջող կատարելու համար ծավալված մրցության մեջ մտան շատ քաղաքների և ռեսպուբլիկաների շինարարներ:

Շինարարության կառավարման կապուտկերպման կատարելագործումը, վարչա-կառավարչական և այլ վերադիր ծախսերի կրճատումը: Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը բարենպաստ պայմաններ ստեղծեց շինարարական տրեստների ու վարչությունների խոշորացման ու մասնագիտացման համար: Բազմաթիվ անջատ-անջատ շինարարական կազմակերպությունները մեկ կամ մի քանի հզոր տերիտորիալ կազմակերպությունների մեջ միավորելիս վերացվում են շինարարական մանր տրեստներն ու վարչությունները, պակասում է վարչա-կառավարչական անձնակազմի թիվը և դրանց պահպանման ծախսերը:

Դոնեցի տնտեսական վարչական շրջանում շինարարական կազմակերպությունների միավորման հետևանքով վերացվեցին 47 տրեստներ ու շինարարական վարչություններ. կառավարչական անձնակազմի թիվը կրճատվեց 830 մարդով, իսկ չորս պահման ծախսերը կրճատվեցին թարեկան մոտավորապես 1,2 մլն. ռուբլով: Տարբեր միխատություններից ու գերատեսչություններից 1954—1958 թվականներին Գլխամուշինի կողմից ընդունված 1040 կազմակերպություններից և տնտեսություններից վերացվեցին 388 կազմակերպություններ: Ընդ որում համաշինարարական տրեստի աշխատանքների տարեկան միջին ծավալը 8 մլն. ռուբլուց հասավ 19 մլն. ռուբլու, իսկ համաշինարարական վարչությանը՝ 1,7 մլն. ռուբլուց մինչև 4 մլն. ռուբլու:

Պրակտիկան համոզիչ կերպով ցույց է տալիս, որ շինարարական խոշոր կազմակերպությունները հնարավորություն ունեն ավելի լրիվ ծանրաբեռնելու բարձր արտադրողական մեքենաները, ռացիոնալ օգտագործելու բանվորական կադրերը և նյութական ռեսուրսները: Վերադիր ծախսերի շատ տեսակներ, որոնք ուղղակիորեն կապված չեն կատարվող աշխատանքների ծավալների հետ, օրինակ, վարչա-տնտեսական, պահակության և որոշ այլ աշխատանքներ, խոշոր կազմակերպություններում բաշխվում են կատարվող աշխատանքների ավելի մեծ ծավալների վրա: Դրանով իսկ ձեռք է բերվում կատարված աշխատանքների մեկ միավորին ընկնող վերադիր ծախսերի բացարձակ կրճատում:

Շինարարական կազմակերպությունների գործունեության տնտեսական կարևորագույն ցուցանիշների կախվածությունը նրանց հզորությունից՝ բնութագրվում է հետևյալ տվյալներով.

Շինարարական կազմակերպությունների խմբերը՝ կախված տարեկան շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալից (մլն. ուսր.)	1 բանվորի աշխատանքի արտադրողականությունը (տոկոսներով)	Փաստացի ինքնարժեքի իջեցումը (—) կամ բարձրացումը (+) տոկոսներով	Վերադիր ծախսերը 0/0-ով ուղղակի ծախսերի նախահաշվային արժեքի նկատմամբ	
			ընդամենը	այդ թվում վարչատնտեսական ծախսեր
1-ից պակաս	100,0	+ 5,0	18,2	7,0
1-ից մինչև 1,5	114,2	— 0,7	15,7	6,3
1,5-ից մինչև 2	117,7	— 1,8	15,2	5,6
2-ից բարձր	133,1	— 4,6	13,8	4,8

Այս տվյալները, որ վերցված են մեծ թվով շինարարական կազմակերպություններից, ցույց են տալիս, որ խոշոր կազմակերպություններում բանվորների աշխատանքի արտադրողականությունը 33 տոկոսով ավելի բարձր է, իսկ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը 10 տոկոսով ավելի ցածր է, քան մանր կազմակերպություններում:

Աշխատանքների ինքնարժեքի իջեցման պայքարում մեծ նշանակություն ունի շինարարական կազմակերպությունների մասնագիտացման հետագա զարգացումը: Մասնագիտացումը նպաստում է որոշակի մասնագիտության բանվորների մշտական կադրերի կենտրոնացմանը համապատասխան շինարարական կազմակերպություններում, հնարավորություն է տալիս անընդհատ բարձրացնելու բանվորների ու ինժեներատեխնիկական աշխատողների արտադրական հմտությունները, կատարելագործելու աշխատանքների կատարման մեթոդները: Մասնագիտացված շինարարական կազմակերպությունները օժտված են բարձր շարժունությունով, որը նրանց հնարավորություն է տալիս կարճ ժամկետում առանձին օբյեկտներում խոշոր ծավալի աշխատանքներ կատարել: Այդ

բոլորը նպաստում են աշխատանքի արտադրողականության աճի և շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցմանը: Մասնագիտացված կազմակերպություններում կատարվող շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը զգալիորեն ավելի ցածր է, քան ընդհանուր շինարարական կազմակերպություններում:

Շինարարական մեքենաների ավելի լրիվ օգտագործումը և մեքենա-հերթափոխի ինքնարժեքի իջեցումը ձեռք են բերվում մեքենաներն ու շինարարական մեխանիզմները մասնագիտացված մեքենաշահագործման խոշոր տնտեսություններում կենտրոնացնելու միջոցով: Շինարարական կազմակերպությունների կուտակած փորձը ցույց է տալիս, որ մասնագիտացված մեքենաշահագործական խոշոր տնտեսությունները (մեքենայացման բազաները, գրասենյակները, վարչությունները, տրեստները), որոնք սպասարկում են տրվյալ շրջանի կամ քաղաքի բոլոր 'կառույցներին, ավելի ռացիոնալ են օգտափորձում ունեցած մեքենական պարկը:

Մասնագիտացված մեքենաշահագործական խոշոր տնտեսությունները հնարավորություն ունեն իրենց մոտ ստեղծելու մեխանիզատորների մշտական որակյալ կազրեր, սիստեմատիկորեն կատարելագործելու մոնտաժի, դեմոնտաժի և շինարարական մեքենաների շահագործման մեթոդները: Այդպիսի տնտեսությունների խոշորացման և մասնագիտացման դեպքում սլայմաններ են ստեղծվում շինարարական մեքենաների նորոգումը կենտրոնացնելու, վերանորոգման գործարանները մասնագիտացնելու, նորոգման ագրեգատային մեթոդը լայնորեն կիրառելու, նորոգման աշխատանքի աևողությունը և դրանց ինքնարժեքը խիստ կերպով կրճատելու համար: Այդ բոլորը նպաստում են բարձրացնելու մեքենաների օգտագործման արդյունավետությունն ըստ ժամկետի և արտադրողականության, կրճատելու դրանց շահագործման ծախսերը:

Մասնագիտացումն ասպահովում է վերագիր ծախսերի զգալի կրճատում: ՍՍՌՄ Շինբանկի կատարած ստուգումների տվյալներով, 1959 թվականին մասնագիտացված կազմա-

կերպությունները մեկ տարում հասել են վարչա-տնտեսական ծախսերի 16,3 տոկոսի խնայողության, այն դեպքում, երբ համաշխնարարական կազմակերպություններում այն կազմել է միայն 6 տոկոս:

Բացի թվարկվածներից, կան նաև այլ գործոններ, որոնք էական ազդեցություն են ունենում վերադիր ծախսերի իջեցման վրա: Այսպես, ժամանակավոր մանր ոչ-տիտղոսային կառուցվածքների ու հարմարանքների մաշվածքի ծախսերը կարող են զգալիորեն կրճատվել ինվենտարային հավաքովի-քանդովի և շարժական կառուցվածքների կիրառմամբ: Շինարարական կազմակերպությունների բնակարանային-կոմունալ տնտեսություններում տնտեսական հաշվարկի արմատավորումը, ընթացիկ նորոգումների ժամանակին կատարումը, ծառայությունների վճարովիության սկզբունքի խստորեն պահպանումը ապահովում են այդ տնտեսությունների պահման ծախսերի խնայողությունը:

Շինարարական կազմակերպությունների փաստացի ծախսերի կազմում հաճախ տեղ են գտնում այսպես կոչված անաբաղադրողական ծախսումները: Դրանց մեջ են մտնում՝ տուգանքներն ու տուժանքները՝ հաշիվները ժամանակին չվճարելու համար, բանվորների, տրանսպորտային միջոցների, շինարարական մեքենաների պարապուրդների, նյութերի պակասի համար վճարումները և այլն: Այս ծախսումները, որպես կանոն, առաջ են գալիս շինարարական կազմակերպությունների աշխատանքում եղած լուրջ թերություններից, իսկ մի շարք դեպքերում էլ գործի կազմակերպման անտնտեսավարությունից:

Անարտադրողական ծախսումները վերացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել շինարարական կազմակերպությունների բոլոր օղակների աշխատանքի օպերատիվությունը, բարելավել արտադրության կազմակերպումը և կառույցների նյութատեխնիկական ապահովումը, կարգավորել շինարարական կազմակերպությունների ֆինանսական տնտեսությունը:

Ներկայումս վերադիր ծախսերը հաշվվում են ուղղակի ծախսումների քնդհանուր գումարից, այսինքն՝ միատեսակ չափով՝ ինչպես աշխատավարձի ծախսերից, այնպես էլ նյութերի արժեքից և մեքենաների ու մեխանիզմների շահագործումից: Դա հասցնում է այն բանին, որ նյութերի մեծ տեսակարար կշիռ ունեցող աշխատանքներ կատարող շինարարական կազմակերպությունները վերադիր ծախսերի համար այնպիսի չափերի միջոցներ են ստանում, որոնք զգալիորեն գերազանցում են իրականում դրանց նկատմամբ ունեցած պահանջները: Նման կարգը չի խթանում ավելի էժան ու արդյունավետ նյութերի կիրառմանը և վերադիր ծախսերի գծով միջոցների խնայողաբար օգտագործմանը: Մինչդեռ աշխատավարձի ծախսերի մեծ տեսակարար կշիռ ունեցող աշխատանքներ կատարող կազմակերպությունները վերադիր ծախսերի համար այնքան միջոցներ են ստանում, որոնք չեն ծածկում նրանց իրական պահանջը:

Շինարարության ինդուստրիալ մեթոդները բարձրացնում են նյութերի ու կոնստրուկցիաների արժեքի տեսակարար կշիռը աշխատանքների քնդհանուր արժեքի մեջ, միաժամանակ զգալիորեն կրճատվում են աշխատավարձի ծախսումները և, հետևաբար, վերադիր ծախսերի բաժինը: Բոլոր ուղղակի ծախսումներին համամասնական վերադիր ծախսերը որոշելիս, մեքենայացված եղանակով, ինչպես նաև հավաքովի կոնստրուկցիաների ու դետալների կիրառմամբ, կատարված աշխատանքների նախահաշվային արժեքն արհեստականորեն բարձրանում է, իսկ աշխատավարձի մեծ տեսակարար կշիռ ունեցող աշխատատար աշխատանքների նախահաշվային արժեքը իջնում է: Դա հանգեցնում է այն աշխատանքների իրական արժեքների խնդավթյուրման, որոնք իրականացվում են տարբեր աստիճանի մեքենայացմամբ ու ինդուստրացմամբ, նվազեցնում է գործարանային պատրաստման նոր, առաջադիմական կոնստրուկցիաների ու դետալների, բարձր արտադրողական շինարարական մեքենաների ու մեխանիզմների արմատավորման տնտեսական արդյունավետության ցուցանիշները և, այդ կապակցությամբ, չի նպաստում առավել խնայողական նախագծային լուծումներ ընտրելու գործին: Այսպիսով, վերադիր ծախսերը որոշելու գործող կարգը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Կարևոր է քննարկել նաև վերադիր ծախսերը շինքի և կառուցման, խոշորացված կոնստրուկտիվ տարրերի և դրանց մասերի արժեքը որոշող միավոր գնահատումների ու զննցուցակների մեջ մտցնելու հարցը: Այդպիսի կարգը թույլ կտա, ելնելով կատարվող աշխատանքների բնույթից, սահմանել վերադիր ծախսերի չափերը, առավել ճիշտ որոշել շինարարական կոնստրուկցիաների ու աշխատանքների տեսակների նախահաշվային արժեքը և մեքենայացման ու շինարարության ինդուստրիալ մեթոդների ներդրումից ստացված տնտեսական արդյունավետությունը, ինչպես նաև հասարակարգային կտա պարզեցնել նախահաշիվների և կատարված աշխատանքների հաշվարկների կազմումը:

**Շինարարության նյութա-տեխնիկական մատակարարման բա-
րելավումը:** Կառույցներին նյութեր, դետալներ, կոնստրուկ-
ցիաներ և սարքավորումներ ժամանակին ու կոմպլեկտով
մատակարարելը նպաստում է շինարարական կազմակերպու-
թյունների ամբողջ տարվա ռիթմիկ աշխատանքին, հոսքային
մեթոդի կիրառմանը, շինարարության տեղուկության կրճատ-
մանը և, հետևաբար, շինմոնտաժային աշխատանքների ինք-
նարժեքի իջեցմանը:

Բազմաթիվ կառույցներում տեղ գտած մատակարարման
ընդհատումներն աշխատաժամանակի կորստյան գլխավոր
պատճառն են: Կառույցներին նյութերի անհամաչափ մատա-
կարարումն անհրաժեշտ է դարձնում նյութերի փոխադրումը
պահեստները, պահեստի հրապարակները և ապա դրանք
ամբարձիչ մեխանիզմների աշխատանքի գոտին տեղափո-
խելը, որն առաջ է բերում միջոցների անարտադրողական
ծախսումներ: Մատակարարումների սահմանված ժամկետ-
ների պահպանումը հնարավորություն է տալիս խուսափելու
նյութերի ավելորդ պաշարներից, կրճատելու դրանց պահ-
պանման ու տեղափոխման հետ կապված ծախսերն ու կո-
րուստները:

Կառույցներին մատակարարվող նյութերի և դետալների տեսակները,
մարկաները, չափերը և որակը պետք է խստությամբ համապատասխա-
նեն նախագծին և տեխնիկական պայմաններին: Այլ տեսակների և մար-
կաների կամ պահանջվածի համեմատ ավելի մեծ չափերի նյութերի մա-
տակարարումն առաջ է բերում դրանց գերածախս: Օրինակ, երկաթու-
ղիների էլեկտրիֆիկացման համար ամեն տարի պատրաստվում է կոն-
ստրուկտային ցանցի ավելի քան 85 հազ. հատ ցենտրիֆուգացված նախնա-
կան լարվածության երկաթբետոնե հենակներ, Հենակներում մետաղալա-
րի տրամաչափի ավելացումը 4-ից մինչև 5 մմ, այսինքն՝ ընդամենը
1 մմ-ով, կառաջացնել 1045 տոննա դեֆիցիտային բարձրակալուն ժև-
տաղալարի գերածախս:

Շինարարական կազմակերպությունների նյութերի մատա-
կարարման կարգավորումը, նյութական արժեքների պահես-
տավորման ու պահպանման կարգավորումը, նյութերի փո-
խադրման համար տրանսպորտի ավելի էժան տեսակների օգ-

տագործումը՝ շինարարական աշխատանքների ինքնարժեքի իջեցման խոշոր ռեզերվ է:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը կախված է վաճառահանող և մատակարարող կազմակերպությունների ավելագների, ինչպես նաև շինանյութերի մթերման ու պահպանման հետ կապված մթերման ու պահեստավորման ծախսերի չափից:

Վաճառահանող և մատակարարող կազմակերպությունների ավելագների մեծությունը կախված է գլխավորապես նյութեր մատակարարելու սահմանված կարգից: Տրանզիտով, այսինքն՝ անմիջականորեն մատակարարող-գործարաններից կառույցներին նյութեր մատակարարելու դեպքում ավելագները ղգալիորեն (7—10 անգամ) ավելի ցածր են, քան մատակարարող կազմակերպությունների պահեստներից նյութեր ստանալիս: Դա բացատրվում է նրանով, որ նյութերը տրանզիտով ստանալիս բացառվում են նյութերի փոխադրման և պահեստներում պահելու հետ կապված լրացուցիչ ծախսերը:

Պահեստային օպերացիաները չպետք է գերազանցեն նրանց ընդհանուր շրջանառության 20—25 տոկոսից: Մի շարք նյութերի համար (անսառանյութ, ցեմենտ և այլն), որոնք մատակարարվում են տրանզիտով կամ սպառողները ստանում են վաճառահանող կազմակերպությունների պահեստներից, մատակարարող կազմակերպություններին արգելված է դանձել պահեստային ավելագներ:

Վաճառահանող և մատակարարող կազմակերպությունների ավելագները կրճատելու հիմնական միջոցառում է հանդիսանում մատակարարման սիստեմի պարզեցումը, մատակարարող կազմակերպությունների, բաղանների, պահեստների ցանցում եղած ավելորդ օղակների և դրանց պահպանման ծախսերի վերացումը:

ՍՍՌՄ-ի և միութենական ռեսպուբլիկաների բոլոր ժողովրդնախորհների, մինիստրությունների ու գերատեսչությունների համար սահմանված է մթերման-պահեստավորման ծախսերի նորմաներ (տոկոսներով՝ նյութերի ու սարքավորումների ֆրանկո միթժօրյեկտային պահեստի արժեքից). շի-

նարարական, սանիտարա-տեխնիկական և էլեկտրատեխնիկական նյութերի համար՝ 2,1 տոկոս, սարքավորումներին՝ 1,2 տոկոս, պողպատյա կոնստրուկցիաներին՝ 0,9 տոկոս: Սակայն այդ նորմաները հաճախակի բարձրացվում են, որը և թանկացնում է նյութերը:

Մթերման-պահեստային ծախսերի կրճատմանը նպաստում է նյութերի փոխադրման կենտրոնացումը, որի շնորհիվ նվազում է շինարարական կազմակերպությունների մթերող անձնակազմի պահանջը: Մթերման-պահեստային ծախսերի մեծությունը վրա ազդում է նաև շինարարության տեղությունը: Որքան արագ իրականացվի շինարարությունը, այնքան ավելի քիչ կլինեն նյութերի պահպանման ծախսերը և նրանց կորուստները: Մթերման-պահեստային ծախսերի զգալի կրճատում է ձեռք բերվում նաև բազային և մերձօբյեկտային պահեստների ու պահեստարանների քանակի պակասեցումը, նյութերի ուղիղ փոխադրումը, պահեստավորման բարելավումը, նյութերի պահպանումն ու հաշվառումը:

Շինարարական կազմակերպությունների սպասարկող օղակներին՝ մատակարարման, տրանսպորտի և պահեստային տնտեսության գրասենյակների (բաժինների), աշխատողներն իրենց աշխատանքով կարող են զգալի չափով նպաստել նյութերի խնայողությանը: Նրանցից է կախված նախագծով ու տեխնիկական պայմաններով սահմանված մթերվող նյութերի տեսակայնության, մարկանների և չափերի պահպանումը, կառուցյին թանկարժեք և ավելորդ նյութերի մատակարարման կանխումը, նյութերի տեղափոխման ռացիոնալ եղանակների կիրառումը:

Շինարարական կազմակերպությունների ուղիղ աշխատանքի ապահովումը: Շինարարության մեջ արտադրական բոլոր ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և դրա հիման վրա շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման համար մեծ նշանակություն ունի տարվա, եռամսյակի, ամսվա, տասնօրյակի ընթացքում շինարարական կազմակերպությունների ուղիղ աշխատանքը:

Շինմոնտաժային աշխատանքները տարվում են ամբողջ

տարվա ընթացքում: Սակայն դեռևս չի հաղթահարվել տարվա առանձին ամիսների ու եռամսյակների շինարարական արտադրության որոշ անհամաչափությունը: Շինարարության ամենամեծ ծավալն ընկնում է III եռամսյակին, որը կլիմայական պայմանների տեսակետից ամենից ավելի բարենպաստըն է, և ամենաքիչը՝ I եռամսյակին: Բայց տարվա ընթացքում աշխատանքների տարբեր պայմանները շինմոնտաժային աշխատանքների արտադրության անհամաչափության արդարացում ծառայել: Շինարարական կազմակերպությունների առաջավոր կոլեկտիվները ապացուցել են շինարարության ասպարեզում ամբողջ տարվա ութմիկ աշխատանքի հնարավորությունը:

Մյուս եռամսյակների համեմատությամբ I եռամսյակում շինարարության ծավալի զգալի նվազեցումը հանգեցնում է շինարարական աշխատանքների ինքնարժեքի բարձրացման:

I եռամսյակում կատարված աշխատանքների թանկացման դեպքերի մեծ մասը բացատրվում է նոր սկսված օբյեկտներում կազմակերպական թերությունների և շինարարական կազմակերպությունների դանդաղ վերակառուցման առկայությամբ, շինարարական կազմակերպությունների կարողությունների թերօգտագործմամբ, վերադիր ծախսերի չափերի բարձրացմամբ, աշխատավարձի ֆոնդերի հարաբերական գերածախսով և պլանի համեմատությամբ շինարարական մեքենաների շահագործման գծով փաստացի ծախսումների ավելացմամբ: IV եռամսյակում զլխավորապես, նախկին թերակատարումները վերացնելու անհրաժեշտությունից ելնելով, հաճախակի թույլ է տրվում գրոհայնություն, որը հանգեցնում է արտադրության տեխնոլոգիայի խախտման և առաջ է բերում կատարված աշխատանքների վերաշտկումներ: Իսկ դա իր հերթին աշխատավարձի ֆոնդի, նյութերի և այլ ռեսուրսների, գերածախսերի, հետևապես և աշխատանքների թանկացման պատճառ է դառնում:

Կատարված հաշվարկումները, առաջավոր կառուցողների պրակտիկական ցույց են տալիս, որ ամբողջ տարվա, եռամսյակի, ամսվա և շաբաթվա ընթացքում շինարարական կազ-

մակերպությունների ութմիկ աշխատանքների դեպքում շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը կարող է դրանց նախահաշվային արժեքից իջեցվել միջին հաշվով ոչ պակաս, քան 1,5—2 տոկոսով: Առանձին կազմակերպությունների գծով այդ իջեցումը կարող է ավելի զգալի լինել:

Օրինակ, վերջին տարիներս Գլխմոնտաժային շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը փոխվել է հետևյալ կերպ.

Տարեթիվը	Բնակելի տարածությունների շահագործման հանձնումը (տոկոսներով՝ տարվա արդյունքների նկատմամբ)		Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը (տոկոսներով՝ դրանց նախահաշվային արժեքների նկատմամբ)		
	9 ամսում	IV եռամսյակում	9 ամս.	IV Եռամս.	Գծերի տոկոսը
	1955	50,7	49,3	97,5	
1958	61,9	38,1	92,6	94,0	93,0
1959	78,9	21,1	90,7	93,2	91,4
1960	77,3	22,7	91,7	94,8	92,4
1961	63,8	36,2	96,4	98,7	96,9

Բերված տվյալներից երևում է, որ առավել ութմիկ աշխատանքի դեպքում ինքնարժեքի մակարդակը իջնում է, իսկ անհամաչափ աշխատանքների դեպքում՝ ինքնարժեքը բարձրանում է:

Շինմոնտաժային աշխատանքների որակի բարձրացումը:
Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումն անխզելիորեն կապված է այդ աշխատանքների որակի բարձրացման հետ: Աշխատանքների բարձրորակ կատարումը հնարավորություն է տալիս, նախ՝ խոստացիել խոտանի ուղղման ու վերաշտկման անարտադրողական ծախսերից և, երկրորդ, հեշտացնել հաջորդող աշխատանքների կատարումը: Օրինակ, պատերի շարման ժամանակ ուղղահայացություն խիստ պահանջումը բացառում է շարվածքի ուղղման անհրաժեշտությունը, հնարավորություն է տալիս օգտագործել բարակա-

շերտ ծեփ, խնայել հարդարող բանվորների աշխատանքը և նյութերը:

«Սովետական ձեռնարկությունների արտադրանքի՝ որակը,— ասված է ՍՄԿՊ Ծրագրում,— զգալիորեն բարձր պետք է լինի, քան լավագույն կապիտալիստական ձեռնարկություններինը: Գրա համար անհրաժեշտ է կիրառել միջոցառումների լայն սիստեմ, ներառյալ հասարակական վերահսկողությունը, բարձրացնել արտադրանքի որակի ցուցանիշների դերը պլանավորման գործում, ձեռնարկությունների աշխատանքը գնահատելիս, սոցիալիստական մրցության մեջ»¹:

Շինարարական շատ կազմակերպություններ դեռ թույլ են տալիս ցածրորակ աշխատանքներ, առանձնապես շինարարության ավարտման շրջանում հարդարման և սանիտարատեխնիկական աշխատանքներ կատարելիս: Շինարարության օբյեկտները շահագործման հանձնելու նախապատրաստման ժամանակ, առանձին դեպքերում, կատարված աշխատանքների խոտանի ուղղմամբ ու տարբեր վերամշակումներով զբաղվում են մեծ քանակությամբ շինարար բանվորներ: Նման դրություն գլխավոր պատճառը շինարարության մեջ օգտագործվող նյութերի ու դետալների ցածրորակությունն է, շինարարական արտադրության տեխնոլոգիայի խախտումը, պատվիրատուի, ինչպես նաև շինարարական կազմակերպությունների ղեկավարների ու ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից աշխատանքների որակի նկատմամբ անբավարար վերահսկողությունը: Գործին լուրջ վնաս է հասցնում պատվիրատուների կողմից կապալառու կազմակերպությունների կատարած ցածրորակ աշխատանքների նկատմամբ ցուցաբերվող հաշտվողական վերաբերմունքը:

Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը սիստեմատիկորեն միջոցառումներ են անցկացնում՝ ուղղված շինարարության որակի բարձրացման ուղղությամբ, ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1955 թվականին ընդունած «Շինարարության հետագա ին-

1 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 508, Հայպետհրատ, 1962:

դուստրացման, որակի բարելավման և արժեքի իջեցման միջոցառումների մասին» որոշման մեջ նախատեսվում է բարձրացնել շինարարական և թնտեսական այլ կազմակերպությունների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքների որակի համար: Բոլոր տեսակի աշխատանքների ընդունումը պետք է իրականացվի տեխնիկական պայմանների պահանջներին լիովին համապատասխան: Շինարարական կազմակերպությունների ղեկավարները պարտավոր են թույլ չտալ շինարարական այնպիսի նյութերի ու շինվածքների ընդունում ու օգտագործում, որոնք չեն բավարարում նախագծերի, գործող ստանդարտների և տեխնիկական պայմանների պահանջներին: Շինմոնտաժային տրեստների, այդ թվում մասնագիտացված, ինչպես նաև տերիտորիալ տեսակետից տրեստներից հեռու ընկած շինմոնտաժային խոշոր վարչությունների կազմում ստեղծված են շինարարական լաբորատորիաներ: Շինարարական կազմակերպությունների խնդիրներից մեկն այն է, որ շինարարական լաբորատորիաներն ապահովեն որակյալ կադրերով և դրանք հագեցվեն սարքավորումներով՝ շինարարական աշխատանքների և հատկապես շենքի ու կառույցի հարդարման աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողություն ուժեղացնելու համար: Որոշման մեջ նախատեսված է սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել այն անձանց, ովքեր մեղավոր են թերավարտ ու ցածրորակ աշխատանքներով օբյեկտները հանձնման ու շահագործման ներկայացնելու գործում:

ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՍՄ Մինիստրների Սովետի 1961 թվականի նոյեմբերի 7-ի որոշման մեջ շինարարական և մոնտաժային տրեստների, պատվիրատու ձեռնարկությունների, մինիստրությունների, գերատեսչությունների, տեղական պարտիական կազմակերպությունների, ինչպես նաև միութենական ռեսպուբլիկաների քաղաքների ղեկավարների ուղղությունը հրավիրվում է վերջին ժամանակներս շինարարական և մոնտաժային աշխատանքների որակի նկատմամբ եղած ուղղություն թուլացման վրա: Որոշումը պարտիական, սովետական և հասարակական կազմակերպություններին պարտավորեցնում է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել ուժեղացնելու վերահսկողությունը շինարարության և թողարկվող շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ու դետալների որակի նկատմամբ:

Բանվորական բրիգադաների կատարած շինմոնտաժային, աշխատանքները՝ գոյություն ունեցող կանոնների համաձայն, ընդունում է շինարարական կազմակերպության ինժեներատեխնիկական անձնակազմը: Շինարարական կազմակերպությունների՝ գլխավոր կապալառուների աշխղեկները աշխատանքներն ընդունում են ենթակապալառուներից, իսկ պատվիրատուները՝ գլխավոր կապալառուներից:

Ընդունման պարտադիր պայմաններից մեկը շինարարական և մոնտաժային աշխատանքների որակի նկատմամբ պահանջների կատարման խիստ ստուգումն է:

Իրական արդյունքներ է տալիս կատարված աշխատանքների ընդունմանը այն բանվորների մասնակցությունը, որոնք պետք է կատարեն աշխատանքների հաջորդող տեսակները (օրինակ, ծեփագործների մասնակցությունը քարտաշներից աշխատանքներ ընդունելիս, ներկարարներինը՝ ծեփագործներից աշխատանքներ ընդունելիս և այլն): Աշխատանքների որակի բարձրացմանը նպաստում են նաև այդ գործին բանվորների մասնակցության այնպիսի ձևերը, ինչպես երաշխիքային պասպորտների հանձնումը, որակի բրիգադային մարկաների կիրառումը՝ բրիգադիրների ազգանունը կրող դրոշմներ, որոնք դրվում են տվյալ բրիգադի տեղակայած կոնստրուկցիաների վրա: Բրիգադային որակի մարկաների ներդրումը բարձրացնում է բրիգադների պատասխանատվությունն իրենց կատարած աշխատանքի որակի համար: Ընդունման նման կազմակերպումը ապահովում է աշխատանքների որակի է՛լ ավելի մանրազնին ստուգումը և ունի դաստիարակչական մեծ նշանակություն:

Շինարարության որակը բարելավելու համար կարևոր նշանակություն ունի արտադրանքի գերազանց որակի համար ծավալված սոցիալիստական մրցությունը:

Հաշվարկային հարաբերությունների բարելավումը շինարարության մեջ: Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման համար մեծ նշանակություն ունի շինարարական կազմակերպությունների հաշվարկների կարգավորումը մատակարարողների, տրանսպորտային, մեքենաշահագործման և այլ տնտեսությունների հետ:

Ստուգումները ցույց են տալիս, որ դեռևս թույլ են տրվում այնպիսի դեպքեր, երբ մատակարարների հաշիվներում նյութերի քանակը և տեսակայնությունը հաճախ բարձրացվում են փաստորեն կառույցում ստացվածների համեմատությամբ: Շատ դեպքերում շինարարական կազմակերպություն-

Ները անարտադրողաբար աշխատանք ու նյութեր են ծախսում արդյունաբերական ձեռնարկություններից ստացված շինարարական դետալների թերությունները շտկելու վրա, իսկ երբեմն այդ թերություններն առաջ են բերում նույնիսկ կոնստրուկցիաների բարդացման անհրաժեշտություն: Այսպես, միջնորմային սալերի սահմանված հաստության խախտումը անհրաժեշտ է դարձնում կիրառել լրացուցիչ սվաղ: Դրանից կարելի էր խուսափել պահպանելով սալերի սահմանված հաստությունն ու հարթությունը: Մինչդեռ մատակարարող ձեռնարկությունները շինարարական կազմակերպությունների լրացուցիչ ծախսերը չեն փոխհատուցում; որովհետև նրանց համապատասխան պահանջներ չեն ներկայացվում:

Ինքնարժեքի իջեցման գործում մեծ նշանակություն ունի գների սիստեմի հետագա կատարելագործումը: Ներկայումս բերովի շինարարական նյութերի համարյա բոլոր տեսակների համար սահմանված են՝ ֆրանկովագոն նշանակման կայացրան մեծածախ գներ: Գների այդ սիստեմը վաճառահանման կազմակերպություններին խթանում է շինանյութերի փոխադրումները պլանավորել տրանսպորտի առավել տնտեսող տեսակներով, կրճատել փոխադրումների հեռավորությունը և վերացնել հանդիպակաց բեռնահոսքերը:

Ավտոմոբիլային տրանսպորտով շինանյութերի ու դետալների կենտրոնացված փոխադրումների դեպքում առավել նպատակահարմար է մատակարարների հետ հաշվարկները կատարել ֆրանկո-մերձօբյեկտային պահեստ միասնական գներով, անկախ առաքման փաստացի հեռավորությունից: Այս դեպքում տրանսպորտային ծախսերը ֆրանկո-մերձօբյեկտային պահեստ միասնական գների մեջ են մտցվում՝ ելնելով փոխադրումների միջին հեռավորությունից, հաշվարկված փոխադրումների ամենից ավելի ռացիոնալ սխեմայի հիման վրա: Ընդ որում տրանսպորտի ծառայությունների համար հաշվարկները կատարում են ոչ թե շինարարական, այլ մատակարարման կազմակերպությունները:

Կարևոր է նաև իրականացնել շինարարական մեքենաների շահագործման հաշվարկների սիստեմի հետագա կատարե-

լագործումը, այն հաշվով, որ նյութապես շահագրգռել մեքենաշահագործման տնտեսություններին և տեխնիկան սպասարկող անձնակազմին, նրանց արտադրողականությունը բարձրացնելու մեջ:

Այդ նպատակին համապատասխանում է ավարտված մեքենայական աշխատանքների մեկ միավորի, օրինակ՝ 1 խոր մ հանված և տեղափոխված հողի կամ 1 բառ մ տերիտորիայի հարթեցման, հաշվարկների սխտեմը: Մեքենաների աշխատանքի հաշվարկների առավել առաջադիմական ձև է հանդիսանում ըստ օբյեկտի աշխատանքի որոշակի տեսակների լրիվ կատարված ծավալի վճարման սխտեմը: Նման սխտեմի դեպքում մեքենաների աշխատանքի համար վարձատրությունը մեքենաշահագործման տնտեսություններին կատարվում է այն նույն կարգով, ինչպես մասնագիտացված ենթակապալային կազմակերպությունների կատարած աշխատանքի համար, այսինքն՝ իրենց կատարած շինմոնտաժային աշխատանքների ընդունման ակտերի հիման վրա: Այն դեպքերում, երբ մեքենաները կատարում են ո՛չ թե աշխատանքների ամբողջ կոմպլեքսը, այլ միայն առանձին օպերացիաներ, դրանց շահագործման հաշվարկները արվում են կատարված օպերացիաների քանակով: Միաժամանակ սահմանվում է շինարարական կազմակերպությունների պատասխանատվությունը մեքենաների լրիվ բեռնվածությունն ասպհովելու համար:

Աշխատած մեքենա-հերթափոխների քանակի հաշվարկների սխտեմը, անկախ մեքենաների արտադրանքից, նպատակահարմար է կիրառել միայն առանձին դեպքերում, երբ հնարավոր չի մեքենաների արտադրանքի հաշվառում կազմակերպել:

4. ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի սխտեմատիկ իջեցման խնդրի հաջող կատարումը շատ բանով կախված է

շինարարական առանձին կազմակերպությունների ինքնարժեքի ճիշտ պլանավորումից: Ինչպես իջեցված, այնպես էլ անհիմն բարձրացված պլանները շինարարական կազմակերպությունների աշխատողների կոլեկտիվներին չեն մոբիլիզացնում ինքնարժեքի իջեցման ռեզերվների հայտաբերման և եղած ռեզերվների օգտագործման համար: Պլանները պետք է լինեն լարված, բայց ռեալ, հիմնվեն տեխնիկա-տնտեսական հաշվարկների վրա:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքների որոշումը: Ի տարբերություն արդյունաբերության, որտեղ ինքնարժեքի իջեցման առաջադրանքները սահմանվում են նախորդ տարվա ինքնարժեքի փաստացի մակարդակի համեմատությամբ, շինարարության մեջ այդ առաջադրանքները որոշվում են շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքի համեմատությամբ:

Սակայն առաջադրանքի չափը որոշելիս հաշվի է առնվում նաև ինքնարժեքի այն փաստացի մակարդակը՝ նախահաշվային արժեքի համեմատությամբ, որը տվյալ շինարարական կազմակերպությունը ձեռք է բերել նախորդ տարում, ինչպես նաև փաստորեն ձեռք բերված մակարդակի համեմատությամբ ինքնարժեքի հետագա իջեցման եղած ռեալ ճնարավորությունները:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը շինարարական կազմակերպության ամբողջ արտադրատնտեսական գործունեության ընդհանրացնող ցուցանիշն է և կախված է այդ գործունեության բոլոր կողմերի վիճակից: Ուստի ինքնարժեքի պլանային մակարդակը կարող է ճիշտ որոշվել միայն շինարարական կազմակերպության աշխատանքների պլանի մյուս բոլոր հատվածների հետ այն լրիվ կապակցելու դեպքում:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքի հաշվարկման հիմքում ընդունվում են նախորդ տարվա փաստացի ինքնարժեքի վերլուծության տրվյալները, ինչպես նաև պլանի համապատասխան բաժիններ:

րում՝ աշխատանքի կազմի ու ծավալի, աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատողների քաջակի ու աշխատավարձի ֆոնդերի, վարչա-տնտեսական և այլ ծախսերի գծով շինարարական կազմակերպության համար սահմանված առաջադրանքներն ու լիմիտները:

Նախորդ տարվա ինքնարժեքի փաստացի մակարդակը որոշվում է շինարարական և մոնտաժային աշխատանքների կատարման ծախսերի հաշվետվության տվյալների հիման վրա: Ընդամին նախահաշվային արժեքի հետ փաստացի ծախսումների համադրելիության համար փաստացի ծախսումներից հանում են այն ծախսերը, որոնք փոխհատուցման կարգով ծածկվում են նախահաշվային արժեքից դուրս:

Օրինակ, եթե նախընթաց տարում կատարված աշխատանքների նախահաշվային ինքնարժեքը կազմել է 1800 հազ. ռուբ., իսկ փաստացի ծախսերը՝ 1700 հազ. ռուբ., այդ թվում նախահաշվային արժեքից դուրս փոխհատուցման կարգով ծածկվող ծախսերը՝ 36 հազ. ռուբ., ապա նախահաշվային արժեքի նկատմամբ ինքնարժեքի փաստացի մակարդակը կկազմի՝

$$\frac{1700 - 36}{1800} \times 100 = 92,4 \text{ տոկոս:}$$

Ինքնարժեքի իջեցումը՝ նախորդ տարվա փաստացի մակարդակի համեմատությամբ, սահմանվում է հլնելով նախօրոք քննարկված շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման հիմնական ուղղությունների հաշվարկից:

Բանվորների միջին աշխատավարձի աճը դերազանցող աշխատանքի արտադրողականության աճի շնորհիվ ինքնարժեքի հնարավոր իջեցումը հաշվարկվում է ըստ աշխատանքի պլանի և նախընթաց տարում բանվորների արտադրանքի ու աշխատավարձի վերարերյալ հաշվետվության տվյալների համապատասխան:

Այսպես, եթե աշխատանքի պլանով նախատեսված է քնթացիկ տարում, նախորդ տարվա համեմատությամբ, աշխատանքի արտադրողականության 11 տոկոսի աճ՝ բանվորների միջին տարեկան աշխատավարձի 3,5 տոկոսի աճման դեպքում, ապա աշխատավարձի ծախսումների հարաբերական իջեցումը կկազմի՝

$$100 - \left(\frac{100 + 3,5}{100 + 11} \right) \times 100 = 6,8 \text{ տոկոս:}$$

Տվյալ օրինակում աշխատանքի արտադրողականության ընդհանուր բարձրացման 60 տոկոսը պլանավորվում է ձեռք բերել հավաքովի կոնստրուկցիաների ավելի լայն կիրառման միջոցով: Մնացած 40 տոկոսը նախատեսվում է ապահովել շինարարական կազմակերպության կողմից մի շարք կազմակերպական-տեխնիկական այնպիսի միջոցառումների անցկացման ուղիով, որոնք նախահաշվային արժեքի համեմատությամբ կիջեցնեն ինքնարժեքը:

Ընդ որում, եթե աշխատավարձի փաստացի ծախսումները նախորդ տարում կազմել են կատարված շինմոնտաժային աշխատանքների բոլոր ծախսերի 20 տոկոսը, ապա սվյալ գործոնի հաշվին ընթացիկ տարում ինքնարժեքի նախատեսված ընդհանուր իջեցումը՝ նախորդ տարվա մակարդակի համեմատությամբ, կկազմի՝

$$20 \times \frac{6,8}{100} \times \frac{40}{100} = 1,36 \text{ տոկոս:}$$

Պլանային տարում նյութերի համար ծախսումների կրճատումը կարելի է հաշվարկել, ելնելով նախընթաց տարվա փաստացի ծախսերի համեմատությամբ շինմոնտաժային աշխատանքների վրա նյութերի ծախսման նորմայի նախատեսված կրճատումից: Այդ հաշվարկները ճշգրտվում են ընթացիկ տարում շինարարական կազմակերպության կողմից նյութերի ծախսման նորմաների պահպանման վերաբերյալ ստուգումների արդյունքների ընտրովի սվյալների հիման վրա:

Օրինակ, եթե անցած տարվա ստուգումներից պարզվեց, որ նորմաների համեմատությամբ նյութերի գերաժախսը միջին հաշվով 2 տոկոս է, և եթե միաժամանակ նյութերի վրա փաստացի ծախսումների տեսակարար կշիռը կազմել է շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր արժեքի 53 տոկոսը, իսկ ընթացիկ տարում պլանավորվում է նյութերի ծախսը նորմաների համեմատությամբ կրճատել 0,5 տոկոսով, ապա նյութերի ծախսի քանակական կրճատման հետևանքով ինքնարժեքի հնարավոր իջեցումը՝ նրա նախորդ տարվա փաստացի մակարդակի համեմատությամբ (նյութերի ծախսման միևնույն տեսակարար կշռի դեպքում) կկազմի 1,3 տոկոսը:

$$53 \times \frac{2+0,5}{100}$$

Նույնպիսի ճանապարհով կարող է հաշվարկվել ինքնարժեքի իջեցումը նաև ուղղակի ծախսումների այլ հոդվածներով:

Պլանային տարում վերադիր ծախսերի հնարավոր՝ կրճատումը հաշվարկվում է այդ ծախսերի կառուցվածքի վերաբերյալ տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով ծախսերի առանձին տեսակների կախվածութունը դրանց մեծության վրա ազդող հիմնական գործոններից:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքը հաշվարկելիս նախատեսվում է նաև վերադիր ծախսերի ուղղակի կրճատում՝ բնակարանային-կոմունալ տնտեսության գործունեութունը բարելավելու, ժամանակավոր, ոչ-տիտղոսային կառուցումների, ինվենտարի, գործիքների մաշվածքի ծախսերը կրճատելու միջոցով և այլն: Անարտադրողական ծախսումների վերացման ուղիով աշխատանքների ինքնարժեքի իջեցումը սովորաբար հաշվի է առնվում նախընթաց ժամանակաշրջանում կատարված այդ ծախսումների փաստացի լրիվ մեծության չափով:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման միջոցառումները նախատեսվում են շինարարական կազմակերպության տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանում: Պլանային բոլոր միջոցառումների ընդհանուր արդյունավետութունը պետք է ապահովի ինքնարժեքի իջեցման սահմանված առաջադրանքի կատարումը:

Շինարարության մեջ ինքնարժեքի պլանավորման աշխատանքների կարևորագույն տեղամասերից մեկը շինարարական կոնստրուկցիաների, դետալների և նյութերի, որոնք շինարարական վարչութուններին մատակարարում են մատակարարման գրասենյակները, ինչպիս նաև օժանդակ արտադրության արտադրանքի և տրևստների մեքենաշահագործման, տրանսպորտային և այլ տնտեսութունների ծառայութունների պլանա-հաշվարկային զնեբի ռոզումն է:

Մատակարարման գրասենյակների մատակարարման շինարարական կոնստրուկցիաների, դետալների և նյութերի պլանա-հաշվարկային զնեբի հիմքում ընդունվում են ո՛չ թե

նախահաշվային, այլ պլանային տարում գործող արդյունաբերության բացթողման գները, բեռների փոխադրումների տարիֆները, բեռնման-բեռնաթափման աշխատանքների գնահատումները և մթերման-պահեստային ծախսերի նորմաները:

Բերենք շինարարական կոնստրուկցիաների, դետալների և նյութերի պլանա-հաշվարկային գներ կազմելու օրինակ (տե՛ս 535 էջի աղյուսակը): Այդ հաշվարկում կոնստրուկցիաների բացթողման գները և փաթեթավորման նյութերի արժեքը վերցված են գործող գնացուցակից: Միաժամանակ բացթողման գնի մեջ մտցված են նաև մատակարար-գործարանի՝ կոնստրուկցիաները վազոն (ավտոմեքենա) բեռնելու ծախսերը: Տրանսպորտային ծախսերն ընդունված են գործող ավտոփոխադրման տարիֆներով, փոխադրման պայմանական տարածության 25 կմ համար (մատակարարող գործարանից մինչև շինարարությունը)՝ ներառյալ կոնստրուկցիաների բեռնաթափման ծախսերը: Մթերման-պահեստային ծախսերն ընդունված են այդ ծախսերի գործող նորմայով (կոնստրուկցիաների հայ-թայթման արժեքի 2,1 տոկոսը):

Օժանդակ արտադրությունների արտադրանքի և մեքենաշահագործման, տրանսպորտային ու տրեստի այլ տնտեսությունների ծառայությունների պլանա-հաշվարկային գները սահմանվում են արտադրանքի և այդ ծառայությունների պլանային ինքնարժեքի մակարդակով: Այլ-կերպ ասած, նշված արտադրանքի ու ծառայության պլանա-հաշվարկային գները կարող են նախահաշվային արժեքներից շեղվել, որովհետև դրանք հաշվի են առնում արտադրության կազմակերպման մեջ, նորմաներում և տարիֆներում (նախահաշիվներում ընդունված մակարդակի համեմատ) եղած փոփոխությունները:

Պլանա-հաշվարկային գները հաստատվում են տրեստի կողմից: Դրանք կիրառվում են շինմոնտաժային աշխատանքներ կատարելու ժամանակ շինարարական կազմակերպությունների ծախքերը պլանավորելիս և ներտրեստային ստորաբաժանումների միջև հաշվարկներ կատարելու համար:

Պլանա-հաշվարկային գները կարևոր դեր են խաղում շինարարության ինքնարժեքի իջեցման համար պայքարում:

Դրանք հնարավորություն են տալիս սահմանելու շինմոնտա-
ժային աշխատանքների կատարման ծախսերի ռեալ հիմնա-
վորված գումարը: Մասնավորապես, պլանա-հաշվարկային
գները կազմելիս հաշվի են առնվում սեփական օժանդակ
արտադրության արտադրանքի էժանացման, նյութերի փո-
խադրման հեռավորությունը կրճատելու, տրանսպորտային
միջոցների առավել տնտեսող տեսակներ կիրառելու, հայ-
թայթման-պահեստային ծախսերը կրճատելու հնարավորու-
թյունները և ծախսումների իջեցմանը նպաստող այլ միջո-
ցառումներ: Ներտրեստային տնտհաշվարկային ստորաբա-
ժանումների պլանա-հաշվարկային գների և նրանց մատա-
կարարած նյութերի, դետալների, կոնստրուկցիաների, մեքե-
նաշահագործման, տրանսպորտային և այլ տնտեսություն-
ների ծառայությունների համար փաստացի ծախսումների մի-
ջև եղած տարբերությունը արտացոլվում է նրանց հաշվե-
կշիռներում, միաժամանակ, ըստ տրեստի ամփոփ հաշվետ-
վության վերագրվում են շինմոնտաժային աշխատանքների
ինքնարժեքին: Ներտրեստային ստորաբաժանումների միջև
տնտհաշվարկային հարբերությունների կազմակերպման
նման կարգը բարձրացնում է դրանցից յուրաքանչյուրի պա-
տասխանատվությունը ֆինանսա-տնտեսական գործունեու-
թյան արդյունքների համար: Այն թույլ է տալիս տեսնելու
տրեստների մատակարարման գրասենյակների, օժանդակ
արտադրության, մեքենաշահագործման, տրանսպորտային և
այլ տնտեսությունների վերջնական արդյունքները և բացա-
ռում է շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի վրա
ազդող պլանա-հաշվարկային գներից տարբեր տեսակի շե-
ղումները շինարարական սկզբնական կազմակերպու-
թյունների հաշվեկշիռներին վերագրելու հնարավորությունը:

Արտադրության ծախսումների նախահաշիվը: Շինարա-
րական կազմակերպությունների շինֆինպլանի կազմում մյուս
փաստաթղթերի հետ միասին մշակվում է նաև շինմոն-
տաժային աշխատանքների կատարման ծախսերի նախա-
հաշիվը (արտադրության նախահաշիվը): Այն որոշում է
ինքնարժեքի պլանային մակարդակը և դրա իջեցման չափը

ծախսերի առանձին հոդվածներով՝ նախահաշվային արժեքի և նախընթաց տարվա փաստացի ծախսումների համեմատությամբ:

Արտադրության նախահաշիվը կազմում են ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող բոլոր սկզբնական շինարարական և մոնտաժային կազմակերպությունները: Ընդ որում գլխավոր կապալառուների դերում հանդես եկող շինարարական կազմակերպությունները նշված նախահաշիվները կազմում են միայն այն աշխատանքների համար, որոնք կատարվելու են սեփական ուժերով, իսկ ենթակապալային կազմակերպություններին հանձնարարված աշխատանքների համար վերջիններս մշակում են արտադրության իրենց առանձին նախահաշիվները:

Եթե շինարարական կազմակերպությունը աշխատանքները տանում է միաժամանակ մի շարք կառույցներում, ապա ճիշտ այնպես, ինչպես մի կառույցում շինմոնտաժային աշխատանքներ կատարելու ժամանակ, նա կազմում է միայն մեկ արտադրության նախահաշիվ, որի մեջ մտցնում է ամբողջ շինարարության շինմոնտաժային աշխատանքների կատարման ծախսումները: Այսպիսով, արտադրության նախահաշիվն իրենից ներկայացնում է կարևորագույն ամփոփիչ մի փաստաթուղթ, որի մեջ արտացոլվում են շինմոնտաժային կազմակերպությունների բոլոր ծախսերը պլանային ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում):

Արտադրության նախահաշվում շինմոնտաժային աշխատանքների պլանային ինքնարժեքը բոլոր դեպքերում հաշվարկվում է գործող դներին ու նորմաների հիման վրա՝ հանելով տեխնիկական զարգացման և կազմակերպական-տնտեսական միջոցառումների պլանով նախատեսված ինքնարժեքի իջեցման շափը, ինչպես նաև պլանային կուտակումները: Այն դեպքում, եթե շինարարական կազմակերպությունը պատվիրատուից աշխատանքների նախահաշվային արժեքում չնախատեսված թանկացնող գործոնների համար փոխհատուցման գումարներ է ստանում, աւղ լրացուցիչ գումարները, արտադրության նախահաշվի առանձին հոդվածներով, ավել-

լացվում են շինմոնտաժային աշխատանքների պլանային ինքնարժեքին:

Արտադրության նախահաշվում հաշվի են առնվում ո՛չ թե շինմոնտաժային աշխատանքների կատարման միջին պայմանները, ինչպես դա տեղի ունի շինարարական նախահաշիվները կազմելիս, այլ շինարարական կազմակերպության շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծրագրի մեջ մտցված այս կամ այն շինարարության (օբյեկտի, կառուցվածքի) կոնկրետ պայմանները: Դա ապահովվում է արտադրության նախահաշիվները կազմելու ժամանակ նյութերի, կոնստրուկցիաների, դետալների և մեքենաշահագործական տնտեսությունների ծառայությունների պլանա-հաշվարկային գների կիրառման, ինչպես նաև տեխնիկական զարգացման պլանի և կազմակերպական-տնտեսական միջոցառումների ծախսերի համապատասխան տարրերի նախահաշվային արժեքների իջեցմանը՝ դիֆերենցված չափեր սահմանելու միջոցով:

Արտադրության նախահաշվում ծախսերի առանձին տարրերի պլանային գումարներն ընդունվում են շինֆինպլանի մյուս բաժիններում հաշվարկված տվյալներով: Այսպես, հիմնական աշխատավարձի գումարը ընդունվում է շինֆինպլանի տվյալների հիման վրա, որոնք հաշվարկված են աշխատանքի պլանում: Նյութերի պլանային ծախսումները որոշվում են պլանա-հաշվարկային գները համապատասխան նյութերի, կիսաֆաբրիկատների, կոնստրուկցիաների ու դետալների քանակով բազմապատկելու և ստացված բոլոր արդյունքները գումարելու միջոցով: Շինարարական մեքենաների շահագործման ծախսումները հաշվարկվում են մեքենաների աշխատանքի քանակական ցուցանիշները աշխատանքների, կամ ծառայությունների համապատասխան տեսակների պլանա-հաշվարկային գների վրա բազմապատկելով: Այլ ուղղակի ծախսերի պլանային գումարը որոշվում է նախընթաց տարում նրանց փաստացի մակարդակի տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով պլանային տարում ծախսումները կրճատելու ուղղությամբ նախատեսված միջոցառումները:

Եթե շինարարական կազմակերպության մեջ պլանահաշվարկային գներ չեն կիրառվում, ապա նյութերի ծախսումների և շինարարական մեքենաների շահագործման գծով արտադրության նախահաշիվը կազմվում է նախահաշվային առանձին գնահատումների, պրեյսկուրանտների, գնացուցակների հիման վրա, ընդ որում նշված հոդվածներով ծախսումների պլանային գումարը որոշելիս նախահաշվային արժեքից հանվում է պլանային տնտեսամբ: Այնուհետև ստացված գումարներին ավելացնում են այն ծախսերը, որոնք փոխատուցման և արտոնությունների կարգով ծածկվում են նախահաշվային արժեքից դուրս:

Շինարարական տրեստի արտադրության նախահաշիվը կառույի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

Ծախսումների անվանումը	Ծախսումների գումարը հաստատված նախահաշվային արժեքով	Տեսակարար կշիղը նախահաշվային արժեքում (տոկոսներով)	Ինքնարժեքի իջեցման առաջադրանքը (հազ. ուրբ.)	Փոխհատուցման կարգով ծածկվող ծախսերը (հազ. ուրբ.)	Ծախսումների գումարը ըստ պլանային ինքնարժեքի (սյուն. 2 + սյուն. 5 — սյունակ 4) (հազ. ուրբ.)
Ուղղակի ծախսումներ					
Կոնստրուկցիաներ, նյութեր և դետալներ	9029,4	56,5	96,0	130,0	9063,5
Բանվորների հիմնական աշխատավարձ	3078,1	19,0	32,0	128,7	3134,8
Շինարարական մեքենաների և մեխանիզմների շահագործման ծախսեր	959,4	6,0	28,0	14,4	945,4
Այլ ուղղակի ծախսումներ	639,6	4,0	16,0	9,6	633,2
Վերադիր ծախսեր	1933,3	12,1	27,9	110,0	2015,4
Ընդամենը	15599,9	97,6	199,9	392,7	15792,7
Պլանային կուտակումներ	390,1	2,4	—	—	—
Ընդամենը	15990,0	100,0	—	—	—

Վերադիր ծախսերի նախահաշիվը: Վերադիր ծախսերի պլանային գումարները որոշելու համար կազմվում է այդ ծախսերի նախահաշիվը:

Վերադիր ծախսերի նախահաշիվների առանձին հոդվածների գումարները որոշվում են շինարարական կազմակերպության աշխատանքների պլանի ցուցանիշների վրա հենված հաշվարկներով, որոնք որոշում են համապատասխան հոդվածների ծախսերի մեծությունը:

Վերադիր ծախսերի նախահաշիվները կազմում են սկզբնական շինարարական կազմակերպությունները այն վերադիր և վարչա-տնտեսական ծախսերի լիմիտների սահմաններում, որոնք նրանց համար սահմանել են վերադաս կազմակերպությունները: Վերջիններս իրավասու են շինարարական կազմակերպությունների ֆինանսական պլաններում տարբերակելու վերադիր ծախսերի այն նորմաները, որոնք շինարարական նախահաշիվներում նախատեսվում են համապատասխան կառույցների ու շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների համար՝ պլանային կուտակումների հաշվին ու սահմաններում: Նման տարբերակումը հաշվի է առնում շինարարական կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների (բնակարանային շինարարություն, արդյունաբերական շինարարություն և այլն) ու աշխատանքների առանձին տեսակների (հողային աշխատանքներ, կոնստրուկցիաների, դետալների և բլոկների մոնտաժում, հարդարման, սանիտարա-տեխնիկական աշխատանքներ և այլն) բնույթը: Վերադիր և վարչա-տնտեսական ծախսերի սահմանային չափերի տարբերակումը շինարարության մեջ ներկայումս խիստ կարևոր նշանակություն է ձեռք բերում՝ մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների ուժեղ զարգացման կապակցությամբ:

Վերադիր ծախսերի տարբերակված պլանավորում իրականացնելով, վերադաս կազմակերպությունները իրավասու չեն ավելացնելու այդ ծախսերի ընդհանուր գումարը կամ պակասեցնելու տրեստի, գլխավարչության, ժողտնտխորհի կամ մինիստրության՝ ամբողջությամբ վերցրած, աշխա-

տանքների պլանային ծավալին ընկնող պլանային կուտակումների ընդհանուր գումարը: Իրենց հերթին, ստորագրած շինարարական կազմակերպությունները վերադիր ծեխսերի նախահաշիվները կազմելիս իրավասու չեն գերազանցելու իրենց համար սահմանված այն լիմիտները, որոնք կարող են կառույցների շինարարական նախահաշիվներում նախատեսված նորմաներից ավել կամ սլակաս լինել:

Ներհում որպես օրինակ բերվում է վերադիր ծախսերի կրճատված նախահաշիվը

Ծախսերի հոդվածների անվանումը	Տոկոսներով՝ պլանային ինքնարժեքի ուղղակի ծախսումների նկատմամբ	Փումարը (հազ. ոտք.)
Վարչա-տնտեսական ծախսեր	5,5	757,9
Բանվորների լրացուցիչ աշխատավարձ	1,5	206,7
Սոցիալական ապահովագրության հատկացումներ	1,4	192,9
Աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի ծախսեր	0,3	41,3
Բնակարանային-կոմունալ ծառայություններ	1,6	220,5
Հրշեջ և պահակային խմբերի պահպանման ծախսեր	0,8	110,2
Ոչ տիտղոսային ժամանակավոր կառուցվածքների և հարմարանքների, ցածրարժեք գույքի և գործիքների մաշվածք	1,4	192,9
Այլ վերադիր ծախսեր	2,1	293,0
Ընդամենը	14,6	2015,4

Ցուրաքանչյուր տարի վերադիր ծախսերի սահմանված պլանային շափերը հաշվի են առնում շինարարական աշխատանքների կազմակերպումը բարելավելու, կոմպլեքսային մեքենայացման արմատավորման, շինարարական կազմակերպությունների խողորացման, հաշվառման ու հաշվետվության կրճատման ու պարզեցման առաջադրանքները և այլն:

Սակայն շինարարական շատ կազմակերպություններ թույլ են տալիս վերադիր ծախսերի պլանային գումարների ավելացումներ: Վերադիր ծախսերի նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով շինարարական կազմակերպություններն ընդհանուր նախահաշվից բացի, կազմում են վերադիր ծախսերի մի շարք առավել կարևոր տեսակների առանձին նախահաշիվներ: Սովորաբար այդպիսի նախահաշիվները կազմվում են վարչա-տնտեսական ծախսերի, բնակարանային-կոմունալ տնտեսություն, ինչպես նաև օբյեկտների պահակախմբի պահման, աշխատանքի պաշտպանության ու անվտանգության տեխնիկայի և ժամանակավոր անտիտղոս կառույցներ պատրաստելու ծախսերի գծով:

Վարչա-տնտեսական ծախսերի պլանային գումարների հաշվարկը կատարվում է վարչական անձնակազմի սահմանված թվի հաշվով և տեղական ֆինանսական օրգաններում գրանցված աշխատավարձի դրույքներով: Անձնակազմը պահելու համար ընկնում է վարչա-տնտեսական ծախսերի նախահաշվով նախատեսված ամբողջ ծախսերի մոտ 80 տոկոսը: Հաշվարկի մնացած մասը կատարվում է նախորդ տարվա հաշվետվության տվյալների հիման վրա: Վերադաս կազմակերպությունների պահման հատկացումները նախահաշվի մեջ են մտցվում այդ կազմակերպությունների կողմից սահմանված չափերով: Վարչա-տնտեսական ծախսերի նախահաշիվը խոշոր կազմակերպող դեր է խաղում շինարարության մեջ կառավարչական ծախսերը տնտեսելու համար մղվող պայքարում:

Բնակարանային-կոմունալ տնտեսության պլանային ծախսերի չափը սահմանվում է այդ տնտեսության եկամուտների ու ծախսերի նախահաշվի հիման վրա: Շինարարական շատ կազմակերպություններ անմիջականորեն շահագործում են մեծ քանակությամբ բնակելի տներ, որտեղ ապրում են շինարար բանվորների ընտանիքները: Բացի դրանից, տունհանրակացարաններում ապրում են բանվոր-միայնակները, որոնցից գանձվող բնակարանի և կոմունալ ծառայություն-

ների վարձը մոտ 1,5—2 անգամ ավելի ցածր է բնակարանային-կոմունալ տնտեսության փաստացի ծախսերից:

ՍՍՌՄ-ում բնակելի տարածության և կոմունալ ծախսայնության ներքին վարձը աշխարհում ամենացածրն է: Բնակարանների որակը տարեցտարի բարելավվում է, հատկապես նոր կառուցված տները շահագործման հանձնելու շնորհիվ, որոնք, որպես կանոն, ունեն կուլտուրական և առողջ կյանքի ու հանգստի համար բոլոր անհրաժեշտ հարմարությունները:

Սակայն ներկայումս շինարարական կազմակերպությունների բնակելի տների շահագործման ծախսերը դեռևս շարունակում են բավականին բարձր մնալ: Դրանք չեն ծածկվում այն եկամուտներով, որոնք շինարարական կազմակերպությունների բնակարանային-կոմունալ տնտեսությունները ստանում են տների բնակիչներից: Բնակարանային-կոմունալ տնտեսությունների նախահաշիվներում, առաջացած ճեղքվածքը նախատեսվում է շինարարական կազմակերպությունների վերադիր ծախսերի նախահաշիվներում:

Պահակախումբ պահելու ծախսումների հաշվարկը կատարվում է, ելնելով պահակախմբի աշխատողների պլանային թվից և աշխատավարձի դրույքներից: Այն դեպքում, եթե շինարարական կազմակերպությունն օգտվում է կողմնակի կազմակերպությունների ծառայությունից, որոնք օբյեկտների պահպանությունն իրականացնում են պայմանագրերով, պահակության ծախսերը ընդունվում են պայմանագրերում սահմանված գումարներով:

Սովետական պետությունը մեծ նշանակություն է տալիս բանվորների ու ծառայողների աշխատանքի պաշտպանությանը: Աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի ծախսերը հաշվում են համապատասխան միջոցառումների կիրառման ծախսերի ուղղակի հաշվարկման սովորական մեթոդով:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար մեծ նշանակություն ունի շինարարական յուրաքանչյուր կազմակեր-

պուլթյան ինքնարժեքի մակարդակի նկատմամբ սխտեմատիկ վերահսկողութիւնը:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի նկատմամբ վերահսկողութիւնն կարևորագույն ձևը աշխղեկների տեղամասերում աշխատավարձի ու նյութերի ֆոնդերի ծախսման վրա սխտեմատիկ հսկելն է: Այդ վերահսկողութիւնն իրականացվում է աշխատանքների մեկ միավորին և շենքերի ու կառուցցների կոնստրուկտիվ տարրերին ընկնող աշխատավարձի ու նյութերի ծախսման պլանային նորմատիվների, աշխատանքների կատարված ծավալի և աշխատավարձի ու նյութերի փաստացի ծախսման տվյալների հիման վրա: Վերահսկողութիւնն խնդիրն է՝ կանխել աշխատավարձի, նյութերի և վերադիր ծախսերի գերաժախսերը, ապահովել ինքնարժեքի իջեցման սահմանված առաջադրանքի կատարումը, հայտաբերել և իրացնել շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի հետագա իջեցման ռեզերվները:

Շինարարութիւնը տնտեսական եղանակով իրականացնելիս, աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքների պլանավորումը և դրանց կատարման միջոցառումների մշակումը կատարվում է նույն կարգով, ինչ կարգով կապալային կազմակերպութիւններինն է: Տարբերութիւնը միայն պլանային շահույթների և ինքնարժեքի իջեցումից ստացվող խնայողութիւնների այլ կարգի հաշվառման ու պլանավորման մեջ է: Կապալային կազմակերպութիւնների գծով այդ երկու աղբյուրները նրանց ֆինանսական պլաններում հաշվի են առնվում շահույթների առաջադրանքի ձևով: Տնտեսական եղանակով իրականացվող կառուցցների գծով պլանային շահույթը և շինարարութիւնն ինքնարժեքի իջեցումից առաջացած խնայողութիւնը հանդիսանում է կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուր:

Կառուցվող ձեռնարկութիւնների դիրեկցիաների կողմից ինքնարժեքի իջեցման իրականացվող միջոցառումներն ուղղված են տրանսպորտային, մատակարարման, պահեստային և այլ ծախսերի խնայողութիւնը՝ կապված սարքավորումների, հատուկ նյութերի առանձին տեսակների հայթայթ-

ման ու կառույցները փոխադրելու, դիրեկցիայի ապարատը պահելու հետ և այլն: Կառուցվող ձեռնարկությունների դիրեկցիաների կողմից այդ միջոցառումների իրականացման շնորհիվ ձեռք բերված փաստացի խնայողությունն արտահայտվում է համապատասխան շենքերի ու կառուցվածքների շինարարության ծախսերի պակասեցմամբ:

5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական յուրաքանչյուր ձեռնարկության և տնտեսական կազմակերպության գործունեությանը ներկայացվող կարևորագույն պահանջը նրանց շահութաբեր աշխատանքի ապահովումն է: Աշխատել շահութաբեր նշանակում է ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների գործունեությունը կազմակերպել այնպես, որ արտադրանքի իրացումից (կատարած աշխատանքների կամ ցույց տված ծառայությունների) նրանց ստացած եկամուտները լրիվ կերպով ծածկեն նրանց ծախսերը և ընդամին ապահովեն շահույթների գծով առաջադրանքների կատարումը: Ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը բնութագրում է ձեռնարկության կամ կազմակերպության աշխատանքների շահութաբերությունը: Շահութաբերության ցուցանիշը որոշակի ժամանակաշրջանի (տարի, եռամսյակ, ամիս) ընթացքում ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշն է:

Շահութաբերության մակարդակի որոշումը: Շինարարական կազմակերպության շահութաբերությունը չափվում է շահույթի գումարով և շահութաբերության մակարդակով:

Շահույթի գումարը սրոշվում է որպես արտադրանքի իրացումից (աշխատանքների հանձնումից) ստացված մուտքի մեծության և դրա արտադրման վրա շինարարական կազմակերպության կատարած ծախսումների միջև եղած տարբերություն: Շահութաբերության մակարդակն իրենից ներկայացնում է շահույթի հարաբերությունը այն ծախսումների

գումարին, որ շինարարական կազմակերպությունը կատարել է պատվիրատուին հանձնված աշխատանքների համար՝ արտահայտված տոկոսներով:

Ընդունենք, որ շինմոնտաժային աշխատանքների կատարման վրա շինարարական կազմակերպության մեկ տարվա ամբողջ ծախսերը կազմել են 15417 հազ. ռուբ. (15500 հազ. ռուբ. պլանի դիմաց), իսկ եկամուտները (կատարած աշխատանքների և ցույց տված ծառայությունների մուտքը)՝ 15990 հազ. ռուբ. տվյալ շինարարական կազմակերպության շահույթների պլանային առաջադրանքը հաստատվել է 490 հազ. ռուբ. (15990—15500):

Մեր օրինակում կազմակերպությունը ստացել է 573 հազ. ռուբ. շահույթ (15990—15417), կամ պլանավորվածից 83 հազ. ռուբ. ավելի (573—490):

Այս դեպքում շահութաբերության մաքարդակը կկազմի՝

$$\text{պլանով} - \frac{490}{15500} \times 100 = 3,2 \%$$

$$\text{փաստացի} - \frac{573}{15417} \times 100 = 3,7 \%$$

Սոցիալիստական պետությունն առանձին ձեռնարկությունների շահութաբերության մակարդակը սահմանում է պլանային կարգով, ելնելով սոցիալիստական արտադրության պլանաչափ զարգացման խնդիրներից և ձեռնարկություններում ու կազմակերպություններում տնտեսական հաշվարկի ըստ ամենայնի ամրապնդման անհրաժեշտությունից:

Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXII համագումարում ընդգծեց շահույթի ու եկամտաբերության նշանակության ըստ ամենայնի բարձրացման անհրաժեշտությունը՝ հանուն պլանների լավագույն կատարման:

Շահութաբերության բարձրացման հիմնական ուղիները: Շինարարական կազմակերպության շահութաբերության վրա ազդող հիմնական գործոնը օինմոնտաժային աշխատանքների ինֆնարժեքի մակարդակն է: Ինքնարժեքի սխտեմատիկ իջեցումը արտադրության շահութաբերության աճման հիմքն է:

Շինարարական կազմակերպությունների շահութաբերության վրա ազդում է նաև շինարարական արտադրանքի գնե-

րի մակարդակը (շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը)։

Շինարարության մեջ գները ժամանակ առ ժամանակ փոփոխվում են, կատարելագործվում։ Նախահաշվային արժեքների վերանայման հիմքերից մեկը շինարարության մեջ աշխատանքների ինքնարժեքի իջեցման գործում ձեռք բերված հաջողություններն են։ Իրենց հերթին նոր հաստատված նախահաշվային գները հնարավորություն են տալիս հասնելու շինմոնտաժային աշխատանքների արժեքի ու ինքնարժեքի նոր իջեցման, քանի որ դրանցում սրտացոլում են գտնում աշխատանքների կատարման առաջնորդում կիրառվող եղանակների համեմատությամբ, ավելի առաջավոր եղանակներ, ինչպես նաև բանվորների աշխատանքի, նյութերի, մեխանիզմների, տրանսպորտային միջոցների օգտագործման ավելի ռացիոնալ մեթոդներն ու ձևերը։

Ինչպես ցույց տրվեց վերը բերված օրինակում, կատարված և հանձնված աշխատանքների նախահաշվային արժեքի և դրանց փաստացի ինքնարժեքի միջև եղած տարբերությունը կազմում է շահույթը, իսկ այն դեպքում, երբ ինքնարժեքը բարձր է՝ այդ տարբերությունը կազմում է շինարարական կազմակերպության ստացած վնասը։

Կատարած աշխատանքները պատվիրատուին հանձնելուց ստացած շահույթից բացի, շինարարական կազմակերպությունները շահույթ են ստանում նաև իրենց գործունեության այլ տեսակներից։

Շինարարական կազմակերպությունների շահութաբերությունը զգալի չափով կախված է նրանց կազմի մեջ մտնող տնտեսությունների (հայթայթման—պահեստային, ավտոտրանսպորտային և այլն) աշխատանքների արդյունքներից, որոնք պործում են ներտնտեսական հաշվարկի սկզբունքներով։ Նշված տնտեսությունները շինարարական արտադրության սլոտցեսում կատարում են որոշակի ֆունկցիաներ։ Հետևաբար, շինմոնտաժային աշխատանքների փաստացի ինքնարժեքը շատ բանով կախված է նրանց գործունեությունից։ Բացի դրանից, նշված տնտեսությունների արտադրանքի

իրացումից և դրսում կատարած ծառայություններից ստացված շահույթը կամ վնասը նույնպես իր ազդեցությունն է ունենում շինարարական կազմակերպության ֆինանսական ընդհանուր արդյունքների վրա: Այդ տնտեսությունների և շինարարական կազմակերպությունների այլ ստորաբաժանումների (շինարարական վարչությունների, արդյունաբերական ձեռնարկությունների և այլն) միջև գոյություն ունեցող հաշվարկները նախատեսում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքների իրական արդյունքների հայտաբերում: Ուստի այդպիսի տնտեսաշվարկային ստորաբաժանումների տնտեսական-ֆինանսական գործունեության արդյունքներն արտացոլվում են նրանց հաշվետվություններում, իսկ շինարարական և մոնտաժային աշխատանքների ինքնարժեքին դրանք վերաբերում են միայն տրեստի ամփոփման հաշվետվության գծով:

Տնտեսաշվարկային շինարարական բոլոր կազմակերպությունները պահում են առանձին օգուտների և վնասների հաշիվ: Դա ապահովում է արտադրատնտեսական գործունեության արդյունքների լիովին և ժամանակին հայտաբերումը:

Օգուտների և վնասների հաշվում առանձնացվում են շահույթներն: ու կորուստները՝ հանձնված աշխատանքների գծով, ինքնուրույն հաշվեկշիռ չունեցող օժանդակ արտադրությունների արտադրանքը դրսում իր սցենարաց և ծառայություններից, հիմնական ֆոնդերի առանձին օբյեկտները վարձակալության և վարձով տալուց, առաջներում դուրս գրված անհուսալի պարտքերի մուտքից կամ հայտաբերված անհուսալի դեբիտորական պարտքի դուրս գրումից, տույժերի, տուգանքների և տուժանքների գանձումից ու վճարումից, ընթացիկ տարում հայտաբերված անցած տարիները շահույթներն ու վնասները և մի շարք այլ եկամուտներ ու կորուստներ: Ամեն տեսակի անարտադրողական ծախսումները և այլ կորուստներ նվազեցնում, իսկ առանձին դեպքերում ի չիք են դարձնում շինարարական կազմակերպությունների արտադրական գործունեության ֆինանսական դրական արդյունքները: Ուստի անարտադրողական ծախսումների և

այլ կորուստների դեմ պետք է ամենավճռական պայքարը մղվի:

Շինարարական կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության ֆինանսական վերջնական արդյունքը՝ ամբողջությամբ վերցրած, բնութագրվում է օգուտների ու վնասների հաշվի հանրագումարով, որը ցույց է տրվում շինարարական կազմակերպության հաշվապահական հաշվեկշռում:

Շինարարության մեջ ձեռք բերված հաջողությունները դրականորեն են ազդել շինարարական կազմակերպությունների աշխատանքների ֆինանսական ընդհանուր արդյունքների վրա: Վերջին տարիներին կապալային շինարարական կազմակերպություններն ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսության գծով զգալի շահույթներ են ստանում որոնք կազմում են կատարված շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի 3—6 տոկոսը:

Օրինակ, Լենինի շքանշանակիր «Տագիլստրոյ» տրեստը 1958—1961 թվականներին ստացավ ավելի քան 6 մլն. ռուբ. կուտակում: 1961 թվականին տրեստը ո՛չ միայն հաջողությամբ կատարեց շահութաբերության գծով սահմանված առաջադրանքը, այլև տվեց 166 հազ. ռուբ. արտապլանային կուտակում:

Ֆինանսական արդյունքները կարող էին ավելի բարձր լինել, եթե բոլոր շինարարական կազմակերպությունները ապահովեին շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման և շահութաբերության գծով սահմանված առաջադրանքների կատարումը:

Յուրաքանչյուր շինարարական կազմակերպության աշխատանքում շահութաբերության ապահովումը կարևորագույն ժողովրդատնտեսական խնդիր է հանդիսանում:

1960 թվականի մայիսի 5-ին հանդես գալով ՍՍՌՄ Գերագույն Սովետի սեսիայում Ն. Ս. Խրուշչովը ասե՛ր է, որ բնակչությունից գանձվող հարկերի վերացումով սոցիալիստական տնտեսության կուտակումները դառնում են մեր պետության եկամուտների միակ աղբյուրը: «Տնտեսական ու

կուլտուրական շինարարության հաջող ֆինանսավորումը ամբողջովին կախված կլինի ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների կողմից արտադրության և կուտակումների պլանների կատարումից: Ուստի առաջնահերթ կարևորություն ունեցող գործ է իսկական համաժողովրդական պայքարի ծավալումը արտադրանքի արտադրության հետագա ավելացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, արտադրության շահութաբերության անշեղ բարձրացման, ժողովրդական տնտեսության մեջ եղած սեգրվների ավելի լրիվ օգտագործման համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ՄԵՋ

1. ՏՆՏՀԱՇՎԱՐԿԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆ Է

Շինարարական կազմակերպությունների արտադրական գործունեությունն իրականացվում է տնտեսական հաշվարկի հիման վրա:

Տնտհաշվարկը տնտեսավարման սոցիալիստական մեթոդ է, որն ուղղված է պլանային առաջադրանքների հաջող կատարմանը՝ նյութական ռեսուրսների և դրամական միջոցների ռացիոնալ օգտագործման, արտադրության շահութաբերության բարձրացման: Տնտհաշվարկն ավելի խնայողաբար տնտեսավարում ապահովելու հզոր միջոց է:

Տնտեսական շինարարության անխախտ օրենքը և տղնտհաշվարկը: ՍՄԿՊ Մրագրում հռչակված է այն կարևոր դրույթը, որ՝ հանուն հասարակության քիչ ծախսումներով առավելագույն արդյունքների հասնելը տնտեսական շինարարության անխախտ օրենք է: Այս օրենքում արտահայտված են խնայողաբար տնտեսավարման օբյեկտիվ հնարավորությունն ու անհրաժեշտությունը: Տնտեսական շինարարության անխախտ օրենքից բխում են շինարարական կազմակերպությունների տնտեսական գործունեությանը ներկայացվող մի շարք պահանջներ:

Ցուրաբանչյուր շինարարական կազմակերպության գործունեությունը պետք է կազմակերպված լինի այնպես, որ ապահովվի առավել մեծ արդյունքների ձեռք բերումը՝ կրճա-

տել շինարարության ժամկետները, բարձրացնել շինարարության որակը և իջեցնել ինքնարժեքը:

Յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն իր գործունեության ընթացքում առավել մեծ արդյունքների պետք է հասնի նվազագույն ծախսումներով: Այդ խնդրի գործնական լուծումը շինարարության աշխատողներին նպատակամղում է նյութական, աշխատանքային ու դրամական բոլոր ռեսուրսները և բնական հարստություններն առավել ռացիոնալ ու արդյունավետ օգտագործելու: Ռեսուրսները խնայողաբար են օգտագործում այնտեղ, որտեղ վերացված են բոլոր տեսակի կորուստները, անարտադրողական ծախսերը, որտեղ բացակայում է անտնտեսավարությունը: Նման շինարարական կազմակերպություններում կիրառում են նոր տեխնիկա և դրա օգնությամբ բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը, հաշվանկատ են օգտագործում նյութերը, վառելիքը, էլեկտրաէներգիան, արմատավորում և խստորեն պահպանում են աշխատանքի ու նյութական ռեսուրսների ծախսման առաջադիմական նորմաները:

Շինարարական կազմակերպությունները իրենց պրակտիկ գործունեության ժամանակ նվազագույն ծախսումների են հասնում խնայողության ռեժիմի գիտակցական իրակունացման օգնությամբ:

Խնայողական ռեժիմը իրենից ներկայացնում է անհրաժեշտ ու մշտապես իրականացվող այնպիսի միջոցառումների սխստեմ, որոնք ուղղված են տնտեսական գործունեության բոլոր տեղամասերում աշխատանքային, նյութական և դրամական ռեսուրսների խնայմանն ու ռացիոնալ օգտագործմանը: Խնայողության ռեժիմում դրսևորվում է աշխատավորների խնայողական, հոգատար վերաբերմունքը հանրային սեփականության, ժողովրդական բարիքների նկատմամբ:

«Մեր երկրում, ուր ընդլայնված վերարտադրության համար կուտակման աղբյուր են հանդիսանում ներտնտեսական կուտակումները,— մատնանշեց Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXXI համագումարում,— հատուկ նշանակություն է ձեռք բերում

խնայողության խստագույն ռեժիմի համար մղվող պայքարը»¹։

Նվազագույն ծախսումներով առավելագույն արդյունքների պահովումը սոցիալիստական ձեռնարկություններում իրականացվում է հաճախ հասարակությամբ։ Տեղայնության դրսևորումը, «իր» շինարարական կազմակերպության, «իր» քաղաքի կամ շրջանի շահերը համապետական շահերին հակադրելը հակասում է տնտեսական շինարարության անխախտ օրենքի պահանջներին, ժողովրդական տնտեսության մեջ առաջ է բերում կորուստներ, խախտում է խնայողական տնտեսավարման հիմքերը։

Սոցիալիզմի պայմաններում տնտեսական շինարարության օրենքի հետևողական կիրառումը անխզելիորեն կապված է տնտեսական հաշվարկի, որպես տնտեսավարման հիմնական մեթոդի հետ։ Տնտեսական հաշվարկը հիմնվում է դրամական արտահայտությամբ, տնտեսական գործունեության ծախսումների ու արդյունքների չափակցման, արտադրանքի պատրաստման ծախսերի հատուցման՝ ի հաշիվ այդ արտադրանքի իրացումից ստացած եկամուտների, եղած ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու և արտադրության շահութաբերությունը բարձրացնելու գործում շինարարական կազմակերպությունների և նրանց աշխատողների պատասխանատվությունն ու շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով նյութական խթանների կիրառման վրա։

Տնտեսավարկի դերը սոցիալիստական տնտեսության մեջ։

Տնտեսական հաշվարկը ելնում է սոցիալիստական տնտեսության զարգացման օբյեկտիվ օրենքների պահանջներից։ Այն պայմաններ է ստեղծում պետության և նրա ձեռնարկությունների միջև, շինարարական կազմակերպությունների պատվիրատուների, կապալառուների և մատակարարների, ինչպես նաև շինարարական կազմակերպությունների առանձին տնտեսական օղակների միջև տնտեսական կապերի և

¹ Материалы внеочередного XXI съезда КПСС, Госполитиздат, 1959, стр. 37.

հարաբերությունների առավել ռացիոնալ ձևեր իրականացնելու համար:

Տնտեսական հաշվարկի անհրաժեշտությունը Վ. Ի. Լենինը կապում էր սոցիալիստական արտադրության զարգացման տնտեսական պայմանների, և ամենից առաջ ապրանքային արտադրության առկայության հետ:

Վ. Ի. Լենինը գրել է. «Պետձեռնարկությունների փոխադրումը, այսպես կոչված, տնտհաշվարկի՝ անխուսափելիորեն և անխզելիորեն կապված է նոր տնտեսական քաղաքականության հետ և ամենամոտ ապագայում անխուսափելիորեն այդ տիպը կդառնա գերակշռող, եթե ոչ բացառապես իշխող»¹: Կյանքը լիովին հաստատեց լենինյան այս հետևության ճշմարտացիությունը:

Վ. Ի. Լենինը բազմիցս պարտիական ու տնտեսական ղեկավարների ուշադրությունը հրավիրել է սոցիալիստական շինարարության մեջ տնտեսական հաշվարկի բացառիկ մեծ դերի վրա: Նա ասել է, որ կոմունիզմին անցնելու շրջանում անհրաժեշտ է տնտեսությունը կ:սռուցել ո՛չ թե անմիջականորեն խանդավառության վրա, այլ խանդավառության օգնությամբ, մարդկանց անձնակուսն շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա:

Տնտեսական հաշվարկը հնարավորություն է տալիս որոշելու, թե պետության վրա ինչ է նստում յուրաքանչյուր շինարարական կազմակերպության աշխատանքը, երևան հանելու ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետությունը, նպաստում է պետական պլանային առաջադրանքների կատարմանն ու գերակատարմանը՝ աշխատանքային, նյութական և ֆինանսական ռեսուրսների նվազագույն ծախսումներով, արագացնում է տեխնիկական առաջադիմությունը, բարձրացնում է շինարարական կազմակերպությունների եկամտաբերությունը:

«Արդյունաբերության կառավարման վերակառուցման մասին» պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1929 թվականի

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 213:

գեկտեմբերի 5-ի որոշման մեջ նշվում է, որ «Տնտհաշվարկը ցուցաբերում է ձեռնարկության դեմքը, նպաստում է արտագրության ռացիոնալացմանը, վաճառքի ու մատակախնարման ճիշտ կազմակերպմանը և դրա հետ մեկտեղ առաջ է բերում հակազդեցություն՝ բյուրոկրատիզմի և քաշքշուկի թարրերի դեմ»:

Միաժամանակ ձեռնարկության փոխադրումը տնտեսական հաշվարկի նպաստում է ձեռնարկության արտադրական գործունեության հաշվառման ռացիոնալ դրմանը և այդ գործունեության հետ մասսաների ծանոթացմանը¹:

Շինարարության մեջ տնտհաշվարկի զարգացման գործում մեծ դեր են խաղացել պարտիայի ու կառավարության որոշումները շինարարության պլանավորումը կարգավորելու, ֆինանսական կարգապահությունը ամրապնդելու և նախահաշվային գործը բարելավելու հարցերի վերաբերյալ: Այդ որոշումներում, մասնավորապես, մշակված է այն միջոցառումների ծրագիրը, որոնք ապահովում են իրենց աշխատանքի արդյունքների մեջ շինարարական կազմակերպությունների նյութական շահագրգռվածության բարձրացումը, շինարարության պլանների կատարման համար նրանց պատասխանատվության ուժեղացումը:

1959—1960 թվականներին տնտեսական հաշվարկի են անցել շինարարական մինիստրությունների արտադրական գլխավոր վարչությունները և ժողտնտխորհների շինարարական վարչությունները: Դրանք այժմ պահվում են իրենց ենթակա շինարարական կազմակերպությունների վերադիր ծախսերի հաշվին: Այդ միջոցառումը հնարավորություն տվեց պետության համար բյուջետային հատկացումներից ո՛չ միայն ազատել առաջներում գլխավարչությունների պահպանման համար ծախսվող բազմաթիվ միլիոն ռուբլիներ, այլև լրացուցիչ խթան ստեղծեց կառավարչական ապարատը կրճատելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար:

¹ «Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам», т. 2, стр. 127.

Արդյունաբերության և շինարարության կառավարման նոր սիստեմը բարենպաստ պայմաններ է ստեղծում շինարարության մեջ տնտեսաշարժի ըստ ամենայնի ամրապնդման համար: Ժողտնտխորհների գլխավոր խնդիրներից մեկը, ինչպես նշվում է տնտեսական-վարչական շրջանի ժողովրդական տնտեսության խորհրդի կանոնադրության մեջ, տնտեսական հաշվարկի ամրապնդումն է, ձեռնարկությունների ու կազմակերպությունների շահավետության բարձրացումը, հիմնական ու շրջանառու միջոցների ճիշտ և արդյունավետ օգտագործումը, միջոցների նվազագույն ծախսումով արտադրանքի առավելագույն քանակության ստացումը: Շինարարական կազմակերպություններն այժմ հնարավորություն են ստացել լայնորեն դրսևորելու իրենց նախաձեռնությունը տնտեսական գործերում, նրանց ավելի մեծ հնարավորություններ ու իրավունքներ է տրված տնտեսական մի շարք հարցեր վճռելու գործում:

Կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանում տնտեսաշարժի դերն ու նշանակությունը է՛լ ավելի են աճում: «Անհրաժեշտ է,— նշված է ՍՄԿՊ Ծրագրում,— ամեն կերպ ուժեղացնել տնտեսական հաշվարկը, հասնել խստիվ տնտեսման ու խնայողության, կրճատել կորուստները, իջեցնել ինքնարժեքը և բարձրացնել արտադրության շահութաբերությունը»¹:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՍԿԶԻՈՒՆԲՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տնտեսական հաշվարկը հիմնվում է ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների տնտեսական գործունեության որոշակի սկզբունքների պահպանման վրա: Տնտեսաշարժի հիմնական սկզբունքներն են՝ արտադրության ծախսումների փոխհատուցումը և ձեռնարկությունների շահութաբերությունը, տնտեսական-օպերատիվ ինքնուրույնու-

1. «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 512, Հայպետհրատ, 1962:

թյունը, աշխատանքում նյութական շահագրգռվածությունն ու նյութական պատասխանատվությունը, ռուբլով վերահսկողությունը շինարարական կազմակերպությունների և նրանց արտադրական օղակների գործունեության նկատմամբ:

Թվարկված բոլոր սկզբունքները փոխկապակցության և փոխկախվածության մեջ են գտնվում:

Շինարարական կազմակերպությունների շահութաբերությունը և ծախսումների փոխհատուցումը: Տնտհաշվարկի համար բնորոշ է առաջին հերթին արտադրության ծախսումների փոխհատուցման սկզբունքի պահպանումը և ձեռնարկությունների շահութաբերությունը: 1922 թվականին Վ. Ի. Լենինը գրել է. «Ես կարծում եմ, որ տրեստներն ու ձեռնարկությունները հիմնված են տնտեսական հաշվարկի վրա հենց նրա համար, որպեսզի նրանք իրենք պատասխանատու լինեն և ընդամին ամբողջապես պատասխանատու լինեն իրենց ձեռնարկությունների շահաբերության համար»¹:

Ըստ նախահաշվային արժեքի կատարված աշխատանքները պատվիրատուներին հանձնելով, շինարարական կազմակերպությունները կատարված աշխատանքների համար փոխհատուցվում են իրենց կատարած ծախսերը և ապահովում են որոշակի շահութաբերություն (եկամտաբերություն): Նրանց գործունեության արդյունավետությունը դրսևորվում է նրանց աշխատանքների արդյունքների վերջնական, հանրագումարային ցուցանիշում՝ շահույթի կամ վնասի մեջ:

Մեր երկրում ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների հիմնական մասն աշխատում է շահավետորեն: Սակայն դեռևս կան նաև վնասաբեր շինարարական տրեստներ ու վարչություններ: Առանձին ձեռնարկություններ ու շինարարական կազմակերպություններ թեպետև շահութաբեր են, բայց լրիվ կերպով չեն կատարում շահույթների կուտակման ալյուրները, որը ռույնպես վնաս է հասցրնում ժողովրդական տնտեսությանը: Ուստի վնասաբեր աշխատանքի վերացումը, յուրաքանչյուր կազմակերպության

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 589:

շահույթի կուտակման պլանի անպայման կատարման ու գերակատարման ապահովումը ներկայումս ժողովրդատըն-տեսական կարևոր խնդիր են:

Շինարարական կազմակերպությունների տնտեսական-օպերատիվ ինքնուրույնությունը: Տնտհաշվարկային շինարարական կազմակերպությունն օժտված է որոշակի տնտեսական-օպերատիվ ինքնուրույնությամբ և հանդես է գալիս որպես առանձին տնտեսական միավոր:

Տնտհաշվարկային յուրաքանչյուր շինարարական կազմակերպություն պետական միասնական ֆոնդից իր տրամադրության տակ ստանում է շինարարական արտադրության համար անհրաժեշտ նիւնական և շրջանառու միջոցներ, որոնց պահպանման և ճիշտ օգտագործման համար շինարարական կազմակերպությունները պետության առաջ լրիվ պատասխանատվություն են կրում:

Տնտհաշվարկային շինարարական կազմակերպությունների համար սահմանվում է որոշակի պետական պլանային առաջադրանք՝ արտադրատնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների գծով: Այդ առաջադրանքն այնուհետև կոնկրետացվում և բացահայտվում է շինֆինպլանում:

Տնտհաշվարկային կազմակերպությունը պետական պլանի հիման վրա ինքնուրույն կերպով տնօրինում է իրեն տրամադրած միջոցները և պայմանագրեր է կնքում պատվիրատուների հետ, ձեռք է բերում (գնում է) անհրաժեշտ շինարարական նյութեր և կոնստրուկցիաներ, կոմպլեկտավորում է շինարարական բանվորների ու ծառայողների կադրերը, կազմակերպում է շինմոնիտաժային աշխատանքների կատարումը և դրանք հանձնում պատվիրատուին: Դրան համապատասխան իրականացվում են տնտեսական հարաբերությունները պետության և շինարարական կազմակերպությունների միջև, կապալառու շինարարական կազմակերպությունների, պատվիրատուների և՛ սարքավորումներ, կոնստրուկցիաներ, դետալներ, նյութեր, կիսաֆաբրիկատներ ու նյութա-տեխնիկական ռեսուրսներ մատակարարողների միջև: Շինարարական կազմակերպությունների տնտեսական-օպեր-

րատիվ ինքնուրույնությունը կարևոր պայման է տնտեսութեան ռացիոնալ վարման գործում:

Տնտհաշվարկային շինարարական կազմակերպությունների ղեկավարներն իրավունք ունեն արտադրական և տեխնիկական գործունեության բոլոր հարցերի գծով ընդունելու այնպիսի օպերատիվ որոշումներ, որոնք աշխատանքի կոնկրետ պայմաններում նպաստում են արտադրական ծրագրի հաջող կատարմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցմանը:

Տնտհաշվարկային կազմակերպություններն իրենց ֆինանսավորող բանկում ունեն սեփական հաշվարկային հաշիվ: Այստեղ բանկում նրանք պահում են իրենց դրամական միջոցները և դրանք ծախսում են իրենց հայեցողությամբ՝ գոյություն ունեցող կանոններին համապատասխան: Շինարարական կազմակերպություններին իրավունք է տրվում բանկերից վառել ստանալ՝ ժամանակավոր, մի անգամվա կարիքի համար, երբ դրա անհրաժեշտությունն առաջանում է նրանց մոտ:

Տնտհաշվարկային յուրաքանչյուր կազմակերպություն առանձնացվում է ինքնուրույն հաշվեկշռի և ունի հաշվապահական հաշվառման ձվարտված սխեմա: Շինարարական կազմակերպությունները և ձեռնարկությունները հաշվի են առնում արտադրության միջոցները, արտադրության ծախսումներն ու արդյունքները, երևան են բերում շինարարության փաստացի ինքնարժեքը և աշխատանքների հանձնումից ըստացված եկամուտները, վարում են օգուտների ու վնասների հաշիվը, կազմում և որոշակի ժամկետում համապատասխան կազմակերպություններին են ներկայացնում իրենց գործունեության և դրա արդյունքների մասին սահմանված հաշվետվությունը:

Որպես ինքնուրույն տնտեսական միավոր շինարարական կազմակերպությունն իրավական անձի իրավունք է ստանում, այսինքն՝ նա իրավունք ունի տնտեսական գործարքնեք

կնքելու, հայցեր ներկայացնելու և պատասխանատու է իր պարտավորությունների համար:

Իրենց գործունեության պրոցեսում տնտհաշվարկային շինարարական կազմակերպությունները տնտեսական հարաբերությունների մեջ են մտնում պատվիրատուների և մատակարարների հետ: Այդ հարաբերությունները կազմակերպելու և ձևակերպելու համար տնտեսական ու կապալային պայմանագրեր են կնքվում աշխատանքների կատարման ու հանձնման և պլանային պահանջների սահմաններում շինարարության ստանալու (մատակարարելու) վերաբերյալ:

Շինարարության մեջ տնտհաշվարկն ամրապնդելու համար մեծ նշանակություն ունի արտադրության, տեխնիկական առաջադիմության, աշխատանքի կազմակերպման, նյութատեխնիկական մատակարարման և ֆինանսական տնտեսության ամրապնդման բնագավառում շինարարական կազմակերպությունների ստեղծագործական նախաձեռնության հետագա ընդլայնումը: Դրա հետ մեկտեղ կարևոր է նաև ըստ ամենայնի բարելավել ժողտնտխորհների, մինիստրությունների և գերատեսչությունների կողմից շինարարական կազմակերպություններին ցույց տրվող պլանային ղեկավարությունը:

Ներքին ռեզերվների մոբիլիզացման, կապիտալ ներդրումների, արտադրական ֆոնդերի և դրամական միջոցների առավել արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է, ինչպես նշված է ՍՄԿՊ Ծրագրում, պետական պլանային առաջադրանքների հիման վրա ընդլայնել ձեռնարկությունների օպերատիվ ինքնուրույնությունը և նախաձեռնությունը:

Տնտեսական հաշվարկը պահանջում է շինարարական կազմակերպություններին լիակատար ինքնուրույնություն տալ շրջանառու միջոցների օգտագործման գործում: Գործնականում այս դրույթը միշտ չէ որ կիրառվում է: Այսպես, շինարարական կազմակերպություններին ամրացված շրջանառու միջոցները երբեմն անհիմն կերպով վերցվում են այս կամ այն պատրվակով (շահույթներից լրացուցիչ «մասհանումների» կարգով, շրջանառու միջոցների «ավելցուկը» ժամանակավորապես վերցնելու ձևով և այլն): Ծրջանառու միջոցների արտապլանային և անհիմն կերպով վերց-

նելու դեպքում խախտվում է շինարարական կազմակերպությունների տեղ-տեսական ինքնուրույնությունը և ֆինանսական կայունությունը:



Շինարարական կազմակերպությունների նյութական շահագրգռվածությունը: Սովետական Միության կոմունիստական պարտիան, ինչպես ասվում է նրա Ծրագրում, ելնում է լենինյան այն դրույթից, որ կոմունիզմի կառուցումը պետք է հենվի նյութական շահագրգռվածության սկզբունքի վրա: Տնտեսական հաշվարկի այդ սկզբունքը շինարարական կազմակերպությունները օգտագործում են աշխատանքների կատարման ու հանձնման պլանային առաջադրանքների հաջող կատարմանը խթանելու, աշխատանքային, նյութական և ֆինանսական ռեսուրսները խնայողաբար օգտագործելու, տեխնիկական առաջադիմության և շահութաբեր աշխատանքների ապահովման համար:

Տնտհաշվարկային շինարարական կազմակերպությունների համար ֆինանսական ռեսուրսների ստացման հիմնական աղբյուր են իրենց սեփական դրամական եկամուտները: Որքան ավելի արագ կատարվեն շինմոնտաժային աշխատանքները և ավելի շատ պատրաստի արտադրանք հանձնվի, որքան ավելի բարձր լինի դրանց որակը, շինարարական կազմակերպություններն այնքան ավելի շատ միջոցներ կունենան իրենց տրամադրության տակ. նյութերի և կոնստրուկցիաների հայթայթումը, աշխատավարձի վճարումը և այլ ծախսեր շինարարական կազմակերպությունները կատարում են արված աշխատանքների դիմաց ստացվող միջոցների հաշվին: Հետևաբար, շինարարական կազմակերպությունների ծախսերը, նրանց ֆինանսական վիճակը և վճարունակությունը ուղղակի կախման մեջ են դրվում նրանց ստացած եկամուտներից:

Տնտհաշվարկային շինարարական կազմակերպությունների եկամուտներն իրենց հերթին կախված են նաև աշխատանքների կատարման համար արվող ծախսումների արդյունավետությունից: Եթե նրանք ուսցիոնալ են օգտագործում իրենց ռեսուրսները, մոբիլիզացնում ներքին ռեզերվները,

մեծացնում աշխատանքների ծավալը, բարելավում դրանց որակը և իջեցնում ինքնարժեքը, ապա շինարարական կազմակերպությունների եկամուտները ևս աճում են:

Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը իջեցնելու և շահույթ ստանալու գործում շինարարական կազմակերպությունների նյութական շահագրգռվածության ստեղծման նպատակներով կիրառվում է այնպիսի կարգ, երբ կապիտալ ներդրումների և սեփական շրջանառու միջոցների ավելացման նկատմամբ շինարարական կազմակերպությունների ունեցած պահանջը ծածկվում է առաջին հերթին իրենց ստացած շահույթների հաշվին: Որքան շատ լինի շահույթը, շինարարական կազմակերպությունն այնքան ավելի շատ հնարավորություն կունենա ավելացնելու շրջանառու միջոցները ու պլանով նախատեսված կապիտալ ներդրումների ֆինանսավորումը և, հետևաբար, նա ավելի շատ հնարավորություն կունենա արտադրության զարգացման ու կատարելագործման համար:

Շինարարության պլանների կատարման և եկամտաբերության բարձրացման գործում նյութական շահագրգռվածությունն ապահովվում է նաև շինմոնտաժային կազմակերպության պետի ֆոնդի ստեղծմամբ:

Շինմոնտաժային կազմակերպության պետի ֆոնդն օգտագործվում է արտադրության ընդլայնման ու կատարելագործման, առանձին աշխատողների նյութական խրախուսման և կոլեկտիվի կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման համար: Այդ ֆոնդը, ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող տնտեսաշվարկային շինարարական կազմակերպություններում, գոյանում է շինմոնտաժային աշխատանքների ծավալի պետական պլանային առաջադրանքը կատարելու, դրանց ինքնարժեքն իջեցնելու և շահույթ ստանալու շնորհիվ: Այդ ֆոնդի գոյացման աղբյուրը շահույթն է: Այն կազմակերպություններում, որտեղ պլանով շահույթ չի նախատեսվում, պետի ֆոնդը ստեղծվում է շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումից առաջացած խնայողությունների հաշվին:

Ներկայումս շինմոնտաժային կազմակերպության պետի ֆոնդին է հատկացվում պլանային շահույթների 2 տոկոսը և արտապլանայինի (կամ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումից առաջացած խնայողության) 30 տոկոսը: Պլանային և արտապլանային շահույթի կամ շինարարության ինքնարժեքի իջեցումից առաջացած խնայողության չափը որոշելիս հանվում են այն գումարները, որոնք ստացվել են շինարարական կազմակերպությունների արտադրական գործունեությունից անկախ պատճառներով:

Այդ ֆոնդին կատարվող հատկացումների տարեկան ընդհանուր գումարը չպետք է դերազանցի շինմոնտաժային աշխատանքներում զբաղված անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդի 5 տոկոսից՝ շինմոնտաժային աշխատանքների ծավալի փաստացի կատարման վերահաշվարկմամբ, ներառյալ նաև առանձին հաշվեկշիռ չունեցող արտադրական ձեռնարկություններում զբաղված անձնակազմի աշխատավարձի ֆոնդը:

Շինմոնտաժային աշխատանքների եռամսյակային պլանը և շահույթի (տնտեսման) առաջադրանքը կատարած շինարարական կազմակերպությունները՝ իրենց հաշվետվության հաշվեկշիռների հիման վրա կարող են յուրաքանչյուր եռամսյակի վերջին ավանսային հատկացումներ կատարել պետի ֆոնդին: Հատկացումները պետի ֆոնդին կատարվում են այն գումարների 60 տոկոսի չափով, որոնք հաշվարկված են պլանային և արտապլանային շահույթներից կամ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումից առաջացած պլանային և արտապլանային տնտեսումից: Պետի ֆոնդին կատարվող հատկացման վերջնական չափը որոշվում է տարեկան հաշվետվությամբ:

Ցոնդի միջոցներն օգտագործելու համար կազմվում է նախահաշիվ, որը համաձայնեցվում է արհեստակցական միության շինարարության կոմիտեի հետ: Պետի ֆոնդի հաշվին ծախսեր կարող են կատարվել միայն ունեցած գումարների սահմաններում: Ցոնդի սպազա մուտքերի հաշվին միջոցներ ծախսել չի թույլատրվում:

Շինարարական կազմակերպության պետի ֆոնդի միջոցներն օգտագործվում են շինարարների համար բնակելի տներ կառուցելու (պետական պլանից դուրս), պիոներական ճամբարների կահավորման և պահպանման, սպորտային և ակումբային գույք ձեռք բերելու, բանվորներին ու ծառայողներին նյութական օգնություն ցույց տալու, նրանց համար սանատորիաների և հանգստի տների ուղեգրեր ձեռք բերելու, աչքի ընկնող աշխատողներին պարգևատրելու համար:

Օրինակ՝ Գլխմոսշինի շինարարական կազմակերպությունների գծով պետի ֆոնդից 1959—1961 թվականներին ծախսվել է (հազար ռուբլիներով)՝
Բնակելի ֆոնդի շինարարության և վերանորոգման համար... 1850

Աշխատողների կուլտուր-կենցաղային սպասարկումը բարելավելու համար 388

Աշխատողներին պարգևատրելու, հանգստի տներ ու սանատորիաների ուղեգրեր ձեռք բերելու և բանվորներին միանվագ օգնություն ցույց տալու համար 1494

Շինարարական կազմակերպության պետի ֆոնդը գոյացնող միջոցներից բացի, արտապլանային շահույթների (կամ ինքնարժեքի իջեցումից առաջացած տնտեսման) մի մասը՝ մինչև 30 տոկոսի չափով, ժողտնտխորհի (մինիստրության) թույլտվությամբ, կարող է օգտագործվել բնակելի շինաբառնության ֆինանսավորման համար: Դա բարձրացնում է շինարարական կազմակերպությունների աշխատողների շահագրգռվածությունը արտապլանային շահույթ¹ ստանալու գործում:

Արտապլանային շահույթի հաշվին գոյանում է նաև շինմոնտաժային կազմակերպության աշխատողներին՝ սոցիա-

¹ Շինմոնտաժային կազմակերպության պետի՝ արտապլանային շահույթներից հատկացվող ֆոնդի և պարգևատրման ֆոնդի հաշվին բնակարանային շինարարություն (կապիտալ ներդրումների պետական պլանից դուրս) կարելի է իրականացնել միայն այն պայմանով, որ կուտակված միջոցները ապահովեն շինարարության ավարտումը: Եթե բնակարանային շինարարությունն իրականացվում է բանվորների ու ծառայողների աշխատանքային մասնակցությամբ, ապա աշխատանքներն սկսելու համար անհրաժեշտ է կուտակել բնակելի թանկերի նախահաշվային արժեքի 25 տոկոսից ոչ պակաս գումար:

լիստական մրցության արդյունքներէ հիմա՞ն վրա պարգևատրելու ֆոնդը:

Օբյեկտներն ու արտադրական կարողութիւնները ժամկետին և ժամկետից շուտ գործարկելու համար շինարարական կազմակերպութիւնների ղեկավար և ինժեներատեխնիկական աշխատողներին պարգևատրելո՞ւ սխտեմը խթանում է աշխատանքների կատարման ու բանվորների աշխատանքի կազմակերպման բարելամանը, քանակակա՞ն ու որակական ցուցանիշների առաջադրանքների կատարմանը: Այդ նույն նպատակին են ծառայում բանվորների աշխատանքի վարձատրութեան պարգևատրման ձևերը:

Տեխնիկայի, տեխնոլոգիայի կատարելագործման և արտադրութեան կազմակերպման գործում շինարարական կազմակերպութիւնների շահագրգռվածութեան բարձրացմանն են ծառայում նոր տեխնիկայի գծով աշխատանքների կատարման համար պարգևատրումը, ինչպէս նաև գյուտարարներին և ռացիոնալիզատորներին նյութապէս խրախուսելը՝ նրանց վարձատրելու միջոցով:

Աշխատանքների արդյունքների մեջ կազմակերպութիւնների նյութական շահագրգռվածութեան բարձրացման գործում խոշոր նշանակութիւն ունի այս կամ այն նվաճման համար, ինչպէս ամբողջ կազմակերպութեան, այնպէս էլ նրա առանձին աշխատողների պարգևատրման սխտեմի հետագա կատարելագործումը:

Շինմոնտաժային աշխատանքների ծրագիրը և դրանց ինքնարժեքի իջեցման առաջադրանքը հաջող կատարած շինարարական կազմակերպութիւնների խրախուսման կարևոր ձև է հանդիսանում նաև նրանց համար սահմանված ֆինանսավորման ու վարկավորման արտոնյալ ռեժիմը:

Ինչպէս ցույց է տալիս շինարարական առաջավոր կազմակերպութիւնների փորձը, նյութական շահագրգռվածութեան սկզբունքի հաջող զարգացումը ընթանում է այն ցուցանիշների բարելավման ուղիով, որոնց հասնելու համար տրվում են այս կամ այն պարգևատրումը. որոշակի քանակական ու որակական նվաճումների համար նյութական

պարզևատրման ավելի արդյունավետ ձևերի և աղբյուրների սահմանում. շինարարական կազմակերպությունների, բանվորների ու ծառայողների նյութական շահագրգռվածություն կուլեկտիվ ձևերի ուժեղացում:

Շինարարական կազմակերպությունների նյութական պատասխանատվությունը: Վ. Ի. Լենինը նշել է, որ ձեռնարկություններն իրենք պետք է պատասխանատվություն կրեն իրենց աշխատանքի ֆինանսական արդյունքների համար:

Շինարարական կազմակերպությունները և նրանց աշխատողները նյութական պատասխանատվություն են կրում պլանների և իրենց պարտավորությունների թերակատարման, աշխատանքային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ոչ-ռացիոնալ օգտագործման և սոցիալիստական տրեստությունը վնաս հասցնող այլ գործողությունների համար:

Եթե շինարարական կազմակերպությունները չեն կատարում արտադրանքի արտադրման պլանը, վատացնում են աշխատանքների որակը, թույլ են տալիս խոտան, պարսպուրդներ, ռացիոնալ չեն օգտագործում նյութական ռեսուրսները, ապա նրանց եկամուտները պակասում են: Դա անմիջապես ազդում է նաև պասվիրատուների, մատակարարների, բանկի և այլ օրգանների հետ եղած հարաբերությունների վրա. տեղի է ունենում հաշվարկների մատակարարումների, բյուջեին վճարումների ձգձգում, որը առաջ է բերում շահագրգռված օրգանների կողմից համապատասխան միջոցառումների կիրառում:

Շինարարության մեջ տնտեսաշարժարկային հարաբերությունների սիստեմը նախատեսում է կազմակերպությունների և ձեռնարկությունների նյութական ու գույքային պատասխանատվություն՝ միմյանց առջև: Այդպիսի պատասխանատվությունը կարգավորվում է ամենից առաջ տնտեսական պայմանագրերով, որոնց մեջ նախատեսվում են նյութական սանկցիաներ աշխատանքների հանձնման ժամկետները չպահպանելու համար, տուգանքներ շինարարության սահմանված որակը խախտելու համար:

Աշխատանքների առանձին տեսակների կատարման ժամկետները խախտելու համար շինարարական կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուին յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել դրամական տույժ 0,01 տոկոսի չափով, իսկ 30-ից ավելի շատ ժամկետանց զգրի դեպքում այդ տույժից բացի նաև տուժանք՝ շկատարված աշխատանքների պայմանագրային արժեքի 2 տոկոսի չափով: Ընդ որում օբյեկտի բոլոր աշխատանքները պայմանագրով սահմանված վերջնական ժամկետին ավարտելու դեպքում դրամական տույժը և տուժանքը վերադարձվում են կապալառուին: Կապալային շինարարական կազմակերպությունները պատասխանատվություն են կրում կառույցի ամրությունը և շահագործման ողակն իջեցնող խոտան թույլ տալու համար: Կապալառուն պարտավոր է իր հաշվին վերացնելու կատարված աշխատանքներում իր մեղքով թույլ տված թերությունները՝ պայմանով, եթե պատվիրատուն համապատասխան պահանջները ներկայացրել է սահմանված ժամկետին:

Ձեռնարկություններն ու կազմակերպությունները՝ կառուցվող օբյեկտների պատվիրատուները, պատասխանատվություն են կրում կապալառուին վճարումներն ուշացնելու (վերավճարում են ուշացրած գումարի 0,05 տոկոսի չափով), աշխատանքային գծագրերի և այլ փաստաթղթերի հանձնման, շինանյութեր գնելու ֆոնդի կամ բնաձև սարքավորումների, շինարարության համար տեղամասի հանձնման պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար և այլն:

Մատակարարները պատասխանատու են մատակարարվող արտադրանքի ծավալի, ասորիմենտի, որակի և մատակարարման ժամկետների վերաբերյալ պայմանագրային պարտավորությունների կատարման համար: Մատակարարների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը առաջ է բերում սանկցիանների կիրառում՝ տուգանքների, տուժանքների, տույժերի, անորակ արտադրանքի վերադարձման և վնասների հատուցման ձևով:

Նյութերի և ծառայությունների համար վճարումը ուշացնելու դեպքում շինարարական կազմակերպությունը յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար մատակարարներին տույժ է վճարում ուշացրած գումարի 0,01 տոկոսի չափով:

Բանկի փոխատվությունների վճարումն ուշացնելու դեպքում՝ ուշացրած գումարի օգտագործման դիմաց վճարվում է բարձրացված տոկոս:

Պլանի և պայմանագրային պարտավորությունների կատարման համար՝ նյութակառուցման սանկցիանները ժամանակին և լրիվ օգտագործելու դեպքում, պատվիրատուի, մատակարարների, շինարարական և այլ կազմակերպությունների նյութակառուցման պատասխանատվությունը նրանց ստիպում է քարհլա-

վելու իրենց արտադրա-տնտեսական գործունեությունը և խստորեն հետևելու պլանային ու հաշվարկային կարգապահությունը:

Տնտեսական կազմակերպությունները պատասխանատու են նաև բանվորների ու ծառայողների աշխատավարձի վճարման ժամկետները և կարգը խախտելու, աշխատավարձի ֆոնդի գերաժախսի համար: Շինարարության պլանը, ինքնարժեքի և շահույթների չափերի առաջադրանքը չկատարելու դեպքում շինարարական կազմակերպությունները կորցնում են պետի ֆոնդ ստեղծելու և սոցիալիստական մրցության արդյունքների համար պարգևատրումներ ստանալու իրավունքները: Արտադրության գրաֆիկները չկատարելու, տեխնոլոգիական կարգապահությունը խախտելու, արտադրանքի որակը վատացնելու և նյութերի ու գործիքների գերաժախսի դեպքում ղեկավար և ինժեներա-տեխնիկական աշխատողները կարող են զրկվել (լրիվ կամ մասնակի չափով) պարգևատրումներից:

Կապալային այն կազմակերպությունները, որոնք չեն կատարում շինմոնտաժային աշխատանքների ծրագիրն ու ինքնարժեքի իջեցման առաջադրանքը և սիստեմատիկորեն ուշացնում են մատակարարների ու բանկի վճարումները, կարող են բանկի կողմից փոխադրվել վարկավորման հատուկ ռեժիմի:

Ամբողջությամբ վերցրած շինարարական կազմակերպության պատասխանատվության հետ միասին, գործում է նաև այդ կազմակերպության առանձին աշխատողների անձնական պատասխանատվությունը: Շինարարական կազմակերպության ղեկավարը պատասխանատու է ամբողջ կազմակերպության գործունեության վիճակի համար, առանձին տեղամասերի ղեկավարները՝ իրենց տեղամասի աշխատանքների վիճակի համար: Այդ պատասխանատվությունը կարող է ո՛չ միայն վարչական լինել, այլև նյութական, եթե ղեկավարի մեղքով թույլ տրված անտնտեսավարության հետևանքով պետությունը նյութական վնաս է հասցվել:

Նյութական պատասխանատվություն են կրում նաև շինարարական կազմակերպությունների այն աշխատողները, որոնք անմիջականորեն պատասխանատու են նյութական արժեքների պահպանության համար: Նյութերի կորուստը և փչացումը պետք է փոխհատուցվեն մեղավոր անձանց հաշվին:

Շինարարական կազմակերպությունների և պատվիրատուների միջև պայմանագրային ու ֆինանսական կարգապահության ամրապնդումը, տնտեսական-ֆինանսական հարաբերությունների և հաշվարկների հետագա կատարելագործումը տնտհաշվարկի սիստեմի հետագա զարգացման պարտադիր պայմանն է:

Ռուբլով վերահսկողությունը շինարարական կազմակերպությունների գործունեության նկատմամբ: Ռուբլով վերահսկողության նշանակությունն այն է, որ դրամական ցուցանիշների միջոցով հայտնաբերվեն աշխատանքների որակն ու արդյունքները, իրականացվի տնտեսական ներգործություն՝ յուրաքանչյուր ձեռնարկության և նրա աշխատողների գործունեության վրա: ՄՄԿՊ Ծրագրում ընդգծված է տնտեսական գործունեության նկատմամբ ռուբլով վերահսկողության մշտական բարելավման անհրաժեշտությունը:

Շինարարական կազմակերպությունների աշխատանքների որակական ցուցանիշների նկատմամբ կատարվող ռուբլով վերահսկողությունն իրականացվում է շինարարության ծախսումների բոլոր տարրերը դրամական ձևով հաշվարկելու, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը կալկուլյացիա անելու, շինարարական կազմակերպությունների շահութաբերությունը երևան հանելու միջոցով: Թե՛ դրամական միջոցների մուտքը և թե՛ դրանց ծախսումը կազմակերպվում են այնպես, որ դրանք համապատասխանեն պլանի քանակական ու որակական ցուցանիշների կատարման ընթացքին, հնարավորություն տան ֆինանսական լծակների միջոցով ներգործել շինարարական կազմակերպությունների վրա:

Շինարարական կազմակերպությունների աշխատանքը և նրանց հատկացված միջոցների օգտագործման ճշտությունը

վերահսկում են. պետութ՞յան համապատասխան տնտեսական ու ֆինանսա-վարկային օրգանները: Ռուբլով փոխադարձ վերահսկողութ՞յուն է իրականացվում պատվիրատուի և կապալառուի, կապալառուի և մատակարարների, տրանսպորտային, մեքենաշահագործման և այլ տնտեսութ՞յունների կողմից:

Շինարարութ՞յան կապալային պայմանագրերը և շինարարութ՞յան համար անհրաժեշտ նյութական ռեսուրսներ մատակարարելու և ծառայութ՞յուններ կատարելու տնտեսական պայմանագրերը կնքվում են պետական պլանում նախատեսված առաջադրանքներին համապատասխան: Պայմանագրերի կատարումը վերահսկվում է շինմոնտաժային աշխատանքների ծավալի, օբյեկտները շահագործման հանձնելու, մատակարարման և տարբեր ծառայութ՞յունների ծավալի ու ժամկետների պլանի կատարման ցուցանիշներով: Այդ վերահսկողութ՞յունը նպաստում է շինարարական արտադրութ՞յունը ժամանակին ապահովելու ռեսուրսներով և անհրաժեշտ պայման է ծառայում օբյեկտների ու արտադրական կարողութ՞յունների գործարկման հանձնելու ծրագիրը հաջող կատարելու և շինարարական կազմակերպութ՞յունների շահութաբերութ՞յունը բարձրացնելու համար:

Շինարարական կազմակերպութ՞յունները որոշ վճարումներ (աշխատավարձ, մատակարարների հաշիվների վճարում, բյուջեին արվող վճարումները, բանկի փոխատվութ՞յունների վերադարձ և այլն) կատարում են խստորեն սահմանված ժամկետներին և պլանի կատարման ընթացքից անկախ:

Այն դեպքում, երբ շինարարական կազմակերպութ՞յուններին անհրաժեշտ դրամական միջոցները ստացվում են պլանի կատարմանը համապատասխան, այդպիսի կարգը խթանում է պլանի կատարմանը, ծախսերը կրճատելու և արտադրութ՞յան ռեզերվները իրացնելու համար միջոցառումների մշակմանը:

Ռուբլով վերահսկելու համար լուրջ նշանակութ՞յուն ունի շինարարութ՞յունը ֆինանսավորելու և շինարարական կազմակերպութ՞յուններին վարկավորելու սահմանված կարգը:

Շինարարության ֆինանսավորում ու շինարարական կազմակերպությունների վարկավորում և նրանց ու ալլ կազմակերպությունների միջև դրամական հաշվարկներ իրականացնելիս բանկերն իրենց տրամադրության տակ անհրաժեշտ սովյալներ ունեն շինարարական չուրաքանչյուր կազմակերպության գործունեության վիճակի մասին: Այդ սովյալների հիման վրա բանկերը վերահսկում են օբյեկտները շահագործման հանձնելու պլանի, շինմոնտաժային աշխատանքների ծրագրի, աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատանքների ինքնարժեքի իջեցման, աշխատավարձի ֆոնդի ծախսման առաջադրանքների, կուտակումների, շահույթներից բյուջեին կատարվող մուծումների, շրջանառու միջոցների օգտագործման պլանի և այլ ցուցանիշների կատարման ընթացքը:

3. ՆԵՐՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տնտեսության վարման տնտեսվարկային մեթոդը տարածվում է ո՛չ միայն ամբողջ շինարարական կազմակերպության, այլև նրա ստորին տնտեսական բաժանմունքների գործունեության վրա: Ներտնտեսական հաշվարկը շինարարական կազմակերպությունների և ձեռնարկությունների տնտեսական հաշվարկի անբաժանելի բաղկացուցիչ մասն է, նրա շարունակությունը և որոշ չափով մանրամասնացումը:

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի «Արդյունաբերության կառավարումը վերակառուցելու մասին» որոշման մեջ (1929 թ.) նշվում է՝ «Ձեռնարկությունների տնտեսվարկի հետևողականորեն անցկացումը պահանջում է միջոցներ ձեռք առնել ի հայտ բերելու ձեռնարկության առանձին ցեխերի ու բաժինների հաջողություններն ու պակասությունները: Այդ նպատակով ձեռնարկությունը պետք է պլանային առաջադրանք սահմանի իր առանձին մասերի (ցեխերի, բաժինների) համար: Ձեռնարկության ցեխերում, բաժիններում պետք է տարվի ամսվա ընթացքում կատարված ծախսերի (այդ թվում նաև նրանց բաժին ընկած ամբողջի-

զացիոնն և վերադիր ծախսերի) հաշվառում: Ձեռնարկության առանձին մասերի ծախսերը պետք է համադրվեն նրանց արտադրական գործունեության արդյունքների հետ»¹:

Ներտնտեսական հաշվարկի առանձնահատկությունները: Արտադրական շինարարական տեղամասերը և բրիգադները միայն համապատասխան կազմակերպությունների (տրեստների, վարչությունների) ստորաբաժանումներն են, ուստի իրենց կազմակերպությունից դուրս նրանք չեն կարող հանդես գալ որպես ինքնուրույն տնտհաշվարկային միավորներ: Նրանք տնտեսական հարաբերությունների մեջ չեն մտնում մյուս ձեռնարկությունների, պատվիրատուների, ենթակապալառուների, բանկերի, ֆինանսական օրգանների և վերադաս տնտեսական կազմակերպության հետ: Հետևաբար տեղամասերի և բրիգադների համար անհրաժեշտություն չկա տնտեսական պայմանագրեր կնքել, բանկում ունենալ իրենց հաշվարկային հաշիվը, իրենց տնօրինության տակ ստանալ սեփական հիմնական և շրջանառու միջոցներ, նյութեր գնել և պատրաստի արտադրանքը հանձնել, օգտվել բանկային վարկերից և բյուջետային ֆինանսավորումից, առանձին հաշվեկշռով կատարել իրենց գործունեության հաշվառումը:

Սակայն շինարարական միասնական պրոցեսում տեղամասերը և բրիգադներն ունեն արտադրական որոշակի առանձնացվածություն: Այդ կապակցությամբ շինարարական յուրաքանչյուր կազմակերպության առաջ խնդիր է ծառանում՝ տեղամասերի ու բրիգադների աշխատանքները կազմակերպել այնպես, որ դրանց աշխատողները ներգրավվեն պլանները բոլոր ցուցանիշների գծով կատարման համար մղվող ակտիվ պայքարի մեջ՝ առավել խնայողաբար ու ռացիոնալ օգտագործելով աշխատանքային, նյութական և դրամական ռեսուրսները: Շինարարական բազմաթիվ կազմակերպությունների բազմամյա փորձը վկայում է այն մասին, որ այդ խնդրի կատարման կարևորագույն միջոց է ծառայում ներտնտեսական հաշվարկը:

¹ «Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам», т. 2, стр. 127.

Տեղամասերի ու բրիգադների աշխատանքները տնտեսաշարկի հիման վրա կազմակերպելը բարելավում է նրանց արտադրատնտեսական գործունեությունը, բարձրացնում է բոլոր աշխատողների պատասխանատվությունն ու շահագրգռվածությունը պլանների հաջող կատարման գործում, նրանց սովորեցնում է գործերը վարել ռացիոնալ կերպով:

Տնտեսաշարկի սկզբունքների իրականացումը շինարարական տեղամասերում և բրիգադներում: Շինարարական կազմակերպությունների ստորին օղակների տնտեսական հաշվարկն իրականացվում է նույն սկզբունքներով, ինչ որ ամբողջ շինարարական կազմակերպության տնտեսական հաշվարկը: Սակայն դրա իրականացման կոնկրետ ձևերը տարբեր են:

Տնտեսաշարկի այն սկզբունքին համապատասխան, որը պահանջում է արտադրության վրա կատարված ծախսերի փոխհատուցում և արտադրության շահավետություն, ներտնտեսական հաշվարկի համար հիմնական պահանջը փաստական ծախսերը պլանային կամ նախահաշվային նորմաների հետ համադրելն է, միջոցների խնայողության կամ գերածախսի հայտնաբերումը: Տնտեսաշարկային բոլոր տեղամասերի և բրիգադների համար՝ հաշվի առնելով նրանց աշխատանքների բնույթն ու պայմանները, սահմանվում են աշխատանքի, նյութատեխնիկական և դրամական ռեսուրսների ծախսումների առաջադիմական նորմաների վրա հիմնված պլանային առաջադրանքներ: Յուրաքանչյուր ստորաբաժանման գծով տարվում է փաստական ծախսերի հաշվառում: Փաստական ծախսումները պլանային կամ նախահաշվայինի հետ համադրելու միջոցով ի հայտ են բերվում ստորաբաժանման գործունեության արդյունքները, այդ թվում վերջնական արդյունքը՝ պլանի համեմատությամբ խնայողության կամ գերածախսի գումարը:

Ներտնտեսական հաշվարկի պարտադիր պայմանն է հանդիսանում ստորաբաժանումների որոշ օպերատիվ-արտադրական ինֆուրույնությունը: Վարչական տեսակետից նրանցից լուրաքանչյուրն առանձնացվում է որպես առանձին օղակ՝

պլանով հատկացված ռեսուրսներն ինքնուրույն կերպով օգտագործելու իրավունքով: Արտադրական տեղամասի պետը իրավունք ունի տնօրինելու (շինարարության նախագծային, տեխնոլոգիական փաստաթղթերին և աշխատանքների հաստատված պլանին համապատասխան) նյութա-տեխնիկական ռեսուրսները և կադրերի տեղաբաշխումը, աշխատանքի ընդունել (կադրերի բաժնի միջոցով) բանվորներ, ինժեներատեխնիկական ուշխատողներ և ծառայողներ, որոշել պարզևատրման ֆոնդի չափերը ըստ վարպետների տեղամասերի՝ սահմանված շրջանակներում:

Ներտնտեսական հաշվարկի ժամանակ օգտագործվում է նաև արտադրության արդյունքների մեջ նյութական շահագրգռվածության սկզբունքը: Տնտհաշվարկային ստորաբաժանումների նյութական խրախուսման սիստեմը կախման մեջ է դրվում նրանց տնտեսական գործունեության արդյունքներից, պլանային առաջադրանքների քանակական ու որակական ցուցանիշների կատարումից:

Տնտհաշվարկային ստորաբաժանումները որոշակի նյութական պատասխանատվություն են կրում պլանային առաջադրանքները չկատարելու, աշխատանքների կատարման ժամկետները խախտելու, անորակ և ոչկոմպլեկտային արտադրանք տալու, խոտանից առաջացած կորուստների և նյութական արժեքների փշացման համար:

Շինարարական կազմակերպության տնտհաշվարկային ստորաբաժանումների տնտեսական օպերացիաները մեծ մասամբ կարող են գնահատվել դրամական ձևով, վերահսկողության ենթարկվել ռուբլով: Ինչպես ցույց է տալիս շինարարական առաջավոր կազմակերպությունների փորձը, նոր մեքենաների ու սարքավորումների կիրառման, նոր տեխնոլոգիայի ներդրման, նյութերի ու կոնստրուկցիաների փոխարինման տնտեսական արդյունավետությունը, ինչպես նաև ապարատի պահման ծախսումները և շատ այլ ծախսեր տնտհաշվարկի պայմաններում հաշվի են առնվում ու վերահսկողության ենթարկվում դրամական ձևով:

Ներտնտեսական հաշվարկի հաջող արմատավորումը պա-

հանջում է անհրաժեշտ պայմաններ ստեղծել դրա համար: Փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ շինարարական կազմակերպությունում արտադրական օղակները, առանձնապես մանրերը, որքան քիչ լինեն, այնքան ավելի լավ պայմաններ կլինեն ներտնտեսական հաշվարկի իրականացման համար: Այդ կապակցությունը հատուկ նշանակություն են ձեռք բերում շինարարական կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքի կատարելագործման միջոցառումները:

Տեղամասերն ու բրիգադները տնտհաշվարկի փոխադրելը պահանջում է թե՛ պլանի և թե՛ հաշվառման համար սահմանել նրանց գործունեության միասնական ցուցանիշները: Արտադրության ծավալի, նյութական ռեսուրսների ծախսման, աշխատանքի արտադրողականության, տնտեսման արդյունքների չափման ցուցանիշների միասնականությունը հնարավորություն է տալիս փաստացի ցուցանիշները համեմատելու պլանայինի հետ, ճիշտ և լիովին բացահայտելու տնտեսական յուրաքանչյուր ստորաբաժանման նվաճումներն ու թերությունները:

Մի շարք կառույցներում կատարված ծախսումները դրամաձևով արտահայտելու համար կիրառվում են պլանա-հաշվարկային գների վրա հիմնված գնացուցակներ՝ կատարված աշխատանքների, արտադրանքի, կիսաֆաբրիկատների, դետալների, ինչպես նաև օժանդակ ու սպասարկող տնտեսությունների ծառայությունների գնահատման համար:

Ներտնտեսական հաշվարկի կազմակերպման գործում կարևոր դեր ունի տնտհաշվարկային ստորաբաժանումների արտադրա-տնտեսական գործունեության ժամանակին կատարվող հաշվառումը: Փորձը ցույց է տալիս, որ շինմոնտաժային վարչությունների ներսում տնտհաշվարկի արմատավորման ժամանակ նպատակահարմար է՝ առանց ընդարձակելու և առանց բարդացնելու հաշվառման աշխատանքը, ուղադրությունը կենտրոնացնել տնտհաշվարկային ստորաբաժանումների աշխատանքների ոչ մեծ թվով առավել կարևոր ցուցանիշների վրա: Ընթացիկ հաշվառման տվյալների

հիման վրա որոշվում են գործող հաշվետվության ցուցանիշները, որոնք օգտագործվում են տնտհաշվարկային առանձին օղակների աշխատանքները վերլուծելու և վերահսկելու համար:

Ներտնտեսական հաշվարկի արմատավորումը պահանջում է նաև պահեստային տնտեսության լավ կազմակերպում, այն հաշվով, որ ապահովվի նյութական արժեքների լավ պահպանումը, դրանք ժամանակին՝ պլանային պահանջներին համապատասխան հասցվի աշխատանքային տեղերը, մտցվի բացթողնվող նյութական արժեքների ճիշտ հաշվառում:

Ներտնտեսական հաշվարկի կազմակերպման պարտադիր պայմաններից մեկը տնտհաշվարկային օղակների աշխատանքների հանրագումարի բերման և զնախատման ճիշտ սխտեմն է: Աշխատանքները հանրագումարի բերելու որոշակի պարբերականության պահպանումը (սովորաբար յուրաքանչյուր ամիս) և այդ արդյունքների լայն կոլեկտիվ քննարկումը, առաջավորների նյութական խրախուսանքը և թերությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելը գործուն միջոցներ են հանդիսանում ներտնտհաշվարկը ամրապնդելու համար:

Տնտեսական հաշվարկի լայն վարզացման համար կարևոր է սխտեմատիկորեն բարձրացնել տնտեսական ղեկավարների տնտեսագիտական պատրաստականությունը, բոլոր բանվորներին ու ծառայողներին զինել տնտեսական գիտելիքների հիմունքներով:

4. ՏԵՂԱՄԱՍՍԵՐԻ ԵՎ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՏՆՏԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ներտնտեսական հաշվարկի կազմակերպումը հիմնվում է աշխատանքների որոշակի ցուցանիշների սահմանման վրա, որոնցով մշակվում են արտադրական օղակների պլանային առաջադրանքները, սահմանվում են նորմատիվներ, որոնց կատարման հաշվառման տվյալների հիման վրա ի հայտ են բերվում գործունեության արդյունքները:

Տեղամասերի տնտեսաշարկային գործունեության ցուցանիշները: Աշխղեկի տնտեսաշարկային տեղամասի համար սահմանվում են հետևյալ ցուցանիշները՝ օբյեկտները շահագործման հանձնելը. շինմոնտաժային աշխատանքների ծավալը՝ ըստ գլխավոր կապալի և սեփական ուժերով. մեկ բանվորի արտադրանքը. շինմոնտաժային աշխատանքների տվյալ ծավալի վրա կատարված նյութերի ծախսումը. աշխատավարձի ֆոնդը:

Աշխղեկների տեղամասերի շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքները ներկայումս, որպես կանոն, չեն սահմանվում, որովհետև ինքնարժեքի մակարդակը կախված է ո՛չ միայն արտադրական տեղամասի աշխատանքներից, այլև զգալի չափով շինարարական կազմակերպության մյուս ստորաբաժանումների (մատակարարման, տրանսպորտի օրգանների, օժանդակ ձեռնարկությունների և այլն) գործունեությունից:

Աշխղեկների տեղամասերի արտադրության ծախսումների մեծությունը շինարարական կազմակերպությունների մեծամասնությունում վերահսկվում է շինմոնտաժային աշխատանքների կատարված ծավալի համար հիմնական նյութական ռեսուրսների և աշխատավարձի նորմատիվային ու փաստացի ծախսերը համադրելու միջոցով:

Տնտեսաշարկային տեղամասի գործունեության վերջնական արդյունքները, որոնք որոշվում են փաստական և պլանային ծախսերի հարաբերությամբ, սահմանվում են ո՛չ թե ծախսերի ընդհանուր գումարով, այլ դրանց առանձին տեսակների գծով:

Աշխղեկների տեղամասերում վերահսկողություն է իրականացվում աշխատանքի ծախսումների, շինարարական մեքենաների ու նյութական ռեսուրսների (նյութեր, դետալներ, կիսաֆարրիկատներ և այլն) օգտագործման նորմաները պահպանելու նկատմամբ:

Ռեսուրսների օգտագործման վերահսկողությունն իրականացվում է աշխատանքի, աշխատավարձի և հիմնական նյութերի փաստացի ծախսումները շինմոնտաժային աշխատանք-

ների կատարված ծավալի նորմաների հետ ամենամսյա համադրման միջոցով, որի շնորհիվ հայտաբերվում են եղած շեղումները: Շինարարական կազմակերպությունների ղեկավարները պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում մանրամասնորեն քննարկեն այդ շեղումների պատճառները և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն հետագայում հայտաբերած ռեզերվները լրիվ օգտագործելու կամ գերաժախսի դեպքում՝ ծախսերը կրճատելու համար:

Ներտնտեսական հաշվարկի են փոխադրվում շինարարական կազմակերպությունների նաև այլ օղակներ (օժանդակ արտադրությունը, մատակարարման գրասենյակները, տրանսպորտային տնտեսությունները և այլն):

Բրիգադների տնտեսավարկային գործունեության ցուցանիշները: Շինարարության մեջ տնտեսական հաշվարկի հետագա խորացում է հանդիսանում տնտեսավարկի տարրերի ներդրումը շինարարական բրիգադների աշխատանքներում: Առավել նպատակահարմար է տնտեսավարկի փոխադրել այն բրիգադները, որոնց աշխատանքի բնույթը հնարավորություն է տալիս նրանց համար սահմանելու ցուցանիշների որոշակի խումբ և նրանց ծախսած ռեսուրսների նկատմամբ հաշվառում կազմակերպելու:

Տնտեսավարկային բրիգադի գործունեությունը բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով. հանձնման ենթակա աշխատանքների ծավալով և դրանց կատարման ժամկետներով, մեկ բանվորին ընկնող արտադրանքով, աշխատավարձի ֆոնդով, շինանյութերի, դետալների, ինվենտարի և գործիքների օգտագործումով:

Բրիգադները տնտեսական հաշվարկի փոխադրելը պահանջում է համապատասխան նախապատրաստություն, այսինքն՝ նրանց աշխատանքների պլանների կազմում, շինմոնտաժային աշխատանքների խոշորացված տեսակների և շենքի ու կառուցվածքների կոնստրուկտիվ տարրերի միավորին ընկնող աշխատանքի ու հիմնական նյութերի ծախսման առաջադիմական նորմաների, շինարարության օբյեկտների նյութերի ծախսման լիմիտային քարտերի մշակում:

Տնտհաշվարկային բրիգադները գործունեությունը ընդունված է հանրագումարի բերել համապատասխան օբյեկտներում որոշակի աշխատանքների ավարտումից հետո: Տնտհաշվարկային այն բրիգադները, որոնք հասել են արտադրական ամենալավ ցուցանիշների, նյութապես խրախուսվում են շինարարական կազմակերպության պետի տնօրինության տակ գտնվող ֆոնդերից:

Բացի դրանից, շինարար բանվորների աշխատանքի վարձատրության գործավարձային-պարգևատրման և ժամանակավարձային-պարգևատրման սիստեմների մասին կանոնադրությանը համապատասխան բանվորները կարող են պարգևատրվել՝ նյութերի խնայողությամբ, ինչպես նաև կոնստրուկցիաներն ու դետալներն անվնաս պահելու համար:

Բերևոր բրիգադային տնտհաշվարկի ներդրման արդյունավետության մի օրինակ:

«Ցենտրոսպետրոլ» տրեստի Օմսկի մասնագիտացված վարչության էքսկավատորների անձնակազմը միշտ գերակատարում էր նորմաները, իսկ խողովակաշարերի անցկացումը և այլ աշխատանքներ ետ էին մնում: Աշխատանքների որակը, մեխանիզմների օգտագործումը հաճախ անբավարար էին: Նման դրույթյան պատճառն այն էր, որ էքսկավատորավարները, բուլդոզերավարները, փականագործ-խողովակագործները պատասխանատու էին միայն իրենց գործի համար և շահագրգռված չէին աշխատանքների վերջնական արդյունքներով՝ շարված խողովակների գծամետրերով:

էքսկավատորի մեքենավար Գ. Գուձեկոն առաջարկեց կազմակերպել մեխանիզատորների կոմպլեքսային տնտհաշվարկային բրիգադներ: Առաջարկությանը հավանություն տվեցին վարչության պարտիական և արհմիութենական կազմակերպությունները: Արդեն 1962 թվականի փետրվարին կազմակերպվեցին կոմպլեքսային տնտհաշվարկային 7 բրիգադներ, իսկ հետո դրանց թիվը հասցվեց 14-ի:

Մեխանիզատորների կոմպլեքսային տնտհաշվարկային բրիգադի մեջ մտնում են, որպես կանոն, էքսկավատորի 2 մեքենավարներ, սրանց 2 օգնականները, բուլդոզերի և խողովակաշարի մեքենավարը, մոտորիստը, 3—4 փականագործ-խողովակաշարողներ: Բրիգադի բարտականությունները կատարում է էքսկավատորի ավագ մեքենավարը, իսկ մյուս հերթափոխի աշխատանքները ղեկավարում է երկրորդ մեքենավարը: Բրիգադի կազմը հավաքադրվում է այն հաշվով, որ 3—4 մարդ ունենան խառը մասնագիտություններ:

Ցուրաբանչուր բրիգադին ամբացվում են մեխանիզմներ, ամբողջ կոլեկտիվը պատասխանատու է դրանց սարքինության համար, պրոֆիլակ-

տիկ վերանորոգումներ է անցկացնում ըստ գրաֆիկի: Մեխանիզմների պարապուրդը ազդում է բրիգադի յուրաքանչյուր անդամի աշխատավարձի վրա, ուստի բանվորները աշխատում են առավելագույն չափով օգտագործել մեքենաները:

Կոմպլեքսային տնտեսաշվարկային բրիգադին տրվում է մեկ ամսվա պլան-առաջադրանք և լիմիտագնման քարտ, որտեղ նշվում են նյութերի ծախսերը: Աշխատանքների ընտրությունը և նյութերի պահանջները նախապես համաձայնեցվում է բրիգադիի հետ: Ամսվա վերջում վարպետը կամ աշխղեկը ընդունում է բրիգադի կատարած աշխատանքները, ստուգում է նյութերի ծախսումները: Այնուհետև կարգադիր-առաջադրանքի և լիմիտագնման քարտի հիման վրա հանրագումարի են բերվում ամսվա աշխատանքների ընդհանուր արդյունքները: Նյութերի խնայողության համար տրվում է պարգև:

Ամսվա ընթացքում բանվորների հետ կատարվող բոլոր հաշվարկների հիմքում դրված է վերջնական արդյունքի մեկ միավորի՝ անցկացված խողովակների գծամետրի գնահատումը: Եթե առաջ մեկ բանվորը (էքսկավատորավարը, փականակագործ-խողովակաշարողը) ստանում էր գործավարձ, փակ մյուսները (բուլդոզերավարները, մոտորիստները, խողովակաշար մեքենավարները) ժամանակավարձ, ապա այժմ կոլեկտիվի բոլոր անդամների վաստակը կախված է աշխատանքի վերջնական արդյունքներից: Բրիգադի ներսում վաստակը բաշխվում է ելնելով կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի օրակաշխուհից և աշխատած ժամկետից:

Կոմպլեքսային տնտեսաշվարկային բրիգադները լիովին արդարացրին իրենց: Մի բանվորի արտադրանքը ավելացավ 29 տոկոսով, միջին աշխատավարձը աճեց գրեթե 7 տոկոսով:

Տնտեսաշվարկի արմատավորումը և մասսաների ստեղծագործական ակտիվության բարձրացումը: Ինչպես ցույց է տալիս փորձը, շինարարության մեջ ներտնտեսական հաշվարկը՝ սրա պատշաճ կազմակերպման դեպքում, նպաստում է շինարարների ողջ կոլեկտիվին ներգրավել պետական պլանի կատարման, ներքին ռեզերվների մոբիլիզացման համար մղվող ակտիվ պայքարի մեջ, ավելացնում է յուրաքանչյուր շինարարական կազմակերպության, յուրաքանչյուր տեղամասի ու բրիգադի տնտեսական կյանքի բոլոր բնագավառների խնայողությունը:

Ներտնտեսական հաշվարկը սերտորեն կապված է պլանների կատարման ու գերակատարման համար բանվորների ու ծառայողների սոցիալիստական մրցութային հետ: Շինարարական վարչությունների, տեղամասերի և բրիգադների կո-

լեկտիվները, մրցելով աշխատանքների առավել լավ ցուցանիշներ ձեռք բերելու, պլանային առաջադրանքները հաջող կատարելու համար, կոնկրետ պարտավորություններ են վերցնում շինարարության որակը բարձրացնելու, շինարարական մեքենաները, սարքավորումներն ու գործիքներն է՛լ ավելի արդյունավետ օգտագործելու, նյութերի խնայողության, արտապլանային շահույթ ստանալու ուղղությամբ Այդ պարտավորությունների կատարման վրա հաջողությամբ ներգործում է շինարարական կազմակերպությունների ներքին տնտհաշվարկը:

Վերջին ժամանակներին լայն տարածում է գտել խնայողության անձնական հաշիվների պրակտիկան: Այդ հաշիվներում գրանցվում են շինարարական արտադրության առաջավորների ձեռք բերած տնտեսումները:

Շինարարական շատ բանվորների անձնական հաշիվներում արդեն կան այնպիսի առաջարկություններ, որոնք կարող են ապահովել տասնյակ և հարյուր հազարավոր ռուբլիների խնայողություն:

Բերենք տեղեկատվային րիզադի մի անձնական ճաշի օրինակ (ճազար ռուբլիներով)

Ցուցանիշները	Բրիգադի պարտավորությունները	Տարեկան տնտեսումները
Նյութերի տնտեսումը	5,11	5,82
Տնտեսում՝ շինարարության ժամկետների կրճատումից	5,06	3,81
Տնտեսում՝ շինըր «սանիվներից» մոնտաժելու շնորհիվ	2,81	2,87
Տնտեսում՝ ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրումից	4,85	6,68
Ընդհանուր տնտեսումը	17,83	19,18
Աշխատանքի որակը	կավից ոչ ցածր	լավ

Շինարարության արագության, որակի, խնայողության համար մասսայական պայքարը, առաջավորների նվաճումների լայն ցուցադրումը, նրանց փորձի և նվաճումների տարածումը կարևոր դեր են խաղում ներքին ռեզերվների է՛լ ավելի լրիվ հայտնաբերման, շինարարական արտադրության ինքնարժեքի իջեցման և շահութաբերության բարձրացման գործում:

Զնայած տնտեսության տնտհաշվարկային մեթոդով վարելու բարձր արդյունավետության, շինարարական որոշ կազմակերպություններում պատշաճ ուշադրություն չեն դարձնում ներտնտեսական հաշվարկի կազմակերպման հարցերի վրա: Մի շարք դեպքերում գործը սահմանափակվում է միայն տեղամասին պլանային առաջադրանքներ տալով, որոնք շատ հաճախ փոխվում են. պլանների կատարման ստուգումը ձևական բնույթ է կրում. տեղամասի տնտհաշվարկային գործունեության արդյունքները չեն հայտաբերվում: Բրիգադների և առաջավորների աշխատանքի լավ օրինակները չեն խրախուսվում և քիչ են մասսայականացվում: Այդ թերությունների վերացումը և շինարարության մեջ ներքին տրնտհաշվարկի զարգացման ու ամրապնդման համար մղվող պայքարում մասսաների ակտիվության բարձրացումը զգալիորեն կբարելավեն շինարարական կազմակերպությունների տնտեսական ամբողջ աշխատանքը:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԴԵՐԸ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Շինարարական կազմակերպությունների և պատվիրատուների ֆինանսները: Շինարարական կազմակերպությունների արտադրական և տնտեսական գործունեության մեջ լայն մասշտաբներով օգտագործվում են դրամական կատեգորիաները: Կապիտալ ներդրումներն իրականացվում են նախահաշիվների համապատասխան, որոնք դրամական արտահայտությամբ որոշում են նոր շինարարության, գործող ձեռնարկությունների ընդլայնման և վերակառուցման ծախսերը: Շինարարական կազմակերպությունները դրամական ձևով փոխհատուցում են ստանում իրենց կատարած ծախսերի դիմաց և բանվորների ու ծառայողների հետ հաշվարկներ են կատարում՝ նրանց աշխատանքի համար (աշխատավարձ): Դրամական ձևով վճարվում են շինարարության համար անհրաժեշտ մեխանիզմները, սարքավորումները, կոնստրուկցիաները, նյութերը և արտադրության այլ միջոցները: Շինարարության նախահաշվային արժեքի իջեցումն իր արտահայտությունն է գտնում դրամական միջոցների տնտեսման մեջ: Շինարարական կազմակերպությունների շահույթը, որն ստացվում է կուտակման պլանները և շինարարության

ինքնարժեքի իջեցման առաջադրանքները կատարելու հետեւանքով, հանդես է գալիս որպես դրամական կուտակումների մի մասը: Եկամուտների հաշվին ստեղծվում են դրամական ֆոնդեր, որոնք այնուհետև պլանային կարգով օգտագործվում են արտադրության հետագա ընդլայնման ու կատարելագործման և այլ կարիքների համար: Այսպիսով, դրամական հարաբերությունները շինարարական կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության բաղկացուցիչ մասն են:

Կապիտալ ներդրումների համար պետության կողմից առանձնացված միջոցների ճիշտ օգտագործումն ապահովում է հիմնական ֆոնդերի աճը և, հետևաբար, արտադրության ընդլայնումն ու սոցիալիստական ձեռնարկությունների կուտակումների ավելացումը: Եվ ընդհակառակը, դրամական ռեսուրսների մանրացումը, դրանց օգտագործումը երկրորդական աշխատանքների վրա, էական վնաս է հասցնում արտադրության զարգացմանը: Աշխատանքների ծավալի և աշխատանքի արտադրողականության աճի պլանային առաջադրանքների համակողմանի և լրիվ կատարումն, ինչպես շինարարական կազմակերպությունների կատարած ծախսումների փոխհատուցման՝ ի հաշիվ ստացված դրամական եկամուտների, այնպես էլ կուտակումների գոյացման վճռական պայմանն է: Դրամական միջոցների ճիշտ և նպատակասլաց ծախսումն իր հերթին ակտիվորեն ներգործում է պլանը քանակական և որակական ցուցանիշներով կատարելու ընթացքի և արդյունքների վրա, հնարավորություն է տալիս ստեղծելու նյութական ռեսուրսների անհրաժեշտ պաշարներ, ժամանակին հաշվարկներ կատարելու բանվորների ու ծառայողների հետ, իրականացնելու աշխատանքի արտադրողականության աճը խթանող միջոցառումներ և քարելավելու տնտեսական մյուս ցուցանիշները: Դրամական միջոցների ոչ ճիշտ օգտագործումը հանգեցնում է անարտադրողական ծախսումների և արտադրատնտեսական գործունեության դժվարացման: Այսպես, պլանային նորմաների համեմատությամբ վարչա-կառավարչական ծախսերի ավելացումը վնաս

ների առաջացման պատճառներից մեկն է, որոնք առաջ են բերում մատակարարումների ու սպասարկումների թերավճարումներ և ֆինանսական կարգապահուիթյան այլ խախտումներ:

Այստեղից հետևում է, որ սոցիալիստական արտադրության ընդլայնումը կախված է դրամական միջոցների ճիշտ օգտագործումից, իսկ դրանց ստացումն ու ծախսումը կախված են շինարարական կազմակերպությունների արտադրական-տնտեսական գործունեության արդյունքներից: Այդ կախվածության և արտադրության ընդլայնման գործում դրամական հարաբերությունների ակտիվ դերի ու շինարարական կազմակերպությունների գործունեության բարելավման հիման վրա ուրբով արդյունավետ վերահսկողություն է իրականացվում կապիտալ ներդրումների և ինքնարժեքի իջեցման պլանների կատարման նկատմամբ: Դրամական հարաբերությունների սլանաչափ կազմակերպված սիստեմը՝ կապված դրամական ֆոնդերի գոյացման, բաշխման և օգտագործման հետ, հենց իրենից ներկայացնում է շինարարական կազմակերպությունների ֆինանսները:

Ֆինանսների օգնությամբ օբյեկտիվորեն գնահատվում են աշխատանքների ծավալի և օբյեկտները շահագործման հանձնելու, նախահաշիվների ու սլանային առաջադրանքների և այլ ցուցանիշների համեմատությամբ դրամական միջոցների ծախսերն իջեցնելու գծով կապիտալ ներդրումների սլանների կատարման ընթացքը և արդյունքները: Դա օգնում է ժամանակին բացահայտելու պետական սլանի առաջադրանքներից շեղումները, նրա կատարման գործում եղած թերությունները, հայտարարելու ներքին ռեզերվները, մշակելու և անցկացնելու կազմակերպական-տեխնիկական այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված լինեն թերությունների վերացմանը, շինարարական արտադրության ռեզերվների լրիվ իրացմանը:

Շինարարական ծրագիրը կատարելու համար պետությունը առանձնացնում է անհրաժեշտ դրամական միջոցներ: Այդ հատկացումների հաշիվին ոչ միայն փոխհատուցվում են շի-

նարարական կազմակերպությունների ծախսումները պլանային առաջադրանքների կատարման ասպարեզում, այլև գոյանում են շինարարության հիմնական և շրջանառու ֆոնդերը: Շինարարական կազմակերպությունների ֆոնդերի լրացումը զգալի չափով տեղի է ունենում իրենց սեփական կուտակումների հաշվին:

Շինարարական կազմակերպությունների ֆինանսները կարևոր զենք են արտադրանքի ինքնարժեքի իջեցման և արտադրության շահութաբերության բարձրացման, խնայողության ռեժիմի պահպանման և տնտեսական հաշվարկի ամրապնդման համար մղվող պայքարում:

ՄՄԿՊ Ծրագիրը տնտեսական, պարտիական և սովետական կազմակերպությունների առջև խնդիր է դրել՝ կոմունիստական շինարարության մեջ լիովին օգտագործել ապրանքա-դրամական հարաբերությունները և էկոնոմիկայի զարգացման այնպիսի գործիքներ՝ ինչպես փողը, վարկը և ֆինանսները: Արտադրության միջոցների հանրային սեփականության պայմաններում այդ կատեգորիաները ծառայում են կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի կառուցման գործին: Միայն ընդհանուր համաժողովրդական սեփականությունն անցնելիս դրանք իրենց կսպառեն, կմահանան և կփոխարինվեն հանրային սեփականության ուղղակի հաշվառման և բաշխման տնտեսական ավելի կատարելագործված կատեգորիաներով:

Կոմունիզմի ծավալուն կառուցման ամբողջ ժամանակաշրջանում ոչ միայն կպահպանվի, այլև կաճի աշխատանքների քանակի ու որակի նկատմամբ ռուբլով վերահսկողության դերը: Ապրանքա-դրամական հարաբերությունների և ռուբլով վերահսկողության օգտագործումը հնարավորություն է տալիս մոբիլիզացնելու այն միջոցները, որոնք նախատեսված են կապիտալ ներդրումների ֆինանսավորման, պետական բյուջեից կատարվող հատկացումների տնտեսման համար ռեզերվներ որոնելու, շինարարության ֆինանսավորման ըստ ամենայնի բարելավման ուղիով միջոցները իրենց նպատակին ծախսելու, շինարարական կազմակերպությունների

դրամական ֆոնդերի ապահովության և դրանք առավել արդյունավետ օգտագործելու, ֆինանսական պլանների կատարման ամենօրյա ստուգման համար:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները:
Պետական ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների կապիտալ ներդրումները ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների, շահույթների, ամորտիզացիոն հատկացումների, ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների ներքին ռեսուրսների հաշվին:

Պետական բյուջեի միջոցները կազմում են պետական կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի մոտավորապես երկու երրորդը: 1962 թվականին, օրինակ, պետական բյուջեից կապիտալ ներդրումների ֆինանսավորման գումարը կազմել է 19,7 մլրդ. ռուբլի:

Պետական բյուջեում կենտրոնացվում է սոցիալիստական տնտեսության կուտակումների հիմնական մասը: Այդ կուտակումները ծախսվում են ժողովրդական տնտեսության, կուլտուրայի հետագա զարգացման և հասարակական այլ կարիքների բավարարման համար: Կուտակումների ղգալի բաժինը ծախսվում է կապիտալ շինարարության վրա:

Միասնական կենտրոնացված դրամական ֆոնդի առկայությունը, ինչպիսին պետական բյուջեն է, հնարավորություն է ստեղծում հասարակության պահանջմունքները բավարարելու նպատակով նախատեսված միջոցների պլանաչափ բաշխման և վերաբաշխման համար, ժողովրդական տնտեսության ուսշ ճյուղերում կամ տնտեսական վարչական շրջաններում ստացված ղուտ եկամուտը կարող է բաշխման կարգով ուղղվել այլ ճյուղերի և տնտեսական շրջանների զարգացմանը, կոտնտեսությունների և կոոպերատիվ կազմակերպությունների գուտ եկամտի այն մասը, որը մշտնում է բյուջե, վեր է ածվում համաժողովրդական սեփականության և օգտագործվում է համապետական նպատակներով: Այսպիսով, բյուջեն կարևոր դեր է խաղում պարտիայի և կառավարության կողմից իրականացվող ժողովրդական տնտեսության պլանային ղեկավարության գործում: Այն ապահովում է ֆինանսական ռեսուրսների ճիշտ ուղղությունը՝ հաշվի առնելով տնտեսության որոշակի ճյուղերի և տնտեսական շրջանների զարգացման նպատակահարմարությունը:

Ամորտիզացիոն հատկացումները հիմնական ֆոնդերի կապիտալ վերանորոգման և նոր շինարարության, գործող

ձեռնարկությունների վերակառուցման ու ընդլայնման համար կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուր են ծառայում: Նոր շինարարության, վերակառուցման և հիմնական ֆոնդերի ընդլայնման համար նախատեսված ամորտիզացիոն ֆոնդի գումարները կուտակվում են բանկում՝ կապիտալ ներդրումների ֆինանսավորման հաշիվներում: Այդպիսի կարգը բացառում է այդ միջոցները ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների այլ կարիքների վրա օգտագործելու հնարավորությունը:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրներում ամորտիզացիոն հատկացումները գրավում են ներկայումս երկրորդ տեղը (բյուջետային հատկացումներից հետո): 1962 թվականին ամորտիզացիոն ֆոնդերի հաշվից պետական ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար տրվում է 4,6 մլրդ. ռուբլի:


Ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների շահույթները նույնպես կարևոր աղբյուր են ծառայում կապիտալ ներդրումները ֆինանսավորելու համար, ընդ որում կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի մեջ շահույթների տեսակարար կշիռը վերջին տարիներս բարձրանում է (1957 թ. 8,5 տոկոսից 1962 թ. մինչև 14,2 տոկոս): 1962 թվականին կապիտալ ներդրումների ֆինանսավորմանը՝ ի հաշիվ իրենց շահույթների, տրվում է 4,4 մլրդ. ռուբլի:

Ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար օգտագործվող ներհին ռեսուրսներին են վերաբերում մի շարք աղբյուրներ: Դրանց կազմում զգալի տեղ է գրավում շահից դուրս եկած գույքի իրացումից ստացված մուտքը: Ձեռնարկությունները և տնտեսական կազմակերպություններն իրավունք ունեն սահմանված կարգով իրացնելու հնացած և իրենց համար պետք չեկող սարքավորումները, մեքենաները և հիմնական ֆոնդերի այլ տարրեր: Շարքից դուրս եկած գույքի վաճառքից ստացված միջոցները (հանելով դրա իրացման ծախսերը) օգտագործվում են կապիտալ

ներդրումների ֆինանսավորման համար: Կապիտալ ներդրումների համար օգտագործվում են նաև շինարարության պրոցեսում ստացված հավընթաց արտադրանքի խրացումից գոյացած եկամուտները (օրինակ, հանքի շինարարության ժամանակ ստացված ածխի կամ նավթահորեր փորելիս ստացված նավթի իրացումից): 1962 թվականին պետական ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների ներքին ռեսուրսների հաշվին կապիտալ ներդրումների ֆինանսավորմանն է ուղղվել 2,3 մլրդ. ռուբլի:

Պետական ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը երևում է հետևյալ սխեմայից.

ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԸՍՏ 1962 Թ. ՊԼԱՆԻ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)



ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլանով նախատեսված կապիտալ ներդրումների ծավալն ապահովելու համար առաջին հերթին ուղղվում են ձեռնարկությունների ու տնտեսական կազմակերպությունների տնօրինության տակ եղած ռեսուրսները: Կապիտալ ներդրումների ծավալի և այդ նպատակների համար ուղղված սեփական ռեսուրսների միջև եղած տարբերությունը կազմում է բյուջետային միջոցների հաշվին կատարվող ֆինանսավորման գումարը:

Իրամական միջոցների կենտրոնացված ֆոնդից կատարվող հատկացման գումարը որոշվում է ՍՍՌՄ-ի, միութենական ռեսպուբլիկաների և տեղական բյուջեներում: Բյուջեն հաստատելիս սահմանվում է նաև պետական ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների սեփական միջոցների այն բաժինը, որը տրվում է կապիտալ ներդրումների ֆինանսավորմանը:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման պլանն իրենից ներկայացնում է ժողովրդական տնտեսության միասնական ֆինանսական պլանի, այսինքն՝ ՍՍՌՄ պետական բյուջեի կարևորագույն մասերից մեկը: Կապիտալ ներդրումների կենտրոնացված պլանավորումը հնարավորություն է տալիս, մի կողմից, ակտիվորեն ներգործելու պլանի կատարման ընթացքի, շինարարության արժեքի և միջոցների շրջապտույտի արագացման վրա, և մյուս կողմից, ապահովելու ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը շինարարության գործարկման և կարևորագույն օբյեկտներում, կանխելու դրանց մանրացումը և երկրորդական պետքերի համար օգտագործումը ի վնաս անհետաձգելի կարիքների: Բոլոր հատկացումները բաշխվում են ըստ միութենական ռեսպուբլիկաների ժողտնտխսրհների, մինիստրությունների, գերատեսչությունների:

Ժողովրդակալ տնտեսության զարգացման պլաններին և պետական բյուջեին համապատասխան, ժողտնտխսրհները, մինիստրությունները, գերատեսչությունները և նրանց վարչությունները կապիտալ ներդրումների պլանում մտած կա

ոււյցների համար սահմանում են տվյալ տարվա ֆինանսավորման լիմիտը (սահմանային գումարը): Լիմիտների մեջ մտցվում են այն միջոցները, որոնք անհրաժեշտ են պլանով նախատեսված կապիտալ ներդրումները ֆինանսավորելու և շինարարութայն շրջանառու միջոցներ ստեղծելու կամ համալրելու նպատակով հատկացումներ անելու համար:

Ֆինանսավորման լիմիտի նաշվարկը (օրինակ) (նազ. ուր.)

	Առաջին կառույց	Երկրորդ կառույց
1. Կապիտալ ներդրումների ծավալը մեկ տարում	23180	23180
2. Սեփական ներդրումներ	4500	3600
Այդ թվում.		
ա) ամորտիզացիոն հատկացումներ	2700	2550
բ) շահույթ	1500	900
գ) այլ աղբյուրներ	300	150
3. Շինարարութայն շրջանառու միջոցներ (աճումը +, նվազումը —)	—1319,6	+1500
4. Տնտեսում ինքնարժեքի իջեցումից և պլանային կուտակումներ	35	40
5. Բյուջետային միջոցներ (1—2±3—4)	17325,4	21040
6. Ֆինանսավորման լիմիտ (2+5)	21525,4	24640

Երկու կառույցներն էլ ունեն կապիտալ ներդրումների միատեսակ ծավալ (23180 հազարական ուրի), բայց ֆինանսավորման տարբեր լիմիտներ (առաջինը՝ 21825,4 հազ. ուր., երկրորդը՝ 24640 հազ. ուր.):

Դա բացատրվում է նրանով, որ առաջին դեպքում ծախսումների մի մասը ծածկվում է ի հաշիվ շրջանառու միջոցների կրճատման (1319,6 հազ. ուր.), իսկ երկրորդ դեպքում շրջանառու միջոցները լրացվում են 1500 հազ. ուրբով: Քանի որ կառույցներում աշխատանքների մի մասը կատարվում է տնտեսական նշանակով, ապա որպես ծախսումները ծածկելու աղբյուրներ հաշվի են առնված պլանային կուտակումների գումարները և ինքնարժեքի իջեցման առաջադրանքները:

Ֆինանսավորման լիմիտներում միջոցների բոլոր աղբյուրները ցույց են տրվում եռամսյակներով: Շինարարությունը ֆինանսավորելու միջոցները տրվում են եռամսյակային

հատկացումների սահմաններում: Կապիտալ ներդրումների ֆինանսավորման բոլոր աղբյուրներից ստացված միջոցները պահելու նպատակով յուրաքանչյուր կառուցվող (գործող) ձեռնարկության համար բանկերում բաց են արվում ֆինանսավորման հաշիվներ: Քանի որ ֆինանսավորման աղբյուրներում զգալի բաժինը գրավում են ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների սեփական միջոցները, կարևոր է սիստեմատիկ վերահսկողությունն ապահովել կուտակման պլանների կատարման և ներտնտեսական ռեսուրսների մոբիլիզացման նկատմամբ: Սեփական միջոցների ոչ-ժամանակին ստացումն ուշացնում է կապալառուներին, մատակարարներին և այլ կազմակերպություններին հասանելիք վճարումները, որն իր հերթին առաջ է բերում անարտադրողական կորուստներ և տնտեսական նորմալ գործունեության խախտումներ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ ձեռնարկություններում և տնտեսական կազմակերպություններում զգալի հնարավորություններ կան կապիտալ ներդրումների ֆինանսավորումը ներքին աղբյուրների հաշվին ավելացնելու համար:

Այսպես, 1961 թվականին Սվերդլովսկի, Չելյաբինսկի, Վոլգոգրադի, Օրենբուրգի և մի քանի այլ ժողտնտիսորհների շատ ձեռնարկությունների հաշիվների ստուգման ժամանակ պարզվեց, որ գործարկված մի շարք օբյեկտներ հիմնական ֆոնդերի մեջ չեն մտցվել: Դրա հետևանքով շինարարության ֆինանսավորման պլաններում ամորտիզացիոն հատկացումներ չեն նախատեսվել փաստորեն շահագործվող օբյեկտների համար: Օբյեկտների շահագործման ամբողջ ժամանակի համար ամորտիզացիայի հաշվարկումն ապահովեց զգալի չափով ավելացնելու կապիտալ ներդրումների ֆինանսավորմանն ուղղված ամորտիզացիոն ֆոնդը: Որոշ ձեռնարկությունների պահեստներում ու ցեխերում պահվում էին չգործող, մաշված շատ սարքավորումներ: Դրանց իրացումը նույնպես հնարավորություն տվեց շինարարության ֆինանսավորման համար ներգրավել լրացուցիչ միջոցներ:

Կոլտնտեսությունների և կոոպերատիվ կազմակերպությունների կապիտալ ներդրումները ֆինանսավորվում են սեփական այն եկամուտների հաշվին, որոնք պետության առջև

եղած պարտավորությունները կատարելուց հետո մնում են նրանց տնօրինության տակ: Կոլտնտեսությունների դրամական եկամուտների մի մասը, ամորտիզացիոն հատկացումները, մեքենաների, սարքավորումների, շենքերի, կառուցյունների իրացումից և հիմնական հոտի խոտանված անասունների վաճառքից և գիրացման փոխադրելուց ու մի շարք այլ աղբյուրներից ստացած մուտքերը մտնում են նրանց անբաժանելի ֆոնդերի մեջ:

Անբաժանելի ֆոնդերը օգտագործում են կոլտնտեսությունների նոր շինարարության, գործող հիմնական ֆոնդերի ընդլայնման, վերակառուցման և վերականգնման համար: Կոլտնտեսային կարգերի աճման ու ամրապնդման համընթաց անբաժանելի ֆոնդերը անընդհատ մեծանում են:

Եթե 1940 թվականին դրանք կազմում էին 2,77 մլրդ. ռուբլի, ապա 1961 թվականի վերջում՝ մոտ 26 մլրդ. ռուբլի, այսինքն՝ ավելացել էին ավելի քան 8 անգամ: Անբաժանելի ֆոնդերի միջոցները օգտագործվում են նաև միջկոլտնտեսային տարբեր ձեռնարկություններ ստեղծելու, ինչպես նաև կոլտնտեսությունները՝ պետական գյուղատնտեսական շինարարությանը, հիմնականում մեխիորատիվ և ոռոգման աշխատանքներին կոլտնտեսությունների մասնակցության համար:

Սոցիալիստական պետությունը երկարատև վարկերի կարգով կոլտնտեսություններին և կոոպերատիվ կազմակերպություններին համակողմանի ֆինանսական օգնություն է ցույց տալիս նրանց հիմնական ֆոնդերի ընդլայնման ու կատարելագործման համար, 1940 թվականին կոլտնտեսություններին տրվել է 87,3 մլն. ռուբլի երկարատև վարկ, իսկ 1960 թվականին՝ 621,2 մլն. ռուբլի, որից անասնաբուծական շենքերի կառուցման և ֆերմաների մեքենայացման համար՝ 195,9 մլն. ռուբլի, բոլոր տեսակի անասունների զնկու համար՝ 137,9 մլն., էլեկտրակայանների շինարարության, էլեկտրիֆիկացման և ռադիոֆիկացման համար՝ 72,3 մլն. մեխիորացիայի և ոռոգման համար՝ 23,5 մլն., գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար՝ 74,2 մլն. ռուբլի:

2. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շինարարությունը ֆինանսավորող բանկերը: Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի (բացառությամբ գյուղատնտեսության) կապիտալ ներդրումների ֆինանսավորումը և շինարարություն իրականացնող կապալային կազմակերպությունների կարճատև վարկավորումը դրված է կապիտալ ներդրումների ֆինանսավորման Համամիութենական բանկի վրա (ՍՍՌՄ Շինբանկ): Պետական ձեռնարկությունների և գյուղատնտեսական կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացնում է ՍՍՌՄ Պետբանկը: Այդ նշանակում է, որ ժողտնտխորհներին, մինիստրություններին և գերատեսչություններին առանձնացրած միջոցների ծախսումը, որը նրանք իրենց հերթին բաշխում են ըստ իրենց ենթակա կառույցների՝ կատարվում է բանկերի վերահսկողությամբ: Բանկերի պարտականությունն է նաև վերահսկել կապիտալ ներդրումներին ուղղված միջոցների ժամանակին և լրիվ մոբիլիզացմանը: Հետևապես, կապիտալ ներդրումներին ուղղված պետական միջոցների արդյունավետ օգտագործումը շատ բանով կախված է բանկային հիմնարկների աշխատանքից:

Կապիտալ ներդրումների համար առանձնացված բոլոր միջոցների պակի քան 85 տոկոսն անցնում է ՍՍՌՄ Շինբանկի միջոցով: Այդ միջոցներն առանձնացված են ձեռնարկության հիմնական գործունեության միջոցներից, որոնք (բացառությամբ կապալային կազմակերպությունների միջոցներից) պահվում են ՍՍՌՄ Պետբանկում, որն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կապիտալ ներդրումների հատկացումները խիստ կերպով ըստ նպատակի օգտագործելու նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու համար¹:

1 ՍՍՌՄ Պետբանկում են պահվում միայն այն կապալային կազմակերպությունների միջոցները, որոնք շինարարություն են կատարում գյուղատնտեսության մեջ:

ՍՍՌՄ Շինբանկը, բացի դրանից, պետական ձեռնարկություններին երկարատև վարկեր է տալիս՝ ժողովրդական սպառման առարկաների և շինանյութերի ու վառելիքի արտադրությունը կազմակերպելու և ընդլայնելու համար:

ՍՍՌՄ Պետբանկը, պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների կապիտալ ներդրումների ֆինանսավորումից բացի, կատարում է կոլտնտեսությունների երկարատև վարկավորում. սպառողական կոոպերացիայի կապիտալ ներդրումները ֆինանսավորում է հիմնականում հենց իր սեփական միջոցների հաշվին:

Մինչև 1959 թվականը գոյություն ուներ երկարատև ներդրումների բանկերի սիստեմ՝ Արդբանկ, Գյուղբանկ, Կենկոմբանկ և տեղական կոմզուսալ բանկեր, Այս բանկերը ֆինանսավորում էին ժողովրդական տնտեսության համապատասխան ճյուղերի կապիտալ ներդրումները: Գործնականում հաճախ պատահում էր, որ ժողտնտխորհները, մինիստրությունները և գերատեսչությունները պետք է շինարարության տարբեր տեսակների գծով ֆինանսավորվեն միաժամանակ բոլոր բանկերի կողմից: Արդյունարբություն և շինարարության կառավարման վերակառուցման կապակցությամբ Գյուղբանկը, Կենկոմբանկը և տեղական կոմզուսալ բանկերը վերացվեցին, իսկ սրանց ֆունկցիաները հանձնվեցին Արդբանկին (որը վերանվանվել է ՍՍՌՄ Շինբանկի) և ՍՍՌՄ Պետբանկին: Այժմ ժողտնտխորհների, մինիստրությունների և տեղական օրգանների կողմից իրականացվող բոլոր տեսակի շինարարությունները ֆինանսավորվում են մի բանկի՝ ՍՍՌՄ Շինբանկի կողմից, Գյուղական շինարարության բոլոր տեսակները ֆինանսավորվում են ՍՍՌՄ Պետբանկի կողմից: Բանկերի կատարված վերակառուցումը նպաստում է ժողովրդական տնտեսության մեջ ֆինանսական վերահսկողության մակարդակի բարձրացմանը, կառույցների ու ձեռնարկությունների ֆինանսների ամրապնդմանը, հաշվարկների կազմակերպման բարելավմանը:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանի կատարմանն աջակցելու նպատակներով ՍՍՌՄ Շինբանկը և ՍՍՌՄ Պետբանկը ֆինանսական վերահսկողություն են իրականացնում կապիտալ ներդրումների ճիշտ օգտագործման, արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի գործարկման ծրագրերի, կապիտալ շինարարության պլանների, շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքի կատարման, ներտնտեսական ռե-

զերվների մորլիզացման և տնտեսական կազմակերպութ-
յունների, ձեռնարկությունների ու կառույցների այն մի-
ջոցների ժամանակին ստանալու նկատմամբ, որոնք նախա-
տեսված են կապիտալ ներդրումների ֆինանսավորման հա-
մար, ինչպես նաև՝ նախահաշվային արժեքների, պլանային
ու ֆինանսական կարգապահության պահպանման և շինա-
րարության մեջ տնտեսական հաշվարկի ամրապնդման
նկատմամբ:

Կառույցներին և կապալային կազմակերպություններին
միջոցներ բաց թողնելու ամբողջ սիստեմը և կարճատև վար-
կավորման ու հաշվարկների սիստեմը շինարարության մեջ
կազմակերպված է այդ առաջադրանքների կատարման նպա-
տակով:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորումը կազմակերպ-
վում է շինարարությունը ֆինանսավորելու կանոնադրության
և շինարարության կապալային պայմանագրերի կանոնների
հիման վրա: Այդ կանոնները պարտադիր են ինչպես բանկե-
րի, այնպես էլ բոլոր ձեռնարկությունների, կառույցների,
կազմակերպությունների, ժողտնտիսորհների, մինիստրություն-
ների և գերատեսչությունների համար: Ուստի այդ կանոննե-
րով նախատեսված միջոցառումների համակողմանի և լրիվ
իրականացումը մեծ նշանակություն ունի կապիտալ շինա-
րարության բարելավման, խնայողության ռեժիմի պահպան-
ման շինարարության մեջ տնտեսական հաշվարկի իրակա-
նացման, պլանային-ֆինանսական կարգապահության ամ-
րապնդման, կուտակման պլանների և շինարարության ինք-
նարժեքի իջեցման առաջադրանքների կատարման համար:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորումն իրականաց-
վում է հետևյալ հիմնական սկզբունքների պահպանմամբ.

1. Ֆինանսավորվում են միայն այն կառույցներն ու օբ-
յեկտները, որոնք մտցված են կապիտալ ներդրումների պե-
տական պլանում և շինարարության հաստատված տիտղո-
սացուցակներում: Դա հնարավորություն է տալիս վերահը-
կելու ֆինանսական միջոցների ուղղությունն ըստ տնտեսու-
թյան ճյուղերի, տնտեսական շրջանների, կառույցների՝ ժո-

ղովրդական տնտեսության զարգացման պետական պլանի առաջադրանքներին համապատասխան, և այդպիսով կանխելու դրանց ոչնչատակին օգտագործումը, պայքարելու տեղական տեղեկությունների դեմ: Բանկերում ստուգվում են տիտղոսացուցակներում ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանով նախատեսված բոլոր թողարկվող օբյեկտների առկայությունը և առաջին հերթին դրանց աշխատանքները վերջացնելու համար անհրաժեշտ չափով միջոցների ապահովումը:

2. Դրամական միջոցները կարող են առանձնացվել միայն այն կառույցների ու օբյեկտների համար, որոնց վերաբերյալ կան հաստատված նախագծեր ու նախահաշիվներ, ինչպես նաև շինարարությանը էլեկտրաէներգիայով, ջրով, անցուղիներով ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար: Դա կանխում է, նախապատրաստական աշխատանքներ տանելուց առաջ, առանց նախագծերի ու նախահաշիվների շինարարություն կատարելը, որը կհասցնեք անարտադրողական ծախսերի:

3. Կատարված աշխատանքների, սարքավորումների, կոնստրուկցիաների, նյութերի և արտադրության այլ միջոցների վճարումները կատարվում են շինարարության կապալային պայմանագրերով և մատակարարումների տնտեսական պայմանագրերով նախատեսված պայմանների պահպանմամբ: Դա նպաստում է շինարարության մեջ իրականացնելու տնտեսական հաշվարկի սկզբունքները: Նախագծերով և նախահաշիվներով չապահովված, կամ պետական պլանի մեջ չմտցված շինարարության համար կնքված պայմանագրերը չեն ֆինանսավորվում:

4. Չի թույլատրվում գործող ձևոնարկությունների շրջանառու ֆոնդերի ստեղծման ու լրացման նպատակով օգտագործել այն միջոցները, որոնք նախատեսված են կապիտալ ներդրումների համար, ինչպես նաև շրջանառու ֆոնդերի միջոցներից օգտագործել կապիտալ շինարարության կարիքների համար: Միջոցների այդպիսի օգտագործումը կարող է

հանգեցնել ժողովրդական տնտեսության զարգացման համամասնության խախտման:

5. Պետական ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների ֆինանսավորումը՝ նրանց հիմնական ֆոնդերն ընդլայնելու նպատակով, իրականացվում է անվերադարձ կարգով: Հանրահայտ է, որ պետական ձեռնարկությունները և տնտեսական կազմակերպությունները համաժողովրդական սեփականություն են: Ուստի, պետական ձեռնարկությունների և կազմակերպությունների հիմնական ֆոնդերի աճը նշանակում է համաժողովրդական սեփականության մեծացում¹:

6. Ֆինանսավորման լիմիտներում նախատեսված պետական բյուջեի միջոցները ֆինանսական օրգանները կառույցների հաշիվներն են փոխանցում՝ նկատի առնելով կապիտալ ներդրումների պլանների կատարման փաստական ընթացքը, իսկ ձեռնարկությունների և տնտեսական օրգանների սեփական միջոցները փոխանցվում են դրանց կուտակման համեմատ: Ընդ որում առաջին հերթին ծախսվում են ձեռնարկությունների սեփական ռեսուրսները:

Կառույցների հաշիվներից դրամական միջոցները տրվում են նույնպես տնտեսական պլանների (շինարարական և մոնետաժային աշխատա՝ քների, մատակարարումների և այլն) կատարմանը համապատասխան: Ֆինանսավորման այդպիսի կարգը նպաստում է պլանների, այդ թվում նաև ձեռնարկությունների ու կազմակերպությունների սեփական ռեսուրսների մոբիլիզացման պլանների կատարման համար մղվող պայքարին:

7. Ֆինանսավորումը, վարկավորումը և հաշվարկները կախման մեջ են դրված պլանի քանակական ու որակական

¹ Պետության կողմից տված ֆինանսական օգնության հաշվին կուտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների ստեղծած հիմնական ֆոնդերը նրանց սեփականությունն են: Ուստի երկարատև վարկերը պետությանն են վերադարձվում այն շահույթների հաշվին, որոնք կուտնտեսությունները և կոոպերատիվ կազմակերպությունները ստացել են վարկավորված միջոցառումներից:

ցուցանիշների կատարման գծով շինարարական կազմակերպությունների արտադրատեխնիկական գործունեության արդյունքներից: Այդ գործունեության արդյունավետության բարձրացումն ապահովող միջոցը լավ աշխատող կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական և վարկային խրախուսանքի, իսկ վատ աշխատողների նկատմամբ սանկցիաների կիրառումն է: Եթե շինարարական բոլոր կազմակերպությունների նկատմամբ կիրառվի ֆինանսավորման և վարկավորման միատեսակ ուժիմ, ապա դա կհասցնի այն բանին, որ լավ աշխատող շինարարական կազմակերպությունները անհրաժեշտ ֆինանսական և վարկային օգնություն չեն ստանա, իսկ վատ աշխատող կազմակերպության նկատմամբ ակտիվ ներգործություն չի կիրառվի՝ վնասները և ֆինանսական ու տնտեսական աշխատանքի բարձիթող վիճակը վերացնելու նպատակով միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ:

Կապալային կազմակերպությունների կատարած աշխատանքների ֆինանսավորումը: Կապալային կազմակերպությունների կատարած շինարարական և մոնտաժային աշխատանքները ֆինանսավորվում են պլանի փաստացի կատարման համեմատ՝ նախահաշվային գներով և հաստատված նախահաշիվների սահմաններում: Պայմանագրի համապատասխան կապալառուներից ակտերով ու հաշվարկներով աշխատանքների ընդունումը, ինչպես նաև կատարված աշխատանքների ծավալն ու որակը նախագծերին, նախահաշիվներին և աշխատանքային գծագրերին համապատասխան լինելու վերահսկողությունն իրականացնում է պատվիրատուն:

Ինչպես նախօրոք նշվել է, բոլոր դեպքերում կատարված աշխատանքների հաշվարկները վերջին հաշվով արվում են օբյեկտի շինարարությունը կամ ագրեգատի մոնտաժումն ավարտելուց հետո:

Այդ ամենը շինարարական կազմակերպություններին պարտավորեցնում է ամեն օր հոգ տանելու պլանների կատարման, նյութերի խնայման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, շինարարական մեքենաների ու

տրանսպորտի միջոցների լավագույն օգտագործման, վերագիր և վարչատնտեսական ծախսերի կրճատման մասին: Եվ դա հասկանալի է, քանի որ աշխատանքների նախահաշվային արժեքների գերազանցումը շինարարական կազմակերպությունների համար կնշանակեր վնասների գոյացում:

Հետևաբար, աշխատանքների կատարման գործում հաշվարկների ընդունված կարգի խիստ պահպանումը կարևոր նախադրյալներ է ստեղծում արտադրական ծրագրի իրականացման համար՝ ինչպես շինարարության ծավալի, այնպես էլ արժեքի գծով:

Աշխատանքների ընդունման փաստաթղթերը հիմք են ծառայում շինարարական ծրագրի կատարման հաշվառման համար: Աշխատանքների ոչ ճիշտ ընդունումը կարող է հասցնել շինարարական կազմակերպությունների գործունեության իսկական ցուցանիշների աղավալման: Այդ տեղի է ունենում այն դեպքում, երբ ընդունման ակտերում բարձրացվում են շինարարական և մոնտաժային աշխատանքների կատարված ծավալները կամ մեծացվում դրանց արժեքը: Նման պրակտիկան նշանակում է, պետական հաշվետվություններում հավելագրել այնպիսի ծավալի աշխատանքներ, որոնք իրականում չեն կատարվել: Հավելագրումները առաջ են բերում ո՛չ միայն շինարարական կազմակերպությունների աշխատանքի իսկական արդյունքների աղավաղում, այլև պետական բյուջեից ավելորդ միջոցների ստացում: Ուստի, կապիտալ ներդրումների համար առանձնացված միջոցների ճիշտ օգտագործումն ապահովող կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է հավելագրումների հակապետական պրակտիկայի դեմ սիստեմատիկ պայքարը:

Շինարարական հրապարակներում սիստեմատիկորեն անց են կացվում ստուգիչ չափումներ, որոնց նպատակն է ստուգել շինարարական կազմակերպությունների կատարած աշխատանքների ծավալի որոշման ճշտությունը: Տնտեսական կազմակերպությունների ամենօրյա աշխատանքում ստուգիչ չափումները նյութ են ծառայում շինարարության մեջ պետական կարգապահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման համար:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար առանձնացված միջոցների հաշվին պատվիրատուները կանխավճար են փոխանցում կապալառուների հաշիվները: Կանխավճարը նախատեսված է շինանյութերի հայթայթման և շինմոնտաժային անավարտ աշխատանքների կատարման

Ժախսերը ծածկելու համար: Կանխավճարի շափը չպետք է գերազանցի կապալային աշխատանքների տարեկան պայմանագրային արժեքի 15 տոկոսից: Գլխավոր պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման զուգընթաց կանխավճարը վերադարձվում է պատվիրատուին:

Կանխավճարից բացի, պատվիրատուների հաշվից վճարվում են կապալային կազմակերպությունների մատակարարած պատրաստի կոնստրուկցիաները, շինարարական դետալները և գործարանային պատրաստման խոշոր հանգույցները: Այդ արտադրանքի վճարումը կատարվում է եռամսյա պահանջարկի սահմաններում: Առանձին դեպքերում, երբ հնարավորություն կա արագացնելու պլանի կատարումը, բեռնաթափված, բերված կամ հրապարակում պատրաստված և տեղակայման համար պատրաստի դետալների, կոնստրուկցիաների, բլոկների և այլ կիսաֆաբրիկատների արժեքները կարող են վճարվել քառամսյա պահանջարկի սահմաններում: Կապալային կազմակերպություններին տրված այն իրավունքը, որով պատվիրատուների միջոցները օգտագործվում են դետալներ, կոնստրուկցիաներ, բլոկներ և այլ կիսաֆաբրիկատներ գնելու համար, նպաստում է աշխատանքի ինդուստրիալ մեթոդների ներդրմանը, շինարարության ժակետների կրթաճատմանը, աշխատանքի արտադրողականության շեշտակի բարձրացմանը և, հետևաբար, շինարարության էժանացմանը: Կատարված շինմոնտաժային այն աշխատանքների հաշվարկների ժամանակ, որոնք իրենց մեջ ընդգրկում են կոնստրուկցիաների, բլոկների և այլ սարքերի տեղակայում, պատվիրատուն ետ է գանձում դրանց արժեքը:

Հետևապես, պատվիրատուների կանխավճարները, ներառյալ կոնստրուկցիաների և դետալների վճարումները, կապալային կազմակերպությունների միջոցների կարևոր աղբյուրն են, որոնք ապահովում են նրանց արտադրական-տնտեսական նորմալ գործունեությունը: Կանխավճարների փոխանցման կամ շինարարական կոնստրուկցիաների և այլ կիսաֆաբրիկատների վճարումների ձգձգումը կարող է լուրջ արգելք դառնալ ծրագրի կատարման ընթացքի համար: Կապա-

չառուի կողմից ստացված կանխավճարի ժամանակին չվերադարձնելը կարող է նրա աշխատանքի խոշոր թերությունների արդյունք լինել (ապրանքակուտակում, ծրագրի կատարման վիժեցում, աշխատանքների թանկացում) և ձգձգել մյուս օբյեկտների ու ծախսումների ֆինանսավորումը, որոնց համար աղբյուր պետք է ծառայեին այն միջոցները, որոնք տրվում են կանխավճարը մարելու համար: Ուստի պատվիրատուների, կապալառուների և բանկերի կողմից կանխավճարների բացթողման ու մարման հետ կապված հաշվարկների ճշտության նկատմամբ կատարվող վերահսկողությունը յուրջ նշանակություն ունի կապիտալ աշխատանքների ծրագրի համակողմանի ու լրիվ կատարման համար:

Կատարված աշխատանքների դիմաց կանխավճարների ձեւով և օրենքով սահմանված մյուս աղբյուրներից կապալային կազմակերպությունների ստացած դրամական բոլոր միջոցները մտցվում են բանկերում բացված նրանց հաշվարկային հաշիվների մեջ:

Տնտեսական եղանակով կատարված աշխատանքների ֆինանսավորումը: Շինմոնտաժային աշխատանքների ավելի քան 300 հազ. ռուբլի նախահաշվային արժեք ունեցող և տնտեսական եղանակով վարվող կառույցները ֆինանսավորվում են արտադրական ծրագրի կատարման ընթացքին համապատասխան, այսինքն՝ միջոցները տրամադրում են կատարված աշխատանքների ընդունման ակտերի հիման վրա: Այդ դեպքում լզլանով նախատեսված աշխատանքների կազմակերպիչն ու կատարողը այն շինարարության (կապիտալ շինարարության բաժնի) պետն է, որի համար բանկում հաշվարկային հաշիվ է բացվում:

Կատարված աշխատանքների համար շինարարության (կապիտալ շինարարության բաժնի՝ ԿՇԲ) պետի և կառուցվող (գործող) ձեռնարկության դիրեկտորի միջև հաշվարկները կատարվում են նույն սկզբունքներով, ինչ պատվիրատուի և կապալառուի միջև:

Կառուցվող (գործող) ձեռնարկությունների դիրեկտորները շինարարությունների (ԿՇԲ-ների) պետերին միջոցներ են

տրամադրում շինանյութերի, կոնստրուկցիաների, դետալների, բլոկների հայթայթման և աշխատանքների կատարման գործում անհրաժեշտ այլ ծախսերի համար:

Տնտեսական եղանակով կատարվող շինարարական և մոնտաժային աշխատանքների աննշան ծավալ ունեցող կառույցները ֆինանսավորվում են հաշիվներից միջոցներ տրամադրելով ըստ ծախսումների տարրերի (աշխատավարձ, նյութեր, սարքավորումներ, կոնստրուկցիաներ, դետալներ, տրանսպորտային, վերադիր և այլ ծախսեր):

Սարքավորումների և շինարարական նյութերի վճարումները: Շինարարութունում ստացված սարքավորումների և նյութերի վճարումը կատարվում է տնտեսական պայմանագրերի հիման վրա, որոնք կնքվում են արտադրանքի առանձին տեսակների մատակարարումների հիմնական պայմաններին համապատասխան: Պատվիրատուների և կապալառուների գլխավոր կապալառուների և ենթակապալառուների փոխադարձ մատակարարումներն ու ծառայութունները նախատեսվում են շինարարության կապալային պայմանագրերում:

Ինչպես կապալային, այնպես էլ տնտեսական եղանակներով աշխատանքներ կատարելու ժամանակ տեխնոլոգիական, էներգետիկ, էլեկտրատեխնիկական և համագործարանային սարքավորումները և ապարատուրան վճարվում են կառուցվող (գործող) ձեռնարկութունների ֆինանսավորման հաշիվներից:

Կապալային եղանակով աշխատանքների կատարման գեպքում շինանյութերը վճարվում են կապալառու շինմոնտաժային կազմակերպութունների հաշվարկային հաշիվներից, իսկ տնտեսական եղանակի դեպքում՝ շինարարության (ԿՇԲ-ների) հաշվարկային հաշիվներից: Բացառութուն են կազմում գործարանային կոնստրուկցիաները, դետալները և բլոկները, որոնց վճարման կարգն արդեն շարադրվել է:

Կառուցվող (գործող) ձեռնարկութունները պարտավոր են սարքավորումների մատակարարման վերաբերյալ պայմանագրեր կնքել միայն այն գումարների սահմաններում, որոնք այդ նպատակների համար նախատեսված են կապիտալ ներ-

դրումների պլաններում: Ընդ որում սարքավորումների պատ-
րաստման պատվերների տեղաբաշխումը և այդ սարքավո-
րումները կառույց հասցնելը կազմակերպում են այնպես, որ
դրանք ստացվեն աշխատանքների կատարման պլանին, օբ-
յեկտների կառուցումն ավարտելու և շահագործման հանձնե-
լու գրաֆիկին համապատասխան: Սարքավորումների ստաց-
ման ժամկետները շինմոնտաժային աշխատանքների կա-
տարման ժամկետների հետ չհամապատասխանեցնելը հասց-
նում է սարքավորումների ժամանակից շուտ կամ ուշ մա-
տակարարման, որը երկու դեպքում էլ առաջ է բերում տըն-
տեսական և ֆինանսական գործունեության դժվարություն-
ներ: Սարքավորումների ժամկետից շուտ ստացումը երկար
ժամանակ սառեցնում է դրանց ձեռքբերման համար ծախս-
ված միջոցները, իսկ ուշացած մատակարարումը վիժեցնում
է նշված ժամկետներում գործարկելու արտադրական կարո-
ղությունները: Հետևաբար սարքավորումները պետք է շինա-
րարական հրապարակներ հասցվեն որոշակի հաջորդակա-
նությամբ: Այն պատվերների տեղաբաշխումը և սարքավո-
րումների մատակարարումը, որոնց գումարը գերազանցում
է այդ նպատակով կատարված հատկացումներից, կարող են
հասցնել շինմոնտաժային աշխատանքների ֆինանսավորման
համար նախատեսված դրամական միջոցների օգտագործ-
մանը սարքավորումների ավելցուկների և պետք չեկող պա-
շարների կուտակման վրա:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար ա-
ռանձնացված միջոցների ոչ-ճիշտ օգտագործման դեմ պայ-
քարելու նպատակով չի թույլատրվում վճարել հաստատված
նախագծային-նախահաշվային փաստաթղթերով չապահով-
ված կառույցների սարքավորումների հաշիվները, եթե նա-
խահաշիվներում այդ սարքավորումների համար հատկա-
ցումներ չկան և եթե շինարարության համար նախահաշվով
նախատեսված միջոցները սպառվել են:

Այդպիսի կարգը պահանջում է ֆինանսավորվող օբյեկտ-
ների և տնտեսական դեկավարների խիստ վերահսկողությու-
նը սարքավորումներ ձեռք բերելու միջոցների ճիշտ օգտա-

գործման նկատմամբ: Այդ աշխատանքում հատուկ կարևոր տեղ է զբաղում սարքավորումների: մատակարարման պայմանագրերում նախատեսված գումարները կապիտալ ներդրումների պլանով այդ նպատակների համար առանձնացված հատկացումներին համապատասխան լինելու նտուգումը: Դա հնարավորություն է տալիս կանխելու պլանային ու ֆինանսական կարգապահության խախտումները:

Աշխատավարձի ֆոնդի ծախսման վերահսկողությունը: Շինմոնտաժային աշխատանքներում, ինչպես նաև առանձին հաշվեկշռի չփոխադրված օժանդակ ձեռնարկություններում, տրանսպորտային և այլ տնտեսություններում զբաղված բանվորների աշխատավարձի միջոցները տրվում են շինմոնտաժային աշխատանքների պլանի կատարմանը համապատասխան: Այդ նույն կարգով կատարվում է նաև տնտեսական եղանակով վարվող կառույցներում զբաղված բանվորների աշխատավարձի վճարման միջոցների բաց թողումը, եթե շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքն այդ կառույցներում գերազանցում է 300 հազ. ռուբլուց:

Եթե շինմոնտաժային աշխատանքների եռամսյակային պլանները գերակատարվում են, ապա եռամսյակային ֆոնդից դուրս բանվորների աշխատավարձի միջոցները տրվում են տվյալ տարվա անցած եռամսյակների աշխատավարձի ֆոնդի տնտեսման հաշվին, իսկ տնտեսում չլինելու դեպքում՝ եռամսյակային ֆոնդից դուրս, բայց աշխատավարձի տարեկան ֆոնդի սահմաններում:

Այն դեպքերում երբ շինմոնտաժային աշխատանքների կատարված ծավալի համեմատ թույլ է տրված բանվորների աշխատավարձի ֆոնդի գերածախս, ապա այն ծածկելու միջոցները տրվում են բանկային հիմնարկների թույլտվությամբ, եթե գերածախսը կատարված է առաջին անգամ և չի գերազանցում եռամսյակի աշխատավարձի ֆոնդի 6 տոկոսից, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ ժողտնխորհների, մինիստրությունների և գերասնաշուքությունների թույլտվությամբ: Այդ օրդանները, թույլտվություններ ստանալու ժամանակ, կառույցների և կապլային կազմակերպությունների համար սահմանում են թույլ տված գերածախսի հատուցման ժամկետներ (երեքից հինգ ամսվա սահմաններում) միջոցների ինայողության հաշվին՝ նշելով այն կոնկրետ միջոցառումները, որ այդ նպատակներով պետք է կիրառեն կառույցներն ու կապլային կազմակերպությունները:

Տնտեսական եղանակով վարվող և կատարված աշխատանքների ծավա-

լին համապատասխան ֆինանսավորման շփոխադրված կառույցների բան-
վորների աշխատավարձի միջոցները տրվում են եռամսյակի համար հաս-
տատված աշխատավարձի ֆոնդերի սահմաններում:

Շինարարության մեջ զբաղված վարչա-տնտեսական անձնակազմի աշ-
խատավարձի միջոցների բաց թողումը կատարվում է հաստատված հաս-
տիներրի և աշխատավարձի ֆոնդերի սահմաններում:

Բանվորների ու ծառայողների հետ հաշվարկները կա-
տարվում են կուլեկտիվ պայմանագրերին՝ համապատասխան,
որոնց անվերապահ կատարումը լուրջ գործոն է աշխատանքի
արտադրողականությունը բարձրացնելու և օրտադրության
կազմակերպումը բարելավելու համար մղվող պայքարում:
Շինարարական կազմակերպությունների ղեկավարները պար-
տավոր են խստորեն պահպանելու բանվորների ու ծառայող-
ների հետ կատարվող հաշվարկների սահմանված կարգը այն
հաշվով, որ նրանց հասանելիք աշխատավարձը վճարվի լրիվ
և ժամանակին:

Հաշվարկները շինարարության մեջ: Հաշվարկներն իրեն-
ցից ներկայացնում են կատարված աշխատանքների, մատա-
կարարված սարքավորումների, հումքի, նյութերի և այլ ար-
ժեքների վճարումների ամբողջությունը, ինչպես նաև բան-
վորների ու ծառայողների աշխատավարձի միջոցների բաց-
թողում: Բացի դրանից, շինարարական կազմակերպություն-
ները ֆինանսական հարաբերություններ ունեն պետական
բյուջեի և բանկերի հետ, որը նույնպես առաջ է բերում հա-
մապատասխան վճարումներ:

Բոլոր վճարումները և հաշվարկները պետք է կատարվեն
ճիշտ սահմանված ժամկետում՝ մուտքի դրամական միջոցնե-
րից փոխանցելով պատվիրատուների, կապալաչին կազմա-
կերպությունների, շինարարությունների (ԿՇԲ-ների) պետերի
հաշիվներին: Այդ ժամկետների խախտումը հասցնում է կա-
տարված աշխատանքների, ձեռք բերված նյութական արժեք-
ների, հաշվարկված աշխատավարձի, բանկերի փոխատվու-
թյունների և այլ վճարումների ձգձգման, որն իր հերթին
դժվարություններ է ստեղծում արտադրական ու ֆինանսա-
կան պլանների կատարման գործում:

Բոլոր վճարումներն իրականացվում են բանկի միջոցով միայն վճարողների համաձայնությունով՝ նրանց հաշիվներում եղած կամ բանկի կողմից վարկերի ձևով նրանց տնօրինությանը տրված միջոցների սահմաններում: Վճարումները և հաշվարկները կատարվում են վճարողների հաշիվներից մատակարարողների կամ այլ կազմակերպությունների հաշիվներին, համապատասխան գումար փոխանցելու, ինչպես նաև փոխադարձ պահանջները հաշվի առնելու միջոցով: Նյութական արժեքների բաց թողումը, աշխատանքների կամ ծառայությունների կատարումն ապառիկ՝ անթույլատրելի են, որովհետև դրանք առաջ են բերում պետական միասնական պլանային սխտեմի հիմքերը իրախտող փոխադարձ վարկավորում: Հաշվարկներն իրականացվում են երեք հիմնական ձևերի՝ ակցեպտի, ակրեդիտիվի և հատուկ հաշվի միջոցով:

Հաշվարկների ամենատարածված ձևը ակցեպտայինն է, երբ վճարման պարտադիր պայմանը վճարողի (պատվիրատուի) համաձայնությունն է (ակցեպտը): Հաշվարկների այդ ձևն ուղղված է պայմանագրային հարաբերությունների ամրապնդման, քանի որ վճարողին (պատվիրատուին) հնարավորություն է տալիս մինչև մատակարարին (կապալառուին) միջոցներ փոխանցելը ստուգելու բեռնված արտադրանքի կամ կատարված աշխատանքների համապատասխանությունը պայմանագրի պայմաններին:

Հաշվարկների ակրեդիտիվ ձևը և նստուկ հաշվով հաշվարկումները կիրառվում են միայն այն դեպքերում, երբ գնորդներին ու մատակարարներին սպասարկող բանկային հիմնարկները գտնվում են տարբեր քաղաքներում (այլաքաղաքային հաշվարկներ): Ակրեդիտիվն իրենից ներկայացնում է գնորդի գտնված վայրի բանկային հիմնարկի հրամանն ուղղված մատակարարի գտնված վայրի մյուս բանկային հիմնարկին՝ կատարելու նրա հաշիվների վճարումն ըստ մատակարարումների ու ծառայությունների: Այն գնորդը, որը որոշակի վայրում սխտեմատիկ հաշիվներ ունի մեկ կամ մի քանի մատակարարների հետ, իրավունք ունի այդ վայրում նշանակելու իր լիազոր ներկայացուցիչը, որի համար և բացվում է հատուկ հաշիվ: Հաշվարկների այդ ձևերի դեպքում գնորդը պետք է նախապես, մինչև ապրանքների բեռնումը, դրանց վճարման համար անհրաժեշտ միջոցներ առանձնացնի, որը մեծացնում է շրջանառու միջոցների պահանջարկը և դանդաղեցնում դրանց շրջանառությունը: Կապիտալ շինարարության մեջ ակրեդիտիվ և հատուկ հաշվային ձևի հաշվարկները համեմատաբար հազվադեպ են կիրառվում:

Կայն տարածում են ստանում փոխադարձ պահանջների հաշվի առման

միջոցով կատարվող հաշվարկները: Պատվիրասուունների, կապալառուների, ենթակապալառուների, ինչպես նաև սրանց կազմի մեջ մտնող առանձին հաշվեկշիռ ունեցող ստորաբաժանումների (մատակարարման օրգանների, օժանդակ ձեռնարկությունների, տրանսպորտային գրասենյակների և այլն) միջև առաջ են գալիս փոխադարձ պարտավորություններ ու վճարումներ՝ կատարված աշխատանքների, մատակարարված նյութերի, ցույց տրված ծառայությունների համար: Փոխադարձ պարտավորությունը կարող է մարվել փոխադարձ պահանջների հաշվառման միջոցով: Եթե այդպիսի հաշվառումներ չեն կատարվում, ապա ձեռնարկություններից մեկի անվճարունակությունը կարող է առաջ բերել պայմանագրային հարաբերությամբ նրա նեո կապված մնացած բոլոր տնտեսական օրգանների անվճարունակություն, Հաշվառումներն իրականացվում են անկախ դրանց մասնակիցների հաշիվների նկատմամբ եղած առաջնահերթ պահանջանքների: Ներկայումս կապիտալ շինարարության մեջ բոլոր հաշվարկների ավելի քան 30 տոկոսն իրականացվում է փոխադարձ պահանջների հաշվառման միջոցով:

Տնտեսական հաշվարկը, վճարային կարգապահությունը և շինարարությունում ֆինանսական վերահսկողությունն ուժեղացնելու համար մեծ նշանակություն ունի շինարարական և այլ կազմակերպությունների հաշիվներից կատարվող վճարումների հերթականությունը: Ներկայումս սահմանված է վճարումների հետևյալ հերթականությունը. 1) բանվորների ու ծառայողների աշխատավարձի վճարումներ, 2) նյութական արժեքների, ապրանքների ու ծառայությունների վճարումներ, ինչպես նաև փոխադարձ պահանջների հաշվառման հաշվարկներն ավարտելու համար վճարումներ, 3) շահույթների մոժոումները և ամորտիզացիոն հատկացումներ կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման համար, 4) բանկերի տված փոխատվությունները մարելու վճարումներ, 5) մնացած այլ վճարումներ: Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունները չկատարելու դեպքում բանկերը պարտավոր են թույլ չտալ շինարարական և այլ կազմակերպությունների հաշիվներից դրամական միջոցներ փոխանցել նյութական արժեքների և այլ ծախսերի վճարումներ կատարելու համար, բացի աշխատավարձից, և դրանով իսկ ապահովել բյուջեի վճարումները:

Վճարումների նման հերթականությունը, ապահովելով

աշխատավարձի գծով բանվորների ու ծառայողների շահերի պահպանումը, առաջին տեղերից մեկն է մղում նյութական արժեքների, ապրանքների և ծառայությունների համար՝ մատակարարների հետ, իսկ կատարված կապիտալ՝ աշխատանքների համար՝ կապալառուների հետ հաշվարկները ժամանակին կատարելու խնդիրը: Դա բարձրացնում է շինարարական կազմակերպությունների պատասխանատվությունը՝ քանակական ու որակական տեսակետից արտադրական ու ֆինանսական պլանների կատարման և, հետևաբար, ամբողջությամբ վերցրած վճարումների հաշվարկները լրիվ ապահովելու համար:

Ֆինանսավորման դիֆերենցված ռեժիմ: Երբ հաջողությամբ կատարվում է շինարարության պլանը ծավալի և արժեքի գծով, այսինքն՝ ապահովվում է շինմոնտաժային աշխատանքների ծրագրի և ինքնարժեքի իջեցման առաջադրանքների կատարումը, այդ կառույցների և շինարարական կազմակերպությունների համար սահմանվում է ֆինանսավորման արտոնյալ ռեժիմ:

Պլանի գերակատարման դեպքում խիստ կարևոր կառույցների ֆինանսավորումը կատարվում է այդ կառույցների եռամսյակային և տարեկան հատկացումներից անկախ՝ միութենական ռեսպուբլիկայի, մինիստրության, գերատեսչության տարեկան պլաններում նախատեսված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալների սահմաններում: Իսկ եռամսյակի համար տրված ծրագիրը գերակատարած մյուս կառույցների ֆինանսավորումը կատարվում է եռամսյակից դուրս, բայց տարեկան պլանի սահմաններում:

Շինարարական կազմակերպության կողմից եռամսյակային պլանից դուրս կատարած աշխատանքները ֆինանսավորելու համար պատվիրատուին կարող է կարճատև վարկ տրվել տարվա ընթացքում ի հաշիվ տվյալ տարվա ֆինանսավորման լիմիտով նախատեսված սեփական ներդրումների առաջիկա մուծումների:

Եթե տնտեսական եղանակով իրականացվող շինարարության ժամանակ թույլ է տրվել անտնտեսավարություն (կա-

պիտալ ներդրումների համար նախատեսված միջոցները օգտագործվել են այլ նպատակներով, թույլ են տրվում վճարման պարտավորությունների սիստեմատիկ թերացումներ և ֆինանսական կարգապահության այլ խախտումներ), բանկը իրավասու է դադարեցնել շինարարության հետագա ֆինանսավորումը մինչև որ վերադաս տնտեսական օրգանները միջոցառումներ ձեռնարկեն վերացնելու անտնտեսավարությունը:

Երբ կառուցվող (գործող) ձեռնարկությունների դիրեկցիաները, այսինքն՝ պատվիրատուները, անտնտեսավար են ծախսում կապիտալ շինարարության ֆինանսավորման համար նախատեսված միջոցները, թույլ են տալիս ավելորդ և պետք չեկող նյութական արժեքների կուտակում, գերնորմատիվային դեբիտորական ու կրեդիտորական պարտքեր և այլ խախտումներ, բանկերը կաբող են դադարեցնել այդ ձեռնարկությունների ֆինանսավորումը:

Ֆինանսական սանկցիաների կիրառումը վկայում է կապիտալ ներդրումների համար նախատեսված միջոցների ծախսման անմխիթար վիճակի մասին: Ուստի սանկցիաները պետք է իրենց վրա բեռեն տնտեսական, սովետական և պարտիական օրգանների ամենախիստ ուշադրությունը, որպեսզի արագ կերպով ձեռք առնվեն այնպիսի արդյունավետ միջոցներ, որոնք ապահովեն շինարարական կազմակերպությունների աշխատանքի բարելավումը:

3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Շինարարական կազմակերպությունների կանոնադրական ֆոնդը: Կապալային կազմակերպությունների շինարարական-մոնտաժային աշխատանքների պլանների կատարումն ապահովելու համար պետությունը նրանց տնօրինության տակ է դնում արտագրության միջոցներ և դրամական միջոցներ: Դրանք մշտական օգտագործման են տրվում կապալային կազմակերպություններին, որոնք պետության առաջ պա-

տասխանատու են այդ միջոցները պահպանելու, նպատակահարմար և արդյունավետ օգտագործելու համար: Այդ միջոցների ամբողջությունը կազմում է շինարարական կազմակերպության կանոնադրական ֆոնդը:

Կանոնադրական ֆոնդը կազմված է հիմնական միջոցներից (հիմնական ֆոնդեր) և շրջանառու միջոցներից (շրջանառու արտադրական ֆոնդեր և շրջանառության ֆոնդեր): Ֆոնդերի չափը որոշվում է կապալային կազմակերպության ստեղծման ժամանակ:

Հետագայում կանոնադրական ֆոնդի մեծությունն ու կառուցվածքը փոփոխվում են: Հիմնական միջոցներով այն մեծանում է գլխավորապես ձեռք բերած շինարարական մեքենաների, մեխանիզմների, սարքավորման, շինարարական արտադրության սպասարկման համար շահագործման հանձնված ձեռնարկությունների արժեքների գումարի չափով և հիմնական միջոցների ավարտված կապիտալ վերանորոգման ծախսերով:

Շրջանառու միջոցներով կանոնադրական ֆոնդը մեծանում է, եթե աճում են շինարարական կազմակերպության սեփական շրջանառու միջոցները: Կանոնադրական ֆոնդը փոքրանում է, երբ դուրս են գրվում և մաշվում են հիմնական միջոցները կամ հանվում են շրջանառու միջոցները: Կանոնադրական ֆոնդի մեծության և կապալային կազմակերպությունների արտադրական-տնտեսական գործունեության արդյունքների միջև գոյություն ունի սերտ փոխկախվածություն: Շինարարական կազմակերպությունների տնօրինության տակ մնացող շահույթը կանոնադրական ֆոնդի մեծացման հիմնական աղբյուրներից մեկն է, մինչդեռ վնասների գումարի չափով կանոնադրական ֆոնդը պակասում է:

Կանոնադրական ֆոնդը կազմվում է տրեստներում: Նրանց կազմի մեջ մտնող սկզբնական շինարարական կազմակերպություններն ու տնտեսական ստորարաժանումները օգտվում են տրեստների կողմից առանձնացրած չափերով՝ հիմնական և շրջանառու միջոցներից:

Տնտեսական եղանակով իրագործվող կառույցները կանո-

նադրական ֆոնդ շունեն: Այդ կառույցներին հիմնական և շրջանառու միջոցները հատկացվում են միայն շինարարությունը վերջացնելու համար անհրաժեշտ ժամանակամիջոցում:

Կապալալին կազմակերպությունների հիմնական միջոցների ձևավորումը, դուրս եկած հիմնական միջոցների վերականգնումը և ունեցածների ավելացումն իրագործվում է կապիտալ ներդրումների կարգով:

Շինարարական ինդուստրիայի զարգացման համար նախատեսված կապիտալ ներդրումների հատկացված գումարները պետական պլանում առանձնացվում են կենտրոնացված ձևով: Շինարարական ինդուստրիայի զարգացման ֆինանսավորման աղբյուրների որոշման կարգը նույնն է, ինչ որ սոցիալիստական տնտեսության բոլոր պետական ձեռնարկությունների համար:

Կապալալին կազմակերպությունները, բացի նրանց տնօրինության տակ տրվող հիմնական միջոցներից, կարող են օգտվել պատվիրատուների հիմնական միջոցներից: Եթե պատվիրատուն գործող ձեռնարկություն է, նա կարող է առանց իր արտադրակառուցման գործունեությանը վնասելու, իր ունեցած հիմնական միջոցների մի մասը հատկացնել կապալալին կազմակերպության կողմից կատարվող աշխատանքների համար (վերանորոգման արհեստանոցներ, պահեստներ, տրանսպորտ և այլն): Նորակառույցներում, շինարարության կողմից ավարտված օբյեկտները, մինչև ձեռնարկության լրիվ կամ մասնակի գործարկումը նույնպես կարող են տրվել կապալառուներին օգտագործելու համար: Նման դեպքերում կապալալին կազմակերպությունները հիմնական միջոցներն ստանում են վարձակալական իրավունքներով:

Տնտեսական եղանակով իրագործվող կառույցներում հիմնական միջոցները նույնպես ձևավորվում են շինարարական ինդուստրիայի զարգացմանը հատկացվող գումարների հաշվին: Գործող ձեռնարկություններում, շինարարության իրագործման ժամանակամիջոցում շինարարությունների ղեկավարների տնօրինության տակ կարող են դրվել ձեռնարկու-

թյան հիմնական գործողութիւնը վերաբերող հիմնական միջոցները:

Կապալային կազմակերպությունների շրջանառու միջոցները: Արտադրութիւնն անընդհատ պրոցեսն ապահովելու համար շինարարական կազմակերպություններին, բացի հիմնական միջոցներից, անհրաժեշտ են որոշ միջոցներ, որոնք սպասարկեն արտադրութիւնն ուղորտը (շրջանառու արտադրական ֆոնդեր) և շրջանառութիւնն ուղորտը (շրջանառութիւնն ֆոնդեր): Շրջանառու արտադրական ֆոնդերում և շրջանառութիւնն ֆոնդերում գտնվող դրամական միջոցները կազմում են շինարարական կազմակերպությունների շրջանառու միջոցները: Տնտեսական տեսակետից այս ֆոնդերն ընդհանուր գծեր ունեն: Ինչպես շրջանառու արտադրական ֆոնդերը, նույնպես և շրջանառութիւնն ֆոնդերն անհրաժեշտ են կապալային կազմակերպությունների արտադրական-տնտեսական գործունեութիւնն իրագործման համար: Ինչպես առաջինները, նույնպես և երկրորդները միշտ շարժման մեջ են գտնվում և կոչված են արտադրութիւնն պրոցեսի և արտադրանքի իրացման անընդհատութիւնն ապահովելու համար:


Շրջանառու միջոցներն անընդհատ շրջապտույտ են կատարում: Սկզբում շրջանառու միջոցները շրջանառութիւնն ուղորտից անցում են կատարում արտադրութիւնն ուղորտը, դրամական ձևից վերածվում են արտադրութիւնն միջոցների՝ արտադրական պաշարների: Հետագայում դրանք ծախսվում են արտադրութիւնն պրոցեսում և նրա ավարտման զուգընթաց արտադրութիւնն ուղորտից անցում են կատարում շրջանառութիւնն ուղորտը՝ վերածվելով արտադրանքի (կատարված աշխատանքները)¹: Կատարված աշխատանքների վճարման հե-

¹ Շինարարութիւնն մեջ պատրաստի արտադրանք ասելով, ինչպես նախօրոք նշվել է, ընդունված է հասկանալ այն օբյեկտներն ու կառուցվածքները, որոնք շահագործման են հանձնվել: Փանի որ կատարված աշխատանքների զգալի մասի վճարումը կատարվում է օբյեկտների կամ կոնստրուկտիվ տարրերի պատրաստ լինելու համեմատ, ապա այստեղ խոսքը վերաբերում է այն արտադրանքին, որը պատվիրատուն ընդունել է անմիջականորեն աշխատանքներ կատարողից՝ գլխավոր և ուղղակի պայմանագրերին համապատասխան:

տեանքով շրջանառու միջոցները նորից դրամական ձև են ընդունում: Դրամական միջոցները նորից ծախսվում են արտադրական պաշարներ կազմելու համար, որոնց ստեղծումն անհրաժեշտ է արտադրական պրոցեսը վերակսելու համար: Սրանից անմիջապես հետո կրկնվում է միջոցների նույն շրջապտույտը: Շրջապտույտի անընդհատության հետևանքով շրջանառու միջոցները միևնույն ժամանակամիջոցում գտնվում են արտադրական պաշարներում, արտադրության ծախսերում, դրամական ռեսուրսներում և հաշվարկներում:

Շինարարական կազմակերպությունների շրջանառու միջոցների կազմը կարելի է լուսաբանել հետևյալ սխեմայով:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԸ:



Արտադրական պաշարներ ստեղծելու համար օգտագործված միջոցներն անմիջականորեն կապված են արտադրության պրոցեսի հետ և այդ պատճառով էլ հանդիսալնում են նրա զարգացման պայմանը: Դրա հետ մեկտեղ սոցիալիստական պետության շահերն ամբողջությամբ և ամեն մի շինարարական կազմակերպության շահերն առանձին վերցրած պահանջում են, որ արտադրական պաշարները ստեղծվեն միայն արտադրության պրոցեսի անընդհատությունն ապահովող նվազագույն անհրաժեշտ շափերով:

Նյութերի, պատրաստի կոնստրուկցիաների, դետալների, բլոկների և աշխատանքի այլ առարկաների ավելորդ պաշարների կուտակումն առաջացնում է՝ 1) դրանց վճարման համար լրացուցիչ դրամական միջոցների պահանջ, իսկ այդպիսի միջոցներ չլինելու դեպքում առաջ է բերում ժամկետանց պարտք՝ մատակարարներին. 2) որոշ կառույցներում եղած աշխատանքի առարկաների ավելորդ պաշարների օգտագործման հապաղումն այն կառույցների արտադրության համար, որոնք դրանց կարիքն ունեն. 3) պահպանման և հաշվառքի հետ կապված լրացուցիչ ծախսեր. 4) չպլանավորվող կորուստներ, այդ թվում, մատակարարողների հետ ժամանակին հաշվարկներ չկատարելու պատճառով առաջացած տուգանքներ, տույժեր, տուժանքներ վճարելու հետևանքով:

Ուստի, ավելորդ նյութական արժեքների կուտակումը դիտվում է որպես սոցիալիստական տնտեսությանը վնասող անտնտեսավարության դրսևորում:

Շրջանառության ֆոնդի մեջ ներդրած շինարարական կազմակերպությունների դրամական միջոցներն անմիջականորեն կապված չեն արտադրության ընթացքի հետ, սուկույն կոչված են սպասարկելու արտադրության ոլորտը: Շրջանառության ոլորտում նրանք օգտագործվում և՛ շինանյութերի և աշխատանքի այլ առարկաների հայթայթման համար, որոնք անհրաժեշտ են շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման անընդհատությունն ապահովելու, ինչպես նաև կատարված աշխատանքների համար պատվիրատուների հետ հաշվարկներ կատարելու համար: Դա նշանակում է, որ մի

որոշ ժամանակ միջոցների մի զգալի մասը արտադրութայան ոլորտից հանվում է: Հետևաբար, արտադրութայան զարգացման շահերը պահանջում են, որպեսզի շրջանառութայան ոլորտի մեջ դրվեն ըստ հնարավորին քիչ միջոցներ, իսկ այդ ոլորտում նրանց գտնվելու ժամանակը որքան հնարավոր է կարճ լինի:

Ասվածից երևում է, որ շրջանառու միջոցների մի փուլից մյուսն անցման արագացումը կապալային կազմակերպութունների դրամական միջոցների պահանջների կրճատման կարևոր պայմանն է հանդիսանում: Իսկ դա հնարավոր է գրելավորապես արտադրական պաշարները մինչև նվազագույն անհրաժեշտ չափերի հասցնելու, աշխատանքների ավարտման ժամկետների արագացման, դրամական միջոցները շրջանառութայան ոլորտում գտնվելու չափերի և ժամկետների կրճատման միջոցով: Ուստի տնտեսապես նպատակահարմար է, որ տնտեսական ղեկավարները սիստեմատիկաբար անցկացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք ապահովեն շրջանառու միջոցների շրապտույտի արագացումը: Այդպիսի միջոցառումների մշակումը և նրանց պրակտիկ իրագործումը պետք է լինի հասարակական կազմակերպութունների կողմից կատարվող՝ շինարարական կազմակերպութունների տնտեսական գործունեության վերահսկողության հիմնական հարցերից մեկը:

Կապալային կազմակերպությունների շրջանառու միջոցների նորմավորումը: Շրջանառու միջոցներն ավելի արդյունավետ օգտագործելու և նրանց շրջապտույտն արագացնելու նպատակներով իրագործվում է արտադրական պաշարների, արտադրութայան ծախսումների, դրամական ռեսուրսների և հաշվարկներում եղած միջոցների նորմավորում: Ընդ որում, շրջանառու միջոցների պլանային գումարը սահմանվում է այնքան, որ ապահովվի կապալային կազմակերպութունների անխափան աշխատանքը: Շրջանառու միջոցների պլանային գումարն ընդունված է անվանել նորմատիվ: Նորմատիվը որոշվում է ըստ շրջանառու միջոցների առանձին տարրերի: Հիմնական նյութերի պաշարների նորմատիվը որոշվում է

ելնելով երկու ցուցանիշներից. արտադրական պրոցեսի նորմալ ընթացքի համար անհրաժեշտ նյութերի պաշարից՝ օրերով և շինֆինպլանի տվյալներով հաշված նյութերի տարեկան ծախսից:

Նյութերի պաշարի նորմատիվը օրերով սովորաբար սահմանվում է շինարարական կազմակերպությունների համար նրանց վերադաս օրգանների կողմից, ելնելով մատակարարման կոնկրետ պայմաններից:

Շինֆինպլանի՝ նյութերի տարեկան ծախսի մասին տրվյալների հիման վրա որոշվում է նրանց բաժինը շինմոնտաժային աշխատանքների արժեքի մեջ: Հիմնական նյութերի ձեռքբերման համար շրջանառու միջոցների նորմատիվը, արտահայտված տոկոսներով՝ աշխատանքների ծրագրի նկատմամբ, իրենից ներկայացնում է մի մեծություն, որ ստացվում է շինմոնտաժային աշխատանքների արժեքի մեջ նրանց բաժինը բազմապատկելով օրերով արտահայտված պաշարի նորմայով և ստացված արդյունքը բաժանելով տարվա օրերի թվի վրա, որը հաշվարկներում ընդունվում է հավասար 360-ի:

Շինանյութերի բաժինը շինարարական-մոնտաժային աշխատանքների ընդհանուր արժեքի մեջ	Պաշարի նորմատիվը (օրերով)						
	30	35	40	45	50	55	60
30)	2,5	2,9	3,3	3,75	4,2	4,6	5,0
35)	2,9	3,4	3,9	4,4	4,9	5,4	5,8
40)	3,3	3,9	4,4	5,0	5,6	6,1	6,7
45)	3,75	4,4	5,0	5,6	6,25	6,9	7,5
50)	4,2	4,9	5,6	6,25	6,9	7,6	8,3
55)	4,6	5,3	6,1	6,9	7,6	8,4	9,2
60)	5,0	5,8	6,7	7,5	8,3	9,2	10,0

Նյութերի ձեռքբերման համար անհրաժեշտ շրջանառու միջոցների մեծության կախումը շինարարական մոնտաժային աշխատանքների ընդհանուր

1. Հիմնական նյութերի պլանային պաշարների որոշման մեթոդիկան արված է VII գլխում:

Նուր արժեքի մեջ նրանց բաժնից և օրերով սահմանված պաշարից՝ ցույց է տրված աղյուսակում (տոկոսներով՝ շինմոնտաժային աշխատանքների ծրագրի նկատմամբ)։

Եթե, օրինակ, 1599 հազ. ուրբի աշխատանքի ծավալով կապալային կազմակերպությանը նյութերի պաշարի նորմատիվ է սահմանված 55 օր, իսկ նրանց բաժինը շինմոնտաժային աշխատանքների արժեքի մեջ կազմում է 50 տոկոս, ապա նյութերի հայթայթման համար շրջանառու միջոցների չափը կլինի աշխատանքի ծրագրի 7,6 տոկոսը կամ 1215 հազ. ուրբի։

Կոնստրուկցիաների և դետալների նորմատիվը, որպես կանոն, սահմանվում է երեք ամսվա պահանջի չափով, որի սահմաններում պատվիրատուն կատարում է դրանց վճարումը ֆինանսավորման հաշվից։ Շինֆինպլանի տվյալների հիման վրա որոշվում է կոնստրուկցիաների և դետալների արժեքի բաժինը շինմոնտաժային աշխատանքների ծախսումներում։ Գրանից ելնելով կարելի է սահմանել նրանց օրվա, ամսվա, եռամսյակի ծախսը։

Եթե, օրինակ, կոնստրուկցիաների և դետալների արժեքի բաժինը շինմոնտաժային աշխատանքների արժեքի մեջ կազմում է 24 տոկոս, ապա մեկ ամսվա համար հաշվարկելիս այդ բաժինը կկազմի 2 տոկոս (42:12), իսկ երեք ամսվա համար՝ 6 տոկոս (2×3)։

Շինարարական-մոնտաժային աշխատանքների աճավարտ արտադրության ծախսերի նորմատիվը որոշվում է կապալային կազմակերպության և պատվիրատուի միջև հաշվարկների ընդունված կարգին համապատասխան։

Անավարտ արտադրության ծախսերը ծածկելու համար անհրաժեշտ շրջանառու միջոցների չափը որոշելու համար վերլուծվում է այդ ծախսումների վիճակը նախորդ ժամանակաշրջաններում, իսկ այնուհետև փոփոխությունների մեջ ճշտումներ են մտցվում գալիք տարվա կատարվելիք շինարարական ու մոնտաժային աշխատանքների հաշվարկների պայմաններում, համեմատելով նախորդ ժամանակաշրջանի հաշվարկների պայմանների հետ։ Գործնականորեն անավարտ արտադրության նորմատիվը ընդունվում է հաշվետվության տվյալների համաձայն, քանի որ հաշվարկների կազմավոր-

ված ձևերը համեմատաբար կայուն են, ուստի և մի շարք տարիների ընթացքում նրանց տարբեր ձևերի կիրառումը, ամենաբազմազան զուգակցումով անավարտ արտադրության ծախսումներում էական շեղումներ չի տալիս: Ներկայումս շինարարական կազմակերպությունների շինարարական-մոնտաժային աշխատանքների անավարտ արտադրության ծախսումները տարեկան ծավալի 1,5—2 տոկոսից չեն անցնում:

Տնաշինարարական կոմբինատներում, որոնք հաշիվ են տեսնում լրիվ վերջացրած օբյեկտներով (բնակելի տներ) առանց միջանկյալ վճարումների, անավարտ արտադրության ծախսումները շատ ավելի բարձր են: Այսպես, Լենինգրադի տնաշինարարական կոմբինատներին շինարարական-մոնտաժային աշխատանքների անավարտ շինարարության ծախսումները ծածկելու նորմատիվը սահմանված է տարեկան պլանի 25,4 տոկոսի չափով:

Ցածրարժեք ու արագամաշ առարկաների պաշարների նորմատիվը սովորաբար որոշվում է մեկ բանվորին ընկնող դրանց արժեքի ուղղակի հաշվման մեթոդով: Սա բացատրվում է նրանով, որ այս առարկաների պաշարներն ուղղակի կախման մեջ են շինարարական կազմակերպությունների առանձնահատկություններից: Օրինակ, գործիքների և արտադրական ինվենտարի պաշարների չափը մոնտաժային կազմակերպություններում ավելի է, քան շինարարական կազմակերպություններում: Եվ հակառակը, հանրակացարանների սարքավորման համար անհրաժեշտ կենցաղային գույքի պաշարները շինարարական կազմակերպություններում գերազանցում են մոնտաժային կազմակերպությունների համապատասխան պաշարներից: Այն արդյունքը, որ ստացվում է մեկ բանվորի համար հաշված հատուկ հագուստի, գործիքի, արտադրական և այլ գույքի նորմաները բանվորների պլանային քանակի հետ բազմապատկելուց, և հանրակացարանում մեկ մահճակալ-տեղի կենցաղային գույքի ծախսման նորման մահճակալ-տեղերի պլանավորված քանակի հետ բազմապատկելուց՝ գումարում կկազմի ցածրարժեք և արագամաշ առարկաների շրջանառու միջոցների նորմատիվը: Միջին հաշվով ցածրարար-

ժեք և արագամաշ առարկաների պաշարները շինարարական-մոնտաժային աշխատանքների տարեկան ծրագրի 5 տոկոսից չեն անցնում:

Այլ նյութերի նորմատիվը որոշվում է առանձին, ըստ խմբերի՝ վառելիք, վառելանյութ, պահեստային մասեր, ավտոռետին, այլ օժանդակ նյութեր: Այս խմբերից ամեն մեկի համար սահմանվում է նրանց պաշարը օրերով և օրական միջին պլանային ծախսը: Այս մեծությունների արտադրյալն էլ կազմում է նորմատիվը: Միջին հաշվով, շինարարական-մոնտաժային աշխատանքների տարեկան ծրագրի նկատմամբ սույն խմբի նյութերի նորմատիվը հասնում է 2—2,5 տոկոսի:

Գալիֆ ժամանակամիջոցների ծախֆերը կազմված են գրվ-խավորապես ժամանակավոր հարմարանքների ու կառուցվածքների ծախսումներից, որոնք նախորոշված են մինչև աշխատանքների ավարտումը շինարարական հրապարակը սպասարկելու համար: Նորմատիվը որոշելու համար տարվա սկզբի դրությամբ ծախսումներին ավելացվում են գալիք տարվա ծախսումները և հանվում են այն ծախսերը, որոնք նախատեսվում է դուրս գրել պլանային ժամանակամիջոցում: Գործնականորեն այդ նորմատիվը սահմանվում է հաշվետվության տվյալների հիման վրա, իսկ նրա մեծությունը շինարարական-մոնտաժային աշխատանքների տարեկան ծավալի 0,2—0,5 տոկոսից չի անցնում:

Ինքնուրույն (արդյունաբերական) բալանս շունեցող օժանդակ և օգնող տնտեսությունների անավարտ արտադրության նորմատիվը հաշվվում է այդ տնտեսությունների աշխատանքի կոնկրետ պայմանների և նրանց համար սահմանված ծրագրի հաշվառումով: Օժանդակ և օգնող տնտեսությունների անավարտ արտադրության մեջ միջոցների գտնրվելու տևողությունը շատ շնչին է, ուստի գործնականորեն նորմատիվը որոշվում է նախորդ ժամանակաշրջանի հաշվետվության տվյալների հիման վրա:

Դրամական միջոցների նորմատիվը (հաշվարկային հաշվում գումարների մնացորդները, ակրեդիտիվները և հատուկ հաշիվները, ինչպես նաև միջոցների առկայությունը դրա-

մարկղում) սահմանվում է տարեկան պլանով նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ծավալի մեկ տոկոսի սահմաններում:

Կատարված աշխատանքների համար պատվիրատուների հետ հաշվարկների նորմատիվը սահմանվում է ելնելով նրանից, որ հաշիվներն ու վճարումները իրագործվում են, որպես կանոն, ամեն տասնօրյակում: Ուստի նորմատիվը որոշվում է վճարումների այն չափով, որ հասնում է կապալային կազմակերպությանը մեկ տասնօրյակում կատարած աշխատանքների համար, որ կազմում է շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծավալի 1/36 մասը կամ այդ ծավալի 2,8 տոկոսը: Ընդ որում, աշխատանքների տարեկան ծավալից հանվում են այն օբյեկտները, որոնց համար աշխատանքների վճարը կատարվում է առանց տասնօրյակային հաշվարկների (այդ օբյեկտների չվճարված աշխատանքները ծածկվում են անավարտ արտադրության նորմատիվով):

Եթե ելնենք կապալային կազմակերպության 15,990 հազ. ռուբլի աշխատանքի ծավալից և միջին նորմատիվներից, ապա այդ կազմակերպության շրջանառու միջոցների ընդհանուր նորմատիվը կարելի է ցույց տալ հետևյալ ձևով (տես 622 էջի աղյուսակը):

Հարկավոր է հաշվի առնել, որ բացի շրջանառու միջոցներից, որոնց նկատմամբ նորմատիվներ են սահմանվում (նորմավորվող շրջանառու միջոցներ), շինարարական կազմակերպությունները հաճախ օգտվում են միջոցներից, որոնց չափը չի պլանավորվում (չնորմավորվող շրջանառու միջոցներ): Դրանց են վերաբերում կատարված աշխատանքների ժամկետանց հաշիվների հաշվարկները և այլ դերիտորական պարտքերը, ֆինանսավորման սահմանված աղբյուրներից դուրս կատարված կապիտալ վերանորոգման և սեփական կապիտալ շինարարության ծախսումները, արտապլանային վնասները, հատուկ ֆոնդերի գերածախսերը: Ինչպես երևում է թվարկումից, չնորմավորվող շրջանառու միջոցների առկայությունը առաջ է գալիս, գլխավորապես, պլանային ու ֆինանսական կարգապահության խախտումներից:

Ինչպես ամբողջ կապալային կազմակերպության, այնպես էլ շրջանառու միջոցների առանձին տարրերի դժով նորմատիվը սահմանվում է տոկոսներով՝ շինմոնտաժային աշխատանքների տարեկան հաստատված ծրագրի նկատմամբ:

	Շրջանառու միջոցների նորմատիվը	
	Տոկոսներով տարեկան ծրագրի նկատմամբ	մեծությամբ
Հիմնական նյութեր	7,6	1215,3
Կոնստրուկցիաներ և դետալներ	5,0	799,5
Շինմոնտաժային աշխատանքների գծով անավարտ արտադրություն	1,5	239,8
Ցածրարժեք և արագամաշ առարկաներ	4,0	639,6
Այլ նյութեր	2,0	319,8
Գալիք ժամանակամիջոցների ծախսեր	0,3	48,0
Օժանդակ և օգնող տնտեսությունների անավարտ արտադրություն	—	—
Դրամական ռեսուրսներ	1,0	159,9
Հաշվարկներ պատվիրատուների հետ	2,8	447,7
	24,2	3869,6

Սա ասում է այն մասին, որ նորմատիվը հաշվարկելիս ելնում են տարվա ընթացքում արտադրական ծրագրի համաչափ կատարումից: Իսկ կապաւային կազմակերպության գործունեության հատուկ պայմանների հետ կապված շրջանառու այն միջոցների պահանջը, պայմաններ, որոնք անհրաժեշտություն են ստեղծում ունենալ ժամանակավոր, սահմանված նորմաներից բարձր նյութական արժեքների պաշարների աճ, և այլ ժամանակավոր կարիքները ծածկվում են բանկային կարճատև վարկերով:

Շրջանառու միջոցների գոյացման աղբյուրները: Կապաւային կազմակերպությունների շրջանառու միջոցներն ըստ գոյացման աղբյուրների բաժանվում են՝ 1) սեփական և նրանց հավասարեցված, 2) փոխառական: Փոխառական միջոցներին են վերաբերում պատվիրատուների կանխավճարները և բանկային կարճատև վարկերը:

Ներկայումս կապալային կազմակերպությունների շրջանառու միջոցների միջին նորման կազմվել է տարեկան արտադրական ծրագրի մակարդակի մոտ 12,5 տոկոսի չափով, ընդ որում, տնտեսության որոշ ճյուղերի համար պչն կազմում է 10—11 տոկոս, իսկ մյուսների համար հասնում է 16 տոկոսի և ավելին:

Սեփական շրջանառու միջոցների հաշվին ծածկվում են շրջանառու միջոցների հետևյալ տարրերը. ցածրարժեք և արագամաշ առարկաներ, այլ նյութեր, ինքնուրույն հաշվեկշիռ չունեցող օժանդակ ձեռնարկությունների անավարտ արտադրություն, գալիք ժամանակաշրջանների ծախսեր, դրամական միջոցներ և կատարված աշխատանքների համար պատվիրատուների հետ հաշվարկների մեջ եղած միջոցներ:

Սեփական շրջանառու միջոցները կազմավորվում են շինարարական կազմակերպությունների շահույթների, վերադաս օրգանների միջոցների վերաբաշխման և պետական բյուջեից կատարվող հատկացումների հաշվին: Ընդ որում սեփական շրջանառու միջոցներին են հավաքարեցվում նաև այն միջոցները, որոնք չեն պատկանում տվյալ կազմակերպությանը, բայց միշտ գտնվում են նրա շրջանառության մեջ: Այդ միջոցները կոչվում են կայուն պասսիվներ:

Կայուն պասսիվներին վերաբերում են.

1. Բանվորների և ծառայողների աշխատավարձի փոխանցիկ պարտք: Շինարարական կազմակերպություններն աշխատավարձ են տալիս, որպես կանոն, վճարվելիք ժամանակաշրջանի վերջանալուց վեց-յոթ օր հետո: Հետևաբար, այդ ժամանակի ընթացքում աշխատավարձի պարտքի գումարները գտնվում են տնտեսական շրջանառության մեջ:

2. Սոցիալական ապահովության մուծումների միջոցների պարտք, բանվորների և ծառայողների աշխատավարձի փոխանցիկ պարտքին հասանելիք չափերով:

3. Առաջիկա ծախսերի վնասման ռեզերվը, գլխավորապես բանվորների արձակուրդների համար: Արձակուրդի ժամանակ աշխատավորներին հասնող աշխատավարձն ամեն ամիս մույվում է կատարված աշխատանքների ինքնարժեքի մեջ, այն ժամանակ, երբ միջոցների փաստացի ծախսումը, օրինակ՝ անցյալ տարվանից արձակուրդների մի մասի փոխանցման պատճառով, առանձին ժամանակամիջոցներում կարող է ավելին լինել: Այս ռեզերվը կազմում է աշխատավարձի մոտավորապես յոթնօրյա ֆոնդը:

Շինարարական կազմակերպությունների շրջանառու միջոցների չափն ամեն տարի համապատասխանեցվում է նրանց հաստատված ծրագրի հետ: Այն դեպքերում, երբ տարվա սկզբին սեփական շրջանառու միջոցների պլանային մնացորդը փոքր է աշխատանքների ծրագրի կատարման համար անհրաժեշտ գումարից, նախատեսվում է դրանց լրացումը¹: Այն դեպքերում, երբ սեփական շրջանառու միջոցների մնացորդը պլանային տարվա սկզբին նորմատիվից գերազանցում է, ավելորդ շրջանառու միջոցները վերցվում են, որպես պետական բյուջեի եկամուտ կամ վերաբաշխման² կարգով անցնում են վերադաս տնտեսական օրգանների տնօրինության տակ:

Պլանային տարում պատվիրատուների կանխավճարների չափերը նույնպես համապատասխանեցվում են շինմոնտաժային աշխատանքների հաստատված ծրագրին:

Ժողտնտխորհներին, մինիստրություններին ու գերատեսչություններին և նրանց կազմի մեջ մտնող տնտեսական միավորումներին իրավունքներ են տրված, որոնք ապահովում են շրջանառու միջոցների առավել արդյունավետ օգտագործումն ու առանձին կապալային կազմակերպությունների միջև նրանց ռացիոնալ բաշխումը: Նրանք կարող են սեփական շրջանառու միջոցների ավելցուկները վերաբաշխել կապալային կազմակերպությունների և տնտեսական միավորումների միջև ամսական և եռամսյակային հաշվեկշիռներով, ինչպես նաև ժամանակավորապես օգտագործել (ոչ ավելի քան 3 ամիս ժամկետով) որոշ կապալային կազ-

1 Եթե շրջանառու միջոցների պակասը արդյունք է անցած տարվա պլանի քանակական և որակական առաջադրանքների կատարման անբավարար աշխատանքի, նրա լրացումը կարող է կատարվել միայն այդ թերությունն առաջացնող պատճառների խորը ուսումնասիրությունից հետո: Ընդ որում շինարարական կազմակերպությունների կողմից պետք է միջոցառումներ մշակվեն, որոնց իրագործումն ապահովում է արտադրական-տնտեսական գործունեության բարելավումը:

Շրջանառու միջոցների լրացումը առաջին հերթին կատարվում է շինարարական կազմակերպությունների սեփական ռեսուրսների հաշվին և միայն մնացած մասը այլ աղբյուրների հաշվին:

մակերպությունների ազատ շրջանառու միջոցները մյուսների համար նրանց պարտադիր վերադարձումով այն կազմակերպություններին, որոնցից դրանք վերցրած էին: Ժողովրդատիրոջներին, մինիստրություններին և գերատեսչություններին իրավունք է տրված, նույնպես, օգտագործել շինարարական կազմակերպությունների արտապլանային օգուտների մինչև 50 տոկոսը, մյուս կազմակերպություններին ժամանակավոր ֆինանսական օգնություն ցույց տալու համար:

Ժողատնտեսության կազմի մեջ մտնող տնտեսական միավորումների ղեկավարներն իրավունք ունեն, անհրաժեշտության դեպքում, շինարարական կազմակերպությունների շահույթների և ավելցուկ շրջանառու միջոցների վերաբաշխում կատարել, ամսական հաշվեկշիռների և հաշվետվությունների հիման վրա, առանց փոփոխելու փոխհարաբերությունները բյուջեի հետ:

Ժողատնտեսության, մինիստրություններին և գերատեսչություններին թույլ է տրված ձեռնարկություններին և տրնտեսական կազմակերպություններին ժամանակավոր ֆինանսական օգնություն ցույց տալու համար ռեզերվներ ստեղծել տարեկան պլանով սահմանված սեփական շրջանառու միջոցների նորմատիվի 3 տոկոսի չափով, անկախ եկամուտների ու ծախսերի տարեկան հաշվեկշռով նախատեսված նորմատիվի աճի գումարից: Ժամանակավոր ֆինանսական օգնություն ցույց տալու համար նախատեսված միջոցները պահվում են բանկերում առանձին հաշիվներում և տրվում են կապալային կազմակերպություններին միայն վերադարձման կարգով ոչ ավելի, քան 9 ամիս ժամկետով:

Տնտեսական եղանակով աշխատանքներ կատարող կազմակերպությունների շրջանառու միջոցները: Տնտեսական եղանակով աշխատանքները կատարող շինարարության վարչություններին ու կապիտալ շինարարության բաժիններին շրջանառու միջոցներն առանձնացվում են նույն նպատակների համար, ինչ որ կապալային կազմակերպություններին: Գործնականում շրջանառու միջոցների չափերը որոշվում են կապալային կազմակերպությունների համար սահմանված

նորմատիվներով: Կառուցվող (գործող) ձեռնարկությունների դիրեկտորները շրջանառու միջոցները փոխանցում են շինարարության պետերի (կապիտալ շինարարության բաժինների) հաշվարկային հաշիվները ամեն եռամսյակ՝ եռամսյակի աշխատանքի ծրագրին համապատասխան. եթե ծրագիրն ավելանում է կամ պակասում է, ապա նույնպես և շրջանառու միջոցների շափի համապատասխան ճշտում է կատարվում: Շրջանառու միջոցների փոխանցման այսպիսի կարգը հնարավորություն է տալիս ամեն եռամսյակ հաշվի առնել շինարարության (կապիտալ շինարարության բաժնի) ժամանակավոր կարիքները, որոնք կապալային կազմակերպությունների մոտ ծածկվում են բանկային վարկերով:

Կառուցվող (գործող) ձեռնարկությունների դիրեկցիաների շրջանառու միջոցները: Վերևում ասված էր, որ կապիտալ ներդրումների ֆինանսավորման պլաններում որոշվում է շինարարության համար անհրաժեշտ շրջանառու միջոցների գումարը: Այդ միջոցները նախատեսված են կապալային կազմակերպություններին կանխավճար տալու համար, հաշվելով նաև կոնստրուկցիաների և դետալների վճարումը, տնտեսական եղանակով իրագործվող կառույցների ու օբյեկտների շրջանառու միջոցների կազմավորման համար և պատվիրատուի տնտեսական գործունեության հետ կապված ծախսումների վճարման համար: Վերջիններին են վերաբերում գլխավորապես սարքավորումների ձեռքբերման և կապալառուների ու մատակարարների հետ՝ հաշվարկների ծախսումները: Հետևաբար, շինարարության շրջանառու միջոցները կոչված են ապահովելու ամբողջ կառույցի արտադրական պրոցեսի անընդհատությունը, արտադրության պրոցեսի միասնությունը կառույցի համար ամբողջությունամբ, այսինքն՝ ինչպես կապալային կազմակերպության, այնպես էլ պատվիրատուի մոտ: Այդ բարձրացնում է պատվիրատուի պատասխանատվությունը պլանները քանակական և որակական ցուցանիշներով կատարելու համար, նրան հնարավորություն է տալիս ակտիվորեն ներգործել արտադրության ընթացքի վրա:

Հատկապես մեծ նշանակություն ունի սարքավորումը ժա-

մանակին մատակարարելը: Աշխատանքների անխափան պրոցեսն անհրաժեշտ է դարձնում սարքավորումների պաշարներ ունենալ, որոնք կոչված են ապահովելու արտադրության պրոցեսների անընդհատությունը՝ օբյեկտները գործարկելու գրաֆիկներին և պլանների համապատասխան:

Ներկայումս, ինչպես պրակտիկան է ցույց տալիս, սարքավորման նորմալ պաշարը չի անցնում տվյալ տարում տեղակայման համար նախատեսված սարքավորման ընդհանուր արժեքի 15—20 տոկոսից: Սա նշանակում է, որ նորմատիվը բավարարում է սարքավորման մեկուկես—երկու ամսյա արտադրական պահանջը: Առանձին կառույցների համար նորմատիվը կարող է լինել ավելի կամ պակաս՝ կախված պլանի կառուցվածքից (գլխավորապես սարքավորում ձեռք բերելու ծախսումների բաժնից), սարքավորում մատակարարելու հանգույցների, պատրաստության աստիճանի պայմաններից և գրաֆիկներով նախատեսված մոնտաժի ժամկետներից: Սարքավորման պաշարների համար շրջանառու միջոցների պահանջի հաշվարկի մեջ հաշվի չի առնվում մոնտաժ շահահանող սարքավորումը, քանի որ այն մտցվում է կատարված կապիտալ ներդրումների ծավալի մեջ անմիջապես կառույցում ստացվելու ժամանակ, ինչպես նաև ներմուծվող սարքավորումը և զալիք սարիների շինարարության օբյեկտների խոշոր տեխնոլոգիական ու էներգետիկ հայրենական սարքավորումը, որի պաշարները՝ մինչև մոնտաժի հանձնելու պլանային ժամկետները, վարկավորվում են բանկերի կողմից:

Այն հաշվարկներով, որ իրագործում են պատվիրատուները՝ կապալառուների հետ կատարված աշխատանքների համար և մատակարարների հետ՝ սարքավորումների, շինարարական կոնստրուկցիաների ու նյութերի համար, անաջ են զալիս փոխադարձ պարտքեր. 1) կրեդիտորական, երբ պատվիրատուն պարտք է մատակարարներին (կապալառուներին), 2) դեբիտորական, երբ մատակարարը, կապալառուն պարտք է պատվիրատուին: Նորմալ փոխադարձ պարտքի ընդհանուր գումարի փոփոխություն տեղի է ունենում ար-

տադրական ծրագրի ավելացման կամ պակասեցման դեպքերում: Ընդ որում դեբիտորական պարտքի իջեցումը պակասեցնում է ֆինանսավորման պահանջը, իսկ կրեդիտորական պարտքի մարումը, ընդհակառակը, ավելացնում է ֆինանսավորման գումարը:

Եթե անհրաժեշտ է շրջանառու միջոցների աճ, ապա նրա գումարի շահիով ֆինանսավորումը կգերազանցի կապիտալ ներդրումների ծավալը: Իսկ եթե շրջանառու միջոցները պակասում են, ապա կապիտալ ներդրումների ծավալը համապատասխան գումարով ավելի կլինի ֆինանսավորման շահից: Սա ասում է այն մասին, թե պետական միջոցների տնտեսման համար ինչքան կարևոր նշանակություն ունեն շինարարության համար անհրաժեշտ շրջանառու միջոցների ճիշտ որոշումը և նրանց շրջապտույտի արագացումը: Շրջանառու միջոցների աճը կամ պակասեցումը հաշվի է առնվում միութենական ռեսպուբլիկաներին, ժողտնտխորհներին, միևնիստրություններին, գերատեսչություններին և կառույցներին առանձնացվող կապիտալ ներդրումների ֆինանսավորման ընդհանուր գումարի մեջ:

Ենթադրենք, որ պատվիրատուն շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարումը հանձնեց կապալային կազմակերպությանը (որի մասին ասվեց 622 լջում տրված օրինակի մեջ), և բացի դրանից, տնտեսական եղանակով 800 հազ. ռուբլի ծավալով շինարարական-մոնտաժային աշխատանքներ է կատարում, ապա այդ պատվիրատուի շրջանառու միջոցները կարելի է պատկերել 629 էջի աղյուսակի ձևով (հազ. ռուբ.):

Տվյալ օրինակում, մոնտաժ պահանջող սարքավորման նվազագույն պաշարների համար շրջանառու միջոցների նորմատիվն ընդունված է դրանց ձեռքբերման ծախսումների 18 տոկոսի շահով: Տնտեսական եղանակով կատարվող աշխատանքների համար հիմնական նյութերի նորմատիվը սահմանված է 6,25 տոկոս ծրագրի նկատմամբ (45 օրվա պաշարի նորմատիվի և աշխատանքների արժեքի մեջ նյութերի բաժնի 50 տոկոսի դեպքում), շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրությանը՝ 1,5, կոնստրուկցիաներին ու դետալներին՝ 3, ցածրարժեք ու արագամաշ առարկաներին՝ 2, այլ նյութերին՝ 1,5 և դրամական միջոցներին՝ 1 տոկոս: Հարկավոր է նկատի ունենալ, որ տնտեսական եղանակով աշխատանքները կատարող կազմակերպությունների համար ձեռնարկության դիրեկցիայի հետ կատարված աշխատանքների հաշվարկների նորմատիվը

	Շրջանառու միջոց- ները պլանային տարվա սկզբին	Շրջանառու միջոց- ների նորմատիվը պլանային տարվա վերջին	Արդյունքը, աճում (+), նեղրեն ու- սուկաների մորթի- վեցացիա (-)
Մոնետաժ պահանջող սարքավորում	1280,0	1151,3	-128,7
Կոնստրուկցիաների, դետալների, հիմ- նական և այլ նյութերի, ցածրարժեք և արագամաշ առարկաների պա- շարներ և դրամական միջոցներ տնտեսական եղանակով կատար- վող աշխատանքների համար .	121,5	110,0	- 11,5
Տնտեսական եղանակով կատարվող շի- նարարական-մոնետաժային աշխա- տանքների անավարտ արտադրու- թյուն	9,0	12,0	+ 3,0
Կապալառուներին տրված կանխավճար- ներ ներառյալ կոնսուլուկցիաների և դետալների ծախսումների վճա- րումը ¹ :	3462,0	2254,6	-1207,4
Ընդամենը	4872,5	3527,9	-1344,6
Կրեդիտորական պարտք	54,0	29,0	-25,0
Շրջանառու միջոցներ՝ կրեդիտո- րական պարտքը հանած	4818,5	3498,9	-1319,6

պետք չէ, որովհետև նրա մոտ կատարված աշխատանքների համար առա-
ջանում է դերիտորական պարտքին հավասար կրեդիտորական պարտք,
որոնք հաշվի են առնվում մեկ հաշվեկշռում:

Օրինակից երևում է, որ շրջանառու միջոցները պետք է պակասեցվեն
Պակասեցումը բացատրվում է կապալային ձևով կատարվող աշխատանք-
ների ծրագրի իջեցումով, որի հետևանքով շեշտակի կերպով կրճատվում են
արված կանխավճարները: չափերը Պակասում են նաև սարքավորման պա-
շարները: Սրա հետ միասին տնտեսական եղանակով կատարվող աշխա-

¹ Այն դեպքերում, երբ կապալային կազմակերպությունների շրջանա-
ռու միջոցների կազմավորման միասնական աղբյուր է սահմանված, կա-
պալառուներին տրվող կանխավճարները հաշվարկից հանվում են:

տանքների ծրագրի աճման ժամանակ, որի մասին է ասում անավարտ արտադրության նորմատիվի ավելացումը, տնտեսական եղանակով կատարվող աշխատանքներին վերաբերող մյուս հոդվածների գծով նախատեսված է մոբիլիզացիա: Դա ցույց է տալիս, որ նյութների և այլ արժեքների ավելորդ պաշարներ են կուտակվել, որոնք օգտագործվում են սլանային տարում (անմիջապես կառուցում օգտագործելու կամ դրսում իրացնելու միջոցով):

Հետևաբար, ավյալ կառույցի համար շրջանառու միջոցների ընդհանուր պակասեցումը (ներքին ռեսուրսների մոբիլիզացիան), կրեդիտորական պարտքի մարման համար առանձնացվող գումարը հանելուց հետո, կազմում է 1319.6 հազ. ռուբլի: Այս գումարով ֆինանսավորման չափը կապիտալ ներդրումների ծավալից պակաս կլինի:

Ներտնտեսական ռեզերվների հայտարերումն ու իրացումը: Շրջանառու միջոցների նորմատիվների գերազանցումը սարքավորումների պաշարների, կապալառուների կանխավճարների և այլ ծախսումների գծով անթույլատրելի է: Դա պետական միջոցները շեղում է արտադրողական շրջանառությունից: Ծրագրի կատարման ընթացքում, օրինակ, շտեղակայված սարքավորման կուտակումը, որը պայմանավորված չէ տնտեսական անհրաժեշտությամբ, բարդացնում է կառույցների աշխատանքները, ֆինանսական դժվարությունների է հանգեցնում, կտրում է սարքավորումն ընդլայնված վերարտադրության պրոցեսից: Այսպիսի փաստերը վկայում են անտնտեսավարության մասին, և դրանց վրա պետք է գամվի հասարակայնության ուշադրությունը:

XXII համագումարում Ն. Ս. Խրուշչովը ասաց, որ ՍՄԿՊ Ծրագրի նախագծի քննարկման ժամանակ «իրավացի կերպով ուշադրություն դարձվեց նոր արդյունաբերական օբյեկտների կառուցման և դրանք սարքավորումով ապահովելու գործում եղած անհամաձայնեցվածության փաստերի վրա: Իսկապես, այդ անհամաձայնեցվածության պատճառով մենք մեծ կորուստներ ենք կրում. օրինակ, մինչև 1961 թվականի հունվարի 1-ը կային միլիոնավոր քառակուսի մետր պատրաստի արտադրական հրապարակներ, որոնք անպահովված չէին կոմպլեկտային սարքավորումով, և միևնույն ժամանակ կտր հարյուր միլիոնավոր ռուբլու պատրաստի սարքավորում, որի համար չկային արտադրական հրապարակ-

ներ»¹։ Զեկուցման մեջ որպես անհետաձգելի խնդիրներինց մեկը, դրված է այդ կարևոր գործում հաստատուն կարգի ստեղծումը։

Սարքավորման և այլ նյութական սրժեքների պաշարների վիճակի սիստեմատիկ ստուգումը, դեբիտորական պարտքերի ժամանակին գանձումը և կրեդիտորականի մարումը մի միջոց է, որ օգնում է կոնկրետ կերպով լուծել տնտեսական հարցերը, դաստիարակել անհանդուրժելիության զգացում պետական միջոցների ոչ ռացիոնալ ծախսման նկատմամբ։ Սակայն, դա անհրաժեշտ արդյունք կտա միայն այն ժամանակ, երբ ստուգումն ուղեկցվում է դրամական ֆոնդերի առդյունավետության բարձրացմանն ուղղված պրակտիկ միջոցառումների անցկացմամբ։

Միջոցների մոբիլիզացիայի հիանալի օրինակ է պարտիական, պրոֆ-միութենական և կոմբերիտական կազմակերպությունների կողմից կատարվող, ձևափոխություններում և կառույցներում շտեղակայված և ավելորդ սարքավորումների հայտարարման և օգտագործման աշխատանքը։ 1961 թվականի վերջում համամիութենական կոմերիտական արշավի մասնակիցները հայտարարեցին ավելի քան 40 հազար չգործող հաստոցներ ու մեքենաներ և գտան դրանց կիրառումը։ Կերչի Առյուծի անվան գործարանում 13 տարի պահվում էր երկու գլանահաստոցների սարքավորում։ Կոմերիտականների միջամտությունն օգնեց այդ հաստոցները ծառայեցնելու ժողովրդական տնտեսությանը։ Իժոբակի գործարանում սառեցրած էր մոտ 1,5 մլն. ուտ. արժեքով սարքավորում։ Դործարանի պահեստներում երկար ժամանակ պառկած էր գործարանին պետք չեկող խողովակային ցեխի խողովակակարման տեղամասի սարքավորումը։

Սարքավորման պաշարների ստուգումներ կատարվիցին նաև Դոնեցկի և շատ ուրիշ ժողտնտխորհների ձեռնարկություններում։ Սարքավորումների գործարկման արագացումը և դրանց հանձնումը կարիք ունեցող կառույցներին խոշոր ժողովրդատնտեսական արդյունք տվեց։

Նյութական միջոցներն ավելի լավ օգտագործելու նպատակով ժողտնտխորհներին, մինիստրություններին ու գերատեսչություններին իրավունք է տրված հումքը, նյութերը, վառելիքը, սարքավորումը, մեքենաներն ու տրանսպորտա-

¹ ԵՍՄԿՊ XXII համագումարի նյութեր, Հայպետհրատ, 1962, էջ 297։

յին միջոցները բաշխել ու վերաբաշխել ենթակա ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկների միջև: Նյութական միջոցների ճիշտ օգտագործման մեջ ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով սահմանված է, որ ղեկավար և ինժեներա-տեխնիկական աշխատողները, որոնց մեղքով ավելորդ ու շտեղադրված սարքավորման կուտակումներ են առաջանում ձեռնարկություններում ու կառույցներում, կարող են զրկվել պարգևատրումից:

Ներքին ռեսուրսների գերպլանային իրացումից ստացված բոլոր միջոցները մնում են ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների տնօրինության տակ, և նրանց կողմից կարող են օգտագործվել ֆինանսավորման համար տարեկան ու եռամսյակային սահմանված իմիտներից դուրս (բայց հաստատված նախահաշիվների սահմաններում):

Շինարարության մեջ ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի համար մղվող պայքարը նպաստում է շրջանառու միջոցների շրջապտույտի արագացմանը, ձեռնարկությունների ու շինարարական կազմակերպությունների ֆինանսական տրնտեսության բարելավմանը, տնտեսական շրջանառության մեջ լրացուցիչ նյութական և դրամական ռեսուրսների ներգրավմանը:

Շրջանառու միջոցների նորմավորման օգտագործման բարելավման ուղիները: Շինարարության կառավարման վերակառուցումը, տեղական օրգանների, կառույցների ու շինարարական կազմակերպությունների ղեկավարների իրավունքների ընդլայնումը նպաստեցին շինարարության մեջ շրջանառու միջոցների օգտագործման բարելավմանը: Այդ մասին են վկայում կապալային շինարարական և մոնտաժային կազմակերպությունների շրջանառու միջոցների և նըրանց կազմավորման աղբյուրների մասին 633 էջի աղյուսակում ցույց տրված տվյալները:

Ինչպես աղյուսակից երևում է, շրջանառու միջոցների գումարի ընդհանուր աճի պայմաններում դրանց համեմատական չափերը (կատարված

	1955 թ.	1959 թ.
Շրջանառու միջոցները— ընդամենը (մլն. ռուբ.)	3299	5134
նույնը աշխատանքների ծավալի նկատմամբ (տոկոսներով)	38,0	34,1
նորմավորվող շրջանառու միջոցներ (դրանց ընդհանուր գումարից մլն. ռուբ.)	1800	2631
նույնը աշխատանքների ծավալի նկատմամբ (տոկոսներով)	20,9	17,5
Շրջանառու միջոցների կազմավորման աղբյուրները (տոկոսներով դրանց ընդհանուր գումարի նկատմամբ).		
սեփական և դրանց հավասարեցրած շրջանառու միջոցներ	23,5	33,1
բանկերի վարկեր	13,4	14,5
կրեդիտորներ (սլատվիրատուների կանխավճարները ներառյալ)	62,6	49,6
այլ աղբյուրներ	0,5	2,8

աշխատանքների ծավալի նկատմամբ տոկոսներով) պակասեցին շրջանառու միջոցների շրջապտույտի արագացման հետևանքով:

Շրջանառու միջոցների աղբյուրների կազմում շեշտակիորեն պակասեց կրեդիտորների բաժինը և ավելացավ սեփական շրջանառու միջոցների բաժինը, որը վկայում է մեծ թվով շինարարական կազմակերպությունների վնասատվության վերացման, նրանց տնտեսական գործունեության կարգավորման, շրջանառու միջոցների պահպանման հսկողության ուժեղացման մասին:

Սրա հետ միասին շրջանառու միջոցների նորմավորման կարգը հետագա կատարելագործման կարիք ունի: Որոշ դեպքերում սեփական շրջանառու միջոցների գործող նորմատիվները բավարար չափով հաշվի չեն առնում տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման, արտադրության կազմակերպման, սարքավորման և շինանյութերի տեղափոխման, ինչպես նաև հաշվարկների մեջ տեղի ունեցող փոփոխությունները: Ամբողջ ճյուղի գծով սահմանված նորմատիվներում բացակայում են շրջանառու միջոցների նորմաները ըստ նրանց կազմի մեջ մտնող տարրերի: Շինարարական կազմակերպությունները, կառույցներն ու պատվիրատուները,

որպես կանոն, շրջանառու միջոցների նորմավորմանը չեն մասնակցում:

1962 թվականին ՍՍՌՄ Մինիստրների Սովետը որոշում ընդունեց պետական ձեռնարկությունների ու կազմակերպությունների շրջանառու միջոցների նորմավորման քարելավման մասին: Սահմանված է, որ շրջանառու միջոցները նորմավորելիս անհրաժեշտ է առաջին հերթին ելնել ժողովրդատնտեսական պլանի առաջադրանքներից և նյութական ու ֆինանսական ռեսուրսների ամենաէֆեկտիվ օգտագործման ապահովումից: Շրջանառու միջոցների նորմավորումը պետք է իրագործվի անմիջականորեն ձեռնարկություններում ու կազմակերպություններում:

Պետական ձեռնարկությունների ու կազմակերպությունների շրջանառու միջոցների նորմավորման մասին կառավարության կողմից հաստատված հիմնական կանոններում որոշված են նորմավորման գլխավոր խնդիրները, նորմատիվների մշակման և դրանց հաստատման կարգը:

Սեփական շրջանառու միջոցների նորմատիվները պետք է ապահովեն շրջանառու միջոցների շրջապտույտի պարբերական արագացումը՝ նյութական արժեքների ծախսի նորմաների պակասեցման, ավելի էժանագին նյութերի օգտագործման, արանսպորտային ու այլ ծախսերի կրճատման, արտավրական ցիկլի տևողության կրճատման, արտադրանքի իրացման և փաստաթղթերի շրջանառության արագացման հաշվին:

Շրջանառու միջոցների նորմաները պետք է կիրառվեն մի շարք տարիների ընթացքում: Դրանք հաստատում են ժողտնտխորհները, մինիստրություններն ու գերատեսչությունները և դրանց համապատասխան ամեն օրի սահմանում են սեփական շրջանառու միջոցների նորմատիվի ընդհանուր չափը: Ընդհանուր նորմատիվի հիման վրա կառույցների ու շինարարական կազմակերպությունների ղեկավարները հաստատում են նորմատիվները ըստ շրջանառու միջոցների տարրերի:

Շինարարական կազմակերպությունների նորմավորվող շրջանառու միջոցների կազմավորումը կատարվում է երկու աղբյուրներից (սեփական միջոցներ և պատվիրատուների կանխավճարները): Այս կարգը սահմանափակում է շինարարական կազմակերպություններին իրենց ռեսուրսներով մասներելու հնարավորությունը:

Տնտեսական հաշվարկի ամրապնդման, ֆինանսական

դրութեան բարելավման և ֆինանսական վերահսկողութեան ուժեղացման համար որոշ կազմակերպութիւններէ գծով (Գլավմոսստորոյ, ՍՍՌՄ՝ Գլավգազ, տնաշինարարական կոմբինատներ և այլն) շրջանառու միջոցների միասնական ազբյուր է սահմանված: Այդ կազմակերպութիւններում սեփական շրջանառու միջոցների նորմատիվները որոշվում են շինարարական նյութերի և կոնստրուկցիաների պաշարները հաշվի առնելով (առանց պատվիրատուների կանխավճարների): Նորմատիվներից ավելի, բայց պլանային պահանջի սահմաններում եղած նյութերի, կոնստրուկցիաների, մասերի և բլոկների պաշարները, որ առաջանում են արտադրական պլանի կատարման ընթացքում, ծածկվում են բանկային կարճատև վարկով: Շրջանառու միջոցների կազմավորման կիրառման փորձը ցույց տվեց դրա պրոգրեսիվ նշանակութունը կապալային կազմակերպութիւններում տնտեսական հաշվարկի ամրապնդման գործում:

4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

Կարճատև վարկավորման սկզբունքները: Շինարարական կազմակերպութիւնների պլանաչափ արտադրական և տնտեսական-ֆինանսական գործունեութեան անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար մեծ դեր է խաղում կարճատև վարկավորումը:

Ինչպես արդեն ցույց տրվեց, կարճատև վարկը կապված է առավելապես շինարարական կազմակերպութիւնների շրջանառու միջոցների կազմավորման հետ, ընդ որում կապալառուներին տրվող փոխատվութիւնները ծածկում են նրանց ծրագրի կատարման համար անհրաժեշտ շրջանառու միջոցների պահանջի զգալի մասը:

Շինարարական կազմակերպութիւնների կարճատև վարկավորման ծավալը վերջին տարիներում անընդհատ աճում է: Այսպես, 1961 թ. կապալային կազմակերպութիւններին տրված փոխատվութիւնները 1952 թվականի հետ համեմատ-

տաժ ավելացել են ավելի քան 2 անգամ, իսկ կառույցների-
նը (տիտղոս ունեցողներին)՝ մոտ 3,5 անգամ: Բանկային
վարկերի աճն առաջանում է կապիտալ ներդրումներն անընդ-
հատ ավելացնելու, աշխատանքներ կատարելու կապալային
ձևն ամրապնդելու և լայնացնելու միջոցով, որ հանգեցնում
է տնտեսական կապերի լայնացմանը, հաշվարկների ծավա-
լի մեծացմանը: Դրա հետևանքով լայնանում են բանկի վար-
կային կապերը կապալային կազմակերպությունների ու կա-
ռույցների հետ, ինչպես վարկային ներդրումներն ավելաց-
նելու հաշվին, այնպես էլ բանկային վարկի նոր տեսակներ
արմատավորելու միջոցով:

Վարկավորումը կազմակերպվում է ժողովրդական տնտե-
սություն համար ընդհանուր սկզբունքների հիման վրա: Այդ
սկզբունքներին համապատասխան՝ փոխատվությունները
տրվում են. 1) անմիջականորեն այն կազմակերպություննե-
րին, որոնք դրանց կարիքն ունեն (բանկային ուղղակի վար-
կավորում), 2) պլանի առաջադրանքներին և նպատակներին
համապատասխան շահերով (վարկի պլանա-նպատակային
բնույթը), 3) համապատասխան միջոցառումների անցկաց-
ման ժամանակով որոշվող ժամկետով (վարկի վերադարձու-
թյունը), 4) փոխատվությունը նյութական արժեքներով ա-
պահովելու դեպքում՝ որ երաշխավորում է դրանց մարումը
(վարկի ապահովությունը):

Փոխառական դրամական միջոցներից օգտվելու համար,
որոնք կապալային կազմակերպությունները ստանում են
բանկերից, տոկոսներ են վճարվում, որոնց շահիը որոշում է
կառավարությունը:

Վարկերի հիմնական տեսակները: Վարկի դերը շինարա-
րական կազմակերպությունների տնտեսական գործունեու-
թյան մեջ երևան է գալիս նրա հիմնական ձևերի բնույթով:

Փոխատվություններ նյութական արժեքների հայրայթ-
ման համար: Կապալային կազմակերպությունների շրջանա-
ռու միջոցները հաշվաժ են նյութական արժեքների այնպի-
սի պաշարների գոյացման համար, որոնք անհրաժեշտ են
տարեկան պլանը եռամսյակներով համաչափ կատարելու

համար: Իսկ այն դեպքերում, երբ տարվա ընթացքում աշխատանքներ կատարելու պլանը տրեք եռամսյակում ավելի է, քան միջին տարեկան ցուցանիշներով հաշված ծրագիրը, անհրաժեշտ են լրացուցիչ դրամական միջոցներ այն չափով նյութեր հայթայթելու համար, որը ապահովի այդ եռամսյակում աշխատանքների ծավալի ավելացման հետ կապված քարձր ծրագրի կատարումը: Նյութական արժեքների հայթայթման համար լրացուցիչ ծախսումների պահանջն առաջ է գալիս նաև դրանց փոխադրման սեզոնային պայմանների կապակցությամբ: Այս դեպքում շրջանառու միջոցներով չծածկվող գերնորմատիվային պաշարների գոյացման անհրաժեշտությունն առաջ է գալիս տեղափոխման և նյութերի առանձին տեսակների սեզոնային արտադրության պայմաններից:

Նյութական արժեքների կուտակման լրացուցիչ ծախսումները ժամանակավոր, սեզոնային բնույթ են կրում և այդ պատճառով էլ ծածկվում են կարճատև փոխատվություններով: Վարկը տրվում է շինանյութերի, անասնակերի և վառելիքի հայթայթման համար դրանց փաստացի արժեքով, բայց պլանային արժեքից ոչ ավելի: Վարկը մարվում է հետևյալ եռամսյակում, որը հաջորդում է վարկը տրված եռամսյակին, ընդ որում մարման կոնկրետ ժամկետները սահմանվում են կատարված կապիտալ աշխատանքների համար միջոցների ստացման ժամանակամիջոցին համեմատ:

Կապալային կազմակերպությունների շինարարական մեքենաների, տրանսպորտային միջոցների և մյուս հիմնական ֆոնդերի կապիտալ վերանորոգման համար վարկը տրվում է ամորտիզացիոն հատկացումների առաջիկա մոծումների հաշվին և ներտարեկան է հանդիսանում: Կապիտալ վերանորոգումը, որպես կանոն, պետք է կատարվի տարվա սկզբին, մինչդեռ ամորտիզացիան դուրս է գրվում ու խրացվում տարվա ընթացքում՝ շինմանտաժային աշխատանքների ծրագրի կատարման չափով: Ուստի կապիտալ վերանորոգման ծախսերի ծավալը տարվա որոշ եռամսյակներում սահմանված ամորտիզացիոն գումարներից ավելի է, իսկ մյուս եռամ-

սյակներին՝ պակաս: Վարկերը տրվում են միջոցների պակասի լրացման համար, որ կապված է ռուանձին եռամսյակներում կապիտալ վերանորոգման գումարների գերազանցման հետ, դուրս գրված ամորտիզացիայի համեմատ: Փոխատվութունները տրվում են մինչև վեց ամիս ժամկետով:

Վարկեր կատարված շինարարական-մոնտաժային աշխատանքների հաշիվներով: Պատվիրատուների մոտ ժամանակավոր ֆինանսական դժվարութունների առաջացման դեպքում, կապալային կազմակերպութունների հաշիվները՝ կատարված աշխատանքների համար, մնում են չվճարված: Այդ հաշիվների ժամանակին չվճարելը տնտեսական և ֆինանսական գործունեության մեջ բացի դժվարութուններից առաջ է բերում նաև անարտադրողական ծախսեր՝ տուգանքների, տուլժերի ու տուժանքների ձևով: Այս կապակցությամբ, կապալային կազմակերպութուններին վարկեր են տրվում, պատվիրատուների կողմից ակցեպտված և բանկի կողմից ընդունված՝ կատարված շինարարական-մոնտաժային աշխատանքների հաշիվներով, որոնք չեն վճարված՝ պատվիրատուի հաշիվներում միջոցների ժամանակավոր բացակայության պատճառով: Այսպիսի փոփառվութունների տրամադրումն ուժեղացնում է բանկերի կողմից վերահսկողութունը հաշվարկների նկատմամբ և կանխում է շինարարական կազմակերպութուններում ֆինանսական դժվարութունների առաջացումը, որոնք նրանց գործունեութունից չեն կախված: Վարկերը տրվում են մինչև 45 օր ժամկետով և մարվում են այն գումարների հաշվին, որոնք ստացվում են բանկի կողմից վարկավորվող աշխատանքների համար՝ ըստ հաշիվների:

Վարկեր այն նյութերի հաշվարկների համար, որ ուղարկվում են բանկի երաշխիքով: Տնտեսության որոշ ճյուղերի և ժողտնտիստիկայի շինարարական կազմակերպութուններին կարճատև վարկեր են տրամադրվում ֆոնդերով առանձնացվող շինանյութերի որոշ տեսակների վճարման համար: Այդ նյութերի թվին են պատկանում՝ բոլոր տեսակի և պրոֆիլների պողպատը, պողպատե ու շուգունե խողովակները, ցեմենտը,

գերանը և սղոցած անտառանյութը, տանիքի նյութերը: Թվարկած շինանյութերը մատակարարների կողմից ուղարկվում են կապալային կազմակերպություններին բանկերի երաշխիքով, որոնք գնորդների հաշիվներում միջոցներ՝ չինելու դեպքում վճարում են դրանք վարկ տրամադրելու միջոցով:

Վարկը տրվում է մինչև 20 օր ժամկետով՝ կապալային կազմակերպությունների կողմից սեփական շրջանառու միջոցները պահպանելու և շինարարական-մոնտաժային աշխատանքների պլանը կատարելու պայմանով: Այս պայմանների պահպանումն ապահովում է իրենց արտադրական և ֆինանսական պլանները կատարող կազմակերպություններին անհրաժեշտ ժամանակավոր ֆինանսական օգնություն ցույց տալ և միևնույն ժամանակ բացառում է վատ աշխատող կազմակերպությունների վնասների ծածկումը բանկի վարկերով:

Վարկ նաև պարհին գտնվող հաշվարկային փաստաթղթերով: Այս վարկի անհրաժեշտությունը ծագում է կապալային կազմակերպություններում հաշվարկների ակցեպտային ձևի առանձնահատկությունների կապակցությամբ: Հաշվարկների այս ձևով կապալառուների հաշիվներում այլ քաղաքների պատվիրատուների հետ կնքված պայմանագրերով կատարված աշխատանքների, կամ ուղարկված նյութակուտարժեքների համար միջոցների մուտքը կախված է ակցեպտի վճարման և վճարման փաստաթղթերի փոստային վազքի համար անհրաժեշտ ժամանակից: Շրջանառու միջոցների պլանավորման ժամանակ անհնարին է նախատեսել փաստաթղթերի փոստային վազքի տևողությունն՝ դրանից առաջացած միջոցների մուտքի հապաղումը կապալառուների հաշիվներում: Այդ պատճառով միջոցների պահանջը, որը կապված է հաշվարկների ակցեպտային ձևի հետ կապալառուներին շրջանառու միջոցներ տալիս, հաշվի չի առնվում, այլ ծածկվում է բանկի վարկի հաշվին:

Աշխատավարձի ժամկետանց պարտերի վնասման համար վարկը շինարարական կազմակերպություններին տրվում է բացառություն կարգով, մինչև 30 օր ժամկետով, բան-

վորներին ու ծառայողներին աշխատավարձի փախուքը ծածկելու համար պակասորդ գումարի չափով՝ վերադաս օրգանի երաշխիքի առկայության դեպքում: Այս վարկի նշանակությունը այն է, որ նա մի կարևոր միջոց է, որն ապահովում է բանվորների և ծառայողների հետ աշխատավարձի հաշվարկների ժամանակին կատարումը:

Սահմանափակումների վնասման համար փոխատվությունները տրամադրվում են կառուցվող (գործող) ձեռնարկությունների դիրեկցիաներին՝ սարքավորումների պաշարների գոյացման համար, որ նորմատիվներով չի նախատեսվում: Դրանք տրամադրվում են միայն խոշոր տեխնոլոգիական և էներգետիկ սարքավորման (հաշված նաև կոմպլեկտող սարքավորումը) պաշարների վճարման համար, որ նախատեսված է գալիք տարիների շինարարության օբյեկտների համար: Վարկերը տրվում են մինչև սարքավորման մոնտաժի հանձնելու ժամկետը:

Այս վարկերն ապահովում են մատակարարների հաշիվների ժամանակին վճարումը, կանխում են բյուջետային գումարների երկարատև ներդրումները գալիք տարիների շինարարության սարքավորումների պաշարների համար և միևնույն ժամանակ անհրաժեշտ պայմաններ են ստեղծում սարքավորումը մոնտաժի հանձնելու պլանային ժամկետները պահպանելու նկատմամբ՝ ռուբլով վերահսկողությունն ուժեղացնելու համար:

Բանկերը վարկեր են տալիս նաև արտաքին առևտրական միավորումների հաշիվների վճարման համար ձեռնարկություններին ու կառույցներին ուղարկված ներմուծվող սարքավորումների ու շինանյութերի համար:

Մոնտաժ պահանջող սարքավորման համար վարկերը տրվում են մինչև մոնտաժի պլանով նախատեսված ժամկետները: Մոնտաժ չպահանջող սարքավորման, շինարարական մեքենաների, մեխանիզմների, ինչպես նաև շինանյութերի վճարման համար տրված փոխատվությունները մարվում են 3 օրվա ժամկետում:

Նոր տեխնիկայի արմատավորման ծախսումների համար

վարկերը տրվում են կապալային կազմակերպություններին և տնտեսական եղանակով իրագործվող կառույցներին: Վարկերի օբյեկտներն են հանդիսանում կապիտալ ներդրումների պլանով շնախատեսված և ձեռնարկությունների նոր շինարարության հետ չկապված՝ շինարարության մեջ նոր տեխնիկայի արմատավորման, մեխանիզացիայի և արտադրության տեխնոլոգիայի բալեւավման արտադրական պրոցեսների ռացիոնալացման և ինտենսիֆիկացման ծախսումները: Վարկերը տրվում են մինչև երկու տարի ժամկետով հաշված առաջին փոխատվության միջոցների տրվելու օրվանից՝ ծախսերի լրիվ փոխհատուցման և այդ ժամկետում վարկերի մարման պայմանով, որը կատարվելու է միջոցառումների կիրառման հետևանքով ստացված տնտեսման հաշվին: Այսպիսի կարգը ուժեղացնում է շինարարական կազմակերպությունների և կառույցների պայքարը կուտակումների պլանի և շինարարության ինքնարժեքի իջեցման առաջադրանքների ոչ միայն կատարման, այլև գերակատարման համար:

Փոխատվությունների հիմնական ձևերի բնութագիրը ցույց է տալիս, որ կապալային կազմակերպություններին և կառույցներին (տիտղոսներ ունեցողներին) անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների տրամադրումը բանկային վարկի ձևով ապահովում է նրանց շրջանառու միջոցների պահպանման, նյութական արժեքների ավելի արդյունավետ օգտագործման, հաշվարկների բարելավման և ժամանակին կատարման նկատմամբ վերահսկողությունը: Սա շինարարությունը ֆինանսավորող բանկերի, ինչպես նաև շինարարական կազմակերպությունների վրա լուրջ խնդիր է դնում՝ կարճատև վարկավորման կազմակերպումը կատարելագործելու և վարկերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Վարկավորման դիֆերենցված ռեժիմը: Կապալային կազմակերպությունների ֆինանսական գործունեության ցուցանիշները բարելավելու պայքարում մեծ դեր է պատկանում վարկավորման դիֆերենցված ռեժիմին:

Եթե կապալային կազմակերպությունները գերակատա-

րում են արտադրական ծրագիրը, ապա նրանց համար ավելացվում են շինանյութերի և վառելիքի հայթայթման համար կարճատև վարկավորման լիմիտները: Վարկավորման լիմիտներն ավելացվում են պլանների գերակատարումից բխող փաստացի պահանջներին համապատասխան: Բացի դրանից լավ աշխատող կապալային կազմակերպությունների համար սահմանվում են հետևյալ արտոնութունները. 1) տրամադրվում է ներտարեկան վարկ եռամսյա ժամկետով շրջանառու միջոցների ժամանակավոր լրացման համար՝ աշխատանքների տարեկան ծրագրից դուրս լրացուցիչ առաջադրանքների կատարման դեպքում: 2) վարկի տոկոսային դրույքները պակասեցվում են կիսով չափ. 3) աշխատավարձի վճարման համար փոխատվությունները տրվում են առանց վերադաս օրգանների երաշխավորման:

Կապալային այն կազմակերպությունները, որոնք չեն կատարում շինմոնտաժային աշխատանքների պլանները, շինարարության ինքնարժեքի իջեցման առաջադրանքները, թույլ են տալիս վնասներ և մատակարարներին ու բանկին հիստեմատիկաբար չեն վճարում, անհրաժեշտ դեպքերում կարող են լրիվ կամ մասնակի կերպով փոխադրվել վարկավորման հատուկ ռեժիմի: Վարկավորման հատուկ ռեժիմը բանկի կողմից վատ աշխատող կազմակերպությունների վրա տնտեսական ներգործման միջոց է, և հիմնականում նպատակ ունի դրդել կապալային կազմակերպություններին վրճարական միջոցներ ձեռք առնել գլխավոր որակական ցուցանիշներից մեկի՝ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման և կուտակումների պլանների կատարումը բարելավելու համար:

Վարկավորման հատուկ ռեժիմի փոխադրված շինարարական կազմակերպություններին դադարեցվում է շինանյութերի և վառելիքի հայթայթման վարկավորումը, ինչպես նաև վարկի այլ ձևերը՝ դրանց նկատմամբ ժամկետանց պարտքերի առկայության դեպքում: Մատակարարների հետ կապալային կազմակերպությունների հաշվարկներում ռեժիմ է մտցվում, որի դեպքում մատակարարումները կարող են կա-

տարվել միայն վճարումների անպայման ապահովման դեպքում, որը ձեռք է բերվում հաշվարկների ակրեդիտիվ ձևի կիրառմամբ: Հետագա վարկավորումը կարող է կատարվել միայն կապալային կազմակերպությունների սեփական շրջանառու միջոցների պակասորդի գումարի չափով փոխատվությունները սահմանված ժամկետներում մարելու մասին վերադաս օրգանների երաշխավորական պարտավորությունների ներկայացման պայմանով:

Վերադաս տնտեսական կազմակերպությունների ղեկավարները պարտավոր են անհապաղ միջոցներ ձեռք առնել վարկավորման հատուկ ռեժիմի փոխադրված կապալային կազմակերպություններում աշխատանքը բարելավելու և վնասներ ու չվճարումներ առաջացնող պատճառները վերացնելու ուղղությամբ: Այդ նպատակներով միջոցառումներ են մշակվում ամեն մի կապալային կազմակերպության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, աշխատավարձի ֆոնդերի, նյութերի և այլ ռեսուրսների գերաժախսը վերացնելու, վերադիր ծախսերը կրճատելու ուղղությամբ:

Վերադաս օրգանները պարտավոր են միջոցներ ձեռնարկել շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական մատակարարումը բարելավելու համար, նպատակ ունենալով ապահովել կապալային աշխատանքների ծրագրի կատարումը և նրանց ինքնարժեքի իջեցումը, նյութական արժեքների ավելորդ և ոչ պետքական պաշարների վերացումը: Վարկավորման հատուկ ռեժիմի փոխադրված շինարարական կազմակերպությունների նկատմամբ վերադաս օրգանների կողմից պետք է ապահովվի սիստեմատիկ վերահսկողություն, որ նրանց տնտեսական և ֆինանսական գործունեությունը բարելավելու վերաբերյալ բոլոր միջոցառումները պրակտիկ կերպով իրագործվեն:

Վարկավորման հատուկ ռեժիմը նպաստում է շինարարական կազմակերպությունների վատ աշխատանքի վրա կենտրոնացնել ոչ միայն այդ կազմակերպությունների ղեկավարների, այլ նաև բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների և ծառայողների ամբողջ կոլեկտիվի, պար-

տիական կազմակերպությունների ուշադրությունը:

Վարկավորման հատուկ ռեժիմը աշխատանքը բարելավելու համար նախատեսում է նաև պետության անհրաժեշտ ֆինանսական օգնություն: Եթե տնտեսական ու ֆինանսական գործունեությունը բարելավելու և վնասներ ու չվճարումներ առաջացնող պատճառները վերացնելու միջոցառումները թույլ են տալիս լրացուցիչ խնայողության հաշվին փոխհատուցել գոյացած վնասները, բանկերն իրավունք ունեն փոխատվություններ բաց թողնել առանձին կապալային կազմակերպություններին՝ վերադաս օրգանների երաշխավորությամբ, շինարարական կազմակերպությունների սեփական շրջանառու միջոցները ժամանակավորապես լրացնելու համար: Փոխատվությունները տրվում են կապալառուների հաշիվներում լրացուցիչ խնայողության գումարների մուտքի ժամկետներին համապատասխան:

Վարկավորման և հաշվարկների ընդհանուր ռեժիմը վերականգնվում է, եթե վարկավորման հատուկ ռեժիմի փոխադրված կապալային կազմակերպությունը մեկ-երկու ամսվա ընթացքում կատարում է արտադրանքի ինքնարժեքի իջեցման առաջադրանքները, վնասներ չի թույլ տալիս և բարելավել է վճարումների կարգապահությունը:

5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Պատվիրատուների ֆինանսական պլանները ֆինանսավորման լիմիտներն են: Ինչպես արդեն պարզվեց, այդ պլանների խնդիրն է՝ որոշել շինարարության կապիտալ ներդրումների ֆինանսավորման և շրջանառու միջոցների կազմավորման համար անհրաժեշտ միջոցների գումարը: Կապալային գործունեության ֆինանսական պլանները, ինչպես նըշվեց սկզբում, կազմում են տրեստները և նրանց առանձին հաշվեկշիռ ունեցող ստորաբաժանումները: Ֆինանսական պլանները մշակվում են շինարարության համար հաստատված առաջադրանքների հիման վրա և այդ պատճառով էլ

արտացոլում են շինարարական արտադրության և շինարարական կազմակերպության ֆինանսական տնտեսության զարգացման հեռանկարները, այսինքն՝ պլանավորվող եկամուտների և ծախսերի չափերը, կուտակումների առաջադրանքները, հիմնական ֆոնդերի ընդլայնման ծախսումների ծավալը և այլն: Ֆինանսական պլանի հիմնական բաժիններից մեկը հաշվարկներն են, որոնք կապված են շրջանառու միջոցների նորմատիվի որոշման և շրջանառու միջոցների աճի ծածկման, ինչպես նաև սեփական կապիտալ ներդրումների ու այլ ծախսումների ֆինանսավորմանն ուղղված ներքին ռեսուրսների օգտագործման հետ:

Ֆինանսական պլանները կազմում են եկամուտների և ծախսերի հաշվեկշռի (հավասարության) ձևով:

Եկամուտների և ծախսերի հաշվեկշիռն իրենից ներկայացնում է բոլոր դրամական եկամուտների և ծախսերի ամփոփման պլան: Այն ցույց է տալիս եկամուտների ծավալը և դրանց աղբյուրները, ծախսումների չափը և դրանց ուղղությունը, փոխհարաբերությունները պետական բյուջեի հետ:

Ֆինանսական պլանի բովանդակությունն ու կառուցվածքը կարելի է տեսնել շինարարական տրեստներից մեկի եկամուտների ու ծախսերի հետևյալ հաշվեկշռից (հաղ. ուղղությունով) .

I. Եկամուտներ

Ցարեկան
պլանով

1. Շահույթ շինմոնտաժային աշխատանքների հանձնումից	590.0
2. Շահույթ օժանդակ արտադրությունների արտադրանքի իրացումից	55.0
3. Ամորտիզացիոն հատկացումներ— ընդամենը	248.6

Այդ թվում՝

ա) կապիտալ ներդրումների համար	99.6
բ) կապիտալ վերանորոգման համար	149.0
4. Կայուն պասսիվների փոփոխություն	13.5
5. Շարքից դուրս եկած գույքի իրացումից ստացված մուտք	15.0
6. Կառավարության առանձին որոշումներով սարքավորումների գների իջեցման կապակցությամբ գոյացած խնայողություն	11.0

7. Կապիտալ շինարարության ֆինանսավորման այլ աղբյուրներ	12.0
8. Այլ եկամուտներ	5.9
<hr/>	
Ընդամենը	924.0

II. Ծախսեր

1. Կապիտալ ներդրումներ	620.0
2. Կապիտալ շինարարության արժեքի թանկացում՝ անտառանյութերի գների բարձրացման կապակցությամբ	9.0
3. Շրջանառու միջոցների փոփոխությունն սեփական կապիտալ շինարարության մեջ	43.5
4. Կապիտալ վերանորոգման ծախսումներ	149.0
5. Սեփական շրջանառու միջոցների նորմատիվի փոփոխություն	301.5
6. Բնակարանային-կոմունալ տնտեսության վնաս	14.0
7. Պետի ֆոնդի հատկացումներ	13.0
8. Շրջանառու միջոցների վերաբաշխում	192.0
9. Այլ ծախսեր	2.4
<hr/>	
Ընդամենը	654.4

III. Փոխհարաբերություններ բյուջեի նկատմամբ

1. Մուծումներ բյուջեին՝	
հատկացումներ օգուտներից	326.0
շրջանառու միջոցների ավելցուկների գանձում	100.0
Ընդամենը մուծումներ բյուջեին	426.0
2. Հատկացումներ բյուջեից՝	
կապիտալ ներդրումների համար	156.4
Ընդամենը հատկացումներ բյուջեից	156.4
Բյուջեին մուծումների դիրազանցումը բյուջեի հատկացումներից	269.6

Կապալային կազմակերպության ծախսերը պետք է ամբողջությամբ ծածկվեն նրա եկամուտներով: Որպես կանոն, ֆինանսավորումը պետական բյուջեից կարող է կատարվել միայն շրջանառու միջոցների կազմավորման, կապիտալ ներդրումների և կապալային կազմակերպության եկամուտներով չծածկվող մի շարք այլ կարիքների ֆինանսավորման ծախսերի չափով: Այդպիսի ծախսումներ կարող են առաջադրվել կապալային կազմակերպությունների արտադրական

ծրագրի ավելացման, ինչպես նաև արտադրական կարողությունների և բնակելի տարածությունների աճն ապահովող հիմնական ֆոնդերի ընդլայնման և վերակառուցման վերաբերյալ պետական պլաններում նախատեսված միջոցառումների կապակցությամբ: Այս դեպքում ֆինանսական պլանում պետք է ցույց տրված լինի ծախսերի գերազանցումը եկամուտների նկատմամբ, որ հավասար է պետական բյուջեի հատկացումների գերազանցմանը շինարարական կազմակերպության՝ բյուջեին կատարած մուծումներից:

Բերված օրինակում ծախսերը նախատեսված են 654,4 հազար ուրփու շափով, իսկ եկամուտները՝ 924,0 հազար ուրփու: Այսպիսով, եկամուտների հաշվին ծածկվում են բոլոր ծախսերը և պլանավորվում է եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ 269,6 հազար ուրփու շափով: Շրջանառու միջոցների նորմատիվի կրճատումը կատարվում է նույնպես պլանային տարում աշխատանքների ծրագրի պակասեցման հետևանքով, շինարարության ավարտումը մտենալու կապակցությամբ:

Ինչպես եկամուտներում, նույնպես և ծախսերի մեջ հաշվի են առնվում ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի և պետական միջոցների տնտեսման եղած հնարավորությունները: Դրանց թվին են պատկանում, օրինակ, շրջանառու միջոցների պակասեցումը սեփական կապիտալ շինարարության մեջ, շարքից դուրս եկած գույքի իրացումից ստացված մուտքը, կապիտալ ներդրումների ֆինանսավորման ալլոկացիաները:

Կապալային կազմակերպության պլանում նախատեսված են ծախսումների կապիտալ ներդրումների համար 620 հազար ուրփու շափով, և կապիտալ շինարարության արժեքի թանկացումը ծածկելու լուրջ անտառանյութերի դեղին բարձրացման կապակցությամբ, 9 հազար ուրփու գույքով: Այսպիսով կապիտալ ներդրումների համար առանձնացվող ամբողջ գումարը կազմում է 629 հազար ուրփու: Այդ ծախսումները ծածկվում են ներքին միջոցների մոբիլիզացիայի հաշվին՝ սեփական կապիտալ շինարարության մեջ շրջանառու միջոցների պակասեցման կապակցությամբ (43,5 հազար ուրփու), շարքից դուրս եկած գույքի իրացումից ստացած մուտքից (15 հազար ուրփու), կառավարության առանձին որոշումներով նախատեսված սարքավորումների գների իջեցումից ստացված անտեսու-

մից (11 հազար ռուբլի), կապիտալ ներդրումների ֆինանսավորման այլ աղբյուրներից (12 հազար ռուբլի), ամորտիզացիոն հատկացումներից (99,6 հազար ռուբլի), սեփական շահույթից (291,5 հազար ռուբլի) և բյուջեի հատկացումներից (156,4 հազար ռուբլի):

Պետք է նշել, որ բերված օրինակում կապիտալ ներդրումների մի մասը նախատեսված է ֆինանսավորել բյուջեից, մինչդեռ դրա փաստացի անհրաժեշտությունը չկա. կարելի էր շահույթների հատկացումների մուծումները բյուջեի սակասեցնել և դրանց հաշվին ֆինանսավորել սեփական շինարարությունը:

Բնակարանային-կոմունալ տնտեսության վնասները ծածկվում են կապալային կազմակերպության մեջ գործունեության այլ ձևերից ստացված շահույթների բաշխման միջոցով:

Եկամուտների և ծախսերի հաշվեկշռում պլանային օգուտը բաշխվում է այնպես, որպեսզի ամեն կերպ բարձրացվի կապալային կազմակերպության նյութական շահագրգռվածությունն իր աշխատանքի ֆինանսական արդյունքների բարելավման գործում: Պլանային շահույթի մի մասը (ֆինանսական պլանով սահմանված չափերով) մնում է շինարարական կազմակերպության տրամադրության տակ՝ շրջանառու միջոցների ավելացման, սեփական կապիտալ ներդրումների և այլ նպատակային ծախսումների համար: Պլանային շահույթի մի մասը (2%) հատկացվում է շինմոնտաժային կազմակերպության պետի ֆոնդին (այն պայմանների կատարման դեպքում, որոնք իրավունք են տալիս դրա գոյացմանը): Պլանային շահույթի մնացած մասը գնում է պարգևատրման ֆոնդ, պետական բյուջե (10 տոկոսից ոչ պակաս) և վերադաս տնտեսական օրգանների տրամադրության տակ:

Եկամուտների ու ծախսերի հաշվեկշռում պարզորոշ արտացոլում են գտնում շինարարական կազմակերպության փոխհարաբերությունները պետական բյուջեի հետ: Ամեն մի շինարարական կազմակերպություն պետք է հոգ տանի պետական բյուջեի եկամուտների աճման մասին: Այդ պահանջի իրագործումն ապահովող պայմաններից մեկը պետական

բյուջեի հանդեպ պարտավորութիւնների ժամանակին և անպայման կատարումն է:

Քննարկվող օրինակում պետական բյուջե են գնում օգուտներից հատկացումները և շրջանառու միջոցների ավելցուկները¹: Ինչպես երևում է հաշվեկշռից, շինարարական կազմակերպութիւններից շահույթների մի մասը վերցվում է վերադաս օրգանի կողմից, մյուսը նրա կազմի մեջ մտնող տրեստների պլանային պահանջմունքների բավարարման համար: Այսպիսի դանձում կարող է կատարվել միայն համապատասխան ֆինանսական օրգանի համաձայնութեամբ: Բերված հաշվեկշռում սեփական եկամուտներն ու միջոցների մուտքը գերազանցում են ծախսերից, և դրան համապատասխան շինարարական կազմակերպչյան մուծումները բյուջե՝ այդ նույն գումարով գերազանցում են բյուջեից ստացվող գումարներից:

Ֆինանսական պլանի կազմումը կապալային շինարարական կազմակերպութիւնների պլաններով սահմանված առաջադրանքների ապահովման աշխատանքի միայն սկիզբն է: Պլանի կատարման ընթացքում պետք է գտնվեն կուտակումների լրացուցիչ աղբյուրներ: Ֆինանսական պլանի առաջադրանքների կատարման համար մեծ նշանակութիւն ունի ամեն տեսակի անտնտեսավարութեան դրսևորումների դեմ: Վերադիր ծախսերի կրճատման և արտադրութեան հայտնաբերված ռեզերվների շուտափույթ իրացման համար մղվող պայքարում շինարարների ներգրավումը: Այս բոլորը պահանջում է կապալային կազմակերպչյան կողմից ֆինանսական պլանների կատարման սխտեմատիկ վերլուծութեան անցկացում, որի արդյունքներն օգնում են տնտեսական և պարտիական աշխատողներին ժամանակին գտնել և առավելագույն արդյունավետութեամբ օգտագործել շինարարական արտադրութեան ռեզերվները: Ֆինանսական պլանի հաջող կատարման համար մեծ նշանակութիւն ունի պարտիական և արհմիութենական կազմակերպութիւնների վերահս-

¹ Կանոնադրական կապալային կազմակերպութիւնների հաշվարկները բյուջեի հետ՝ օգուտներից հատկացումների դեմով, կատարվում է ամեն ամիս, ըստ ֆինանսական-տնտեսական գործունեութեան փաստական արդյունքների:

կողմնակիցները կապալային կազմակերպությունների գործունեության նկատմամբ: Այդ վերահսկողության բովանդակությունը պետք է լինի շինարարական կազմակերպության վիճակի և աշխատանքի պայմանների խոր ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Դա հնարավորություն է տալիս կոնկրետ առաջարկություններ մշակել կապիտալ ներդրումների պլանների կատարման, շինարարական գործի հետագա բարելավման և աշխատանքների ինքնարժեքի իջեցման համար:

Պետք է նշել, որ պարտիական կազմակերպությունների համար արտադրական-տնտեսական և ֆինանսական պլանների կատարման գործում նրանց կողմից իրագործվող վերահսկողության համար մեծ նշանակություն կարող են ունենալ ֆինանսավորող բանկերի կողմից կատարվող ստուգումների նյութերը: Բանկերն իրականացնում են կապալային կազմակերպությունների դրամական և հաշվարկային փաստաթղթերի, նախահաշիվների ու միավոր գնահատությունների, հաշվապահական և օպերատիվ-վիճակագրական նյութերի ստուգումը, ինչպես նաև կատարում են նրանց ֆինանսական-տնտեսական գործունեության հետազոտություն: Դա հնարավորություն է տալիս կուտակել և օգտագործել այնպիսի նյութերը, որոնք բնորոշում են կապալային կազմակերպությունների աշխատանքը պլանների կատարման, շինարարության ինքնարժեքի իջեցման, ներտնտեսական ռեզերվների մոբիլիզացիայի, պլանային-ֆինանսական կարգապահության վիճակի և այլ հարցերի վերաբերյալ:

ՇԵՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՆԱՆՅՈՒԹԵՐԸ

Տնտեսական վերլուծությունը, տնտեսական պլանների կատարման հսկողության, շինարարական կազմակերպությունների գործունեության դրական ու բացասական կողմերի բացահայտման կարևոր միջոց է: Վերլուծության հիմնական խնդիրն այն է, որ աշխատանքի արդյունքների ուսումնասիրության և ընդհանրացման հիման վրա հայտարարվի առաջավոր փորձ ու արտադրության ներքին ռեզերվները, և ձեռք առնվեն կոնկրետ միջոցառումներ պետական պլանների կատարումն ու գերակատարումը բոլոր քանակական և որակական ցուցանիշներով ապահովելու, աշխատանքում եղած թերությունները ժամանակին վերացնելու համար:

Տնտեսական գործունեության վերլուծությունը նպաստում է ՍՄԿՊ ծրագրում ձևակերպված տնտեսական շինարարության անխախտելի օրենքի կենսագործմանը՝ հանուն հասարակության շահերի հասնել ամենամեծ արդյունքների ամենափոքր ծախսումներով: «Սոցիալիստական տնտեսավարությունը,— ասում է Ն. Ս. Խրուշչովը XXII համագումարի զեկուցման մեջ,— պահանջում է ձեռնարկությունների, կառույցների, արդյունաբերության ճյուղերի գործունեության

տնտեսական կողմը խոր կերպով, գործիմացութեամբ վերլուծելու հմտութիւն»¹:

Ձեռնարկութիւնների և շինարարական կազմակերպութիւնների գործունեութեան տնտեսական վերլուծութեան ըսկըգրեանյութեր են հանդիսանում, առաջին հերթին հաշվառման և հաշվետվութեան տվյալները:

Տնտեսական գործունեութեան հաշվառումը: Սոցիալիստական հաշվառումը էկոնոմիկայի պլանային ղեկավարման անհրաժեշտ պայմանն է: Այն իրենից ներկայացնում է հասարակական արդշունքի արտադրութեան, բաշխման և օգտագործման հաշվառման ու վերահսկողութեան մի սիստեմ:

Սոցիալիզմի ժամանակ հաշվառման հիմնական խնդիրը սոցիալիստական ընդլայնված վերարտադրութեան պրոցեսների օբյեկտիվ արտացոլումն է, որ էական նշանակութիւն ունի ժողովրդական տնտեսութեան զարգացման, տնտեսական օրինաչափութիւնների ճանաչման և դրանք հասարակութեան շահերին օգտագործելու համար: Հաշվառումը սովետական պետութեան կողմից արդշունակետորեն օգտագործվում է պլանների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողութեան, տնտեսական գործունեութեան արդշունքների ընդհանրացման համար, արտադրութեան զարգացման և հասարակական հարստութեան օգտագործմանը հետեւելու համար: Սոցիալիստական ժողովրդատնտեսական հաշվառման սիստեմն ապահովում է հաշվառման ու հաշվետվութեան ցուցանիշների օրգանական կապը պլանի ցուցանիշների հետ: Ժողովրդական տնտեսութեան բոլոր ճշուղերի համար հաշվառման միասնական սկզբունքները հնարավորութիւն են տալիս միավորել երկրի մարզերի ու շրջանների ձեռնարկութիւնների ու տնտեսութեան ճշուղերի աշխատանքի ցուցանիշները, իրագործել ամբողջ ժողովրդական տնտեսութեան կենտրոնացված պլանային ղեկավարութիւնը: Սակայն հաշվառման միասնական սիստեմը չի բացառում հաշվառքի

¹ ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը, էջ 53:

տարբեր ձևերն ու եղանակները, այն վարելու տեխնիկայի առանձնահատկությունները:

Ժողովրդատնտեսական միասնական հաշվառումը ներառում է երեք ինքնուրույն, բայց իրար հետ սերտորեն կապված հաշվառման ձևեր՝ վիճակագրական, հաշվապահական և օպերատիվ:

Վիճակագրական հաշվառումն արտացոլում և ընդհանրացնում է մասսայական երևույթները, այդ թվում այնպիսի տնտեսական պրոցեսներ, ինչպես հասարակական արդյունքի արտադրությունը, փոխանակումը և բաշխումը: Տնտեսական պրոցեսները նա բնութագրում է դրանց զարգացման ուղղության և տեմպերի տեսակետից, այդ պրոցեսների քանակական կողմը՝ անխզելիորեն կապված դրանց որակական կողմի հետ:

Հաշվապահական հաշվառումը ձևավորությունների և տնտեսական կազմակերպությունների տնտեսական և ֆինանսական գործառնության դիտողության և վերահսկողության մի եղանակ է: Այն արտացոլում է այնպիսի գործառնություններ, երբ տեղի է ունենում նյութական ու դրամական միջոցների շարժում (շրջանառություն), դրանց օգտագործումը արտադրության և շրջանառության պրոցեսում:

Ժողովրդատնտեսական հաշվառման մյուս ձևերից հաշվապահական հաշվառման հիմնական տարբերությունը ձևավորության կամ կազմակերպության կատարած տնտեսական բոլոր գործառնությունների փաստաթղթերով պարտադիր ձևակերպումն է: Այն տնտեսական գործառնությունը, որը չի գրանցված սկզբնական փաստաթղթում, արտացոլում չի գտնի հաշվապահական հաշվառման մեջ: Հաշվապահական հաշվառումը տարվում է առավելապես դրամական ձևով, բայց նրա մեջ օգտագործվում են նաև բնաձևի ցուցանիշներ:

Հաշվապահական հաշվառման մեջ փաստաթղթերի հիման վրա տնտեսական գործառնությունների գրանցումը կատարվում է խիստ որոշակի կարգով և նախապես սահմանված ցուցանիշներով (հաշվապահական հաշվառման հաշիվ-

ներով): Հաշվապահական հաշվառման տվյալներն ընդհանրացվում են հաշվապահական ամփոփ փաստաթղթի՝ հաշվեկշռի մեջ, որը պարբերաբար (ամիսը մեկ անգամ) կազմվում է բոլոր ինքնուրույն ձեռնարկություններում կամ շինարարական կազմակերպություններում:

Հաշվապահական հաշվառումը ապահովում է բոլոր տեսակի գործառնությունների դրամական ձևով արտացոլումը, տնտեսության մեջ միջոցների վիճակն ու օգտագործումը, հայտաբերում է ձեռնարկությունների ու շինարարական կազմակերպությունների աշխատանքի ֆինանսական արդյունքները (օգուտ, վնաս):

Օպերատիվ հաշվառումը անմիջականորեն արտադրության ու շրջանառության պրոցեսի տնտեսական գործունեության առանձին կողմերի հաշվառման և վերահսկողության եղանակ է, որը նպատակ ունի օպերատիվորեն ներգործել այդ պրոցեսի վրա: Այսպես, օպերատիվ հաշվառման միջոցով վերահսկում են շինարարական մեքենաների աշխատանքը, հետևում աշխատանքների կատարման գրաֆիկի, նյութերի առաքման ժամկետների պահպանմանը և այլն:

Օպերատիվ հաշվառման մեջ օգտագործվում են տարբեր տեսակի գրաֆիկներ, հեռախոսով ստացված տվյալներ և այլն: Որպես շափիշներ ավելի հաճախ, քան հաշվառման այլ ձևերի ժամանակ օգտագործվում են բնաձևի ցուցանիշները, որոնք բնութագրում են արտադրական պրոցեսի ընթացքը որոշ մոմենտում:

Շինարարական կազմակերպությունների հաշվետվությունը: Հաշվառման տվյալների հիման վրա կազմվում է վիճակագրական, հաշվապահական և օպերատիվ-տեխնիկական հաշվետվությունը:

Հաշվետվությունը կազմվում է ըստ գործունեության ձևի և ժողովրդական տնտեսության ճյուղերի (արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի և այլն): Արտացոլելով ճյուղային առանձնահատկությունները հաշվետվությունը, բոլոր դեպքերում, պարունակում է ճյուղի, ձեռնարկության, շինարարական կազմակերպության

կողմից պետական, ժողովրդատնտեսական պլանի կատարումը բնութագրող ցուցանիշներ: Հաշվետվությունը, նախած տարածվածությունը, կարևորությունը և դերին, ստորաբաժանվում է համապետականի (բոլոր գերատեսչությունների ու ճյուղերի համար), ներգերատեսչականի (տվյալ ժողտնտխորհի կամ մինիստրության համար) և միջգերատեսչականի (տնտեսապես իրար հետ կապված ժողտնտխորհների, մինիստրությունների և տնտեսության ճյուղերի համար): Ըստ ներկայացման ժամկետների հաշվետվությունը ստորաբաժանվում է պարբերականի (ամենօրյա, հնգօրյա, տասնօրյա, ամսական, եռամսյակային, կիսամյա) և տարեկանի:

Կառույցների ու շինարարական կազմակերպությունների վիճակագրական հաշվետվության կազմում առավել կարևոր հաշվետու փաստաթղթերն են հանդիսանում օբյեկտների և արտադրական կարողությունների շահագործման հանձնման պլանի և կապիտալ ներդրումների պլանի կատարման հաշվետվությունը, կապալային աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը շինարարության մեջ. աշխատանքի պլանի կատարման հաշվետվությունը, շինարարական և մոնտաժային աշխատանքների ինքնարժեքի վերաբերյալ հաշվետվությունը, շինարարության մեքենայացման և շինարարական մեքենաների օգտագործման մասին հաշվետվությունը:

Շինարարական կազմակերպությունների հաշվետվությունները հանձնրվում են մարզի, երկրամասի, ռեսպուբլիկայի համապատասխան վիճակագրական վարչություններին¹, որոնք կազմում են ամփոփման հաշվետվություններ և ներկայացնում ժողտնտխորհներին, տեղական ղեկավար և պլանային օրգաններին, ինչպես նաև միութենական ռեսպուբլիկաների վիճակագրական վարչություններին:

Միութենական ռեսպուբլիկաների վիճակագրական վարչություններն անհրաժեշտ ամփոփման հաշվետու տվյալներ են ներկայացնում ռեսպուբլիկական ղեկավար և պլանային օրգաններին, ժողտնտխորհներին և շինարարական մինիստրություններին: Համապատասխան հաշվետու տեղեկություններ են ուղարկվում ՍՍՌՄ վիճակագրական կենտրոնական վարչություն, հետագայում ՍՍՌՄ կառավարությանը, ինչպես նաև ՍՍՌՄ Պետպլանի և մյուս կենտրոնական օրգաններին ներկայացնելու համար:

Շինարարական կազմակերպությունները, վիճակագրական վարչու-

¹ Բացի շինարարական-մոնտաժային աշխատանքների ինքնարժեքի հաշվետվությունից, որը ներկայացվում է հաշվառահսկական հաշվետվության համար սահմանված կարգով:

թյանը հաշվետվութիւն ներկայացնելու հետ միաժամանակ հաշվետվութիւնների պատճեններն ուղարկում են իրենց վերադաս օրգաններին:

Հաշվապահական հաշվետվութիւնը, ինչպես պարբերականը, այնպես տարեկանը, բոլոր շինարարական կազմակերպութիւնները ներկայացնում են իրենց վերադաս օրգաններին: Այն կազմված է հաշվեկշռից և դրա մի շարք հավելվածներից, որոնց մեջ արտացոլվում են շինարարական կազմակերպութիւնի ֆինանսական-տնտեսական գործունեութիւնի արդյունքներն ֆինանսական վիճակը:

Շինարարական կազմակերպութիւնների տարեկան հաշվետվութիւնը որպես կանոն, միավորում է վիճակագրական և հաշվապահական ձևերը: Տարեկան հաշվետվութիւններին կցվում են համառոտ բացատրագրեր, որոնց մեջ բացահայտում են հաշվետու տարրում տնտեսական ու ֆինանսական արդյունքների վրա ազդող հիմնական գործոնները:

Հաշվետվութիւնը կարգալու, չոր թվերի հետևում կենդանի կյանքը, արտագրութիւնի ռեզերվները տեսնելու ունակութիւնը տնտեսավարի անհրաժեշտ հատկութիւնն է: Վ. Ի. Լենինը, ուշադրութիւն դարձնելով հաշվետվութիւնի ուսումնասիրման կարևորութիւն վրա, գրել է, որ անհրաժեշտ է չլոր, մեռած, բյուրոկրատական՝ ինչպես վանող, այնպես էլ գրավող հաշվետվութիւնները դարձնել կենդանի օրինակներ»¹:

Հաշվառման ու հաշվետվութիւնի տվյալներից բացի, վերլուծութիւնի ժամանակ օգտագործվում են կառույցների ու շինարարական կազմակերպութիւնների հետազոտումների և փաստաթղթային ստուգումների նյութերը, որոնք սխտեմատիկաբար անց են կացվում տրեստների, ժողտնտիսորհների, շինարարական միջնորդութիւնների և մյուս տնտեսական կազմակերպութիւնների կողմից:

Տնտեսական գործունեութիւնի վերլուծութիւնի համար մեծ նշանակութիւն ունի նախագծային-նախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրութիւնը, այդ թվում տեխնիկա-տրեստական ցուցանիշների, նախահաշվային-ֆինանսական հաշվումների, նախագծային առաջադրանքների բացատրագրերի առանձին օբյեկտների նախահաշիվների, միավոր

1 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 27, էջ 311:

զնահատումների, նյութերի արժեքի կալկուլացիաների ուսումնասիրությունը:

Վերլուծության համար օգտագործվում են ընդհանուր և տարեկան կապալալին պայմանագրերն ու նրանց հավելվածները, այդ թվում շինարարության օբյեկտների ցուցակները՝ ամեն մի օբյեկտի աշխատանքներն սկսելու և ավարտելու ժամկետներով, աշխատանքների կատարման օրացուցային պլանները:

Վերլուծության նյութ են հանդիսանում նաև կառույցների ու շինարարական կազմակերպությունների ստորին պլանավորման և հաշվառման տվյալները, այդ թվում կատարված աշխատանքների մատյանները, որոնք տարվում են շինարարության ամեն մի օբյեկտի համար, ցույց տալով կատարված աշխատանքների ծավալը ըստ ամեն մի կոնստրուկտիվ տարրի կամ աշխատանքի տեսակի, ամեն ամսվա աշխատանքի միավորի գինը և ընդհանուր արժեքը, ինչպես նաև հետազոտումների ու ստուգումների նյութերը, որ կատարված են ինչպես առաջներում, այնպես և վերլուծության ընթացքում:

Զգալի հետաքրքրություն են ներկայացնում ֆինանսավորող բանկերի տվյալները: Այսպես, ՍՍՌՄ շինբանկի հիմնարկներն իրենց տրամադրության տակ ունեն նյութեր, որոնք բնորոշում են կառույցների ու շինարարական կազմակերպությունների տնտեսական ու ֆինանսական գործունեության առանձին կողմերը՝ ֆինանսական պլանի առաջադրանքների կատարումը, պետական բյուջեի, մատակարարների, կապալառու կազմակերպությունների ու բանկերի հետ հաշվարկների դրությունը, շինարարության ապահովվածությունը նախագծերով, նախահաշիվներով և միավոր գնահատումներով, պայմանագրերով նախատեսված պայմանների պահպանումը պատվիրատուների ու կապալառուների կողմից, կարճատև վարկերի օգտագործումը և այլն:

Շինարարական կազմակերպությունների արտադրական տնտեսական գործունեության առանձին կողմերի մանրակրկիտ ուսումնասիրությունը նպատակահարմար է անցկացնել

անմիջականորեն կառույցներում: Այդ դեպքերում հաշվառման և հաշվետվութայան տվյալները, հետազոտումների ու ստուգումների նյութերը կթելադրեն այն հիմնական հարցերը, որոնցով պետք է զբաղվել և այն ուղղությունները, դեպի ուր պետք է ուղղել աշխատանքը արտադրության ներքին ռեսուրսների հայտաբերման, առաջավոր փորձի տարածման համար:

2. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՄԵԹՐԻՆՆԵՐԸ

Վերլուծության բովանդակությունն ու մեթոդները: Շինարարական կազմակերպության գործունեությունը բնորոշվում է մի շարք ցուցանիշներով, որոնց ուսումնասիրությունն էլ կազմում է նրա տնտեսական գործունեության վերլուծության բովանդակությունը: Վերլուծության մեթոդի տակ հասկացվում է այն ձևերի ամբողջությունը, որոնց միջոցով հետազոտվում է շինարարական կազմակերպության աշխատանքը:

Շինարարական կազմակերպությունների գործունեության տնտեսական վերլուծության հիմնական մեթոդը ձեռք բերված արդյունքների համեմատումն է պլանի և նորմատիվների հետ, անցած ժամանակաշրջանի մակարդակի և այլ կազմակերպությունների ցուցանիշների հետ: Դա հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն ղնահատել արտադրական-տնտեսական գործունեության ընթացքն ու արդյունքները:

Շինարարական կազմակերպությունների ու նրանց առանձին օղակների աշխատանքի արդյունքները համեմատելով պլանի և նորմատիվների հետ որոշում են առաջադրանքների կատարման աստիճանը և հայտնաբերում են արտադրության ռեզերվները: Ձեռք բերված արդյունքների համեմատումը աշխատանքների ապագա ծրագրի հետ, հնարավորություն է տալիս ուղղումներ մտցնել երկարատև ժամանակաշրջանի համար մշակված հեռանկարային պլանների մեջ և ավելի լրիվ հայտաբերել ներարտադրական ռեզերվ-

ները. անցած ժամանակաշրջանների աշխատանքի մակարդակի հետ համեմատությունը պատկերացում է տալիս արտադրական-տնտեսական գործունեության փոփոխությունների մասին շարժման մեջ: Մի շարք նույնանման շինարարական կազմակերպությունների ցուցանիշների համեմատությունը հնարավորություն է տալիս հայտաբերել աշխատանքի լավագույն օրինակները՝ առաջավոր փորձի տարածման նպատակով:

Հետաքրքրություն է ներկայացնում շինարարության որոշ տեխնիկա-տնտեսական ցուցանիշների համեմատությունը ոչ միայն հայրենական, այլև արտասահմանյան երկրների կազմակերպությունների, հատկապես սոցիալիստական լագերի երկրների ցուցանիշների հետ: Առաջավոր փորձի փոխադարձ օգտագործումը նպաստում է տնտեսության խնայողաբար վարմանը, սոցիալիստական տնտեսության զարգացման արագացմանը:

Շինարարական կազմակերպության գործունեության արդյունքների համեմատումը պլանի հետ, անցած ժամանակների ցուցանիշների հետ, ուրիշ կազմակերպությունների աշխատանքի արդյունքների հետ՝ նպաստում է հետագա աճի ռեզերվների համակողմանի հայտաբերմանը և շինարարական արտադրության կատարելագործմանն ու նրա աշխատանքի որակական ցուցանիշների բարելավմանը:

Վերլուծական աշխատանքի կազմակերպումը: Բազմակողմանի տնտեսական վերլուծությունը ամեն մի տնտեսական կազմակերպության ճիշտ ղեկավարման անհրաժեշտ պայմանն է: Ուստի շինարարական կազմակերպությունների գործունեության վերլուծության հարցերով պետք է զբաղվեն ամենից առաջ իրենք՝ տնտեսական ղեկավարները: Տնտեսական վերլուծությունը բարելավելու գործում լուրջ խնդիրներ են կանգնած շինարարական կազմակերպությունների պլանավիկների, տնտեսագետների ու հաշվապահների առջև: Ներանց որակավորումից, առանձին թվերի հետևում հնարավոր ռեզերվների և նրանց օգտագործման ուղիները տեսնելու

համտությունից մեծ շահով կախված են այդ կազմակերպությունների գործունեության տնտեսական ցուցանիշները:

Տնտեսական գործունեության սիստեմատիկ և գործուն վերահսկողություն ապահովելու գործում բացառիկ մեծ է հասարակական կազմակերպությունների դերը: Շինարարական կազմակերպությունների պարտիական և արհմիութենական ակտիվը, մշտական գործող արտադրական խորհրդակցությունների ու ադմինիստրացիայի գործունեության նկատմամբ պարտիական վերահսկողության հանձնաժողովների անդամներն իրենց պրակտիկ աշխատանքում լայնորեն օգտագործում են տնտեսական վերլուծությունը՝ պետական պլանային առաջադրանքների կատարման ու գերակատարման ռեզերվների հայտաբերման համար:

Վերջին ժամանակներս շատ ձեռնարկություններում ու կառույցներում ստեղծվել են վերլուծության հասարակական խորհուրդներ (բյուրոններ, խմբեր): Դրանց հետագա զարգացումը պետք է դառնա կարևոր միջոց՝ հասարակությանը արտադրության կառավարման մեջ ակտիվ մասնակցություն ունենալու գործում:

Տնտեսական վերլուծության հասարակական խորհուրդները (բյուրոնները, խմբերը) լուծում են հիմնական խնդիրը— տնտեսական և ֆինանսական գործունեության տարբեր կողմերի վերլուծության միջոցով հայտաբերել ներքին ռեզերվներն ու մշակել անհրաժեշտ միջոցառումներ դրանց օգտագործման համար:

Վերլուծությունից հետևող առաջարկությունները քննարկվում են մշտական գործող արտադրական խորհրդակցություններում, և անհրաժեշտության դեպքում, ադմինիստրացիայի գործունեության նկատմամբ պարտիական վերահսկողության հանձնաժողովներում: Ադմինիստրացիան, օգտագործելով վերլուծության արդյունքները, սովորաբար կարգադրություն է անում կոնկրետ առաջարկությունների ցանկով և դրանց իրացման ժամկետներով:

Ընթացիկ աշխատանքի պրոցեսում շինարարական վարչություններում ու տրեստներում, ժողտնտխորհներում, մի-

նիստրուկցիոններում ու շինարարութեան կառավարման այլ օրգաններում բազմաթիւ նյութեր են կենտրոնանում, որոնք բազմակողմանիորեն բնութագրում են շինարարական կազմակերպութիւնների արտադրական-տնտեսական ձործունենութիւնը: Այդ նյութերի վերլուծութեան և ընդհանրացման ժամանակ շատ կարևոր է հայտաբերել բոլոր նորն ու առաջադիմականը, որ արժանի է ամեն կերպ խրախուսման ու տարածման:

Վերլուծութեան տվյալների ընդհանրացման ժամանակ կարևոր է նաև բացահայտել եղած թերութիւնները: Եթե դրանք ժամանակին չնկատվեն ու վերացվեն, ապա կարող են սոցիալիստական տնտեսութեանը լուրջ վնաս հասցնել: Վերլուծութեան արդյունքների ընդհանրացման խնդիրներից մեկն այն է, որպեսզի բացահայտված առանձին բացասական փաստերի հետևում տեսնել տիպական երևույթները և համապատասխան միջոցների մշակմամբ կանխել հնարավոր կորուստները:

Վերլուծական աշխատանքում լուրջ նշանակութիւն ունի վերլուծութեան հաջորդականութիւնը: Վերլուծութեան սկզբում որոշվում է, օրինակ, կարողութիւնների գործարկման պլանի և կապալային աշխատանքների ծրագրի կատարումը, հետո երևան են բերվում այն գործոնները, որոնք ազդել են այդ ցուցանիշների վրա, ինչպես նաև շօգտագործված ռեզերվները:

Տնտեսական գործունենութեան ցուցանիշների կազմավորման վրա ազդեցութիւն են ունենում շատ փոխադարձաբար կապված գործոններ, որ պայմանավորում է դրանց կոմպլեքսային վերլուծութեան անհրաժեշտութիւնը: Այս կամ այն գործոնի կարևորութեան մասին ընդհանուր դատողութիւնները, առանց դրանց նշանակութեան կոնկրետ ցուցադրման, թուլացնում են տնտեսական վերլուծութեան գործունենութեանը, չեն թույլ տալիս պրակտիկ հզրակացութիւններ անել:

Վ. Ի. Լենինը նշում էր. «Գործունեյա տնտեսագետը, դատարկ թեզիսների փոխարեն, կնստի ռասումնասիրելու փաստերը, թվերը, տվյալները, կվերլուծի ձեռ սեփական պրակ-

տիկ փորձը և կասի սխալը այսինչ տեղն է,- այն պետք է ուղղել այսինչ կերպ¹։

Հետևաբար, վերլուծության գործունեության գլխավոր պայմանը եզրակացությունների կոնկրետությունն է ամրապլնդված փաստերով, թվական մեծություններով, հիմնավորված հաշիվներով։ Վերլուծության ավարտական փուլը առաջարկությունների մշակումն է, որոնց նպատակն է վերացնել բացերն ու կորուստները, առաջավոր փորձը ավելի լավ օգտագործել և թաքնված ռեզերվները դնել արտադրության մեջ։

3. ՕՔՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալ շինարարության գծով ժողովրդա-տնտեսական պլանի կատարման կարևորագույն ցուցանիշներն են արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի գործարկման առաջադրանքների կատարումը, ինչպես նաև կապիտալ ներդրումների պլանի կատարումը։ Շինարարական ծրագրի կատարման զնահատման այս սխտեմը ընդունվել է 1961 թվականին ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի կապիտալ ներդրումների ավելի արդյունավետ օգտագործման միջոցառումների մասին որոշման մեջ։

Նախկին գործող կարգը պլանի կատարման հաշվառման և զնահատման հիմնական ցուցանիշն էր համարում կապիտալ ներդրումների ընդհանուր (համախառն) ծավալի ցուցանիշը։ Դրա հետևանքով կարողությունների և հիմնական ֆոնդերի գործարկման առաջադրանքները չկատարած ձեռնարկություններն ու կազմակերպությունները պլանով նախատեսված կապիտալ ներդրումները հաջող իրացնելու դեպքում դասվում էին ծրագիրը կատարողների թվում։ Այդպիսի սխտեմը հանգեցնում էր միջոցները գործարկվելիք օբ-

1 Վ.Ի. Լենին, *Երկեր հտտ.* 32, էջ 166։

յեկտների վրա կենտրոնացնելու և դրանք շահագործման հանձնելու գործում ուշադրության թուլացմանը:

Մեծ քանակությամբ օբյեկտների վրա միջոցների փոշիացում թույլ տվող ձեռնարկություններն ու տնտեսական կազմակերպությունները հաճախ ավելի լավ դրույթյան մեջ էին գտնվում, քան նրանք, որ պայքարում էին նոր կարողությունների գործարկման համար: Պլանի կատարման գնահատումը ըստ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի հանգեցնում էր նաև նրան, որ շինարարական կազմակերպություններն աշխատանքներն սկսում էին ոչ թե այնտեղ, որտեղ կարևոր էր, այլ այնտեղ, որտեղ ավելի ձեռնտու էր:

Օբյեկտների գործարկման պլանի կատարման վերլուծությունը: Վերլուծության ընթացքում երևան է բերվում գործարկման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումների լրիվ և ժամանակին իրագործումը, ինչպես ըստ կարողությունների (բնաձևի ցուցանիշներով), նույնպես և ըստ ծավալի (հիմնական ֆոնդերի արժեքով): Վերլուծության ժամանակ ստուգվում է գործարկման պլանի կատարումը շինարարության համար ամբողջությամբ, ըստ նշանակության և ըստ յուրաքանչյուր օբյեկտի:

Քննարկենք շինարարական կազմակերպություններից մեկի տվյալները, կառուցվող և վերակառուցվող օբյեկտների շահագործման հանձնելու պետական առաջադրանքների կատարման վերաբերյալ:

	Չափման միավորը	Շահագործման հանձնումը	
		ըստ պլանի	փաստացի
1	2	3	4
Արտադրական կարողություններ			
Մեխանիկական հավաքման ցեխ	Հաստոցների թողարկում (հատերով)	650	240
Չուլման ցեխ	Չուլվածքի թողարկում (տ)	1200	1200

1	2	3	4
Բնակարանային շինարարություն <i>Բնակելի տներ</i>	<i>Մակերեսը (քառ. մ.)</i>	2094	2094
Կուլտուր-կենցաղային շինարարություն <i>Մանկապարտեզ</i>	<i>Տեղերի թիվը</i>	120	—
<i>Պոլիկլինիկա</i>	<i>Մահճակալ- ների թիվը</i>	100	100

Ինչպես երևում է աղյուսակից, մեխանիկական հավաքման ցեխի կարողությունների գործարկումը կազմում է առաջադրանքի ընդամենը 37 տոկոսը: Զի կատարվել նաև մանկապարտեզի շահագործման հանձնման պլանը՝ 120 տեղով:

Հետագա վերլուծությունը ցույց է տալիս, որ շինարարական կազմակերպությունը չի կատարել հիմնական ֆունդերի գործարկման առաջադրանքը: Դա երևում է հաշվետու տվյալների հիման վրա կազմված հետվյալ աղյուսակից.

Հիմնական ֆունդերի գործարկումը

(հազ. ուրվիներով)

Շինարարության տեսակները	Ըստ տարեկան պլանի	Փաստացի հաշվետու տարում	Տոկոսներով պլանի նկատմ.
<i>Արդյունաբերական</i>	6350	5975	94
<i>Բնակարանային</i>	310	310	100
<i>Կուլտուր-կենցաղային նը- շանակության օբյեկտներ</i>	225	108	48
<i>Ընդամենը</i>	6885	6393	93

Հետազոտումների ու ստուգումների նյութերի օգտագործման միջոցով վերլուծության ժամանակ պարզվել է, որ պլանային օբյեկտների հետ միասին աշխատանքներ են կատարվել նաև առաջադրանքում չնախատեսված օբյեկտների վրա: Դրանով է բացատրվում այն փաստը, որ մեխանիկական հավաքման ցեխում հաստոցների արտադրության գծով կարողու-

թյունների գործարկման պլանի զգալի թերակատարումով հանդերձ հիմնական արտադրական ֆոնդերի գործարկման պլանը դրամական արտահայտությամբ կատարվել է 94 տոկոսով:

Օբյեկտների գործարկման պլանի կատարման վերլուծության ընթացքում պարզվում է, թե ինչպես են պահպանվել ամեն մի օբյեկտի շինարարության ժամկետները: Արտադրական օբյեկտների գործարկման ժամկետների խախտման դեպքում կարևոր է պարզել, թե դա ինչպես է ազդել կարողությունների աճի վրա և դրա հետևանքով ինչքան արտադրանք չի տված:

Օրինակ, պլանով նախատեսված էր որոշակի ժամկետում շահագործման հանձնել ձուլման ցեխը ամսում 100 տ ձուլվածքի կարողությամբ Շինարարության և սարքավորման մոնտաժի ձգձգման կապակցությամբ ցեխը գործարկվել է պլանով սահմանված ժամկետից 2 ամիս ուշ: Դրա հետևանքով ձուլվածքի տարեկան թողարկումը պլանով սահմանվածից 200 տ պակաս դուրս եկավ:

Կապիտալ ներդրումների պլանի կատարման վերլուծությունը:
Այս վերլուծությունը կատարվում է պատվիրատուի կազմած հաշվետվության տվյալներով:

Կարողությունների ու հիմնական ֆոնդերի գործարկման ցուցանիշների հետ միասին պլանում նախատեսվում են առաջադրանքներ կապիտալ ներդրումների ծավալի գծով: Այդ առաջադրանքի կատարումը շինարարական բոլոր օբյեկտներում կարևոր պայման է օբյեկտները ժամանակին գործարկելու գործում:

Ինչպես երևում է հաջորդ էջի աղյուսակից կապիտալ ներդրումների պլանի գերակատարումը 2 տոկոսով ձեռք է բերված արդյունաբերական շինարարության հաշվին, որի պլանը կատարվել է 103 տոկոսով: Միևնույն ժամանակ բնակարանային շինարարության պլանային առաջադրանքը չի կատարված: Բնակարանային շինարարության փաստացի ծավալը դուրս եկավ պլանայինից ցածր 35 հազար ուրբով. կամ 9 տոկոսով: Հետագա վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտելու բնակարանային շինարարության պլանների թերակատարման պատճառները:

Բերենք տվյալներ պատվիրատուի կապիտալ ներդրումների հաշվետրվութունից (հազ. ռուբլիներով).

	Տարեկան պլանով	Փաստացի հաշվետու տարում	Տոկոսներով պլանի նկատմամբ
Ընդամենը կապիտալ ներդրումներ այդ թվում՝	7100	7242	102
Արդյունաբերական շինարարություն	6435	6610	103
բնակարանային շինարարություն	405	370	91
կուլտուր-կենցաղային նշանակութայան օբյեկտներ	260	262	100

1962 թվականից սկսած հաշվետվության մեջ բոլոր կապիտալ ներդրումները բաժանվում են՝ փոխանցիկ և նոր շինարարության օբյեկտների կապիտալ ներդրումների: Առանձին են ցույց տրվում նաև գործարկվող օբյեկտների կապիտալ ներդրումները:

Մեր օրինակում հաշվետվության մեջ հետևյալ տվյալներն են ցույց տրված.

(հազար ռուբլիներով)

	Տարեկան պլանով	Փաստացի հաշվետու տարում	Տոկոսներով
Ընդամենը կապիտալ ներդրումներ այդ թվում՝	7100	7242	102
նոր սկսվող օբյեկտների գծով	300	580	193
փոխանցիկ օբյեկտների գծով	6800	6662	98
գործարկվող օբյեկտների գծով	4800	4150	86

Ամբողջ կառույցի կապիտալ ներդրումների պլանի 102 տոկոսով կատարման պայմաններում գործարկվող օբյեկտների կապիտալ ներդրումների պլանը կատարվել է միայն 86 տոկոսով: Դրա հետևանքով մի շարք գործարկվող օբյեկտների շինարարությունը չի ավարտվել:

Բոլորովին աննորմալ է, որ փոխանցիկ օբյեկտների գծով կապիտալ ներդրումների պլանը թերակատարվել է 2 տոկոսով, իսկ նոր սկսված օբյեկտների գծով շեշտակիորեն գերակատարվել է (պլանի հանդեպ 193 տոկոսով):

Գործարկվող օբյեկտների կապիտալ ներդրումների պլանի թերակատարումը, միջոցների տեղափոխումը ներկա տարում սկսված օբյեկտների շինարարության վրա ասում են կապիտալ ներդրումների տնտեսապես ոչ ճիշտ ուղղման և միջոցների փոշիացման մասին:

Ավարտված շինարարական օբյեկտների պլանով սահմանված ժամկետներին գործարկելու պլանի կատարումը և անհրաժեշտ կուտակվածքի ստեղծելն ապահովող միջոցառումների իրագործման վերահսկողության ձևերից մեկը կապիտալ ներդրումների վերլուծությունն է ըստ նրանց կառուցվածքի:

Մեր օրինակում կապիտալ ներդրումները 7,2 մլն. ռուբլի ընդհանուր ծավալից կատարվել է շինարարական-մոնտաժային աշխատանքներ 5,6 մլն. ռուբլու 5,7 մլն. ռուբլի պլանի դիմաց, իսկ սարքավորման ծախսումները կազմել են 1,6 մլն. ռուբլի 1,4 մլն. ռուբլի պլանի դիմաց: Հետևաբար կապիտալ ներդրումների պլանի գերակատարումը թահանշլածից 200 հազար ռուբլով ավելի սարքավորումնեյու կառույց բերելու արդյունք է, այն ժամանակ երբ շինարարական-մոնտաժային աշխատանքների առաջադրանքը թերակատարված է:

Վերլուծության ընթացքում րենարկվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների պլանի կատարումն ըստ նրանց կատարման եղանակի: Տվյալ դեպքում կապալային կազմակերպությունները պլանը կատարել են 101 տոկոսով, այն ժամանակ երբ տնտեսական եղանակով պլանը կատարված է միայն 78 տոկոսով: Այսպիսով, ամբողջ կառույցի շինմոնտաժային աշխատանքների ծրագրերը շին կատարված պատվիրատուի մեղքով: Վերլուծությունը պետք է հայտաբերի պատվիրատուի կողմից պլանը չկատարելու պատճառները, այն հաշվով, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ միջոցառումներ մշակել:

Կապիտալ ներդրումների պլանի կատարման ստուգման ժամանակ ուսումնասիրվում է անավարտ շինարարության ընթացքն ու կազմը: Անավարտ շինարարության ծավալը համապատասխան ժամկետում համեմատվում է նրա պլանային ծավալի հետ, որը պետք է ապահովի հետագա տարիների

հիմնական ֆոնդերի գործարկման պլանի կատարման համար անհրաժեշտ կուտակվածքը: Անավարտ շինարարության պլանային ծավալը որոշելու համար պետք է տարվա սկզբին նրա ծավալին ավելացնել ընթացիկ ժամանակաշրջանի համար սահմանված կապիտալ ներդրումների պլանը և հանել այդ նույն ժամանակամիջոցի համար սահմանված հիմնական ֆոնդերի գործարկման պլանը: Ընդ որում, կառույցի կապիտալ ներդրումների պլանը պետք է պակասեցվի հիմնական ֆոնդերի արժեքը չավելացնող ծախսումների գումարով (շինարարության նախահաշիվներում նախատեսված շահագործման հաղորերի պատրաստման ծախսերը, որոշակի օբյեկտների շինարարության հետ չկապված երկրաբանական-հետախուզական և այլ աշխատանքների ծախսումները):

Օրինակ, տարվա սկզբին անավարտ շինարարության ծավալը կազմում է 2563,5 հազ. ռուբլի, կապիտալ ներդրումների պլանը առաջին կիսամյակում սահմանված է 1825 հազ. ռուբլու չափով և հիմնական ֆոնդերի գործարկման պլանը՝ 1425 հազ. ռուբլի: Հիմնական ֆոնդերի արժեքը չավելացնող ծախսերը՝ 37,5 հազ. ռուբլի: Այս տվյալներից ելնելով հաշվետու ժամանակաշրջանի վերջում անավարտ շինարարության պլանային ծավալը կկազմի $2926 [2563,5 + (1825 - 37,5) - 1425]$: Անավարտ շինարարության փաստացի ծավալը հավասար է 2977 հազ. ռուբլու: Այսպիսով, անավարտ շինարարության փաստացի ծավալը գերազանցում է պլանայինից 51 հազ. ռուբլով (2977 - 2926):

Անավարտ շինարարության կազմի վերլուծությունը թույլ է տալիս որոշել նրա փաստացի ծավալի պլանայինի հետ անհամապատասխանության պատճառները և հայտաբերել անավարտ շինարարության ծավալների պակասեցման հնարավորությունները, հիմնական ֆոնդերի գործարկման պլանի ավելացման, ինչպես նաև անհրաժեշտ կուտակվածքի ստեղծման հաշվին:

Այդ նպատակով անավարտ շինարարության կազմում որոշվում են անցած տարիներում սկսված և տեխնիկական պատրաստվածության բարձր աստիճան ունեցող, բայց ընթացիկ տարվա տիտղոսային ցուցակի մեջ չմտցրած օբյեկտները, կոնսերվացված և շինարարությամբ դադարեցված օբ-

յեկտները, ինչպես նաև փաստորեն շահագործվող, բայց գործարկման հանձնելու ակտով չձևակերպված օբյեկտները:

Անավարտ շինարարութայան կազմի մեջ կոնսերվացված և շինարարութայամբ դադարեցված օբյեկտների առկայության դեպքում ստուգվում է, թե ինչ միջոցներ են ձեռք առնվել դրանց օգտագործման համար:

Այնուհետև ստուգվում է ընթացիկ տարվա տիտղոսային ցուցակի մեջ մտցրած օբյեկտների անավարտ շինարարութայան ծավալը, և եթե այն աճում է՝ որոշվում են դրա պատճառները (կապիտալ ներդրումների փոշիացումը բազմաթիվ օբյեկտների վրա, գործարկվող օբյեկտների պլանի թերակատարումը մյուս օբյեկտների գծով գերակատարման դեպքում):

Վերլուծության ժամանակ կարևոր նշանակություն ունի շինարարության տևողության նորմաների պահպանման ստուգումը: Նորմաները չպահպանելու դեպքում, պետք է անպայման պարզել, թե նրանք ինչու են խախտվում: Նորմաները չկատարելու պատճառների թվին են պատկանում այնպիսիները, ինչպես կապիտալ ներդրումների ծավալի պլանսովորումը առանց հաշվի առնելու նորմաներում բերված նրանց օրինակելի բաժանումը ըստ շինարարութայան տարիների և հաստատված պլանների կատարման վիժեցումը: Որպեսզի պարզել, թե այդ պատճառներից ամեն մեկը ինչ չափով է ձգձգել շինարարությունը նորմաների համեմատությամբ, որոշվում է պլաններով նախատեսված կապիտալ ներդրումների ծավալը շինարարութայան սկզբից բոլոր տարիների համար և համեմատվում է կապիտալ ներդրումների այն ծավալի հետ, որ պետք է հատկացվեր ըստ նորմաների. համեմատվում է շինարարութայան սկզբից կատարված կապիտալ ներդրումների ծավալը, պլաններով նախատեսված կապիտալ ներդրումների ծավալի հետ:

Այդ ցույց տանք հետևյալ օրինակում: Նորմաներով հատկացվելիք, պլանով նախատեսված և փաստորեն կատարված կապիտալ ներդրումների ծավալները բնորոշվում են հետևյալ տվյալներով (մլն. ռուբլիներով).

	Լրիվ նախահաշիվային արժեքը	Կապիտալ ներդրումների ծավալը տարվա սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանը ներառյալ			
		պետք է հատկացվեն մանրի պատասխան	հատկացված է գումար	մզանիտում	է գումարտեղ գնված
Մեխանիկական հավաքման ցեխ	2,3	2,3	1,8	1,8	
Ձուլման ցեխ	3,1	3,1	3,1	3,1	
Մանկապարտեզ	0,1	0,1	0,1	0,08	
Ը ն դ ա մ ե ն ը	5,5	5,5	5,0	4,98	

Բերված տվյալները ցույց են տալիս, որ ըստ շինարարության տեղումնային նորմաների նշված օբյեկտների վրա մինչև հաշվետու տարվա վերջը պետք է կատարվեն 5,5 մլն ուրբլի, կապիտալ ներդրումների պլանով նախատեսված էր 5,0 մլն ուրբլ, իսկ փաստորեն կատարված է 4,98 մլն ուրբլի: Այսպիսով, սահմանված նորմաների համապատասխան շինարարության ըսկզբից կատարման ենթակա կապիտալ ներդրումների ծավալը փաստորեն կատարված է 90,5 տոկոսով:

Աղյուսակից երևում է նաև, որ մեխանիկական հավաքման ցեխի շինարարության նորմատիվային ժամկետները խախտված են ավելի քիչ միջոցներ հատկացնելու հետևանքով, քան նախատեսված է շինարարության տեղումնային նորմաներով, իսկ մանկապարտեզի շինարարության նորմատիվային ժամկետները խախտված են կապիտալ ներդրումների պլանի թերակատարման հետևանքով:

Գործարկման պլանի և կապիտալ ներդրումների ծրագրի վերլուծության ընթացքում որոշվում է, թե պատվիրատուն ինչպես է ապահովում շինարարությունը նախագծերով, նախահաշիվներով, սարքավորումով և ֆինանսավորումով:

Վերլուծության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում գործարկման առաջադրանքի և կապիտալ ներդրումների ծրագրի կատարման հաշվետու ցուցանիշների ճշգրտության վրա:

Հաշվետվությունների մեջ չկատարված աշխատանքներ

մտցնելը, շահագործման հանձնաժների կազմի մեջ թերա-
վարտուլթյուններ ունեցող օբյեկտներ մտցնելը և նման այլ
խախտումները իրենցից ներկայացնում են հաշվետվութունն
աղավաղող հավելագրումներ: Ծավալների հավելագրումները
հանգեցնում են նյութա-տեխնիկական ռեսուրսների, աշխա-
տանքի, դրամական միջոցների ծախսերի սխալ ղնահատմա-
նը, քողարկում են անտնտեսավարությունն ու ղեկավարման
ոչ պիտանի մեթոդները: Ահա թե ինչու կարևոր է բացահայտել
այս հակապետական պրակտիկայի ամենաչնչին դրսևորումը
և ժամանակին արմատախիլ անել դրանք: Սրա համար կա-
րևոր տվյալներ են հասարակական վերահսկողության և շին-
բանկի հիմնարկների կողմից կատարված աշխատանքների
բնաձևի տեղում անցկացվող ստուգումների նյութերը: Վեր-
լուծության ընթացքում, որպես կանոն, կազմակերպվում է
ստուգում հաշվետվության մեջ ցույց տված գործարկման և
կատարված աշխատանքների ծավալի համապատասխանու-
թյունը դրանց իրական բնաձևի ծավալի հետ, շափումների,
աշխատանքների մատյանի, բանվորական բրիգադների
կարգագրերի, ավտոտրանսպորտի ուղեգրերի հետ բաղդա-
տումով և այլն: Հավելագրումների համար, այն անձինք, ո-
րոնք այն թույլ են տվել, խիստ քրեական պատասխանա-
տվություն են կրում:

4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՍՉՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿՍՏԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրական ծրագրի կատարումը ըստ ծավալի: Կարո-
ղությունների ու հիմնական ֆոնդերի գործարկման պլանի,
ինչպես նաև կապիտալ ներդրումների պլանի կատարումն ա-
պահովելու հիմքը շինարարական կազմակերպության համար
հաստատված շինմոնտաժային աշխատանքների ծրագրի կա-
տարումն է: Այդ իսկ պատճառով շինարարական կազմակեր-
պության արտադրական ծրագրի կատարման ընթացքի
ստուգումը գործարկման և կապիտալ ներդրումների պլան-
ների կատարման վերլուծության անհրաժեշտ պայմանն է:

Շինարարական-մոնտաժային աշխատանքների պլանի կատարման վերլուծությունը նպատակահարմար է սկսել շինարարական կազմակերպության պլանի կատարման ընդհանուր ցուցանիշների քննարկումից, իսկ հետո անցնել նրա առանձին տեղամասերի աշխատանքի ուսումնասիրությանը:

Արտադրական ծրագրի կատարումը վերլուծվում է կատարված աշխատանքների ընդհանուր ծավալով և առանձին՝ սեփական ուժերով ու ենթակապալային կազմակերպությունների ուժերով կատարվող աշխատանքների գծով:

Քննարկենք վերլուծության մեթոդիկան շինարարական վարչություններից մեկի օրինակով: Այդ վարչությունը հաշվետու տարում ձեռք է բերել հետևյալ ցուցանիշները (հազ. ուրվիներով).

Ց ւ ց ան ի շ ն ե ր	Հաշվետու տարում		Անցած տարվա ընթացքում	Տոկոսներով	
	ըստ վրանի	փաստացի		պլանի նկատմամբ	մյուստարվա նկատմամբ
Կատարված շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալը	4200	4670	3900	111	120
Այդ թվում սեփական ուժերով կատարված աշխատանքներ	2604	2710	2620	104	103

Կատարված աշխատանքների ընդհանուր ծավալի համեմատությունը պլանի հետ ցույց է տալիս, որ ծրագիրը կատարված է 111 տոկոսով. անցյալ տարվա համեմատ աշխատանքների ծավալը ավելացել է 20 տոկոսով: Ընդ որում, շինարարական կազմակերպության սեփական ուժերով պլանը կատարվել է 104 տոկոսով: Հետևաբար, այն աշխատանքներում, որոնք կատարված են ներգրաված կազմակերպությունների, այսինքն՝ ենթակապալառուների ուժերով, արտադրական ծրագրի ավելի զգալի գերակատարում է ձեռք բերվել:

Աշխատանքների ընդհանուր ծավալից առանձնացվում են գործարկելիք օբյեկտները և դրանց ամեն մեկի համար որոշվում է ծրագրի կատարումը, ընդ որում, համեմատություն է կատարվում նոր սկսված և փոխանցիկ օբյեկտների՝ առաջադրանքների կատարման հետ: Այդ անհրաժեշտ է կատարել կանխելու համար շինարարական կազմակերպության միջոցների ու ուժերի փոշիացումը մեծ քանակությամբ օբյեկտների վրա, դրանք վճռական տեղամասերի վրա կենտրոնացնելու փոխարեն:

Այնուհետև քննարկենք, թե ինչպես է շինարարական վարչությունը կատարել պետական պլանի մեջ մտցրած օբյեկտների պլանը և այն օբյեկտների պլանը, որոնք իրականացվում են շինարողության միջոցների հաշվին: Բերենք նաև պլանի կատարման տվյալները իր ժողտնտխորհի սխտեմի մեջ մտնող պատվիրատուի համար: Այդ թույլ կտա ավելի լրիվ կերպով լուսաբանել շինարարական վարչության գործունեությունը (հազ. ուրլիներով)

	Տարեկան պլանով	Փաստացի	+ —
Շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալը	4200	4670	+ 470
Այդ թվում			
1. Կապիտալ ներդրումների պետական պլանի մեջ մտցրած օբյեկտների գծով Դրանցից	3850	4068	+ 208
կատարված է այն օբյեկտների համար, որ մտնում են իր ժողտնտխորհի կազմի մեջ	2950	3300	+ 350
չեն մտնում իր ժողտնտխորհի կազմի մեջ	900	758	— 142
2. Չկենտրոնացված միջոցների հաշվին ֆինանսավորվող օբյեկտների գծով	350	612	+ 262

Վերլուծությունը ցույց է տալիս, որ շինմոնտաժային աշխատանքների պլանի գերակատարումը ձևով է բերված շինարողության միջոցներից ֆինանսավորվող օբյեկտների հաշվին (262 հազ. ուրլի) և իր ժողտնտխորհի կազմի մեջ մտնող կառույցների հաշվին (350 հազ. ուրլի):

Միևնույն ժամանակ շինարարական վարչությունը թերակատարել է ժողտնտիսորհի կազմի մեջ շմտնող կառույցների պետական պլանը 142 հազ. ուրբով: Սա լուրջ թերություն է շինարարական վարչության աշխատանքներում:

Հատկապես մանրակրկիտ կերպով անհրաժեշտ է վերլուծել այն հանգամանքները, որ կապված են շինարարական արտադրության միջոցների հաշվին ֆինանսավորվող օբյեկտների գծով զգալի գերակատարման հետ: Նախ և առաջ հարկավոր է պարզել, թե արդյոք դրանց վրա չի՞ ծախսված պետական պլանի մեջ մտցրած օբյեկտների աշխատանքային և նյութական ռեսուրսները:

Շինարարական-մոնտաժային աշխատանքների ծրագրի կատարման վրա ապող հիմնական գործոնները: Արտադրական ծրագրի կատարման վերլուծության ժամանակ անհրաժեշտ է որոշել, թե առանձին գործոնները ինչպես են ազդել ամբողջ շինարարական կազմակերպության և աշխղեկների առանձին օբյեկտների ու տեղամասերի պլանի կատարման մակարդակի վրա:

Այդ գործոնների ազդեցությունը սովորաբար քննարկվում են որոշակի հաջորդականությամբ: Սկզբում ուսումնասիրում են օբյեկտների ապահովվածությունը նախագծային, նախահաշվային փաստաթղթերով և կառույցը նյութերով, կոնստրուկցիաներով ու դետալներով ապահովելու գործի վիճակը, այնուհետև վերլուծում են տեխնիկական զարգացման պլանի կատարումը, հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը, աշխատանքի արտադրողականության կազմակերպման վիճակն ու մակարդակը, կառույցի համար անհրաժեշտ բանվորների և ինժեներատեխնիկական կադրերի առկայությունը:

Կառույցի ապահովվածությունը նախագծային-նախահաշվային փաստաթղթերով շինարարական արտադրության նորմալ ընթացքի կարևորագույն պայմանն է: Վերլուծության ժամանակ երևան է հանվում պլանի մեջ մտցրած բոլոր օբյեկտների նախագծային-նախահաշվային փաստաթղթերի ժամանակին և լրիվ կերպով կառույցին հանձնելը:

Մրազրի կատարման համար կարևոր նշանակություն ունի նյութական ռեսուրսներով ժամանակին մատակարարումը և արտադրության պրոցեսում դրանց ճիշտ օգտագործումը:

Որպես օրինակ բերենք մի շինարարական կազմակերպության պլանով նախատեսված օբյեկտների աշխատանքների ծրագրի կատարման համար անհրաժեշտ կարևորագույն շինարարական նյութերի ու կոնստրուկցիաների բավարարվածության վերաբերյալ տվյալները.

	Չափի միավորը	Պլան		փաստացի	
		տարեկան	4-րդ եռամսյակ	տարեկան	4-րդ եռամսյակ
Երկաթբետոնային կոնստրուկցիաներ	խ մ	12000	2500	11700	3405
Մետաղ	տ	1000	200	960	320
Ցեմենտ	՝	1210	380	1210	360
Խիճ	խ մ	9300	1500	9420	1400
Կիր	տ	350	100	360	105
Անտառանյութ	խ մ	4100	1200	3760	1600

Աղյուսակը ցույց է տալիս, որ շինարարության վարչությունն անբավարար է մատակարարել առավել կարևոր շինանյութերով ու կոնստրուկցիաներով: Այսպես, նա չի ստացել 300 խմ երկաթբետոնային կոնստրուկցիաներ, 40 տ մետաղ և 340 խմ անտառանյութ, Վատ է նաև այն, որ հաշվետու տարում մատակարարումը անկանոն է եղել: Դա երևում է 4-րդ եռամսյակի և 9 ամսվա մատակարարման տվյալներից:

4-րդ եռամսյակում երկաթբետոնի կոնստրուկցիաների մատակարարումների պլանը գերակատարվել է 905 խմ, տարվա պլանի 300 խմ թերակատարման ղեպքում: Հետևաբար, 9 ամսվա նյութական մատակարարման պլանը թերակատարվել էր 1205 խմ երկաթբետոնի կոնստրուկցիաներով, որը լուրջ պժվարություններ է ստեղծել շինարարական կազմակերպության ռիթմիկ աշխատանքի համար:

Նույնպիսի վիճակումն է նաև մետադի և անտառանյութի մատակարարումը: 9 ամսում շի մատակարարված 120 աս մետաղ և 740 խմ անտառանյութ:

Այնուհետև պետք է վերլուծել նյութական ռեսուրսների ճիշտ օգտագործումը: Դրա համար ստուգվում է, թե արդյոք բոլոր ստացած նյութերն ու կոնստրուկցիաները օգտագործվել են ըստ նշանակության:

Առանձին օբյեկտների շինարարական նյութերի ծախսի տվյալները: Եւսումնասիրությունը հնարավորություն տվեց երևան հանել պետական պլանի կատարման համար ստացված նյութական ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործման փաստեր: Չկոնստրուկցիայի միջոցների հաշվին ֆինանսավորվող օբյեկտների վրա ծախսվել է 100 խմ երկաթբետոնե կոնստրուկցիաներ և 30 աս մետաղ:

Վերլուծությունը պետք է ցույց տա նաև, թե արդյոք նյութական ռեսուրսները կենտրոնացվել են գործարկվելիք օբյեկտների վրա: Դրա համար ուսումնասիրվում են առանձին կառուցվող օբյեկտների նյութերով և կոնստրուկցիաներով մատակարարման տվյալները: Ստուգվում է նաև նյութերի մատակարարման կոմպլեկտավորությունը, շինարարական կազմակերպության օժանդակ ձեռնարկությունների կողմից նյութերի, կոնստրուկցիաների ու դետալների պատրաստման պլանի կատարումը:

Նյութերի փաստացի ծախսի տվյալները արտադրական նորմաների հետ բաղադրատոմոս ցույց են տրվում առանձին հաշվետվական ձևում, ըստ առանձին շինարարական տեղամասերի և ըստ ամբողջ շինարարական կազմակերպության: Այս հաշվետվության վերլուծությունը թույլ է տալիս պարզել, թե ծախսի նորմաներն ինչպես են պահպանվում, շինարարական կազմակերպությունն ինչպիսի ռեզերվներ ունի:

Շինմոնտաժային աշխատանքների ծրագրի կատարման և շինարարական կազմակերպության աշխատանքի որակական ցուցանիշների բարելավման վրա մեծ ազդեցություն են գործում տեխնիկական զարգացման պլանի կատարումն ու հիմնական արտադրական ֆոնդերի արդյունավետ օգտագործումը:

**5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Շինարարական կազմակերպության տեխնիկական զարգացման պլանի կատարման վերլուծությունը սկսվում է շինարարության ինդուստրիալ մեթոդների արմատավորումը բնորոշող ցուցանիշների քննարկումից:

Շինարարության ինդուստրիալ մեթոդների արմատավորումը: Շինարարության ինդուստրացման կարևոր ցուցանիշ է տիպային նախագծերի ու գործարանային պատրաստման հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների ու դետալների կիրառումը:

Տիպային նախագծերի կիրառման մակարդակը որոշվում է տիպային նախագծերով կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալով՝ արտահայտված տոկոսներով շինարարական կազմակերպության աշխատանքների ընդհանուր ծավալի նկատմամբ: Այս մակարդակը նպատակահարմար է որոշել ոչ միայն ամբողջ շինարարական կազմակերպության համար, այլև ըստ շինարարության ճյուղերի և տեսակների:

Հավաքովի կոնստրուկցիաների ու դետալների կիրառման աստիճանը որոշվում է բացարձակ մեծություններով, պլանի հետ բաղդատելով և մի շարք ժամանակաշրջանների դինամիկայով: Այդ նպատակով օդտազործվում է 1 մլն. ուրբու կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալի, շինքի 100 խմ ծավալի կամ 1000 Բ մ տարածության վրա հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների ծախսի ցուցանիշը:

Քերեք հետևյալ օրինակը Շինարարական վարչությունը սեփական ուժերով կատարել է 2710 հազ. ուրբու շինմոնտաժային աշխատանքներ: Ընդ որում կիրառված է եղել հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներ ու դետալներ 10900 խմ, կամ 4020 խմ 1 մլն. ուրբու շինմոնտաժային ուղիատանքի վրա: Դա պլանից 250 խ մ պակաս է, ըստ պլանի 1 մլն. ուրբու շինմոնտաժային աշխատանքներում պետք է զրվեր 4270 խ մ.:

Կատարված աշխատանքների ծավալի միավորին ընկնող հավաքովի երկաթբետոնի կիրառման աւետիճանը բնութագրող ցուցանիշները վերլուծելիս, հարկավոր է հաշվի առնել շինարարութեան մեջ կիրառվող հավաքովի երկաթբետոնի տեխնիկական բնութագիրը: Բանն այն է, որ հավաքովի երկաթբետոնն կոնստրուկցիաների արտադրութեան տեխնիկայի ու տեխնոլոգիայի կատարելագործման զուգընթաց հնարավորութիւններ են ստեղծվում դրանց քաշի պակասեցման համար (օրինակ, նախապէս լարված ամրանով բարակապատ կամ սնամեջ կոնստրուկցիաների կիրառման հետեանքով): Իսկ դա պակասեցնում է աշխատանքների մեկ միլիոն ռուբլի ծավալին ընկնող հավաքովի երկաթբետոնի խորանարդ մետրի քանակը: Ուստի երկաթբետոնի կիրառման տվյալների վերլուծութեան ժամանակ պետք է հաշվի առնել հավաքովի երկաթբետոնն կոնստրուկցիաների քաշի իջեցումը:

Շինարարական կազմակերպութեան տեխնիկական զարգացման պլանի կատարման վերլուծութեան էական մասը արտադրական պրոցեսների մեքենայացման աստիճանի ուսումնասիրումն է: Այդ նպատակով, մեքենայացված, այդ թվում կոմպլեքսային-մեքենայացված ձևով կատարված աշխատանքների տեսակարար կշիռը բաղդատվում է պլանային առաջադրանքների ու նախորդ տարիների ցուցանիշների հետ:

Օրինակ, շինարարական վարչութիւնում մեքենայացման մակարդակը աշխատանքների ընդհանուր ծավալի նկատմամբ տոկոսներով կազմել է (տե՛ս 679 էջ) .

Այդուսակից երևում է, որ հաշվետու տարում հաջողութեամբ են կատարված բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ու երկաթբետոնն կոնստրուկցիաների մոնտաժի մեքենայացման պլանային առաջադրանքները: Աշխատանքների մյուս տեսակների մեքենայացման առաջադրանքը չի կատարված, իսկ դրանցից մի քանիսի մեքենայացումը անցյալ տարվանից ավելի ցածր է: Հատկապէս անբավարար է կատարված հողային և ներկարարական աշխատանքների մեքենայացումը:

Ջշխատանքների տեսակները	Անցած տարում				Հաշվետու տարում		
	մեքենայացման ընդհանուր մակարդակը		միլիոն լիտրով կոմպոզիցիոն մեքենայացման	պլան		փաստացի	
	մեքենայացման ընդհանուր մակարդակը	միլիոն լիտրով կոմպոզիցիոն մեքենայացման		մեքենայացման ընդհանուր մակարդակը	միլիոն լիտրով կոմպոզիցիոն մեքենայացման	մեքենայացման ընդհանուր մակարդակը	միլիոն լիտրով կոմպոզիցիոն մեքենայացման
Հողային աշխատանքներ	89	77	92	79	86	75	
Քեռնման և բեռնաթափման աշխատանքներ .	82	—	86	—	57	—	
Երկաթբետոնե կոնստրուկցիաների մոնտաժ	86	86	89	88	90	89	
Սվազի աշխատանքներ	60	—	65	—	62	—	
Ներկարարական աշխատանքներ	72	—	74	—	70	1	

Ներտնտեսական ռեզերվների հայտարարման համար անհրաժեշտ է վերլուծել շինարարական մեքենաների ու մեխանիզմների օգտագործման տվյալները:

Մեքենաների ու մեխանիզմների օգտագործման արդյունավետությունը: Շինարարական տեխնիկայի օգտագործման ամենաընդհանուր ցուցանիշը մեքենաների ու մեխանիզմների արժեքի հազար ռուբլուն ընկնող շինմոնտաժային աշխատանքների ծավալն է: Այս ցուցանիշը որոշվում է շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալը (շինարարական կազմակերպության ուժերով կատարված) բաժանելով այդ կազմակերպության տնօրինության տակ եղած մեքենաների ու մեխանիզմների արժեքի վրա: Շինարարական մեքենաների ու մեխանիզմների աշխատանքի արդյունավետությունը որոշվում է նաև կատարված աշխատանքների ծավալի տվյալներով, հաշված մեքենայի կամ կարողության միավորի համար համեմատելով պլանի, կամ համապատասխան նորմատիվների հետ:

Մեքենայի կամ կարողության միավորի վրա հաշված արտադրանքը ցույց է տալիս մեքենայի ժամանակի միավոր-

րի արտադրողականութեան ձեռք բերված մակարդակը: Ռեզերվների հայտաբերման համար մեքենայի արտադրողականութեան մակարդակը ժամանակի միավորում համեմատում են առաջավոր մեխանիզատորների ձեռք բերած պրոգրեսիվ տեխնիկական նորմատիվների ու ցուցանիշների հետ:

Հայտնի է, որ ժամանակի միավորի ընթացքում մեքենաների միանման արտադրողականութեան դեպքում, կատարված աշխատանքների ծավալը (հաշված մի մեքենայի համար) ավելանում է, եթե մեքենաները ավելի թվով ժամեր են աշխատում: Ուստի ներտնտեսական ռեզերվների հայտաբերման համար նպատակահարմար է վերլուծել մեքենաների ու մեխանիզմների ըստ իրենց աշխատանքի ժամերի օգտագործման տվյալները: Այդպիսի վերլուծությունը հնարավորություն կտա պարզել, թե մեքենաներն ինչ չափով էին բեռնված, դրանցից որոնք են վատ օգտագործվել, որոնք առավելագույն բեռնվածություն ունեին կամ շինարարական արտադրության մեջ «նեղ տեղեր» են ստեղծել: Վերլուծությունը հնարավորություն է տալիս նաև հայտաբերել ավելորդ, պրակտիկորեն չօգտագործվող մեքենաներն ու մեխանիզմները և միջոցներ նշել դրանք օգտագործելու համար: Մի շարք դեպքերում չօգտագործվող մեքենաներն ու մեխանիզմները այլ կազմակերպություններին տալու հնարավորություն է ստեղծվում:

Տարվա ընթացքում շինարարական կազմակերպության տնօրինության տակ կային, օրինակ, 6 էքսկավատոր: Շինֆինպլանով մեկ էքսկավատորի համար աշխատանքի տարեկան նորման սահմանված էր 2700 ժամ, կամ 16200 մեքենա-ժամ: Փաստորեն, հաշվետվության համաձայն էքսկավատորները աշխատել են 15600 հազար մեքենա-ժամ, այնինչ՝ միջին հաշվով մի էքսկավատորի համար 2600 ժամ: Հաշվետվության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ էքսկավատորները տարվա ընթացքում ունեցել են արտապլանային պարապլորդներ, ինչպես նաև երկար ժամանակ սպասել են վերանորոգման:

Վերլուծությունից հետևում է մեքենաների օգտագործման և վերանորոգման կազմակերպման բարելավման հարցը դնելու անհրաժեշտությունը:

Շինարարական մեքենաների ու մեխանիզմների օգտագործման բարելավումը ուղղակի կերպով կախված է նրանց պարապլորդների կրճատման նշված միջոցառումների իրա-

կանացումից: Մեքենաների ու մեխանիզմների պարապուրդների տվյալների ուսումնասիրությունը, դրանց պատճառների պարզաբանումով, ցույց կտա թե ինչու և ում մեղքով չեն օգտագործվել եղած ռեզերվները:

Սարքավորման՝ ըստ նրա աշխատանքի ժամանակի օգտագործման հաշվառման տվյալները երբեմն լրիվ չափով չեն արտացոլում սարքավորման բոլոր պարապուրդները: Ուստի նպատակահարմար է պարբերաբար հիմնական մեքենաների ու սարքավորումների օգտագործման վերլուծություն կատարել աշխատանքային օրվա ընթացքում, այսպես կոչված դիտողական ֆաբտեր կազմելու միջոցով, որոնց մեջ նշվում են բոլոր պարապուրդներն ու դրանց պատճառները: Այդ տրվյալների ուսումնասիրությունը նյութեր է տալիս շինարարական տեխնիկայի օգտագործման բարելավման միջոցառումներ մշակելու համար:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի պլանի կատարման վերլուծության պրոցեսում ուսումնասիրվում են աշխատողների թվի և նրանց աշխատանքի արտադրողականության տվյալները, որոշվում են աշխատանքի արտադրողականության աճի ռեզերվները և աշխատավարձի սահմանված ֆոնդի ավելի խնայողաբար օգտագործման ուղիները:

Աշխատանքի արտադրողականության աճի պլանի կատարման ստուգումը: Վերլուծության ընթացքում մեկ աշխատողի հաշվետու ժամանակաշրջանի փաստացի միջին արտադրանքը բաղդատվում է պլանայինի հետ: Շինարարական կազմակերպություններում մեկ աշխատողին ընկնող արտադրանքը որոշվում է շինմոնտաժային աշխատանքների ծավալը՝ բաժանելով շինմոնտաժային աշխատանքներում և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող օժանդակ արտադրության մեջ դբադված աշխատողների միջին թվի վրա:

Քննարկենք շինարարական կազմակերպության տարեկան հաշվետվության հետևյալ տվյալները.

Ցուցանիշներ	Լուծյալ սույլ	Գումբայիտեղիշույ առնուտ	Կլուկ առնուտ	Վարչական ֆոնդի առնուտ	Փաստորեն տոկոսներով	
					Բյուջայի կլուկ	Մյուս առնուտ
1. Սեփական ուժերով կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալը (հազ. ուրբ.)	2520	2604	2710	104	108	
2. Շինմոնտաժային աշխատանքներում ինքնուրույն հաշվեկշիռ շունեցող և օժանդակ արտադրություններում զբաղված աշխատողների միջին ցուցակային թիվը	427	433	441	102	103	
նրանցից.						
ա) բանվորների՝ շինարարական մոնտաժային աշխատանքներում ու օժանդակ արտադրություններում	385	395	406	103	105	
բ) վարչա-կառավարչական և այլ անձնակազմ	42	38	35	92	83	
3. Մեկ աշխատողի միջին տարեկան արտադրանքը (ուրբ/իններով).	5900	6010	6145	102	104	
4. Մեկ բանվորի միջին տարեկան արտադրանքը (ուրբ.)	6545	6592	6675	101	102	

Աղյուսակից երևում է, որ աշխատանքի արտադրողականության պլանը կատարվել է 102 տոկոսով: Անցյալ տարվա համեմատության մեր աշխատանքի արտադրողականությունն աճել է 4 տոկոսով: Հաշվետու տարում կատարված շինմոնտաժային աշխատանքների մեկ միլիոն ուրբ/ով ծավալին ընկնում էր 163 (441:2,7) աշխատող այն ժամանակ, երբ նախորդ տարում 170 (427:2,5) էր: Վերլուծության ժամանակ ստուգվում է պլանում նշված աշխատանքի արտադրողականության աճի միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը:

Շինարարական կազմակերպության գործունեության տրևտեսական վերլուծության ժամանակ պետք է որոշել, թե ինչ

գործոնների շնորհիվ է կատարվել արտադրական ծրագիրը: Որոշ դեպքերում շինմոնտաժային աշխատանքների ծավալի ավելացումը ձեռք է բերվում ոչ թե աշխատանքի արտադրողականության աճի, այլ աշխատողների թվի ավելացման հաշվին:

Մեր օրինակում պլանի 106 հազ. ուրլի ընդհանուր գերակատարման պայմաններում աշխատողների թիվը պլանավորածից ավելի էր 8 մարդով, որոնք պլանով պետք է 48 հազար ուրլու արտադրանք տային (6 հազ×8): Մեկ աշխատողի միջին արտադրանքը պետք է պլանային առաջադրանքը 13,5 ուրլով, որն աշխատողների 441 հոգի ընդհանուր թվի դեպքում հնարավորություն տվեց պլանից դուրս 59 հազ. ուրլու աշխատանք կատարել:

Աշխատանքի արտադրողականության պլանի կատարումը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է որոշել, թե այս կամ այն արդյունքները ինչ ճանապարհով են ձեռք բերվել:

Միջին արտադրանքի մակարդակը, դրամական արտուհայտության մեծացումը, կախված է կատարված աշխատանքների ընդհանուր ծավալում նյութական ծախսումների տեսակարար կշռի փոփոխությունից, որ տեղի է ունենում սրտադրողական ինդուստրիայի աստիճանի և կատարված աշխատանքների կառուցվածքի փոփոխման հետևանքով: Մեկ աշխատողի արտադրանքը դրամական շափումով կարող է աճել այն կապակցությամբ, որ աշխատանքների մի մասը, որը ըստ պլանի պետք է կատարվեր շինարարական կազմակերպության կողմից, փաստորին կատարվել է գործարաններում կամ օժանդակ ձեռնարկություններում, իսկ շինարարական հրապարակում պատրաստի դետալներն ու կոնստրուկցիաները միայն հավաքվել են: Ընդհակառակը, այն դեպքերում, երբ դետալների ու կոնստրուկցիաների պատրաստման աշխատանքները կատարվում են շինարարական հրապարակում, իսկ պլանով նախատեսված էր դրանց կատարումը արդյունաբերական ձեռնարկությունների կողմից, մեկ աշխատողի արտադրողականության մակարդակը շինարարության մեջ իջնում է:

Վերլուծման ընթացքում պետք է նաև պարզել, թե կատարվող աշխատանքների կառուցվածքի փոփոխությունն ինչ ազդեցություն ունեցավ արտադրանքի վրա՝ հաշված դրամական արտահայտությամբ: Պրակտիկայում հանդիպում են փաստեր, երբ առանձին շինարարական կազմակերպություններ, բարձր ցուցանիշների հետևից ընկնելով, կատարում են առավել «ձեռնտու» նյութատար աշխատանքներ և դրանով հասնում են աշխատանքի արտադրողականության արհեստական բարձրացման:

Դրամական արտահայտությամբ աշխատանքի արտադրողականության վերաբերյալ տվյալների վերլուծության հետ մեկտեղ նպատակահարմար է քննարկել աշխատանքի արտադրողականության աճի ցուցանիշները՝ բնաձևի շարժմաներով: Մեկ բանվորին հասնող կատարված աշխատանքների քանակի տվյալները հնարավորություն են տալիս ավելի լրիվ կերպով հայտաբերել աշխատանքի արտադրողականության մակարդակի փոփոխությունները:

Առանձին բանվորների աշխատանքի արտադրողականությունը որոշելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նրանց կողմից արտադրանքի նորմաների կատարման աստիճանը: Արտադրանքի նորմաների կատարման վերլուծությունը կատարվում է ամբողջ կառույցի և բանվորների առանձին կարևոր մասնագիտությունների դժով: Դրա համար փաստորեն աշխատած ժամանակի (մարդ-օրերով կամ մարդ-ժամերով) տվյալները բաղադրվում են ժամանակի գործող նորմաների հետ կատարված աշխատանքների ծավալի համար: Աշխատանքի արտադրողականության վերլուծության ժամանակ քննարկվում են նաև հիմնական և օժանդակ բանվորների թվի միջև եղած հարաբերակցությունը: Եթե օժանդակ աշխատանքներում զբաղված բանվորների թիվը ավելին է, քան նախատեսված էր պլանով, ապա դա աշխատանքի արտադրողականության մակարդակի վրա բացասաբար է անդրադառնում և պահանջում է միջոցներ ձեռք առնել աշխատանքի և արտադրության կազմակերպման թերությունները վերացնելու համար:

Աշխատանքի արտադրողականության աճի ռեզերվների հայտաբերումը աշխատաժամանակի գերապլանային կորուստների վերացման հաշվին: Շինարարական կազմակերպության հաշվետվության մեջ ցույց է տրվում քանվորների ընդհանուր թիվը և նրանց կողմից աշխատած մարդօրերի թիվը, որ հնարավորություն է տալիս որոշել ոչ միայն միջին արտադրանքը մեկ բանվորի համար, այլև մեկ մարդ-օր աշխատանքի համար:

Մեկ միջին ցուցակային բանվորին և մեկ մարդ-օր աշխատանքին հասնող արտադրանքի պլանի կատարման տրվյալների համեմատումը հնարավորություն է տալիս հայտաբերել աշխատանքի արտադրողականության բարձրացման ռեզերվները, աշխատաժամանակի արտապլանային կորուստների վերացման հաշվին:

Քննարկենք համապատասխան տվյալները.

Ցուցանիշներ	Փաստացի տվյալները պլանի համեմատ (տոկոսներով)
Մեկ միջին ցուցակային բանվորի միջին տարեկան արտադրանքը	101
Մեկ մարդ-օրվա միջին արտադրանքը	104

Թվերը ցույց են տալիս, որ եթե աշխատաժամանակի կորուստներ չլինեին, աշխատանքի արտադրողականության աճի պլանը կատարված կլիներ 104 տոկոսով, այսինքն՝ կատարված կլիներ մեկ մարդ-օրվա արտադրանքի պլանի կատարման մակարդակի շփոթված 2 հոտեարար, պլանով սահմանված աշխատաժամանակի լրիվ օգտագործման դեպքում շինարարական կազմակերպությունը կկարողանար բարձրացնել արտադրանքը մեկ բանվորի հաշվով 3 տոկոսով (104—101): Համապատասխանաբար կբարձրանար և մեկ աշխատողի արտադրանքը: Կազմակերպությունում բանվորների թիվը կազմում է 406 մարդ, կամ աշխատողների թվի 92 տոկոսը (441 մարդ): Հետևաբար, աշխատաժամանակի արտապլանային կորուստների վերացման դեպքում աշխատողների աշխատանքի արտադրողականու-

թյունը կբարձրանա 2,8 տոկոսով ($\frac{3 \times 92}{100}$):

Վերլուծության ժամանակ պետք է պարզել ոչ միայն աշ-

խատաժամանակի կորուստների մեծությունը և դրանց ազդեցությունը աշխատանքի արտադրողականության մակարդակի վրա, այլև այդ կորուստների պատճառները, այն հաշվով, որպեսզի միջոցառումներ մշակել աշխատաժամանակի օգտագործման բարելավման համար: Դրա համար կազմվում է աշխատաժամանակի օգտագործման հաշվեկշիռ, որտեղ համեմատելով պլանի հետ ցույց է տրվում փաստացի աշխատած աշխատաժամանակը և աշխատաժամանակի կորուստները ըստ պատճառների:

Աշխատանքի արտադրողականության մակարդակի վրա բացասական ազդեցություն են ունենում ներհերթափոխային պարապուրդները: Մեր օրինակում, ըստ հաշվետվության, ներհերթափոխային պարապուրդները կազմում են 8052 ժամ կամ 1150 մարդ-օր: Աշխատանքի արտադրողականության մակարդակի վրա դրանց ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվել շինմոնտաժային աշխատանքների ծավալը, որը կարելի է կլինեթ կատարել ներհերթափոխային պարապուրդների բացակայության դեպքում:

Հաշվետվության մեջ ցույց տրվող ներհերթափոխային պարապուրդները, որպես կանոն, արտացոլում են միայն ժամանակի այն կորուստները, որոնք ձևակերպված են պարապուրդի վճարման փաստաթղթերով: Մինչդեռ շատ շինարարական կազմակերպություններում լինում են կարճատև պարապուրդներ, որոնք հաճախ հաշվետվության մեջ ցույց չեն տրվում: Դրանց մեծությունը կարելի է սահմանել միայն աշխատաժամանակի օգտագործման ընթացքի հատուկ դիտողության կազմակերպման միջոցով: Այսպիսի արդյունքների հիման վրա մշակվում են աշխատանքի կազմակերպումը բարելավելու և պարապուրդները վերացնելու միջոցառումներ:

Աշխատանքի արտադրողականության աճի համար կարելի է նշանակություն ունի աշխատանքի անարտադրողական ծախսումների վերացումը: Աշխատանքների վատ որակը հաճախ անհրաժեշտություն է առաջ բերում որոշ կոնստրուկցիաներ քանդել և նորից կառուցել, անցքեր ծակել, կոնստրուկցիաներ ուժեղացնել, պատուհաններ կրկնակի ապակեպատել և այլ աշխատանքներ կատարել, ինչպես նաև դրանց

հետ կապված շինանյութեր տեղափոխել, ծանրություններ մոտեցնել ու բարձրացնել, կաղապարամածներ տեղակայել, քանդել և այլ աշխատանքներ կատարել: Աշխատանքների վերափոխումների, խոտանի ուղղման և աշխատանքի այլ անարտադրողական ծախսումների հետ կապված կորուստների հայտաբերման համար քննարկվում են բանվորներին տրված կարգագրերը, կատարված աշխատանքների անորակության մասին ակտերը, ինչպես նաև ընդունող հանձնաժողովների նյութերը, որոնց մեջ ցույց են տրվում թերակառուցումները և կատարված աշխատանքների անհամապատասխանությունը տեխնիկական պայմաններին ու նախագծերին:

Աշխատավարձի ֆոնդի օգտագործման վերլուծությունը: Աշխատավարձի պլանային ֆոնդի օգտագործումը բնութագրվում է աշխատավարձի ֆոնդի բացարձակ և հարաբերական տնտեսումով (կամ գերաժախսով):

Աշխատավարձի ֆոնդի բացարձակ տնտեսում (կամ գերաժախս) հայտաբերվում է փաստորեն տրված աշխատավարձը պլանային ֆոնդի հետ համեմատելու միջոցով: Աշխատավարձի ֆոնդի բացարձակ տնտեսումը (կամ բացարձակ գերաժախսը) կարող է աշխատավարձի ֆոնդի օգտագործման մասին ճիշտ պատկերացում տալ միայն այն դեպքերում, երբ կազմակերպությունը աշխատանքների ծավալի պլանը կատարել է լրիվ: Աշխատանքների ծավալի պլանի դերակատարման կամ թերակատարման դեպքում բացարձակ արդյունքը (տնտեսում կամ գերաժախս) աշխատավարձի պլանային ֆոնդի օգտագործման իրական դրությունը չի արտացոլի, քանի որ աշխատավարձի ծախսերի զգալի մասը կախված է կատարվող աշխատանքների ծավալից:

Աշխատանքի պլանի փաստացի կատարումը հաշվի առնելիս, աշխատավարձի ֆոնդի օգտագործման ցուցանիշը այդ ֆոնդի հարաբերական տնտեսումն է (կամ հարաբերական գերաժախսը): Այդ ցուցանիշը հայտաբերվում է փաստորեն տրված աշխատավարձը բաղդատելով շինմոնտաժային աշխատանքների փաստացի կատարման տոկոսով՝ վերահաշված պլանային ֆոնդի հետ:

Քննարկենք աշխատավարձի ֆոնդի օգտագործման վերլուծության մի օրինակ: Կապալային կազմակերպությունը 566 հազար ռուբլի գումարով հաստատված աշխատավարձի ֆոնդի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում փաստորեն ծախսել է 580 հազար ռուբլի աշխատավարձ: Բացարձակ գերածախսը կազմեց 14 հազար ռուբլի (580—566):

Հարաբերական տնտեսումը կամ գերածախսը որոշելու համար աշխատավարձի պլանային ֆոնդը ճշտվում է շինմոնտաժային աշխատանքների ծավալի կատարման տոկոսով: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՍՍՌՄ Շինբանկի հիմնարկները շինարարական կազմակերպություններին աշխատավարձի համար միջոցներ են բաց թողնում ոչ թե ուղղակի համամասնությամբ, այլ որոշակի ճշտող գործակցով:

Մեր օրինակում աշխատավարձի պլանային ֆոնդը, հաշվի առնելով պլանի գերսկստարումը 4 տոկոսով և ճշտող գործակիցը 0,93 կավելանա 3,72 տոկոսով ($4 \times 0,93$), կամ 21 հազար ռուբլով ($3,72$ տոկոս 566 հազ. ռուբլուց): Աշխատավարձի ճշտված պլանային ֆոնդի ($566 + 21 = 587$) համեմատումը փաստացիի (580 հազ. ռուբ.) հետ ցույց է տալիս, որ շինարարական կազմակերպությունն. ունի աշխատավարձի ֆոնդի հարաբերական տնտեսում 7 հազար ռուբլի (587 հազ—580 հազ.):

Աշխատավարձի ֆոնդի խնայողության ռեզերվների որոշման համար անհրաժեշտ է քննարկել հաշվետու ժամանակաշրջանում կատարված զանազան լրացուցիչ վճարումների նյութերը, անարտադրողական ծախսումների հետ կապված վճարումների տվյալները:

Հաշվառման տվյալների համաձայն, շինարարական կազմակերպությունում արտաժամյա աշխատանքի լրացուցիչ վճարումները կազմել են 5,2 հազար ռուբլի և պարապորդների համար վճարումները՝ 2,5 հազար ռուբլի: Այդ ծախսերը անարտադրողական են, ուստի վճարված գումարը (7,7 հազար ռուբլի) չպետք է հաշվի առնվի հետևյալ տարվա աշխատավարձի պլանային ֆոնդի որոշման ժամանակ:

Աշխատանքի պլանի վերլուծության եզրափակիչ փուլը աշխատանքի արտադրողականության և միջին աշխատավարձի աճման տեմպերի հարաբերակցության ուսումնասիրությունն է:

Քննարկենք համապատասխան տվյալները շինարարական կազմակերպության հաշվետվության օրինակի վրա:

	Տոկոսներով	
	պլանի նկատմամբ	անցյալ տարվա նկատմամբ
Մեկ աշխատողի միջին տարեկան արտադրանքը	101	102
Մեկ աշխատողի միջին տարեկան աշխատավարձը	99	101

Քերված տվյալներից երևում էր, որ աշխատանքի արտադրողականության աճը որոշ չափով գերազանցում է միջին աշխատավարձի աճից:

Շինարարական կազմակերպության կողմից աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի պլանի կատարումը վճռական ազդեցություն է գործում շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի մակարդակի և շինարարական կազմակերպությունների շահավետության վրա:

7. ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնարժեքի վերլուծության ժամանակ ստուգվում է շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման պլանային առաջադրանքների կատարումը, ամբողջությամբ վերցրած կապալային կազմակերպության, սուսանձին շինարարական օբյեկտների գծով ու ծախսումները հողվածներով:

Հատուկ ուշադրություն է դարձվում շինֆինպլանի համապատասխան բաժիններում նախատեսված ինքնարժեքի իջեցման միջոցառումների կատարման ստուգմանը՝ շինարարական արտադրության շահութաբերության հետագա բարձրացման ռեզերվներ հայտարարելու նպատակով:

Ինքնարժեքի իջեցման առաջադրանքի կատարման ստուգումը: Ինքնարժեքի պլանի կատարման վերլուծությունը սովորաբար սկսում են շինմոնտաժային աշխատանքների պլան-

նային և փաստացի ինքնարժեքը բնութագրող ցուցանիշների ուսումնասիրությունից: Այնուհետև քննում են ծախսումների հոդվածները, որոնք ցույց են տալիս, թե ինքնարժեքի տրվյալ մակարդակն ինչպես է ստացվել:

Բերենք շինարարական կազմակերպության կողմից շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքի կատարման մի օրինակ (հազ. ռուբլիներով)․

Ցուցանիշներ	Կատարված աշխատանքների ծավալը (հազ. ռուբ․)			
	Նախահաշվային արժեքով (1955 թ. հունիսի 1-ի գններով)	պլանային ինքնարժեքով	փաստացի ինքնարժեքով	նախահաշվային արժեքից դուրս վճարվող ծախսեր (փոխհատուցումներ, արտոնություններ) ¹
Ընդամենը .	2710	2614	2574	28
Այդ թվում՝				
շինարարական աշխատանքներ	2678	2583	2546	28
սարքավորման մոնտաժի աշխատանքներ	32	31	28	—

Բերված տվյալներից երևում է, որ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման պլանային առաջադրանքը գերակատարված է:

Շինմոնտաժային աշխատանքների 2614 հազ. ռուբլի պլանային ինքնարժեքի դեպքում փաստացի ինքնարժեքը կազմել է 2574 հազար ռուբլի:

¹ Աշխատավարձի լրացուցիչ վճարումները և աշխատանքների հատուկ պայմաններից ելնող և նախահաշվային գնահատումների մեջ հաշվի չառնելով ալ ծախսերը պատվիրատուները վճարում են կապալային կազմակերպություններին կատարված աշխատանքների նախահաշվային արժեքից դուրս: Այս դեպքում փոխհատուցումներ մտնում են շինմոնտաժային աշխատանքների պլանային ինքնարժեքի մեջ:

Հետևաբար, ինքնարժեքի իջեցումից ստացված պլանային տնտեսումը հավասար է 40 հազար ռուբլու (2614 հազ.—2574 հազ.):

Ամբողջ շինարարական կազմակերպության շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքի կատարումը դեռ ոչ բոլոր դեպքերում է նշանակում, որ նա կատարվել է բոլոր օբյեկտների գծով: Ընդհանուր տվյալների քննարկումից հետո նպատակահարմար է քննարկել շինարարության առանձին օբյեկտների աշխատանքների ինքնարժեքի իջեցման տվյալները:

Առանձին օբյեկտների շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցումը տվյալ օրինակում բնութագրվում է հետևյալ տվյալներով.

Օբյեկտները	Ինքնարժեքի արտապլանային իջեցում (—) թանկացում (+) (հազար ռուբլիներով)
Ընդամենը ըստ շինարարական կազմակերպության	40
Այդ թվում՝	
Շինարարական աշխատանքների գծով	— 37
Որից՝	
մեխանիկական հավաքման ցեխում	+ 9
ձուլարանում	+ 3
Սարքավորման մոնտաժի գծով	— 3

Աղյուսակից երևում է, որ ամբողջ կապալային կազմակերպության շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իջեցման առաջադրանքի գերակատարման պայմաններում առանձին օբյեկտների շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքը պլանայինից բարձր է: Այսպես, մեխանիկական հավաքման, ձուլման ցեխերի գծով պլանային ինքնարժեքի դիմաց թանկացում է թույլ տրվել 12 հազ. ռուբլով: Այդ թանկացումը ծածկված է այլ օբյեկտներում ձեռք բերված ինքնարժեքի արտապլանային իջեցման միջոցով:

Մեխանիկական հավաքման և ձուլման ցեխերի շինարարության ինքնարժեքը պլանավորված մակարդակին հասցնելու դեպքում կապալային

կազմակերպությունը հնարավորություն կունենար արտապլանային տնտեսում ունենալ 52 հազար ուրբու շափով (40 հազ. + 12 հազ.):

Կատարված աշխատանքների ինքնարժեքի վերլուծությունը ըստ ծախսումների առանձին հոդվածների: Կատարված աշխատանքների ինքնարժեքի պլանն ամբողջությամբ հաջող կատարման դեպքում առանձին հոդվածների գծով կարող է գերաժախս թույլ տրվել, կամ տնտեսում ձեռք բերվել, որոնց հայտաբերումը մեծ նշանակություն ունի ինքնարժեքի հետագա իջեցման ռեզերվներ գտնելու համար:

Առանձին հոդվածներով ծախսումների վերլուծության ժամանակ ուսումնասիրվում են այն գործոնները, որոնց շնորհիվ ձեռք է բերվել տնտեսում, պարզվում են թույլ տրված գերաժախսի պատճառները, իսկ անհրաժեշտության դեպքերում՝ նաև մեղավորները: Դրա համար օգտագործվում են ընթացիկ հաշվառման և օպերատիվ պլանավորման տրվյալները:

Քննարկենք մեր կողմից վերլուծվող հաշվետվության տվյալները (հազ. ուրբիներով).

Ծախսումների անվանումը	Պլանային ինքնարժեքը	Փաստացի ինքնարժեքը	Տնտեսում	
			(-)	(+)
1. Ուղղակի ծախսումներ				
նյութեր	1684	1681	—3	
բանվորների հիմնական աշխատավարձ	342	334	—8	
մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսեր	182	194	+12	
այլ ուղղակի ծախսումներ	46	69	+23	
Ընդամենը ուղղակի ծախսումներ	2254	2278	+24	
Ք. Վերադիր ծախսեր	360	296	—64	
Ամբողջ ծախսումները	2614	2574	—40	

Աղյուսակից երևում է, որ որոշ հոդվածների գծով խնայողությունը կազմել է 75 հազար ուրբի: Սակայն կատարված աշխատանքների ինքնար-

ժեքի ընդհանուր իշեցումը պլանի համեմատ կազմել է ընդամենը 40 հազ. ուրլի: Այդ բացատրվում է նրանով, որ մի շարք հողվածներով 35 հազ. ուրլի ընդհանուր գումարով գերածախս է թույլ տրվել: Այժմ քըն-նարկենք վերլուծության կարգը ըստ ծախսերի հողվածների: \

Մախաված նյութերի արժեքը վերլուծվում է երեք ուղղու-թյուններով. նյութերի հայթայթման ինքնարժեքի շեղումը հաստատված պլանա-հաշվարկային (կամ նախահաշվային) գներից, նախագծված նյութերի և կոնստրուկցիաների փոխա-րինումը ուրիշներով և նյութերի ծախսի սահմանված նորմա-ներից շեղումը:

Նյութերի հայթայթման ինքնարժեքի շեղումները հաս-տատված պլանա-հաշվարկային գներից հայտարերվում են հաշվառման տվյալներով, պլանա-հաշվարկային գներով նյութերի արժեքը համեմատելով մատակարարողների հա-շիվներով նշված նրանց փաստացի արժեքի հետ, ավելացնե-լով տրանսպորտային ու մթերա-պահեստային ծախսերը: Փաստացի ինքնարժեքի գերազանցումը պլանա-հաշվարկա-յին գների նկատմամբ ամենից հաճախ տեղի է ունենում նյութեր և կոնստրուկցիաներ մատակարարելու և պահպանե-լու, սահմանված պայմանները խախտելու, տեղական նյու-թերն ավելի հեռավոր տեղերից ստանալու, տեղափոխման պակաս խնայողական ձևի կիրառման, նյութերի ընդունու-մը վատ կազմակերպելու, ավտոտրանսպորտի վրա կատար-ված գերածախսի, սեփական օժանդակ արտադրությունների արտադրանքի ու ծառայությունների արժեքը բարձրացնելու պատճառով և այլն:

Քիչ շին դեպքերը, երբ շինարարական կազմակերպու-թյուններն ավելի թանկարժեք նյութեր են ստանում, քան նա-խատեսված է պլանում կամ ստանում են ավելի հեռավոր շրջաններից: Այդ պատճառով էլ վերլուծության ժամանակ պարզում են, թե նյութերի փոխարինումն ինչ շահով է ազ-դել շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի վրա:

Նյութերի ծախսման շեղումների հայտարհրման համար համեմատվում է փաստացի ծախսը պլանային նորմաների հետ, որոնք հաշվի են առնում շինֆինսլանը կազմելու ժա-

մանակ մշակված կազմակերպական-տնտեսական միջոցա-
ռումների իրագործման շնորհիվ ստացված նյութերի ծախսե-
րի իջեցումը: Այսպիսի համեմատություն է կատարվում նաև
նյութերի ընդհանուր խնայողության առկայության դեպքում,
քանի որ այդ դեպքում կարող են տեղի ունենալ առանձին
նյութերի շուշյ ծախսելու փաստեր:

Մեծ նշանակություն ունի շինարարական կազմակերպու-
թյան հաշվեկշռի մեջ գտնվող օժանդակ ձեռնարկությունների
պատրաստած արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը:
Ինչքան բարձր է նրանց պատրաստած արտադրանքի ինք-
նարժեքը, այնքան էլ բարձր է շինմոնտաժային աշխատանք-
ների փաստացի ինքնարժեքը: Ուստի շինմոնտաժային աշ-
խատանքների ինքնարժեքի վերլուծության ժամանակ պար-
զում են, թե ինչպես է անդրադարձել նրա վրա օժանդակ
ձեռնարկությունների արտադրանքի փաստացի ինքնարժեքի
շեղումը պլանային ու նախահաշվային գներից, օգտագործե-
լով այդ նպատակի համար հաշվետու կալկուլացիաները:

Աշխատանքի պլանի վերլուծության ժամանակ քննարկվեց
աշխատավարձի ֆոնդի օգտագործման բացարձակ և հարա-
բերական արդյունքների որոշման մեթոդիկան: Այդ տվյալ-
ները ստացվել են շինմոնտաժային աշխատանքներում և կա-
ռույցի այլ արտադրություններում ու տնտեսություններում
զբաղված աշխատողների աշխատավարձի ընդհանուր ֆոնդի
գծով:

Քննարկենք հիմնական արտադրության մեջ շինարարա-
կան և մոնտաժային աշխատանքների կատարմամբ զբաղված
բանվորների հիմնական աշխատավարձից շեղումների սղդե-
ցությունը շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի
վրա:

Մեր օրինակում բանվորների հիմնական աշխատավարձի փաստացի
զումարը պլանով նախատեսված գումարից ցածր է 8 հազար ռուբլով, կա՛մ
2,3 տոկոսով: Չնայած դրան, շինարարական կազմակերպությունում կա-
րող են լինել աշխատանքի անարտադրողական ծախսումներ և դրա հետ
կապված աշխատավարձի գերվճարումներ, որոնք հայտաբերվում են վեր-
լուծության ընթացքում:

Քանվորների աշխատավարձը մեծ չափով կախված է շինմոնտաժային աշխատանքների մեքենայացման մակարդակից: Որպեսզի պարզենք, թե քանվորների աշխատավարձի ֆոնդի ծախսման վրա ինչպիսի ազդեցություն է ունեցել աշխատատար պրոցեսների մեքենայացման առաջադրանքի թե-րակատարումը, անհրաժեշտ է որոշել աշխատանքների այն քանակը, որ մեքենայացված եղանակի փոխարեն կատարվի է ձեռքով՝ և որոշել դրանից առաջացած աշխատավարձի ֆոնդի գերածախսի գումարը:

Քննարկենք այդպիսի հաշվարկի օրինակ.

Ց ու ց ա ն ի շ ն ե ր	Հողային աշխատանքներ			Ը ն դ ր ա մ ն ք
	հողի մշակումը և շեղում էքսկավատորով	հիմքի փորումը և փորումը ձեռքով	հիմքի փորումը	
1. Քանակը (խառ մ)				
ա) ըստ պլանի .	8400	900		9300
բ) փաստացի	6600	2700		9300
2. Աշխատավարձը (ելնելով միավորի գնահատումներով նախատեսված աշխատավարձի չափերից)				
ա) աշխատանքի միավորի համար (կոպեկներով) .	15	90		—
բ) աշխատանքների պլանային ծավալի համար (հազ. ուր.) .	1260	810		2070
գ) փաստացի կատարված աշխատանքների ծավալի համար (հազ. ուր.) .	990	2430		3420

Ինչպես երևում է աղյուսակից, հողային աշխատանքների սահմանված մեքենայացման պլանը չկատարելու և նրանք մասնակիորեն ձեռքով կատարելու հետևանքով թույլ է տրված աշխատավարձի ֆոնդի գերածախս 1350 ուրլի գումարով (3420—2070):

Աշխատավարձի ֆոնդի խնայողութեան ուղղութիւններէ հայտարարման համար կատարվում է նրա հաշվման, սահմանված հաշվարկային պայմանների պահպանման, աշխատավարձի լրացուցիչ վճարումների և արտոնյալ գործակիցների ճշտութեան ստուգում:

Շինարարական մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի վերլուծութեան ժամանակ պետք է հաշվի առնել, որ ծախսերի այս հոդվածով թույլ տրված գերաժխտը կարող է լինել աշխատանքների մեքենայացման պլանավորվածից ավելի բարձր մակարդակի հետևանք, կամ մեքենաների ու մեխանիզմների ոչ ռացիոնալ օգտագործման արդյունք:

Հետևաբար, այս հոդվածի ծախսերը քննարկելուց առաջ նպատակահարմար է քննարկել աշխատանքների մեքենայացման պլանի կատարումը: Պլանի համեմատ մեքենայացված աշխատանքների ծավալի զգալի ավելացման դեպքում անհրաժեշտ է ճշտումներ մտցնել շինարարական մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի պլանային գումարի մեջ:

Մեր օրինակում մեքենաների կիրառմամբ կատարված աշխատանքների ընդհանուր ծավալը շնչին չափով է գերազանցում պլանավորված մակարդակը, իսկ առանձին, ավելի աշխատատար պրոցեսներում (հողային աշխատանքներ) աշխատանքների մեքենայացման պլանը չի կատարված:

Շինարարական կազմակերպութեան շինֆինպլանով սահմանված էր, որ հողային աշխատանքների ընդհանուր ծավալից պետք է մեքենայացված եղանակով կատարվեր 92 տոկոսը, այդ թվում կոմպլեքսային-մեքենայացված եղանակով՝ 79 տոկոսը: Փաստորեն մեքենայացված եղանակով հողային աշխատանքներ են կատարված 86 տոկոս, այդ թվում՝ կոմպլեքսային մեքենայացված եղանակով՝ 75 տոկոս: Զէր կատարվել նաև աշխատանքների մի քանի այլ տեսակների պլանը: Հետևաբար, «մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսեր» հոդվածով գերաժխտը աշխատանքների մեքենայացման պլանի գերակատարման հետ չի կապված: Անհրաժեշտ է քննարկել մեքենաների ու մեխանիզմների օգտագործումն ըստ երանց աշխատանքի ժամանակի և արտադրողականութեան, ինչպես նաև վերլուծել նրանց շահագործման ծախսերը: Վերլուծությունից բխում է, որ անհրաժեշտ է միջոցառումներ մշակել աշխատանքները կազմակերպելու և մեքենաների ու մեխանիզմների օգտագործումը բարելավելու համար:

Վերադիր ծախսերը վերլուծելու ժամանակ շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքն իջեցնելու ռեզերվները կարող են հայտաբերվել վերադիր ծախսերի պլանային մեծության որոշման ճշտությունը ստուգելու և փաստացի ծախսերը նրա հետ բաղդատելու միջոցով:

Վերադիր ծախսերի վերլուծումն ամենից առաջ պետք է ցույց տա, թե շինմոնտաժային աշխատանքների գերակատարումը ինչ չափով է անդրադարձել ինքնարժեքի իջեցման վրա: Դրա համար անհրաժեշտ է գիտենալ վերադիր ծախսերի նախահաշվի մեջ պայմանականորեն կայուն ծախսերի տեսակարար կշիռը: Դա պարզվում է այն հոդվածների ծախսումները գումարելու միջոցով, որոնք կախված չեն շինմոնտաժային աշխատանքների ծրագրի կատարման աստիճանից:

Շինմոնտաժային աշխատանքների պլանի գերակատարման շնորհիվ ստացված տնտեսման մեծությունը հաշվելու համար մշտական ծախսերի պլանային գումարը բաժանում են պլանի կատարման տոկոսի վրա և բազմապատկում են 100-ով: Այսպիսով հաշվվում է պլանային ծախսերի գումարը, վերահաշված կատարված աշխատանքների ծավալի համար: Այս գումարի համեմատությունը վերադիր ծախսերի պլանային մեծության հետ ցույց կտա պլանի գերակատարման հետևանքով ստացված վերադիր ծախսերի խնայողության չափը:

Վերևում ցույց տրված կապալային կազմակերպության վերադիր ծախսերի պայմանականորեն կայուն մասը կազմում է 172 հազ. ռուբլի: Այդ ծախսերի գումարը ելնելով շինմոնտաժային աշխատանքների պլանի կատարման մակարդակից (104 տոկոս) կկազմի

$$\frac{172 \times 100}{104} = 165 \text{ հազար ռուբլի:}$$

Հետևաբար, շինմոնտաժային աշխատանքների ծրագրի գերակատարման կապակցությամբ, վերադիր ծախսերի ինքնարժեքն իջեցված է 7 հազար ռուբլով (172—165):

Ինքնարժեքի՝ ըստ ծախսերի հոդվածների վերլուծությանից հայտնի է, որ պլանի համեմատ վերադիր ծախսերի ինքնարժեքը իջեցված է 64 հազար ռուբլով: Այս գումարից հանելով տնտեսումը, որն առաջացել է աշխատանքների ծրագրի գերակատարման կապակցությամբ վերադիր ծախ-

ուրի կրճատման հետևանքով (7 հազար ուրի), կարելի է վերլուծության նպատակների համար բավարար ճշտությամբ ասել, որ տնտեսումը մնացած մասում (57 հազար ուրի) գոյացել է պլանի համեմատ վերադիր ծախսերի բացարձակ գումարի իջեցման շնորհիվ:

Նույն կարգով է կատարվում նաև վերադիր ծախսերի վերլուծությունը շինմոնտաժային աշխատանքների պլանը չկատարելու դեպքում: Այդ դեպքում վերլուծությունը ցույց կտա, թե պլանի թերակատարումը ինչ չափով է ազդել վերադիր ծախսերի բարձրացման և հետևաբար շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի թանկացման վրա:

Մեծ նշանակություն ունի առանձին հողվածներով վերադիր ծախսերի նախահաշվի կատարման ստուգումը: Արտադրական ծրանգրի կատարումից կախված ծախսերի վերլուծության ժամանակ նախահաշվում նախատեսված գումարը ճշտվում է շինմոնտաժային աշխատանքների պլանի կատարման տոկոսով:

Ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում այն հողվածների վերլուծությանը, որոնցով հաշվի են առնվում անարտադրողական ծախսերը (տուգանքները, տույժերը, պարապուրդների վճարումները և այլն): Անարտադրողական ծախսերը ինչպես հայտնի է չեն պլանավորվում և դրանց գումարը ամբողջովին գերածախս է հաշվվում:

Ստուգման ընթացքում կարևոր է նաև պարզել, թե ինչպես են կատարվում պարտիայի և կառավարության ցուցումները ապարատի կատարելագործման և պարզեցման միջոցով վարչատնտեսական աշխատողների քանակի կրճատման մասին:

Շատ առաջավոր տրեսներում շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի վերլուծությունը կատարվում է ամեն ամիս: Բոլոր նախնական փաստաթղթերում՝ կարգագրերում, նյութերի պահանջագրերում, ավտոտրանսպորտի ուղեգրերում, մեխանիզմների համար հերթափոխային զեկույցներում ցույց են տրվում շինարարության օբյեկտները, իսկ ամեն մի օբյեկտի համար բոլոր ծախսերը հաշվի են առնվում ծախսերի հողվածներով: Ամիսը վերջանալուն պես, երբ ստացվել են շինմոնտաժային աշխատանքների կատարված ծավալի մասին տեղեկություններ, համապատաս-

Քսան օբյեկտի համար հաշվվում է նրանց նախահաշվային ու պլանային արժեքը ամբողջութամբ վերցրած և ըստ ծախսումների տարրերի, ինչպես նաև փաստացի ծախսերը: Վերլուծության արդյունքները քննարկվում են կողեկտիվի արտադրական խորհրդակցություններում: Ընդ որով էրեւան են բերվում լավ բրիգադները, որոնք նյութական, աշխատանքային և դրամական ռեսուրսները առավել ռացիոնալ կերպով են օգտագործում:

Այս փորձի արժանիքն այն է, որ ոչ միայն շինարարական կազմակերպության ղեկավարները, այլև աշխատողների լայն մասսաները գիտեն, թե ինչքան են նստում այս կամ այն աշխատանքները, ինչ պետք է անել յրանց ինքնարժեքի հետագա իջեցման համար:

Շինարարական կազմակերպությունների շահութաբերության վերլուծությունը: Շինարարական կազմակերպությունների շահավետության վերլուծության ժամանակ առաջին հերթին ռեսուրսասիրվում է հանձնված աշխատանքների շահութաբերության պլանային առաջադրանքի կատարումը: Հանձնված աշխատանքների նախահաշվային արժեքով ծավալի բաղդատումը նրա փաստացի ինքնարժեքի հետ ցույց է տալիս շինմոնտաժային աշխատանքների հանձնումից ստացված շահույթի գումարը:

Մեր օրինակում հանձնված աշխատանքների ծավալը ըստ նախահաշվային արժեքի կազմեց 2710 հազ. ռուբլի, իսկ աշխատանքների փաստացի ինքնարժեքը (առանց նախահաշվային արժեքից դուրս ծածկվող ծախսերի) 2546 հազ ռուբլի, հետևաբար, կազմակերպությանը հանձնված աշխատանքներից շահույթ է ստացել 164 հազ. ռուբլի գումարով:

Աշխատանքների պլանային ծավալի 2610 հազար ռուբլի պլանային ինքնարժեքով նախատեսված էր շահույթ 119 հազ. ռուբլի: Այսպիսով գերպլանային շահույթը այն աշխատանքների դժով, որոնք հանձնված էին հաշվետու տարում, կազմեց տարեկան 45 հազ. ռուբլի (164 հազ.—119 հազ.): Այս շահույթն ստացվել է հանձնված աշխատանքների պլանի գերակատարման և ինքնարժեքի գերպլանային իջեցման հետևանքով:

Հանձնված աշխատանքների գերպլանային շահույթի ընդհանուր մեծության վրա էական ազդեցություն են գործում մինչև հաշվետու տարվա այդ աշխատանքների դժով եղած վնասները: Այդ վնասները գոյանում են ավելի հաճախ, դեռևս անցյալ տարիներում հանձնված օբյեկտների թերակառու-

ցումները վերացնելու հետ կապված ծախսումների հետևանքով: Ուստի, վերլուծության ժամանակ անհրաժեշտ է պարզել այդպիսի վնասների մեծությունը և դրանց գոյացման պատճառները:

Շինարարական կազմակերպությունների շահութաբերությունը կախված է ոչ միայն հանձնված աշխատանքների ինքնարժեքի իջեցումից, այլ նաև ֆինանսական-տնտեսական գործունեության մյուս կողմերի արդյունքներից, որոնք կարող են շինարարական կազմակերպությունների շահութաբերությունն զգալիորեն իջեցնել:

Այսպիսի դրություն գոյություն ունեւր այն կազմակերպությունում, որի շաշվետվությունը վերլուծվում է: Հաշվետվության մեջ օգուտների ու վնասների մասին հետևյալ տեղեկությունները կան (հազ. ուրլիներով).

Օգուտներ		Վնասներ	
Անվանում	գումար	Անվանում	գումար
Հաշվետու տարում հանձնված աշխատանքների օգուտը	164	Մինչև հաշվետու տարին հանձնված աշխատանքների վնասները .	9
		Նյութական արժեքների իրացման վնասները .	4
		Վնասներ՝ պարտքերի դուրսգրումից .	1
		Վնասներ տարերային աղետներից .	2
Ընդամենը օգուտներ	164	Ընդամենը վնասներ	16

Ինչպես երևում է բերված տվյալներից, շինարարական կազմակերպության օգուտի ընդհանուր գումարը պակասեց իրացումից դուրս վնասների պատճառով 164 հազար ուրլուց մինչև 148 հազ. ուրլ. (164—16):

Շինարարական կազմակերպությունը թույլ է տվել գերնորմատիվային և ոչ պետքական նյութերի կուտակում, որի հետևանքով ստիպված էր գրանք իրացնել: Նյութական արժեքների վաճառքն իրագործվում է միասնական մեծածախ գներով, առանց հաշվի առնելու նյութերը տեղափոխելու

և պահպանելու համար կազմակերպության կողմից կատարած ծախսերը: Մատակարարման գործի շկարզավորվածությունը, ոչ պետքական և ավելորդ նյութերի գնումը և հետո նրանց վաճառքը հասցրին վնասների՝ 4 հազար ռուբլի գումարով: Վերլուծության ընթացքում անհրաժեշտ է քննարկել նյութերը գնելու և դրանք պահելու դրույթյուն ունեցող կարգը և միջոցառումներ մշակել աշխատանքի այդ տեղամասը կարգավորելու համար:

Գեբիտորական պարտքերի դուրսգրումից գոյացած վնասների առկայությունը (1 հազ. ռուբլի) վկայում է կապալալին կազմակերպության մոտ ֆինանսական գործի բացերի մասին, որի հետևանքով պարտքի գանձման ևահմանված ժամկետները բաց էին թողնված և կազմակերպությունը վնասներ կրեց:

Այսպիսով, կապալալին կազմակերպության տնտեսական գործունեության վերջնական արդյունքը բնութագրող հաշվեկշռային օգուտը կազմում է 148 հազար ռուբլի, իսկ գերպլանային օգուտը՝ 29 հազ. ռուբլի (148—119):

Տվյալ շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծությունը ցույց տվեց, որ նա իր շահութաբերությունը բարձրացնելու զգալի ռեզերվներ ունի, ամենից առաջ շինմոնտաժային աշխատանքների կատարվող ծավալն ավելացնելու, դրանց ինքնարժեքն իջեցնելու և անարտադրողական կորուստները վերացնելու հաշվին:

8. ԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կառույցի ֆինանսական դրության վերլուծությունն իրագործվում է կապիտալ ներդրումների հաշվապահական հաշվեկշռի տվյալների հիման վրա: Հաշվեկշռում ցույց են տրվում կապիտալ շինարարության համար ստացված և կառուցողի տրամադրության տակ գտնվող միջոցների աղբյուրներն (ակտիվ) ու տեղաբաշխումը (պասսիվ):

Վերլուծության ժամանակ փաստացի ֆինանսավորման գումարը բաղդատվում է սլանի հետ և ուսումնասիրվում է ստացված գումարների օգտագործումը:

Կապիտալ շինարարության համար օգտագործված միջոցների աղբյուրները ցույց են տրվում հաշվեկշռի պասսիվում

«Կապիտալ շինարարության ֆինանսավորումը» բաժնուձեռնանց մեծությունը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում, հաշվեկշռում հաշվի առնված ֆինանսավորման գումարից, հաշվետու ժամանակաշրջանի սկզբում հաշվի առնված համապատասխան գումարներ հանելու միջոցով:

Օրինակ, կառուցողի հաշվեկշռի պասսիվում ցույց են տված հետևյալ տվյալները (հազար ուրբիներով).

	Տարվա սկզբին	Տարվա վերջին
Կապիտալ շինարարության ֆինանսավորում		
ա) պետական պլանով նախատեսված	3342	14474
բ) հատուկ աղբյուրների հաշվին (պետական պլանից դուրս)	393	553
-Ընդամենը՝	3735	15027

Այս տվյալներից երևում է, որ տարվա ընթացքում կապիտալ շինարարության համար կառուցողի կողմից ստացված է 11292 հազ. ուրբի (15027 հազ. 3735 հազ.), այդ թվում պլանային կապիտալ շինարարության ֆինանսավորումը կազմել է 11132 հազ. ուրբի (14474 հազ.— 3342 հազ.):

Փաստորեն ստացված միջոցների գումարը բաղդատվում է ֆինանսավորման պլանի հետ (մեր օրինակում՝ 11,5 մլն. ուրբ.): Բերված տվյալներից երևում է, որ կառույցը բաց թողնված գումարները լրիվ չի օգտագործել, դրանց զգալի մասը մնացել են չօգտագործված (11500 հազ.— 11132 հազ. = 368 հազ. ուրբի):

Կառույցները ֆինանսավորվում են ըստ պլանի կատարմանը: Ուստի չօգտագործված միջոցների առկայությունը, որպես կանոն վկայում է շինարարության ծրագիրը չկատարելու մասին¹: Եթե ֆինանսավորումը գերազանցում է հաշվետու ժամանակաշրջանի կապիտալ ներդրումների ծավալից, ապա պետք է պարզել այդ տարբերությունը պատճառները:

¹ Որոշ դեպքերում չօգտագործված միջոցների մնացորդը հնարավոր է կառույցի կողմից ներքին ռեսուրսների մոբիլիզացման հետևանքով, որը դրական գործոն է:

Ընդունենք, որ վերոհիշյալ կառույցի հաշվեկշռի ակտիվում ավարտված աշխատանքների և անավարտ շինարարության ծախսումները տարվա վերջում կազմել են 13,8 մլն. ռուբլի, իսկ տարվա սկզբում դրանք կազմում էին 2,8 մլն ռուբլի: Այդ նշանակում է, որ կապիտալ ներդրումների տարեկան ծավալը կազմել է 11 մլն. ռուբլի (13,8 մլն.— 2,8⁸ մլն): Համեմատելով այդ ստացված 11,3 մլն. ռուբլի միջոցների գումարի հետ, կարելի է հետևություն անել, որ 0,3 մլն. ռուբլին ուղղվել է նյութական արժեքների պաշարների լրացմանը պատվիրատուի մոտ, այդ թվում, հնարավոր է և գերնորմատիվային, կամ հաշվարկների մեջ գտնվող միջոցների ավելացման համար:

Վերլուծության կարևոր փուլն է անավարտ շինարարության վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունը տարվա սկզբի համապատասխան տվյալների հետ բաղդատումով, ինչպես ամբողջությամբ, այնպես և առանձին շինարարական օբյեկտների գծով, ինչպես նաև միջոցների շրջապտույտի ուսումնասիրությունը շինարարության մեջ:

Հաշվեկշռի տվյալներով, անավարտ շինարարության ծախսերը կազմել են (հազ. ռուբլիներով):

Ցուցանիշներ	Տարվա վերջում	Տարվա սկզբին	Անավարտ շինարարության ծավալի փոփոխությունը պլանի համեմատ	
			փաստացի	ըստ պլանի
Ընդամենը՝	2710	6620	+3910	+3400
Այդ թվում՝				
ա) անավարտ աշխատանքներ	2250	6160	+3910	+3400
բ) կոնսերվացրած և դադարեցրած շինարարություն	460	460	—	—

Աղյուսակը ցույց է տալիս, որ կապիտալ ներդրումների 11 մլն. ռուբլի գումարով ընդհանուր ծավալից, ավարտված աշխատանքները կազմել է միայն 7,1 մլն. ռուբլի, իսկ մնացած 3,9 մլն. ռուբլին ուղղվել է անավարտ շինարարությանը: Մինչդեռ պլանով նախատեսված էր գործարկել 7,6 մլն. ռուբլու հիմնական ֆոնդեր, իսկ անավարտ շինարարության ծախսումներն ավելացնել միայն 3,4 մլն. ռուբլով: Հետևաբար, հիմնական

Ֆոնդերի գործարկման առաջադրանքը 5,1 մլն. ռուբլի գումարով (39,1—34) չկատարելու հետևանքով աճել է անավարտ շինարարությունը:

Բացի դրանից, կառույցում կան կոնսերվացրած և շինարարության կողմից դադարեցված օբյեկտներ, որոնց ծախսումները կազմել են 460 հազ. ռուբլի: Անհրաժեշտ է վերլուծության ժամանակ պարզել այն հանգամանքները, որոնց դրդամար սկսվել է հետագայում դադարեցված շինարարությունը, կոնսերվացիայի մասին ընդունված որոշումների հիմնավորվածությունը: Պետք է նկատի առնել, որ մի շարք դեպքերում կոնսերվացված և դադարեցված շինարարության ծախսերը հաշվեկշիռից դուրս են գրվում որպես ուղղակի կորուստներ: Ուստի պետք է հատուկ ուշադրություն դարձվի այն ծախսումների վերլուծությանը, որոնք դուրս են գրված որպես կորուստներ: Դադարեցված շինարարության ծախսումների դուրս գրումը վկայում է այն մասին, որ կապիտալ ներդրումները ըստ էության ոչ մի տնտեսական արդյունք չեն տվել:

Ամեն մի օբյեկտի գծով, որը գտնվում է անավարտ շինարարության մեջ, ստուգվում են աշխատանքների կատարման ժամկետները, նրա կառուցման սկիզբը և հայտնաբերվում են նրա գործարկման ձգձգման պատճառները:

Հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն առանձին կառույցի, այլև ամբողջ տնտեսական շրջանի կամ ճյուղի անավարտ շինարարությանը միջոցներ հատկացնելու, այսինքն՝ կապիտալ շինարարության մեջ միջոցների պտույտի ժամկետների տվյալները:

Քեդենք ժողտնտխորհներից մեկի՝ անավարտ շինարարության մեջ միջոցների պտույտի միջին ժամկետի որոշման օրինակ:

Պլանով նախատեսված է հիմնական ֆոնդերի գործարկում տարեկան 184 մլն. ռուբլի գումարով, փաստորեն գործարկված են 217 մլն. ռուբլու հիմնական ֆոնդեր, կամ 33 մլն. ռուբ. ավելի:

Տարվա սկզբին ժողտնտխորհի անավարտ շինարարության ծավալը կազմում էր 127 մլն. ռուբ. տարվա վերջում ըստ պլանի՝ 140 մլն. ռուբլի և փաստորեն՝ 107 մլն. ռուբլի: Հետևաբար, անավարտ շինարարության միջին տարեկան մնացորդը ըստ պլանի կազմեց 133,5 մլն. ռուբլի

$$\frac{127 + 140}{2} \text{ իսկ փաստորեն՝ } 117 \text{ մլն. ռուբլի } \frac{127 + 107}{2}$$

Անազարտ շինարարությանը հատկացրած միջոցների պտույտի միջին ժամկետի որոշման համար անհրաժեշտ է նրա մեծությունը (միջին հաշվով տարվա ընթացքում) բաղդատել գործարկված հիմնական ֆոնդերի գումարի հետ:

Տվյալ օրինակում անավարտ շինարարություն մեջ միջոցների պտույտի միջին ժամկետը կազմում է.

$$\text{ըստ պլանի} \quad \frac{133,5}{184} = 0,73 \text{ տարի, կամ } 8,7 \text{ ամիս.}$$

$$\text{փաստացի} \quad \frac{117}{217} = 0,54 \text{ տարի, կամ } 6,5 \text{ ամիս:}$$

Հաշվարկից երևում է, որ ավարտված օբյեկտների գործարկման պլանի գերակատարման կապակցությամբ անավարտ շինարարության մեջ միջոցների պտույտի միջին ժամկետը կրճատվեց ավելի քան երկու ամսով:

Վերլուծության ընթացքում ստուգվում է ներքին ռեսուրսների մոբիլիզացման առաջադրանքի կատարումը: Ընդ որում, հատուկ ուշադրություն է դարձվում պատվիրատուների հետ հաշվարկների դրությունը, ինչպես նաև նյութական արժեքների փաստացի մնացորդների և ամենից առաջ շտեղակայված սարքավորման պաշարների տվյալներն ուսումնասիրությանը: Ունեցած պաշարների գերազանցումը նորմատիվացինից վկայում է այն մասին, որ ներքին ռեսուրսների մոբիլիզացման սահմանված առաջադրանքը չի կատարվել:

Կապալային կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը կատարվում է նրա հաշվապահական հաշվեկշիռների և այլ հաշվետվական փաստաթղթերի տվյալներով: Վերլուծության ժամանակ հարցերի շրջանը և նրանց սյարզաբանման հետևողականությունը կարող են տարբեր լինել: Ֆինանսական դրությունը գնահատելու համար առավել կարևոր է քննարկել շրջանառու միջոցների առկայության և օգտագործման տվյալները:

Կապալային կազմակերպության նորմալ գործունեության համար անհրաժեշտ սեփական շրջանառու միջոցների նորմատիվների չափերը սահմանվում են ֆինանսական պլանով: Կապալային կազմակերպության տրամադրության տակ փաստացի եղած սեփական շրջանառու միջոցների հաշվումը կատարվում է հետևյալ կերպ: Հաշվեկշիռի պասսիվի «Ա» հոտովածի հանրագումարից, որն իր մեջ ամփոփում է կանոնադրական ֆոնդը, օգուտը և մի քանի այլ հոդվածներ հանվում է հաշվեկշիռի ակտիվի «Ա» հատվածի հանրագումարը (հիմ-

նական միջոցներ, արտաշրջանառու ակտիվներ և վնասներ):

Ընդամին, սեփական միջոցներին ավելացվում են կայուն պասսիվները (բանվորների և ծառայողների աշխատավարձի նորմալ պարտքը, սոցապահովագրման հատկացումները, առաջիկա ծախսերի ծածկման ռեզերվը և պարտքը մատակարարներին՝ ըստ ակցեպտված վճարման պահանջագրերի):

Եթե այնուհետև ստացված գումարը բաղդատենք սահմանված նորմատիվի ու տարվա սկզբին ունեցած գումարի հետ, կարելի է որոշել սեփական շրջանառու միջոցներով ապահովվածությունը (նորմատիվի հետ համեմատած) և պարզել, թե ինչպես է փոփոխվել սեփական և նրանց հավասարեցված շրջանառու միջոցների մնացորդը համապատասխան ժամանակաշրջանում:

Օրինակ, կապալային կազմակերպության տրամադրության տակ դրված բոլոր միջոցները (հիմնական և շրջանառու) տարվա սկզբին կազմել են 3283 հազ. ռուբլի, իսկ կայուն պասսիվների հետ միասին՝ 3343 հազ. ռուբլի: Այդ նույն ժամկետի համար հիմնական միջոցներն ու արտաշրջանառու ակտիվները հաշվվում էին 3211 հազ. ռուբլու շահով: Այսպիսով, տարվա սկզբին շինարարական կազմակերպությունն ուներ սեփական շրջանառու և դրանց հավասարեցված միջոցներ՝ 132 հազ. ռուբլու գումարով (3343 հազ.— 3211 հազ.):

Տարվա ընթացքում, աշխատանքների ծավալի ավելացման կապակցությամբ, շինարարական կազմակերպությունը լրացուցիչ շրջանառու միջոցներ ստացավ 50 հազ. ռուբլի գումարով: Այսպիսով, տարվա վերջին շինարարական կազմակերպությունը պետք է շրջանառու և դրանց հավասարեցված միջոցներ ունենար 182 հազ. ռուբլի, այսինքն՝ ավելի քան նա ուներ տարվա սկզբին: Սակայն կապալային կազմակերպությունը տարվա ընթացքում կատարված աշխատանքների գծով վնասներ թույլ տվեց 21 հազ. ռուբլի գումարով: Այդ պատճառով տարվա վերջին սեփական և դրանց հավասարեցված միջոցները կազմեցին 161 հազ. ռուբլի (182 հազ. + 50 հազ.— 21 հազ.):

Շինարարական կազմակերպության շրջանառու միջոցների վերլուծության ժամանակ հատկապես կարևոր է որոշել նրա նյութական ռեսուրսներով ապահովվածությունը և հայտարեբերել ապրանքա-նյութական արժեքների գերնորմատիվային պաշարները:

Հաշվեկշռի տվյալներով ապրանքա-նյութական արժեքների պաշարների տարվա վերջում կազմում էին (հազ. ուրվխներով).

	Նորմատիվներ	Փանտացի պաշարներ
1. Փոքրարժեք և արագամաշ առարկաներ	76	88
2. Այլ նյութեր	61	74
3. Վառելիք	12	13
Ընդամենը	149	175

Աղյուսակից երևում է, որ ամբողջությամբ վերցրած կապալային կազմակերպությունը տարվա վերջում պետք է ունենար նյութական արժեքների պաշար 149 հազ. ուրվի ընդհանուր գումարով: Փաստորեն այն կազմեց 175 հազ. ուրվի, կամ 26 հազ. ուրվով ավելի: Տվյալ դեպքում նպատակահարմար է հրաժարվել այն նյութերը գնելուց, որոնք չափից ավելի կան, կամ վերաբաշխել (առաջին հերթին տնտեսական շրջանի ներսում) տվյալ ձեռնարկության համար ավելորդ նյութական ռեսուրսները:

Կապալային շինարարական կազմակերպություններում սեփական շրջանառու միջոցները, որպես կանոն, նախատեսված են արտադրական պաշարների միայն մի մասի կազմավորման համար: Իսկ հիմնական շինանյութերի, կոնստրուկցիաների, դետալների պաշարները և շինմոնտաժային աշխատանքների անավարտ արտադրության ծախսերը ներկայումս գործող կարգի հսկային, որպես կանոն, ծածկվում են պատվիրատուներից ստացվող կանխավճարների հաշվին: Ուստի, շրջանառու միջոցների օպտագործումը վերլուծելու ժամանակ անհրաժեշտ է քննարկել պատվիրատուից ստացված միջոցների մեծությունը և պատվիրատուների կանխավճարներով ծածկվող նյութական պաշարների ու արտադրության ծախսումների չափը: Պատվիրատուներից փաստորեն ստացված միջոցների և հղած նյութական պաշարների ու անավարտ շինարարական արտադրության ծախսումների տրվյալները բաղադրում են սահմանված նորմատիվների հետ:

Շրջանառու միջոցների շրջապտույտի վերլուծությունը: Շրջանառու միջոցների շրջապտույտը բնութագրվում է նրանց պտույտի արտադրությամբ և ակտիվությամբ՝ արտահայտված օ-

րերով: Շրջապտույտի հաշվարկման ժամանակ հարկավոր է գիտենալ շրջանառու միջոցների միջին մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, այսինքն՝ որոշել շրջանառության մեջ մասնակցող շրջանառու միջոցների չափը:

Նորմավորվող միջոցների միջին մնացորդի որոշումը կախված է հաշվետու ժամանակաշրջանի տևողությունից: Շրջապտույտը մեկ ամսվա համար հաշվելիս միջին մնացորդը որոշվում է ամսվա սկզբի և վերջի մնացորդի գումարը երկուսի բաժանելով: Միջոցների շրջապտույտը եռամսյակի համար որոշելիս շրջանառու միջոցների մնացորդը որոշվում է որպես երեք միջին ամսական մնացորդների միջին մեծություն: Նորմավորվող միջոցների միջին մնացորդը տարվա համար որոշվում է միջին եռամսյակային մնացորդներով:

Պտույտի արագությունը որոշելու համար անհրաժեշտ է կատարված շինմոնտաժային աշխատանքների հանձնումից ստացած մուտքը բաժանել վերևում ցույց տրված կարգով հաշված շրջանառու միջոցների միջին մնացորդների վրա:

Շրջանառու միջոցների մեկ պտույտի տևողությունը օրերով որոշվում է քննարկվող ժամանակամիջոցի¹ օրերի օրացույցային քանակը պտույտի արագության թվական մեծություն վրա բաժանելու միջոցով:

Ընթացքներ, որ ըստ պլանի շինմոնտաժային աշխատանքների տարեկան ծավալը կազմում է 4,6 մլն. ռուբլի, իսկ շրջանառու միջոցների միջին տարեկան մնացորդը. 0,5 մլն. ռուբլի: Հետևաբար, պտույտի արագությունը հավասար է 9-ի (4,6 : 0,5) իսկ պտույտի տևողությունը օրերով կկազմի 40 (360 : 9):

Վերլուծության ժամանակ անհրաժեշտ է նաև պարզել շրջանառու միջոցների շրջապտույտի արագացման (կամ դանդաղեցման) աստիճանը՝ անցած ժամանակաշրջանի և միջոցների շրջանառության արագացման պլանային առաջադրանքի հետ համեմատած:

¹ Ֆինանսական աշխատանքի պրակտիկայում շրջանառու միջոցների շրջապտույտի հաշվարկման ժամանակ ընդունված է տարին հաշվել 360 օր, եռամսյակը՝ 90 օր և ամիսը՝ 30 օր:

Եթե շրջանառու միջոցների շրջապտույտը արագացված է, ապա պետք է հաշվել այդ կապակցությունները շրջապտույտից ազատված գումարը: Իսկ եթե շրջապտույտը պլանի կամ անցյալ ժամանակաշրջանի համեմատ դանդաղել է, ապա որոշվում է շինարարական կազմակերպության շրջանառության միջոցներին լրացուցիչ հատկացված միջոցների գումարը: Շրջանառու միջոցների շրջապտույտի արագացման համար միջոցառումներ մշակելիս ուշադրություն է դարձվում կատարված շինմոնտաժային աշխատանքների ծավալի մեծացման, շինարարության ցիկլի տևողության կրճատման և գերնորմատիվային ու կապալային կազմակերպության համար ավելորդ արտադրական պաշարների վերացման վրա:

Վերլուծության էական մասն է հանդիսանում կապալային կազմակերպության վնասունակության և վնասողական կարգապահության քննարկումը: Կապալային կազմակերպության ֆինանսական դործունեության գնահատականը տրվում է նայած ֆինանսական օրգանների, բանկերի ու մատակարարների հետ ժամանակին հաշիվները փակելու նրա ունակությանը: Վնասումների ապահովման համար կապալային կազմակերպությունը պետք է ժամանակին միջոցներ ստանա պատվիրատուներից՝ կատարված աշխատանքների համար: Ուստի, ստուգվում է կապալային կազմակերպության կողմից իր պատվիրատուներին, կատարված աշխատանքների համար, հաշիվների ժամանակին ներկայացնելը և նրանց վճարումը, քննարկվում է դերիտորական և կրեդիտորական պարտքերի կազմը:

Կառույցների ու շինարարական կազմակերպությունների գործունեության բազմակողմանի տնտեսական վերլուծությունը և դրա հիման վրա մշակվող միջոցառումները, առաջավոր փորձի արմատավորման և հայտաբերված թիրուխյունների վերացման համար կօգնեն արագորեն շարժման մեջ դնելու շինարարության մեջ մեծ չափերով եղած ռեսուրսները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան

3

Գլուխ I. Շինարարությունը և նրա դերը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում

7

- | | |
|---|----|
| 1. Շինարարության դերը սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման գործում | 8 |
| <i>Շինարարությունը նյութական արտադրության ճյուղերից մեկն է</i> | 8 |
| <i>Շինարարական արտադրության առանձնահատկությունները</i> | 13 |
| <i>Շինարարության կազմակերպման ձևերը</i> | 18 |
| + <i>ՍՍՌՄ շինարարական ինդուստրիան և նրա զարգացումը</i> | 21 |
| <i>Մասնագիտացումը և կոոպերացումը շինարարության մեջ</i> | 25 |
| 2. Կապիտալ ներդրումները և դրանց կառուցվածքը | 30 |
| <i>Կապիտալ ներդրումների՝ և հիմնական ֆոնդերի աճը ՍՍՌՄ-ում</i> | 31 |
| <i>Կապիտալ ներդրումների հիմնական ուղղությունները</i> | 34 |
| <i>Կապիտալ ներդրումների կառուցվածքը</i> | 40 |
| 3. Շինարարության հետագա զարգացման մեծ ծրագիրը | 43 |
| <i>ՍՄԿՊ Ծրագիրը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման մասին</i> | 43 |
| <i>Շինարարական ծրագիրը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարում</i> | 47 |
| 4. Յոթնամյակը կարևոր էտապ է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում | 55 |
| <i>Յոթնամյա պլանի հիմնական խնդիրները</i> | 55 |
| <i>Յոթնամյա պլանի կատարման հաջողությունները</i> | 59 |

Գլուխ II. Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումը

60

- | | |
|---|----|
| 1. Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումը ժողովրդատնտեսական առաջնահերթ խնդիրն է | 62 |
| <i>ՍՄԿՊ XXII համագումարը կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման մասին</i> | 62 |
| <i>Կապիտալ ներդրումների արդյունավետության ցուցանիշները</i> | 65 |
| <i>Կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման հարցի լուծման հիմնական փուլերը</i> | 69 |
| 2. Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման ուղիները | 72 |
| <i>Արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխումը</i> | 72 |
| <i>Արտադրության կառուցվածքի բարելավումը</i> | 76 |

Նոր շինարարության և վերակառուցման հարաբերակցությունը	77
Առաջավոր տեխնոլոգիական պրոցեսների արժատավորումը	79
Կապիտալ ներդրումների և արտադրական ֆոնդերի կառուցվածքի կատարելագործումը	81
Շինարարության արագացումը	83
Գործող ֆոնդերի առավելագույն օգտագործումը	86
Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումը համաժողովրդական գործ է	88

Գ Լ ու խ III. Շինարարության կառավարման կազմակերպումը 91

1. Սոցիալիստական արտադրության կառավարման բնույթը և խնդիրները	92
Սոցիալիստական արտադրության կառավարման առանձնահատկությունները և առավելությունները	92
Շինարարության կառավարման կազմակերպական ձևերի կատարելագործումը	96
2. Սոցիալիստական արտադրության կառավարման լենինյան սկզբունքները և դրանց ստեղծագործական զարգացումը	100
Քաղաքական և տնտեսական ղեկավարման միասնությունը	100
Դեմոկրատական ցենտրալիզմը տնտեսության կառավարման մեջ	104
Տնտեսական օրգանների արտադրական մասնագիտացումը և տերիտորիալ տեղաբաշխումը	108
Միանձնյա ղեկավարությունը և արտադրության ղեկավարման գործում մասսաների մասնակցությունը	109
Նյութական և բարոյական շահագրգռվածությունը արտադրության զարգացման գործում	114
3. Շինարարության կառավարման նոր սիստեմը	117
Շինարարության կառավարման հիմնական օրգանները	117
ՍՍՌՄ շինարարական կազմակերպությունները, մինիստրություններն ու գերատեսչությունները	120
Շինարարության կառավարումը ժողտնտիտրհների սիստեմում	121
Ռեսպուբլիկական շինարարության մինիստրությունները	124
Տեղական սովետների շինարարական կազմակերպությունները	125
Կոորդինացման և պլանավորման խորհուրդները խոշոր տնտեսական շրջաններում	126
Պատվիրատուների ֆունկցիաները	128
4. Շինարարական կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքը	129
Շինարարական կազմակերպությունների խնդիրները և ձևերը	130

Շինարարական տրեստների ու վարչությունների կազմակերպական կառուցվածքը	134
Շինարարական արտադրության կառավարման կառուցվածքի կատարելագործման ուղիները	139
5. Պարտիական և արհմիութենական կազմակերպությունների դերն արտադրության կառավարման գործում	145
Աղմինխտրացիայի գործունեության պարտիական վերահսկողությունը	145
Արհմիութենական կոմիտեների դերն արտադրության կառավարման գործում	148
Մշտական գործող արտադրական խորհրդակցություններ	150

Գ Լ ու խ IV. Շինարարության պլանավորումը 153

1. Կապիտալ ներդրումների պլանավորման կազմակերպումը	
Պլանավորման հիմնական խնդիրները	153
Հեռանկարային և տարեկան պլաններ	156
Կապիտալ ներդրումների պլանավորումը	161
Կապիտալ ներդրումների պլանները մշակելու և հաստատելու կարգը	166
2. Կապիտալ շինաբարության տխտղոսային ցուցակները	171
Տխտղոսային ցուցակների նշանակությունը	171
Շինարարության տնտղության նորմանները	175
Կուտակվածքի նորմանները շինարարության մեջ	179
Տխտղոսային ցուցակները քննարկելու կարգը	182
Կառույցների տարեկան տխտղոսային ցուցակներն ըստ առանձին օբյեկտների և ծախսումների	183
3. Շինաբարական կազմակերպությունների գործունեության պլանավորումը	187
† Շինարարական ինդուստրիայի արտադրական ծրագիրը	187
Շինարարական կազմակերպությունների աշխատանքի պլանավորումը	192
Շինարարական կազմակերպությունների պլանները կազմելու հիմնական ելակետային տվյալները	194
Շինարարական կազմակերպությունների հեռանկարային պլանները	197
Շինարարական կազմակերպության շինֆինպլանը	198
Սկզբնական շինարարական կազմակերպության արտադրական ծրագիրը	202
Շինարարական կազմակերպության ռիթմիկ աշխատանքը	213
Շինարարական կազմակերպություններում օպերատիվ պլանավորումը	216

Գ լ ու խ V. Շինարարության նախագծումը և նախահաշվային գործը	219
1. Նախնագծումը և նրա նշանակությունը շինարարության համար	
<i>Նախագծի բովանդակությունը</i>	219
<i>Նախագծման ստադիաները</i>	223
<i>Նախագծման նորմաները</i>	228
2. Նախագծման բարելավումը շինարարության արժեքն իջեց- նելու և կապիտալ ներդրումների արդյունավետությունը բարձ- րացնելու կարևոր պայմանն է	231
<i>Պարտիայի և կառավարության միջոցառումները նախագծու- մը կատարելագործելու ասպարեզում</i>	231
<i>Շրջանային հատակագծման նախագծերը</i>	235
<i>Նախագծային լուծումների որակի բարձրացումը</i>	238
3. Տիպային նախագծում	244
<i>Տիպային նախագծերը և նրանց արդյունավետությունը</i>	245
<i>Շինարարության ունիֆիկացումը</i>	251
4. Նախահաշվային փաստաթղթերը կազմելու կարգը	254
<i>Շինարարության նախահաշվային արժեքը</i>	254
<i>Նախահաշվային փաստաթղթեր</i>	255
<i>Նախահաշվային նորմաներ և գնահատումներ</i>	260
5. Նախագծերի և նախահաշիվների հաստատման կարգը	271
† 6. Նախագծային և նետագտական աշխատանքների կազմա- կերպումը և պլանավորումը	275
<i>Նախագծային և հետազոտական աշխատանքների պլանավո- րումը</i>	277
Գ լ ու խ VI. Շինարարության ինդուստրացումը	282
1. Շինարարության ինդուստրացման նշանակությունը	
<i>Ինդուստրացումը շինարարության տեխնիկական առաջադի- մության հիմքն է</i>	282
<i>Շինարարության ինդուստրացման հիմնական ուղղություն- ները</i>	284
2. Հավաճովի շինարարական ղեկավարների և կոնստրուկցիաների գործարանային արտադրության զարգացումն ու կիրառումը	289
<i>Հավաքովի երկաթբետոնի արտադրության զարգացումն ու կիրառումը</i>	290
<i>Հավաքովի կոնստրուկցիաների կատարելագործման ուղիները</i>	295
3. Շինարարական արտադրության կոմպլեքսային մեկնայա- ցումը և ավտոմատացումը	304
<i>Շինարարության մեքենայացման զարգացումը</i>	304
<i>Շինարարական մեքենաների սարքավորումների կատա- րելագործումը</i>	306
<i>Շինարարական մեքենաների ու սարքավորումների օգտա-</i>	

	<i>գործման բարելավումը</i>	312
4.	Առաջավոր տեխնոլոգիայի և հոսֆային մեքոդների արմատավորումը շինարարական արտադրության մեջ	316
	<i>Տիպային տեխնոլոգիական քարտերով կատարվող շինարարությունը</i>	317
	<i>Շինարարության հոսքային մեթոդների արմատավորումը</i>	321
5.	Շինարարական կազմակերպությունների տեխնիկական զարգացման պլանավորումը	325
	<i>Տեխնիկական առաջադիմության առաջադրանքները շինարարության մեջ</i>	325
	<i>Տեխնիկական զարգացման և կազմակերպական տնտեսական միջոցառումների պլանները</i>	328
Գ Լ ու ի Վ II.	Շինարարության հիմնական և շրջանառու ֆոնդերը	333
1.	Շինարարության հիմնական և շրջանառու ֆոնդերի կառուցվածքը	335
	<i>Հիմնական ֆոնդերի կազմը և կառուցվածքը</i>	335
	<i>Շրջանառու արտադրական ֆոնդերի կառուցվածքը</i>	340
	<i>Հիմնական ֆոնդերի գնահատումը</i>	345
2.	Շինարարության հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման կազմակերպական ձևերը	347
	<i>Հիմնական շինարարական տեխնիկայի համակենտրոնացումը մասնագիտացված կազմակերպություններում</i>	349
	<i>Ավտոմոբիլային տնտեսությունների խոշորացումը և փոխադրումների կենտրոնացումը</i>	350
	<i>Հիմնական ֆոնդերի վերանորոգման կենտրոնացումը</i>	352
	<i>Շինանյութեր և կոնստրուկցիաներ արտադրող հզոր մասնագիտացված արդյունաբերական ձեռնարկությունների ցանցի ստեղծումը</i>	353
3.	Ամորտիզացիոն հատկացումները շինարարության մեջ	355
	<i>Հիմնական ֆոնդերի մաշումը</i>	355
	<i>Ամորտիզացիոն հատկացումների չափի որոշումը</i>	356
4.	Հիմնական ֆոնդերի պլանային նախագզուչական վերանորոգման կազմակերպումը	358
5.	Շինարարական կազմակերպությունների արտադրական կարողությունները և դրանց օգտագործումը	362
	<i>Արտադրական կարողության հասկացությունը</i>	362
	<i>Արտադրական կարողության օգտագործման ցուցանիշները</i>	365
6.	Նյութական ռեսուրսների տնտեսման ուղիները շինարարության մեջ	369
	<i>Նյութական ռեսուրսների տնտեսման հիմնական ուղղությունները</i>	370

	<i>Նյութական սեփականության նորմավորումը</i>	374
	<i>Արտադրական պաշարների նորմավորումը</i>	379
7.	<i>Շինարարության նյութատեխնիկական մատակարարման կազմակերպումը</i>	382
	<i>Նյութատեխնիկական մատակարարման սխեմի վերակառուցումը</i>	383
	<i>Ստորին շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական մատակարարումը</i>	387
	<i>Շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական մատակարարման պլանը</i>	388
Գ Լ ու խ VIII.	Աշխատանքի արտադրողականությունը շինարարության մեջ	392
1.	<i>Աշխատանքի արտադրողականության դերը շինարարության զարգացման գործում</i>	392
2.	<i>Աշխատանքի արտադրողականության չափման մեթոդները շինարարության մեջ</i>	396
	<i>Արտադրանքի աշխատատարությունը</i>	396
	<i>Արտադրանքի թողարկումը աշխատած ժամանակի միավորի ընթացքում</i>	398
3.	<i>Աշխատանքի արտադրողականության պլանավորումը շինարարական կազմակերպություններում</i>	405
	<i>Արտադրանքի ցուցանիշների և աշխատողների թվի որոշումը</i>	407
	<i>Աշխատանքի արտադրողականության օպերատիվ պլանավորումը</i>	414
4.	<i>Աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիները շինարարության մեջ</i>	415
	<i>Տեխնիկական առաջադիմությունը աշխատանքի արտադրողականության անշեղ անման հիմքն է</i>	415
	<i>Արտադրության և աշխատանքի կազմակերպման բարելավումը</i>	418
	<i>Շինարարության կազմակերպությունների ամրապնդումը մշտական որակյալ կազմակերպում</i>	425
	<i>Սոցիալիստական մրցության զարգացումը և առաջավոր փորձի արմատավորումը</i>	428
Գ Լ ու խ IX.	Աշխատանքի նորմավորումը և աշխատավարձը շինարարության մեջ	433
1.	<i>Աշխատավարձի և աշխատանքի նորմավորման կազմակերպման նշանակությունը շինարարության մեջ</i>	433
	<i>ՍՄԿՊ XXII համագումարը բանվորների և ծառայողների սեփական սեփականությունը բարձրացնելու ուղիների մասին</i>	434

Աշխատավարձի կազմակերպման սկզբունքները	436
Աշխատանքի նորմավորման խնդիրները	438
Նորմավորման և աշխատանքի վարձատրության բարելավման միջոցառումները,	440
2. Աշխատանքի նորմավորման կազմակերպումը շինարարու- թյան մեջ	442
Նորմաների սխտեմը .	442
Նորմավորման կազմակերպումը .	445
3. Տեխնիկապես ճիմնավորված նորմաների մշակման մեթոդ- ները	447
Տեխնիկապես հիմնավորված նորմաների տեսակները	447
Տեխնիկապես հիմնավորված նորմաների կազմը	449
Տեխնիկական նորմավորման բովանդակությունը	451
Նորմաների նախագծումը մեքենայացված պրոցեսների հա- մար	454
Ձեռքի աշխատանքի համար նորմաների նախագծումը	461
4. Տարիֆային սխտեմը շինարարության մեջ	465
Տարիֆային ցանցերը	465
Տարիֆային դրույքները	466
Տարիֆային որակավորման տեղեկատու	467
Բանվորների տարիֆիկացումը	468
5. Աշխատավարձի ձևերը շինարարության մեջ	470
Աշխատանքի վարձատրման գործավարձային ձևը	470
Բրիգադների աշխատանքի վարձատրությունը	477
Աշխատանքի վարձատրման ժամանակավարձային ձևը	477
Աշխատանքի վարձատրման պարզեցված տարական ձևերը	478
Ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների աշ- խատանքի վարձատրությունը	483
Հավելումներ շինարարության մեջ աշխատանքների շարժուն բնույթի համար	486
6. Աշխատավարձի ֆոնդի պլանավորումը	487
Աշխատավարձի պլանային ֆոնդը	487
Աշխատավարձի ֆոնդի որոշումը	488
Գ Լ ու խ X. Եինմոնտաժային աշխատանքների ինժեներները և շինա- րարական կազմակերպությունների շահութաբերությունը	494
1. Եինմոնտաժային աշխատանքների ինժեներները շինարարա- կան կազմակերպությունների գործունեության կարևորագույն ցուցանիշն է	494
2. Եինմոնտաժային աշխատանքների ինժեներների կառուցվածքը	498
Ուղղակի ծախսեր	499
Վերադիր ծախսեր	500

	Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի կառուցվածքը	504
3.	Ինճեարժեքի իշեցման ուղիները շինարարության մեջ	508
	Շինարարության ինդուստրացումը	509
	Խնայողության խստագույն ռեժիմի իրականացումը նյութա- կան և դրամական ռեսուրսների ծախսման գործում	510
	Շինարարության կառավարման կազմակերպման կատարե- լագործումը, վարչա-կառավարչական և այլ վերադիր ծախ- սերի կրճատումը	515
	Շինարարության նյութա-տեխնիկական մատակարարման բարելավումը	520
	Շինարարական կազմակերպությունների ութմիկ աշխատան- քի պահպանումը	522
	Շինմոնտաժային աշխատանքների որակի բարձրացումը	524
	Հաշվարկային հարաբերությունների բարելավումը շինարա- րության մեջ	527
4.	Շինմոնտաժային աշխատանքների ինճեարժեքի պլանավո- րումը	529
	Շինմոնտաժային աշխատանքների ինքնարժեքի իշեցման ա- ռաջադրանքների որոշումը	530
	Արտադրության ծախսումների նախահաշիվը	536
	Վերադիր ծախսերի նախահաշիվը	540
5.	Շինարարական կազմակերպությունների շահութաբերությունը	545
	Շահութաբերության մակարդակի որոշումը	545
	Շահութաբերության բարձրացման հիմնական ուղիները	546

Գ Լ ու խ XI. Տնտեսական հաշվարկը շինարարության մեջ 551

1.	Տնտեսաշվարկը սոցիալիստական տնտեսավարման ճիմնական մեթոդն է	551
	Տնտեսական շինարարության անխախտ օրենքը և տնտեսաշ- վարկը	551
	Տնտեսաշվարկի դերը սոցիալիստական տնտեսության մեջ	553
2.	Տնտեսական հաշվարկի սկզբունքները շինարարության մեջ	556
	Շինարարական կազմակերպությունների շահութաբերությու- նը և ծախսումների փոխհատուցումը	557
	Շինարարական կազմակերպությունների տնտեսական-օպե- րատիվ ինքնուրույնությունը	559
	Շինարարական կազմակերպությունների նյութական շահ գրգռվածությունը	561
	Շինարարական կազմակերպությունների նյութական պատաս- խանատվությունը	566
	Ռուբլով վերահսկողությունը շինարարական կազմակերպու- թյունների գործունեության նկատմամբ	569

3. Ներտնտեսական հաշվարկի կազմակերպումը	571
Ներտնտեսական հաշվարկի առանձնահատկությունները	572
Տնտհաշվարկի սկզբունքների իրականացումը շինարարական տեղամասերում և բրիգադներում	573
4. Տեղամասերի և բրիգադների տնտհաշվարկային գործունեության ցուցանիշը	576
Տեղամասերի տնտհաշվարկային գործունեության ցուցանիշները	577
Բրիգադների տնտհաշվարկային գործունեության ցուցանիշները	578
Տնտհաշվարկի արմատավորումը և մասսաների ստեղծագործական ակտիվության բարձրացումը	580

Գ Լ ու խ XII. Շինարարության ֆինանսավորումը և շինարարական կազմակերպությունների ֆինանսական տնտեսությունը **583**

1. Ֆինանսների դերը շինարարական կազմակերպությունների գործունեության մեջ	583
Շինարարական կազմակերպությունների և պատվիրատուների ֆինանսները	583
Կապիտալի ներդրումների ֆինանսավորման աղբյուրները	587
2. Կապիտալ ներդրումների ֆինանսավորման կազմակերպումը	594
Շինարարությունը ֆինանսավորող բանկերը	594
Կապալային կազմակերպությունների կատարած աշխատանքների ֆինանսավորումը	599
Տնտեսական եղանակով կատարված աշխատանքների ֆինանսավորումը	602
Սարքավորումների և շինարարական նյութերի վճարումները	603
Աշխատավարձի ֆոնդի ծախսման վերահսկողությունը	605
Հաշվարկները շինարարության մեջ	606
Ֆինանսավորման դիֆերենցված ուժի մ	609
3. Շինարարության երկրակազմ և շրջանառու միջոցների կազմավորումը	610
Շինարարական կազմակերպությունների կանոնադրական ֆոնդը	610
Կապալային կազմակերպությունների շրջանառու միջոցները	613
Կապալային կազմակերպությունների շրջանառու միջոցների նորմավորումը	616
Շրջանառու միջոցների գոյացման աղբյուրները	622
Կառուցվող (գործող) ձեռնարկությունների դիրեկցիաների շրջանառու միջոցները	626
Ներտնտեսական ռեզերվների հայտարարումն ու իրացումը	630
Շրջանառու միջոցների նորմավորման և օգտագործման բա-	

	<i>բեկավման ուղիները</i>	632
4.	Շինարարական կազմակերպությունների վարկավորումը <i>Կարճատև վարկավորման սկզբունքները</i>	635
	<i>Վարկերի հիմնական տեսակները</i>	636
	<i>Վարկավորման դիֆերենցված ռեժիմը</i>	641
5.	Շինարարական կազմակերպության ֆինանսական պլան	644

Գ Լ ու խ XIII. Շինարարական կազմակերպությունների գործունեության տնտեսական վերլուծությունը **651**

1.	Տնտեսական գործունեության վերլուծության սկզբնաւյութերը <i>Տնտեսական գործունեության հաշվառումը</i>	651
	<i>Շինարարական կազմակերպությունների հաշվետվությունը</i>	654
2.	Շինարարական կազմակերպությունների աշխատանքի վերլուծության կազմակերպումն ու մեթոդները <i>Վերլուծության բովանդակությունն ու մեթոդները</i>	653
	<i>Վերլուծական աշխատանքի կազմակերպումը</i>	659
3.	Օբյեկտների գործարկման պլանի և կապիտալ ներդրումների պլանի կատարման վերլուծությունը <i>Օբյեկտների գործարկման պլանի կատարման վերլուծությունը</i>	662
	<i>Կապիտալ ներդրումների պլանի կատարման վերլուծությունը</i>	663
4.	Շինարարական կազմակերպության արտադրական ծրագրի կատարման վերլուծությունը <i>Արտադրական ծրագրի կատարումը ըստ ծավալի</i>	671
	<i>Շինարարական-մոնտաժային աշխատանքների ծրագրի կատարման վրա ազդող հիմնական գործոնները</i>	674
5.	Տեխնիկական զարգացման պլանի կատարման և նիմնական արտադրական ֆոնդերի արդյունավետ օգտագործման վերլուծությունը <i>Շինարարության ինդուստրիալ մեթոդների արմատավորումը</i>	677
	<i>Մեքենաների ու մեխանիզմների օգտագործման արդյունավետությունը</i>	677
	<i>Մեքենաների օգտագործման արդյունավետությունը</i>	679
6.	Աշխատանքի և աշխատավարձի պլանի կատարման վերլուծությունը <i>Աշխատանքի արտադրողականության սննի պլանի կատարման ստուգումը</i>	681
	<i>Աշխատանքի արտադրողականության սննի սեզոնային հայտարարումը աշխատատեղանակի գերազանցյալ կորուստների վերացման հաշվին</i>	685
	<i>Աշխատավարձի ֆոնդի օգտագործման վերլուծությունը</i>	687
7.	Շինմոնտաժային աշխատանքների ինժեներների և շինարարական կազմակերպության շահութաբերության վերլուծու-	

քունը	689
Ինքնարժեքի իջեցման առաջադրանքի կատարման ստուգումը	689
Կատարված աշխատանքների ինքնարժեքի վերլուծությունը	
ըստ ծախսումների առանձին հոդվածների	692
Շինարարական կազմակերպությունների շահութաբերության վերլուծությունը	699
8. Կառույցի և կապալային կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը	701
Կառույցի ֆինանսական դրության վերլուծությունը	701
Կապալային կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը	705
Շրջանառու միջոցների շրջապտույտի վերլուծությունը	707

Խմբագիրներ՝ Ն. Ռ. Թովմասյան,
 Բ. Ս. Միրզոյան
 Գեղ. Խմբագիր՝ Գ. Խուդիկյան, Տեխ. Խմբագիր՝ Ե. Ախիրյան
 Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Դշնոյան

Պատվեր 884

Տիրաժ 6000

Հանձնված է արտադրության 16/Մ 1963 թ.:
 Ստորագրված է տպագրության 14/ՄIII 1963 թ.:
 Թուղթ՝ 84 × 108^{1/32} Տպագր. 45,0 մամ.—36,9 պայմ. մամ.,
 հրատ. 34,3 մամ.: Գինը՝ 1ռ. 19 կ.:

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների
 և պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
 Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91: